

ISSN 0320-8117



**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ВЕСТНИК**

**ОБЩЕСТВЕННЫХ  
НАУК**

**HERALD**

**OF SOCIAL SCIENCES**

**1**

**2024**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК  
ОБЩЕСТВЕННЫХ  
НАУК

HERALD  
OF SOCIAL SCIENCES

1(670)

ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ  
ЯНВАРЬ-АПРЕЛЬ  
JANUARY-APRIL

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն/Изд. «Гитутюн» НАН РА/“Gitutyun” Press NAS RA  
ԵՐԵՎԱՆ/ЕРЕВАН/YEREVAN 2024

**ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ**  
**ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА**  
**JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940**

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**  
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ**  
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

### **Խմբագրական խորհուրդ**

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ (խմբագրական խորհրդի նախագահ),  
ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ, ԺԱՍՄԻՆ ԴՈՒՄ-ԹՐԱԳՈՒՏ (Ավստրիա), ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ,  
ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՎԱԶԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ,  
ՀՐԱԶ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Նիդերլանդներ), ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ,  
ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՊԱՏՐԻԿ ՏՈՆԱՊԵՏՅԱՆ (Ֆրանսիա),  
ՓԻԹԵՐ ՔԱՌԻԻ (ԱՄՆ)

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**  
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**  
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

### **Редакционная коллегия**

ПАВЕЛ АВЕТИСЯН (председатель редколлегии), АРСЕН БОБОХЯН, АРАРАТ АГАСЯН,  
ЖАСМИН ДУМ-ТРАГУТ (Австрия), ГАГИК КАЗИНЯН, ВИКТОР КАТВАЛЯН, ПИТЕР КАУИ  
(США), ГРАЧ МАРТИРОСЯН (Нидерланды), АШОТ МЕЛКОНЯН, ВАЧЕ ОВАКИМЯН,  
ГЕВОРК ПОГОСЯН, РУБЕН САФРАСТЯН, ПАТРИК ДОНАБЕДЯН (Франция),  
ЮРИЙ СУВАРЯН, АЛЬБЕРТ ХАРАТЯН

Editor-in-chief **PAVEL AVETISYAN**  
Vice-editor **ARSEN BOBOKHYAN**  
Responsible secretary **GAYANE HARUTYUNYAN**

### **Editorial Board**

PAVEL AVETISYAN (chairman of the editorial board), ARARAT AGHASYAN,  
ARSEN BOBOKHYAN, ALBERT KHARATYAN, VIKTOR KATVALYAN, VACHE HOVAKIMYAN,  
GAGIK GHAZINYAN, HRACH MARTIROSYAN (Netherlands), ASHOT MELKONYAN,  
GEVORG POGHOSYAN, RUBEN SAFRASTYAN, YURI SUVARYAN, JASMINE DUM-TRAGUT  
(Austria), PATRICK DONABEDIAN (France), PETER COWE (USA)

©Լրաբեր հասարակական գիտությունների  
©Вестник общественных наук  
©Herald of Social Sciences

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<b>Ալբերտ Խառատյան</b> – Դավանական ներհակությունները Կոստանդնուպոլսի հայ համայնքում (XVIII դ. I տասնամյակ).....	12
<b>Արարատ Հակոբյան</b> – Պետականության վերականգնման գաղափարը հայ աշխարհիկ ու հոգևոր շրջանակներում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու փուլում.....	30
<b>Վարդան Ալեքսանյան</b> – Հայոց կաթողիկոսական աթոռն Աղթամարում (X դարի երկրորդ քառորդ).....	42
<b>Վահե Աղասարյան</b> – Հայ-սիրիական հարաբերությունների զարգացման գործընթացը 1991 թ. առ այսօր.....	62
<b>Ռոբերտ Ղևոնդյան</b> – Հարավային Կովկասի անվտանգային համակարգի վերափոխումը և դրա ազդեցությունը գլոբալ քաղաքական գործընթացների վրա.....	75
<b>Սիլվարթ Մալխասեան</b> – Հայրենիքի տուրքը եւ կիրարկումը 1918-1923-ին Կ. Պոլսոյ մէջ.....	84
<b>Շահեն Հարությունյան</b> – Այլախոհական շարժումների ուժգնացման երկրորդ շրջանը Խորհրդային Հայաստանում (1968-1978 թթ.).....	95

### ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<b>Քնարիկ Սարգսյան</b> – Կատարի դերի կերպափոխումները ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ (1970-1990-ական թթ.).....	106
<b>Հայկ Սողոմոնյան</b> – Իրանի քաղաքական-տնտեսական իրավիճակը բրիտանա-խորհրդային ռազմակալման շրջանում.....	119

### ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

<b>Սվետլանա Արզումանյան</b> – Գեղագիտական ճաշակ. հարցի պատմության շուրջ.....	127
<b>Աստղիկ Խուրշուդյան</b> – Իրավական պետության կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում.....	142

### ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<b>Լալիկ Խաչատրյան</b> – Հինհայերենյան վերլուծական հարադրությունների փոխակերպումը համադրական բարդությունների գոյական + բայ > ածական կաղապարով (տարժամանակյա հայեցակետ).....	150
<b>Պետրոս Դեմիրճյան</b> - Եղիա Տեմիրճիպաշյանը՝ հրապարակագիր.....	165

<b>Հռիփսիմե Զաքարյան</b> – «Միջտեքստայնություն» հասկացության բնորոշման հիմնախնդիրներն ու տիպաբանական առանձնահատկությունները.....	182
--	-----

**ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

<b>Անահիտ Բեքարյան</b> – Կանադահայ բեմի ստեղծագործական ուժերը. Անահիտ Գույումճյան (1938-2020).....	197
<b>Սաթենիկ Մելիքյան</b> – Երվանդ Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» երգիծավեպի նկարագրողումների շուրջ.....	208
<b>Նարե Նադարյան</b> – Խաչատուր Իսկանդարյանի «Պարողներ» քանդակաշարը.....	218
<b>Արմինե Պետրոսյան</b> – Երևանի զբոսայգիները՝ որպես ճարտարապետական լանդշաֆտի դիզայնի մաս.....	226

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

<b>Արմեն Պետրոսյան</b> – Խուռաուրարտական Թեշուր/Թեյշեբայի և հունական Թեսևսի հայկական ծագումը.....	239
<b>Ջորջ Ա. Սաիդ Ջամիթ</b> – Մալթայի կղզիների ճամփեզրերի եկեղեցիները (մարդաբանական հետազոտություն).....	260
<b>Ինեսա Կարապետյան, Արմինե Գաբրիելյան</b> – Արմավիր մայրաքաղաքի դամբարանադաշտի կարասային թաղումների տեղադրության և ժամանակագրության սահմանները.....	280
<b>Հռիփսիմե Ասատրյան</b> – Ժողովրդական խաղի կանոնների արդի դրսևորումները.....	298
<b>Նորա Ենգիբարյան</b> – Լճաշենի երկաթեղարյան դամբարանները.....	313
<b>Ռաֆիկ Գաբրիելյան</b> – Արագածի Տիրինկատար հուշարձանի ազգագրական առանձնահատկությունները.....	323

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

<b>Լուսինե Սահակյան</b> – Ուսուցման հոգեբանությունը՝ որպես մանկավարժական գործունեության արդյունավետ իրականացման հիմք.....	339
---	-----

**ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ**

<b>Անահիտ Բեքարյան</b> – Ազատության մարտիկի՝ Ջորջ Գորդոն Բայրոնի հիշատակին (մահվան 200-ամյակի առթիվ).....	350
---	-----

**ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**

<b>Ստեփան Ղարիբջանյան</b> – Գուրգեն Քոչարյան.....	364
---	-----

**ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ**

<b>Արմեն Կարապետյան</b> – Հոգևոր լույսի խորհուրդը.....	367
<b>Վարդիթեր Մադաթյան</b> – Խաչիկ Սամուելյան. բազմավաստակ գիտնականը.....	370
<b>Անահիտ Խեչոյան, Գևորգ Գյուլումյան</b> – «Ոռոգման համակարգերը Հայկական լեռնաշխարհում» գիտաժողովը.....	379

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

<b>Ալբերտ Խառատյան</b> – 1001 եկեղեցիների քաղաքը պատմության հուլովույթում.....	385
<b>Հասմիկ Աբրահամյան</b> – <i>Միհրան Գալստյան</i> , Աշխատանքային միգրացիան և սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում.....	391
<b>Կամո Ալեքսանյան</b> – <i>Ակսել Պուրոսյան</i> , Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն.....	397

**ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ**

<b>Տորք Դալայան</b> – Վերժինե Սվազյան. անխոնջ բանահավաք-բանագետը (ծննդյան 90-ամյակի առթիվ).....	400
<b>Անժելա Ամիրխանյան</b> – Դերենիկ Վարդումյան (ծննդյան 100-ամյակի առթիվ).....	406
<b>Անուշավան Զաքարյան</b> – Սերգեյ Գորոդեցկի. անմնացորդ նվիրում.....	410

**ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ**

Նիկոլայ Հովհաննիսյան. Ականավոր գիտնականը և հասարակական գործիչը.....	413
---	-----

## СОДЕРЖАНИЕ

### ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

<b>Альберт Харатян</b> – Религиозные разногласия в константинопольской армянской общине (первое десятилетие XVIII в.).....	12
<b>Арарат Акопян</b> – Идея восстановления государственности в армянских светских и духовных кругах в период присоединения Восточной Армении к России.....	30
<b>Вардан Алексанян</b> – Армянский католикосский престол в Ахтамаре (II четверть X века).....	42
<b>Ваге Агасарян</b> – Процесс развития армяно-сирийских отношений с 1991 года по настоящее время.....	62
<b>Роберт Гевондян</b> – Изменение системы безопасности Южного Кавказа и ее влияние на глобальные политические процессы.....	75
<b>Силварт Малхасян</b> – Налог родине и его взимание в 1918-1923 гг. в Константинополе.....	84
<b>Шаген Арутюнян</b> – Второй этап усиления советско-армянских диссидентских движений (1968-1978 гг.).....	95

### ВОСТОКОВЕДЕНИЕ

<b>Кнарик Саргсян</b> – Трансформации роли Катара во внешней политике США (1970-1990-ые гг.).....	106
<b>Айк Согомонян</b> – Политическое и экономическое положение Ирана в период англо-советской военной оккупации.....	119

### ФИЛОСОФИЯ И ПРАВО

<b>Светлана Арзуманян</b> – Эстетический вкус: к истории вопроса.....	127
<b>Астхик Хуршудян</b> – Проблемы становления правового государства в Республике Армения.....	142

### ФИЛОЛОГИЯ

<b>Лалик Хачатрян</b> – Трансформация аналитических конструкций в синтетические по модели <i>существительное + глагол &gt; прилагательное</i> в древнеармянском языке (диахронический аспект).....	150
<b>Петрос Демирчян</b> – Егия Темирчипашян – публицист.....	165
<b>Рипсима Закарян</b> – Проблемы характеристики понятия «интертекстуальность» и типологические особенности.....	182

## КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

<b>Анаит Бекарян</b> – Творческие силы канадской армянской сцены: Анаит Гуюмджян (1938-2020).....	197
<b>Сатеник Меликян</b> – Об иллюстрациях к сатирическому роману Ерванда Отяна «Тов. Б. Панджуни».....	208
<b>Наре Надарян</b> – Серия скульптур Хачатура Искандаряна «Танцоры».....	218
<b>Армине Петросян</b> – Парки Еревана как часть архитектурно-ландшафтного дизайна.....	226

## АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

<b>Армен Петросян</b> – Армянское происхождение хурро-урартского Тешуба/Тейшебы и греческого Тесея.....	239
<b>Георг А. Саид-Заммит</b> – Придорожные церкви Мальтийских островов (антропологическое исследование).....	260
<b>Карапетян Инеса, Габриэлян Армине</b> – Границы расположения и хронологические рамки кувшинных погребений могильника столицы Армавир.....	280
<b>Рипсима Асатрян</b> – Современные проявления правил народной игры....	298
<b>Нора Енгибарян</b> – Лчашенские погребения железного века.....	313
<b>Рафик Габриелян</b> – Этнографические особенности памятника Тиринкатар в Арагаце.....	323

## ПЕДАГОГИКА

<b>Лусине Саакян</b> – Психология обучения как основа эффективного осуществления педагогической деятельности.....	339
---	-----

## ПАМЯТНЫЕ ДАТЫ

<b>Анаит Бекарян</b> – Памяти борца за свободу – Джорджа Гордона Байрона (к 200-летию со дня смерти).....	350
---	-----

## ПУБЛИКАЦИИ

<b>Степан Гарибджанян</b> – Гурген Кочарян.....	364
---	-----

## НАУЧНАЯ ХРОНИКА

<b>Армен Карапетян</b> – Символ духовного света.....	367
<b>Вардигер Мадатян</b> – Хачик Самуэлян – заслуженный учёный.....	370
<b>Анаит Хечоян, Геворг Гюлумян</b> – Научная конференция «Оросительные системы на Армянском нагорье».....	379

---

**РЕЦЕНЗИИ**

<b>Альберт Харатян</b> – Город 1001 церкви в эволюции истории.....	385
<b>Асмик Абрамян</b> – <i>Мигран Галстян</i> , Трудовая миграция и социально-культурные процессы в Армении.....	391
<b>Камо Алексанян</b> – <i>Аксель Потосян</i> , Экономическая и социальная география Республики Армения.....	397

**НАШИ ЮБИЛЯРЫ**

<b>Торк Далалян</b> – Вержине Свазлян: неутомимый фольклорист-народовед (к 90-летию со дня рождения).....	400
<b>Анжела Амирханян</b> – Дереник Вардумян (к 100-летию со дня рождения)....	406
<b>Анушаван Закарян</b> – Сергей Городецкий: безграничная преданность Армении.....	410

**СЛОВО ПАМЯТИ**

Николай Оганесян. Выдающийся учёный и общественный деятель.....	413
---	-----

# CONTENT

## HISTORY AND POLITICAL SCIENCE

<b>Albert Kharatyan</b> – Religious Disputes in the Constantinople Armenian Community (First Decade of the 18 <sup>th</sup> Century).....	12
<b>Ararat Hakobyan</b> – The Idea of Restoring State in Armenian Secular and Spiritual Circles during the Accession of Eastern Armenia to Russia.....	30
<b>Vardan Alexanyan</b> – The Throne of Armenian Catholicoses in Aghtamar (The Second Quarter of the 10th Century).....	42
<b>Vahe Aghasaryan</b> – The Process of Development of Armenian-Syrian Relations from 1991 to the Present Day.....	62
<b>Robert Ghevondyan</b> – The Change of the South Caucasus Regional Security System and its Impact on the Global Political Processes.....	75
<b>Silvart Malhasyan</b> – Tax to the Motherland and its Usage in 1918-1923 at Constantinople.....	84
<b>Shahen Harutyunyan</b> – The Second Round of the Soviet Armenian Dissident Movements' Strengthening (1968-1978).....	95

## ORIENTAL STUDIES

<b>Knarik Sargsyan</b> – Transformations of the Role of Qatar in Foreign Policy of the USA (1970s-1990s).....	106
<b>Hayk Soghomonyan</b> – Iran's Political and Economic Situation during the British-Soviet Military Occupation .....	119

## PHILOSOPHY AND LAW

<b>Svetlana Arzumanyan</b> – Aesthetic Taste: on the History of the Issue.....	127
<b>Astghik Khurshudyan</b> – Problems of the Establishment of the Jural State in the Republic of Armenia.....	142

## PHILOLOGY

<b>Lalik Khachatryan</b> – Transformation of Analytical Constructions into Synthetic Ones, According to the Noun + Verb > Adjective Model in the Ancient Armenian Language (Diachronic Aspect).....	150
<b>Petros Demirchyan</b> – Yeghia Temirchypashyan: Publication Writer.....	165
<b>Hripsime Zakaryan</b> – The Main Problems and Typical Characteristics of the Concept of "Intertextivity".....	182

---



---

**CULTURE AND ART HISTORY**

<b>Anahit Bekaryan</b> – Creative Potential of the Armenian Stage in Canada: Anahit Guyumjian (1938-2020).....	197
<b>Satenik Melikyan</b> – About Illustrations to Yervand Otyan's Satirical Novel "Comrade B. Panjuni".....	208
<b>Nare Nadaryan</b> – Khachatur Iskandaryan's "The Dancers" Sculptural Series.	218
<b>Armine Petrosyan</b> – Parks of Yerevan as Part of Architectural and Landscape Design.....	226

**ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

<b>Armen Petrosyan</b> – The Armenian Origin of the Hurro-Urartian Teššub/Teišeba and Greek Theseus.....	239
<b>George A. Said-Zammit</b> – The Vernacular Wayside Churches of the Maltese Islands (an Anthropological Research).....	260
<b>Karapetyan Inesa, Gabrielyan Armine</b> – The Distribution Boundaries and Chronological Frames of the Jar Burials of the Necropolis at the Capital City Armavir.....	280
<b>Hripsime Asatryan</b> – Modern Manifestations of the Rules of the Folk Game.....	298
<b>Nora Yengibaryan</b> – The Iron Age Tombs of Lchashen.....	313
<b>Rafik Gabrielyan</b> – The Ethnographic Features of the Site Tirinkatar on Aragats.....	323

**PEDAGOGY**

<b>Lusine Sahakyan</b> – Psychology of Learning as a Basis for Effective Implementation of Pedagogical Activity.....	339
--	-----

**MEMORIAL DATES**

<b>Anahit Bekaryan</b> – In Commemoration of the Champion for Freedom George Gordon Byron (On the 200th Anniversary of the Poet's Death)....	350
--	-----

**PUBLICATIONS**

<b>Stepan Gharibjanyan</b> – Gurgen Kocharyan.....	364
--	-----

**SCIENTIFIC CHRONICLE**

<b>Armen Karapetyan</b> – The Sign of Spiritual Power.....	367
<b>Varditer Madatyan</b> – Khachik Samuelyan: Honored Scientist.....	370

<b>Anahit Khechoyan, Gevorg Gyulumyan</b> – The Conference "Irrigation Systems in the Armenian Highland".....	379
---	-----

#### LITERARY REVIEWS

<b>Albert Kharatyan</b> – The City of 1001 Churches through the History.....	385
<b>Hasmik Abrahamyan</b> – <i>Galstyan Mihran</i> , Labor Migration and Socio-Cultural Transformations in Armenia.....	391
<b>Kamo Aleksanyan</b> – <i>Aksel Potosyan</i> , Economic and Social Geography of the Republic of Armenia.....	397

#### OUR JUBILEES

<b>Tork Dalalyan</b> – Verzhine Svazlyan: Tireless Folklorist-Ethnographer.....	400
<b>Anzhela Amirkhanyan</b> – Derenik Vardumyan (In Commemoration of the 100th Anniversary).....	406
<b>Anushavan Zakaryan</b> – Sergey Gorodetsky: Unfailing Devotion to Armenia.	410

#### A WORD OF MEMORY

<b>Nikolay Hovhannisyan</b> – Eminent Scientist and Public Figure.....	413
--	-----

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԴԱՎԱՆԱԿԱՆ ՆԵՐՀԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ (XVIII դ. I տասնամյակ)

### Ալբերտ Խառատյան

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4

Էլ. հասցե՝ info@haygithimnadram.am

ORCID:0009-0005-8436-1288

Հոդվածը ներկայացվել է 15.01.2024, գրախոսվել է 14.04.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.1-12

#### Ամփոփում

XVIII դ. սկզբից պոլսահայ համայնքում ավելի առարկայական տեսք ստացավ միջդավանական պայքարը հայ եկեղեցու հետևորդների և հայ կաթոլիկների միջև: Վերջիններիս դեմ եկեղեցուն բռնի միջոցների էր պարտադրում օսմանյան պետությունը, որը հակամարտության նոր փուլի մեջ էր մտել եվրոպական տերությունների հետ և կաթոլիկությունը դիտելով որպես թշնամական գաղափարախոսություն, բոլոր հնարավոր միջոցներով ձգտում էր խոչընդոտել դրա տարածմանը կայսրության ոչ մահմեդական համայնքներում: Սկսվեց հալածանքը նաև հայ կաթոլիկների դեմ, որը մի հայտնի չափով փորձում էր մեղմել ֆրանսիական դեսպանն իր միջամտություններով: Այս ամենի արդյունքում խորացան երկպառակությունները հայ հանրության ներսում, որ արտահայտվում էին պատրիարքների կարճ և շարունակական փոփոխություններով, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությանը Երուսաղեմի հայոց պատրիարքության կցումով, հայ կաթոլիկներին կաթոլիկական եկեղեցիներ հաճախելու խստիվ արգելքով, մեղանշողներին թիարանի և այլ պատիժների դատապարտելով և այլն: Հայ համայնքը պառակտող այս գժտությունները մի որոշ ժամանակ կարծեք թե տեղի տվեցին միջդավանական պայքարի սրության գագաթնակետը հանդիսացող՝ Կոմիտաս Քյոմուրճյան վարդապետի գլխատմամբ (իշխանությունների վճռով), որը չէր հրաժարվել իր կրոնական համոզմունքներից:

Կաթոլիկության դեմ օսմանյան պետության կտրուկ քաղաքականությունը տևեց ամբողջ XVIII դ., ընդհուպ մինչև կաթոլիկ համայնքի ճանաչումը պետության կողմից (1832):

**Բանալի բառեր՝** հայ կաթոլիկներ, Ֆրանսիայի դեսպան, Պոլսի հայոց պատրիարք Ավետիք, թերսանե, մեծ վեզիր, Կոմիտաս Քյոմուրճյան, Պոլսի հայ կաթոլիկների թվաքանակը:

#### Ներածություն

XVII դ. վերջին և XVIII դ. սկզբներին Կոստանդնուպոլսի հայ համայնքում վերնախավային փոփոխություններն արտացոլում էին այդ հանրութ-

յանը ներհատուկ հակասությունները ազդեցիկ սոցիալական խմբերի միջև: Դարասկզբին, սակայն, առաջին բնագիծ են մղվում դավանական պառակտումները խորացնող կաթոլիկական կողմնորոշումները և դրանց կտրուկ հակադրվող՝ Բ. դռան հակաեվրոպական քաղաքականությունը, որը հետամտում էր պահպանել միլիթանտի ավանդական համակարգը: Ավելին, XVII դ. օսմանյան պետության հայեցողական կեցվածքը քրիստոնյա համայնքներում դավանական խմորումների նկատմամբ, դարասկզբին թևակոխում է ավարտուն փուլ՝ քաղաքական ու վարչաիրավական բռնացումների ձևով: Այդ համայնքներում հռոմեադավանությունը պետության կողմից դիտվում է ոչ միայն որպես եվրոպական ազդեցության ախտանիշ, այլև երկրի անվտանգության դեմ ուղղված սպառնալիք, իսկ կաթոլիկ եկեղեցու հետևորդներին՝ եվրոպական պետությունների հինգերորդ շարասյուն, որի դեմ անզիջում պայքարը համարվում է ներքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը: Հայ համայնքում դրա հակազդեցությունը եղավ հռոմեադավանության տարածման նոր ալիքը, որի ծավալմանն ըստ ամենայնի նպաստում էր ֆրանսիական դիվանագիտությունը՝ ի դեմս Կ. Պոլսի իր դեսպանների գործունեության: Պոլսահայ համայնքի վերնախավի և վարչության մեջ վերոհիշյալ հակասությունները դրսևորվեցին պատրիարքների արագ փոփոխությունների տեսքով, որ հատկապես նկատելի դարձավ դավանական պառակտումների խորացմամբ: Միլիթանտը քայքայող այդ վտանգի դեմն առնելու մտահոգությամբ օսմանյան պետությունը դարասկզբից որդեգրեց խղճի և համոզմունքի դեմ ուղղված բռնության մի ուղեգիծ, որ տևեց ավելի քան հարյուր երեսուն տարի, մինչև կաթոլիկական միլիթանտի ճանաչումը կայսրության հպատակ փոքրամասնությունների դավանական տրոհումների պայմաններում:

### **Դավանական ընդհարումները և պատրիարքական աթոռը**

1690-ական թթ. պատրիարքական կռիվներում շրջանառում էին հիմնականում Եփրեմ Ղափանցի, Մատթեոս Սարը Կեսարացի և Մելքիսեդեկ Սուպիի պատրիարքները, որոնց պաշտոնավարումն արտացոլում էր արդեն հակամարտության հասնող դավանական բախումների երևույթը: Եթե Եփրեմ Ղափանցին հայտնի է որպես ազգային եկեղեցու դավանական ամրապնդման առավել ընդգծված ջատագով՝ ընդդեմ կաթոլիկական և կաթոլիկամետ տարրերի, ապա Մատթեոս Կեսարացին և Մելքիսեդեկ Սուպիին այս վերջինների մտայնության արտահայտիչն էին (միշտ հանդես գալով որպես հայ եկեղեցու ներկայացուցիչ) դավանական տարածայնությունների հորձանատում: Մ. Օրմանյանն այս առթիվ նկատում է, որ մինչ այդ «միեւնոյն հասարակութեան մէջ կարծիքներու տարբերութեան կերպարանը կը տիրէր, առանց բաժանումի եւ անջատումի ձեւն առնելու», և որ հակամարտությունները սկսվեցին, երբ իրենց դավանանքին նախանձախնդիր կաթոլիկա-

կան քարոզիչները իրենց հետևորդներին արգելեցին հայոց եկեղեցի հաճախել<sup>1</sup>: Այս գործելակերպն ավելի սրեց դավանական լարվածությունը՝ կաթոլիկներին դնելով գրեթե անելանելի վիճակի մեջ: Կաթոլիկական եկեղեցու հաճախորդը Բ. դռան աչքին համարվում էր անբարեհույս, եվրոպական քաղաքականության հետևորդ, որն ուղղորդող դարձավ օսմանյան պետության համար՝ հատկապես Կառլովիցի պայմանագրից հետո (1701), երբ կաթոլիկների նկատմամբ խեթ հայեցվածքը գերաճեց անհանդուրժող վերաբերմունքի: Հարկ է նշել, որ բուն Կոստանդնուպոլսում կաթոլիկամետ գործիչներն արդեն ունեին իրենց սոցիալական հենարանը, որ արտահայտվում էր նրանց կողմից պատրիարքական աթոռին տիրելու երևույթով (թեկուզ և կարճատև ժամկետներով): Բ. դռան նոր խստությունների և Ադրիանուպոլսում դավանական բախումների լարվածության պայմաններում տապալվեց Մելիքսեթ Սուպհին և ուղարկվեց թիարան: Պատրիարքի պաշտոնը դարձյալ գրավեց Եփրեմ Ղափանցին՝ 1701 թ. սեպտեմբերին<sup>2</sup>: Դավանական գոտիություններով պայմանավորված՝ պատրիարքական կոիվները և պատրիարքների արագ հերթագայումները, թվում է, կասեցվեցին Ավետիք Եվդոկիացու պատրիարք հռչակվելով (1702), երբ սուլթանի և Բ. դռան վրա իր կամքը սկսեց բանեցնել ընդգծված հակակաթոլիկ շեյխ ուլ-իսլամ Ֆեյզուլլահը: Նա գործում էր կտրուկ և վճռական՝ ի պաշտպանություն միլեթների և նրանց հոգևոր վարչությունների ամրապնդման գաղափարի, որ և առաջնահերթ նշանակություն ստացավ, ինչպես նկատեցինք, օսմանյան պետության համար՝ ամբողջ XVIII դ. և դրանից հետո ևս: Այսուհանդերձ, կարծել, որ Ֆեյզուլլահն էր «ֆրանկների» (կաթոլիկների) հալածանքների պատճառը, ճիշտ չէր լինի. երևույթն ավելի խոր արմատներ ուներ՝ օսմանյան պետության կողմից եվրոպական տերություններին և նրանց գաղափարախոսությանը՝ հռոմեադավանությանը հակադրվելու նոր փուլի սկիզբը, որ ենթադրում էր բոլոր միջոցներով ամրապնդել կայսրությունում ավանդաբար և պաշտոնապես ճանաչված միլեթների համակարգը՝ մարտնչելով դրանց դավանական ամբողջականությանը սպառնացող կաթոլիկության դեմ: Ֆեյզուլլահն այս քաղաքականությունն իրագործող ազդեցիկ դեմքերից մեկն էր և ոչ ավելին ու ոչ միակը: Եվ եթե չլիներ 1703 թ. ենիչերիների ապստամբությունը, ապա դժվար կլիներ պնդելը, որ XVIII դ. առաջին տասնամյակներն այդպես աչքի կընկնեին հայոց պատրիարքների առատ հաջորդափոխություններով: Եվ մյուս կողմից, չպետք է անտեսել այն, որ Ֆեյզուլլահը չէր այդ հալածանքների պատճառը, թեկուզ այն փաստի արձանագրմամբ, որ նրա տապալումից հետո ևս, բավական երկար ժամանակ, մինչև հաջորդ դարի առաջին երեք տասնամյակները, միլեթների քայքայմանը հետամուտ

<sup>1</sup> Օրմանեան 2001, 3120, 3127:

<sup>2</sup> Չամչեան 1786, 729-730, Օրմանեան 2001, 3129:

կաթոլիկության դեմ պայքարը մնում էր օսմանյան պետության լուրջ մտահոգություններից մեկը:

Կոստանդնուպոլսում դավանական ընդհարումները առավել ծավալուն և տագնապալի դարձան Ավետիքի պատրիարքության ընթացքում (1702-1706): Սակայն դրան նախորդած ժամանակաշրջանում Բ. դուռն արդեն հստակ ձևակերպել էր իր ընդդիմությունը հպատակ քրիստոնյաների կաթոլիկացմանը ձգտող եվրոպական քաղաքականության հանդեպ: Եվրոպացի ուղեգիր Ա. դը Լամոթենն իր շարադրանքում մեջբերել է 1695 թ. հոկտեմբերի 24-ի սուլթանական հաթթը շերիֆը ընդդեմ քրիստոնյա ազգաբնակչության մեջ աշխուժացած դավանափոխության<sup>3</sup>: Այդ փաստաթղթում հորդորվում է ուսանողներին՝ վերադառնալ իրենց հին հավատին: Հետաքրքիր է, որ այս գործի վերահսկողությունը դրվում է վարչական կառույցների և պաշտոնատար անձանց վրա, ինչն ընդգծում է հրամանագրի համապետական նշանակությունը: Այս հեղինակի հրապարակած՝ նույնանման, 1705 թ. մայիսի 24-ի հաթթը շերիֆը բովանդակային որոշակիություններ է մտցնում երկու տեսանկյունից. նախ, կաթոլիկական քարոզչության և նրա վարդապետների նպատակն է համարվում մահմեդականության վերացումը՝ ի դեմս այն հայ մուրոյալ կաթոլիկների, որոնք իրենց զավակներին ուղարկել են պապական երկրներ, և որոնք այնտեղ երդվել են անողոք պատերազմ մղելու մահմեդականների դեմ: Ընդգծվում է և դավանափոխության ներքաղաքական կամ տնտեսական վտանգը կայսրության համար՝ «մուրոյալ հայերն» օրեցօր բազմանում են, ուստի «շուտով զանազան հայ քահանաներ իրենց՝ մեզ վճարած խարաճը տալու անկարող պիտի դառնան, եթե մենք չարգիլենք»<sup>4</sup>: Կարգադրվում է ձերբակալել և դատապարտել այն հայերին, որոնք բռնվել են լատին եկեղեցիներից դուրս գալու պահին (ինչն ինքնին վկայում էր նրանց դավանափոխ լինելու մասին), իսկ ովքեր համառում են և չեն հրաժարվում իրենց նոր հավատից՝ կաթոլիկությունից, պետք է մահապատժի ենթարկվեն<sup>5</sup>:

Վերադառնանք Եփրեմ Ղափանցու երրորդ՝ վերջին պաշտոնակալությանը, որով հաստատուն տեսք է ստանում այդուհետև այդ պաշտոնը զբաղեցնող անձանց՝ իբրև հայրենի եկեղեցու դավանական ուղղությունը ներկայացնող պատրիարքների ցանկը:

Եփրեմը բավական եռանդ ցուցաբերեց կաթոլիկ հայերին հակադրվելու ուղղությամբ և, ինչպես նրբանկատորեն գրում է Մ. Չամչյանը, «ոչ տուեալ դադար սրտմտութեան իւրոյն» որ, ի դեպ, բորբոքվում էր Ֆեյզուլլահի կող-

<sup>3</sup> Ա. տը Լամոթենի ուղեգրութենէն Հայոց մասին 1950, թիւ 8, 89-98:

<sup>4</sup> Ա. տը Լամոթենի ուղեգրութենէն Հայոց մասին 1950, թիւ 8, 90:

<sup>5</sup> Ա. տը Լամոթենի ուղեգրութենէն Հայոց մասին 1950, թիւ 8, 90: Կար նաև դրա այլընտրանքը՝ կաթոլիկության մեջ համառողը կարող էր ազատվել մահապատժից՝ այս դեպքում մահմեդականություն ընդունելով:

մից: Վերջինս ֆերման տրամադրեց պատրիարքին, որի ուժով թարմացվում էին առհասարակ իրենց միլեթներից հեռացող կաթոլիկների դեմ ուղղված պաշտոնական հալածանքները: «Եւ ի տարածել հրամանի, տարածեցաւ և խռովութիւն մեծ ի մէջ ազգին հայոց և մատնեցան բազումք ի տուգանս և ի տանջանս և անկան բազումք ի բանտ և յոլովք ևս աղքատացան», - գրում է Մ. Չամչյանը<sup>6</sup>: Հայ կաթոլիկների ազդեցիկ գործիչները՝ Մխիթար Սեբաստացին, Խաչատուր Կարնեցին, Պետրոս Մծխիթացին և Սահաթի Սարգիսը այդ ֆերմանով աքսորի կամ թիապարտության էին տրվելու, որոնք, սակայն, փախչելով ազատվում են ձերբակալությունից<sup>7</sup>:

Եփրեմ Ղափանցու պատրիարքության շրջանում ոչ մի չափով չդադարեցին հակասությունները հայ ուղղափառների և կաթոլիկության ջատագովների միջև: Պետք է կարծել, որ համայնքը ծվատող և նրանում գժտությունները բորբոքող դավանական պայքարում հայ կաթոլիկներին զսպելը կամ համոզելն ավելի դյուրին կլիներ, եթե վերջիններիս չսաստարեին կաթոլիկ կրոնավորները և, մանավանդ, Կոստանդնուպոլսում գործող դեսպան Շ. Վիլնյովը: Սրանց և հայ հոգևորականության կողմից փորձեր արվեցին վերջ տալու ողջամտության սահմաններն անցած դավանական ընդհարումներին՝ միաբանության դաշնագիր մշակելով: Այդ համաձայնագրով (1701, 26 հոկտեմբերի) կողմերը հաստատում էին, որ հայոց եկեղեցիներում այդուհետև վերացվելու է նզովքը՝ ուղղված Հռոմի պապին և եկեղեցուն, Ս. Լևոն պապին ու Քաղկեդոնի ժողովին: Իր հերթին, Հռոմի եկեղեցին ճանաչում էր հայ եկեղեցու ծեսը ոչ ըստ լատինականի կատարելու պաշտամունքը, պատարագ մատուցելը, թույլատրում, որ միությունից հետո հայ աշխարհականները (հռոմեադավան) կարող են հայոց եկեղեցի գնալ և այնտեղ ընդունել եկեղեցական խորհուրդները: Հայ հռոմեադավանները, ճանաչելով Հռոմի եկեղեցին սուրբ և գլխավոր եկեղեցի, պետք է մերժեն հայոց եկեղեցիներում Հռոմի եկեղեցուն հակառակ որևէ երևույթ: Համաձայնագիրը խախտողների դեմ սանկցիաներ կիրառելիս բացառիկ դեր էր վերապահվում ֆրանսիական դեսպանին, որն այդպիսիք իրականացնելու էր օսմանյան իշխանությունների գործակցությամբ: Համաձայնագրի պատճեններն ուղարկվելու էին Հռոմի Ս. Հավատաստիյուս ժողովին, Էջմիածնի կաթողիկոսին, ֆրանսիական դեսպանին և Բերայի Վեդարավորաց միաբանության Ս. Լյուդովիկոսի վանքին՝ ի հաստատումն<sup>8</sup>: Այս փաստաթուղթն ընդամենը միջադեպ պետք է համարել ազգային եկեղեցու և Հռոմի եկեղեցու փոխհարաբերություններում, իսկ դրա գործունակության հնարավորության սահմանները պետք է եզրափակվեին այնտեղ, որտեղ ավարտվում էր դեսպան Վիլնյովի ազդեցու-

<sup>6</sup> Չամչեան 1786, 732:

<sup>7</sup> Թորոսեան 1932, 153-154:

<sup>8</sup> Թորոսեան 1932, 163-165:

թյունն առհասարակ հայ համայնքի վրա: Ո՛չ Հռոմի եկեղեցին, և ո՛չ էլ Օսմանյան պետությունը չէին հաստատի այսպիսի համաձայնագիրը, առաջինը՝ կայսրության քրիստոնյաներին իր դավանանքը պարտադրելու անթեք քաղաքականության, իսկ երկրորդը՝ միլեթներում դրան հակառակ հակակաթոլիկական անզիջում ուղեգիծ վարելու պատճառով: Ինչ վերաբերում է հայ ազգային եկեղեցուն, ապա այս կառույցը կամ դրա մի հատվածը միակ անկեղծ կողմն էր այս ամբողջ պատմության մեջ, որ հանուն իր համայնքի համերաշխության և «Հայ եկեղեցականության կողմէ ցոյց տրուած խաղաղասիրութեան շնորհիվ»<sup>9</sup> պատրաստ էր զիջումների: Դրամատիկական չափերի էր հասել նաև Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի կնճիռը. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքների արագ և անակնկալ փոփոխությունները դարձել էին վանքը ոչ պակաս արագությամբ թալանելու հիմք և հիմնավորում, որի պատճառով վանքի պարտքը հասել էր ահռելի չափերի: Հովհաննես Հաննայի գրքում բավական դիպուկ բնութագրերով ցոյց են տրվում Կոստանդնուպոլսի պատրիարքների կողմից գործադրված՝ վանքի թալանի մեխանիզմները, Երուսաղեմում հայտնված կողոպտիչ վերահսկիչների ձեռքով նրա սեփականությունների և գույքի թալանի տխուր հետևանքները<sup>10</sup>: Դրան մեծապես նպաստեց դավանական պայքարի խորացումը պոլսահայ համայնքում: Կաթոլիկների և կաթոլիկամետների և, մյուս կողմից, ազգային եկեղեցու հետևորդների շարունակական ընդհարումները վերացնում էին վանքը բարեկարգելու ամեն մի հնարավորություն: Միլեթների դավանական կարգավիճակը վերահսկող շեյխ ուլ-իսլամը, կարելի է կարծել, Ավետիքին պատրիարք կարգելով՝ հետամտում էր ուժեղացնել հայադավանների դիրքերը՝ Երուսաղեմի պատրիարքությունը կցելով Կոստանդնուպոլսի պատրիարքությանը և այդպիսով զորացնել այս վերջինը՝ կաթոլիկությանը դիմակայելիս, ինչպես և շատ ավելի կառավարելի դարձնելով հայկական ևս մեկ և մյուս կրոնական կառույցը: Երկու աթոռների միացման սկիզբը (ըստ Մ. Օրմանյանի, 1702 թ. հուլիսի 13-ի հրովարտակով)<sup>11</sup>, սակայն, հակառակ և ծանր հետևանքներ պետք է ունենար Ս. Հակոբի վանքի համար՝ այն դարձնելով շատ ավելի մատչելի և անօգնական՝ մայրաքաղաքի մի քանի բախտախնդիր և անօգնական պատրիարքների և նրանց ձեռնասուն կատարողների առջև<sup>12</sup>: Մ. Օրմանյանը խստիվ դատապարտում է այդ միացումը և Հաննային վկայակոչելով՝ մեղադրում է Երուսաղեմի մի քանի միաբանների, որոնք Երուսաղեմի պատրիարք Մինաս Ամդեցու դեմ վրիժառությամբ

<sup>9</sup> Օրմանեան 2001, 3130:

<sup>10</sup> Օրմանեան 2001, 3138:

<sup>11</sup> Օրմանեան 2001, 3138:

<sup>12</sup> Հովհաննես Հաննան Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի ողբալի վիճակը ուղակիորեն կապում էր Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի աթոռի համար ծավալված շահախնդրական և անբարո մրցակցության հետ (տե՛ս Գիրք պատմութեան 1734, 118-119):

լցված՝ «իրենց միաբանութեան դէմ դավաւածանեցին եւ զայն կորստեան բերանը հասուցին՝ քաջալերելով Աւետիքի փառասիրական եւ շահադիտական ձգտումները»<sup>13</sup>: Մինչդեռ վանքի կառավարման մեջ բուն դրած քառսն էլ ավելի էր խորանում իր՝ Կոստանդնուպոլսի պատրիարքությունը ջլատող ներհամայնքային երկպառակություններով: Այդպիսիք ճարակել էին հայ հանրության կրոնական ու աշխարհիկ վերնախավը՝ ներթափանցելով առավել լայն խավերի՝ Կոստանդնուպոլսի եկեղեցիների երեցների և աշխարհիկ շերտերը ներկայացնող արհեստավորների բավական զգալի մասի մեջ:

Գրագետ մարդկանց ընդգրկումն այս հակադրությունների մեջ չէր հապաղելու ներխուժել մշակույթի և գաղափարների բնագավառ, որ մենք տեսնում ենք ազգային հոգևորականության քարոզների, այլև մասնավորապես մայրաքաղաքի հայ գրատպության ասպարեզներում:

### **Առաքելական եկեղեցու հետևորդների համախոսականը (1706, դեկտեմբերի 20)**

Դավանական սուր հակադրության ցայտուն արտահայտությունն են երկու վավերագրեր՝ Կոստանդնուպոլսի ազգային եկեղեցու հետևորդների համախոսականը (մահսեր) Աղեքսանդր կաթողիկոսին և մյուսը՝ Ավետիք պատրիարքի ինքնակենսագրականը՝ գրված նրա առևանգումից (1706 թ.) հետո: Զույգ վավերագրերը գրված են միևնույն՝ ավետիքյանների ուղղությունը ներկայացնող մտայնության կամ այդպիսին հիմնավորող դիրքերից, բնականաբար, Ավետիքի անհատական ընկալումների և շարադրանքի առանձնահատկություններով հանդերձ:

Համախոսականը ներկայացնում է հայ համայնքի ավանդական՝ առաքելական դավանանքն ընդգրկող՝ ճնշող մեծամասնությանը, հոգևորականներից և «իշխաններից» հետո հիշվում են արհեստավոր ստորագրողները. «Նախ հացագործ վարպետայք, հիւսնագործ խալիֆայք, մուճկակար վարպետայք, դերձակար հանդերձից, գործարար բեհեզնեաց և ամենայն արհեստաւորօք արամբ մեծամեծօք մինչ ի փոքունս»<sup>14</sup>, որոնք անկասկած, մեծամասնություն են կազմում և՛ ստորագրողների, և՛ համայնքի հանրության մեջ: Դժվար է գերազնահատել այս համախոսականի սկզբնաղբյուրային նշանակությունը ժամանակի Կոստանդնուպոլսի հայ համայնքում դավանական հակադրությունների պատկերը վերարտադրելու տեսակետից: Ազգային եկեղեցու հետևորդները կաթողիկոսին խնդրում էին սատարել իրենց, վերադարձնել Ավետիքի տեղապահ Հովի. Զմյուռնացուն՝ այդ թունդ ավետիքյանին, ինչպես և Կոստանդնուպոլիս ուղարկել աստվածաբան վարդապետների, որ ձեռնարկեն «ուսուցանել ի դպրոցի զմանկունս»<sup>15</sup>: Հե-

<sup>13</sup> Օրմանեան 2001, 3138:

<sup>14</sup> Աղբիւր ազգային արդեան պատմութեան 1863, 664:

<sup>15</sup> Աղբիւր ազգային արդեան պատմութեան 1863, 677:

ղինակները մատնացույց են անում հակաավետիքյանների առաջնորդներին՝ Մարտիրոս Քյուլիանճուն (նրան մեղադրելով Ավետիքին՝ իր բարերարին մատնելու մեջ), Սսի Մատթեոս կաթողիկոսին և Պալքթեսերցի Հայրապետին<sup>16</sup>:

Համախոսականը հուշում է, որ պոլսահայ համայնքում կաթոլիկությունը ստեղծել էր բավական զգալի սոցիալական հիմքեր: Կոստանդնուպոլսի հայության թվաքանակի վերաբերյալ այստեղ նշվում է, որ «ժողովրդի բազմության «որքանութիւնն գո ճՌ (100.000)»<sup>17</sup>: Գրության մեջ բերված փաստական տվյալներով, սակայն, հնարավոր չէ վերականգնել կաթոլիկ հայերի ճիշտ թվաքանակը, որովհետև ստորագրողները ներկայացրել են ոչ բոլոր եկեղեցիների ծխական կաթոլիկների ցանկերը, և ապա՝ դրանցում ընդգրկել են նաև նրանց համակիրներին: Մյուս կողմից, այդ ցանկերում ամրագրվել են «աղթարմայի» առաջնորդները կամ աչքի ընկնող ներկայացուցիչները և ոչ թե կաթոլիկների ամբողջ բազմությունը կամ դրա մեծ մասը: Իրենք՝ մահերի հեղինակները, հայտնում են, որ եպարքոսը «կոչեաց ուղղափառացս (ազգային եկեղեցու հետևորդներին - Ա.Խ.) թիւ արկանել՝ թէ որքան աղթարմա գոյ ի միջէ ձերում, զտէֆտէրն (ցուցակը - Ա.Խ.) բերեք ինձ: Եւ գրեցաք զգլխատորաց ԼԳ (33) մարդ և այլսն ԵՃ (500). Սակս ամէնն ոչ գրեցաք և տարեալ տուաք»<sup>18</sup>:

Մեծ վեզիրի հրամանով մյուս կիրակի զինվորների ջոկատ է ուղարկվում կաթոլիկ եկեղեցի՝ որսալու այնտեղ հայտնված հայերին, ինչպես ասվում է՝ հանցանքի վայրում: Բռնում են 23 մարդու և անհապաղ ուղարկում թիարան: Եկեղեցուց դուրս եկող մյուս հայերը փախչում են, որին հետևում է ևս 80 հոգու կալանավորումը, շատերը փախչում են քաղաքից, շատերը՝ թաքնվում<sup>19</sup>:

Բնականաբար, «հերձվածողների» թիվը շատ ավելին է եղել, քան մահներում նշված՝ զուտ իրադրական բնույթի տվյալներն են: Ակնհայտ է նաև, որ այս միջադեպում շատ ավելի քիչ կաթոլիկներ են, քան նրանց անգամ մոտավոր քանակն էր: Մյուս կողմից, ավելացնենք, որ իրենք՝ լատին քարոզիչները հակված էին կաթոլիկ հայերի թվաքանակի ուռճացմանը՝ իրենց քարոզչական աշխատանքի արդյունքներին էլ ավելի մեծ կշիռ տալու և Հռոմին իրենց նվիրվածությունն ընդգծելու համար: Այսպես, 1700 թ. կաթոլիկական նվիրակական մի այցի զեկույցում հայ կաթոլիկների թիվը հաշվվում է 8 հազար մարդ<sup>20</sup>: Կաթոլիկ գործիչների ցանկալի պատկերացումներն այս

<sup>16</sup> Աղբիւր ազգային արդեան պատմութեան 1863, 681:

<sup>17</sup> Աղբիւր ազգային արդեան պատմութեան 1863, 677: Համեմատության համար ասենք, որ այդ թիվը բավական նվազեցված է ճիզվիտ Տարիլլոնի նշած տվյալում՝ 1714 թ. կողմերը նա հաշվում է 80 հազար հայ, որից՝ 8 հազար հայ կաթոլիկ (Frazee 156, 178):

<sup>18</sup> Աղբիւր ազգային արդեան պատմութեան 1863, 673:

<sup>19</sup> Աղբիւր ազգային արդեան պատմութեան 1863, 673:

<sup>20</sup> Frazee 1983, 178.

հարցում էլ ավելի ակնհայտ են դառնում վերոհիշյալ՝ 1706 թ. մահսերից 14 տարի անց, 1720 թ. կաթոլիկ ավագերեց Մաուրիի գերաճած թվերը. ըստ նրա, Կոստանդնուպոլսում կան 20 հազար հայ կաթոլիկներ, որոնցից 5 հազարը հաճախում էր Ղալաթիայի եկեղեցին (Ս. Լուսավորիչ), 9 հազարը՝ կաթոլիկական և ազգային եկեղեցիներ, իսկ ավելի քան 6 հազարը գաղտնի կաթոլիկներ էին, որոնք, կաթոլիկություն ընդունելով, երբևէ չէին հաճախել կաթոլիկական եկեղեցիներ<sup>21</sup>:

Քննարկվող փաստաթղթում առանձնացվում են Կոստանդնուպոլսի եկեղեցիների երեցները, որոնց թվաքանակի նշանակալիությունը վկայում է կաթոլիկության տարածման ասպարեզում (քարոզչական աշխատանք, մասնակցությունը կաթոլիկական գրականության տպագրության և տարածման գործերին, որոնք մտավոր պատրաստականություն էին պահանջում և այլն) նրանց զգալի ներդրման մասին: Այս տեսակետից աչքի են ընկնում Ս. Աստվածածին եկեղեցու 8 հերձվածողները՝ բոլորն էլ երեց: Կաթոլիկների խմբում առանձնացվում են այն անձինք, որոնք «թեպետ ոչ են հերձուածողք, այլ միաբան հերձուածողաց վասն կորստեան վարդապետին (Ավետիքին - Ա.Խ.) և հակառակ սուրբ Լուսաւորչի յաթոռոյն»<sup>22</sup>:

Կարելի է կարծել, դատելով վերոհիշյալ ձևակերպման հակասականությունից, որ խոսքն այստեղ վերաբերում է հակաավետիքյան ծայտված կաթոլիկներին:

Դավանական այս գժտությունների խորացման համար մահսերը ստորագրողները չեն մոռանում կաթոլիկության օգտին աշխատող կանանց՝ նշելով, որ այդ «բոզաբարոյ մուղտառքն» «իշճի գոլով (սպասավոր լինելով Ա.Խ.) մտանէին առ կանանց մեծամեծաց և նոքա միաբանեալ ընդ ախթարմայից՝ տալով ձեռամբ սոցա կաշառք նոցա կանանցն և նոքա ընդ արանցն գողանալով զմիտս»<sup>23</sup>:

Համախոսականում չի շրջանցվել լատինական գրականության տպագրության խնդիրը՝ մեղադրելով հերձվածող տպագրիչներին, որոնք «զսուրբգրեանս ապականեցին»<sup>24</sup>: Կաթողիկոսին խնդրում են օրինական ճանաչել Գրիգոր դպրի (Մարզվանցու) հրատարակությունները, «զի սա ընդ մեզ է և հաւատարիմ սուրբ աթոռոյդ մահու չափ»<sup>25</sup>:

<sup>21</sup> Frazee 1983, 182.

<sup>22</sup> Աղբիւր ազգային արդեան պատմութեան 1863, 680:

<sup>23</sup> Աղբիւր ազգային արդեան պատմութեան 1863, 680: Կաթոլիկների ցուցակների մասին տե՛ս Օրմանեան 2001, 3186-3187:

<sup>24</sup> Աղբիւր ազգային արդեան պատմութեան 1863, 678:

<sup>25</sup> Աղբիւր ազգային արդեան պատմութեան 1863, 678: Ս. Ասլանյանը նկատում է, որ օսմանյան մայրաքաղաքում տպված գրքերի 80 տոկոսն ուներ կրոնական բովանդակություն (տե՛ս Aslanian 2023, 266):

Գրատպություն ներխուժած դավանական պայքարի լուսաբանման խնդրին, որ հանգամանալի քննարկված է Ս. Ասլանյանի աշխատության<sup>26</sup> մեջ, այստեղ հարկ չենք համարում առանձին անդրադառնալ: Նկատենք միայն, որ այդ պայքարը տեղափոխվել էր հատկապես XVIII դ. սկզբներից՝ շարունակվելով մեկ դարից ավելի տասնամյակներ, աստվածաբանական և դավանական ասպարեզում: Հայերեն թարգմանված գրականության հրատարակությունը արևմտահայ տեսական մտքի համար յուրօրինակ և անփոխարինելի դուռ էր բացում, անկախ իր դավանական ուղղվածությունից, դեպի եվրոպական գիտություն ու մշակույթ, գրականություն և արվեստ: Առաջ ընկնելով ասենք, որ Հովհաննես Կոլոտի նախածեռնությամբ ու խրատախոսանքով<sup>27</sup> տպագրված այդ թարգմանական գրականությունը նպաստում էր հայ ազգային եկեղեցուն՝ թումբ դնելու այս վերջինը քայքայող կաթոլիկական քարոզչության դեմ, դյուրացնում և արդիական բնույթ տալիս այդ դիմակայությանը:

Բուն իսկ Կոստանդնուպոլսի հայության մեջ նշված դիմակայության նժարը, մասնավորապես, Ավետիքի հայտնությամբ, փոխվում էր հոգուտ «ազգին ընդհանրութեան եւ իրենց եկեղեցւոյն հաւատարիմ դասակարգին»<sup>28</sup>: Այս ասպարեզում կաթոլիկության տարածման երևույթի դեմ և միլիթաների պահպանության տրամաբանությամբ, Բ. դուռը սատարում էր իր ճանաչած համայնքի մեծամասնությանը: Այս հարցում օսմանյան պետական քաղաքականությունը վերջնականապես ձևավորվեց XVII դ. վերջին և XVIII դ. սկզբներին, երբ կաթոլիկությունը միլիթաներում դիտվեց որպես կայսրության մեջ եվրոպական կործանարար ազդեցությանը նպաստող հինգերորդ շարայուն: Թուրք պալատական պատմագիր Ջևդեթ փաշան հետագայում՝ 1778 թ. հայ կաթոլիկների դեմ հարուցված հարցին անդրադառնում էր հստակ ձևակերպմամբ՝ նշելով, որ հայերի, որպես օսմանյան հպատակների ենթարկվելը օտար եկեղեցուն՝ պետության աչքին «քաղաքական խռովություն է համարվում»<sup>29</sup>:

<sup>26</sup> Aslanian 2023.

<sup>27</sup> Ղուկաս Խարբերդցու թարգմանած՝ Լաուտեթոյի «Անտառ այլաբանության» երկի հիշատակարանում (1740) Հովհաննես Կոլոտը հակադրվում էր այդ գրականության տպագրության հակառակորդ ծայրահեղ պահպանողականությանը՝ խոստովանելով. «մորմոքէի ի սրտի իմում, թէ վասն ոյր զհեղգութիւն նախամեծար առնէ ազգն իմ և զանուսումնութիւն քան զուսումնասիրութիւնն ընտրելի համարի...» Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց 1966, 49:

<sup>28</sup> Օրմանեան 2001, 3188: Այսուհանդերձ, հայ կաթոլիկամետ գործիչները Ավետիքի պատրիարքանալով չէին հաշտվել իրենց պարտության հետ: Իր կենսագրականում վերջինս գրում է, որ իր հակառակորդները դիմում են գրել մեծ վեգիրին, «թէ այսչափ դրամ տանք... թող Ջաւետիք վարդապետն հանէ ի պատրիարգութենէ և մեզ շնորհեսցէ զմանսուպ (պաշտոն - Ա.Խ.) պատրիարգութեան» (տե՛ս Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի 1874, 116):

<sup>29</sup> Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին 1961, 238:

Թվում է՝ այս իմաստով պետությունն աջակցում էր հայ համայնքի և եկեղեցու դավանական միասնությանը, սակայն այս միակողմանի բացատրությունն իր պարզունակությունը ձեռք է բերում այն պահից սկսած, երբ օսմանյան իշխանությունները գործի դրեցին հալածական անողորմ միջոցներ՝ կայսրության կաթոլիկների նկատմամբ: Բավական էր միայն պատրիարքի հրամանը կամ համաձայնությունը, և մարդիկ՝ անհատապես, թե խմբերով, հայտնվում էին զնդաններում կամ դատապարտվում թիրախի: Իշխանությունները համայնքի ներսում իրենք էին հրահրում անվերջ վեճերը, մատնություններն ու թշնամանքը: Նույն Ջևդեթ փաշան այս առթիվ գրում էր. «Իրենց (հայերի - Ա.Խ.) դավանանքին ու ռայաների կարգուկանոնին հակառակ ընթացքի մեջ գտնվողներին դաստիարակելու և պատժելու մասին նրանց կողմից ուղարկված ու կնքված խնդրագրերը նկատի պիտի առնվեն և ամեն կերպ չպիտի մերժվեն»<sup>30</sup>:

Անդրադառնալով դարասկզբին խորացած դավանական երկպառակություններին ու կաթոլիկների դեմ ուղղված բռնի գործողություններին՝ նկատենք որ պետության խիստ դիրքորոշումն այս ոլորտում պոլսահայ համայնքի հոգևոր միասնության համար ունեցավ ծանր հետևանքներ: «Այսու առթիւ ի նմին ժամանակի բազումք՝ որ վասն պէսպէս իրաց ունէին թշնամութիւն ընդ այլս, յարեան այլ ի վերայ ընկերք թէ դու ֆռանկ ես, և նեղէին զնոսանն և մատնէին յատեանս, որոց ոմանք բազում ինչ տուժելով զերծանէին և ոմանք արբեալ գան բազում ի բանտ մատնէին և հազիւ ուրեմն զերծանէին», - գրում է Մ. Չամչյանը<sup>31</sup>:

Վտանգներով լեցուն այս մթնոլորտում խուսափելով ձերբակալությունից՝ ստիպված էին թաքնվել կաթոլիկների ճանաչված քարոզիչներ Մխիթար Սեբաստացի և Խաչատուր Կարնեցի վարդապետները<sup>32</sup>: Մխիթար Սեբաստացուն, ի դեպ, Մ. Չամչյանն առանձնացնում է հակամարտ կողմերին «խաղաղութեան ու միասնութեան» կոչելու՝ նրա հորդորներով՝ նկատելով, որ նա «ոչ դադարէր ի խրատելոյ զամենայնսն. որոյ աղագաւ կրէր յերկուց կողմանց և տառապանս՝ և լսէր մեղադրանս»<sup>33</sup>:

### **Միջդավանական հետագա հակասություններ և թարգմանական կրոնական գրականություն. Կոմիտաս Քյոմուրճյան**

Միջդավանական պայքարը Եփրեմ Ղափանցի և Ավետիք Եվդոկիացի պատրիարքների ժամանակ (1701-1706) մեղմանում կամ մարտավարական դադար էր առնում ֆրանսիական դեսպանի կամ իրենց՝ կողմերի խոհե-

<sup>30</sup> Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին 1961, 238:

<sup>31</sup> Չամչեան 1786, 731:

<sup>32</sup> Չամչեան 1786, 732:

<sup>33</sup> Չամչեան 1786, 731:

մության թելադրանքով: Մ. Օրմանյանը դավանական պայքարի շարունակության պատճառներն է համարում լատիներերի կամ լատինամետների հրահրումները՝ ֆրանսիական դեսպանի խրախուսանքով, և մյուս կողմից՝ պատրիարքական թեկնածուների մեքենայություններն ու ժողովրդի մեջ «արմատացած կուսակցությունները»<sup>34</sup>:

Կաթոլիկության տարածման գործում հարկ է նկատել, կարծում ենք, հայ կրոնավորների մի մասի, հատկապես կրթված երեցների վրա արևմտյան աստվածաբանական մշակույթի և հենց հայ եկեղեցիներում կաթոլիկ քարոզիչների (մանավանդ հայ քարոզիչների) թողած ազդեցությունը: Հետաքրքիր են, այս իմաստով, հոլանդացի ճանապարհորդ և ականատես դը Լամոթեի (Կոստանդնուպոլսում է եղել XVIII դարի առաջին տարիներին) դիտարկումները, որ հրապարակել է Հ. Քյուրտյանը «Հայրենիք» ամսագրում<sup>35</sup>: Հայերի մեջ դավանափոխությանը նպաստող գործոններից մեկը նա համարում է աղքատ մարդկանց բողոքը ծանր հարկերի դեմ, որ նրանք վճարում են իրենց քահանաներին պահելու համար: Մասնավոր բնույթ ունի նրա մյուս դիտողությունը՝ ունևոր հայերը դավանափոխության են դիմում, որովհետև կաթոլիկական դավանանքը հարմարավետ կյանքի շատ ավելի լայն հնարավորություններ է տալիս: Ավելի իրատեսական է նրա այն կարծիքը, որ մարդկանց դավանափոխության է մղում օտարի լծից ազատագրվելու գաղափարը՝ ժողովրդի մեջ շրջանառող Ներսեսի տեսիլքը (ավանդաբար հարատևած գուշակությունը արևմտյան մի ժողովրդի աջակցությամբ այդ լծից ազատագրվելու և ինքնուրույնություն հաստատելու երազանքը)<sup>36</sup>:

Կաթոլիկական թարգմանական գրականության տարածումը մի հայտնի չափով ևս նպաստում էր դավանափոխության հաջողություններին՝ այս կամ այն չափով բավարարելով հատկապես նոր և կրթված սերնդի պահանջմունքները՝ աստվածաբանության և իմաստասիրության բնագավառներում առնչվելու եվրոպական արժեքներին: Բառացիորեն այս նույն շրջանում դրսևորվող՝ Հովհաննես Կոլոտի և նրա համախոհների<sup>37</sup> ջանքերը՝ ընտրողաբար յուրացնել տալ հիշյալ արժեքները՝ հօգուտ հայրենի եկեղեցու հոգևոր արդիականացման ու ամրապնդման, վկայում էին Կոստանդնուպոլսի հայ հանրության մեջ մշակութային նոր հոսանքներին հուն և ուղղություն

<sup>34</sup> Օրմանեան 2001, 3160:

<sup>35</sup> Ա. տը Լամոթեի ուղեգրութենէն Հայոց մասին 1950, թիւ 6, 94-104, թիւ 7, 86-92: Ուղեգրութիւնը տպագրվել է Լոնդոնում, 1722-1723 թթ., դրա էջերում ուշագրավ տեղեկություններ կան հայ համայնքում միջդավանական երկպառակությունների և պատրիարքական մրցակցությունների մասին:

<sup>36</sup> Ա. տը Լամոթեի ուղեգրութենէն Հայոց մասին 1950, թիւ 6, 101:

<sup>37</sup> Հովհաննես Հաննան՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի պատմագիրը, նույնպես բարձր էր գնահատում թարգմանական գրականության այդ նշանակությունը՝ հիմնավորելով դրա կարևորությունը ազգային եկեղեցու դավանանքն ամրապնդելու տեսակետից (տե՛ս Գիրք պատմութեան 1734, 178):

տալու երևույթի մասին: Այդ երևույթի ինքնատիպ զուգահեռը, արդեն ձևականորեն կամ որակապես անկախ դրսևորմամբ, հանդիսացան, կարծում ենք, Մխիթար Սեբաստացու և նրա համախոհների գործունեությունն ու կաթոլիկական միաբանության հիմնադրումը՝ աննախընթաց մի երևույթ հայ մշակույթի պատմության մեջ, երբ վերջինս նոր պահանջմունքների թելադրանքով գերաճում է դավանանքի կաշկանդող սահմաններից՝ տեղաշարժվելով մեկ այլ, բայց նույնպես դավանության արտաքին շղարշի ներքո:

Միջդավանական երկպառակությունները պոլսահայ համայնքում աննախադեպ սրության հասան Ավետիք Եվդոկիացու պատրիարքության շրջանում: Եթե Եփրեմ Ղափանցու դավանական ծայրահեղությունները<sup>38</sup> դրսևորվեցին մի քանի դրվագներով՝ ընդհատվելով նաև, ինչպես տեսանք, հաշտության անհաջող փորձով, ապա Ավետիքի ողջ պատրիարքական գործունեությունը Ֆեյզուլլահի անզիջում հակակաթոլիկական կեցվածքի թելադրանքով ենթարկվում էր օսմանյան պետության նոր և բացահայտ ժխտական դիրքորոշմանը՝ օտար ազդեցությունների դեմ: Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի վերստին միացումը Կոստանդնուպոլսի պատրիարքությանը (1705 թ.), Ավետիքին հետևած պատրիարքների կարճաժամկետ պաշտոնակալումները վկայում են, որ միջդավանական պայքարը չէր կորցրել իր հակամարտ բնույթը մինչև Հովհաննես Կոլոտ: Պատրիարքական աթոռը զբաղեցրած (ըստ Մ. Չամչյանի՝ ֆրանսիական դեսպանի խնդրանքով<sup>39</sup>) Մատթեոս Սարին, ապա Մարտիրոս Երզնկացին «ֆրանկացեալների» դրածոներն էին, որոնք, թեկուզ և կարճ ժամանակով, ի հայտ էին բերում մեծ վեզիրի հակակաթոլիկական դիրքի տեղատվությունը ֆրանսիական դեսպանի պնդումների առջև. հնարավոր է՝ նաև ազդեցիկ ու դրամատեր կաթոլիկ հայերի խնդրանքով: Սակայն պետական ռազմավարությունը մնում է ռազմավարություն՝ Ավետիքյանները կամ ազգային եկեղեցու հետևորդները վերստին ստացան իրենց առաջնայնությունը կառավարության աչքին: Կաթոլիկների առաջնորդ Մարտիրոս Երզնկացին ձերբակալվեց, ըստ վերոհիշյալ մահսերի՝ հենց Ս. Լուսավորիչ եկեղեցում պատարագելիս, որին հետևեց Մատթեոս Սարիի ձերբակալումը<sup>40</sup>: Մեծ վեզիրը հաստատում է Ավետիքյաններից Միքայել Խարբերդցի երեցի պատրիարքական թեկնածությունը՝ փաստորեն ժամանակավորապես, մինչև առևանգված Ավե-

<sup>38</sup> Դավանական պայքարում իր ցուցաբերած եռանդով հանդերձ՝ Եփրեմ Ղափանցին ուներ ստեղծագործական շնորհներ. մի ձեռագրում նա իրեն անվանում է «Կոստանդնուպոլսյ պատրիարք Եփրեմ երաժիշտ» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի 2008, 1032):

<sup>39</sup> Չամչեան 1786, 750: Հակառակ Մ. Չամչյանի, Մ. Օրմանյանը, ելնելով ժամանակագրական հաշվումներից, կարծում է, որ Մատթեոս Սարին պատրիարք չէր կարող լինել (Օրմանեան 2001, 3168):

<sup>40</sup> Աղբիւր ազգային արդեան պատմութեան 1863, 672:

տիքի հնարավոր վերադարձը («պահեսցէ յաթոն մինչ գայցէ վարդապետն»)<sup>41</sup>:

Սահակ Ապուչեխցի, Հովհաննես Զմյուռնացի, դարձյալ Սահակ Ապուչեխցի, Հովհաննես Գանձակեցի պատրիարքների աթոռակալության ընթացքում միջդավանական պայքարը Կոստանդնուպոլսի հայ համայնքում թեև չդարձրելով, աստիճանաբար պետք է կորցնեի իր սրությունը: Մեզ հետաքրքրող մեկնակետ տասնամյակում այդ հակասությունները իրենց հատկապես զգացնել տվեցին Հովհաննես Զմյուռնացու պատրիարքության ժամանակ, երբ ձերբակալվեցին նրա կազմած՝ տասնյակ «կաթոլիկացեալ» հայեր, որոնց մեջ՝ իր համոզմունքին հավատարիմ մնացած և գլխատված Կոմիտաս քահանան (1707, հոկտեմբերի 25)<sup>42</sup>:

Պետք է նկատել Մ. Չամչյանի և Մ. Օրմանյանի տրամագծորեն հակադիր մոտեցումները հայերի միջև դավանական ներհակությունների, և մասնավորապես Կոմիտաս քահանայի կրոնական համոզմունքների նկատմամբ: Եթե Մ. Չամչյանը Կոմիտասին մատնելու հանցանքը վերագրում է Հովհաննես Զմյուռնացի պատրիարքին<sup>43</sup>, ապա Մ. Օրմանյանը կարծում է, որ նրա դեմ հարուցված գործը «Թէ ազգային շրջանակին եւ թէ պետական պարունակին մէջ իբր սկզբնապատճառ եւ իբր շարժառիթ ունեցած է Աւետիքի անձին վրայ կատարուած կաթոլիկական նենգաւոր բռնութիւնը»<sup>44</sup>:

Նույն տրամաբանությամբ, այս երկու հեղինակները հանդես են բերում ակնհայտ նախանձախնդրություն՝ Կոմիտասի դավանական ինքնությունը բնութագրելիս: Մ. Չամչյանը հայտնում է, որ Հովհաննես Զմյուռնացին Կոմիտասին և նրա համախոհներին մեղադրելիս հայտնել են մեծ վեզիրին, որ նրանք «ապստամբեալ ի տէրութենէ ձերմէ՝ միաբանեալ են ընդ ֆռանկս»<sup>45</sup>: Կոմիտասի նահատակությունը ևս Մ. Չամչյանը նկարագրում է որպես սրբի, բնականաբար, կաթոլիկական սրբի նահատակություն: Մ. Օրմանյանը, ընդհակառակն, չի վարանում պնդել, որ Կոմիտասը մինչև վերջ հավատարիմ է մնացել հայադավանությանը: Որպես փաստարկ, նա վկայակոչում է այն, որ բանտից իր ընկերներին գրած նամակում Կոմիտասը «որոշակի յայտարարած է, թէ ինքը փրանկացեալ մը չէ և իր վրայ վստահութիւն ներշնչելու համար խոստացած է ասագերիցութենէ հրաժարիլ և քարոզ չխօսիլ»<sup>46</sup>: Մեզ ծանոթ՝ 1706 թ. դեկտեմբերի 20-ի մահսերում, մինչդեռ, Կոմիտասը համարվում է կաթոլիկ, և ինքն էլ, ինչպես վերը նշվեց, խոստանում է չքարոզել: Հետազոտության պարագայում, կարծում ենք, նա շարունակում

<sup>41</sup> Աղբիր ազգային արդեան պատմութեան 1863, 672-673:

<sup>42</sup> Չամչեան 1786, 752, 754:

<sup>43</sup> Չամչեան 1786, 752:

<sup>44</sup> Օրմանեան 2001, 3193:

<sup>45</sup> Չամչեան 1786, 752:

<sup>46</sup> Օրմանեան 2001, 3193:

էր մնալ հոգևոր և գործնական երկվության վիճակում. ակներև է, որ նա, ինչպես և հայ համայնքի այլ անդամներ, որոնց առավել քան հարմարվում է լատինամետ եզրույթը, հանդես էր գալիս որպես ազգային եկեղեցու հետևորդ՝ հայ միլիթի սուբյեկտ, բայց հակված՝ կաթոլիկական դավանանքին և արևմտյան մշակույթին: Այս անձինք, դարձյալ ըստ մահսերի դիպուկ մեկնաբանության, «թէպէտ ոչ են հերձուածողք, այլ միաբան հերձուածողաց»<sup>47</sup>: Նրանց, ինչպես տեսանք վերը, կաթոլիկ ավագերեց Մաուրին անվանում էր գաղտնի (ազգային եկեղեցուց չհեռացած) կաթոլիկներ՝ հաշվվելով մի քանի հազար:

Ազգային եկեղեցու և հռոմեադավան հայերի հակասություններն այս դարաշրջանում պետք է մեղմանային՝ կորցնելով իրենց սրությունը Հովհաննես Կոլոտ պատրիարքի երկայնամիտ և շրջահայաց գործելակերպի<sup>48</sup>, ինչպես նաև միլիթներում կաթոլիկության դեմ օսմանյան պետության խստամբեր քաղաքականության հետևանքով:

### **Եզրակացություններ**

Կոստանդնուպոլսի հայ համայնքում դավանական ներհակություններն աննախընթաց սրության հասան XVIII դ. սկզբին, երբ կաթոլիկական քարոզիչներին հաջողվել էր իրենց դավանանքը տարածել կամ համակիրներ գտնել հայ միլիթի ամենատարբեր շերտերում՝ կրթված կրոնականների, արհեստավորների և վերնախավի որոշ հատվածներում: Դրան հակադեմոստրացիան հանրության շատ ավելի բազմամարդ մեծամասնությունը, Առաքելական եկեղեցին՝ իրենց ազգային միասնությունն ու դավանանքը պահպանելու մտահոգությամբ: Դավանական պայքարը դրսևորվեց եկեղեցիներում կրոնական քարոզների, դպրոցական ուսուցման, գրատպության ասպարեզներում, անգամ պատրիարքների արագ պաշտոնանկությունների ձևով: Բախումների շարունակական առիթներ դարձան պաշտամունքը ազգային թեկաթոլիկական եկեղեցում իրականացնելու խնդիրը, եկեղեցիներում դավանական ուղղվածության շարականների երգեցողությունը և այլն: Այս երկպառակությունները բորբոքվում էին օսմանյան պետության հակակաթոլիկական ընդգծված դիրքորոշման պայմաններում, որչափով եվրոպական տերությունների հետ ունեցած հակամարտությունը Բ. դռանը մղում էր առավել հետևողական դարձնել երկրի ոչ մահմեդական համայնքները կաթոլիկության ազդեցությունից պատվարելու և նրանց դավանական ամբողջականությունը ամրապնդելու ջանքերը: Քրեական հանցանք էր համարվում միլիթներում հաշվառված անձանց հայտնվելը կաթոլիկական եկեղեցիներում, այնտեղ աղոթելն ու ծիսակատարությունների մասնակցելը՝ ընդհուպ

<sup>47</sup> Աղբիւր ազգային արդեան պատմութեան 1863, 680:

<sup>48</sup> Բանալոքճեան 1984, 38-39:

մինչև նրանց զնդաններ նետելը, թիապարտության ուղարկելը<sup>49</sup> և այլն: Այն, որ Կոստանդնուպոլսում դավանական հակասությունները պողոթնացին հատկապես Եփրեմ Ղափանցի և Ավետիք Եվդոկիացի պատրիարքների ժամանակ և դրան հաջորդող տարիներին՝ մինչև Սահակ Ապուլսեցի պատրիարք (1702-1708)՝ դարձյալ ուղեկցվելով պատրիարքների կարճ աթոռակալումներով, վկայում է հայ հանրության մեջ կաթոլիկական դավանանքի՝ մի հայտնի չափով ազդեցության և դրա դեմ պետության կողմից խրախուսվող հայադավանության պայքարի մասին: Ավելացնենք, որ դավանական պայքարի մեջ ներգրավված կողմերը (կաթոլիկ հայերին սատարում էին ֆրանսիական դեսպանն ու Կոստանդնուպոլսի կաթոլիկական միաբանությունները) փորձեցին գրավոր համաձայնություն հաստատել (1701 թ. հոկտեմբերի 26-ի համաձայնագիրը)՝ հայ համայնքում երկպառակությունները վերացնելու կամ մեղմելու նպատակով: Այն մերժվեց կողմերի վերջնական և անզիջում կեցվածքի պայմաններում, որին հետևեցին միջդավանական է՛լ ավելի տևական երկպառակություններն այդ տասնամյակին:

### **Օգտագործված գրականություն**

- Աղբիւր ազգային արդեան պատմութեան 1863, Կռունկ հայոց աշխարհին, Թիֆլիս, թիւ Թ., էջ 662-683:
- Ա. տը Լամոթեի ուղեգրութենէն Հայոց մասին 1950, Հայրենիք, Բոստոն, թիւ 8, էջ 89-97:
- Բամպուքճեան Գ. 1984, Յովհաննէս պատրիարք Կոլոտ (1678-1741), Ստանպուլ, տպ. Մուրադ օֆսեթ, 415 էջ:
- Գալէմքեարեան Գր. 1915, Կենսագրութիւն երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու եւ ժամանակին հայ կաթողիկեայք, Վիեննա, Մխիթարեան տպարան, 384 էջ:
- Գիրք պատմութեան Սբ և մեծի քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս և Սրբոց Տնօրինականաց Տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 1734, Կոստանդնուպոլիս, Մահտեսի Աստվածատուրի տպարան, 378 էջ:
- Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին 1961, հ. Ա, կազմ. Սաֆրաստյան Ա.Խ., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 403 էջ:
- Թորոսեան Յովհ. 1932, Վարք Մխիթարայ աբբայի Սեբաստացոյ, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 395 էջ:
- Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի 1874, Արարատ, Էջմիածին, թիւ Գ, էջ 112-116:
- Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի 2008, հ. Դ, Երևան, «Նաիրի» հրատ. - Երևանի պետական համալսարանի հրատ., 1692 էջ:
- Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց 1966, հ. 1, կազմ. Պողարեան Ն. եպ., Երուսաղէմ, տպարան սրբոց Յակոբեանց, 676 էջ:
- Չամչեան Մ. 1786, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, ի տպարանի Յովհաննու Փիացեանց, 896+195 էջ:
- Օրմանեան Մ. արք. 2001, Ազգապատում, հ. Բ, Մայր աթոռ Ա. Էջմիածին, 3894 էջ:

<sup>49</sup> Գր. Գալէմքեարյանը տարբերակում է թիապարտության երկու տեսակ՝ թիարան /քյուրեկ/ և ավելի ծանր՝ նավարան (թերսանե). վերջին դեպքում՝ ոչ միայն ցմահ, այլև թիավարում՝ վերակացով մշտական մտրակահարումների ներքո (տե՛ս Գալէմքեարեան 1915, 94):

- Aslanian S.D. 2023, Early Modernity and Mobility. Port Critics and Painters across the Armenian Diaspora, 1512-1800. Yale University Press, New Haven and London, 557 p.
- Frazer C.A. 1983, Catholics and Sultans. The Church and the Ottoman Empire 1453-1923, London-New York, Cambridge University Press, 388 p.

**РЕЛИГИОЗНЫЕ РАЗНОГЛАСИЯ В КОНСТАНТИНОПОЛЬСКОЙ  
АРМЯНСКОЙ ОБЩИНЕ  
(первое десятилетие XVIII в.)**

Альберт Харатян

Резюме

В начале XVIII в. борьба между последователями армянской церкви и армянскими католиками обрела более четкий характер. Османское государство, вступившее в новый этап противоборства с европейскими державами и рассматривавшее католичество в качестве враждебной идеологии, настаивало на проявлении более жесткого отношения к католикам и всеми возможными средствами пыталось препятствовать распространению католической веры в немусульманских общинах империи. Начались гонения и против армянских католиков, что в определенной мере пытался смягчить французский посол. Это привело к углублению противоречий в армянской общине, что нашло отражение в последовательной смене патриархов, в присоединении константинопольского армянского патриаршества к армянскому патриаршеству Иерусалима, в строгом запрете посещения католической церкви и наказании виновных каторжным трудом и т.д. Подобного рода раздоры, имевшие место в армянской общине, на какое-то время обострили межконфессиональную борьбу, кульминацией которой стало обезглавливание архимандрита Комитаса Кёмурчяна (по вердикту властей), который не отрекся от своих религиозных убеждений.

Однозначно жесткая политика османского государства в отношении католичества имела место на протяжении XVIII века в целом, вплоть до признания католической общины со стороны государства (1832).

**Ключевые слова** – армянские католики, французский посол, константинопольский армянский патриарх Аветик, траниты, великий визирь, Комитас Кёмурчян, численность армянских католиков Константинополя.

**RELIGIOUS DISPUTES IN THE CONSTANTINOPLE ARMENIAN COMMUNITY  
(First Decade of the 18<sup>th</sup> Century)**

Albert Kharatyan

Abstract

At the beginning of the 18<sup>th</sup> century, the struggle between the followers of the Armenian Church and the Armenian Catholics acquired a clearer character. The Ottoman state, which had entered a new stage of confrontation with the European powers and viewed Catholicism as a hostile ideology, insisted on showing a tougher attitude towards Catholics and tried by all possible means to prevent the spread of the Catholic faith in non-Muslim communities of the empire. Persecution also began against the Armenian Catholics, which the French ambassador tried to mitigate to a certain extent. This led to deepening contradictions in the Armenian community, which was reflected in the successive change of patriarchs, in the annexation of the Armenian Patriarchate of Constantinople to the Armenian Patriarchate of Jerusalem, in the strict ban on visiting the Catholic Church and the punishment of those guilty with hard labor, etc. This kind of discord that took place in the Armenian community for some time intensified the interfaith struggle, which culminated in the beheading of Archimandrite Komitas Kemurchyan (according to the verdict of the authorities), who did not renounce his religious beliefs.

The clearly strict policy of the Ottoman state regarding Catholicism took place throughout the 18<sup>th</sup> century as a whole, right up to the recognition of the Catholic community by the state (1832).

**Key words** – Armenian Catholics, French ambassador, Constantinople Armenian Patriarch Avetik, Thranites, Grand Vizier, Komitas Kemurchyan, the number of Armenian Catholics in Constantinople.

# ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅ ԱՇԽԱՐՀԻԿ ՈՒ ՀՈԳԵՎՈՐ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՓՈՒԼՈՒՄ

## Արարատ Հակոբյան

Պատմական գիտությունների դոկտոր  
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4  
Էլ. հասցե՝ ararathakobyan47@gmail.com  
ORCID: 0009-0005-8875-5970

Հոդվածը ներկայացվել է 14.11.2023, գրախոսվել է 20.11.2023, ընդունվել է տպագրության 25.04.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.1-30

### Ամփոփում

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ ժողովրդի համար ունեցավ առաջադիմական նշանակություն՝ նրա կյանքի շատ ոլորտներում զարգացում ապահովելով: Դրանից զատ, պատմության այս փուլում՝ XIX դ. առաջին երեսնամյակում, հայ աշխարհիկ և հոգևոր շրջանակները մի շարք գործնական փորձեր կատարեցին՝ վերականգնելու հայկական պետականությունը (թագավորությունը):

Այդ նպատակով ռուսահայ մի խումբ գործիչներ՝ Խ. Լազարյանը, Կ. Արղու-թյանը և ուրիշներ, ռուսական իշխանությունների գիտությամբ, մշակեցին հայկական ինքնավար թագավորության նախագիծ՝ Ռուսաստանի հովանու ներքո: Հայկական պետականության վերականգնման հույսեր էր փայփայում նաև հայ նշանավոր հոգևոր գործիչ արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին: Այդ ամենի յուրատեսակ խորհրդանշական արտահայտությունը դարձավ Ռուսաստանի կայսր Նիկոլայ I-ի կողմից «Հայկական մարզի» հիմնումը՝ հրամանագրով: Սակայն այն պահպանվեց մինչև 1840 թ., իսկ 1849 թ. վերածվեց Ռուսական կայսրության ծայրամասային մի նահանգի:

Հարկ է նշել, որ հայ-ռուսական հարաբերությունների բոլոր փուլերում, չնայած հայերի ցուցաբերած նվիրվածությանը և ռուսամետ կողմնորոշմանը, ռուսական կառավարությունը, գործնականում առաջնորդվելով մեծապետական, նվաճողական շահերով, մերժում էր հայկական պետականության վերականգնման, առավել ևս անկախության գաղափարը:

Եվ միայն նշված իրադարձություններից 100 տարի անց հայ ժողովուրդը կարողացավ վիթխարի ջանքերի գնով ձեռք բերել քաղաքական անկախություն և 1918 թ. վերականգնել հայկական պետականությունը՝ Հայաստանի Հանրապետությունը:

**Բանալի բառեր՝** Արևելյան Հայաստան, Ռուսաստան, Թուրքմենչայի պայմանագիր, Ն. Աշտարակեցի, Ի. Պասկևիչ, ինքնավարություն, «Հայկական մարզ»:

### Ներածություն

Հայոց նոր շրջանի պատմության պատմագիտական քննության առանցքային հիմնախնդիրներից են ուշ միջնադարից օտար նվաճողների բիրտ լծի տակ հայտնված հայության ազատագրման և անկախ պետականության՝

XIX դ. հայ ականավոր հրապարակախոս Ստ. Նազարյանցի բնորոշմամբ՝ «**քաղաքական անօթի**», վերականգնման հարցերը<sup>1</sup>: Հայտնի է, որ հին և միջնադարյան Հայոց (թվով՝ 5-6) պետականությունների կորստից հետո XVI-XVII դդ. թուրք-պարսկական պատերազմներում հայոց հայրենիքը կռվախնձոր դարձավ և մի քանի անգամ բաժանվեց նրանց միջև, որի հետևանքով հայ ժողովուրդը հայտնվեց այդ երկու՝ արևելյան տիպի բնապետական կայսրությունների տիրապետության տակ:

Բնականաբար, ազատաբաղձ գաղափարներով տարված հայ հոգևոր և աշխարհիկ գործիչները դարեր շարունակ պայքարում էին հայրենիքի ու ժողովրդի ազատագրման համար: Տեսնելով, որ սեփական ուժերով հնարավոր չէ ազատագրվել թուրք-պարսկական բնապետական լծերից՝ նրանք սկզբում դիմեցին Արևմուտքի քրիստոնյա պետություններին՝ ակնկալելով նրանց օգնությամբ վերականգնել հայոց պետականությունը: Բայց արդյունքի չհասնելով՝ հայ հասարակական-քաղաքական միտքը կողմնորոշվեց դեպի Հայաստանի հյուսիսային մեծ հարևանը՝ դեպի օրեցօր զորեղացող Ռուսաստան: Սկսած Պետրոս Մեծի ժամանակներից՝ Հայաստանի ազատագրման ու պետականության վերականգնման նպատակով հայկական պատվիրակություններ էին մեկնում այնտեղ: Ծրագրեր էին կազմվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուսաստանի կողմից տարածաշրջանի նվաճումը օբյեկտիվորեն համընկնում էր հայերի ազատագրական ձգտումների հետ:

Ռուսական բանակը քանիցս պատերազմներ էր մղել Պարսկաստանի դեմ, և, ի վերջո, XIX դ. առաջին երեսնամյակի երկու հաղթական պատերազմների շնորհիվ՝ 1813 թ. հոկտեմբերին Գյուլիստանի, իսկ 1828 թ. փետրվարին Թուրքմենչայի ռուս-պարսկական պայմանագրերով, ամբողջ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին: Դա պատմագիտական արժևորման ու գնահատականի առումով առաջադիմական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար: Սակայն պետք է նաև արձանագրել, որ քաղաքական իմաստով այն ազատությունն ու անկախությունն չբերեց հայ ժողովրդին:

Այս համատեքստում հարկ ենք համարում ներկայացնել պատմականորեն կարևոր երկու դրվագ, երբ հենց ռուս-պարսկական պատերազմի շրջանում (1826-1828 թթ.) հայ աշխարհիկ ու հոգևոր գործիչներն ակնկալում էին, որ ռուսական զորքի, ինչպես նաև պատերազմում հայերի գործուն մասնակցության շնորհիվ ազատագրված Արևելյան Հայաստանում հնարավոր է **վերականգնել հայկական պետականությունը**, անշուշտ, Ռուսաստանի հովանու տակ:

Դրվագներից մեկը անցյալից ավանդաբար ժառանգված՝ ռուսահայ գործիչների՝ 1827 թ. դեկտեմբերի վերջերին կազմած նախագիծն էր Հա-

<sup>1</sup> Նազարեանց 1913, ԼԵ, 89-90 և 99:

յաստանի պետականության վերականգնման վերաբերյալ՝ թեկուզ ինքնավարության կարգավիճակով, իսկ մյուսը, որ դարձյալ առնչվում էր պետականության գաղափարին, հայ նշանավոր հոգևոր գործիչ Ներսես Աշտարակեցու թափած հայրենասիրական ջանքերի մասին էր՝ միտված ռուս զորավար Ի. Պասկևիչի օժանդակությամբ հաջողելու հայոց ինքնավարության խնդիրը: Սակայն երկու դեպքում էլ դրանք կյանքի չկոչվեցին, քանզի ռուսական կառավարությունը առաջնորդվել ու առաջնորդվում է սեփական մեծապետական ազգային շահերով և բոլոր ժամանակներում բացառել է հայկական կամ իր կողմից նվաճված որևէ այլ երկրի ու ժողովրդի պետականության, առավել ևս անկախության վերականգնման հնարավորությունը: Ինքնին հասկանալի է, որ ռուսական իշխանություններն իրենց նվաճումների ճանապարհին խրախուսում էին քրիստոնյա ժողովուրդների ակտիվ մասնակցությունը այդ գործընթացներին, իհարկե, այդ ընթացքում ազատագրման մասին բանավոր խոստումներ տալով այդ ժողովուրդներին: Բայց դրանք այդպես էլ մնում էին անկատար:

### **Դրվագ 1. Ռուսահայ աշխարհիկ գործիչների փորձերը Ռուսաստանի հովանու ներքո Հայկական ինքնավար թագավորություն հիմնելու հարցում**

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու փուլում հայ հասարակական գործիչները, ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներում հիմնականում ռուսական կողմում իրենց ակտիվ մասնակցությամբ ջանքեր էին գործադրում ռուսական հովանու ներքո հայկական պետականության գաղափարի նյութականացման ուղղությամբ: Հիրավի, Արևելյան Հայաստանի նվաճումը և ռուսական տիրապետության հաստատումն Անդրկովկասում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում ավելի առարկայական հույսեր արթնացրին, և ազատագրության ծրագրեր մշակվեցին արևելահայ տարածքներում վերականգնելու հայկական պետականությունը՝ միգուցե ինքնավարության ձևով: Այդ իմաստով, XIX դ. առաջին երեսնամյակին, մասնավորապես՝ ռուս-պարսկական երկրորդ պատերազմի շրջանում ռուսական զենքի միջոցով Հայաստանի ազատագրման և անկախության վերականգնման հույսով էին խանդավառված հայ աշխարհիկ ու հոգևոր մի խումբ գործիչներ: Հայ ազգային գործիչ, պատմաբան Գ. Լազյանն այդ մասին գրում է. «Հայ ազգային գործիչները կը յուսային ոչ միայն ազատագրուիլ պարսկական եւ թրքական լուծէն, այլեւ վերաստեղծել Հայաստանի անցեալ փառքը, դառնալու համար ազատ ու անկախ պետութիւն»<sup>2</sup>:

Հենց այդ շրջանում ռուսաց մայրաքաղաքում մի խումբ հայ հայրենասեր գործիչներ՝ **Խաչ. Լազարյանը, Կոնստ. Արղության-Երկայնաբազուկը, Ալ. Խուդաբաշյանը** և ուրիշներ, ռուս-պարսկական երկրորդ՝ 1826-1828 թթ.

<sup>2</sup> Լազյան 1991, 1:

պատերազմի ընթացքում, հետևելով XVIII դ. երկրորդ կեսի իրենց նախորդների՝ Հ. Արղությանի Հ. Լազարյանի, Շ. Շահամիրյանի հայրենանվեր օրինակին, միաժամանակ հայերին խրախուսելու նպատակով, ռուսաց կայսր Նիկոլայ 1-ի գիտությամբ Ս. Պետերբուրգում մշակեցին և 1827 թ. դեկտեմբերին կառավարությանը ներկայացրին հայ ազգային շրջանների ազատաբաղձ տրամադրություններն արտահայտող քաղաքական բազմահոդված մի **նախագիծ**, որով առաջ էր քաշվում Անդրկովկասի հայկական տարածքներից Ռուսական կայսրության հովանու ներքո **Հայկական ինքնավար թագավորություն** ստեղծելու գաղափարը: Այն օժտվելու էր ներքին ինքնավարության իրավունքով, հայկական օրենքներով ու զինուժով, զինանշանով, դրոշով և նման հատկանիշներով, իսկ ռուսաց կայսրը պաշտոնապես ընդունելու էր նաև հայոց թագավորի տիտղոսը: Տարածքային առումով Հայկական թագավորությունը պետք է ընդգրկեր ռուսական տիրակալության ներքո գտնվող հայկական պատմական բոլոր տարածքները<sup>3</sup>: Այդ նույն գաղափարի ջատագովներից էր նաև վիրահայոց թեմի առաջնորդ, մեծ հայրենասեր Ներսես արք. Աշտարակեցին, որը հույս էր տաժում ռուսական զենքի միջոցով վերականգնելու արևելահայ, այսպես կոչված, «Հայկական դքսությունը»<sup>4</sup>:

Սակայն այդ նախագիծը նախորդների նման մնաց անկատար: Դրա փոխարեն 1828 թ. մարտի 21-ին Նիկոլայ I-ի բարձրագույն հրամանով Թուրքմենչայի պայմանագրով Ռուսական կայսրությանը միացված Երևանի և Նախիջևանի նախկին խանությունների և Օրդուբադի օկրուգի տարածքներից ստեղծվում է ընդամենը «**Հայկական մարզ**» (Армянская область) անվանումով վարչատարածքային մի միավոր՝ այն ներառելով կայսեր տիտղոսի մեջ<sup>5</sup>, որից, սակայն, մեկ տասնամյակ անց (1840 թ.) «Հայկական մարզ» կոչված վարչական անվանումն էլ պիտի դուրս մղվեր և, ի վերջո, վերածվեր հսկայածավալ կայսրությանը բնորոշ սովորական մի նահանգի (1849 թ): Ժամանակին ճիշտ է նկատել պրոֆ. Վ. Պարսամյանը, որ՝ «Ցարական կառավարությունը Հայկական մարզի ստեղծման հետ բնավ չէր կապում ո՛չ «անկախ», ո՛չ «ավտոնոմ» **Հայաստան** և ո՛չ Ռուսաստանի հարավում «բուֆերային» մի պետություն ստեղծելու նպատակ: Նա բոլորովին էլ մտադիր չէր իր վիթխարի կայսրության մեջ մի ինչ-որ նոր, այն էլ օտարազգի պետություն ստեղծել (ընդգծումները մերն են - Ա.Ը.)»<sup>6</sup>: Դա

<sup>3</sup> Տե՛ս Պարսամյան 1967, 101, Դիլոյան 1966, 181, Հայոց պատմություն 2010, 262:

<sup>4</sup> Тунян 2012, 169-172.

<sup>5</sup> Հիշարժան է հայ հասարակական-քաղաքական գործիչների ակտիվությունը, որոնք հայկական թագավորության վերականգնման հույսեր էին փայփայում: Նրանք անգամ հայկական զինանշանի մի նախագիծ պատրաստեցին հայկական թագի, Մասիսի, Արարատյան դաշտի ու Սուրբ Էջմիածնի պատկերով: Դա, իբրև Հայկական մարզի զինանշան, 1833 թ. հաստատվեց Նիկոլայ I կայսեր կողմից: Սակայն այդ ոգևորությունը կարճ տևեց:

<sup>6</sup> Պարսամյան 1947, 138:

հակասում էր ցարական Ռուսաստանի մեծապետական ու ծավալապաշտական շահերին: Միանգամայն տեղին է նաև պրոֆ. Վ. Դիլոյանի դիտարկումը. «Միամտություն էր, իհարկե, մտածել, որ սեփական ժողովրդին երկաթյա կապանքի մեջ պահող նիկոլայան ռեժիմը կընդառաջեր հայ ժողովրդի և նրա իղծերն արտահայտող գործիչների ազատագրական բաղձանքներին, ազատություն կշնորհեր մի երկրում, որը բանտ էր ժողովուրդների համար»<sup>7</sup>: Մի խոսքով, հայերի փայփայած քաղաքական հույսերը, կապված Ռուսաստանի հետ, պատրանքային էին և այդպես էլ չարդարացան:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ «Հայկական մարզի» և ընդհանրապես Արևելյան Հայաստանի էթնիկ կազմի ու պատկանելության վերաբերյալ մեր օրերում հարևան Ադրբեջանի պետական և տեղեկատվական միջոցներով լայն տարածում է ստացել կեղծ ու ստահող քարոզչական այն վարկածը, թե իբր XIX դարասկզբին Ռուսական կայսրությանը միացված արևելահայ տարածքների՝ Երևանի և Նախիջևանի պարսկական խանությունների հիմքի վրա 1828 թ. մարտի 21-ին ստեղծված «Հայկական մարզը» ոչ ավել, ոչ պակաս համարվում է «Արևմտյան Ադրբեջան»<sup>8</sup>: Մինչդեռ պատմական իրողությունն այն է, որ մինչև 1918 թ. չէր կարող խոսք լինել Անդրկովկասյան Ադրբեջան վարչական, էլ չենք ասում՝ պետական միավորի կամ «ադրբեջանցի» կոչվող ազգի մասին: Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու ժամանակներում արևելակովկասյան տարածաշրջանում (դիստանցիաներում) ապրող մուսուլմանական էթնիկ տարրերը հայտնի են եղել որպես *կովկասյան թյուրք* կամ *թաթար* անունով, և դրանք տակավին չէին ձևավորվել որպես ազգային ինքնագիտակցության հասած, ինքնաբավ ազգային (էթնիկ) միավոր: Այստեղ կարող է նույնիսկ հարց ծագել. երբ Նիկոլայ I կայսրը պաշտոնապես հրամանագրում էր «Հայկական մարզի» անվանակոչումը, ապա *ադրբեջանցի* համարվող մտավորականները, եթե իրոք կային այդպիսիք, ինչո՞ւ հանդես չեկան որևէ հրապարակային քաղաքական հայտարարությամբ՝ դժգոհելու և մեղադրելու Նիկոլայ I-ին ադրբեջանական հողերը «Հայկական մարզ» անվանելու հարցում: Բնականաբար, չէր կարող լինել այդպիսի բան, քանզի երկու դար առաջ դեռևս չկար ձևավորված նման որևէ ազգ:

Կրկին անդրադառնալով ադրբեջանական պետական ու հանրային քարոզչամեթոդային կողմից ներկայումս լայնորեն թմբկահարվող «Ադրբեջան» աշխարհագրական հասկացության և արևելակովկասյան երկրամասը, ինչպես նաև Արևելյան Հայաստանը Ադրբեջան ներկայացնելու կեղծ՝ ծավալապաշտական հավակնություններին՝ XIX դարասկզբի համապատասխան վավերագիր նյութերով կարող ենք փաստել հետևյալը: Ինչպես հայտնի է,

<sup>7</sup> Դիլոյան 1989, 321:

<sup>8</sup> Տե՛ս Гусейнов, 2013:

1801 թ. հունվարի 18-ին Պավել I կայսեր մանիֆեստով Արևելյան Վրաստանը (Քարթլի-Կախեթի թագավորությունը) բռնակցվեց Ռուսաստանին: 1801 թ. մարտի 11-ի պալատական հեղաշրջման ժամանակ դավադրությամբ սպանված Պավել I-ին հաջորդած՝ նրա որդի Ալեքսանդր I-ը 1801 թ. սեպտեմբերի 12 (24)-ի մանիֆեստով վերահաստատեց Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին: Ուշագրավ է, որ Ալեքսանդր I-ի մանիֆեստում կան, տարածաշրջանի պատմաաշխարհագրական մի շարք անվանումների հետ միասին, այդ թվում՝ Կասպից ծովի, Կուր-Արաքսյան ռազմավարական հանգույցի, Քարթլի-Կախեթի, Վրաստանի, Պարսկաստանի, ինչպես նաև երկու անգամ Հայաստանի (ընդ որում, մի դեպքում՝ «Մեծ Հայաստան» անվանումով) հիշատակություններ<sup>9</sup>:

Վերստին դառնալով պետականության գաղափարին՝ այս անգամ կապված արդեն Արևմտյան Հայաստանի հետ, հարկ է փաստել, որ 1828-1829 թթ. ռուս-թուրքական հերթական պատերազմի առնչությամբ, արևմտահայ աշխարհիկ ու հոգևոր գործիչները ակնկալություն են ունեցել ռուսական զորքի ու զենքի օգնությամբ ազատագրել նաև Արևմտյան Հայաստանը: XIX դ. պատմաբան Ալ. Երիցյանը գրում է, որ Կ. Պոլսի մեջ լուրեր էին պտտվում, թե իբր «Ռուսիան մտադիր է՝ Հայոց թագավորություն հռչակելու մտքով՝ խլել նաև Տաճկական Հայաստանը»<sup>10</sup>: Բայց դրանք ևս կարելի է համարել ընդամենը հիմնազուրկ, պատրանքային լուրեր: Այդուամենայնիվ, պատմականորեն տեղին է ակադ. Ա. Մելքոնյանի դիտարկումը, որ հայկական պետականության վերականգնման հարցում, ռուսական կառավարության հանդես բերած անտարբերությամբ հանդերձ, հայ գործիչներն ու հանրությունը շարունակել են «գործուն աջակցություն ցույց տալ Անդրկովկասը նվաճելու Ռուսաստանի ձգտումներին»<sup>11</sup>: Բարեբախտաբար թե դժբախտաբար այդ մտածելակերպը մեզանում տակավին պահպանվում է նաև մեր օրերում: Եվ դա կարելի է համարել հայ հանրության շրջանում արմատացած՝ ավելի քան

<sup>9</sup> Տե՛ս ПВАР, т. 1, док. 1456, 176, Присоединение Восточной Армении к России (1801-1813) 1972, 44, Внешняя политика России XIX и начала XX в. 1960, 93-94 и др. Այդ համատեքստում, բնականաբար, հարց է ծագում՝ կա՞ր արդյոք «Ադրբեջան» անվանումով գոնե վարչատարածքային միավոր: Բայց թող զարմանալի չթվա՝ չկա որևէ հիշեցում ու հիշատակում Ադրբեջան երկրամասի մասին, քանզի XIX դարասկզբին չի եղել նման անվանումով երկիր, էլ չենք խոսում պետականության մասին: Այն ժամանակ խոսք կարող էր լինել ընդամենը պարսկական Ադրպատականի մասին, որի անվանումը անդրկովկասյան թյուրք-թաթարները հետագայում յուրացրին ու տարածեցին ներկայիս Ադրբեջան Հանրապետության վրա: Եվ այս ամենը այն պարագայում, երբ ընդամենը մեկ դարի պատմություն ունեցող Ադրբեջանի ներկայիս ծավալապաշտ առաջնորդները, դրանց քարոզամեքենան, կեղծելով պատմությունն ու իրականությունը, հավակնում են տիրանալ բուն արևելահայ տարածքներին, ընդհուպ մինչև Երևանին, ինչպես արդեն ակնարկեցինք դրանք ներկայացնելով իբրև ոչ ավել, ոչ պակաս՝ «Արևմտյան Ադրբեջան», հմմտ.՝ Հակոբյան 2022, 28-32:

<sup>10</sup> Երիցյանց 1894, 358:

<sup>11</sup> Мелконян, Историко-политическое значение присоединения Восточной Армении к России (1801-1828 гг.), տե՛ս <https://www.twirpx.com/file/398390/>

երեքդարյա ռուսական պատմաքաղաքական կողմնորոշման ավանդական դրսևորման արտացոլանք: Պատմական ճշմարտությունն այն է, որ այս կամ այն պետության ու ժողովրդի հանդեպ հանդես բերվող քաղաքական կողմնորոշումներում ու համոզմունքներում երբեք չպետք է ընկնել ծայրահեղությունների մեջ, այդ թվում նաև Ռուսաստանի պարագայում: Ազգային-պետական գաղափարով առաջնորդվող յուրաքանչյուր քաղաքացու մոտ գլխավորը համազգային հեռագնա շահի գիտակցումն է, ազգային պետության ու անկախության պաշտպանությունը արտաքին ու ներքին թշնամական ուժերի ոտնձգություններից:

## **Դրվագ 2. Դիտարկումներ Ն. Աշտարակեցի - Ի. Պասկևիչ հարաբերությունների հարցի շուրջ**

XIX դ. առաջին կեսի հայ ականավոր ամենաազադեցիկ հոգևոր գործիչներից էր հայ եկեղեցու Թիֆլիսի (Վիրահայոց) թեմի (1814-1830 թթ.), այնուհետև Նոր Նախիջևանի-Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ (1830-1843 թթ.), իսկ հետագայում՝ Ամենայն Հայոց կաթողիկոս **Ներսես Ե Աշտարակեցին** (1843-1857 թթ.), որը, տոգորված հայրենիքի ազատագրության (ինքնիշխանության) գաղափարներով, մեծ հույսեր էր կապել հյուսիսի հզոր հարևանի օգնության հետ: Լեոյի դիտարկմամբ՝ Ներսես Աշտարակեցին ավելի մեծ եռանդով շարունակեց Հովսեփ արք. Արղությանի գործը<sup>12</sup>: Ծառայելով Կովկասի հասարակական-քաղաքական կյանքի խոշոր կենտրոն Թիֆլիսում՝ Ն. Աշտարակեցին մեծ հեղինակություն էր ձեռք բերել և եռանդուն գործունեության ու կազմակերպչական մեծ կարողությունների շնորհիվ անմիջական կապեր ու շփումներ ուներ Կովկասի ռուսական զինվորական ու քաղաքացիական բարձր իշխանությունների, ինչպես, օրինակ, Կովկասի կառավարչապետի և Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատարի պաշտոնում 1827 թ. մարտից Ալեքսեյ Երմոլովին փոխարինած, Նիկոլայ I-ի հրամանով գեն.-ադյուտանտ նշանակված Իվան Պասկևիչի հետ<sup>13</sup>:

Պատմությունից ու գրականությունից հայտնի են Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու ժամանակներից ի վեր հայ հոգևոր և աշխարհիկ գործիչների՝ Իս. Աբովյանի, Ն. Աշտարակեցու, Կարապետ արք. Էրզրումցու, Հ. վրդ. Ալամդարյանի, Մ. Թադիադյանի, Մ. Նալբանդյանի և մյուսների տված բարձր գնահատականներն այդ առնչությամբ: Սակայն հետագայում նրանք մեծապես հուսախաբ եղան այդ հարցում: Ինչպես արդեն ասվեց, Ռուսաստանի օգնությամբ «հայրենյաց ազատության» ջերմ պաշտպան Ներսես արք. Աշտարակեցու՝ Հայաստանի ինքնավարության մասին հույսերը ոչ միայն չարդարացան, այլև իր անցանկալի հայացքների

<sup>12</sup> Լէօ 1902, 11:

<sup>13</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն 1974, 146:

համար նա հալածանքի ենթարկվեց ռուսական իշխանությունների կողմից և, իբրև քաղաքականապես անվստահելի անձ, Նիկոլայ I-ի հրովարտակով (23.IV.1830) ազատվեց Թիֆլիսի հայ հոգևոր թեմի առաջնորդի պաշտոնից և փաստորեն «աքսորվեց» Բեսարաբիա՝ որպես Նոր Նախիջևան հայոց թեմի առաջնորդ<sup>14</sup>: Կասկած չկա, որ արք. Ներսես Աշտարակեցուն Անդրկովկասի գործերից հեռացնելը, այն է՝ աքսորելը, ուներ ավելի շատ քաղաքական շարժառիթ: Եվ դժվար է համաձայնել տեղ-տեղ շրջանառվող այն կարծիքին, որ այդ հեռացումը բացատրվում է զուտ Կովկասի կառավարչապետ Ի. Պասկևիչի և Երևանի ժամանակավոր վարչության անդամ Ներսես Աշտարակեցու միջև անձնական լարված հարաբերություններով<sup>15</sup>:

Ուշադրության է արժանի պրոֆ. Հ. Հովհաննիսյանի դիտարկումը Ն. արք. Աշտարակեցու «աքսորի» հարցում: Նա, հենվելով մի շարք տվյալների վրա, չանտեսելով հանդերձ Ի. Պասկևիչ - Ն. Աշտարակեցի հարաբերությունների լարվածության հանգամանքը, կարծիք է հայտնում, որ ցարական իշխանությունները, նկատի առնելով 1828-1829 թթ. ռուս-թուրքական մոտեցող պատերազմը, նրան գործուղում են Բեսարաբիա (Քիշնև)՝ որպես տեղի հայոց թեմի առաջնորդ՝ խնդիր դնելով Բալկանյան տարածաշրջանում ապրող հայությանը կողմնորոշելու դեպի Ռուսաստան: Այդպիսով, ըստ Հ. Հովհաննիսյանի՝ **«ռուսական արքունիքի ձեռնարկած քայլը պետք է դիտել ոչ թե աքսոր, ինչն ընդունված տեսակետ է մեզանում, այլ ռուսական կառավարության հեռահար նպատակ (ընդգծումը մերն է - Ա.Հ.)»**<sup>16</sup>: Նշանակում է՝ Ն. Աշտարակեցու «աքսորի» գործում նրա և Ի. Պասկևիչի անձնական հարաբերությունները առաջնային դեր չեն խաղացել: Մինչդեռ պատմաբան Ալ. Երիցյանը նկատել է տալիս, որ Ն. Աշտարակեցու և Պասկևիչի միջև առկա լարված հարաբերությունները Ներսեսին թույլ չտվեցին լիովին վերադարձնել նախկինում բռնազավթված հայ եկեղեցական բոլոր կալվածքները<sup>17</sup>:

1843 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցու մասին գրականության մեջ կա պատմական մի ուշագրավ դրվագ: Կաթողիկոսը մինչև իր կյանքի վերջին րոպեն, իբր, իր ծոցագրպանում պահելիս է եղել մի գաղտնի թուղթ, որի բովանդակության մասին ոչ ոք չգիտեր: Նրա մահից հետո այդ թուղթն ընկել է Սարգիս Եպիսկոպոս Հասան-Ջալալյանի

<sup>14</sup> Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 117, 1-3:

<sup>15</sup> Տե՛ս Երիցեանց 1894, 349, Երիցեանց 1895, 246: Օրինակ՝ Ալ. Երիցյանցը, հղում անելով ռուս հեղինակներին, նշում է, որ ազգությամբ մայրոտա Պասկևիչն ունեցել է «քննախնդիր բնավորություն»: Բացի այդ, պատմաբանը որպես ռազմական ու հոգևոր այդ երկու գործիչների միջև ծագած սառը հարաբերությունների պատճառ է նշում այն հանգամանքը, որ Օշականի (Աշտարակի) ճակատամարտում Պասկևիչը ռուսական զորքի կրած մեծ կորուստների գլխավոր մեղավորներից է համարել Ն. Աշտարակեցուն, որն այդ ծանր ճակատամարտի ժամանակ էջմիածնի վանքի պաշտպանության համար գեներալ Ա. Կրասովսկուց լրացուցիչ օգնություն է խնդրել (հմմտ. Երիցեանց 1894, 296-298):

<sup>16</sup> Հովհաննիսյան 2022, 258-259:

<sup>17</sup> Տե՛ս Երիցեանց 1895, 246:

ծեռքը, և վերջինս այդ նամակագրությունը իբրև թե վաճառել է ռուսներին<sup>18</sup>: Ալ. Երիցյանը այս կապակցությամբ գրում է. «Քանի մի անգամ տպագրութեան մէջ յիշուած է եւ այժմ էլ կենդանի ականատես պատմողներ կան, որ Ներսէսը մինչև իւր կենաց վերջին րոպէն ծախ ծոցի գրպանում մի թուղթ էր պահում, որից չէր բաժանվում գիշեր եւ ցորեկ. թէ ի՞նչ բովանդակութիւն ունէր այդ թուղթը - ոչ ոք չգիտէ, որովհետև նա ոչ ոքի չէր ցոյց տալիս»<sup>19</sup>: Բեսարաբիայից վերադառնալով՝ Ներսէս Աշտարակեցին ստանձնում է Ամենայն Հայոց կաթողիկոսությունը: Իր մտերիմների հետ զրոյցներից մեկի ժամանակ Պասկևիչի և անցած-գնացած անցքերի մասին խոսելիս ծերունի հայրապետը ձեռքը դնում էր ծախ ծոցագրպանին և խորին հառաչանքով ասում. «Պասկևիչը ասեալ էր կաշկանդուած»<sup>20</sup>: Ի դեպ, Ի. Պասկևիչին վերաբերող թղթի մասին ակնարկում է նաև արևմտահայ պատմագիր Ավետիս Պերպերյանը<sup>21</sup>:

Չի բացառվում, որ ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ժամանակ ռուսական բանակի Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար, գեներալ-ադյուտանտ Ի. Պասկևիչը Ն. Աշտարակեցուն ոգևորելու, նրա միջոցով հայերին ռուսական կողմում ակտիվորեն ներգրավելու համար ինչ-որ խոստումներ է տվել՝ պատերազմի հաղթական ավարտի պարագայում, «բարձրագույն հաճությամբ», Ռուսաստանի հովանու ներքո Հայաստանին ինքնավարություն տալու մասին: Դրա վերաբերյալ «գրավոր թուղթն» էլ պահել է հայրենասեր կաթողիկոսն իր ծոցագրպանում: Բայց Ռուսաստանի պետական քաղաքականության մեջ խոսք չէր կարող լինել նորանվաճ Արևելյան Հայաստանին որևէ ձևով ինքնավարություն տալու մասին, քանի որ հակասում էր ռուսական շահերին: Ի. Պասկևիչն էլ չէր կարող կատարել իսկ տված խոստումը, եթե, իհարկե, նման խոստում նա տվել է, ուստի և առաջանում է Ն. Աշտարակեցուն աքսորելու գաղափարը. այն է՝ կառավարության մակարդակով, յուրօրինակ աքսորի ձևով Աշտարակեցուն հեռացնել Անդրկովկասից՝ դեպի հեռավոր Բեսարաբիա, որպեսզի դրանով նրան հեռու պահեն հայոց պետականության վերականգնման համար ունեցած իր ձգտումներից՝ «իբրև թե վտանգաւոր անձ տէրութեան համար»<sup>22</sup>:

### Եզրակացություններ

Հայ-ռուսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման գրեթե բոլոր փուլերում, չնայած հայերի ցուցաբերած նվիրվածությանն ու ընդգծված ռուսական կողմնորոշմանը, ինչպես նաև պատերազմներում ռուսա-

<sup>18</sup> Այդ մասին տե՛ս <https://yhm.am, archives>.

<sup>19</sup> Երիցեանց 1894, 356:

<sup>20</sup> Երիցեանց 1894, 356:

<sup>21</sup> Տե՛ս Պերպերեան 1871, 181:

<sup>22</sup> Երիցեանց 1894, 357:

կան կողմում հանդես բերած ակտիվ մասնակցությանը, այդուհանդերձ, Ռուսաստանի կառավարությունը, առաջնորդվելով մեծապետական շահերով, գրեթե բոլոր ժամանակներում **մերժել** է հայկական պետականության, առավել ևս՝ անկախության վերականգնման գաղափարը: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ժամանակներից դեռ մեկ դար պիտի անցներ, որ հայ ժողովուրդը, անկախ որևէ երկրի ցանկությունից, մաքառելով, իհարկե, մարդկային վիթխարի կորուստների գնով, ի վերջո, 1918 թ. հասներ քաղաքական ազատագրության՝ հայոց պետականության վերականգնմանը:

### Օգտագործված գրականություն

- Ագաթանգեղոս 1983, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 700 էջ:
- Անասյան Հ. 1961, XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 443 էջ:
- Դիլոյան Վ. 1966, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեությունից, Երևան, Հայկ ՍՍՌ ԳԱ հրատ., 273 էջ:
- Դիլոյան Վ. 1989, Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, ԵՊՀ հրատ., 356 էջ:
- Երիցեանց Աղ. 1894, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Ա (1800-1830 թթ.), Թիֆլիզ, «Մ. Մարտիրոսեանի եւ ընկ.» տպ., 658 էջ:
- Երիցեանց Աղ. 1895, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Բ (1831-1842 թթ.), Թիֆլիզ, «Մ. Մարտիրոսեանի եւ ընկ.» տպ., 592 էջ:
- Լազեան Գ. 1991, Հայաստան եւ Հայ Դատը, Երևան, «Ադանա», 435 էջ:
- Լէօ 1902, Ստեփանոս Նազարեանց, Թիֆլիս, Մարտիրոսյանցի տպ., 224 էջ:
- Լեո 1926, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս 1, Երևան, ԵՊՀ սղագրական հրատ., 228 էջ:
- Հայ ժողովրդի պատմություն 1974, հ. 5, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 734 էջ:
- Հայոց պատմություն 2010, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, հ. 3 Երևան, «Զանգակ-1997», 704 էջ:
- Հովհաննիսյան Ա. 1957, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 524 էջ:
- Հովհաննիսյան Հ. 2022, Ներսես Աշտարակեցի-Իվան Պասկևիչ հակամարտության հարցի շուրջ, ՎԷՄ, Երևան, N 4 (80) հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 253-270:
- Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 117, էջ 1-3:
- Նազարեանց Ստ. 1913, Երկեր, հ. 1, Թիֆլիս, տպ. «Ն. Ադանեանի», 428 էջ:
- Պարսամյան Վ.Ա. 1947, Ա.Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 279 էջ:
- Պարսամյան Վ.Ա. 1967, Հայ ժողովրդի պատմություն (1801-1917 թթ.), հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 535 էջ:
- Պէրպլերեան Ա. 1871, Պատմություն Հայոց (սկսեալ ի 1772 ամէ փրկչին մինչեւ Յամն 1860), Կ. Պոլիս, տպ. «Պօղոսի Քիրիշճեան եւ ընկ», 621 էջ:
- Փավստոս Բուզանդ 1987, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 455 էջ:
- Гусейнов Р. 2013, Конфликты на Кавказе: история, современность и перспективы урегулирования, 8 июля, [www.rizvanhuseynov.com/2013blogpost24.html](http://www.rizvanhuseynov.com/2013blogpost24.html), <http://yerevan500.com/?m=seh&id=14> (ներբեռնման օրը՝ 18.03.2023):

- Внешняя политика России XIX и начала XX в. 1960, серия 1, т. 1, Москва, с. 93-94.
- Мелконян А., Историко-политическое значение присоединения Восточной Армении к России (1801-1828 гг.), <https://www.twirpx.com/file/398390/> (տրրբրննման օրր՝ 03.04.2023).
- Парсамян В.А. 1978, Присоединение Восточной Армении к России и его историческое значение (к 150-летию), Ереван, тип. ЕГУ, 67 с.
- Присоединение Восточной Армении к России (այրրհրտրննման՝ ՄՏԱՐ) (1801-1813) 1972, сб. док.), т. 1, под ред. академика Агаяна Ц.П., Ереван, изд. АН Арм. ССР, 715 с.
- ՄՏԱՐ (1814-1830) 1978, сб. док., т. 2, под ред. академика Ц.П. Агаяна, Ереван, изд. АН Арм. ССР, 658 с.
- Тунян В.Г. 2012, Католикос Всех Армян Нерсес V Аштаракеци. «Защитник отечества», Св. Эчмиадзин, «Первопрестольный Св. Эчмиадзин», 424 с.
- <https://yhm.am>, archives (retrieved on 18.03.2023).

## **ИДЕЯ ВОССТАНОВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННОСТИ В АРМЯНСКИХ СВЕТСКИХ И ДУХОВНЫХ КРУГАХ В ПЕРИОД ПРИСОЕДИНЕНИЯ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ К РОССИИ**

Арарат Акопян

Резюме

Присоединение Восточной Армении к России однозначно имело важное значение для армянского народа с точки зрения прогресса, наметившегося во многих сферах жизни. Помимо этого, на этом историческом этапе, в первые десятилетия XIX века, армянские светские и духовные круги предприняли ряд конкретных попыток по восстановлению армянской государственности (царства).

С этой целью группа российско-армянских деятелей – Х. Лазарян, К. Аргутян и другие, с ведома российских властей, разработала проект автономного Армянского царства под эгидой России. Надежды на восстановление армянской государственности питал и видный армянский духовный деятель, архиепископ Нерсес Аштаракеци. Символическим выражением этого являлась «Армянская область», созданная на основе манифеста российского императора Николая I, однако она просуществовала до 1840, а в 1849 году стала окраинной провинцией Российской империи.

Следует отметить, что практически на всех этапах армяно-российских отношений, несмотря на проявляемую армянами преданность и пророссийскую ориентацию, российское правительство, руководствуясь империалистическими и экспансионистскими интересами, отвергало идею восстановления армянской государственности и, тем более, независимости.

И лишь спустя 100 лет после упомянутых событий армянский народ, ценой огромных усилий, обрел политическую свободу и в 1918 году восстановил армянскую государственность, создав Республику Армения.

**Ключевые слова** – Восточная Армения, Россия, Туркманчайский договор, Н. Аштаракети, И. Паскевич, автономия, «Армянская область».

## THE IDEA OF RESTORING STATE IN ARMENIAN SECULAR AND SPIRITUAL CIRCLES DURING THE ACCESSION OF EASTERN ARMENIA TO RUSSIA

Ararat Hakobyan

### Abstract

The accession of Eastern Armenia to Russia objectively had a progressive significance for the Armenian people in terms of advances in many spheres of life and activity of the country and people. Then, in the first decades of the 19th century, during the accession of Eastern Armenia to Russia, Armenian secular and spiritual circles made more substantive attempts to restore Armenian statehood (kingdom).

To this end, a group of Russian-Armenian leaders Kh. Lazaryan, K. Argutyan and others, with the knowledge of the Russian authorities, developed a project for an autonomous Armenian kingdom under the auspices of Russia. At the same time, the prominent Armenian spiritual figure Arch. Nerses Ashtaraketsi also hoped for the restoration of Armenian statehood. One of the symbolic expressions of all this can be considered the creation of the "Armenian region" by the manifesto of the Russian Emperor Nicholas I, but it did not last long, until 1840, in 1849 it turned into an ordinary outlying province of the Russian Empire.

From the outline of the article it follows that in almost all periods of Armenian-Russian relations, despite the devotion shown by the Armenians and the pronounced Russian political orientation, active participation in wars on the Russian side, the policy of the Russian government, regardless of the color of its flag, towards Armenia and the Armenian people was characterized by the fact that, guided by imperialist and aggressive (expansionist) interests, the idea (goal) of restoring Armenian statehood and, even more so, independence, almost always was rejected.

After the mentioned events, about a century will pass, until the moment, when, regardless the will of Russia, the Armenian people with the greatest efforts and enormous human losses finally achieved political liberation and in 1918 the Armenian statehood was restored – the Republic of Armenia.

**Key words** – Eastern Armenia, Russia, Treaty of Turkmenchay, N. Ashtaraketsi, I. Paskevich, autonomy, "Armenian region".

# ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՒՆ ԱՂԹԱՄԱՐՈՒՄ (X ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ)

## Վարդան Ալեքսանյան

Պատմական գիտությունների թեկնածու  
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն

ՀՀ, Տավուշի մարզ, Իջևան, Ուսանողական 3

Էլ. հասցե՝ vardanaalexanyan406@gmail.com

ORCID: 0009-0005-3615-4778

Հոդվածը ներկայացվել է 21.04.2023, գրախոսվել է 26.06.2023, ընդունվել է տպագրության 25.04.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.1-42

### Ամփոփում

Արաբների կողմից Դվինի կաթողիկոսարանի հիմնահատակ ավերումից և հայրապետական տիրույթների բռնազավթումից հետո Հովհաննես Դրասխանակերտցին կյանքի վերջին շրջանն անցկացնում է Վասպուրականում՝ փաստացի ձևակերպելով Հայոց նվիրապետական կենտրոնի տեղափոխությունը Դվինից Աղթամար: Այդ հարցում մեծ դեր է ունեցել Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունին, որի դիրքը Հայաստանի իշխանական աստիճանակարգության մեջ բնութագրվում է որպես Primus inter pares: Հայոց նվիրապետության կենտրոնը տեղափոխելով Աղթամար և մոտ երկու տասնամյակ (925-943) տնօրինելով նրա առաջնորդների ընտրությունը՝ Գ. Արծրունին շարունակաբար մեծացնում էր իր իշխանությունը համազգային հոգևոր կառույցի վրա: Այդ ընթացքում Աղթամարում հաջորդաբար պաշտոնավարել են Ստեփանոս Բ, Թեոդորոս Ա և Եղիշե Ա Ռշտունի կաթողիկոսները, որոնք տեղի հոգևորականության ներկայացուցիչներ էին: Վերջիններս Հայոց կաթողիկոս էին դարձել Արծրունի արքայի կամքով ու ցանկությամբ, ուստի և նրա «բարձր հովանու» ներքո էին: Փաստացի ունենալով գերակա դիրք և բարձր տիտղոսային իշխանություն՝ Գ. Արծրունին պարտավորված է զգում ձեռնարկել երկրի և ժողովրդի անվտանգության գերխնդրից բխող գործնական քայլեր, չեզոքացնել արտաքին սպառնալիքները: Այդ նպատակով նա հայերի անունից նամակ է հղում Բյուզանդիայի կայսր Ռոմանոս Լեկապենոսին ու առաջարկում, Հայ և Հույն եկեղեցիների դավանաբանական տարաձայնությունները վերացնելով, վերականգնել առաջին երեք տիեզերական ժողովների ժամանակաշրջանի եկեղեցաքաղաքական բնականոն հարաբերությունները: Գագիկը պատրաստակամություն է հայտնում հաստատել քաղաքական դաշնակցություն և ընդունել կայսրության հովանավորությունը, որը կապահովագրեր հայերին արտաքին սպառնալիքներից: Բյուզանդական արքունիքը նամակը թողնում է անպատասխան՝ անուղղակիորեն արտահայտելով իր թերահավատությունը Գագիկ Արծրունու առաջարկների վերաբերյալ:

**Բանալի բառեր՝** Գագիկ Արծրունի, Աղթամար, կաթողիկոսանիստ, Դվին, նամակ, Բյուզանդիա, Վասպուրական:

### Ներածություն

Աշոտ Երկաթի (914-929) մահից հետո Հայաստանի և քրիստոնյա Այսրկովկասի քաղաքական թատերաբեմում մեծապես աճում է Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու (908-943) դերը: Թե՛ Բյուզանդիան, թե՛ խալիֆայությունը դե յուրե (de jure) ճանաչում են նրա գերակայությունը տարածաշրջանի իշխանների նկատմամբ<sup>1</sup>: Գագիկ Արծրունու ծրագրերում կարևոր տեղ էր զբաղեցնում Վասպուրականը հայոց նվիրապետության կենտրոն դարձնելու խնդիրը: Դեռևս իր գահակալության սկզբից Արծրունի իշխանը կարևորել է երկրամասի հոգևոր աթոռի դերը, աջակցել նրա գերազահության հաստատմանը: Ղ. Ալիշանը հայտնում է, որ, ըստ Աղթամարի հին մատյանների տվյալների, տակավին մինչև կաթողիկոսական աթոռի տեղափոխությունն այստեղ X դ. սկզբներից արդեն Աղթամարն ունեցել է առանձնաշնորհյալ կարգավիճակ. Գագիկ Արծրունին «ուզեց որ ինչպես ինքնագլուխ քաղաքական տէր, այնպես ալ եկեղեցական գլուխ մ'ունենայ իր երկիրն»:<sup>2</sup> Թագավորի հավանությամբ 921 թ. Հայոց կաթողիկոսը Գագիկ Արծրունու եղբորորդի Եղիսեին ձեռնադրում է Վասպուրականի թագավորության եպիսկոպոսապետ, որը Հայոց կաթողիկոսի նվիրապետական ենթակայության ներքո էր<sup>2</sup>: X առաջին քառորդի վերջին, օգտվելով Բագրատունյաց Հայաստանի քաղաքական պառակտվածությունից և Դվինի կաթողիկոսարանի փաստացի լուծարումից, Գ. Արծրունին Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն հրավիրում է Վասպուրական և Աղթամարը դարձնում հայոց կաթողիկոսանիստ: Հայոց կաթողիկոսական կենտրոնի տեղափոխությունն Աղթամար պետք է խորհրդանշեր Վասպուրականի՝ Հայաստանի գլխավոր թագավորություն լինելը և ընդգծեր նրա տիրակալի ազդեցությունը համահայկական հոգևոր կառույցի վրա: X դ. 2-րդ քառորդին Արծրունի թագավորի տնօրինությանն է անցնում հայոց կաթողիկոսության գահակալ հաստատելու իրավունքը, որը մինչ այդ Բագրատունիների մենաշնորհն էր: Շուրջ երկու տասնամյակ Աղթամարում, երբ այն հայոց կաթողիկոսների նստավայրն էր, աթոռակալել է երեք Հայոց կաթողիկոս, որոնք տեղի հոգևորականության ներկայացուցիչներ էին և Արծրունու հովանավորության ներքո էին:

Հայոց կաթողիկոսական կենտրոնի տեղափոխությունը Դվինից Վասպուրական և X դ. 2-րդ քառորդին նրա աթոռակալների գործունեության հիմնահարցերը պատմագիտության մեջ ունեցել են ոչ միանշանակ գնահատական: Մատենագրական վկայություններով փաստարկված ու հիմնավորված տպյն քննությունը նպատակ ունի նոր լույս սփռելու Հայ եկեղեցու պատմու-

<sup>1</sup> Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1970, 151:

<sup>2</sup> Ալիշան 1873, 54-55, հմմտ. Ալիսյան 1920, 8: Այս տեղեկության հավաստիությունը կասկածաարույց է, քանի որ այդ մասին վկայություն չունի Արծրունյաց տոհմական պատմիչը:

թյան այս կարճատև, բայց ուշագրավ շրջափուլի վրա, պարզաբանելու եկեղեցաքաղաքական իրողությունների պատճառներն ու հետևանքները:

### **Դվինի կաթողիկոսարանի վերացման պատճառները**

Դվինը, որպես կաթողիկոսական կենտրոն, V դ. վերջերից սկսած (483-925), նշանակալի դեր է ունեցել հայոց պետականության վերահաստատման, հոգևոր և քաղաքական ուժերի համախմբման գործում: VIII-IX դդ. արաբական տիրապետության շրջանում ընթացող ակտիվ միգրացիոն գործընթացների հետևանքով լքողներն փոխվում է Դվինի ժողովրդագրական պատկերը՝ վերածվելով հոծ իսլամադավան բնակչություն ունեցող արաբական վարչական ու ռազմական կենտրոնի<sup>3</sup>: Վերաբնակիչներից ձևավորված քաղաքային վարչակազմը խրախուսում և նպաստավոր պայմաններ էր ստեղծում Դվինում իսլամ հոգևորականների քանակի աճի համար, որը, բնականաբար, բացասաբար էր ազդում հայ հոգևորականության գործունեության վրա: Դեռևս IX դ. կեսերին՝ Հայոց կաթողիկոս Հովհաննես Ովայեցու (833-855) պաշտոնավարման շրջանում, հայոց հոգևոր առաջնորդի համար Դվինում այնպիսի անտանելի պայմաններ էին ստեղծվել, որ նա, տեղից տեղ շրջելով, մահկանացուն կնքում է Գեղարքունիքում<sup>4</sup>: Զաքարիա Ձագեցի կաթողիկոսի (856-877) փաստացի նստավայրը Դվինի փոխարեն Շիրակ գավառի Երազգավորս գյուղաքաղաքն էր, որը Հայաստանի ամենաապահով վայրն էր<sup>5</sup>:

Դվինի ճակատագրի վրա մեծ ազդեցություն է ունենում 893 թ. տարերային աղետը՝ երկրաշարժը: Այն անդառնալի մարդկային և ֆիզիկական վնասներ է պատճառում քաղաքի բնակչությանը՝ ավերելով բոլոր եկեղեցական կառույցները: Փլուզվում են նաև կաթողիկոսարանը և Ս. Գրիգոր կաթողիկե եկեղեցին, որոնցից առաջինն ամենայն հավանականությամբ հետագայում վերածվում է մզկիթի<sup>6</sup>: Կաթողիկոսանիստը ժամանակավորապես տեղափոխվում է Զվարթնոց: Հայոց կաթողիկոսական կենտրոնին մեծ հարված է հասցնում Բագրատունիների և Ատրպատականի ամիրաների պայքարը Դվինի համար: Իր աթոռակալության շրջանում Հովհաննես Դրասխանակերտցին (898-925) բազմիցս փորձում է վերականգնել Դվինի կաթողիկոսարանը, սակայն այդ ուղղությամբ նրա ջանքերը հաջողություն չեն ունենում: Հակաթոռ թագավորների՝ Աշոտ Երկաթի և Աշոտ Շապուռիյանի երկարատև բախումներից հետո 920 թ. Դրասխանակերտցու միջնորդությամբ հաջողվում է «ի մէջ նոցա զքաջավայելուչ խաղաղութանն պայման» հաստատել, որի առթիվ Դվինում կազմակերպվում է «խնճոյս ցնծութեան»: Դվինը վերստին դառնում է հայոց թագավորությանը ենթակա, սակայն իսլամ հոգևորական-

<sup>3</sup> Ադոնց 2006, 442-443:

<sup>4</sup> Դրասխանակերտցի 2010, 436:

<sup>5</sup> Անանեան 1989, 41, հմմտ. Չամչյան 1984, 450:

<sup>6</sup> Ղաֆադարյան 1952, 120-122, հմմտ. Տեր-Ղևոնդյան 1965, 115:

ներն այնտեղ պահպանում էին տիրապետող դիրքն ու ազդեցությունը: Աշոտ Բ-ին հաջողվում է հնազանդեցնել «պաշտաւնէիցն հեթանոսաց (իսլամ հոգևորականներին - Վ.Ա.)», որոնք բռնագրավել էին հայրապետանոցի ինչքն ու կալվածները, և որոնց համար պայքարում էր Հայոց կաթողիկոսը<sup>7</sup>: Բագրատունիների կողմից Դվինի մի քանի տարով նվաճումը ժամանակավոր բնույթ ուներ, թեև միայն Դվինի գրավումն էր, որ Աշոտ Բ-ին հնարավորություն կտար իր գերիշխանությունը հաստատելու Մեծ Հայքում<sup>8</sup>:

Աշոտ Երկաթից հետո Աբասը նույնիսկ փորձ չի անում Սաջյանների հափշտակած Դվինը վերանվաճել: Մոտ 12 տարի (929-941) Դվինը ենթակա էր Ատրպատականի արաբ տարատեսակ կառավարիչների իշխանությանը:

### Հայոց կաթողիկոսի նստավայրի տեղափոխությունը Դվինից Աղթամար

Բյուրականի մարտերից հետո (923) Ատրպատականի Սաջյան Յուսուֆ ոստիկանին փոխարինած Նասրը «գիւղաւք եւ գերդաստանաւք» բռնագավթում է Դվինի կաթողիկոսարանի ունեցվածքը: Առանց կաթողիկոսական աթոռի մնացած հայ տարրը Դվինում էապես թուլանում է<sup>9</sup>: Հովհաննես կաթողիկոսը, որևէ տեղից օգնության հույս չունենալով, շուրջ մեկ տարի՝ 923 թ. մինչև 924 թ., «ամառնայինն յաշունն յեղանակեալ յեղափոխէր», մնում է Բագարանում, իսկ 924 թ. աշնանը «առ ի նմանէն (Աշոտ Երկաթից - Վ.Ա.) յուղարկեալ» կաթողիկոսը գնում է Վասպուրական՝ «առ թագաւորն Հայոց Գագիկ»: Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունին կաթողիկոսին ընդունում է «հոգետր սիրոյ հարազատութեամբ եւ հաստատուն հաւատով եւ աներկբայ յուսով» ու իր եղբայր Գուրգենի հետ նրան առնում վստահելի հովանու տակ: Արծրունի թագակիրը հուսադրում է վտարանդի հոգևոր առաջնորդին, խոստանում ազատագրել Դվինի կաթողիկոսարանը՝ հավաստիացնելով, որ «ոգով չափ ջան ի մտի եղեալ հոգացցի վասն դարձի մերոյ ի բնակութիւնս մեր»<sup>10</sup>:

Հավանական է, որ ծերունագարդ կաթողիկոսի Վասպուրական մեկնելու վճիռը հետևանք էր այն հանգամանքի, որ 923 թ. նրա անհաշտ թշնամին՝ Յուսուֆը, ազատվել էր բանտից և վերստին նշանակվել Ատրպատականի ամիրա<sup>11</sup>: Վասպուրականն այդ ժամանակ Հայաստանի ամենաապահով վայրերից մեկն էր<sup>12</sup>, իսկ նրա թագավոր Գագիկ Արծրունին իր կարողություններով ոչ միայն չէր զիջում Բագրատունի գահակալին, այլև ինչ-որ տեղ ավելի

<sup>7</sup> Դրասխանակերտցի 2010, 554, հմմտ. Տեր-Ղևոնդյան 1965, 135, հմմտ. Հայ ժողովրդի պատմություն 1976, 62:

<sup>8</sup> Տեր-Ղևոնդյան 1965, 135:

<sup>9</sup> Տեր-Ղևոնդյան 1965, 138:

<sup>10</sup> Դրասխանակերտցի 2010, 579:

<sup>11</sup> Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1981, 174, հմմտ. Վարդանյան Վ. 1988, 122:

<sup>12</sup> Տեր-Ղևոնդյան 1965, 140:

ազդեցիկ էր: Արծրունիները վաղուց ունեցել են երկրի հոգևոր կենտրոնը իրենց տիրույթներ տեղափոխելու հավակնություններ, և պատահական չէ, որ կաթողիկոսին Վասպուրական տեղափոխվելու շարժառիթներից մեկն էլ հենց դա է նշում. «ըստ միշտն հրափրանի կոչման նորա (Գագիկ Արծրունու - Վ.Ա.)»: Այս գործընթացի մեջ կա ուշագրավ մի վկայություն, որը մատենագիր կաթողիկոսը հատուկ արձանագրում է՝ հայոց հոգևոր աթոռի երկփեղկման առթիվ սերունդների հնարավոր մեղադրանքից ազատվելու համար: Կաթողիկոսը շեշտում է, որ ինքը Գագիկ Արծրունու մոտ «յուղարկեալ» էր անձամբ Աշոտ թագավորի կողմից: Երկարատև թափառումներից հետո հայոց հոգևոր կենտրոն Դվինի թալանվածության և անապահովության պայմաններում կաթողիկոսի տեղափոխությունը հայոց հոգևոր իշխանության ընտրությունն էր հոգուտ Վասպուրականի թագավորության, ուստի հեռատես հոգևոր առաջնորդը իրեն ապահովագրում է Աշոտ Երկաթի հորդորին անսալու փաստով<sup>13</sup>: Հայ մատենագիրները մեղադրական շեշտադրմամբ են հիշատակում Գագիկ Արծրունու թագավոր դառնալը՝ համարելով այդ փաստը հայոց միասնական թագավորության մասնատման պատճառ: Ուստի Բագրատունյաց տիրույթներից անցնելով Վասպուրական՝ կաթողիկոսն անցնում է Բագրատունի գահակալի հակառակորդի կողմը: Եվ որպեսզի տարիներ հետո ընթերցողն իրեն չմեղադրի այդ քայլի համար, կաթողիկոսը գրում է, թե Աշոտ Երկաթն է իրեն ուղարկել Գագիկ Արծրունու մոտ:

Գագիկ Արծրունին խոստանում է կաթողիկոսին վերադարձնել արաբների բռնազավթած հայրապետական տիրույթներն ու ունեցվածքը: Հավանաբար այդ պատճառով դրական փոփոխություն է նկատվում Գագիկ Արծրունու նկատմամբ կաթողիկոսի վերաբերմունքում, որն արտահայտվում է նրան «...թագաւորն հայոց Գագիկ» հորջորջելով, որը մինչ այդ չէր արել: Հայոց հայրապետն իր բազմաչարչար կյանքի վերջին շրջանն անցկացնում է Վասպուրականում, ուր տեղափոխել էր կաթողիկոսարանը: Աղթամարում նրա գործերի մասին տեղեկություններ չկան, բայց հավանաբար որոշ մասնակցություն է ունեցել այդ ժամանակ ընթացքի մեջ գտնվող Աղթամարի կաթողիկոսական կենտրոնի կառուցման աշխատանքներին: Կաթողիկոսը եկեղեցու կառուցման մասին հիշատակություն չունի, որը նշանակում է, որ այդ ժամանակ՝ 924 թ., Աղթամարի շինարարությունը դեռևս չէր ավարտվել: Աղթամարի պալատի և եկեղեցու շինարարությունն ավարտվել է կաթողիկոսի մահից (925-926) հետո՝ ամենայն հավանականությամբ 928 թ.<sup>14</sup>: Ենթադրվում է, որ մինչև Աղթամարի հոգևոր կենտրոնի կառուցման ավարտը կաթողիկոսարանը գտնվել է Վասպուրականի թագավորանիստ Վանում:

<sup>13</sup> Եղիազարյան 2016, 82:

<sup>14</sup> Հարությունյան 2016, 185:

X դ. երրորդ տասնամյակից Վասպուրականի թագավորությունն ապրում էր խաղաղ զարգացման ժամանակաշրջան, որը, ինչպես Հայաստանի մյուս շրջաններում, տևում է շուրջ մեկ դար: Աղթամար կղզում շքեղակառույց մայրաքաղաքի հիմնումը նոր շուք է հաղորդում Գագիկի թագավորությանը: Աղթամարի մասին պատմելիս Անանունն այն անվանում է «հոյակապ եւ հոչակավոր եւ բարձրանշան» քաղաք<sup>15</sup>: Արքայական և իշխանական շքեղաշուք պալատների կողքին խոյանում է հրաշակառույց մի կոթող՝ Ս. Խաչ գմբեթավոր եկեղեցին, որն Անանունը բնորոշում է «գերապայծառ եւ պանծալի»<sup>16</sup>:

Հայոց կաթողիկոսի նստավայրը Աղթամար տեղափոխելով և հոգևոր վեհապետին հաստատելու իրավունք ձեռք բերելով՝ Գ. Արծրունին իրագործում է Վասպուրականը Հայաստանի կենտրոնական թագավորության վերածելու իր ծրագիրը: Այս փաստը խորհրդանշում էր Վասպուրականի թագավորության նվիրագործումը և ընդգծում Արծրունի գահակալի գերագահ դիրքը:

Աղթամարը հայոց կաթողիկոսանիստ դարձնելու Գագիկի նախաձեռնության հաջողության երաշխիքներից մեկը հայ իշխաններին այդ ժամանակ իրենց շուրջ համախմբելու Բագրատունի արքաների անկարողությունն էր: Աբաս Բագրատունին և Աշոտ Շապուհյանը չունեին բավարար կարողություն կենտրոնաձիգ, միասնական պետություն ստեղծելու համար: Կառուցելով նոր բերդեր՝ Աբաս Բագրատունին ամրացնում է իր իշխանության կենտրոն Վանանդ գավառի Կարս քաղաքը, պայծառացնում այն պալատով ու կաթողիկե եկեղեցով: Նրա օրոք Հայաստանի անդորրը խախտում են վրացիները, արխազները և կովկասաբնակ զանազան ցեղեր: Վերջիններս, քաջալերված հայ իշխանների միասնության բացակայությունից, ասպատակում էին հայկական գավառները: Պատմիչը հիշատակում է արխազաց Բեր թագավորին, որը «Բելապես ամբարտաւանութեամբ» դեսպան է ուղարկում Աբասի մոտ, սպառնում, որ ինքը պետք է քաղկեդոնական ծեսով կատարի նորակառույց Ս. Առաքելոց եկեղեցու նավակատիքը<sup>17</sup>: Սակայն նրա ծրագիրը խափանվում է, քանզի ամբարտավան Բերին ձերբակալում և կուրացնում են:

Կարսի կաթողիկե եկեղեցին կառուցվել է 930-942 թթ., որից հետևում է, որ նշված իրադարձությունները տեղի են ունեցել արդեն կառուցված եկեղեցու օժման շրջանում, հավանաբար 943 թ.<sup>18</sup>: Աբասի թագավորության շրջանում աշխուժանում է եկեղեցական կյանքը, ընդարձակվում է կրոնական կազմակերպությունը, եկեղեցու ազգայնացման շուրջ վերստին կրոնական վեճեր են բորբոքվում<sup>19</sup>: Այդ ժամանակ տեղի էր ունենում Այսրկովկասի քաղկեդոնականների միավորման գործընթաց, որի միակ խոչընդոտը ենթադրաբար

<sup>15</sup> Թովմա Արծրունի և Անանուն 2010, 290:

<sup>16</sup> Թովմա Արծրունի և Անանուն 2010, 290:

<sup>17</sup> Ասողիկ 2010, 749:

<sup>18</sup> Եղիազարյան 2017, 62:

<sup>19</sup> Լեո 1967, 575-576:

մնացել էր հայոց թագավորությունը<sup>20</sup>: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Աբասը նույնիսկ կաթողիկե եկեղեցի կառուցելուց հետո էլ հետամուտ չէր կաթողիկոսական աթոռը Վասպուրականից Արարատ տեղափոխելուն, որովհետև հասկանում էր, որ «Գագիկ դիրաւ պիտի չհաւանէր ձեռքէ հանել կաթողիկոսին իր հովանաւորութեան ներքեւ մտած ըլլալուն առաւելութիւնը»<sup>21</sup>:

### Աղթամարում աթոռակալած Հայոց կաթողիկոսները

Հայ մատենագրության հաղորդումներում խոսվում է Աղթամարում աթոռակալած երեք Հայոց կաթողիկոսի մասին, որոնց հաստատել է Գագիկ Արծրունին, որոնք և եղել են նրա հովանավորության ներքո: Ենթադրելի է, որ նրանք Վասպուրականի հոգևոր դասի ներկայացուցիչներ էին: Այս հանգամանքից ելնելով՝ Մ. Օրմանյանը նրանց կոչում է Ռշտունի՝ վերականգնելով հոգևոր առաջնորդների՝ միջնադարում ընդունված ավանդական անվանաձևը: Նա անկեղծորեն խոստովանում է, որ դրա համար ինքը որևէ աղբյուր չի ունեցել, բայց «քանի որ Աղթամար Ռշտունեաց գաւառին մէջն է», և նրանց տեղացի լինելն ակներև է, «Ռշտունի կոչեցինք» նրանց<sup>22</sup>:

Հովհաննես Դրասխանակերտցուց հետո «առնու զկաթողիկոսութիւնն տէր Ստեփանոս ամ մի»<sup>23</sup>: Վերջինիս գործունեության մասին տեղեկությունների իսպառ բացակայությունը թույլ է տվել Մ. Օրմանյանին ենթադրել, որ Ստեփանոսը Վասպուրականի «տարիքով յառաջացած եւ դիրքով նախապատուած» եպիսկոպոսներից մեկն էր<sup>24</sup>: Նրա մասին առաջին հիշատակությունը պատկանում է իրենից երկու դար հետո ապրած ժամանակագիր Սամվել Անեցուն<sup>25</sup>: Մինչդեռ ավանդական պատմագրության սկզբունքներին հետևող պատմիչ Ասողիկը, որն ավելի ժամանակամերձ է հիշյալ հոգևորականին, չի հիշում Ստեփանոս անունով կաթողիկոսի: Նա հաղորդում է, որ «զկնի մահուան տեսոն Յովհաննիսի յերկրորդ շինութեանս Հայոց եկաց կաթողիկոս Տէր Թէոդորոս»<sup>26</sup>:

Այս խնդրի վրա մասամբ լույս է սփռում X դ. հռչակավոր հոգևոր-մշակութային գործիչ, կաթողիկոս Անանիա Մոկացու «Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից» բնագիրը, որը հավանաբար եղել է Ասողիկի աղբյուրներից մեկը: Խոսելով այսպես կոչված Աղվանից «ապստամբության» մասին՝ Մոկացին պատմում է, որ Գևորգ Գառնեցի կաթողիկոսի մահվանից հետո Հայոց

<sup>20</sup> Եղիազարյան 2017, 62:

<sup>21</sup> Օրմանեան 2001, 1256:

<sup>22</sup> Օրմանեան 2001, 1250:

<sup>23</sup> Վարդան վարդապետ 1862, 89, հմմտ. Կիրակոս Գանձակեցի 1961, 85:

<sup>24</sup> Օրմանեան 2001, 1249:

<sup>25</sup> Սամուել Անեցի 2014, 172:

<sup>26</sup> Ասողիկ 2010, 748: Ստեփանոսի անունը որպես կաթողիկոս հիշատակված չէ նաև XIII դ. սկզբի ժամանակագիր Հովհաննես Ավագերեցի գործում: Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ. 1956, 24-25:

Արևելից կողմանց կաթողիկոսները Հայոց կաթողիկոսից ձեռնադրություն չէին ստանում, և այդ վիճակը «տևեալ ապստամբութեամբ զամս ԿԹ (69) և զժամանակս հայրապետաց հնգից, մինչև ի մեր նուաստութիւնս»<sup>27</sup>: Եկեղեցական պաշտոնական տեղեկագրի արժեք ունեցող այս փաստաթղթում կաթողիկոսը հականե-հանվանե չի հիշատակում 69-ամյա ժամանակահատվածում գահակալած հայոց հոգևոր առաջնորդներին: Սակայն կոնկրետ տարիների քանակի մատնանշումը թույլ է տալիս ասել, որ նա հաշվարկը սկսել է Գևորգ Գառնեցուց (877-897) և նկատի է ունեցել Մաշտոց Եղիվարդեցի (897-898), Հովհաննես Ե Դրասխանակերտցի (898-925), Թեոդորոս Ա Ռշտունի (926-937) և Եղիսե (937-942) կաթողիկոսներին: Այս ցանկում Ստեփանոսի բացակայությունը հիմնավորվում է Անանիա Մոկացու մեկ այլ ուշագրավ թղթով ևս, որտեղ նա հաղորդում է, որ ինքը, Սբ Լուսավորչից սկսած, հիսուներեքերորդ հայրապետն է. «Յիսնաքանակ երիւք (հիսուներեք - Վ.Ա.) հանդերձ աստուածաջոկ երամս»<sup>28</sup>: Հովհաննես Դրասխանակերտցին հայտնում է, որ ինքը Սբ Լուսավորչի ժառանգներից հիսուներորդն է. «Եւ այսպէս, ինեւ հանդերձ լցել եղեւ թիւ յոթելենին յիսներեկի համարոյ, հայրապետութեանս Հայոց, որ սկիզբն առ յերջանիկ եւ սուրբ Լուսաւորչէն Գրիգորէ մինչեւ ցարդ եւս»<sup>29</sup>: Հետևաբար՝ Դրասխանակերտցու և Մոկացու միջև ընկած ժամանակաշրջանում հիսունմեկերորդ կաթողիկոսը տեր Թեոդորոսն է, հիսուներկուերորդը՝ տեր Եղիշեն:

Հայ եկեղեցու հինավուրց ավանդների պաշտպան և կաթողիկոսական իշխանության ամրապնդման նախանձախնդիր Անանիա Մոկացին Ստեփանոս Բ-ին չի ներառել «հայրապետաց հնգից» ցանկում թերևս այն պատճառով, որ նա աթոռակալել է առանց որևէ ներկայացուցչական ժողովի ընտրության<sup>30</sup>: Ստեփանոսը կաթողիկոս է դարձել Գագիկ Արծրունու արքայական հրամանի ուժով և աթոռակալել է տեղապահի կարգավիճակով 925-926 թթ.<sup>31</sup>: Այդ պատճառով Անանիա Մոկացին, ինչպես նաև նրան հետևող Ասողիկը Ստեփանոս Բ-ին չեն ներառել իրենց գավազանագրքերում:

Ստեփանոս Բ-ից հետո Գագիկ Արծրունին հայոց կաթողիկոսության գլուխ է կարգում տեղի եպիսկոպոսներից Թեոդորոսին, որը պաշտոնավարում է 11 տարի՝ 926-937 թթ.<sup>32</sup>: Նրա աթոռակալությունն անցել է Հայաստանում տիրող համեմատաբար հանդարտ կացության մեջ, որը պայմանավոր-

<sup>27</sup> Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի 1897, 139:

<sup>28</sup> Տեր-Մկրտչյան 1998, 133:

<sup>29</sup> Դրասխանակերտցի 2010, 609:

<sup>30</sup> Հայոց կաթողիկոսներին ընտրում էր ազգային-եկեղեցական ժողովը, որին մասնակցում էին Հայ եկեղեցու նվիրապետական կառույցների ներկայացուցիչները, ինչպես նաև իշխանները (Մելիք-Թանգեան 1905, 112-128):

<sup>31</sup> Սամուել Անեցի 2014, 172, հմմտ. Եղիազարյան 2020, 175:

<sup>32</sup> Ասողիկ 2010, 748, հմմտ. նաև Սամուել Անեցի 2014, 172, հմմտ. Կիրակոս Գանձակեցի 1961, 85, հմմտ. Վարդան վարդապետ 1862, 89, հմմտ. Եղիազարյան 2020, 175:

ված էր արտաքին հարձակումների դադարով: Այդ ժամանակահատվածը ոչ վաղ անցյալի համեմատությամբ ուներ մեծ առավելություններ: Էսկանորեն թուլացել էր քայքայվող խալիֆայական կենտրոնական իշխանության ճնշումը, և Հայաստանն այլևս ազատվել էր Աբբասյաններին հարկ վճարելուց: Վերացել էին նախկինում երկիրն ասպատակող արաբական տեղական իշխանությունների, մասնավորապես Ատրպատականի ամիրայության բռնությունները: Հետևաբար Հայաստանում տեղի էր ունենում հակառակ գործընթացը. զորեղանում և իրենց ինքնավարությունն էին ընդլայնում տեղական իշխանությունները: Իշխանական հակամարտությունները գրեթե դադարել էին, որովհետև բոլորն ընդունում էին Գագիկ Արծրունու գերագահությունը:

Բյուզանդիան Կոստանդին VII Ծիրանածին կայսեր (913-919, 945-959) աթոռակից Ռոմանոս Ա Լեկապենոսի (920-944) օրոք պատերազմում էր արաբական ամիրայությունների դեմ, որոնք գրավել էին Հայաստանի արևմտյան և հարավարևմտյան շրջանները: Բյուզանդացիները հետզհետե ընդարձակում էին արևելյան սահմանները Հայաստանի և Միջագետքի ուղղությամբ: Հայազգի նշանավոր զորավար Հովհաննես Կուրկուասը քսանամյա (920-942) համառ պատերազմներով վերագրավեց նախկին բյուզանդական Հայաստանի երկրամասերը մինչև վերին Եփրատ և վերին Տիգրիս գետերը: Միանգամայն բնական է, որ Բյուզանդիան հաղթական իր առաջխաղացման սկզբնական շրջանում սահմանակից հայկական և վրացական քրիստոնյա իշխանությունների հանդեպ վարում էր զգուշավոր ու խաղաղ քաղաքականություն և աշխատում էր ըստ կարելիության օգտագործել նրանց զինվորական ուժերն ընդդեմ խալիֆայության և արաբական ամիրայությունների<sup>33</sup>:

Թեոդորոս Ա կաթողիկոսի հովվապետությունը նշանավորվել է ուշագրավ մի իրադարձությամբ, որի վերաբերյալ հայ պատմիչների երկերում, ցավոք, տեղեկություններ չեն պահպանվել: Խոսքը վերաբերում է «Գիրք թղթոց» ժողովածուի մեջ զետեղված Գագիկ Արծրունու նամակին՝ հասցեագրված Բյուզանդիայի կայսր Ռոմանոս Լեկապենոսին: Արծրունի բանիմաց իշխանագլուխը արձարձում է հայ-բյուզանդական դավանաբանական վիճահարույց խնդիրներ և կրոնական տարաձայնությունների փոխընդունելի լուծման ճանապարհով առաջարկում կայսրին Հայաստանը վերցնել Բյուզանդիայի հովանու ներքո: Թեև նամակում հիշատակության չկա դրա կազմելուն Թեոդորոս կաթողիկոսի մասնակցության մասին, սակայն ենթադրվում է, որ հայոց հոգևոր առաջնորդը տեղյակ է եղել նամակի բովանդակությանը: Բայց այս մասին մանրամասն կխոսենք ստորև:

Թեոդորոս Ռշտունու աթոռանիստը Աղթամարն էր, որտեղ էլ հավանաբար առաջացած տարիքում հրաժեշտ է տվել կյանքին և թաղվել Սուրբ Խաչ

<sup>33</sup> Մանանդյան 1952, 13-14:

կաթողիկեի մոտ: Այդ մասին հայտնում է Սամվել Անեցին. «Ի յԱղթամար տէր Թեոդորոս թաղած է յԱստուածածնի ժամատունն ի Սուրբ Խաչի շինեալն»<sup>34</sup>:

Թեոդորոս Ա-ին հաջորդում է եղբայրը, որին պատմիչները հորջորջել են Տէր Եղիսէ կամ Եղիշէ<sup>35</sup>: Նա կաթողիկոսական աթոռ է բարձրանում ժառանգության իրավունքով: Եղիշէի աթոռակալության տևողության վերաբերյալ նշվում է երկու ժամկետ՝ հինգ (Ե)<sup>36</sup> և յոթ (Է)<sup>37</sup>: Հաշվի առնելով, որ Ե և Է թվատառերը ձեռագրերում դյուրությամբ շփոթվել են, ընդունելի է նրա հնգամյա հովվապետության վարկածը<sup>38</sup>: Ելակետ ընդունելով Եղիշէին հաջորդած Անանիա Մոկացու աթոռակալության ժամանակագրությունը՝ կարելի է ենթադրել, որ նա աթոռակալել է 937-942 թթ.<sup>39</sup>:

Եղիշէի անունը Անանուն պատմիչը հիշատակում է հայերի համար ճակատագրական նշանակություն ունեցող մի իրադարձության առթիվ. 930-ականների վերջին Ատրպատականի ամիրաների դեմ պայքարում Բագրատունի և Արծրունի թագավորները հանդես էին գալիս ամուր դաշինքով: 938 թ. Ատրպատականի ամիրա, Գիլանի տեր Ալ-Լաշքարին<sup>40</sup> ներխուժում է Բագրատունյաց թագավորության տարածք և «գայ հասանէ մինչեւ զմեծ մայրաքաղաքն Դուին»: Աբաս Բագրատունին խնդրանքով դիմում է Գագիկ Արծրունուն: Վերջինս «յիշեալ զգուօ արեան հարազատութեանն» զորքով մեկնում է Այրարատ՝ ոսոխից վրեժ լուծելու Արծրունյաց զորագնդերը մարտական կարգով դիրքավորվում են Խոր Վիրապ վանքի մատույցներում: «Սուրբ հայրապետն մեծն Եղիսէ» քահանայական դասի հետ «ելեալ ի կատարս բլերն Գինոյ, հանգոյն սրբոյն Ներսէսի անխոնարհելի ունելով զձեռս» աղոթք էր կարդում հայոց զենքի հաղթության համար՝ քաջալերելով թշնամու հանդիման կանգնած հայ ռազմիկներին<sup>41</sup>: Արծրունյաց զորքը փայլուն հաղթանակ է տանում և իր տիրապետության տակ վերցնում Դվինը:

Եղիշէի աթոռակալության շրջանում աստկանում են Բյուզանդիայի Ռոմանոս Լեկապենոս կայսեր ձեռնարկած կրոնական ճնշումները: Մասնավորապես, նրա օրոք կայսրության սահմաններում ապրող հայերին պարտադրում են ընդունել հունական եկեղեցու դավանած քաղկեդոնական վարդա-

<sup>34</sup> Սամուել Անեցի 2014, 172:

<sup>35</sup> Սամուել Անեցի 2014, 173, հմմտ. Ասողիկ 2010, 749, հմմտ. Վարդան վարդապետ 1862, 89, հմմտ. Կիրակոս Գանձակեցի 1961, 85: Սամվել Անեցու ժամանակագրության վաղաքաղապատյան հրատարակության մեջ կաթողիկոսի անունը գրված է «Եղիա» ձևով (Սամուել Անեցի 1893, 99): Նույն կերպ է արձանագրված նաև Դավիթ Բաղիշեցու մոտ (Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ. 1956, 337): Մ. Օրմանյանը գտնում է, որ անվան ձևը հետևանք է գրչագրական սխալի, և ինքը գերադասում է գործածել «Եղիշե» ձևը (Օրմանեան 2001, 1261, հմմտ. Չամչյան 1984, 827):

<sup>36</sup> Վարդան վարդապետ 1862, 89:

<sup>37</sup> Ասողիկ 2010, 749:

<sup>38</sup> Օրմանեան 2001, 1263:

<sup>39</sup> Օրմանյանը Եղիշէի աթոռակալությունը թվագրում է 941-946 թթ. (Օրմանեան 2001, 1263):

<sup>40</sup> Վարդանյան 1969, 107, հմմտ. Եղիազարյան 2017, 35:

<sup>41</sup> Թովմա Արծրունի և Անանուն 2010, 293:

պետությունը: Չիրաժարվելով ազգային եկեղեցու դավանանքից՝ «բազմութիւնք կրօնատրաց հալածեալք ի Հռոմոց յաշխարհէն սակս ուղղափառութեան, եկեալ յաշխարհս մեր», Շիրակի ու Սյունիքի և այլ գավառներում հիմնադրեցին վանքեր և շենացրին դրանք<sup>42</sup>:

Աթոռակալության վերջին շրջանում Եղիշեի նստավայրը եղել է Աղթամար կղզու դիմաց՝ Արտոս լեռան ստորոտում՝ Իլի բնակավայրում Գագիկ Արծրունու կառուցած «Քառասուն խորան Ս. Աստվածածին» եկեղեցին: Այդ մասին Սամվել Ժամանակագիրը հաղորդում է. «Ի տէր Եղիսէն էառ զԱղթամար Գագիկ եւ ետ նմա զԻլի, շինեաց եւ կատարեաց անդ զեկեղեցին, եւ է թաղած ի Բերդաձոր»<sup>43</sup>: Ենթադրվում է, որ այս եկեղեցին եղել է կաթողիկոսի նստավայրը: Գագիկը Աղթամարի եկեղեցին, որը մայրաքաղաքի գլխավոր եկեղեցին էր, վերցրել է Եղիշե կաթողիկոսից և նրան նոր նստավայր տվել կղզուց ոչ հեռու գտնվող Իլիում, որտեղ հիմնել է գեղաշեն եկեղեցի և կառուցել կացարաններ միաբանության անդամների համար: Ուշագրավ է նաև այս կաթողիկոսի Բերդաձորի վանքում (Ս. Աստվածածին, գտնվել է Առտեր կղզու դիմացի ծովեզերքից 2-3 կմ խորքում) թաղված լինելու մասին նշումը<sup>44</sup>:

Աղթամարում գահակալած հայրապետների՝ Հույն եկեղեցու դավանանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին վկայություններ չկան: Սակայն ենթադրելի է, որ այդ հարցում նրանք բացահայտ չեն ընդդիմացել Արծրունյաց արքունիքի «մեղմ» վերաբերմունքին հույների վարդապետության նկատմամբ, որն առնվազն խոսում է նրանց հակաքաղկեդոնական չլինելու մասին<sup>45</sup>:

### **Գագիկ Արծրունու «Թուղթը» Բյուզանդիայի կայսրին**

Յուսուֆի մահից հետո Ատրպատականի ամիրապետ է նշանակվում Մուֆլիհը (929-937), որի իշխանության սկզբում արևելքում ակտիվանում է բյուզանդական բանակների առաջխաղացումը: Հայազգի տաղանդավոր զորավար Հովհաննես Կուրկուասի գլխավորությամբ նրանք 931 թ. հասնում են Արծրունյաց թագավորության մատույցները՝ նվաճելով Հայաստանի հարավում եղած մահմեդական ամիրայությունները: Կուրկուասը, կամենալով տիրանալ Վասպուրականին, հորդորում է Գագիկ Արծրունուն դիմել Բյուզանդիայի կայսրին և անցնել նրա հովանավորության տակ<sup>46</sup>:

<sup>42</sup> Վարդան վարդապետ 1862, 88, հմմտ. Չամչյան 1984, 823:

<sup>43</sup> Սամուել Անեցի 2014, 173:

<sup>44</sup> Սամուել Անեցի 2014, 379-380, ծանոթ. 181: Պատմաբան Կ. Մաթևոսյանը ենթադրում է, որ Կաթողիկոսարանի տեղափոխությունը Իլի կարող է թելադրված լինել Գագիկ Արծրունու բյուզանդամետ կողմնորոշմամբ, այն է՝ նրան այդ ժամանակ այլևս ձեռնտու չէր Հայոց կաթողիկոսի անմիջական ներկայությունն իր կողքին (Մաթևոսյան 2013, 32-33):

<sup>45</sup> Կոզեան 1961, 303, հմմտ. Հացունի 1927, 481:

<sup>46</sup> Հայ ժողովրդի պատմություն 1976, 66:

Վասպուրականը Բյուզանդիայի նվաճման սպառնալիքից ապահովագրելու նպատակով<sup>47</sup> Գագիկ Արծրունին «խորհեցաւ հաստատութեամբ ուխտ միաբանութեան դնել նաև ընդ կայսեր յունաց» և ընդունել նրա հովանավորությունը: Նա իր մտորումների շարադրանքը նամակով ուղարկում է բյուզանդական արքունիք՝ հայտնելով «զփափաք սրտի իւրոյ առ ի միաբանելոյ ընդ յոյնս՝ և հաստատելոյ զսէր հոգևոր և մարմնաւոր ընտանութենէ. և խնդրէր ի նոցանէ բառնալ ի միջոյ զխտրոց բաժանմանն»<sup>48</sup>: Բյուզանդիայի աշխարհիկ և հոգևոր առաջնորդներին հասցեագրված երկարաբան «թուղթը», որը եկեղեցական դիվանագիտության զինանոցի ամենաշատ կիրառվող գործիքներից էր, ուներ քաղաքական ենթատեքստ: Արծրունին ձգտում էր Հայ և Հույն եկեղեցիների միջև առկա բաժանարար գծերը վերացնելու ճանապարհով դաշնակցել Բյուզանդիայի հետ և ստանալ նրա հովանավորությունը:

Նամակը կրում է «Թուղթ Գագկայ Վասպուրականի Հայոց թագաւորի, առ կայսրն յունաց Ռոմանոս վասն հաւատոյ» վերնագիրը, մինչդեռ առաջաբանում այն հասցեագրված է «Գլուխ եպիսկոպոսաց Նոր Հռոմայ, պատրիարգի յընդանուրս»: Բովանդակության մեջ չեն հիշատակվում կայսեր և նամակի հոգևոր հասցեատիրոջ անունները, որը բացատրվում է այդ ժամանակ Բյուզանդիայում տիրող եկեղեցաքաղաքական իրողություններով: 920-944 թթ. Բյուզանդիայում փաստացի իշխանությունը օրինական կայսր Կոստանդին VII Ծիրանածնի գահակից Ռոմանոս Լեկապենոսի ձեռքում էր, որը, դրսևորելով «կեսարապապականություն»<sup>49</sup>, կոպտորեն միջամտում էր եկեղեցու գործերին, ոտնահարում կրոնական սովորույթներն ու կանոնները<sup>50</sup>: Տիրանալով ամբողջական իշխանությանը՝ վերջինս մտադիր էր հիմնադրել սեփական հարստությունը, որի տիրապետությունը կտարածվեր նաև հոգևոր ոլորտի վրա: Ավագ որդիներին դարձնելով կայսերակից՝ նա գահագրկում է Տրյուփոն պատրիարքին (928-931) և պատրիարքությունը հանձնում կրոսեր որդուն՝ Թեոփիլակտոսին: Բայց վերջինիս անչափահասության պատճառով 931-933 թթ. 17 ամիս պատրիարքական աթոռը մնում է թափուր՝ դառնալով ներքաղաքական մեքենայությունների առարկա<sup>51</sup>: Հոգևորականությունը պառակտված էր տարբեր թևերի միջև: Ենթադրում ենք, որ նամակը գրվել է

<sup>47</sup> Վարդանյան 1980, 220:

<sup>48</sup> Չամչյան 1984, 819:

<sup>49</sup> Արևմտաեվրոպական պատմագրությունն այս եզրույթը շրջանառության մեջ է դրել XIX դ.: Այն բնութագրում է կայսերական իշխանության և եկեղեցու հարաբերությունները Բյուզանդիայում, երբ կայսրը նաև եկեղեցու գլուխն էր:

<sup>50</sup> Шангин 1947, 236.

<sup>51</sup> Шангин 1947, 237: Ֆրանսիացի պատմաբան Թուրնեբեզը կարծում է, որ Գագիկ Արծրունին նամակը ուղարկել է Բյուզանդիայի այդ ժամանակվա պատրիարք Տրյուփոնին (Tournebeze 1910, 145):

հենց այդ ժամանակահատվածում՝ 931-933 թթ.<sup>52</sup>, և այդ անորոշության պատճառով պատկան հասցեատիրոջ անունը չի նշվել:

Հարգալից ոճով և պատշաճ մեծարանքով դիմելով Կ.Պոլսի «սուրբ և բարձրագահ արքեպիսկոպոսիդ, և առաքելաժառանգ պատրիարզիդ» և «սուրբ թագավորիդ քրիստոսեան աթոռաժառանգ ասանդապահի»՝ հեղինակը վկայակոչում է «գիրք պատմագրացն», որոնք հավաստում են, որ Հայաստանը «բնաբար» եղել է կայսերական իշխանության և հայրապետական հովանավորության ներքո<sup>53</sup>: Լավատեսությամբ և բարի կամեցողությամբ Արծրունի արքան հայտարարում է, որ «ոչ միայն սիրողաբար հարկս հարկանէաք կայսեր, այլ և առ Սուրբ հաւատոյն միաւորութիւն խոստովանութեան հաղորդս և հաւասարս գտանէաք»<sup>54</sup>: Գագիկ արքան, անշուշտ, ծանոթ էր եկեղեցական դիվանագիտության պատմությանը և լավատեղյակ էր հայբյուզանդական եկեղեցական միության շուրջ նախորդ թղթակցությունների բովանդակությանը: Այդ պատճառով դիմելով «առ սուրբ և քրիստոսապսակեալ թագաւորդ» Ռոմանոսին և «սուրբ և բարձրագահ արքեպիսկոպոսիդ, և առաքելաժառանգ պատրիարզիդ»՝ հայտնում է, որ մեծ վնաս կլինի հայերի համար «մերժել հեռանալ ի սուրբ հայրապետական խնամարկութենէ և յարդինաւոր արհնութեանց և սրբամատոյց աղաւթից»: Հետագա տողերից պարզ է դառնում, որ հայբյուզանդական եկեղեցական միության վերոհիշյալ խոսքերը վերաբերելի էին Քաղկեդոնի ժողովին նախորդած ժամանակաշրջանին: Հայերը հավատարիմ են առաջին երեք տիեզերական ժողովների որոշումներին և բարձր մակարդակով մասնակցել են Նիկիայի ու Կ. Պոլսի ժողովներին: Երրորդ՝ Եփեսոսի ժողովին, ճիշտ է, «ոչ ոք էր ի մերմէ» ներկա, սակայն Ընդհանրական եկեղեցու հայրերի «թղթերը» «հասին առ մեծն Սահակ և երանելին Մաշդոց, և միաձայնութեամբ ի մի ուղղափառ խոստովանութիւն վերագրեցան»<sup>55</sup>: Միանգամայն այլ է թագակիր հեղինակի վերաբերմունքը չորրորդ՝ Քաղկեդոնի ժողովի վերաբերյալ: Նա խոստովանում է, որ հայ վարդապետները միակարծիք չեն այս ժողովի հարցում. «...ոչ զմիաձայնութիւն յանձին ունին վարդապետքս Հայոց հաղորդել ընդ ժողովոյն ՈԼԶ (636) եպիսկոպոսացն»: Արծրունին, հիմնվելով հայոց վարդապետների հաղորդած տեղեկությունների վրա, 451 թ. Քաղկեդոնի եկեղեցական ժողովի ընդունած

<sup>52</sup> Մ. Չամչյանը նշում է, որ նամակագրությունը տեղի է ունեցել 926 թ. (Չամչյան 1984, 819-821, հմմտ. Runciman 1969, 138, ծանոթ. 1): Մ. Օրմանյանը կարծում է, որ նամակը գրվել է 930 թ. ոչ շուտ (Օրմանեան 2001, 1258-1259): Վ. Վարդանյանը գտնում է, որ նամակը գրվել է 931 թ. (Վարդանյան 1969, 104): Գ. Մաքսուդյանը ենթադրում է, որ նամակը գրվել է Հովհաննես Դրասխանակերտցու մահից անմիջապես հետո՝ 925 թ.: Հավանաբար Գագիկ Արծրունին է ցանկություն հայտնել, որ Հայոց կաթողիկոսը ձեռնադրվի Կ. Պոլսում, ինչպես նշված է Նիկողայոս Միստիկոսի նամակում (Yovhannes Drasxanakertci 1987, 23, հմմտ. Բարթիկյան 1966, 252):

<sup>53</sup> Գիրք թղթոց 1901, 295:

<sup>54</sup> Գիրք թղթոց 1901, 295:

<sup>55</sup> Գիրք թղթոց 1901, 296:

կանոնները մեկնաբանում է որպես նեստորական ուսմունք. «Նեստորաբար իմացմամբ սահմանեցին յետ անճառ միաւորութեան Բանին և մարմնոյն՝ երկու բնութիւնս բաժանաբար ի մի Տէր Յիսուս Քրիստոս խոստովանեցին, և երկուս կամս և երկուս ներգործութիւնս և զխաչն և զմահն մարդոյն միայնոյ սահմանեցին, և ոչ Աստուծոյ մարդեղելոյ ի սուրբ կուսէն Աստուածածնէն»: Շեշտում է, որ այդ գաղափարները Աբ Գրիգոր Լուսավորիչը և եկեղեցու հայրերը չեն ավանդել:

Հետագա շարադրանքում «թղթի» հեղինակը երկարաշունչ բացատրություն է տալիս Քրիստոսի բնության վերաբերյալ Հայ եկեղեցու տեսակետին: Եկեղեցու հայրերի աշխատություններից քաղվածքներ բերելով՝ նշում է հայոց վարդապետության աղբյուրները: Իր թեզը հիմնավորելու համար Գագիկը վկայակոչում է Մելիտոս Անտիոքացու «Մի բնութիւն խոստովանիմք և երկու գոյացութիւնք» բանաձևը: Մի բնություն բանաձևով Հայ եկեղեցին ակնարկում է ոչ թե Քրիստոսի միակ բնությունը, այլ աստվածային և մարդկային բնությունների հրաշալի միասնությունը<sup>56</sup>: Այդ տարակարծությունները դեռևս VIII դարում հարթել է Հայոց կաթողիկոս և փիլիսոփա Հովհաննես Օձնեցին (717-728)՝ առաջ քաշելով հետևյալ բանաձևը. «Է ըստ բնութեան երկուց՝ աստուածային և մարդկային, իսկ ըստ միաւորութեան՝ մի»: Նա վկայակոչում է նաև Բարսեղ Կեսարացուն և ընդգծում. «երկուց գոյացութեանց կատարելոյց միաւորութիւն»<sup>57</sup>:

Քաղկեդոնի եկեղեցական ժողովի կանոնների շուրջ ծավալված պայքարի համառոտ նկարագրմամբ Արծրունի իշխանագունը փաստում է, որ, հայերից բացի, Քաղկեդոնի կանոններին «ընդդէմ կացին ժողովոյն» նաև Ալեքսանդրիայի, Անտիոքի, Երուսաղեմի, Կ. Պոլսի և Հռոմի մի շարք աստվածաբաններ, նույնիսկ Բյուզանդիայի կայսրերից ոմանք: Գագիկը պատեհ է համարում հիշեցնել Հայ եկեղեցու դավանական դիրքորոշման հստակեցման օրակարգով կաթողիկոս Բաբկեն Ոթմսեցու (490-516)՝ Դվինում գումարած ժողովը (506 թ.), որին ներկա էր նաև Վրաց Գաբրիել կաթողիկոսը: Այստեղ «Հայք և Վիրք և Աղուանք» միասնական դիրքորոշմամբ մերժել են Քաղկեդոնի եկեղեցական ժողովի կանոնները և «միաձայն խոստովանութեամբ... և ընդդէմ ժողովոյն միախորի եղին ընդդիմակս»<sup>58</sup>:

Քրիստոսի բնության հարցից բացի, դավանաբանական կարևոր տարբերություններից էր Երրորդության փառաբանությանը նվիրված «Սուրբ Աստուած» երգի «որ խաչեցար վասն մեր» հավելվածը: Գագիկ Արծրունին, իր տեղեկությունները քաղելով հեղինակավոր աստվածաբան-վարդապետներից, ընդարձակ մեկնաբանություն է տալիս և բացատրում. «Քաւ մի լիցի. ոչ

<sup>56</sup> Գրիգորյան 1989, 96:

<sup>57</sup> Հովհաննես Օձնեցի 1953, 68:

<sup>58</sup> Գիրք թղթոց 1901, 300:

Երրորդութեանն զփառաբանութիւնս զայս վերածայնեմք, այլ Որդւոյ միայնոյ. Որպէս զմարդանալն ի կուսէն Որդւոյ միայնոյ հաւատամք. այսպէս զխաչն և զմահն Որդւոյ խոստովանիմք»<sup>59</sup>: Նա կամենում է կողմերն իրար մերձեցնել և փոխադարձ զիջումներով՝ երկուսից «նոր մարդ» պատրաստել: Նամակը եզրափակվում է տարբերությունները կամ միջնորմը վերացնելու և երկու կողմերը հաշտության նոր բանաձևով միավորելու կոչով. «...Եթե իցէ արդեօք հնարաւոր ի բաց բառնալ զկրճիմն՝ որ կայ ի միջի ըստ առաքելոյն Պաւլոսի զցանկն քակել, և զմիջնորմն յատակել, և զերկուսինն հաստատել ի մի նոր մարդ, յոր կոչեցաք ծննդեամբ սուրբ աագանին»<sup>60</sup>: Վասպուրականի թագավորի ձգտումը բյուզանդացիներին ինքնանպատակ հակադրվելն ու զայրացնելը չէր, այլ ընդհակառակը՝ հաշտության և համերաշխության եզրեր գտնելը: Մանավանդ որ հակաքաղկեդոնականությունը նույնությամբ չէր արտացոլում հայերի քաղաքական դիրքորոշումը կայսրության նկատմամբ<sup>61</sup>:

Երկխոսության միտված Արծրունի արքայի նամակը մնաց «ձայն բարբառոյ յանապատի»: Սակայն, ինչպէս նկատում է բրիտանացի բյուզանդագետ Ռանսիմենը, Արծրունի թագավորն իր աստվածաբանական թղթով, անկասկած, շահեց Ռոմանոս կայսեր համակրությունը և, ի նպաստ Վասպուրականի, ապահովեց նրա աջակցությունը<sup>62</sup>: Բյուզանդական արքունիքը խնդրո առարկա գրությունը թողեց անպատասխան, քանզի հասկանում էր, որ Գագիկ Արծրունին, լինելով երկրի աշխարհիկ առաջնորդը, նամակում արձարծում է ազգային ինքնության համար մեծ կարևորություն ունեցող, դարերով սրբագործված դավանաբանական դրույթներ, որոնք նա ի զորու չէ փոփոխելու: Հույները դարերի փորձով գիտեին, որ հայերը դյուրությամբ չեն զիջի իրենց եկեղեցու «ինքնիշխանության» հիմքը կազմող ազգային դավանանքը: Հայ և Հույն եկեղեցիները ժամանակի ընթացքում այնպիսի դավանաբանական կարծատիպեր էին ձևավորել, որ դրանք վերացնելը շղթայական փոփոխությունների պահանջ էր դնելու նաև նվիրապետական համակարգում: Իսկ այստեղ գործում էր նյութական և տնտեսական կայուն շահերի վրա կառուցված համակարգ, որի շահառուն նման փոփոխություններին ընդդիմադիր պահպանողական հոգևորական դասն էր:

Ուշագրավ է, որ դիվանագիտական իր ուղերձում թագակիր Արծրունին խոսում է ոչ թե Վասպուրականի թագավորության և նրա գահակալի, այլ ողջ հայության անունից<sup>63</sup>: Իսկ այդ ժամանակ Հայաստանում կար երեք թագավոր՝ Գագիկ Արծրունի, Աբաս Բագրատունի և Աշոտ Շապուհյան (մահացել է 934 թ.): Ձևավորված «եռաթագավորության» պայմաններում ամբողջ հա-

<sup>59</sup> Գիրք թղթոց 1901, 298:

<sup>60</sup> Գիրք թղթոց 1901, 301, հմմտ. Չամչյան 1984, 821:

<sup>61</sup> Юзбашьян 1988, 116.

<sup>62</sup> Runciman 1963, 138.

<sup>63</sup> Yeghiazaryan 2016, 83.

յության անունից խոսող Գագիկ Արծրունու «թուղթը» վստահություն և արժանահավատություն չէր ներշնչում: Կայսրը չի վստահում դավանական հակամարտությունները վերացնելու Գագիկ Արծրունու կարողությանը և չի պատասխանում նրա նամակին<sup>64</sup> գերադասելով Realpolitik-ը:

Դժբախտաբար, Գագիկ Արծրունու նամակի համար փաստաթղթեր և այլ նյութեր հայթայթող վարդապետների մասին տեղեկություններ չկան, սակայն կարելի է ենթադրել, որ այդ գործին լծված են եղել կաթողիկոսարանի ներհուն գիտնական վարդապետներ, որոնց գլուխ կանգնած էր ժամանակի կաթողիկոս Թեոդորոս Ռշտունին<sup>65</sup>: Չի բացառվում, որ նամակի պատրաստմանը աջակցել և քաջալերել են ժամանակի նշանավոր մտավորականներ, ապագա կաթողիկոս Անանիա Մոկացին, Անանիա Նարեկացին:

### Եզրակացություններ

Աշոտ Երկաթի մահից հետո Հայաստանում և քրիստոնյա Այսրկովկասում բարձր հեղինակություն էր վայելում Գագիկ Արծրունին, որի գերագահությունը ճանաչում էին հարևան հզոր պետությունները՝ Բյուզանդիան և Արաբական խալիֆայությունը: Նրա դիրքը հայոց իշխանական աստիճանակարգության մեջ բնութագրվում է որպես *Primus inter pares*:

Արաբների կողմից Դվինի կաթողիկոսարանի հիմնահատակ ավերումից և հայրապետական տիրույթների բռնազավթումից հետո Հովհաննես Դրասխանակերտցին կյանքի վերջին շրջանն անցկացնում է Վասպուրականում՝ փաստացի ձևակերպելով Հայոց նվիրապետական կենտրոնի տեղափոխությունը Դվինից Աղթամար: Գագիկ Արծրունու ջանքերով Աղթամարը կաթողիկոսական նստավայրի վերածելն ուներ Վասպուրականի թագավորության նվիրագործման խորհրդանշական իմաստ: Սրանով նախադրյալներ էին ստեղծվում Վասպուրականը Հայաստանի կենտրոնական թագավորություն հռչակելու՝ թագակիր Արծրունու վաղեմի ծրագրերի իրականացման համար:

Հայոց նվիրապետության կենտրոնը տեղափոխելով Աղթամար և մոտ երկու տասնամյակ (925-943) տնօրինելով նրա առաջնորդների ընտրությունը՝ Գագիկ Արծրունին շարունակաբար մեծացնում էր իր իշխանությունը համագային հոգևոր կառույցի վրա: Այդ ընթացքում Աղթամարում հաջորդաբար պաշտոնավարել են Ստեփանոս Բ, Թեոդորոս Ա և Եղիշե Ա Ռշտունի կաթողիկոսները, որոնք տեղի հոգևորականության ներկայացուցիչներ էին: Վերջիններս Հայոց կաթողիկոս էին դարձել Արծրունի արքայի կամքով ու ցանկությամբ, ուստի և նրա «բարձր հովանու» ներքո էին: Հայ պատմագիրները սակավախոս են հիշյալ կաթողիկոսների մասին, իսկ նրանց եկեղեցական, կրթական-մշակութային գործունեության մասին տեղեկությունները գրեթե

<sup>64</sup> Վարդանյան 2002, 126:

<sup>65</sup> Կոզեան 1961, 303:

բացակայում են: Դրա փոխարեն հայ մատենագրության հաղորդումներում արժևորված է Արծրունի արքայի դերը երկրի քաղաքական, եկեղեցական և քաղաքաշինական ասպարեզներում:

Փաստացի ունենալով գերակա դիրք և բարձր տիտղոսային իշխանություն՝ Գ. Արծրունին պարտավորված է զգում ձեռնարկել երկրի և ժողովրդի անվտանգության գերխնդրից բխող գործնական քայլեր, չեզոքացնել արտաքին սպառնալիքները: Այդ նպատակով նա հայության անունից նամակ է հղում Բյուզանդիայի կայսր Ռոմանոս Լեկապենոսին ու առաջարկում Հայ և Հույն եկեղեցիների դավանաբանական տարաձայնությունները վերացնելու ճանապարհով հասնել քաղաքական դաշնակցության: Գագիկը պատրաստակամություն է հայտնում ընդունել կայսրության հովանավորությունը, որը կապահովագրեր հայերին արտաքին սպառնալիքներից: Բյուզանդական արքունիքը նամակը թողնում է անպատասխան՝ անուղղակիորեն արտահայտելով իր թերահավատությունը Գագիկ Արծրունու առաջարկների վերաբերյալ:

### **Օգտագործված գրականություն**

Ադոնց Ն. 2006, Երկեր, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 648 էջ:

Ալիշան Ղ. 1873, Ներսես Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, Ս. Ղազարի տպ., 538 էջ:

Ակինյան Ն. 1920, Գավազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, Մխիթարեան տպ., 200 էջ:

Անանեան Պ. 1989, Փոտ պատրիարքի թղթակցութիւնը հայոց հետ, «Բազմավեպ», N 1-4, էջ 37-66:

Բարթիկյան Հ. 1966, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Ա թագավորին, ՊԲՀ, N 4, էջ 251-256:

Գիրք թղթոց 1901, Թիֆլիս, տպարան Տ. Ռոտինեանց եւ Մ. Շարածե, 584 էջ:

Գրիգորյան Մ. 1989, Գագիկ Արծրունի և Գագիկ Բագրատունի թագավորների թղթերը բյուզանդական արքունիքին, ՊԲՀ, N 3, էջ 94-101:

Եղիազարյան Ա. 2017, Աբաս Բագրատունի, Երևան, ԵՊՀ հրատ., 121 էջ:

Եղիազարյան Ա. 2016, Աշոտ Երկաթ. թագավոր հայոց, Երևան, ԵՊՀ հրատ., 117 էջ:

Եղիազարյան Ա. 2020, IX դարի վերջի և X դարի առաջին կեսի Ամենայն հայոց կաթողիկոսների աթոռակալության ժամանակագրության շուրջ, Աստվածաբանական և կրոնական հոդվածների ժողովածու, Գ, էջ 161-178:

Թովմա Արծրունի եւ Անանուն 2010, Պատմութիւն տանն Արծրունեաց, Մատենագիրք հայոց, հ. ԺԱ, Ժ դար, Պատմագրութիւն, Գիրք Ա, ԵՊՀ հրատ., Լիբանան-Անթիլիաս, 795 էջ:

Լեո 1967, Երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, «Հայաստան», 786 էջ:

Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմություն հայոց, աշխատասիր. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 426 էջ:

Կոզեան Ա. 1961, Հայոց եկեղեցին, մինչև փլորենտեան ժողովը, տպ. Վարդան Թեքեան Բեյրութ, 776 էջ:

Հայ ժողովրդի պատմություն 1976, հ. Գ, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դ. կեսերից մինչև XIV դ. կեսերը), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1023 էջ:

- Հարությունյան Բ. 2016, Արծրունյաց իշխանական ընտանիքը Հայոց պատմության մեջ, Երևան, «Մեկնարկ», 304 էջ:
- Հաաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի 1862, Վենետիկ, Ս. Ղազարի տպ., 184 էջ:
- Հացունի Վ. 1927, Կարետր խնդիրներ Հայ եկեղեցւոյ պատմութենէն, Վենետիկ, Ս. Ղազարի տպ., 588 էջ:
- Հովհաննես Օձնեցի 1953, Ընդդէմ երեսութականաց, Մատենագրութիւնք, II տպ., Վենետիկ, Ս. Ղազարի տպ., էջ 61-97:
- Ղաֆադարյան Կ. 1952, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 159 էջ:
- Մաթևոսյան Կ. 2013, Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը, Սբ. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 177 էջ:
- Մանանդյան Հ. 1952, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության (XI-XV դարեր), հ. 3, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 455 էջ:
- Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ. 1956, կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 684 էջ:
- Մելիք-Թանգեան Ն. 1905, Հայոց եկեղեցական իրավունք, Բ, Շուշի, Արագատիպ Բ. Տէր-Սահակեանցի, 279 էջ:
- Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ 2010, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք հայոց, ԺԱ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 795 էջ:
- Չամչյան Մ. 1984, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, ԵՊՀ հրատ., 1060 էջ:
- Սամուէլ Անեցի եւ շարունակողներ 2014, աշխատասիր. Կ. Մաթևոսյանի, Երևան, «Նաիրի», 502 էջ:
- Սամուէլի քահանայի Անեցւոյ 1893, Հաաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի տպ., 331 էջ:
- Ստեփանոս Տարանեցի Ասողիկ 2010, Պատմութիւն Տիեզերական, Մատենագիրք հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 893 էջ:
- Վարդանյան Վ. 2002, Արծրունիները հայոց պատմության մեջ, Երևան, «Գիտություն», 220 էջ:
- Վարդանյան Վ. 1988, Հովհաննես Դրասխանակերտցու կյանքի վերջին շրջանի մասին, ՊԲՀ, N 3, էջ 114-125:
- Վարդանյան Վ. 1969, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը. 908-1021 թթ., Երևան, ԵՊՀ հրատ., 290 էջ:
- Վարդանյան Վ. 1980, Վասպուրականի 910-930-ական թթ. պատմության շուրջ, ՊԲՀ, N 1, էջ 215-222:
- Տեանն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից 1897, Արարատ, N 3, էջ 129-144:
- Տեր-Ղևոնդյան Ա. 1965, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 312 էջ:
- Տեր-Մկրտչյան Գ. 1998, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, աշխատասիրությամբ Պ. Հակոբյանի, Երևան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպ., 816 էջ:
- Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1981, 11, Արաբական աղբյուրներ, Բ, Իբն ալ-Ասիր, թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 442 էջ:

- Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1970, 6, Բյուզանդական աղբյուրներ Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Հր. Բարթեկյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 367 էջ:
- Օրմանյան Մ. 2001, Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1870 էջ:
- Шангин М. 1947, Письма Арефы - новый источник о политических событиях в Византии 931-934 гг., Византийский временник, т. I (XXVI), с. 235-260.
- Юзбашян К. 1988, Армянские государства в эпоху Багратидов и Византия IX-XI вв., Москва, «Наука», 300 с.
- Runciman S. 1963, The emperor Romanus Lecapenus and his Reign, Cambridge, England, Published by the Syndics of the Cambridge University Press, 275 p.
- Tournebiz F. 1910, Historie Politique et Religieuse de L'Armenie, t. 1, Paris, Typographie Firmin-Didot et C<sup>e</sup>, 872 p.
- Yeghiazaryan A. 2016, Gagik Artsruni-«King of Armenia and Georgia», Բանբեր հայագիտության, Հայագիտական միջազգային հանդես, N 1, էջ 77-94:
- Yovhannes Drasxanakertci 1987, History of Armenia, Translation and Commentary by Rev. Krikor H. Maksoudian, Atlanta, Georgia, Scholars press, 372 p.

## АРМЯНСКИЙ КАТОЛИКОСКИЙ ПРЕСТОЛ В АХТАМАРЕ (II ЧЕТВЕРТЬ X ВЕКА)

Вардан Алексанян

Резюме

Когда Армянский католикосат в Двине был захвачен арабами, Ованнес Драсханакертци обосновался в Васпуракане, тем самым переместив католикосский престол из Двина в Ахтамар, чему во многом способствовал царь Васпуракана Гагик Арцруни, как *Primus inter pares*.

Более двух десятилетий (925-943) Гагик Арцруни принимал активное участие в избрании католикосов, таким образом наращивая свое влияние на институт церковной власти. Католикосы Степанос II, Теодорос I и Егише I Рштуни были избраны из местного духовенства по воле и желанию Гагика Арцруни и пользовались его покровительством. Фактически, обладая титульной властью, Гагик Арцруни должен был предотвратить внешние угрозы и обеспечить безопасность страны и народа. С этой целью он от имени армянского народа обратился с письмом к византийскому императору Романосу Лекапеносу с предложением об устранении разногласий между армянской и византийской церковью. При этом Гагик Арцруни готов был признать политическую доминанту Византии и принять ее покровительство, дабы обеспечить безопасность страны. Однако византийский двор не откликнулся на это письмо армянского царя, тем самым косвенно продемонстрировав скептическое отношение к предложению Гагика Арцруни.

**Ключевые слова** – Гагик Арцруни, Ахтамар, резиденция католикоса, Двин, письмо, Византия, Васпуракан.

---

**THE THRONE OF ARMENIAN CATHOLICOSES IN AGHTAMAR  
(THE SECOND QUARTER OF THE 10TH CENTURY)**

Vardan Alexanyan

## Abstract

After the thorough destruction of Dvin by the Arabs and the seizure of the patriarchal possessions, Hovhannes Draskhanakaertsi spent the last period of his life in Vaspurakan. By this he formulated the transfer of the center of the Armenian church hierarchy from Dvin to Aghtamar. The king of Vaspurakan Gagik Artsruni played a big role in this, whose position in the Armenian princely hierarchy is characterized as *Primus inter pares*.

By moving the center of the Armenian Church to Aghtamar, Gagik Artsruni for about two decades (925-943) ruled the leaders of the Catholicos throne and consistently increased his influence over the nationwide confessional organization. During the time under study, Aghtamar was ruled by Catholicos Stepanos II, Theodoros I and Yeghishe I Rshtuni, who belonged to the local clergy. They became Catholicos by the will and desire of Gagik Artsruni and were under his high patronage. Possessing an actual high position and titular power, the Artsrunid king was obliged to initiate practical steps to prevent external threats and ensure the security of the country and people. Gagik Artsruni represented the ways of resolving these issues in alliance with Byzantium and accepting its patronage. To this end, he wrote a letter to the Byzantine king Romanus Lekapenus. In the letter, he proposed to achieve political union by eliminating theological differences between the Armenian and Byzantine churches. Gagik expressed readiness to recognize the political supremacy of Byzantium and accept its patronage. By this he intended to insure the Armenians from external threats. The Byzantine court left the letter unanswered, indirectly expressing skepticism about his proposals.

**Key words** – Gagik Artsruni, Aghtamar, Residence of the Catholicos, Dvin, Letter, Byzantium, Vaspurakan.

# THE PROCESS OF DEVELOPMENT OF ARMENIAN-SYRIAN RELATIONS FROM 1991 TO THE PRESENT DAY

**Vahe Aghasaryan**

PhD in political science  
Armenian-Russian University  
RA, Yerevan, Hovsep Emin St. 123  
Email: v.aghasar@gmail.com  
ORCID: 0009-0006-9961-744X

The article has been delivered on 25.11.2023, reviewed on 12.04.2024, accepted for publication on 25.04.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.1-62

## **Abstract**

Syria holds one of the key positions in the Middle East; geopolitical, economic, and cultural significance of the Syrian Arab Republic may contribute to reinforcing national interests of the Republic of Armenia both in the Middle East and in the whole arab world. Recent developments around Palestine and Israel demonstrated that the processes in the Middle East continue to play fundamental role in the international security system. Diplomatic, political and financial support of the majority of muslim states for the arab people of Palestine indicates the relevance of this issue for the regional countries. Geopolitical shifts in the Middle East may lead to the emergence of new opportunities for development of cooperation between Armenia and the regional states displaying negative attitude towards the support of Azerbaijan and Turkey to Israel.

**Key words** – bilateral relations, Syria, Republic of Armenia, Middle East, regional/international security, Syrian crisis, foreign policy.

## **Introduction**

Establishment of diplomatic relations between Armenia and Syria that immediately followed the declaration of independence of the Republic of Armenia vividly demonstrates the existence of time-tested historical connections of two nations.

Armenian-Syrian relations have a rooted historical foundation. Dating back to ancient times, Armenian and Syrian peoples have established cooperation in various fields leaving behind a legacy of effective collaboration.

## **Historical background**

Throughout many decades the contemporary borders of Syria have been recognized as one of the preeminent trade and cultural hubs of the Middle East. Since antiquity Armenians have settled in this region: During that time there have been relatively minor presence of the Armenians in northern regions of Syria. Under the rule of Tigran the Great, Armenians invaded Syria, making historical Antioch one among the quartet of capital cities of the Armenian Empire.

Armenians have continued to reside in this region starting from the beginning of the Byzantine Era<sup>1</sup>.

After adoption of Christianity as an official religion in Armenia, Christian centers of Greater Syria such as Antioch, Jerusalem, Nisibis and Edessa became main destinations for Armenian pilgrims and merchants. Firm ties were among Armenians and Syrian Christian congregations in the post apostolic era.

Historically amicable relations between Syrians and Armenians unveiled when local population of Aleppo, Raqqa, Deir Zor, Damascus and elsewhere in the region landed a helpful hand and warmly welcomed Armenians who survived the horrors of the Armenian Genocide. As a result of the resettlement of Armenians in the region, they reshaped and created a strong Armenian community that has its own influence on bilateral relations between Armenia and Syria<sup>2</sup>.

This study aims at examining political, economic, security, cultural and religious factors that have an impact and shape relations between the two nations.

### **Establishment of diplomatic relations**

A new chapter has commenced in the Armenian-Syrian relations in the early 1990s, when Armenia declared independence on 21 September 1991, entered the international arena as a sovereign state and embarked on establishing diplomatic relations with the outer world. Syria was one of the first states that rapidly responded to this event of historical significance for Armenians officially recognizing the independence of the Republic of Armenia on 28 December 1991<sup>3</sup>. Diplomatic relations between the two states were established on 6 March 1992 according to an agreement signed in Damascus. In Yerevan and Damascus the embassies of the two states opened respectively. The Armenian Embassy in the capital of Syria was opened in November 1992 and, The Syrian Embassy in the capital of Armenia opened its doors in 1997. Moreover, the Consulate General of the Republic of Armenia in Aleppo was established in 1993 since Armenia and Syria were attaching great importance to their bilateral relations, inter alia, taking into consideration the presence and the influence of the Armenian diaspora<sup>4</sup>.

Bilateral ties between Armenia and Syria promptly gained significance since the two leaders of the time considered relations between their countries not only friendly but of strategic nature.

---

<sup>1</sup> Shoup 2018, 6, "Syria has several other ethnic groups, the Kurds... they make up an estimated 9 percent... Turkomen comprise around 4-5 percent of the total population. The rest of the ethnic mix of Syria is made of Assyrians (about 4 percent), Armenians (about 2 percent), and Circassians (about 1 percent)".

<sup>2</sup> "Syria", Office of the high commissioner for diaspora affairs.

<sup>3</sup> Hovhannisyan 2007, 548-549.

<sup>4</sup> Bilateral Relations, MFA of the RA.

Only four months after the recognition of the independence of Armenia by Syria, Levon Ter-Petrosyan, the first president of the Republic undertook an official visit to Syrian Arab Republic.

Since the declaration of Independence of Armenia, more than 70 various agreements, protocols and memorandums have been signed with Syria, regulating bilateral relations in political, economic, cultural, scientific and religious fields<sup>5</sup>.

### **Economic aspect**

Economic aspect played an important role in the agenda of bilateral relations between the two nations. At the beginning of the establishment of relations, trade between them can be characterized as modest. Both countries were facing economic challenges. However there were attempts to strengthen cooperation. At the time broader geopolitical events had a negative influence on their economic and trade relations. At the beginning of the 20th century economic ties were quite limited. Starting from 2008 the situation changed and economic relations began to gradually evolve.

As of the current date several economic documents were signed between the two countries including Agreement on trade, economic, scientific and technical cooperation between the Ministry of Industry of the Republic of Armenia and the Ministry of Industry of the Syrian Arab Republic in December, 1992 and Agreement on economic, scientific and technical cooperation between the Government of the Republic of Armenia and the Government of the Syrian Arab Republic in April, 1995<sup>6</sup>.

Unfortunately, throughout 10 years of military actions the economy of the Syrian Arab republic had faced considerable challenges. Civilian infrastructure had been destroyed, (roads, water pumping and supply facilities, factories, educational centres, hospitals, electricity distribution networks), agricultural land has sharply decreased along with the shortage of fuel, brain drain. etc.

For the past several years Syria has endured challenging and complex periods. Socio-economic and financial situations have worsened, humanitarian needs have increased and massive economic reconstruction has not even started.

According to the World Bank data, Syrian GDP has been declining since 2018<sup>7</sup>, primarily as a result of unilateral Western sanctions (Caesar Act 2019), the economic and financial crisis in Lebanon, increased pressure on Iran, the COVID-19 pandemic and the recent earthquake. Over the past year the Syrian currency has experienced a significant depreciation shifting from 4,000 Syrian

---

<sup>5</sup> Bilateral Relations, MFA of the RA.

<sup>6</sup> Bilateral Relations, MFA of the RA.

<sup>7</sup> The World Bank 2024.

Pounds per one USD to 8,000. Moreover, 15.3 million people are in need of humanitarian assistance<sup>8</sup> (700 thousand people (5%) more than in 2022 and almost 2 million (14%) more than in 2021<sup>9</sup>). According to some Syrians, life in the country today is worse than it was amidst the active confrontation of 2016-2017.

It is important to stress that the current economic situation in Syria is a result of various factors and it is hard (if not impossible) to assess which one has played the main and significant role. Additionally, there are a series of issues that impede the reconstruction and economic recovery.

Taking into account the poor economic situation in Syria arising from the conflict, we should note that there have been several developments in the economic relations between Armenia and Syria during the last several years. Throughout the recent 24 years Armenia's exports to Syria have shown a steady annual growth rate of 5.94%, rising from 2.73 million USD in 1997 to 10.9 million USD in 2021. In 2021, Armenia's exports to Syria totaled 10.9 million USD, with the primary product being Rolled Tobacco accounting for 10.8 million USD. Other noteworthy export items are Semiconductor Devices contributing 56.500 USD and Hard Liquor reaching 36.700 USD. Correspondingly, Syria's exports to Armenia have seen a consistent increase rate of 8.79%, commencing at 91.900 USD in 1997 and reaching to 694.000 USD in 2021. In 2021 the leading export products were Packaged Medicaments valued at 254.000 USD, Sauces and Seasonings with a total of 73.400 USD, and Pure Olive Oil at 49.500 USD<sup>10</sup>.

### RA External trade data<sup>11</sup>

In thousand USD

<i>Country</i>	<i>Year</i>	<i>Export</i>	<i>Import (countries of origin)</i>	<i>Import (country of consignment)</i>
Syrian Arab Republic	2019	56657.7668	538.80331	537.97477
Syrian Arab Republic	2020	31242.20361	368.03912	360.4808
Syrian Arab Republic	2021	10922.50371	731.52889	709.6792
Syrian Arab Republic	2022	5639.51734	1128.52809	867.29907

<sup>8</sup> Syrian Arab Republic: 2023 Humanitarian Needs Overview (December 2022).

<sup>9</sup> 2021 Humanitarian Needs Overview: Syrian Arab Republic (March 2021).

<sup>10</sup> Armenia (ARM) and Syria (SYR) Trade | OEC - The Observatory of Economic Complexity.

<sup>11</sup> External trade database, Statistical Committee of the Republic of Armenia.

**Security and Strategic aspect**

The Syrian crisis, which began in 2011, from an internal political conflict rapidly transformed into an international one as a result of both short-sighted policy of the country's leadership and the gross interference of regional and non-regional powers, which were largely facilitated by the diverse national and confessional composition of the population of the Syrian Arab Republic. Currently, the Syrian crisis, being one of the most complex and protracted geopolitical problems in the region, in turn, has become a catalyst for the aggravation of the Kurdish problem, which will play an important role in the acute geopolitical struggle for the New Middle East. It is obvious that the Syrian crisis risks turning into one of the most intractable geopolitical problems in the Middle East, given the multitude of both internal and external factors.

The Syrian conflict and the processes taking place in the Kurdish-populated territories are of enormous importance for the security of the Republic of Armenia and the Armenian people, since they are related to the strategic interests of the Republic of Armenia in the region.

Today, the somewhat stabilized peace and the partial restoration of the country's most important infrastructures have given Armenians the opportunity to return to Syria. In turn, the Syrian authorities, as well as the Catholicosate of the Great House of Cilicia, have taken over the urgent mission of restoring the Syrian-Armenian community as soon as possible.

Considering the fact that the Syrian conflict, transforming from a regional to an international one, has shown how important this region is in the context of international security. The interests of Iran, Turkey, Russia, the United States, Israel and other countries that are trying to strengthen their positions in the Middle East are currently represented in the Syrian Arab Republic. Taking into account the involvement of the above-mentioned actors, the Republic of Armenia, realizing the importance of these processes, in our opinion, should continue the process of strengthening and expanding bilateral relations with friendly Syria.

**Kurdish issue**

In fact, the Syrian Kurds, as a result of the civil war in Syria, managed to create their own bodies of self-government, an effective and well-organized army, consisting of both male and female units, which waged a very effective struggle against the Islamic State, as well as radical groups financed by Turkey, Saudi Arabia, Qatar and other countries.

The Syrian conflict, despite its catastrophic consequences for the Syrian Arab Republic itself, has become an unprecedented moment in the history of the Syrian Kurds.

---

The Kurdish Democratic Union Party (PYD) became the sole political entity with control over the most important process of forming the autonomy of Syrian Kurdistan, due to the inefficacy and fragmentation of other Kurdish political organizations in Syria.

The PYD played a fundamental role in effectively organizing Kurdish forces to defend the population against radical Islamist groups. This circumstance played an important role in the regional and global policies of the states involved in the Syrian crisis.

The Kurdish People's Protection Units have become the main strategic partner of the United States in the fight against the Islamic State and the liberation of Syrian territories on the eastern side of the Euphrates River. At the same time, the US-Kurdish alliance in Syria has become one of the most complex issue in relations between the US and Turkey.

The Syrian conflict and the processes taking place in Kurdistan (Syrian and Iraqi) are of vital importance for the security of the Republic of Armenia and the Armenian people, as they are related to the strategic interests of the Republic of Armenia in the region.

Օրէնքի երկրորդ եւ երրորդ յօդուածներով ճշդուեցաւ տուրքի վճարման ձեւը: Տուրքը միանուագ կամ ամենամսեայ էր: Այսինքն ամէն Հայ անհատ պարտաւոր էր վճարել կա՛մ մէկ անգամէն միանուագ եւ կամ ամէն ամիս՝ որոշ գումարի ձեւով: Վճարումը պէտք է կատարուէր Քաղաքական ժողովի վերջնական գնահատումէն ետք մինչեւ մէկ ամսուայ ընթացքին:

Չորրորդ եւ հինգերորդ յօդուածները կը պատկանէին տուրքի գնահատման եւ գանձումի պարագաներուն: Օրէնքի համաձայն, Կեդրոնական Գնահատող Մարմին մը ընտրուած էր ժողովուրդի ամէն դասի ներկայացուցիչներէն՝ ինչպէս վաճառականներ, եագմաճիներ, ոսկերիչներ, սեղանատորներ եւ կալուածատէրեր<sup>15</sup>: Մարմինը, իւրաքանչիւր անձի նիւթական կարողութիւնը նկատի առնելով, կը գնահատէր վճարուելիք տուրքի չափը<sup>16</sup>: Ըստ այս յօդուածներու, Քաղաքական ժողովը ամէն թաղի մէջ կ'ընտրէր գնահատող մարմիններ, որոնք կը ճշդէին իրենց թաղի մէջ ապրող անձերու ունեցուածքը: Գնահատման առնչութեամբ դիտողութիւն ունեցողներ տասը օրուան մէջ կը ներկայացնէին իրենց բողոքը այս մարմիններուն, որոնք իրենց կարգին կը պարտաւորուէին մէկ շաբթուան մէջ վերջնական որոշում տալու:

<sup>10</sup> Ազգ. ժողով Հայրենիքի Տուրքի Օրինագիծը, Ժամանակ, 7/20 Սեպտեմբեր 1919, 3629, 1-2:

<sup>11</sup> Ս. Պատրիարքը, Ժամանակ, 11/ 24 Սեպտեմբեր 1919, 3632, 2:

<sup>12</sup> Ղազարեան 2021, 90:

<sup>13</sup> Արձագանգ, Արագած, 5 Հոկտեմբեր 1919, 37 (495):

<sup>14</sup> Հայրենիքի Տուրքի Օրէնքը Ընդունուած, Ժամանակ, 14/27 Սեպտեմբեր 1919, 3635, 1-2: Ազգային ժողովը Հայրենիքի Տուրքի Օրինագիծը, Ճակատամարտ, 27 Սեպտեմբեր, 269 (2090), 2:

<sup>15</sup> Գնահատիչ Մարմնոյ անդամները զանազան միութիւններու նիստերուն մասնակցելով տուրքի մասին տուած են բացատրութիւններ որոնցմէ մէկը եղած է Պոլսահայ Բժշկական միութիւնը: Հայրենիքի Տուրքը եւ Հայ Բժշկական Միութիւնը, Ժամանակ, 27/10 Դեկտեմբեր 1919, 3697, 2:

<sup>16</sup> Հայրենիքի Տուրքը, Ժամանակ, 5/18 Հոկտեմբեր 1919, 3652, 2:



**Նկ. 1.** Կանոնագիր Ազգային ուղղակի տրոց Կեդրոնական Գաւառական եւ Թաղական Կ. Պոյիս, Գավաքեան սպագրութիւն, 1881

**Նկ. 2.** Ազգային խնամատարութեան ելմտական կեդրոնական յանձնատողովի Գատրգիտի մասնաճիւղի կողմէ տրուած անդդորագիր մը, որով կը հաստատուի որ խնդրոյ առարկայ անձը եւ ընտանիքի անդամները զերծ են Հայրենիքի տուրքէն



**Նկ. 3.** Ազգային խնամատարութեան ելմտական կեդրոնական յանձնատողովը, հիմնուելով Բաբերդի հայրենակցական միութեան վկայութեան վրայ, կը հաստատէ որ Ռոմանիա ճամբորդելիք հայրենակից մը զուրկ է հասոյթի միջոցներէն եւ զերծ կը մնայ Հայրենիքի տուրքէն



**Նկ. 4.** Կանոնագիր Ազգային Կեդրոնական ուղղակի տրոց վաւերացեալ յազգային երես. ժողովէ ի նիստ Ե, Սարըեան տպագրութիւն, 5 յուլիս 1885



Ազգային Խնամատարութիւնը, պաշտօնեաներու մասնակցելու պարագան ալ նկատի առնելով, հաստատած էր զանազան սակեր: Օրինակ, ուսուցիչներ հայրենիքի տուրքը կը վճարէին իրենց ստացած գումարի համեմատ: 25-49 ոսկիի միջեւ ամսական ստացողներ ամիսը՝ 25 դրուշ, 50-75 ստացողներ՝ 50, 75-100 ստացողներ 100, 100էն աւելի ստացողներ՝ 200 դրուշ տուրք կը վճարէին<sup>17</sup>:

Գանձումները կը կատարուէին Քաղաքական Ժողովի կողմէ ընտրուած Ելմտական Յանձնախումբի միջոցաւ: Տուրքի հաշուետուութիւնը Ազգային Ժողովին կը ներկայացուէր Քաղաքական Ժողովի կողմէ՝ երեք ամիսը անգամ մը: Ազգային Ժողովը իր համարակալութեան դիւանին միջոցաւ քննութիւնները կատարելէ ետք, կա՛մ զանոնք կը վաւերացնէր, կա՛մ դիտողութիւններով ետ կը դրկէր Քաղաքական Ժողովին:

Եօթներորդ յօդուածը կը ձեւաւորէր տուրքէ խոյս տուողներու դէմ ազգային իշխանութեան կողմէ կիրարկուելիք պատիժները: Խիստ էին թե՛ որոշուած պատիժները եւ թե՛ նոյնքան խիստ՝ նաեւ պատիժներու կիրառման պարագաները: Պատրիարքարանը շրջաբերականներով կը հրաւիրէր եկեղեցական դասը եւ թաղային խորհուրդները՝ չկատարել պահանջները այն ազգայիններու, որոնք չէին վճարած տուրքը<sup>18</sup>: Տուրքէ խոյս տուողներու անունները կը հրատարակուէին թերթերու մէջ, միաժամանակ անուններու ցանկը կը կախուէր տուեալ անձի ապրած թաղի եկեղեցոյ բակին մէջ: Այդ ազգայինները կը զրկուէին Թաղերու մէջ ազգային երեսփոխանական ընտրութիւններուն *ընտրուող* եւ *ընտրող* ըլլալու իրաւունքներէն<sup>19</sup>: Օրինակ, երբ 1921-ի ազգային երեսփոխանական ժողովը կը վաւերացնէր նոր Քաղաքական Ժողովի կազմը, Յակոբ Ճօլօլեան [Սիրունի] կը հարցնէր թե՛ նորընտիր անդամները իրենց հայրենիքի տուրքը վճարա՞ծ էին թե՛ ոչ: Եթէ չէին վճարած, իրաւունք չունէին մաս կազմելու Քաղաքական Ժողովին: Կ'ըսէր որ պէտք է այդ պարագան ստուգուէր եւ տեղեկացուէր Ազգային Ժողովին: Ժողովն ալ կ'ընդունէր այս տեսակետը<sup>20</sup>: Տուրքը չվճարողներ կը զրկուէին նաեւ մկրտութեան, հարսանիքի եւ յուղարկատրութեան հանդիսութիւններէ: Այս ծանր պատիժներու նպատակը տուրքի գանձումը եւ արդիւնաւէտութիւնը ապահովելու համար էր: Իրապէս վերոյիշեալ պատիժները ազդեցիկ էին, քանզի ազգին անդամները չէին ուզեր որ հայոց պատմութեան էջերուն վրայ իրենց անունները սեւ գիրերով արձանագրուէին որպէս անհատներ, որոնք կը զլանային օգնութիւն յատկացնել դժբախտ տարագրեալներուն եւ որբերուն:

<sup>17</sup> Պաշտօնեաներու Ազգ. Տուրքը, Ճակատամարտ, 16 Յունիս 1920, 479 (2300), 2:

<sup>18</sup> Պատրիարքարանը, Ժամանակ, 11/24 Մարտ 1920, 1784, 2:

<sup>19</sup> Բերայի Ազգ. Երեսփոխանական Ընտրութիւն, Ճակատամարտ 28 Մայիս 1920, 464 (2285) 3: Կէտիկփաշա, Ժամանակ, 27 Հոկտեմբեր/9 Նոյեմբեր 1919, 3671, 2:

<sup>20</sup> Ազգային Երեսփոխանական Ժողովը, Ճակատամարտ, 9 Ապրիլ 1921, 727 (2548), 2:

Պոլսոյ թաղերու ելմտական մասնաճիւղերը գանձումի համար թերթերու ազդերով կը հրաւիրէին իրենց թաղեցիները՝ ըլլայ Առաքելական, ըլլայ Հայ Հռոմէական կամ Հայ Բողոքական, որոնք հայրենիքի տուրքի յանձնառութիւնը ստորագրած ըլլալով, չէին վճարած յիշեալ պարտքը<sup>21</sup>: Հայ Կաթողիկէ<sup>22</sup> եւ Բողոքական համայնքները<sup>23</sup> նոյնպէս այդ քայլին կը հետեւէին: Հայ Բողոքականաց Ազգապետարանը պաշտօնական յայտարարութեամբ իր համայնքը կը հրաւիրէր ազգային պարտականութիւնը կատարելու: Երբ այդ համայնքի անդամները կը դիմէին Ազգային Փոխանորդարան՝ ինքնութեան գիր եւ կամ ժառանգական վկայագիր ստանալու, պարտաւոր կ'ըլլային ի ձեռին ունենալ Հայրենիքի Տուրքը վճարած ըլլալու ստացագիրը<sup>24</sup>:

Զաւէն Պատրիարքը Կրօնական Ժողովի հոգեւորականներուն մասնաւոր խնդրանք կը ներկայացնէր, որպէսզի անոնք իրենց շրջաններուն մէջ հարկ եղած ջանքերը ի գործ դնէին՝ տուրքի խնդիրը յաջողութեամբ պսակելու համար<sup>25</sup>:

#### **Հայրենիքի տուրքը Կ. Պոլսէ դուրս**

Քաղաքական Ժողովի հաւանութեամբ եւ Զաւէն Պատրիարքի հրահանգով տուրքի վճարումը կազմակերպուեցաւ Կ. Պոլսոյ սահմաններէն դուրս եւս: Հայ հոգեւորականներ Օսմանեան Կայսրութեան զանազան քաղաքներու մէջ, որոնց շարքին կարելի է յիշել՝ Իզմիր, Գոնիա, Էսքիշէհիր, Ազէհիր, Քէօթահիա եւլն., կազմակերպեցին տուրքի հաստատման գործընթացները<sup>26</sup>: Տուրքը օտար երկիրներու մէջ կազմակերպելու նպատակաւ պաշտօն յանձնուեցաւ Գնէլ Եպիսկոպոս եւ Ս[արգիս] Սրենցէ բաղկացեալ պատուիրակութեան: Անոնց տրուեցաւ համապատասխան յանձնարարագիր եւ կոնդակ՝ օտար երկիրներու կառավարութեանց եւ տեղական ազգային իշխանութեանց բացատրելու եւ տեղեկացնելու Հայ որբերու եւ տարագիրներու կարիքները: Պատուիրակութիւնը Պիքրէշ, Քէօսթէնճէ<sup>27</sup> եւ Ռումանիոյ զանազան կարեւոր քաղաքներ<sup>28</sup>, Ֆօզան<sup>29</sup>, Սերպիոյ եւ Մակեդոնիոյ մէջ հաւաքոյթներով եւ բանախօսութիւններով տուրքին նպատակը բացատրեցին

<sup>21</sup> Ազր, Ճակատամարտ, 3 Նոյեմբեր 1920, 596 (2417), 3: Բերացիներու, Ճակատամարտ, Դեկտեմբեր 1920, 621 (2442), 2:

<sup>22</sup> Հայ Հռոմէականները եւ Հայրենիքի Տուրքը, Ժամանակ, 17/30 Ապրիլ 1920, 3814, 2:

<sup>23</sup> Հայ Բողոքականներ եւ Հայրենիքի Տուրքը, Ժամանակ, 31 Դեկտ 1919/12 Յունուար 1920, 3726, 2:

<sup>24</sup> Հայրենիքի Տուրքը, Ժամանակ, 15/28 Սեպտեմբեր 1919, 3636, 2:

<sup>25</sup> Հայրենիքի Տուրքը եւ Հայ Եկեղեցականութիւնը, Ժամանակ, 28 Նոյեմբեր-11 Դեկտեմբեր 1919, 3698, 3:

<sup>26</sup> Հայրենիքի Տուրքը Գոնիայի Մէջ, Ժամանակ, 22 Դեկտեմբեր 1919 /4 Յունուար 1920, 3719, 2:

<sup>27</sup> Պատրիարքական Պատուիրակութիւնը Պիքրէշի Մէջ, Ճակատամարտ, 16 Նոյեմբեր 1921, 913 (2734), է 2:

<sup>28</sup> Հ. Տուրք Արտասահմանի Պատուիրակութեան Գործունէութիւնը, Երկիր, 3 Յունուար 1922, 655, 3:

<sup>29</sup> Հայրենիքի Տուրքը Ռումանիոյ Մէջ, Երկիր, 22 Նոյեմբեր 1921, 620, 3: Հ. Տուրքի Արտասահմանի Պատուիրակութիւնը Ֆօզանի Մէջ, Ճակատամարտ, 20 Դեկտեմբեր 1921, 942 (2768), 2:

ժողովուրդին եւ կազմեցին մասնաճիւղեր<sup>30</sup>: Պատրիարքարանի Ելմտական Կեդրոնական Յանձնաժողովը Ռումանիոյ մէջ գործող եօթը մասնաճիւղերու վաւերացումով, հայերէն-ռումաներէն ստացագիր եւ կնիքներ դրկեց: Պատրիարքարանի կողմէ ուղարկուեցան նաեւ օրհնութեան գիրեր եւ քաջալերական գրութիւններ մասնաճիւղերու եւ մանաւանդ այդտեղի կանանց՝ որոնց ջանքերը շատ ազդեցիկ էին գործի յաջողութեան մէջ<sup>31</sup>: Պալքանեան երկիրներու մէջ ձեռք ձգուած լաւ արդիւնքէն գոհ մնալով Ելմտից Կեդրոնը որոշեց նոյնը կիրարկել Ամերիկայի մէջ եւ գործի պատասխանատուութիւնը յանձնեց Հրաչ Երուանդի եւ Հ. Ամատունիի<sup>32</sup>:

### Արդիւնք՝ Հայրենիքի տուրքի

Օրէնքի գործադրութիւնը վերապահուեցաւ Ազգային Կեդրոնական Ելմտական Յանձնաժողովին, իսկ գոյացած գումարներու մատակարարութիւնը տրուեցաւ Ազգային Խնամատարութեան:

Ըստ Ելմտական Կեդրոնական Յանձնաժողովի հաշուեցոյցի, որ Պատրիարքարան յանձնուած էր 1920-ի Ապրիլ ամսուան առաջին շաբաթը, մուտքի գլխաւոր աղբիւրը Հայրենիքի Տուրքն էր: 311.908 ոսկինոց ընդհանուր մուտքին 116.088 ոսկին կուգար այդ տուրքէն<sup>33</sup>: Դարձեալ ըստ Յանձնաժողովի տեղեկագրին, տուրքի հաստատումէն մինչեւ 31 Օգոստոս 1921, այսինքն երկու տարուայ ընթացքին, Կ. Պոլսոյ մէջ վճարում կատարող հարկատուներու թիւը կազմած էր 12.808 հոգի, որոնք ընդհանուր առմամբ վճարած էին 555.265 ոսկի: Պարտք մնացած էր 94.043 ոսկի, այսինքն իրենց յանձնառութեան 1/5ը<sup>34</sup>:

Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի տուած տեղեկութեան համաձայն, նոյն շրջանին համայնքի անդամներէն միանուագ եւ ամսական ըլլալով ընդհանուր կերպով գանձուած էր 7800 ոսկի, իսկ Հայ Բողոքականներէ 5000 ոսկի<sup>35</sup>:

Պոլսոյ եւ այլ հայ համայնքներու մեծամասնութիւնը կատարած էր իր պարտականութիւնը: Ինչպէս Զաւէն Պատրիարքն ալ կը նշէ իր յուշերուն մէջ՝ «տուրքէն խուսափող չեղաւ եւ շատեր իրենց նիւթական կարողութիւններէն վեր գումարներ վճարեցին<sup>36</sup>»: Նոյնպէս Վահան Թէքէեան, պատմելով

<sup>30</sup> Հայրենիքի Տուրքը եւ Արտասահմանի Հայերը, Վերջին Լուր, 11 Հոկտեմբեր 1921, 2305, 3:

<sup>31</sup> Հ. Տուրք Արտասահմանի Պատուիրակութեան Գործունէութիւնը, Ճակատամարտ, 7 Յունուար 1922, 958 (2779), 4:

<sup>32</sup> Հայրենիքի Տուրքի Ամերիկեան Պատուիրակները, Վերջին Լուր, 24 Փետրուար 1922, 2421, 3:

<sup>33</sup> Հայրենիքի Տուրքի Վեցամսեայ Հաշուեկշիռը, Ժամանակ, 9/22 Ապրիլ 1920, 3807, 2:

<sup>34</sup> Հայրենիքի Տուրքի Տարեկան Արդիւնքը, Ժողովուրդի Ձայնը, 3/16 Դեկտեմբեր 1921, 971 (4256), 2:

<sup>35</sup> Հայրենիքի Տուրքի Արդիւնատրումը, Ժողովուրդի Ձայնը, 8/21 Դեկտեմբեր 1921, 975 (4260), 3:

<sup>36</sup> Զաւէն Արքեպս. 1947, 281:

Եգիպտոսի մէջ տուրքի պարտաւորիչ ըլլալու մասին<sup>37</sup>, կը տեղեկացնէր որ առաջին տարին ձեռք ձգուած էր մեծ արդիւնք մը: Այս յաջողութիւնը գրաւականն էր բոլոր կուսակցութիւններու եւ մարմիններու համագործակցութեան եւ հաւաքական աշխատութեան: Հակառակ այս բոլորին, տուրքը կարճ ժամանակի մէջ չկրցաւ հակակշռի տակ առնել Խնամատարութեան ամբողջ պիտոճէն, ինչպէս Զաւէն Պատրիարք կ'արտայայտէ իր յուշերուն մէջ<sup>38</sup>:

Այնուհանդերձ, ի վերջոյ պէտք յիշել որ «Հայրենիքի Տուրք»ը Պոլսահայերու կողմէ կանոնաւոր հիմքերու վրայ դրուած, օրինաւոր մարդահամարներով կատարուած, հաշիւները ժողովուրդին ներկայացուած շատ կազմակերպուած գործառոյթ մը եղաւ, որոշ ժամանակ մը իր դրական դերը կատարեց ազգի վերքերը դարմանելու գործին մէջ:

### Եզրակացութիւն

Հայրենիքի տուրքը, հիմնաւորուած՝ Ազգային Սահմանադրութեան 90-րդ եւ 91-րդ յօդուածներով, գործածուած էր ի նպաստ բոլոր այն ազգակիցներուն, որոնք անտերունչ մնացած էին եւ ցանկութիւն ունէին վերահաստատուիլ իրենց հայրենիքը: Պայմանները ճշդուած էին յատուկ կանոններով եւ վճարման ձեւերով: Գումարի չափը որոշուած էր ժողովուրդի զանազան հատուածներու ներկայացուցիչներու մասնակցութեամբ կազմուած Կեդրոնական Գնահատող Մարմնի կողմէ, իսկ համապատասխան տեղեկագրերը եռամսեայ դրութեամբ դարձած էին պատկան ժողովի ուշադրութեան առարկայ:

Տուրքերէն խուսափողները ենթարկուած էին խիստ պատիժներու: Անոնց պահանջները ի կատար չէին ածուած, այդ մարդոց անունները հրատարակուած էին թերթերուն մէջ, կամ անոնց անուն-մականունները ցանկերը կախուած էին անոնց ապրած թաղերու եկեղեցիներու բակին մէջ: Տուրքը չվճարողներ միաժամանակ զրկուած էին նաեւ մկրտութեան, հարսանիքի եւ յուղարկաւորութեան հանդիսութիւններէ: Այս բոլորը տուրքի գանձումը եւ արդիւնաւէտութիւնը ապահովելու, դժբախտ տարագրեալներուն եւ որբերուն օգնելու համար էին:

Հակառակ որ տուրքը չէր յաջողած հակակշռի տակ առնել Խնամատարութեան ամբողջ պիտոճէն, այնուհանդերձ պէտք է հաստատել որ «Հայրենիքի Տուրք»ը հանդիսացած է կազմակերպեալ գործառոյթ մը՝ դրական դերակատարութիւն ունենալով ազգին ցաւերուն դարման ըլլալու գործին մէջ:

<sup>37</sup> Արեւ թերթը Գահիրէէն տուրք վճարողներու ցանկերը կը հրատարակէ: Պատույ Սիւնակ Հայրենիքի Տուրքին, Արեւ, 8 Յունուար, 1919, 103 (568), 2:

<sup>38</sup> Զաւէն Արքեպս. 1947, 28:

**Օգտագործված գրականություն**

- Ազգային Սահմանադրութիւն Հայոց 1863, Կ. Պոլիս, Կ.Յ. Միւիէնտիսեան տպ., 54 էջ:  
 Զաւէն Արքեպս. 1947, Պատրիարքական յուշերս, վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, «Նոր Աստղ» տպ., 424 էջ:  
 1881, Կանոնագիր Ազգային Ուղղակի Տրոց Կեդրոնական Գաւառական եւ Թաղական, Կ. Պոլիս, Գավաճեան Տպ., 8 էջ:  
 5 Յուլիս 1885, «Կանոնագիր Ազգային Կեդրոնական Ուղղակի Տրոց Վաւերացեալ Յագագային Երես Ժողովէ Ի նիստ Ե.», Սարըեան Տպ., 5 էջ:  
 Ղազարեան Վ. 2021, Համահաւաք Ատենագրութիւններ Թուրքիոյ Հայոց Ազգային Երեսփոխանական Ժողովի Համագումար Ազգային Ժողովի եւ Համազգային Խորհուրդի (1919-1922), Ամերիկա, 882 էջ:

**НАЛОГ РОДИНЕ И ЕГО ВЗИМАНИЕ В 1918-1923 ГГ. В КОНСТАНТИНОПОЛЕ**

Силварт Малхасян

Резюме

После Мудросского перемирия в 1918 г. константинопольская армянская община столкнулась с рядом вопросов не только местного, но и общенационального характера. В ряду этих вопросов был вопрос возвращения на родину сирот, нашедших убежище в чужих семьях, беженцев и эмигрантов, равно как и вопросы их обустройства и организации опеки.

В 1919 г. была создана структура «Армянская национальная опека», вокруг которой объединились различные союзы и общества. Основываясь на соответствующих статьях Национальной конституции (ст. 90, 91), патриаршество восстановило систему национального налога, определив это как «Налог Родине». В соответствии с этим 26 сентября 1919 г. Национальное собрание приняло закон об основе, формах и размерах взимаемого налога, контроле и санкциях в отношении лиц, уклоняющихся от них.

Помимо Константинополя, налоги взимались и в других городах – Смирне, Кони, Акшехире, Кётахии и других местностях, а также в Румынии, Сербии и Македонии.

В 1919-1921 гг. число налогоплательщиков в Константинополе составило 12.808 чел. Последние вносили в казну 555.265 золотых монет, а с армян иных вероисповеданий взималось 12.800 золотых монет.

В эти судьбоносные дни армяне Константинополя и других общин с честью выполнили свой патриотический долг.

**Ключевые слова** – константинопольское Армянское патриаршество, константинопольская армянская община, национальный налог, Национальное собрание, Гражданское собрание, патриарх Завен, Национальная конституция.

---

**TAX TO THE MOTHERLAND AND ITS USAGE IN 1918-1923 AT CONSTANTINOPLE**

---

Silvart Malhasyan

## Abstract

After the armistice of Armenia in 1918, the Armenian community of Constantinople and the Armenian Patriarchate faced not only urgent local problems, but also challenges of nationwide significance. Among the latter were the return of orphans from foreign families, the transfer of immigrants and displaced people to the homeland, as well as the problems of foster care related to all this. In February 1919, the structure called "Armenian National Guardianship" was created, around which various unions and associations gathered. The Patriarchate, relying on the relevant articles of the National Constitution (90, 91), restored the principle of national debt by defining "Patriotic debt". Accordingly, on September 26, 1919 the National Assembly adopted a relevant law based on the tax, the form and amounts of its collection, the representative nature of control, the sanctions applied to tax evaders, etc.

It also organized toll collection outside Istanbul in Smyrna, Konya, Akshehir, Kyotania and other cities in Romania, Serbia and Macedonia.

In the years 1919-1921, the number of taxpayers in Constantinople was 12,808 people, who paid 555,265 gold. 12,800 pieces of gold were collected from Armenians (Armenians of other faiths).

The Armenian community of Istanbul and other communities honorably fulfilled their patriotic duty in those fateful days.

**Key words** – The Armenian Patriarchate of Constantinople, the Armenian Community of Constantinople, national tax, the National General Assembly, the Political Assembly, Zaven Patriarch, the National Constitution.

# ԱՅԼԱԽՈՒՄԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՈՒԺԳՆԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1968-1978 ԹԹ.)

## Շահեն Հարությունյան

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի հայցորդ

ՀՀ, Երևան, Արմավյան 52

Էլ. հասցե՝ Sh.harutyunyan.edu@gmail.com

ORCID: 0009-0007-8494-1113

Հոդվածը ներկայացվել է 23.01.2024, գրախոսվել է 06.02.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.1-95

### Ամփոփում

Խորհրդային Հայաստանում 1968-78 թթ. սկսվեց այլախոհական շարժման երկրորդ շրջանը: Այս ժամանակահատվածում ձևավորված այլախոհական կազմակերպությունները ևս շարունակում էին պայքարել ազգային հարցերը լուծելու համար, որոնց թվում էին հողային պահանջատիրությունը, Հայոց ցեղասպանության մասին բարձրաձայնումը: Սակայն այս շրջանում առավել քան ընդգծվում էին Հայաստանի անկախության վերականգնման համար պայքարի գաղափարախոսությունն ու առաջնությունը: Ուշագրավ է, որ կազմակերպված բնույթ էր ստանում նաև մարդու իրավունքների պաշտպանության համար մղվող պայքարը, որը լայնորեն տարածվում էր ԽՍՀՄ-ի հանրապետություններում:

1968-78 թթ. ստեղծված կազմակերպություններն ամբողջացնում էին հայկական այլախոհության գաղափարական ուղղությունները: Այս կազմակերպություններն իրենց որոշ ազդեցությունն ունեցան ԽՍՀՄ-ի փլուզման գործընթացներում: Հայկական այլախոհությունը, հիմնականում արտացոլելով հայ հայրենասիրական շրջանակներում առկա տրամադրություններն ու գաղափարները, մաս էր կազմում ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում ընթացող այլախոհական շարժումների:

**Բանալի բառեր՝** այլախոհություն, Հայաստանի անկախություն, Հայոց ցեղասպանություն, «Հանուն Հայրենիքի խումբ», «Հայաստանի վերամիավորման միություն», «Հայաստանի հելսինկյան խումբ», «Հայ երիտասարդների միություն»:

### Ներածություն

1960-ական թվականների սկզբից ամբողջ Խորհրդային Միությունում սկիզբ առած այլախոհությունից ու այլախոհական շարժումներից անմասն չմնաց Խորհրդային Հայաստանը: Այլախոհությունը լայն տարածում ստացավ հայ հասարակության հայրենասիրական և ազատատենչ շրջանակներում, որոնք այս կամ այն կերպ հակադրվեցին Խորհրդային իշխանություններին և նրանց վարած քաղաքականությանը: Ինչպես Խորհրդային բոլոր հանրապետություններում, որտեղ կային այլախոհական շարժումներ, այդպես էլ Խորհրդային Հայաստանում ձևավորված այլախոհությունն ուներ իր

առանձնահատկությունները<sup>1</sup>: Սկզբնական շրջանում Խորհրդային Հայաստանում այլախոհությունը հիմնականում դրսևորվում էր հակաթուրքական տրամաբանության սահմաններում: Հայ հայրենասիրական շրջանակները բարձրացնում էին Հայոց ցեղասպանությանը վերաբերող հարցեր, ինչպես նաև առաջ քաշում հայկական հողերի՝ հիմնականում Նախիջևանի և Ղարաբաղի, Խորհրդային Հայաստանին վերամիավորման պահանջը: Սակայն ժամանակի ընթացքում այլախոհական մտքի զարգացումից և գաղափարական ամրապնդումից հետո հայկական այլախոհական շրջանակներում առաջ եկավ Հայաստանի անկախության և հայ ժողովրդի ազատության համար պայքարը, որն առանցքային դեր և նշանակություն ունեցավ 1960-80-ական թթ. այլախոհական պայքարի ընթացքում: Այլախոհության գաղափարական ամրապնդման, ինչպես նաև շարժումներն առավել համակարգված ու նպատակային դարձնելու համար կարևոր նշանակություն ուներ այլախոհական կազմակերպությունների և կառույցների առաջացումը: Այլախոհական կազմակերպությունները հստակ սահմանեցին իրենց նպատակները, կազմեցին ծրագրեր և կանոնադրություններ, որոնց շնորհիվ, այլախոհական անհատական դրսևորումներին զուգահեռ, ասպարեզ իջավ առավել կազմակերպված բնույթ ունեցող պայքարը: Թեև այլախոհական անհատական դրսևորումները շարունակվեցին մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը, այնուամենայնիվ, այդ կազմակերպությունների առաջացումից և ծավալված գործունեությունից հետո հիմնականում պայքարի կազմակերպման և առաջնորդման օջախներ դարձան նորաստեղծ կազմակերպությունները:

Այլախոհական կազմակերպությունները հիմնականում արտացոլում էին հայ հայրենասիրական շրջանակներում առկա տրամադրությունները և գաղափարները: Նրանք ունեին տարբեր նպատակներ, ինչպիսիք էին հայկական հողերի վերամիավորումը, Հայոց ցեղասպանության մասին բարձրաձայնումը, մարդու իրավունքների պաշտպանությունը և Հայաստանի անկախության համար պայքարը: Ժամանակի ընթացքում հայկական այլախոհության հիմքում առաջնային և առանցքային դեր ստացավ անկախության համար պայքարը, որը, սկսվելով 1960-ականների սկզբից, շարունակվեց մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը՝ Հայաստանի անկախության հռչակումը:

Խորհրդային Հայաստանում առաջին այլախոհական կազմակերպությունները ձևավորվեցին 1960-ականների սկզբին և շարունակվեցին մինչև 1970-ականների վերջը: Այդ կազմակերպությունների մասին քննարկումները, ըստ էության, կարող ենք բաժանել երկու մասի՝ մինչև 1966 թվականին Ազգային միացյալ կուսակցության հիմնումը (ԱՄԿ) և դրանից հետո: ԱՄԿ-ն փոխեց հայկական այլախոհության տրամաբանությունը, սահմանեց նոր չափանիշներ՝ առաջին պլան բերելով Հայաստանի անկախության համար պայքարը:

<sup>1</sup> Տե՛ս Հարությունյան 2023, 43-53:

«Այլախոհական առաջին կազմակերպությունների առաջացումը և գաղափարական զարգացման դինամիկան Խորհրդային Հայաստանում 1960-ականների սկզբին» հոդվածում անդրադարձել ենք Խորհրդային Հայաստանում առաջացած առաջին կազմակերպություններին և նրանց գործունեությանը: 1960-ական թթ. սկզբից մինչև 1967 թվականը Խորհրդային Հայաստանում հիմնադրվել և իրենց գործունեությունն են ծավալել «Հայ երիտասարդական միություն» (1962-63 թթ.), «Հայաստանի վերամիավորման շարժում» (1966-67 թթ.), «Հայ հայրենասերների միություն» ընդհատակյա կազմակերպությունները (1967-68 թթ.), «Ազգային Միացյալ կուսակցությունը» և կից գործող «Շանթ» խումբը (1966-1987 թթ.):

Սույն հոդվածում քննարկելու ենք Խորհրդային Հայաստանում այլախոհական շարժումների ուժգնացման երկրորդ փուլը և այլախոհական նոր կազմակերպությունների առաջացումը 1968-78 թվականներին:

### **1968-78 թթ. ստեղծված այլախոհական կազմակերպությունները Խորհրդային Հայաստանում**

1968 թ. սկզբին Խորհրդային Հայաստանում իր գործունեությունն է սկսում ծավալել «Հանուն հայրենիքի» ընդհատակյա կազմակերպությունը: «Հանուն հայրենիքի» խմբի ղեկավար է ընտրվել Հովիկ Վասիլյանը: Այս կազմակերպության հիմնական նպատակներն էին Հայոց ցեղասպանության ճանաչում, կորսված հայկական տարածքների՝ Ղարաբաղի և Նախիջևանի մասին բարձրաձայնում, հայոց լեզվի պահպանմանն ուղղված քայլեր<sup>2</sup>: Ուսումնասիրելով «Հանուն հայրենիքի» խմբի ծավալած գործունեությունը՝ կարելի է ընդգծել, որ թեև այն չուներ անկախությանը միտված պայքարի հստակ ուղի, սակայն խմբի անդամները խիստ քննադատության էին ենթարկում Խորհրդային կարգերը՝ դատապարտելով ռուս-թուրքական հարաբերությունները, համարելով, որ հայ ժողովուրդը զոհ է գնում այդ հարաբերություններին: «Հանուն հայրենիքի» խումբը հրապարակում է համանուն ամսագիրը՝ բաղկացած 38 էջից: Ամսագրում ընդգրկված էին հետևյալ գլխագրերով հոդվածներ. «Որպես նախաբան», «Բաց նամակ Քոչինյաններին», «Դատական կատակերգություն», «Երկու խոսք Ղարաբաղի և Նախիջևանի մասին», «Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար պարոն Չիչերինին», «Հեղափոխության աղբյուրները»<sup>3</sup>:

1968 թ. մարտ-մայիս ամիսներին «Հանուն հայրենիքի» խմբի որոշ անդամներ՝ Գևորգ Հեքիմյանը, Աղասի Անտոնյանը, Ասատուր Բաբայանը, Սարգիս Թորոսյանը, Հովիկ Վասիլյանը, մի քանի հանդիպումներ են ունենում ԱՄԿ հիմնադիրներից Շահեն Հարությունյանի և Հայկազ Խաչատրյա-

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 3-8:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 18-37:

նի հետ համատեղ գործելու նպատակով քննարկումներ անցկացնելու համար: Սակայն «Հանուն հայրենիքի» և ԱՄԿ-ի համատեղ գործունեությունը չի ստացվում գաղափարական որոշ հակասությունների և ԱՄԿ հիմնադիրների ձերբակալության պատճառով<sup>4</sup>:

1968 թ. հուլիսին ձերբակալվում են «Հանուն հայրենիքի» խմբի բոլոր 8 անդամները՝ Հովիկ Վասիլյանը, Գևորգ Հեքիմյանը, Ասատուր Բաբայանը, Աղասի Անտոնյանը, Սարգիս Թորոսյանը, Շիրակ Գյունաշյանը, Լևոն Առուշանյանը և Հայկ Իսկանդարյանը: Նրանք մեղադրվում էին ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա և պրոպագանդա) և 67-րդ հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաև հակասովետական կազմակերպությանը մասնակցելը): Սակայն դատավճիռը կայացվում է 7 մեղադրյալների նկատմամբ, քանի որ նախաքննության փուլում բանտում անհայտ պայմաններում մահանում է Հայկ Իսկանդարյանը<sup>5</sup>:

1969 թ. աշնանը հայ այլախոհական միջավայրում ձևավորվում է նոր կազմակերպություն՝ «**Հայաստանի վերամիավորման միությունը**» (**ՀՎՄ**): Այս կազմակերպությունը նույնպես կրում էր ժամանակաշրջանի ոգուն համապատասխան տարրեր՝ առաջնային տեղ հատկացնելով Հայոց ցեղասպանության մասին բարձրաձայնման կարևորությանը և Հայաստանի կորսված տարածքների՝ Նախիջևանի և Ղարաբաղի՝ Հայաստանին վերամիավորմանը, որն էլ արտացոլվում է նաև կազմակերպության անվան մեջ: Իհարկե, նշենք, որ ՀՎՄ-ի մեջ նկատվում են նաև անկախական գաղափարների որոշ նրբերանգներ, սակայն հիմնական նպատակն էր շարունակում մնալ Նախիջևանի և Ղարաբաղի միացումը Խորհրդային Հայաստանին: Կազմակերպության ղեկավար էր ընտրվել Սուրեն Մելիքյանը, որը նախապես կազմել էր ՀՎՄ-ի ծրագիրը և կանոնադրությունը: Սակայն հիվանդության պատճառով տեղափոխվելով Շամշադինի շրջանի Բերդ ավան՝ կազմակերպության փաստացի ղեկավարումն ստանձնում է Վալտեր Մելիքյանը, որը մշակում է ՀՎՄ-ի ծրագիրն ու կանոնադրությունը: Կազմակերպության անդամները ձեռնարկել են փակ հանդիպումներ, որտեղ հիմնականում քննարկվել են Ղարաբաղի և Նախիջևանի պատմական զարգացման ու խնդիրների, ինչպես նաև Հայաստանին միավորվելու վերաբերյալ հարցեր: ՀՎՄ-ի անդամները մասնակցել են ազգային գաղափարներ պարունակող թոռուցիկների, ձեռագրերի տարածմանը, ինչպես նաև քայլեր են կատարել այլախոհական շարժման մեջ ներգրավելու ազգային ոգի ունեցող նոր մարդկանց: 1970 թ. աշնանը ձևավորվել է ՀՎՄ-ի կենտրոնական

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 7:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 8:

խորհուրդը, որի անդամները պատասխանատվություն ստանձնեցին գործելու տարբեր ուղղություններով: Ըստ կենտրոնական խորհրդի որոշման՝ Վալտեր Մելիքյանը դարձել է ՀՎՄ-ի կազմակերպչական հարցերի ղեկավար, Յուրիկ Բուդաղյանը՝ քաղաքական աշխատանքի ղեկավար, Սերոբ Սարգսյանը՝ տնտեսական և ֆինանսական հարցերի ղեկավար<sup>6</sup>:

1971 թ. փետրվարին ձերբակալվում են Վալտեր Մելիքյանը, Յուրիկ Բուդաղյանը, Սերոբ Սարգսյանը, Արամայիս Խաչատրյանը, իսկ մայիսին՝ Սուրեն Մելիքյանը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ այս կազմակերպության անդամներին խորհրդային իշխանությունը այլախոհական գործունեության համար դատապարտում է 2 դատավճռով: Թեև սկզբնապես մեղադրանք է առաջադրված եղել ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա և պրոպագանդա) և 67-րդ հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաև հակասովետական կազմակերպությանը մասնակցելը), սակայն 1971 թ. հոկտեմբերի 18-ի դատավճռով խմբի անդամները դատապարտվում են ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 206<sup>1</sup>-րդ հոդվածով (սովետական պետական կամ հասարակական կարգը արատավորող ակնհայտ կեղծ հերյուրանքներ տարածելը)<sup>7</sup>: Մեկ տարի անց տեղի է ունենում արդեն իսկ դատապարտված անձանց նույն գործով երկրորդ դատավարությունը, որի ժամանակ ՀՎՄ-ի անդամներ Վալտեր Մելիքյանը, Յուրիկ Բուդաղյանը, Սերոբ Սարգսյանը, Սուրեն Մելիքյանը դատապարտվում են ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա և պրոպագանդա) և 67-րդ հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաև հակասովետական կազմակերպությանը մասնակցելը): Առաջին դատավճռով դատապարտված Արամայիս Խաչատրյանը երկրորդ դատավճռում հանդես է գալիս որպես վկա<sup>8</sup>:

1975 թ. օգոստոսի 1-ին Ֆինլանդիայում ստորագրվում է «Հելսինկյան եզրափակիչ ակտը»՝ երկրների միջև անվտանգության և համագործակցության առանցքային դիվանագիտական փաստաթղթերից մեկը: Այն կարևորագույն ընդգծումներ է անում մարդու իրավունքների պաշտպանության, խոսքի, մտքի, կրոնի, հավատքի ազատությունների վերաբերյալ<sup>9</sup>: Ի թիվս տասնյակ այլ պետությունների՝ այս կոնֆերանսին մասնակցում էր նաև Խորհրդային Միությունը, որը նույնպես ստորագրում է եզրափակիչ ակտը:

<sup>6</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 8, թ. 3-7:

<sup>7</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 8, թ. 2-12:

<sup>8</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 8, թ. 22-34:

<sup>9</sup> Conference on Security and Co-Operation in Europe Final Act 1975, 6:

Խորհրդային Միության՝ Շելսինկյան համաձայնագրին միանալուց հետո երկրի ներսում կրկին ակտիվանում են այլախոհական տրամադրություններ՝ նոր թափ հաղորդելով այլախոհական շարժումներին: Հիմնվելով ԽՍՀՄ-ի ստորագրած համաձայնագրի բովանդակության վրա՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համատեքստում, 1976-77 թթ. Խորհրդային Ուկրաինայում, Լիտվայում, Վրաստանում և Հայաստանում հիմնադրվում են Շելսինկյան խմբեր<sup>10</sup>:

1976 թ. ԱՄԿ հիմնադիրներից Շահեն Հարությունյանի նախաձեռնությամբ կազմակերպվում, իսկ 1977 թ. ապրիլին Մոսկվայում հայտարարվում է **Հայաստանի հելսինկյան խմբի մասին**<sup>11</sup>: Խմբի անդամներն էին Շահեն Հարությունյանը, Ռոբերտ Նազարյանը, Էդուարդ Հարությունյանը: 1977 թ. հունվարի 8-ին Մոսկվայի մետրոյի կայարաններից մեկում կատարված պայթյունից հետո խիստ սրվում է իրավիճակը այլախոհների շուրջ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ձերբակալվում, այնուհետև մահապատժի են ենթարկվում ԱՄԿ հիմնադիրներից Ստեփան Զատիկյանը և իր երկու ընկերները՝ Հակոբ Ստեփանյանը և Զավեն Բաղդասարյանը<sup>12</sup>: Շահեն Հարությունյանը, զանգահարելով Մոսկվայում գործող արտասահմանյան թղթակիցներին, հայտնում է տեղի ունեցող ձերբակալությունների մասին: Արտասահմանյան լրատվամիջոցները արագորեն տարածում են նյութը՝ հղում անելով Հայաստանի հելսինկյան խմբին և Շահեն Հարությունյանին: Այս հայտարարության տարածումից մի քանի օր անց Շահեն Հարությունյանին ձերբակալում են և շինծու մեղադրանք ներկայացնում ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածով (խուլիգանություն)<sup>13</sup>:

1977 թ. դեկտեմբերին ձերբակալվում է Հայաստանի հելսինկյան խմբի մյուս անդամը՝ Ռոբերտ Նազարյանը: 1976-77 թթ. ընթացքում Ռ. Նազարյանը կազմակերպել է դրամահավաքներ՝ ի նպաստ հայ քաղբանտարկյալների և նրանց ընտանիքների, փաստական տվյալներ հավաքել Խորհրդային Հայաստանում մարդու իրավունքների ոտնահարումների մասին, տարածել հակախորհրդային գրականություն: Այս գործունեության համար նա մեղադրվում և դատապարտվում է ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա և պրոպագանդա)<sup>14</sup>:

Շելսինկյան խմբի անդամներ Շահեն Հարությունյանի և Ռոբերտ Նազարյանի կալանավորումից հետո խմբի գործունեության կազմակերպումն ստանձնում է Էդուարդ Հարությունյանը: Նա իր հոդվածներում Խորհրդային Միության քաղաքացիներին համարել է իրավազուրկ, «խոսքի իրավունքից»

<sup>10</sup> Տե՛ս Алексеева 2012, 272:

<sup>11</sup> Տե՛ս Հարությունյան 2014, 285:

<sup>12</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 20, թ. 4:

<sup>13</sup> Տե՛ս Հարությունյան 2014, 286:

<sup>14</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 19, թ. 9-10:

զրկված, իսկ փոքր ազգերին՝ հալածված և ճնշված: Տպագրել է «ՍՍՀՄ ժողովուրդներին», «Երկրագնդի կանանց», «Բելգրադյան կոնֆերանսի մասնակից պետություններին» ուղղված և այլ հոդվածներ, որտեղ մանրամասնել է ԽՍՀՄ-ում մարդու իրավունքների խախտումները, քննադատել պետության վարած արտաքին և ներքին քաղաքականությունը<sup>15</sup>:

1979 թ. հուլիսին կալանավորվում է Էդուարդ Հարությունյանը, այնուհետև մեղադրվում և դատապարտվում ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 206<sup>1</sup>-րդ հոդվածով (սովետական պետական կամ հասարակական կարգը արատավորող ակնհայտ կեղծ հերյուրանքներ տարածելը)<sup>16</sup>:

1982 թ. նոյեմբերին տեղի են ունենում Հելսինկյան խմբի հետ առնչություն ունեցող բոլոր մարդկանց ձերբակալությունները, որից հետո դադարում է Հայաստանի հելսինկյան խմբի գործունեությունը: Կալանավորվում և դատապարտվում են Ռաֆայել Օհանյանը, Սիրվարդ Ավագյանը<sup>17</sup>, Էդմոնդ Ավետյանը<sup>18</sup>, Գեորգի Խոմիզուրին, Ռաֆայել Պապայանը<sup>19</sup> և բանտից ազատված Էդուարդ Հարությունյանը:

Խորհրդային Հայաստանում 1978 թ. հիմնվում է հակախորհրդային կազմակերպություն, որը, ըստ էության, վերջին կանոնակարգված այլախոհական կառույցն էր Խորհրդային Հայաստանում: ԱՄԿ հիմնադիրներից Շահեն Հարությունյանի եղբայրը՝ ԱՄԿ անդամ Մարգարետ Հարությունյանը, 1978-ին հիմնում է «**Հայ երիտասարդների միություն**» հակախորհրդային կազմակերպությունը (այսուհետև՝ ՀԵՄ): ՀԵՄ-ը հանդիսանում էր ԱՄԿ կառույց: Կազմակերպությունն ունեցել է ծրագիր, կանոնադրություն, երդման տեքստ, անդամավճարի կարգ: Այն կրում էր խիստ ընդգծված հակախորհրդային հայացքներ, որի հիմնական նպատակը անկախ Հայաստան ստեղծելն էր: Այս կազմակերպության ծրագրում կոմունիստական կուսակցությունը համարվել է օրենքից դուրս: ՀԵՄ անդամները պատրաստել են ազգային ոգով՝ անկախությանը նվիրված հոդվածներ և բանաստեղծություններ՝ նպատակ ունենալով հայ ժողովրդի շրջանում արթնացնել հայրենասիրական տրամադրություններ, ներգրավել կազմակերպության մեջ և ավելի բուռն պայքար մղել Հայաստանի անկախության համար<sup>20</sup>:

1980 թ. մայիս-հունիս ամիսներին կալանավորվում են ՀԵՄ անդամներ Մարգարետ Հարությունյանը, Վարդան Հարությունյանը, Հովհաննես Աղաբաբյանը, Իշխան Մկրտչյանը և Սամվել Եղիազարյանը: Նրանք մեղադրվում և դատապարտվում են ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի

<sup>15</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 20, թ. 2-8:

<sup>16</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 20, թ. 9:

<sup>17</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 26, թ. 16-17:

<sup>18</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 28, թ. 6:

<sup>19</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 27, թ. 12:

<sup>20</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23, թ. 3-15:

1-ին մասով (հակասովետական ազիտացիա և պրոպագանդա) և 67-րդ հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաև հակասովետական կազմակերպությանը մասնակցելը):

ՀԵՄ անդամների անկախության պայքարի նվիրվածությունն արտահայտվում է նաև նրանց կալանավորման շրջանում: Ըստ մեղադրական եզրակացության՝ «Մարզպետ Հարությունյանը, շարունակելով մնալ հակասովետական դիրքերում, կալանավայրի քննչական մեկուսարանում 1980 թ. նոյեմբերին պատրաստել և տարածելու նպատակով պահել է հակասովետական, ազգայնական բովանդակությամբ հոդված, որը սկսվում է «երբ բոլշևիկները գլուխ բարձրացրին» բառերով. հեղինակը գրում է այն մասին, որ բոլշևիկները վաճառել են հայ ժողովրդի շահերը, Խորհրդային Միությունը բռնապետություն է, որտեղ չկան ազատություններ, և «իրականացվում են հետապնդումներ հայ ժողովրդի նկատմամբ»: Սամվել Եղիազարյանը, ըստ մեղադրական եզրակացության, նույնպես ունենալով հակախորհրդային հայացքներ, քննչական մեկուսարանում պատրաստել և տարածելու նպատակով պահել է ազգայնական, հակախորհրդային բնույթի հոդվածներ<sup>21</sup>:

ՀԵՄ-ի խիստ հակախորհրդային կեցվածքը և Հայաստանի անկախության պայքարի անմնացորդ նվիրվածությունը խստագույնս պատժվում են խորհրդային իշխանությունների կողմից: Ռուս նշանավոր ակադեմիկոս, այլախոհ, իրավապաշտպան Յուրի Օռլովը, որը ՀԵՄ հիմնադիր-ղեկավար Մարզպետ Հարությունյանի հետ նույն կալանավայրում էր, նրան համարելով իր լավագույն ընկերը, «Dangerous Thoughts: Memoirs of a Russian Life»<sup>22</sup> գրքում մանրամասն ներկայացրել է Մ. Հարությունյանի դժվարին բանտային տարիները:

Հակախորհրդային անկախական գաղափարներին հավատարիմ մնալու տեսանկյունից կարևոր է ընդգծել ՀԵՄ ամենաերիտասարդ անդամի՝ Վարդան Հարությունյանի նամակը աքսորավայրից, որը հրապարակվել է 1987 թվականին: Աքսորավայրից գրված նամակում՝ «Ինչո՞ւ ես ներում չեմ գրում», Վ. Հարությունյանը բացատրում է, թե ինչպես է ձեռք բերել հակախորհրդային գաղափարներ և ինչու է պայքարում անկախ Հայաստանի համար և ինչու ներման խնդրանքով չի դիմում Խորհրդային իշխանություններին: Նամակը անկախության պայքարի համար բանտարկված Վարդան Հարությունյանի ըմբոստության հերթական դրսևորումն էր<sup>23</sup>:

Վարդան Հարությունյանն իր հուշերն ամփոփող «Քաղբանտարկյալի պատմություն» գրքում մանրամասն ներկայացրել է ՀԵՄ անդամների՝ կալանավայրում անցկացրած տարիները, որոնք եղել են փորձություններով և

<sup>21</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23, թ. 3-15:

<sup>22</sup> Տե՛ս Orlov 1991, 240-262:

<sup>23</sup> Տե՛ս Гласность 1987, 119-120:

դժվարություններով լի: Մի կողմից՝ ծանոթանալով բանտային կյանքին և հալածանքներին, մյուս կողմից՝ տեսնում ենք ՀԵՄ անդամների անզիջում նվիրվածությունը Հայաստանի անկախության պայքարին: Գրքում հիշվում է, որ բանտում որոշել են նշել Առաջին հանրապետության հռչակման օրը՝ մայիսի 28-ը, որի ընթացքում վերահաստատել են պայքարի ճիշտ ճանապարհի ընտրելու մասին իրենց որոշումը, խոսել Հայաստանի անկախության անհրաժեշտության մասին<sup>24</sup>:

Խորհրդային Հայաստանում այլախոհական խմբերի, կազմակերպությունների, շարժումների մասին որոշ տվյալներ կարող ենք վերցնել ՀԽՍՀ ՊԱԿ նախագահ Մարիուս Յուզբաշյանի՝ 1979 թվականին Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին ուղղված տեղեկանք-գրությունից, որտեղ նա, ներկայացնելով Խորհրդային Հայաստանում տիրող իրավիճակը, նշում է, որ «վերջին 12 տարում Հայաստանի ՊԱԿ-ը բացահայտել և լիկվիդացրել է 20-ից ավելի անլեգալ հակասովետական ազգայնական խմբեր: Հակասովետական շարժումների մեջ ներգրավված է եղել մոտ 1400 մարդ»<sup>25</sup>: Այս տեղեկանք-գրության մեջ ներկայացվում են մինչև 1979 թվականը կատարված իրադարձությունները, բացահայտված խմբերը, կազմակերպությունները և այլախոհական շարժման մասնակիցների քանակը: Այդ խմբերի և կազմակերպությունների մասին հիշատակումը գուցե և ամբողջական է, քանի որ Խորհրդային Հայաստանում վերջին այլախոհական, հակախորհրդային կազմակերպությունը ձևավորվել է 1978 թվականին, սակայն ինչ վերաբերում է այլախոհական շարժումների մասնակիցներին, պետք է ընդգծել, որ այլախոհությունը տարբեր դրսևորումներով շարունակվեց մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը՝ ընդգրկելով նոր մարդկանց:

### **Եզրակացություններ**

Խորհրդային Հայաստանում 1968-78 թթ. շարունակվեցին ձևավորվել այլախոհական կանոնակարգված կազմակերպություններ՝ ներկայացնելով այլախոհական շարժումների հիմնական դրսևորումները: 1966 թ. հիմնադրված Ազգային Միացյալ կուսակցությունը համախմբում է մինչ այդ եղած անկախության պայքարի մասին քննարկումներն ու մտքերը՝ կազմակերպված բնույթ հաղորդելով Հայաստանի անկախության վերականգնման համար պայքարին: ԱՄԿ-ի ստեղծումը, ընդհանուր առմամբ, փոխեց հայկական այլախոհական տրամադրությունները՝ իր ազդեցությունը թողնելով դրանից հետո ստեղծված կազմակերպությունների կամ այլ այլախոհական դրսևորումների վրա: Թեև 1968-78 թթ. ստեղծված որոշ կազմակերպությունների ծրագրերում և նպատակներում շարունակում էր առաջնային մնալ ազգային

<sup>24</sup> Տե՛ս Հարությունյան 2022, 84-85:

<sup>25</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 20, թ. 18:

որոշ հարցերի բարձրաձայնումը, ինչպիսիք էին հողային պահանջատիրությունը, Հայոց ցեղասպանության մասին բարձրաձայնումը, հայոց լեզվի պաշտպանությունը, այնուամենայնիվ, անկախության մասին պատկերացումները և մտքերը հետզհետե ավելի խոր արմատներ էին գցում հայկական հայրենասիրական-այլախոհական միջավայրում:

1968-78 թթ. ստեղծված կազմակերպություններն ամբողջացնում էին հայկական այլախոհության գաղափարական ուղղությունները: Խորհրդային Հայաստանում գործում էին ընդհատակյա կազմակերպություններ, որոնք պայքարում էին Նախիջևանի և Ղարաբաղի՝ մայր հայրենիքին վերամիավորման, Հայոց ցեղասպանության բարձրաձայնման և հիշատակման, հայոց լեզվի մաքրության և մարդու իրավունքների պաշտպանության և գլխավոր առանցքում՝ Հայաստանի անկախության վերականգնման համար: Այս կազմակերպություններն իրենց փոքրիկ ազդեցությունն ունեցան ԽՍՀՄ-ի փլուզման գործընթացում: Այլախոհական գաղափարներն ու դրսևորումներն ամբողջացնում էին հայկական այլախոհությունը, որն էլ իր հերթին մի մասն էր ԽՍՀՄ ամբողջ տարածքում ընթացող այլախոհական շարժումների:

Այլախոհական կազմակերպությունների գոյությունը հայ ժողովրդի մեջ կենսունակ պահեց Հայաստանի անկախության վերականգնման, կորսված հայկական հողերի՝ մայր հայրենիքին վերամիավորելու, Հայոց ցեղասպանության մասին հիշատակելու, հայոց լեզուն մաքուր պահելու և պաշտպանելու կարևորության զգացումը:

### **Օգտագործված գրականություն**

- Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1, ց. 126, գ. 20, ֆ. 1191, ց. 20, գ. 8, գ. 6, գ. 19, գ. 20, գ. 23, գ. 26, գ. 27, գ. 28:
- Հարությունյան Շ. 2023, Այլախոհական շարժման առաջացման նախադրյալները Խորհրդային Հայաստանում 1950-60-ական թթ., Գիտական Արցախ, N 4 (19), Երևան, էջ 43-53:
- Հարությունյան Վ. 2014, Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում, Երևան, «Վան Արյան», 424 էջ:
- Հարությունյան Վ. 2022, Քաղաքացիական պատմություն, Երևան, Հայկական ուսումնասիրությունների Անի հիմնադրամ հրատ., 287 էջ:
- Алексеева Л. 2012, История инакомыслия в СССР: новейший период, Москва, Моск.-Хельсинк. группа, 382 с.
- Гласность 1987, Сборник докладов, вып. II, Москва, изд. не указ., с. 119-120.
- Conference on Security and Co-Operation in Europe Final Act 1975, Helsinki, without publication place.
- Orlov Y. 1991, Dangerous Thoughts: Memoirs of a Russian Life, William Morrow & Co, 348 p.

---

**ВТОРОЙ ЭТАП УСИЛЕНИЯ СОВЕТСКО-АРМЯНСКИХ ДИССИДЕНТСКИХ ДВИЖЕНИЙ (1968-1978 ГГ.)**

Шаген Арутюнян

Резюме

Деятельность первых диссидентских групп на втором этапе развития диссидентского движения в Советской Армении охватывает период с 1968 по 1978 гг. Они боролись за национальные интересы и распространение информации о Геноциде армян. Первостепенное значение имела борьба за восстановление независимости Армении. Примечательно, что в этот период широкое распространение получило правозащитное движение, в котором активно участвовала и Советская Армения. Организации, созданные в 1968-78 гг., олицетворяли идеологическую направленность армянского инакомыслия. Деятельность этих организаций лишь в малой степени оказала влияние на процесс распада СССР. Армянское диссидентское движение являлось составной частью диссидентского движения на территории СССР.

**Ключевые слова** – инакомыслие, независимость Армении, Геноцид армян, «Группа За Родину», «Союз воссоединения Армении», «Хельсинкская группа Армении», «Союз армянской молодежи».

**THE SECOND ROUND OF THE SOVIET ARMENIAN DISSIDENT MOVEMENTS' STRENGTHENING (1968-1978)**

Shahen Harutyunyan

Abstract

The activities of the first dissident groups during the second stage of the dissident movement's development in Soviet Armenia cover the period from 1968 to 1978. The dissidents fought for national interests and the dissemination of information about the Armenian Genocide. The primary significance was the struggle for the restoration of Armenia's independence. It is noteworthy that during this period, the human rights movement gained wide popularity, in which Soviet Armenia actively participated. The organizations created in the years 1968-1978 complemented the ideological directions of Armenian dissent. Dissident organizations mainly reflected the moods and ideas existing in Armenian patriotic circles. These organizations had little influence on the process of the USSR's collapse. Dissident ideas and manifestations complemented Armenian dissent, which, in turn, was part of dissident movements taking place throughout the USSR.

**Key words** – Dissent, Independence of Armenia, Armenian Genocide, "For the Homeland Group", "Union for the Reunification of Armenia", "Helsinki Group of Armenia", "Union of Armenian Youth".

ԿԱՏԱՐԻ ԴԵՐԻ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1970-1990-ԱԿԱՆ ԹԹ.)

Քնարիկ Սարգսյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հայցորդ  
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4  
Էլ. հասցե՝ Kn.sargsyan.yesu@gmail.com  
ORCID: 0009-0006-3567-279X

Հոդվածը ներկայացվել է 14.11.2023, գրախոսվել է 17.11.2023, ընդունվել է տպագրության 25.04.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.1-106

Ամփոփում

Կատարի դերակատարության ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության մեջ բացահայտելու 1970-1990-ական թթ. ԱՄՆ-ի ազդեցությունը Կատարի՝ որպես պետության կայացման գործում՝ վերլուծելով ԱՄՆ-Կատար հարաբերությունների զարգացման դինամիկան, վերհանելով այդ հարաբերությունների առանձնահատկությունները, դիտարկելով ԱՄՆ-Կատար պաշտպանական համագործակցությունը նշված ժամանակահատվածում: Հետազոտությունը կատարվել է փաստերի համադիր քննությամբ, պատմաքննական և պատմահամեմատական մեթոդների կիրառմամբ:

Հոդվածում կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ն որոշիչ դեր ունեցավ Կատարի Պետության կայացման գործընթացում և դարձավ նրա կայունության ու անվտանգության երաշխավորը, ինչն էլ կանխորոշեց այդ երկրի հետագա տեղն ու դերը տարածաշրջանում և միջազգային հարթակներում: Կատարն իր հերթին դարձավ մերձավորարևելյան տարածաշրջանում ԱՄՆ-ի քաղաքական և ռազմավարական շարժիչ ուժը՝ շնորհիվ իր ճկուն և շրջահայաց արտաքին քաղաքականության:

**Բանալի բառեր**՝ ԱՄՆ, Կատար, Մերձավոր Արևելք, Պարսից ծոց, միջազգային հարաբերություններ, արտաքին քաղաքականություն, ռազմավարական գործընկերություն:

Ներածություն

1940-ականների վերջին Կատարը դարձավ նավթարդյունահանող երկիր<sup>1</sup>, և դա շրջադարձային եղավ երկրի համար թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական առումներով՝ կանխորոշելով Կատարի հետագա դերն ու ազդեցությունը տարածաշրջանում և միջազգային հարթակներում<sup>2</sup>:

<sup>1</sup> 1949 թ. շահագործման հանձնվեց Դուխանից մինչև Ումմ Սայիդ ընկած նավթամուղը, որտեղից նույն թվականին առաջին տանկերն «արտահանեց կատարական նավթը»:

<sup>2</sup> Sorkhabi R., The Qatar Oil Discoveries, <https://geoexpro.com/the-qatar-oil-discoveries/>

Այս շրջանը համընկավ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մերձավորարևելյան ուղղության ակտիվացման հետ: Վաշինգտոնի նպատակն էր Մերձավոր Արևելքում հավատարիմ վարչակարգեր ձևավորելը, ինչը կապահովեր ԱՄՆ-ի գերիշխանությունը տարածաշրջանում և կկարգավորեր էներգետիկ անվտանգության հարցը: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության այս ռազմավարությունը հետևողականորեն իրագործվեց՝ սկսած 1950-ականներից: 1956 թ. Սուեզի ճգնաժամի հետևանքով տարածաշրջանում առաջացավ ուժային վակուում՝ Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի միջազգային դիրքերի թուլացման պատճառով, որը լրացրեց ԱՄՆ-ն:

1957 թ. հունվարի 5-ին Դուայթ Էյզենհաուերը Սենատին ներկայացրեց արտաքին քաղաքականության նոր ծրագիր, ըստ որի՝ Մերձավոր Արևելքում ցանկացած երկիր տնտեսական և ռազմական օգնության համար կարող էր դիմել ԱՄՆ-ին՝ կանխելու որևէ կոմունիստական երկրի հնարավոր սպառնալիքը: Դոկտրինն առաջին հերթին թիրախավորում էր ԽՍՀՄ-ը, քանի որ այն սկսել էր հաստատուն քայլերով ներթափանցել մերձավորարևելյան տարածաշրջան: Էյզենհաուերը մտավախություն ուներ, որ այստեղ արմատական ազգայնականությունը, միավորվելով միջազգային կոմունիզմի հետ, կդառնար լուրջ սպառնալիք Արևմուտքի համար<sup>3</sup>:

1960-ականներին համաարաբական զարթոնքի տրամադրությունները համակեցին նաև Կատարին. այն չէր կարող անմասն մնալ արաբական աշխարհում տեղի ունեցող քաղաքական գործընթացներից: Կատարում հասարակության առանձին շրջանակներ երկրի իշխանություններից պահանջում էին պաշտպանել Արաբական Արևելքում թափ ստացած ազգայնագատազրական, ինչպես նաև Պաղեստինի աջակցության շարժումը<sup>4</sup>: Հընթացս, շարունակում էր թափ առնել ապագադրությամբ: Նորանկախ երկրների համար առաջնահերթություն էր ամեն գնով հասնել արտաքին քաղաքական օրինակարգությանը:

1969 թ. առաջ եկած Նիքսոնի դոկտրինը նախատեսում էր, որ ԱՄՆ-ը ոչ թե պատերազմների, այլ իր դաշնակիցներին ռազմական, տնտեսական աջակցություն տրամադրելու միջոցով պետք է դիմակայեր իր անվտանգությանը սպառնացող ցանկացած երկրի: Այն հավանություն էր տալիս վստահելի վարչակարգերի միջոցով ԱՄՆ-ի շահերի պաշտպանությանը: Ակնկալվում էր, որ ԱՄՆ-ի դաշնակիցները հոգ կտանեին իրենց պաշտպանության մասին, «թեև ամերիկյան զենքն ազատ կհոսի դեպի դաշնակից երկրներ»<sup>5</sup>: Նիքսոնի դոկտրինը միայն նախերգանքն էր մերձավորարևելյան տարածաշրջանում ԱՄՆ-ի անմիջական ներգրավվածության համար:

<sup>3</sup> The Eisenhower Doctrine, Milestones in the History of U.S. Foreign Relations 1953-1960, Office of The Historian, <https://history.state.gov/milestones/1953-1960/eisenhower-doctrine>

<sup>4</sup> Հովհաննիսյան 2006, 764:

<sup>5</sup> Stork, Wenger 1991, 22-26.

### ԱՄՆ-Կատար հարաբերությունների ձևավորումը

1960-ականների վերջին Կատարը սկսեց շարժվել անկախ պետականություն ստեղծելու ճանապարհով: Շեյխ Խալիֆա բին Համադ Ալ Թանին մեծ ջանքեր էր գործադրում երկրի քաղաքական կշիռը բարձրացնելու նպատակով: Երկիրը սկսեց ակտիվ համագործակցել թե՛ Իրանի, թե՛ Սաուդյան Արաբիայի հետ: Անկախության ճանապարհին կարևոր քայլ էր ժամանակավոր սահմանադրության ընդունումը, որն ընդգծում էր Կատարի ինքնիշխանությունը: Ժամանակավոր սահմանադրությամբ ամրապնդվեց Ալ Թանինների դիրքը՝ որպես կառավարող ընտանիք՝ ժառանգական իրավունքով: 1970 թ. հունիսի 1-ին՝ ժամանակավոր սահմանադրության հրապարակումից երկու ամիս անց, սկսեց գործել Կատարի առաջին կառավարությունը՝ Նախարարների խորհուրդը, որը գլխավորում էր Խալիֆա բին Համադ Ալ Թանինը<sup>6</sup>: Կատարը և Մեծ Բրիտանիան այլևս պայմանավորվել էին պրոտեկտորատի վերացման և անկախության հռչակման մասին, որի վերաբերյալ համաձայնագրի կնքումը պետք է կայանար Կատարում: Երկիրը դեռ կառավարում էր Ահմադ իբն Ալին՝ Խալիֆա բին Համադ Ալ Թանինի հորեղբայրը, որն այդ ժամանակ գտնվում էր Ժնևում: Խալիֆա բին Համադը, որը կարողացել էր իր ձեռքում կենտրոնացնել գրեթե ողջ իշխանությունը, ժնևում գտնվող և Կատարին պատկանող թագավորական պալատը համարելով Կատարի տարածք՝ նա ուղարկեց անգլո-կատարական համաձայնագիրը, իսկ ինքը նույն օրը՝ 1971 թ. սեպտեմբերի 3-ին, պաշտոնապես Կատարը հռչակեց անկախ<sup>7</sup>:

Անկախության հռչակումից երկու օր անց՝ 1971 թ. սեպտեմբերի 5-ին, ԱՄՆ-ն ճանաչեց Կատարի անկախությունը: Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին 1972 թ. մարտի 19-ին: 1973 թ. փետրվարի 24-ին Դոհայում ԱՄՆ-ը բացեց իր դեսպանատունը<sup>8</sup>:

1973 թ. Եգիպտոսի և Սիրիայի նախաձեռնությամբ սկսված արաբա-իսրայելական չորրորդ պատերազմը կարևոր նշանակություն ունեցավ ամբողջ մերձավորարևելյան տարածաշրջանի և արաբական աշխարհի համար՝ սկիզբ դնելով վերափոխումների: Պատերազմի ընթացքում դրսևորվեց արաբական աշխարհի միասնականությունը, որի մի մասն էր նաև Կատարը: Դոհան, քաղաքական և բարոյական աջակցության հետ միասին, մեծ ֆինանսական օգնություն տրամադրեց Եգիպտոսին և Սիրիային<sup>9</sup>: 1973 թ. արաբա-իսրայելական պատերազմի ընթացքում արաբական երկրները նավթն օգտագործեցին որպես քաղաքական զենք: Արաբական մի շարք

<sup>6</sup> Zahlan 1979, 104-105.

<sup>7</sup> Հովհաննիսյան 2006, 772-773:

<sup>8</sup> Diplomatic and Consular Relations by Country, since 1776: Qatar, A Guide to the United States, History of Recognition, Office of the Historian, <https://history.state.gov/countries/qatar>

<sup>9</sup> Հովհաննիսյան 2006, 785:

երկրների կողմից հինգ ամիս տևած նավթի առաքման կասեցմանը մասնակցեց նաև Կատարը<sup>10</sup>:

Վերոնշյալ պատերազմից հետո Կատարը զգուշավորություն էր ցուցաբերում ԱՄՆ-ի հետ հարաբերություններում՝ հատկապես երկրում ամերիկյան ներկայության առումով: Օրինակ՝ Կատարի կառավարությունը 1975 թ. մերժեց ԱՄՆ-ի մերձավորարևելյան ուժերի հրամանատարական նավի՝ «Լա Սելի» այցը Կատար: ԱՄՆ-ի դեսպանի հետ զրույցում Կատարի զինված ուժերի հրամանատար Համադ բին Խալիֆա Ալ Թանին նշել էր. «Հրամանատարական նավի այցը նպատակահարմար չէ, այդ որոշումը հիմնված է տարածաշրջանում առկա լարված իրավիճակի, հնարավոր միջամտությունների և անբարենպաստ մթնոլորտի հետ, որոշումը քաղաքական թելադրանք է և նպատակ չունի խաթարելու ԱՄՆ-ի հետ Կատարի գերազանց հարաբերությունները»<sup>11</sup>:

1979 թ. Իրանի Իսլամական հեղափոխությունը կտրուկ փոխեց իրավիճակը մերձավորարևելյան տարածաշրջանում: Շահ Փահլավի օրոք Իրանը դարձել էր ԱՄՆ-ի սիրելի բուֆերային երկիրը, որն արգելափակում էր ԽՍՀՄ-ի ներխուժումը մերձավորարևելյան տարածաշրջան և պաշտպանում ԱՄՆ-ի շահերը տարածաշրջանում: Իրանում շահի տապալումն ու Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի վստահելի դաշնակցի կորուստը, ԽՍՀՄ ռազմական ուժերի ներխուժումը Աֆղանստան, մեծացրեցին ԱՄՆ-ի անմիջական մասնակցության անհրաժեշտությունը տարածաշրջանում<sup>12</sup>:

Հայկական իրավական պետության սահմանադրական մոդելի կենսագործմանը զուգընթաց, պետք է պարբերաբար աշխատանք տանել (գործնական և գիտական-իրավաբանական) այդ մոդելի հետագա զարգացման ուղղությամբ:

### **Եզրակացություններ**

Հայաստանի Հանրապետությունում իրավական պետության կայացման հիմնախնդիրների հանգամանալից քննությունը հնարավորություն է ընձեռում հանգելու մի շարք կարևոր եզրակացությունների, որոնք ունեն գործնական նշանակություն դատաիրավական և սահմանադրական փոփոխությունների համատեքստում: Հայ հասարակության և պետականության զարգացման ներկա փուլում խիստ կարևորվում են սոցիալ-իրավական պետության կայացման հիմնախնդիրները, որոնք, կարծում ենք, կարող են դառնալ իրավաքաղաքական հիմք՝ հայոց իրավական-ժողովրդավարական պետության հաջորդ փուլին անցնելու առումով:

### **Օգտագործված գրականություն**

- Ապիյան Ն.Ա., Պետրոսյան Ա.Հ. 2001, Իրավական պետություն և օրինականություն, Երևան, «Տիգրան Մեծ», 288 էջ:  
Նազարյան Վ.Ռ. 1992, Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիա, Երևան, «Գոշ», 41 էջ:  
Алексеев С.С. 1999, Право. Азбука. Теория. Философия. Опыт комплексного исследования, Москва, «Статус», 642 с.

<sup>7</sup> Ապիյան, Պետրոսյան 2001, 288:

Алексеев С.С. 2006, Линия права, Москва, «Статут», 461 с.

Витрук Н.Б. 2012, Общая теория правового статуса личности, Москва, «Норма», 448 с.

Нерсесянц В.С. 2015, Общая теория права и государства, Москва, «Норма», 548 с.

Соколов А.Н. 1992, Идея правового государства в Германии и механизм ее реализации: автореферат докт. дисс., Украинская юрид. акад., Харьков, 492 с.

## ПРОБЛЕМЫ СТАНОВЛЕНИЯ ПРАВОВОГО ГОСУДАРСТВА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Астхик Хуршудян

Резюме

Проблемы становления правового государства по праву связаны с конституционными изменениями, которые четко зафиксированы в социальных, экономических и законодательных основах правового государства, поскольку правовое государство является конституционным государством, где приоритетом являются право и конституционная законность. Правовое государство – это также конституционное государство, в котором преобладает конституционализация правовой нормы. Правовое государство – это суверенная политическая организация, основанная на верховенстве закона, в которой гарантируется защита прав и свобод человека.

**Ключевые слова** – правовое государство, верховенство права, верховенство закона, социально-правовое государство, демократия, социальное государство, права человека.

## PROBLEMS OF THE ESTABLISHMENT OF THE JURAL STATE IN THE REPUBLIC OF ARMENIA

Astghik Khurshudyan

Abstract

The problems of the establishment of the jural state are rightly related to constitutional changes that are clearly fixed in the social, economic and legislative foundations of the jural state, since the jural state is a constitutional state where the priority is the law and constitutional legality. The legal state is also a constitutional state in which the constitutionalization of the legal norm prevails. A legal state is a sovereign political organization based on the rule of law, in which the protection of human rights and freedoms is guaranteed.

**Key words** – constitutional state, the rule of rights, the rule of law, social-constitutional State, democracy, social State, human rights.

ՀԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՈՅԱԿԱՆ + ԲԱՅ > ԱԾԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՈՎ  
(տարժամանակյա հայեցակետ)

Լալիկ Խաչատրյան

Բանասիրական գիտությունների դոկտոր  
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ  
ՀՀ, Երևան, Տիգրան Մեծի 17  
Էլ. հասցե՝ [lingualal51@mail.ru](mailto:lingualal51@mail.ru)  
ORCID: 0000-0002-2107-6210

Հոդվածը ներկայացվել է 03.10.2022, գրախոսվել է 22.03.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.1-150

Ամփոփում

Հինհայերենյան հարադրությունները, որոնք գոյական + բայ կաղապարով փոխակերպվել են համադրական բարդությունների, արդի հայերենում հատկանշվում են ածականի խոսքիմասային արժեքով, որ պայմանավորված է բարդության երկրորդ բաղադրիչի՝ բայահիմքի արտահայտած հատկանշային իմաստով՝ ենթակայական դերբայի նշանակությամբ:

Դիտարկված կաղապարով առաջացած բարդությունները սերում են հին հայերենի անվանաբայական հարադրություններից, որոնց բաղադրիչներն արտահայտում են ստորոգյալ-ուղիղ խնդիր շարահյուսական հարաբերություն: Բաղադրիչների իմաստային կապը պահպանվում է նաև նրանցից սերած համադրական բարդությունների դեպքում: Իբրև այդ կարգի հարադրությունների բայական բաղադրիչներ՝ հանդես են գալիս ներգործական սեռի հետևյալ բայերը՝ *մատուցանեմ, առնեմ, արկանեմ, խնդրեմ, պահեմ, դնեմ* և այլն, որոնց հետ հարադրություն են կազմում *պատարագ, աւար, ուխտ, աղալթք, անձն, ահ, բան, օրէնք, վրէժ* և այլ գոյականներ:

Գոյական + բայ > ածական կաղապարով առաջացած բարդությունների սերող հիմքը՝ բայական բաղադրիչը, փոխակերպական կառույցներում հանդես է գալիս կամ առաջին (վրէժ խնդրեմ > վրէժխնդիր, պահեմ զօրէնս > օրինապահ, պաշտեմ զօրէնս > օրինապաշտ), կամ երկրորդ հիմքի ձևով (զաղօթս առնեմ > աղօթարար, օրէնս դնեմ > օրէնսդիր, պատարագս մատուցանեմ > պատարագամատուց):

Գոյական + բայ > ածական կաղապարով առաջացած որոշ կազմություններ բառական արժեք են ստանում – ու ածանցով, ինչպես՝ *ահ արկանել > ահարկու, զբանս արկանել > բանսարկու, յանձն առնեմ > յանձնառու, աւար առնեմ > աւարառու* և այլն:

Փոխակերպական այս իրողության ուսումնասիրությունը կարևորվում է հայերենի պատմական բառագիտության առումով:

**Բանալի բառեր՝** փոխակերպում, սերիչ կաղապար, փոխակերպման կաղապար, բարդություն, նախդրավոր կառույց, վերլուծականություն, համադրականություն:

### **Ներածություն**

Լեզվի տարժամանակյա դիտվածքում որոշակի գործոններով պայմանավորված՝ նրա կառուցվածքային մակարդակներում տեղի են ունենում որոշակի փոփոխություններ, որոնք կարող են նաև բառակազմական մակարդակում տիպաբանական չափորոշիչներ դառնալ, երբ վերլուծական կառուցատիպի լեզվական միավորներն անցնում են համադրականության: Այդպես հին հայերենի մի շարք վերլուծական ձևեր արդի հայերենում դիտվում են համադրական կառուցատիպի բառեր: Այդ կարգի փոփոխություններն ազդել են նաև բառակազմական մակարդակի վրա՝ առաջ բերելով մասնիկավոր-համադրական կազմություններ: Դրանք պայմանավորված են լեզվական միավորների փոխակերպման (փոխկաղապարման) գործոնով: Փոխակերպման գործընթացի ուսումնասիրությունը բացահայտում է սերման որոշակի կաղապարներ, որոնք վերացարկված մտածողության տարբեր աստիճանների դրսևորումներ են: Լեզվի փիլիսոփայության տեսանկյունից՝ սերման կաղապարներ են համարվում միջուկային նախադասություններն ու բառակապակցությունները, որոնցից սերում են բաղադրյալ բառերի կաղապարները՝ որպես արդյունք նախադասություն – բառակապակցություն փոխակերպական գործընթացի<sup>1</sup>:

Լեզվի տարժամանակյա կտրվածքում վերլուծականությունից համադրականության անցումն ուղեկցվում է տարբեր կաղապարներով, որոնց մեջ զգալի կշիռ ունի *գոյական + բայ կաղապարը*: Այդ կաղապարով առաջացած բարդությունները սերում են հին հայերենի անվանաբայական հարադրություններից<sup>2</sup>:

Գոյական + բայ > ածական կաղապարով առաջացած բարդություններն արդի հայերենում ունեն ածականի խոսքիմասային արժեք, որ պայմանավորված է բարդության երկրորդ բաղադրիչի՝ բայահիմքի արտահայտած հատկանշային իմաստով: Որոշակի բարդություններ, ածականական արժեքին զուգահեռ, արտահայտում են նաև գոյականի խոսքիմասային նշանակություն՝ ցուցաբերելով խոսքիմասային տարարժեքություն: Այդ կաղապարով առաջացած բարդությունները կարելի է քննել երկու հայեցակետով՝ առանձնացնելով բարդություններ, որոնց կաղապարը եզրափակվում է *բայա-հիմքով*, և բարդություններ, որոնց կաղապարը եզրափակվում է *ածանցով*<sup>3</sup>:

<sup>1</sup> Ջահուկյան 1973, 565:

<sup>2</sup> Աբեղյան 1965, 204:

<sup>3</sup> Հին հայերենի բարդության և ածանցման կաղապարների մասին տե՛ս Հովսեփյան 1987: Արդի հայերենի բառակազմական կաղապարների մասին տե՛ս Խաչատրյան 2011:

## Ա. Բայափիմքով եզրափակվող կաղապարներ

Այս կարգի բարդությունների երկրորդ բաղադրիչ է դառնում բայափիմքը (առաջին կամ երկրորդ):

### 1) Բայի առաջին հիմքը որպես բարդության բաղադրիչ

Բայաբաղադրիչներով բարդությունների սերման կաղապարների վերաբերյալ Գ. Զահուկյանը նշում է, որ հաճախ դժվար է սահման դնել այս տիպի բարդ հիմքերի և բայական հիմքերով կազմված գոյականներից ու ածականներից երկրորդաբար կազմված բայերի միջև. այսպես, *ահաբեկ*-ը կարող է մեկնաբանվել կա՛մ որպես *ահաբեկ* ածականի բայացված ձև, կա՛մ դիտվել որպես *ահով բեկել*-ի բառակապակցությունից ստացված բարդություն. այսպիսի դեպքերում հարկավոր է ստուգել, թե արդյոք բարդ հիմքը անկախ չի՞ գործածվում որպես ածական կամ գոյական: Այնուհետև *գոյական + բայ > բայ* կաղապարով սերած բարդությունների շարքում դիտարկվում են՝ *ալիքներով կոծել > ալեկոծել, անդամները հատել > անդամահատել, արդյունքը հանել > արդյունահանել, արծաթով պատել > արծաթապատել, ոսկով (լուծոյթով) ջրել > ոսկեջրել, ոսկով (գ)օծել > ոսկեգօծել, ահով զանգել > ահազանգել, ասեղ(ներ)ով գործել > ասեղնագործել, նկար(ներ)ով զարդարել > նկարազարդել, ական(ներ)ով պատել > ականապատել* և այլ փոխակերպումները<sup>4</sup>:

Հինհայերենյան հարադրությունների փոխակերպման գործընթացում բայական բաղադրիչը, որպես սերող հիմք, բարդության արտահայտության պլանում հանդես է գալիս առաջին (անորոշի) հիմքով: Դիտարկենք հետևյալ օրինակները:

*Վրէժ խնդրել* հարադրությունը հին հայերենում նշանակում է «ոճիրի՝ չարիքի՝ հանցանքի դիմաց վրեժ լուծել՝ փնտրել. քինախնդիր լինել»: Հմմտ. *Մի խնդրեցէ վրէժ ձեռն քո և ընդ որդւոց ժողովրդեան քո* ոխս մի ունիցիս (Ղեստ, ԺԹ, 18): Որպէս պատմեցի նմա եթէ *խնդրեցից վրէժ* ի տանէ նորա մինչև յաւիտեան (Ա Թագ., Գ, 13):

Այդ նույն հարադրությունից հին հայերենում ունենք համադրական՝ *վրեժխնդիր*<sup>5</sup> կազմությունը՝ «վրիժառու, քինախնդիր» իմաստով, ինչպես՝ Աստուած՝ *վրեժխնդիր* Տէր, Աստուած *վրեժխնդիր* յայտնեցար (Սաղմ., ՂԳ, 1): *Վրեժխնդիր* է Տէր բարկութեամբ. և խնդրէ Տէր վրէժ ի հակառակորդաց իւրոց (Նաում, Ա, 1):

<sup>4</sup> Զահուկյան 1989, 223:

<sup>5</sup> Համադրական այդ ձևը *լինել* բայի հետ կազմում է հարադրություն. Եւ աջողեցաւ գործն ի ձեռս նոցա՝ *վրեժխնդիր լինել* ի ձեռացն հեթանոսաց (Ա Մակ., Բ, 48): Մի՞թե արդյոք պարզ չէ և քեզ համար, Որ կարող է սերը... *վրեժխնդիր լինել* (ՊՍ, Գ, 121):

Հինհայերենյան համադրական կազմությունը (վրեժխնդիր) փոխանցվել է ժամանակակից հայերենին և գործածվում է նախկին իմաստներով. հմմտ. Ջարկի՛ր ու շանթի՛ր, եթե աստված ես Դու *վրեժխնդիր* (ՀԹ, 1, 63): Իսկ գազանները ...Իսկ գազանները Արարչին սուրբ անվան համար *վրեժխնդիր*՝ լուսինն ի վեր երկար-երկար ոռնացին (ԴՎ, ԺՀԼԲԲ):

*Խնդրել* բայական բաղադրիչով հին հայերենում ունենք նաև *քէն խնդրել* հարադրությունը՝ «վրեժխնդիր լինել, վրեժ լուծել» իմաստներով, ինչպես՝ Թագաւորեաց Պարսից Վոսմ երկրորդ, և *զքէն* վրիժուց *խնդրեաց* ի մերմէ աշխարհէս (Խոր., 333): Արշակ... տայ պատերազմ ընդ նախարարսն ընդ այնոսիկ՝ *խնդրելով զքէն* ձեռակերտին իւրոյ Արշակաւանու (Խոր., 291):

Հարադրության բաղադրիչների ծովման ճանապարհով հին հայերենում ունենք *քինախնդիր* համադրական կազմությունը՝ «վրիժառու, վրեժխնդիր» իմաստներով, հմմտ. Արք նախանձայոյզք *քինախնդիրք* պահեն զկանայս իւրեանց (ՆՀԲ, 2, 1006):

*Քինախնդիր* համադրական բարդությունը, որպես անվանական բաղադրիչ, հանդես է գալիս *քինախնդիր լինել* անվանաբայական հարադրության կազմում՝ *քէն խնդրել* հարադրության իմաստով, ինչպես՝ Փոխանական զի *քինախնդիր եղև* Աստուծոյ իւրում (Թուոց, ԻԵ, 13): Բայց վասն զի *քինախնդիր* անցելոցն մարտից կամեցաւ *լինել* Շապուհ՝ ինքն ելանէ պատերազմել ընդ Յոյնս (Խոր., 286):

Արդի հայերենում գործածական է *քինախնդիր* համադրական բարդությունը՝ «քենը՝ վրեժը լուծելու համար միջոցներ փնտրող, վրեժխնդիր» իմաստներով, ինչպես՝ Ի՞նչ է սա, հիմարություն՞ն, թե *քինախնդիր* կիրք. իր թագավորից դժգոհ՝ վրեժխնդիր է լինում իր երկրից և կռիվ հայտարարում նրան (ՍԶ, ԺՀԼԲԲ):

Հին հայերենում պաշտել զօրէնս ազատ կապակցությունը նշանակում է «ծառայել օրենքին՝ օրինականությանը, հարգել օրենքը», ինչպես՝ Եւ հաճեաց զմիտս նորա, եւ նախ ուրացաւ նա ի կենաց իւրոց, եւ յանձն առ պաշտել զօրէնս մոգութեանն (Բուզ., 136): Եթէ իցէ՛ յանձն առցէ պաշտել զօրէնս մոգութեանն, ոչ մեռցի (Բուզ., 148): Նոցա կալեալ զտիկինն Ռշտունեաց զկին Գարեգնի զքոյր Վարդանայ Մամիկոնէի ածեալ ի Վանտոսպ ի քաղաքն Շամիրամայ, մատնեն ի խոշտանգանս եւ ի տանջանս դառնագոյնս. ստիպեն լքանել թողուլ կրօնս քրիստոնէութեան, հնազանդել պաշտել զօրէնս մազդեզական մոխրապաշտութեանն (Թովմա Արծրունի):

Հինհայերենյան հարադրությունից արդի հայերենում ունենք *օրինապաշար* համադրական բարդությունը՝ «օրենքի պահպանմանը խստիվ հետևող, չափազանց օրինապահանջ» հատկանշային իմաստներով, ինչպես՝ Հայոց եկեղեցու *օրինապաշար* զավակները պարտավոր են հետևել «Վարք սրբոցի» պատվիրաններին (Մամուլ):

Հին հայերենում *դրժել զուխտն* ազատ կապակցությունը նշանակում է «երդումը՝ ուխտը՝ խոստումը զանց առնել. խոստումը՝ ուխտը չպահել», հմմտ. *Դրժել կենակցին և ծանօթին կամ ուխտին* դաշանց (ՆՀԲ, 1, 643):

Հին հայերենում ազատ կապակցության բաղադրիչների ձուլման ճանապարհով ունենք *ուխտադրուժ* համադրական կազմությունը՝ ածականի հատկանշային՝ «երդումը՝ ուխտը՝ խոստումը չկատարող. խոստումը՝ ուխտը չպահող» իմաստներով, ինչպես՝ Ետես զցոփութիւն նորա *ուխտադրուժն* Յուդա (Երեմ., 9, 7): Իսկ ողորմելի *ուխտադրուժն* Վասակ թեպէտ եւ կամէր խօսել ինչ (Փարպ., 85):

Արդի հայերենում գործածվում է հինհայերենյան *ուխտադրուժ* համադրական կազմությունը՝ նախնական իմաստով, ինչպես՝ Եթե չհաշտվես, աշխարհը քեզ պիտի դատապարտե իբրև *ուխտադրուժ* (Մուր., ԺԼԲԲ):

Հին հայերենում գուշակել աստեղք ազատ կապակցությունը նշանակում է «աստղերով գուշակել, ինչպես՝ Ուր իցէ գուշակումն աստեղը (ՆՀԲ, 1, 320): Բայց ճշմարտեն ոմանք երկու ամա յառաջ գուշակեալ աս տեղը եւ յուղի անկեալ եկեալ ժամանեցին ի (տեղի) ծննդեանն, միով ատուրբ զկնի ծննդեանն, ըստ որում գտին պատեալ ի խանձարուրս եւ եղեալ ի մտուր (Միքայել Ասորի. Ժամանակագրութիւն):

Հին հայերենում հարադրական կազմությունից ունենք *աստղագուշակ* համադրական բարդությունը՝ «որտեղ հնարավոր է գուշակել աստղով» իմաստով, ինչպես՝ *Աստղագուշակ* տեսլեամբն յայրին իջևանի (ՆՀԲ, 1, 320):

Արդի հայերենում *աստղագուշակ* բարդությունը՝ «աստղահմա, աստղերով գուշակություն անող անձ» իմաստով գործածվում է ած. // գոյ. խոսքիմասային տարարժեք նշանակություններով: Հմմտ. Միջնադարում *աստղագուշակները* կարողանում էին տնօրինել հասարակ մահկանացուների ճակատագրերը (Մամուլ):

Հին հայերենում *պահեմ զօրէնս* ազատ կապակցությունը նշանակում է «օրենքը պահել, պատվիրանին հավատարիմ մնալ», ինչպես՝ Վասն այնորիկ ողջանդամք եւ առանց խոցոտելոյ ի պատերազմէ ելանեն, զի հաստատութեամբ ուրեմն *պահեն զարէնս*, որ ի նմանէ կալեալ է (Բ Մակ., է, 36): Իսկ որ *պահէ զարէնս*՝ խորհրդոց իւրոց հասու լինի (Սիրաք, ԻԱ, 12): Ապա ժամանակաւ ձգեալ ամպարիշտ սովորութիւնն իբրեւ *զարէնս պահեցաւ* (Իմաստ., ԺԴ, 16):

Գրաբարի մակարդակում ունենք *օրինապահ* համադրական բարդությունը՝ բայափմքի՝ ենթակայական դերբայի նշանակությամբ՝ «օրենքը պահող, պատվիրանին հավատարիմ մնացող», ինչպես՝ Յանկալի եղեալ *օրինապահ* ընկալելովքն (Ագաթ., 453): Աստուածատէր թագաւորն *օրինապահ* կալով (ՆՀԲ, 2, 1035):

Արդի հայերենում գործածվում է *օրինապահ* համադրական բարդությունը՝ «օրենքի պատվերները պահող, օրենքի համաձայն ապրող՝ գործող»

կարգապահ», ինչպես՝ Հիմնական թաղականներն այնչափ *օրինապահ* են, ընդհանուր դատախազի դրությունն կառավարութենեն ընդունվելեն (հաստատվելեն) ի վեր (ՀՊ, ԺՀԼԲԲ): Որ ...թերևս հաղթահարվեր, թե... չլինեինք այսքան *օրինապահ* (ՊՍ, Բ, 157):

## 2) Բայի երկրորդ հիմքը որպես բարդության բաղադրիչ

Հինհայերենյան որոշ հարադրությունների բայական բաղադրիչը, որպես սերող հիմք, համաձին բարդություններում հանդես է գալիս երկրորդ (կատարյալի) հիմքով: Դիտարկենք հետևյալ օրինակները:

*Պատարագս մատուցանեմ* հարադրությունը հին հայերենում նշանակում է «պատարագի ձես կատարել», հմմտ. Այր ոք ի ձէնջ եթէ *մատուցանիցէ պատարագ* Տեառն (Ղեւտ., Ա, 2): Յորում *մատուցանիցէք պատարագս* Աստուծոյ ձերոյ (Ղեւտ., ԻԴ, 14): Զի *մատուցէ պատարագս* և զոհս մեղաց (Եբր., Ե, 1):

Բաղադրիչների ծուլման ճանապարհով հին հայերենում ունենք *պատարագամատուց* համադրական բարդությունը՝ ածականի և գոյականի խոսքի մասային արժեքներով. բայահիմքը բնորոշվում է ենթակայական դերբայի նշանակությամբ:

Հմմտ. 1. ա.գ. - «Պատարագ մատուցող». Նոքա եղիցին *պատարագամատուցք* փոխանակ ժողովրդեանն (ՆՀԲ, 2, 606): 2. ա. «Պատարագի մատուցմանը վերաբերող». Քննեցի վասն սորին *զպատարագամատուց* աղօթս (ՆՀԲ, 2, 606):

Ժամանակակից հայերենում, որպես համադրական բարդություն, այն ձեռք է բերել նոր իմաստ և անկախացել է առարկայական նշանակությամբ՝ «պատարագ մատուցելու ժամանակ ասվող աղոթքներն ամփոփող գիրք, խորհրդատետր»<sup>6</sup>:

Հին հայերենում *աղօթս առնեմ* հարադրությունը նշանակում է «աղոթել», ինչպես՝ Մեծաւ յուսով *աղօթս առնէին* (Եղ., 49): *Աղօթս արարեալ* ի վերայ նորա, վերստին ընկալան զնա յառաքինութիւն (Եղ., 64):

Հին հայերենի *առնեմ* անկանոն բայի երկրորդ հիմքով՝ *արար*, ստեղծվել է *աղօթարար* համադրական կազմությունը<sup>7</sup>, որ արդի հայերենում գործածվում է իմաստի ընդլայնմամբ՝ գոյական // ածական նշանակություններով, ինչպես՝ «աղոթք անող՝ մատուցող. ուխտավոր. աղոթական»: Հմմտ. Ապա սրբազան նվերներ տարան այն *աղոթարար* միաբաններին (ՀԹ, 2, 22): Ծնրադրել է խավարը խոժոռ՝ *Աղոթարարի* ջերմեռանդությամբ (ՊՍ, Դ, 209):

<sup>6</sup> Որպես հնաբանություն՝ գործածվում է նաև «պատարագ մատուցող քահանա» իմաստով:

<sup>7</sup> ՆՀԲ վկայում է *Աղօթարար* բառահոդվածը, սակայն ելնելով նրա բերած բնագրային վկայություններից (Ն. Շնորհալի, Ոսկիփորիկ, Հովի. Երզնկացի, Կ. Գանձակեցի և այլն), պետք է կարծել, որ համադրական այդ կազմությունը ժամանակագրորեն ձևավորվել է հին հայերենի գոյավիճակից դուրս:

Հին հայերենում *հեղուլ զարհին* ազատ կապակցությունը նշանակում է «արյուն կամ արյունը թափել՝ հանել», ինչպես՝ Զամենայն *զարհին հեղցէ* առ յատակաւ սեղանոյն (Ղեւտ., Դ, 18): Զի ոտք նոցա ի չարիս ընթանան, եւ երագունք են ի *հեղուլ զարհին* (Առակ, Ա, 16)<sup>8</sup>:

Այժմ ունենք *արյունահեղ* համադրական բարդությունը՝ հատկանշային իմաստի ընդլայնմամբ՝ «արյուն թափող, մարդասպան. արյունալի, արյունոտ»: Հմմտ. Ու պիտի խառնեն դարձյալ ու կրկին *Արյունահեղի...* ըմպելիք սուրճին (ՊՍ, Դ, 307):

*Օրէնք* անվանական բաղադրիչը *դնել* անորոշ դերբայի հետ հին հայերենում կազմում է անվանաբայական հարադրություն՝ *օրէնս դնել*՝ «օրենքով կարգ ու կանոն սահմանել, որևէ օրենքով կանոնակարգել» իմաստներով, ինչպես՝ Զօրհնութիւնս տացէ, որ *զօրէնս դնէ* (Սաղմ., 83, 7): Թէ բնութեամբ իցեն չարիքն՝ ոչ պարտի օրէնսդիրն *օրէնս դնել* (Եզն., 59)<sup>9</sup>:

Հին հայերենում ունենք *օրենսդիր* համադրական կազմությունը, որի սերիչ կաղապար է դարձել անվանաբայական հարադրությունը: Համադրական բարդությունն ունի «աստճօ օրենքների տեր. մարդ, որ օրենքներ է սահմանում իր անձնական գործով և խոսքով» իմաստներ: Ինչպես՝ Կացո՛, Տէ՛ր, *օրէնսդիր* ի վերայ նոցա (Սաղմ., Թ, 21): Մի է *օրէնսդիր* և դատաւոր, որ կարող է փրկել և կորուսանել (Յակո., Դ, 12):

Ժամանակակից հայերենում գործածական է *օրենսդիր* համադրական բարդությունը՝ «օրենքներ դնող անձ կամ մարմին՝ ժողով» իմաստով, ինչպես՝ Եվ այն օրվանից հայտնի դարձավ, որ Համմուրաբին աշխարհի առաջին *օրենսդիրն* էր (Լեո): Դիցուք, թե նաև դառնում եմ մի օր՝ բանաստեղծության *օրենսդիր* մի նոր (ՊՍ, Ա, 415):

Հին հայերենում *անցանել զօրէնս* ազատ կապակցությունը նշանակում է «օրենքից անցնել, օրենքն անտեսել, ինչպես՝ Իսկ անօրէնութիւն՝ հոգւոյն է. զի օրէնքն հոգեւոր են: Իսկ յանցումն մտաց տեսութեան: Երկրորդ՝ յանցանք է կոխել *զօրէնս* եւ *անցանել* (Գր. Տաթևացի, Աստվածաբանութիւն):

Եւ արդ, եղբայ՛ր, ե՛կ եւ ուսի՛ր յինէն զճշմարտութիւնն. եթէ ըստ կարգի զամենայն մեղս խտրէիր, որպէս եւ հրաման ընկալայ, բարիոք էր եւ զայս խտրութիւն ներքոյ իրումն սահմանի պահել, եւ ոչ գեր *օրինացն անցանել* (Ն. Լամբրոնացի, Աստվածաբանութիւն):

Հին հայերենում բաղադրիչների ձուլման ճանապարհով առաջացել է *օրինազանց* համադրական բարդությունը՝ «օրենքի դեմ հանցանք գործող»:

<sup>8</sup> Գրիգոր Վրդպ. Կամախացու երկում հաղիպում է հինհայերենյան հարադրական կառուցը. Որպէս ոք ջոր հեղու, այնպէս երագ են ի *հեղուլ զարհին* մարդոց. այնպիսիքն կուսպանանեն զբազումս ի նոցանէ:

<sup>9</sup> Հին հայերենում ունենք նաև համադրական՝ *օրէնսդրել* և *օրինադրել* կազմությունները՝ «օրենքով կարգել՝ սահմանել. կանոնարկել» իմաստով, հմմտ. Արտաքոյ քաղաքի կամեցաւ *օրէնսդրել* (ՆՀԲ, 2, 1031): Զգուշացջիր յոյժ առնել ըստ ամենայնի՝ որպէս *օրինադրեսցի* քեզ (Բ Օրին., ԺԷ, 10):

օրինախախտ» նշանակություններով, ինչպես՝ Մեղս գործէք՝ յանդիմանեալք յօրինացն իբրեւ *օրինազանցք* (Յակո., Բ, 9):

Արդի հայերենում գործածվում է *օրինազանց* համադրական կազմությունը՝ «օրենքը զանց առնող՝ արհամարհող՝ բանի տեղ չդնող» իմաստով, ինչպես՝ Ճանապարհների փոշիների մեջ Դնում են կնիք նախարարական, Մի կնիք, Որին հաշվի չի առնում լոկ *օրինազանց* քրեագործ քամին (ՊՍ, Ա, 492):

Հին հայերենում *ուխար դնել* հարադրությունը նշանակում է «հավատարմության երդում տալ, դաշինք կռել՝ կապել (մեկի հետ)», ինչպես՝ *Ուխար* զայս *դնէր* ընդ ամենայն մարդոյ (Ագաթ., 448): Եւ զո՞ր *ուխար եղ* ընդ հարս նոցա յերկրի Եգիպտացոց, եթէ ոչ զարին գառինն ի պաքայի, այսինքն ի գատկին (Ղեւ., 83):

Հին հայերենում հարադրության բաղադրիչների ծուլման ճանապարհով ունենք *ուխարադիր* համադրական կազմությունը՝ «ուխտակից, ուխտավոր, ուխտ կապող» իմաստներով, ինչպես՝ Են մեզ արք չորք *ուխարադիրք* յանձինս իւրեանց (Գործ., ԺԱ, 23): Յերկիրս յոր *ուխարադիր լինիցի* ոգուվք իւրեանց (Եր., ԻԲ, 27): *Ուխարադիր* էր ընդ թագաւորին Վրաց (Փարպ., 133):

Հին հայերենում *անցանել զուխար* // - *ուխարի* // - *ըստ ուխար* ազատ կապակցությունները նշանակում են «ուխտը՝ երդումը՝ խոստումը դրժել. երդմնազանց լինել», ինչպես՝ Մեղաւ ժողովուրդն, եւ *անց զուխարի* իմով, զոր ուխտեցի նոցա (Յեսու, Է, 11): Եւ որ յանդիմանեսցի ի նզովսն, այրեսցի ինքն հրով եւ ամենայն տուն իւր, զի *անց ուխարի* Տեառն (Յեսու, Է, 15): Եթէ իցէ ապրեսցի՞ որ առնէ իրս հակառակս, եւ *անցանէ* ըստ *ուխար* (Եզեկ., ԺԱ, 15): Պնդասրտեալ յաւժարագոյնս եւս առնէր զնոսա, զհեթանոսացն եւս ստոյթինս ի մէջ բերելով, եւ *զուխարիցն անցանել* եւ զերդմանցն անարգել (Բ Մակ., ԺԵ, 10):

Հին հայերենի մակարդակում հարադրության բաղադրիչների ծուլման ճանապարհով ունենք *ուխարազանց* համադրական կազմությունը՝ հատկանշային (ածականական) նշանակությամբ՝ «ուխտը՝ երդումը՝ խոստումը դրժող. երդմնազանց»: Հմմտ. Եւ *ուխարազանց* եղեն յԱստուծոյ հարցն իւրեանց (Ա Մակ., Ե, 25): Եւ որ ոք հեռացեալ յուխտէ երդմանցս այսոցիկ ցուցցի *ուխարազանց...* ելցէ նա արտաքս ընդ Յուդայի (Փարպ., 62):

Արդի հայերենում գործածական է *ուխարազանց* համադրական կազմությունը՝ որպես հինհայերենյան ժառանգություն՝ նախնական իմաստով, ինչպես՝

Նա (Վասակ Մամիկոնյանը) յուր բոլոր վեհությամբ կանգնած էր Շապուհի ատյանում և հանդիմանում էր *ուխարազանց* թագավորի խաբեությունը (Բ, ԺԿԼԲԲ):

Հին հայերենում *դամ տեղեկութիւն* ազատ կապակցությունը նշանակում է «տեղեկացնել, տեղեկություն հաղորդել», ինչպես՝ Եւ հասեալ ի վերայ հրամացն Կիրոսի թագաւորի, առ մեզ *տեղեկութիւն*՝ *դացես* վասն իրացս այսր ամենայնի (Ա Եզր., Զ, 22): Սկսաւ խօսել և *դալ տեղեկութիւն* (Ագաթ., 70):

Ժամանակակից հայերենում ունենք *տեղեկատու* համադրական կազմությունը՝ *տամ* բայի երկրորդ հիմքով (տու)՝ «տեղեկություններ տվող՝ հաղորդող (անձ կամ հիմնարկ), զանազան հարցերի վերաբերյալ տեղեկություններ պարունակող (գիրք)» հատկանշային իմաստներով, ինչպես՝ Ինք պահ մը մտածած էր թե՛ գուցե Փարթամ պեյն էր *տեղեկատուն*, բայց հիմա կը տեսնար, որ ան գործին մեջ բնավ մասնակցություն չէր ունեցած (ԵՕ, ԺՀԼԲԲ): *Տեղեկատու* գրքույկ (Մամուլ):

Հին հայերենում *տամ* *իրատնս* ազատ կապակցությունը նշանակում է «արդարացնել, արդարացի պատճառ վկայել», ինչպես՝ Ուսարուք զբարիս գործել. դատ արարէք որբոյն և *տուք* *իրատնս* այրոյն (Եսայ. Ա, 17): Զսիրտ ամպարշտի ոչ կենդանացուցէ, եւ *իրատնս տացէ* աղքատի (Յովք, ԼԶ, 6):

Արդի հայերենում ունենք *իրավատու* համադրական կազմությունը (*տամ* բայի երկրորդ՝ *տու* հիմքով), որ իմաստային տարբերակում է ցուցաբերում հինհայերենյան իմաստի նկատմամբ, ինչպես՝ «իրավունքը ուրիշին հանձնող՝ զիջող» նշանակությամբ: Հմմտ. Արյունակցական կապեր ունեցող անձինք կարող են *իրավատու* լինել միմյանց նկատմամբ (Մամուլ):

Հին հայերենում *գրել* բայը *գրիչ* բառի գործիականով խնդրառությամբ կազմում է *գրել գրչաւ* կապակցությունը, որ նշանակում է «գրիչով գրել՝ փորագրել՝ նախշագարդել», ինչպես՝ *Գրեաց գրչաւ* քերթս և արմաւենիս (Գ Թագ., Զ, 29):

Բաղադրիչների ծուլման եղանակով հին հայերենում առաջացել է *գրչագիր* համադրական կազմությունը՝ ածականի խոսքիմասային արժեքով, հմմտ.

Ոչ է միապէս ամենայն սաղմոսարան. որպէս յայտ է երկաթագիրս և ի *գրչագիրսն*, և յայլ միջակսն (ՆՀԲ, Ա, 588):

Արդի հայերենում համադրական այդ կազմությունը գործածվում է խոսքիմասային երկարժեք նշանակություններով, ինչպես՝ 1. «գրչով գրած՝ գրված, ձեռագիր» (ած.), հմմտ. Նա կտրեց մի հին *գրչագիր* գրքի կազմից մի թերթ մագաղաթ և ուղարկեց (Ր, ԺՀԼԲԲ): 2. «Հին ձեռագիր գիրք» (գոյ.), հմմտ. Նա այստեղ տեսավ հազիվ երկու հարյուրի չափ հին ու նոր հատորներ, որոնց մի մասը ոչ շատ կարևոր *գրչագրեր* էին (Մուր., ԺՀԼԲԲ):

## Բ. Ածանցով եզրափակվող կաղապարներ

Հին հայերենում կան գոյ. + բայ > ած. կաղապարով առաջացած որոշ կազմություններ, որոնք բառական արժեք են ստանում –ու ածանցով: Նման բաղադրություններն առանց ածանցի գոյություն չունեն. դրանց սերող հիմք են դառնում գոյ.+բայ կառուցատիպերը, որոնց բայական բաղադրիչի հիմքը եզրափակվում է ածանցով:

Օրինակ, եթե դիտարկում ենք *ահ արկանել* հարադրությունից առաջացած *ահարկու* կազմությունը, պետք է նկատի ունենալ, որ լեզվում *ահարկ* ձև գոյություն չունի, ինչպես նաև լեզվում չկա *արկու* ձևը, ուստի կարելի է

ասել, որ ահարկ-ը կախյալ հիմք է, որ բառակազմական մակարդակում դառնում է սերող հիմք: Դիտարկենք այդ կաղապարով առաջացած որոշ բաղադրությունների վերլուծական և համադրական կառուցատիպերի արտահայտության և բովանդակության պլանների հարաբերակցությունը լեզվի տարժամանակյա կտրվածքներում:

Հին հայերենում ասար առնում հարադրությունը նշանակում է «ավերել, հափշտակել, կողոպտել, ինչպես՝ Իսկ արքայ Կոստանդին իբրեւ զայն լուսա՝ կամեցաւ առնուլ ասար զգարացն բազմութեան, եւ երթալ ձմերել ի Հայս, զի բարձցէ զերկիրն ի միջոյ (Սեբեոս):

Բայց Աղուանն եւ Սինին եւ գունդն Սեպիական ոչ հնազանդեցան, զորոց զերկիրն ասար առեալ տարան զինչ եւ գտին, եւ դարձան անդրէն առ արքայ (Սեբեոս):

Հարադրության բաղադրիչների ծուլման ճանապարհով հինգերորդ դարում ունենք *ասարառու* համադրական բաղադրությունը՝ «ավերող, թալանող» և «թալանը՝ ավարը բաշխող՝ բաժանող» նշանակություններով, ինչպես՝ Այս է բաժին *ասարառուաց* ձերոց, եւ ժառանգութիւն, որ զձեզն ժառանգէին (Եսայ., ԺԷ, 14):

Բարձեալ զգէն եւ զասպագէն առնեւծիոյ զօրացն այլազգեաց անչափ բազմութեամբ, եւ ի բազում ասարառուաց իւրոցն զօրաց ոչ ինչ տուժէ արքայ յումեքէ, այլ հրամայէ հանդէպ երեսաց տանել զինչ եւ շահեցաւ (Թ. Արծրունի)<sup>10</sup>:

Արդի հայերենում գործածվում է հինհայերենյան համադրական բաղադրությունը՝ «ավարի ենթարկող, կողոպտիչ, հափշտակող» գոյ./ած. տարարժեք նշանակություններով, ինչպես՝ *Ավարառու* ացքից լքված, Մի աղքատ մարդ... Պառկեց հանդարտ, Սիրտը՝ անդորր (ԱԻ, 2, 179): Նա նկատեց այրվող խրճիթի մոտ մի քանի իրեղեններ, որոնք, *ավարառուն*, անձեռնհաս լինելով, թողել էր այնտեղ (Բ, ԺՀԲԲ):

Հին հայերենում *ահ արկանել* նշանակում է «վախ՝ երկյուղ զցել (մեկի վրա)», ինչպես՝ Նստէր յատենի *ահ արկանելով* սրբոցն (Եղ., 177): Զի մի թուեցայց իբրեւ *ահ* ինչ *արկանել* ձեզ թղթովքս (Բ Կորն., Ժ, 9):

Հին հայերենում ունենք –ու ածանցով *ահարկու* բառը՝ հատկանշային (ածականական) նշանակությամբ՝ «ահավոր, ահընկեց, սարսափազդու. պատկառելի»: Հմմտ. Այր հանճարեղ և *ահարկու* տեսողացն զնա (Յհ. Կթ., 326): Կրկին պատուեաց մաքրական տաճմամբ՝ *Ահարկու* դիւաց և ամենայն չար պատահարաց (Նար., 247): *Ահարկու* հրամանն եւ մերկապարանոց յանդիմանութիւնքն (Նար., 19)<sup>11</sup>:

<sup>10</sup> Եւ *առցեն յարի զասարառու* իրեանց եւ կողոպտեցեն զկողոպտիչս իրեանց (Եզեկ., ԼԹ, 10):

<sup>11</sup> Հին հայերենում *ահ արկանել* հարադրությունից ունենք համադրական բայական բառույթ՝ *ահարկեմ*՝ «վախ ներշնչել, սարսափեցնել» իմաստներով: Հմմտ. Մարգարէիցն... *ահարկեալ* փրկել կարասցեն զնոսա (Ագաթ., 281):

Արդի հայերենում *ահարկու* բաղադրությունն ունի հատկանշային՝ ած.// մկբ. նշանակություն. «ահեղ, ահռելի, զարհուրելի», «ահազդու կերպով, ահավորությամբ», ինչպես՝ Մենք միշտ առաջ պիտ գնանք, Ինչքան մեր ճամբան լինի *ահարկու* (ՀԹ, 1, 36): Բայց այդ միջոցին *Ահարկու* մի ցին Լսեց աքլորի կանչը սնապարծ (ԱԻ, 2, 184):

Հին հայերենում *զբանս արկանել* հարադրությունը նշանակում է «(չարության) խոսք գցել, չարախոսել, զրպարտել, մատնել, բամբասել»<sup>12</sup>, ինչպես՝ Չնա ի բանս արկանէր Փառանձեմն անօրէնն (Բուգ., 104): Չի բանս արկցէ ընդ թագաւորին Պարսից ընդ Շապուհ և ընդ Արշակ (Բուգ., 113):

Հին հայերենում ունենք –ու ածանցով *բանսարկու* կազմությունը՝ «բամբասող, չարախոս, խառնակիչ, զրպարտիչ, մատնիչ» իմաստներով: Հմմտ. Կրակարանք կայծականաց եւ փայտ հրոյ եւ այր բանսարկու առ ի յուզել զկռի (Առակ, ԻԶ, 21): Իբրեւ լւեր զբանս անարէն բանսարկուին... հրաման ետ թագաւորն հրովարտակս տալ (Բ Մակ., ԺԶ, 27): Արդ ոչ է առն բանսարկուի արժան ի տան թագաւորի լինել (Եսթ., Է, 4): Մի՛ սիրեր լինել բանսարկու, և լեզուաւ մի՛ գայթակղեր (Սիրաք, Ե, 16)<sup>13</sup>:

Արդի հայերենում գործածական է համադրական (ածանցավոր) կազմությունը՝ բանսարկու՝ ած. // գոյ. տարարժեք նշանակությամբ՝ «քու, չարախոս, զրպարտիչ. խառնակիչ» իմաստներով: Հմմտ. *Բանսարկուն* երկու ցուցամատները կցեց միմյանց հետ, որ միության նշան էր (Բ, ԺՀԼԲԲ): Նրա վրա հավասար ազդեցություն ունեին թե՛ մեծը և թե՛ փոքրը... թե՛ խարդախ *բանսարկուն* և թե՛ իմաստուն խորհրդականը (Մուր., ԺՀԼԲԲ):

Այսպիսով, դիտարկված հինհայերենյան անվանաբայական կապակցությունների և նրանց համարժեք արդիհայերենյան համադրական կառուցատիպերի զուգադրական քննությունը ցույց է տալիս, որ լեզվի տարածամանակյա կտրվածքում տեղի է ունեցել լեզվական միավորների փոխակերպման գործընթաց, որի հետևանքով լեզվական այդ նույն միավորները, պահպանելով բովանդակության պլանները, ենթարկվել են արտահայտության պլանի փոփոխության՝ վերլուծականությունից անցնելով համադրական կառուցատիպերի:

### Եզրակացություններ

Հայերենի բառային կազմի տարածամանակյա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հին հայերեն – ժամանակակից հայերեն ժամանակահատ-

<sup>12</sup> Հին հայերենում *զբանս արկանել* հարադրությունից ունենք համադրական բայական բառային *բանսարկեմ*՝ հարադրության իմաստով, ինչպես՝ Ոչ բանսարկիս ի բարութանց (Նար., 207):

<sup>13</sup> Մատենագրական որոշ երկերում հանդիպում է բաղադրիչների անջատ գրությամբ, հմմտ. Չի դուռն կենաց իմաստութեանն բաց է. եւ հակառակորդք բազում են գործակցաւ *բանս արկուին*, որ որսայն զորդիս մարդկան ի կորուստ (Գր. Լուսատրիչ): Որպես եւ այրս այս արար, անքակ եւ անմեկնելի զգեցաւ պատեանս յինքեան զգորութիւն *բանս արկուին* (Թ. Արծրունի):

վաճում հինհայերենյան որոշակի հարադրություններ ներկայանում են համադրական կառուցատիպերով: Այդ կարգի հարադրությունները հին հայերենում անվանաբայական կառույցներ են, որոնք բարդությունների են փոխակերպվել գոյական + բայ > ածական կաղապարով: Բարդությունների ածականական արժեքը պայմանավորված է նրանց երկրորդ բաղադրիչի՝ բայահիմքի արտահայտած հատկանշային իմաստով՝ ենթակայական դերբայի նշանակությամբ:

Հինհայերենյան հարադրությունների բայական բաղադրիչների դերով հանդես են գալիս հետևյալ բայերը՝ *մափուցանեմ, առնեմ, արկանեմ, խնդրեմ, պահեմ, դնեմ* և այլն, որոնց հետ հարադրություն են կազմում *պարարագ, ասար, ուխտ, աղալթ, անձն, ահ, բան, օրէնք, վրէժ* և այլ գոյականներ:

*Գոյական + բայ > ածական* փոխակերպական կաղապարով առաջացած բարդությունների սերող հիմքը (բայական բաղադրիչը) հանդես է գալիս ինչպես առաջին (վրէժ խնդրեմ > *վրէժխնդիր*, պահեմ զօրէնս > *օրինապահ*), այնպես էլ երկրորդ հիմքի կառուցատիպով (զաղօթս առնեմ > *աղօթարար*, օրէնս դնել > *օրէնսդիր*):

Դիտարկված կաղապարով առաջացած որոշ կազմությունների բառական արժեքը պայմանավորված է բառակազմական ածանցով, ինչպես՝ *ահ արկանել > ահարկու*, *զբանս արկանել > բանսարկու*, *յանձն առնեմ > յանձնառու* և այլն:

Փոխակերպական այս իրողության ուսումնասիրությունը կարող է ամբողջացնել հայերենի պատմական բառագիտության նկարագրությունը:

### **Օգտագործված գրականություն**

Աբեղյան Մ. 1965, Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք», 699 էջ:

Խաչատրյան Լ. 2011, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Երևան, «Ձանգակ-97», 272 էջ:

Հովսեփյան Լ. 1987, Գրաբարի բառակազմությունը, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 375 էջ:

Մուրվալյան Ա. 1959, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 252 էջ:

Ջահուկյան Գ. 1973, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 587 էջ:

Ջահուկյան Գ. 1989, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 319 էջ:

Туманян Э. 1971, Древнеармянский язык, Москва, «Наука», 448 с.

### **Համառոտագրություններ**

#### **ա) Աստվածաշունչ մատյան**

Առակ - Առակք Սողոմոնի

Ա Եզր - Գիրք Եզրի Ա.

Բ Կորն. - Թուղթ Պաղոսի Առաքելոյ առ Կորնթացիս Բ.

Բ Օրին. - Երկրորդուն Օրինաց  
 Գործ. - Գործք առաքելոց  
 Եբր. - Թուղթ Պաղոսի Առաքելոյ առ Եբրայեցիս  
 Եսայ. - Եսայի  
 Եզեկ. - Եզեկիէլ  
 Եսթեր - Եսթեր  
 Եր. - Երեմիա  
 Թագ. Գ. - Թագաւորութեանց Գ.  
 Թուոց - Թիւք  
 Իմաստ. - Իմաստութիւն Սողոմոնի  
 Ղեւտ. - Ղեւտական  
 Մակ. Ա.Բ. - Գիրք Մակաբայեցոց Ա.Բ.  
 Յակո. - Թուղթք Յակոբայ Առաքելոյ  
 Յեսու - Յեսու Նաւեայ  
 Յովբ - Յովբ  
 Նաում - Նաում  
 Սաղ. - Գիրք Սաղմոսաց  
 Սիրաք - Գիրք Սիրաքայ

#### **բ) Հին հայերենի բնագրային աղբյուրներ**

Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1909:  
 Արծր. - Թովմայ Արծրունոյ Պատմութիւն, Պետերբուրգ, 1887:  
 Բուզ. - Փաստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:  
 Եզն. - Եզնկայ Կողբացոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:  
 Եղ. - Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:  
 Լուսաւորիչ Գր. - Գրիգորի Լուսաւորչի Յանախապատում ճառք, Վաղարշապատ, 1894-1896:  
 Խոր. - Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913:  
 Ղեւ. - Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, ի տպարանի Ի.Ն. Սկորոխոդովի, 1887:  
 Յի. Կթ. - Յիովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտոցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:  
 Նար. - Մատեան ողբերգութեան, Պուլնոս Այրէս, 1948:  
 Սեբեոս - Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Երևան, 1939:  
 Փարպ. - Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփլիս, 1904:

#### **գ) Արդի հայերենյան բնագրերի հեղինակներ**

ԱԻ - Ավ. Իսահակյան  
 ԴՎ - Դ. Վարուժան  
 ԵՕ - Երվանդ Օտյան  
 ԼԵՈ - Առաքել Բաբախանյան  
 ՀԹ - Հովհ. Թումանյան  
 Մուր. - Մուրացան  
 ՊՍ - Պ. Սևակ

**դ) Բառարաններ**

Առձեռն բառարան հայկազեան լեզուի (ՆՀԲ), Երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 1865:

ԺՀԼԲԲ - Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969-1980:

Համաբարբառ հին և նոր կտակարանաց, աշխատասիրութիւն Թադէոս վարդապետի Աստուածատուրեան Արապկերցոյ, ի տպարանի Առաքելական աթոռոյ Սրբոց Յակովբեանց, Երուսաղէմ, 1895:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երկից վարդապետաց, Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան, հհ. Ա-Բ, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1836-1837:

**ТРАНСФОРМАЦИЯ АНАЛИТИЧЕСКИХ КОНСТРУКЦИЙ В СИНТЕТИЧЕСКИЕ  
ПО МОДЕЛИ СУЩЕСТВИТЕЛЬНОЕ + ГЛАГОЛ > ПРИЛАГАТЕЛЬНОЕ  
В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ  
(диахронический аспект)**

Лалик Хачатрян

Резюме

В современном армянском языке выделяется ряд сложных прилагательных, образованных путем трансформации сочетаний *существительное + глагол*. Значение признака обусловлено переходом глагольной основы в причастие.

Рассматриваемые слова восходят к древнеармянскому языку. Их компоненты синтаксически связаны моделью управления: *глагол + прямое дополнение*. Семантически они представляют собой сумму значений составляющих компонентов. Компонентами выступают существительные *սիսիարիագ, անիար, ուխար, աղաւթք, անձն, տի, բան, օրէնք, վրէժ* и т.д., глаголы действительного залога *մախրուցանենմ, առնենմ, արկանենմ, խնդրենմ, պահենմ, դնենմ* и т.д.

В рассматриваемых трансформируемых словосочетаниях глагол может быть первым компонентом (*պահենմ զօրէնս > օրինապահ, պաշտենմ զօրէնս > օրինապաշտ*) или вторым компонентом (*վրէժ խնդրենմ > վրէժխնդիր, զաղթառ առնենմ > աղթառար, օրէնս դնել > օրէնսդիր, պատարագս մատուցանենմ > պապարագամատուց*).

Некоторые прилагательные такого типа функционируют с суффиксом *-ու*, ср.: *տի արկանել > տիարկու, զբանս արկանել > բանսարկու, յանձն առնենմ > յանձնառու, տառ առնենմ > տարառու* и т.д.

Изучение подобных трансформационных моделей имеет важное значение с точки зрения исторического словообразования армянского языка.

**Ключевые слова** – трансформация, генеративная модель, модель преобразования, сложные слова, предложная конструкция, аналитические сложные слова, синтетические сложные слова.

**TRANSFORMATION OF ANALYTICAL CONSTRUCTIONS INTO SYNTHETIC ONES,  
ACCORDING TO THE NOUN + VERB > ADJECTIVE MODEL IN THE ANCIENT  
ARMENIAN LANGUAGE  
(Diachronic aspect)**

Lalik Khachatryan

Abstract

In the modern Armenian there are several complex adjectives, formed by transforming *noun + verb* combinations. The meaning of the attribute is due to the transition of the verb base into participles.

The words in question originated in the ancient Armenian. Their components are syntactically linked by a control model: verb + direct complement. Semantically, they represent the sum of the values of the constituent components. Components are nouns պատարագ, աւար, ուխտ, աղաւթք, անձն, ահ, բան, օրէնք, վրէժ etc. and verbs active voice մատուցանեն, առնեն, արկանեն, խդրեն, պահեն, դնեն etc.

In the present transformable phrases the verb may be the first component (պահեն զօրէնս > օրինապահ, պաշտեն զօրէնս > օրինապաշտ) or the second component (վրէժ խնդրեն > վրէժխնդիր, զաղօթս առնեն > աղօթարար, օրէնս դնել > օրէնդիր, պատարագս մատուցանեն > պատարագամատուց).

Some adjectives of this type operate with the suffix -ու, e.g. ահ արկանել > ահարկու, զբանս արկանել > բանսարկու, յանձն առնեն > յանձնառու, աւառ առնեն > աւարառու etc.

The study of such transformational models is important from the point of view of the historical word formation of the Armenian language.

**Key words** – transformation, generative model, transformation model, compound words, prepositional structure, analytical compound-word, synthetic compound-word.

# ԵՂԻԱ ՏԵՄԻՐԾԻՊԱՇՅԱՆԸ՝ ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ

## Պետրոս Դեմիրճյան

Բանասիրական գիտությունների դոկտոր  
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Գր. Լուսավորչի 15  
Էլ. հասցե՝ pdemirchyan@mail.ru  
ORCID: 0009-0003-6265-4421

Հոդվածը ներկայացվել է 25.08.2023, գրայնությունը է 12.04.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.1-165

### Ամփոփում

XIX դարի 80-ական թվականների բուռն ու բեղուն տարիներին ամենից առաջ ի հայտ եկավ երիտասարդ Եղիա Տեմիրճիպաշյանի հրապարակագրական ձիրքը: Իր հրատարակած պարբերականներում նա անդրադառնում է հայոց ազգային, հասարակական, կրոնական, գրական-մշակութային, կրթական-մանկավարժական և բազմազան այլ հարցերի ու խնդիրների: Դրանք արդյունք էին ոչ միայն Եղիայի անհատական ըմբռնումների ու նախասիրությունների, այլև նախ և առաջ ժամանակի պահանջի, ավելի ընդհանուր՝ մարդկային մտքի առաջընթացով պայմանավորված՝ կյանքի արդիական փոփոխությունների թելադրանքի, հնի ու նորի, դարն ապրածի ու ապագային միտված ծիլերի պայքարի:

Եղիա Տեմիրճիպաշյանը հանդես էր գալիս որպես բնության, ազգային թե մարդկության կյանքում **բարեշրջության** համոզված կողմնակից ու ջատագով: Պայքարելով առաջադիմության համար՝ նա տեսնում էր, սակայն, որ այն շատ դանդաղորեն է ընթանում: Շատ հաճախ բախվում է անհասկացողության կամ անհանդուրժողականության պատին: Գիտության՝ մարդու, բնության, հասարակության ու տիեզերքի մասին պատկերացումների ընդլայնումն իր հետ բերում է ոչ միայն դրական, այլև բացասական իրողություններ, երբեմն անդառնալի հետևանքներով, որը խորապես մտահոգում էր շատերին, այդ թվում նաև իրեն՝ Եղիային: Բայց խնդիրը միայն հայի կամ ազգի մէջ չէ: Ե. Տեմիրճիպաշյանն աստիճանաբար լայնացնում ու խորացնում է հարցադրումների շրջանակը՝ ներառելով ընդհանրապես մարդու և մարդկության արդի վիճակի և ապագայի, ճակատագրի խնդիրը: Վերջապես, ամենագլխավոր հարցի՝ «Ո՞ր կ'երթանք: Ո՞ր կ'երթայ Հայութիւնն. ո՞ր կ'երթայ մարդկութիւնն», պատասխանը, ըստ էության, դեռևս անորոշ էր՝ «Չը գիտեմ»: Կան սուսկ ապագայի մշուշոտ կանխազգացողություններ՝ տագնապի և հուսալքության շեշտերով, որից ինչպես խոստովանում է Եղիան՝ «Հոգիս տրտում է ցը մահ...»:

**Բանալի բառեր**՝ Եղիա Տեմիրճիպաշյան, հրապարակագրություն, ազգ, քաղաքակրթություն, առաջադիմություն, Սահմանադրություն, հասարակություն:

### Ներածություն

XIX դարի 80-ական թվականների բուռն ու բեղուն տարիներին ամենից առաջ ի հայտ եկավ երիտասարդ Եղիա Տեմիրճիպաշյանի հրապարակագրական ձիրքը: Իր հրատարակած պարբերականներում նա անդրադառնում է

նում է հայոց ազգային, հասարակական, կրոնական, գրական-մշակութային, կրթական-մանկավարժական և բազմազան այլ հարցերի ու խնդիրների: Դրանք արդյունք էին ոչ միայն Եղիայի անհատական ըմբռնումների ու նախասիրությունների, այլև, նախ և առաջ, ժամանակի պահանջի, ավելի ընդհանուր՝ մարդկային մտքի առաջընթացով պայմանավորված՝ կյանքի արդիական փոփոխությունների թելադրանքի, հնի ու նորի, դարն ապրածի ու ապագային միտված ծիլերի պայքարի, որը ենթադրում էր քանդում և շինություն՝ հանուն ավելի լավ կյանքի: Բայց այդ ամենի մեջ Եղիայի համար կարևորվում էր նաև բարոյական կողմը. նա ամենևին էլ անտարբեր չէր այն հարցադրման հանդեպ, թե, ի վերջո, բարի՞ էր արդյոք այդ **քանդումը**, թեկուզև հանուն ճշմարիտ նպատակի. «Կը խոստովանիմ ե՛ւ ես թե՛ բարի չե՛ք քանդումն: Այլ անխուսափելի է քանդումն. Եւ եթե՛ գործիք մ՛եմ ե՛ս ալ այդ քանդման գործին, պատասխանատուութիւնն այլում կը պատկանի. - Ժամանակին, Յաւիտենականի՛ն»<sup>1</sup>:

### **Ներկա ժամանակի և ազգի վիճակի գնահատությունը**

80-ականի սկզբներին Հայոց աշխարհի ու ազգի վիճակը չափազանց ողբալի ու տազնապալի գույներով էր ներկայանում Եղիային: Հրաժարեցումից հետո դարձյալ Հայոց պատրիարքական աթոռին վերադարձած Ներսես Վարժապետյանին ուղղած գրության մեջ նա ցավով արձանագրում էր այդ իրավիճակը՝ «...ամե՛ն առաւօտ եւ ամե՛ն երեկոյ Սատանան աչացո առջեւ բերաւ Հայութիւնն, երկրի վրայ ցիրուցան անանուն Հայութիւնն, անտարբերութեամբ եւ անբարոյութեամբ մահանալու մօտ Հայութիւնն, նժդեհութեամբ եւ օտարասիրութեամբ սպառելու մօտ Հայութիւնն, անիշխանութեամբ եւ անմիաբանութեամբ իսպառ անհետանալու մօտ Հայութիւնն»<sup>2</sup>: Եվ դեռ՝ Նուպար-Շահնազարյան վարժարանը փակված, Հայաստանյայց եկեղեցու հիմքերը խարխված՝ «Արարատեան աթոռն՝ հիւսիսային անգութ արծուին մագլաց մէջ. Կիլիկեան աթոռն՝ Յիսուսադաւ ճիզուիթաց ճիրաններուն մէջ. Երուսաղիմական աթոռն՝ անտարբեր պահանջատեսարց ճանկերուն մէջ. Կոստանդնուպօլսոյ պատրիարքական աթոռն ալ վտանգի՛ մէջ»<sup>3</sup>: Հիրավի, այս տողերում դժվար է չտեսնել Խորենացու «Ողբ»-ի անմիջական արձագանքը՝ ներքին հարազատությունը Պատմահոր խոսք ու ոճին: Միաժամանակ, սակայն, Ողբ ու Տազնապից ծնվում է Հոյսը՝ եկել է ժամը մեծ բարեփոխումների... Ե. Տեմիրճիպաշյանի խոսքը նույնպես ողբերգականից կտրուկ շրջադարձ է կատարում դեպի ռոմանտիկական պաթոսը՝ «Փառաց ու բարձրութեան ու զօրութեան փրկաւէտ ժամն, այո՛, հնչած է նաեւ ընդհանուր Օս-

<sup>1</sup> Գրասէր Ատոմ 1884, 124-125:

<sup>2</sup> Առ Բարձրաշնորհ Տ. Ներսէս Վարժապետեան Հայոց պատրիարք 1883, 25:

<sup>3</sup> Առ Բարձրաշնորհ Տ. Ներսէս Վարժապետեան Հայոց պատրիարք 1883, 28:

մանեան հայրենեաց համար, - ոգևորությամբ գրում է նա: - Բարձրագոյն հրամանաւ բարենորոգմանց սկիզբն արդէն եղած է Օսմանեան պետութեան մայրաքաղաքին մէջ եւ Օսմանեան պետութեան յետին գիւղաքաղաքին մէջ: /.../ նիւթն ու միտքն իրարու ձեռք կը կարկառեն՝ յարդարելու համար Օսմանեան պետութեան համայն ժողովրդոց բարօրութիւնն»: Եվ այդ ամենի առաջին ազդակներից մեկը, ըստ Եղիայի, այն էր, որ «Հայոց հրաժարեալ պատրիարքն» իր գահին էր վերադարձվել, ընդ որում՝ «համակրութեան այնպիսի՝ մեծափայլ ցոյցերով՝ ոյց եւ ո՛չ Հայոց պատրիարքական աթոռակալ մ'արժանացած էր մինչեւ ցայսօր»: Եղիայի միակ տրտմությունն այն էր, որ «միլիոն մը» չունեի «ազգային բարեկարգութեան գործին ի նպաստ՝ Հայոց պատրիարքին տրամադրութեան ներքեւ դնելու համար»<sup>4</sup>:

Իր խմբագրած «Գրական և իմաստասիրական շարժում» հանդեսի նոյն համարի մեկ այլ հրապարակման մեջ աշխարհում կատարվող արդի ազգային-քաղաքական-կրոնական տեղաշարժերի մասին խոսելուց հետո Ե. Տեմիրճիպաշյանը շտապում է ընթերցողներին տեղեկացնել, որ «Հայոց հրաժարեալ Պատրիարքն /.../ Վսեմափայլ վատանց ոմանց կողմէն իբրեւ կասկածելի» Բ. Դրանը ներկայացվելուց և ապա իր պաշտոնում վերականգնվելուց ու «իբրեւ պետութեան բարձրագոյն պաշտօնատարաց իմաստագոյններէն եւ հաւատարմագոյններէն մին» վերաճանաչվելուց հետո ջանում է իր շուրջ համախմբել «նիւթապէս ու բարոյապէս ձեռնհաս ազգայիններն»՝ ազգային բարեկարգութեան գործը հաստատելու և առաջ տանելու նպատակով: «Երկանց, խորհրդակցութեանց ու ծրագրաց օրերուն մէջ ենք տակաւին, - գրում է նա, - եւ կը յուսանք թէ Գարնանամուտին կամ՝ մեզ համար քաղցրագոյն բացատրութեամբ՝ Հայկական ամանորին հետ պիտի տեսնենք գեղեցիկ խորհրդոց մարմնացումն ու մեր անձկագին ըղձից լրումն»<sup>5</sup>: Շատ կարևոր էր նաև «եկեղեցականաց մտաւոր մշակումն», որի նպատակը պիտի լինի «Հայաստանեայց եկեղեցին կանգուն պահել, ժողովրդեան բարոյականին վրայ հսկել, ազգային լուսատրութեան նպաստել՝ քարոզութեամբ, հրատարակութեամբ եւ անխոնջ գործունէութեամբ»<sup>6</sup>: Ցավում էր, որ «բարձր անհատութիւնք հազուագիտ են եկեղեցական դասուն մէջ», ուստի և համոզված էր, որ «Պէտք է պատրաստել այսպիսի եկեղեցական դաս մը», և դեռ «ուրիշ շա՛տ բաներ», որ նշանակում էր, թե «Պէտք է պատրաստել ապագան, ի մի՛ բան»<sup>7</sup>: Հատկանշական է, որ **Եղիա Տեմիրճիպաշյանի համար սկզբունքային խնդիր էր ազգային միասնության գաղափարի իրագործումը**, ըստ որի՝ «Տփղիսեցիք ու Պօլսեցիք պարտէին

<sup>4</sup> Առ Բարձրաշնորհ Տ. Ներսէս Վարժապետեան Հայոց պատրիարք 1883, 30-32:

<sup>5</sup> Ժամանակակից պատմութիւն /Հարեանցի ակնարկ/ 1883, 40-41:

<sup>6</sup> Ժամանակակից պատմութիւն /Հարեանցի ակնարկ/ 1883, 42-43:

<sup>7</sup> Ժամանակակից պատմութիւն /Հարեանցի ակնարկ/ 1883, 44:

միացնել իրենց ոյժերն՝ հայրենեաց իմացական ու տնտեսական զարգացման գործին, այսինքն **կենաց գործին** համար»<sup>8</sup>:

Ամփոփելով ասվածը՝ Եղիա Տեմիրճիպաշյանը եզրակացնում էր, որ, ի վերջո, «Անհուն գործ մ'է ազգային բարեգործութեան գործն»: Բայց միայն նվիրյալ անհատների ջանքերով բարդագույն այդ խնդիրը լուծել հնարավոր չէ: «Ո՛րքան բազմապահանջ է ժողովուրդն, - գրում է նա: - Այլ պարտի գիտնալ թէ **պահանջք** եւ **պարտք**՝ որք անբաժան են վաճառականաց տոմարներուն մէջ՝ անբաժան ըլլալ պարտին նաեւ ազգաց հսկահատոր տոմարներուն մէջ. պահանջկոտութիւն ու պարտաճանաչութիւն միատեղ գալով՝ կը փրկեն ժողովուրդներն»<sup>9</sup>:

«Գերազանցօրէն հակասական» համարելով ներկա սերնդին բաժին հասած ժամանակը<sup>10</sup> Ե. Տեմիրճիպաշյանը միաժամանակ պնդում էր, թե հենց ժամանակն է առաջադիմության ամենամեծ տարրը: Ընդ որում՝ փոխվել է **փառքի** մասին արդիական պատկերացումը. «...փառաց նշանակութիւնն այսօր փոխուած է, - գրում է նա, - փոխուած ըլլալով մարդկան մտաւոր վիճակն ու փոխուած ըլլալով մարդկութեան **խտէալն**»: Եթե նախկինում այն հիմնվում էր «բիրտ զօրութեան, վայրագ կրօնամոլութեան, քաղաքական բռնապետութեան» վրա, ապա «Այսօր կը փառաւորուի նա՛ որ կ'աշխատի. փառաց այսօր իրաւունք ունի նա՛՞ որ իր մարմնոյն, ու մտացն, ու սրտին զարգացման կ'աշխատի. նա որ ընկերային ներդաշնակութեան եւ ազգային յառաջադիմութեան եւ մարդկային ազգին բարօրութեան կը նպաստէ՝ մշակելով իր միտքն, իր սիրտն, իր մարմինն»: Զարգացնելով իր միտքը՝ հետագա շարադրանքի մեջ Ե. Տեմիրճիպաշյանը, ըստ էության, ներկայացնում է **ազգային-սոցիալական-քաղաքական արդարության ու բարոյականության իր տեսլականը**: Ըստ այդմ՝ ճշմարիտ ու իրական փառքի է արժանի «Նա՛ որ կ'աշխատի բիրտ զօրութեան դէմ բարձրացնելու բարոյական զօրութիւնն. որ կ'աշխատի պատերազմական գործեաց դէմ բարձրացնելու խաղաղական արիեստական գործիներն. որ կ'աշխատի կրօնամոլութեան դէմ բարձրացնելու գիտութիւնն եւ գիտութեան վրայ հիմնուած անսուտ կրօնն. որ կ'աշխատի դիւանագիտութեան դէմ բարձրացնելու գիտութիւնն ընկերային. որ կ'աշխատի բարձրացնել արդարութեան ու խաղաղութեան օրէնքն՝ ընդդէմ խտրադիր օրինաց պատերազմածին»: Հատկանշական է, որ փառքի իրավունքը Եղիա Տեմիրճիպաշյանը չէր վերապահում միայն արտակարգ կարողությունների տեր, երևելի անհատներին, որոնց ծառայությունները, անշուշտ, անհամեմատ մեծ են, այլև, ըստ նրա, «փառաց արժան է ամեն մարդ՝ որ կ'ընթանայ պարտուց անմոլար ճանապարհին վրայ. ամեն

<sup>8</sup> Ժամանակակից պատմութիւն /Հարեանցի ակնարկ/ 1883, 41:

<sup>9</sup> Ժամանակակից պատմութիւն /Հարեանցի ակնարկ/ 1883, 44:

<sup>10</sup> Երեսփոխանական ընտրութիւնք 1883, 92:

մարդ որ կը սիրէ, ամեն մարդ որ կ'ուսանի, ամեն մարդ որ կը խորհրդածէ, ամեն մարդ որ կը շարժէ բազուկներն եւ իր քրտամբք կ'ոռոզէ խոպան երկիրն»: Մի խոսքով՝ հասարակության բոլոր ազնիվ, արդարամիտ, ջանասեր, ազգի և մարդու առաջընթացին նվիրյալ անհատներն ու խավերը՝ «Սկսեալ մանուկէն՝ որ կը ջանայ պահել անթերի դաստիարակին պատուէրներն ու խղճամտօրէն պատրաստել իր բոլոր դասերն, մինչեւ քաղաքացին որ տիպար մ'է բարոյասիրութեան եւ ուսումնասիրութեան եւ ազգասիրութեան, եւ մինչեւ բնութեան գաղտնիքներն յայտնօղ ու տիեզերաց յափտենական օրէնքներն հոչակօղ գիտութեան վեհիմաստ վարդապետս...»<sup>11</sup>:

### **Ազգային առաջադիմության իրագործման ուղիներն ու նախադրյալները**

Ազգի ու հասարակության վերափոխման, առաջադիմության իրագործման ճանապարհին գլխավոր ուժը, իհարկե, երիտասարդությունն էր: 70-ականի կեսերին՝ Ֆրանսիայից վերադառնալով, Եղիա Տեմիրճիպաշյանն ականատես էր եղել, թե ինչպես «նոր ոգին կը թափանցէր համակ եւ յառաջ կը մղէր Հայ երիտասարդութիւնն»: Առաջ էին եկել և արդեն հաջողությամբ գործում էին եռանդուն ու կարող անհատներ, որոնցից մի քանիսը Ներսիսյանական իր դասընկերներն էին. «Կոչեցեալ երիտասարդ եկեղեցական մը, Բարձրաշնորհ Տէր Ներսէս Վարժապետեան, կը տքնէր՝ բարձրացնելէ յետոյ վարժապետութիւնն ու սրբազան բեմբասացութիւնն Հայոց՝ Բարձրագոյն դրից վերածել ե՛ւ Հայոց Պատրիարքութիւնն. Երիտասարդագոյն դաստիարակ մը, Պարոն Մինաս Չերագ, իր **Ազգային դաստիարակութիւն** անուն նշանատուր – ու կրնանք ըսել փառատուր – մատենով՝ կը յաւակնէր նորոգել ազգային լեզուն, ազգային գրականութիւնն, ազգային դաստիարակութիւնն. Իր պանծալի հայրենակից ու դասակից Պարոն Ռեթէոս Պէրպէրեան՝ գրաբարեան, ուրիշ գրաբարեան երիտասարդի մը՝ Պարոն Յակոբ Գուրգէնի հետ՝ կը ձեռնարկէր նոր եւ աշխարհիկ ուղղութիւն մը տալ ազգային կրթութեան»: Ու նաև Մամուրյանի և Իփեքճյանի շնորհիվ՝ «մանկավարժական կենսաւէտ սկզբանց կը ծանօթանար Հայ երիտասարդութիւնն», Հակոբ Պարոնյանը «փառատուրապէս կը շարունակէր **Մեղուն**, եւ՝ գուցէ բարձրագոյն պաշտօն՝ **քննադատութիւն** կ'ուսուցանէր Հայ ժողովրդեան»: Իսկ այդ ամենին ուղղություն տվողն արդեն տասնվեցամյա Ազգային Սահմանադրության «հզօր ու խորհրդաւոր ձայնն» էր, որ «աստուածոց լեզուով կը բարբառէր եւ կը գոչէր առ Հայ երիտասարդութիւնն. «Աշխատեցէք, ո՛վ դուք, յուսալից երիտասարդներ որ թերեւս լաւագոյն օրերու պիտի տեսնէք նշոյլն հեռուանց...»: Ոգևորված երիտասարդական «նոր ոգու» այդ հզօր շարժումով՝ Եղիան չէր կասկածում, որ ինչպէս «ճառագայթք կեդրոնէ մը բնականաբար

<sup>11</sup> Դպրոցատէր հայտիիք եւ դպրոցատէր սանտիիք 1883, 174-175:

կը բղխին ու կը սփռուին, /.../ մայրաքաղաքէս ի գաւառս պիտի ծաւալէին իմացականութեան լոյսն եւ բարոյական կենաց սկզբունքն»<sup>12</sup>:

Նման լավատեսության հիմքերից մեկն էլ հայի ազգային հոգեկերտ-վածքի, բնավորության, հային բնորոշ հատկությունների քաջիմացությունն էր: Իսկ դրանց մեջ թերևս առաջնայինը, ըստ Եղիայի, հայի գործնական խառնվածքն է. «Ի՛նչ որ ալ ըսուի, Հայ ազգին ամենամեծ հանգամանաց մին է **գործնականութիւնն**», - գրում է նա: Ընդ որում՝ «բացարձակապէս անժխտելի» իրողություն է «Հայոց գործունէութիւնն»<sup>13</sup>: Նա համոզմունքով արձանագրում էր, որ հայերը՝ «Այր եւ կին, նախնական ժամանակներէն մինչեւ այսօր, կ'աշխատին հայրենի հողին վրայ. ժրաջան, պարագաներէն ալ գիտէ Հայն օգուտ քաղել ընդհանրապէս»: Ավելի խորանալով հարցի քննության մեջ, Եղիան հավաստում էր, որ հայի ազգային այդ հատկությունները գալիս են նրա հնդեվրոպական արմատներից. «Հնդեւրոպական ցեղերու գործունէութիւնն եւ ուշիմութիւնն հաստատուած են աշխարհիս ամեն կողմանց մէջ, - գրում է նա: - Ուստի անտեղի է զարմանքն, որ կը յայտնուի մերթ եւրոպացոց կողմէն, Հայ ազգին **եւրոպական** բարեմասնութեանց նկատմամբ: Այս Ասիական ազգն նո՛յն ցեղին կը վերաբերի, յումէ սերած են՝ այսօր քաղաքակրթութեան յառաջապահներն եղօղ ազինք. նո՛յն է մայրն Հայկական եւ Ֆռանսական լեզուաց. նո՛յն կլիմային տակ ծնած են Հայոց եւ Եւրոպացոց նախահարք»: Եղիան ընդգծում է, որ հայոց քաղաքակրթության արժեքները՝ դպրությունը, արվեստը, առևտուրը և այլն, ավելի ու ավելի ճանաչելի են դառնում եվրոպացիներին, հայտնաբերվում են նոր փաստեր և ապացույցներ, որոնցով «պիտի բարձրանայ մեր Արեւմտեան եղբարց համարումն ու պիտ'աւելնայ համակրութիւնն՝ իրենց սերակից Ասիաբնակ այս ազգին նկատմամբ»<sup>14</sup>: Իբրև իր խոսքերի հաստատում՝ նա նշում է, որ, օրինակ, Օսմանյան կայսրության մայրաքաղաքում ու գավառներում հայերի ձեռքով են մշակվում արհեստներն ու արվեստները, վաճառականության և հանրային կրթության ոլորտներում հայերն առաջ են անցել հույներից «Ասիական աշխարհին մէջ»: «Եւ այս ամենն՝ հաստատուած վիճակագրութեամբ՝ ի՞նչ կ'ապացուցանէ, եթէ ոչ Հայոց **գործունէութիւնն**, եւ Հայոց **գործնականութիւնն**»<sup>15</sup>, եզրափակում է Ե. Տեմիրճիպաշյանը: Ահա թե ինչու, ըստ Եղիայի, հարուստ դրամատերերը «պիտի բանան արտադրութեան նորանոր աղբիւրներ, արհեստից եւ առետրոց առջեւ նորանոր դուռներ, հայրենի բերքերուն համար նորանոր շահաստաններ»: Քանզի համոզված էր, թե «Բազում դրամազուլիք՝ նիւթական ու բարոյական՝ այժմ կը քնանան»: Եվ դա առավել քան աններելի էր, որովհետև «քնոյ ժողովուրդ չէ

<sup>12</sup> Միացեալ ընկերութիւնք Հայոց 1883, 222-223:

<sup>13</sup> Գրասէր Ատոմ 1884, 118:

<sup>14</sup> Գրասէր Ատոմ 1884, 118-119:

<sup>15</sup> Գրասէր Ատոմ 1884, 120:

Հայն, այլ գործոյ»: **Դա փաստորեն ազգային կյանքի, տնտեսության, կրթության ու մշակույթի արմատական բարեփոխումների կոչ էր Եղիայի կողմից, ծրագրային նախադրույթներ՝ հանուն ազգային զարթոնքի իրագործման:** «Ժամ է ուրեմն ամփոփել ցիրուցան ոյժերն, - գրում է նա,- հաւաքել եւ արդիւնաւորել ժամանակէ մը հետէ թաղուած եւ անգործածութեան դատապարտուած դրամագլուխներն»: Բայց այստեղ է, որ ի հայտ են գալիս Ե. Տեմիրճիպաշյանի՝ Մարսելի առևտրական քոլեջում ուսանած տնտեսագիտական գիտելիքները: «Անշուշտ մեր փափագն այն չէ թէ բոլոր դրամագլուխք ի մի վայր գումարուին, եւ Հայ ազգն ուրիշ բան չըլլայ՝ բայց եթէ դրամատեսարց ընկերութիւն մը», - զգուշացնում է Եղիան: Ըստ նրա՝ «Տնտեսագիտական առողջ սկզբունքներն անտեսած եւ ընկերակցութեան գաղափարին տարապայման ընդարձակութիւն մը տուած պիտ'ըլլայինք, այսպիսի ընկերութեան մը վրայ խորհելով»: Ուրեմն ի՞նչ պետք էր անել՝ «Անհատական նախագործութեան ոգւոյն պէտք է թողունք ամեն ազատութիւն, - խորհուրդ է տալիս Եղիան, - այլ պէտք է «տնտեսութեան խտացուցիչ» եւ ազգային զարգացման փութացուցիչ՝ խնայութեան ու փոխատուութեան դրամատուններ ունենանք. պէտք է հոս թէ՛ գաւառաց մէջ, թէ՛ Եւրոպիոյ մէջ դրամատուններ եւ՝ եթէ հնար է՝ մեծ ազգային դրամատուն մ'ունենանք, որպէս զի դրամագլուխք կարենան աւելի շահաբեր ըլլալ, որպէս զի ճարտար ձեռքերն ու հնարող միտքերն արդիւնաբեր կարենան ըլլալ...»: Եղիա Տեմիրճիպաշյանը գոհունակությամբ էր նշում, որ «Տնտեսական գիտութեան աւագ կարելորութիւնն սկսած է Հայ ազգին մէջ զգացուիլ»: Ըստ նրա՝ այդ մասին էին վկայում Հայկական կրթարանի և Պերպերյան վարժարանի հայտարարագրերում այդ գիտության ներմուծումը, «Մասիսի» ու «Արեւելքի» էջերում ինքնուրույն ու թարգմանական տնտեսագիտական հոդվածների հրապարակումները, դասագրքերի տպագրությունը<sup>16</sup>: Սկսել էին հաստատվել «Եւրոպական տնտեսական կամ շահակցական ընկերութիւնք»՝ տարբեր երկրների ժողովուրդների ներկայացուցիչներով: Վերջապես, ոչ թե թղթի, այլ «գետնի վրայ», այսինքն՝ իրականորեն, հիմնվել էր նաև «**Արեւելեան տնտեսական միութիւնն**», որի նպատակն էր «Խնայութեան, տնտեսութեան վարժեցնել աշխատաւոր դասերն. անզգալապէս կալուածատէր ընել անստացուած մարդիկն. եղբայրութեան մեծ գաղափարն ե՛ւս առաւել ծաւալել եւ արդիւնաւորել»<sup>17</sup>:

Տնտեսականի հետ, սակայն, **ըստ Եղիա Տեմիրճիպաշյանի, ազգային առաջադիմությանը նպաստող ամենակարևոր ազդակներն են նաև կրթությունն ու գիտությունը, արվեստը, մշակույթն ու գրականությունը:** Բանավիճելով նյութական արժեքներ ստեղծող աշխատանքն առավել հա-

<sup>16</sup> Գրասէր Ատոմ 1884, 122-123:

<sup>17</sup> Ե. 1886, 130-131:

մարողների հետ՝ նա պաշտպանում էր նաև հոգեմտավոր արժեքներ ստեղծող անհատների աշխատանքը՝ որպես հասարակության և ազգի հարստության աճի հիմնարար աղբյուր: «Հարցո՛ւր յաւէտ կամ նուազ ուսեալ արհեստագործներուն՝ թէ ոչ միայն երկրի մը, հապա բոլոր երկրին, հապա բոլոր ազգաց հարստութիւնն ալ չաւելցուցի՞ն այն մարդիկ, որք աշխարհներ գտան երկրի վրայ եւ աշխարհներ երկնից մէջ, որք՝ մտածելով ու մատենագրելով՝ դիրացուցին ազգաց յարաբերութիւններն, որք՝ մտածելով ու հաշուելով՝ օժտեցին մարդկութիւնն այնքա՞ն նորանոր գործիքներով ու մեքենաներով, որք մտածելով ու մարտնչելով՝ տարածեցին լոյսն հոս ժողովրդական դասուց մէջ եւ հոն վայրենի եղկելի ժողովրդոց մէջ»<sup>18</sup>: Ի վերջո, գրականությունն էր, որ հատկապես Սրբուհի Տյուսաբի «Մայտա», «Սիրանոյշ» վեպերի միջոցով հայ հասարակության մեջ բարձրացնում էր կնոջ ազատագրության խնդիրը, մի բան, որ, ըստ էության, հենց ժամանակի պահանջն էր և «զա՛յդ ահա Տիկին Սրբուհի Տիւսաբէ կ'ակնկալէր Հայ ազգն», այսինքն՝ «Իրաւունք ինչի՞. - լուսոյ, սիրոյ, կենաց՝ ի մի բառ»<sup>19</sup>:

Եղիա Տեմիրճիպաշյանի համոզմամբ՝ **ազգային վերելքի, զարթոնքի, առաջադիմության խնդիրը չի կարող արմատապես լուծվել առանց աշխարհի, այլ երկրների ու ժողովուրդների հետ բազմազան ու բազմաբովանդակ շփումների**: Այս տեսակետից նրա համար չափազանց մտահոգիչ էր, որ «Ռօպէրդ – Գօլէճի նախագահ Տօքթօ Ճօրճ ՎՈՇՊԸՐՆ»՝ ամերիկյան նշանավոր շաբաթաթերթերից մեկում հայ ազգի և Հայաստանյայց եկեղեցու մասին գրած հոդվածի մեջ, նշում էր, թե յանկիները «ըզՀայս վայրենի ժողովուրդ մը կը կարծեն անգիր եւ անկրօն»<sup>20</sup>: Պակաս մտահոգիչ չէր Կովկասից եկած այն լուրը, թե պետական հրամանով փակվել էին ռուսահայոց բոլոր ուսումնարանները, որովհետեւ «Սինօղը կը մերժէր 1884 տարւոյ Փետր. 16/ի օրէնքն»: «Ծնօղք եւ ուսանօղք արտակարգ կերպիւ յուզուած են այս փակման պատճառաւ», - ասվում էր հաղորդման մեջ: Բայց դա դեռ բավական չէր. նշվում էր նաև, որ «Պրոկուրօրն իր պաշտօնէն հրաժարելով բարձրագոյն հրամանաւ, յաջորդ կ'ունենայ Տիդիսի խստադաժան գրաքննիչ հայատեաց Մանաստիրցեվն, որոյ հայրն է Ռուս եւ մայրն Հայ»<sup>21</sup>:

Բացասականի հետ, սակայն, կային, իհարկե, նաև դրական տեղաշարժեր: Եղիա Տեմիրճիպաշյանը գտնում էր, որ Եվրոպա կամ Ամերիկա ուղարկված հայ երիտասարդները «ի հայրենիս վերադարձին իրենց ուսումնական հայրենեաց /այսինքն Երոպիոյ եւ Ամերիկայի/ ժողովրդոց բարքերն ու ձգտումներն յաւէտ կամ նուազ կը բերեն կը ներմուծեն Հայ ժողովրդեան մէջ»: Ընդ որում, հատկանշական է, որ նա որոշակիորեն ընդգծում էր, թե որ

<sup>18</sup> Տեմիրճիպաշյան 1886, 151:

<sup>19</sup> Սիրանոյշ 1885, 121:

<sup>20</sup> Ամսացոյց 1885, 53:

<sup>21</sup> Երկամսացոյց 1885, 90-91:

երկրից հատկապես ի՛նչ էր ներմուծվում հայ իրականություն: Ըստ այդմ՝ Ֆրանսիայից վերադարձող երիտասարդները «գեղեցիկ դպրութեանց», Իտալիայից՝ «գեղեցիկ արուեստից», Անգլիայից՝ «վաճառականութեան ու ճարտարութեան», Շվեյցարիայից ու Գերմանիայից՝ «մանկավարժութեան եւ իմաստասիրութեան», Ամերիկայից /ինչպես նշում էր փակագծում՝ «եթէ լինին»/՝ «պարզասիրութեան եւ օգտասիրութեան ճաշակ կը բերեն միասին»: Ու Եղիան համոզված էր, որ «կէս դարէ ի վեր ազգային յառաջադիմութիւնն այս կերպով կը բացատրուի գլխաւորապէս»<sup>22</sup>:

Եղիան ազգային հպարտության արժանի իրողություն էր համարում նաև օտար երկրներում վաստակած իրական ճանաչումն ու հեղինակությունը: «Երբ Հայ անունն եւրոպական մամլոյն մէջ կը տեսնուի՝ իբրեւ համանիշ տաղանդի եւ բարոյական արժանիքի, - գրում է նա, - Հայ հրատարակիչն անտարակոյս կը հրճուի եւ իր հրատարակութեան հարիւրաւոր ձայներով կը փութայ ջերմապէս խնդակցիլ այն ազգայնոց՝ որք յեւրոպա կը պանծացունեն Հայութիւնն»<sup>23</sup>:

Այս իմաստով չափազանց ուշագրավ է նաև «Շարժումի» էջերում Եղիա Տեմիրճիպաշյանի՝ «սիրտ ի թնդուջ» հրատարակած «Մեծաշուք Գուիսօն Իշխան Լուսինեանի» մի «սրտայոյզ» նամակը, որտեղ պատմվում է Փարիզի Լուսինյանների կալվածում աշխարհահռչակ Վիկտոր Հյուգոյի կյանքի վերջին մի քանի տարիներին դրկից հարևանությամբ /«վարձաբնակ տնակից»/ ապրելու և նրա հետ սերտ մտերմության մասին: Նամակագիրը, սակայն, շեշտում էր հատկապես այդ իրողության համազգային նշանակությունը, ցավ հայտնելով, որ Եղիայի «ոգին, սիրտն ու հանճարն ունեցող Հայ մի չգտնուեցաւ հոս, որ այս բացառիկ պարագայէն օգուտ քաղելով՝ աշխարհիս տարփողէր որ իւր անչափ ողբացած տիեզերահռչակ Հիւլօն Հայ զաւակաց օթեանն ութ տարի իբրեւ հիւր սիրամեծար հանգչեր, հոն հրաշակերտներ արտադրեր եւ հոն իւր անմահ վեհագն հոգին իւր **աստուածացունն** /aphote'ose/ ընդուներ էր»: Գվիդոն Լուսինյանն առանձնահատուկ հպարտությամբ էր հիշատակում ֆրանսիական պարբերականների հրապարակումներն այն մասին, «թէ Քերթողահայրն Լուսինեան իշխանին եւ իշխանուհոյն տունը կբնակէր, եւ այսպէս նորա անմահ անուան մշտայոյշ լծորդեցին Լուսինեան անունն», միաժամանակ ավելացնելով, թե «յանհունս ուրախ լինէի եթէ այս չքնադագիւտ առթով սիրելի Հայոց ազգիս անունն հռչակուէր, եւ ազգաց եւ ազանց զինքը նախանձելի հանդիսացուցանելով՝ Վիքթօր Հիւլօյին հետ զնա յաւերժայիշատակ կացուցանէր...»<sup>24</sup>:

<sup>22</sup> Ե. 1886, 174:

<sup>23</sup> Տիգրան Չուհաճեան եւ Մարտիկ Յակոբեան 1884, 119-120:

<sup>24</sup> Վիգորտ Իւլօ եւ Իշխան Լուսինեան 1885, 126-127:

Այդպես, Եղիա Տեմիրճիպաշյանը հենց «Շարժում»-ի ճակատին հրապարակում է նաև «մեծանուն ֆռանսացի գրադատ» Ֆրանցիսկ Սարսէի՝ իր մորաքեռորդի Ներսես Ներսեսյանին գրած նամակը, նույնիսկ վերջինիս «կամացն հակառակ», ընդգծելով, որ «Սառսէյի թղթոյն պատինն՝ որքա՛ն սիրելի մորաքեռորդոյս նոյնքա՛ն կը պատկանի սիրելի ազգիս»<sup>25</sup>:

### Հասարակության և անհատի փոխհարաբերության խնդիրը

Եղիա Տեմիրճիպաշյանի 80-ական թվականների հրապարակումներում գլխավոր շեշտադրում ունեն հասարակության և անհատի փոխհարաբերության խնդիրը ևս: Ընդ որում, այն դիտվում էր տարբեր կողմերից: Բանաձևելով, թե «Ներելի է ժողովրդեան վրիպիլ, այլ ներելի չէ Բանի՛ն քարոզիչներուն՝ վրիպանաց մէջ պահել ժողովուրդն», նա գրում է. «Հարստութիւնն արդիւնք է. եւ հարստութեան պատճառն է մարդն», բայց ժողովուրդը վրիպում է, երբ հարստությունը նկատում է «աւելի քան մարդն, առարկայն աւելի քան ենթակայն...»: Եվ ապա՝ «...մարդուս հարստութիւնն ու զօրութիւնն ու մեծութիւնն ի՛նչ բանի մէջ կը կայանան, եթէ ոչ իւր Բանին մէջ, իւր մտաց մէջ, իւր մտաց ու սրտին զարգացման մէջ»: Ըստ Եղիայի, նրանք, որ միայն նյութականը, դրամն են համարում հարստություն ու զորություն, պարզապես շփոթում են արդյունքը պատճառի և դրամը դրամագլխի հետ: Մինչդեռ բուն հարստության պատճառը մարդն է, ստեղծագործ անհատը, որ «հարստութիւն կ'արտադրէ ձեռքով ու մտքով, աշխատութեամբ ու գիտութեամբ»<sup>26</sup>: Ահա թե ինչու նա դավանում էր այն ճշմարտությունը, թե «Ազգի մը բոլոր անհատք /և առաջին հերթին ազգային բուն՝ հոգեմտավոր հարստությունն ստեղծողները – Պ.Դ./ պետք է կարօղ ըլլան կանգուն քայլել եւ ոչ կորագլուխ...»<sup>27</sup>: Մյուս կողմից, սակայն, ըստ Եղիայի, ճիշտ չէ ազգային կյանքում ավելի կարևորություն ընծայել «անձանց քան հաստատութեանց»: Ընտրելով ազգային կամ կրոնական առաջնորդներին՝ ժողովուրդը չպետք է թաղվի անտարբերության մեջ և հրաժարվի ամեն իրավունքներից՝ «թողլով ընտրելին ամեն գործ եւ ամեն պատասխանատուութիւն»: Այդպես, ժողովուրդն «ամեն բան առաջնորդէն կ'ակնկալէ դեռ ընդհանրապէս, Գաւառն ամեն բան Կեդրոնէն կ'ակնկալէ, Կեդրոնն ալ ամեն բան կ'ակնկալէ Բարձրագոյն Դռնէն: Չիք անհատական, տեղական, ընկերական գործողութիւն. չիք գործունէութիւն»: Ի վերջո, անցած 1885 թվականի ազգի վիճակի իր հետադարձ ակնարկը Ե. Տեմիրճիպաշյանն ամփոփում է, այսօրվա լեզվով ասած, **իշխանության ապակենտրոնացման, հասարակության մեջ անհատի դերի մեծացման և իրավունքների պաշտպանության** մասին հրաշալի ակորդով. «Եւ ահա կուգամ հոչակել թէ Հայոց մէջ այնքա՛ն կեդրոն, այնքա՛ն

<sup>25</sup> Ֆռանսիսք Սարսէ առ Տ. Ներսէս Ներսէսեան 1885, 141:

<sup>26</sup> Ե. 1886, 290-291:

<sup>27</sup> Կրօնք եւ Գիտութիւն 1885, 183:

վարչություն կայ որքան եկեղեցի, որքան զանգակատուն. կուգամ հոչակել թէ Աստուած այնքան կը փառաւորուի որքան անհատն ինքն իւր անձին վրայ վստահի, որքան Հայն աշխատի եւ իւր իրաւանց տէր կանգնի»<sup>28</sup>:

### **Քաղաքակրթության զարգացման ներկա փուլի գնահատությունը**

Հողվածից հողված ընդլայնելով քննվող խնդիրների շրջանակը՝ Եղիա Տեմիրճիպաշյանը մի ընդհանրական ակնարկ է նետում քաղաքակրթության զարգացման ներկա փուլի վրա՝ փորձելով գնահատել նաև նրա ազդեցությունը ազգի ու անհատի, ժամանակակից կյանքի ձևավորման գործում: Ընդ որում, ակնարկը սկսվում է Եղիային հատուկ պատկերավոր մտածողության տպավորիչ մի դրվագով. «Եթէ մարդ թոչնահայեաց ակնարկ մ'այսօր աշխարհին վրայ ձգէ, - գրում է նա, - թոչնոյ ճիչ մ'ալ պիտ'արձակէ ցնծութեան՝ երկրի վրայ տեսնելով գրեթէ այնքան փայլուն կէտեր ո՛րքան երկնակամարին վրայ կ'երեւին երեկոյին: Այդ լուսաւոր կէտերն՝ աւելորդ է ըսել՝ քաղաքներն են, յորս կը ծաւալի գիտութեան լոյսն: Եւ երկրիս այս տեսարանն աւելի գեղապայծառ է թերեւս քան աստեղազարդ կամարին գիշերախառն այն տեսարանն»: Իսկ ո՞րն է, ըստ Ե. Տեմիրճիպաշյանի, երկնային ու երկրային այդ լոյսերի միջև եղած տարբերությունը: Եղիան ունի նաև դրա բացատրությունը՝ եթէ «Յերկինս՝ աստեղք անջա՛տ յիրերաց կ'ապրին, անջատօրէն անսահման տարածութեան մէջ կը թաւալին», ապա «Յերկրի քաղաքք համայնք կապուած են միմեանց՝ մարդկային իմացականութեան եւ աշխատութեան արդիւնքն եղող գետնածիփ եւ օդածիփ մետաղեայ նուրբ գիծերով, որք են **փոխադրութեան ուղիքն**. - ուղիք փոխադրութեան ապրանաց ու գաղափարաց»<sup>29</sup>: Ապա նա հիշատակում է քաղաքակրթության շնորհիվ ազգային ու հասարակական կյանքում կատարված էական բարեփոխումները՝ «ահա՛ կինն ուսեալ եւ ուսուցիչ, բանաստեղծ եւ իմաստասէր է, համալսարանաց վկայականներով բժիշկ եւ իրաւաբան է այսօր», մարդն ընդհանրապես՝ «ամենափոքր հիւլէէն մինչեւ ամենամեծ աշխարհներն իր քննութեան եւ կերպի իւր իր հշխանութեան ենթարկելով, ծանօթանալով իր ծագման, եւ՝ իր մեծութեան հետ՝ իր փոքրութեան ալ գիտակցութիւնն ունենալով, եղաւ մարդն՝ ի Մանդուայ կարապէն երանեալ էակն»<sup>30</sup>: Եվ ապա՝ քաղաքակրթության շնորհիվ, «Այն էակն, որ ստեղծագործութեան վրայ սքանչանալ իսկ ոչ էր կարօղ, ոչ միայն տիեզերաց մէն մի սքանչելիքներն ուրոյն կը դիտէ եւ կը դատէ կը գնահատէ, այլ եւ /.../ ինքն իսկ ստեղծիչ մ'է»<sup>31</sup>:

<sup>28</sup> Յետադարձ ակնարկ 1885, 199-200:

<sup>29</sup> Ակնարկ մը քաղաքակրթութեան վրայ 1886, 1:

<sup>30</sup> Ակնարկ մը քաղաքակրթութեան վրայ 1886, 3: Նշված համեմատությունը պարզաբանելու համար Ե. Տեմիրճիպաշյանը բերում է նաև Վիրգիլիոսի «Մշակականք»-ից համապատասխան մի հատված:

<sup>31</sup> Ակնարկ մը քաղաքակրթութեան վրայ 1886, 5:

Այդուհանդերձ, ըստ Եղիայի, քաղաքակրթությունն ինքնին դեռ բավարար չէ, ազգը, անհատը պետք է կարողանա ճիշտ և արդյունավետորեն օգտվել ժամանակի, քաղաքակրթության ընձեռած բարիքներից<sup>32</sup>: Քննադատական խոսք ուղղելով նրանց հասցեին, որոնք «Պատրիարքության ու Կաթողիկոսության համար արժանագոյն կը յամարին ա՛յն անձերն՝ որք անելի գիրք հրատարակած են քան թէ գործ կատարած», Ե. Տեմիրճիպաշյանն այն համոզմունքն է հայտնում, թե «գրագիտական կամ ատենաբանական կարողութիւնն անբաւական է ժողովրդապետի մը համար»: Ըստ նրա՝ ճիշտը, արդյունավետը այդ «կրկին կարողութիւնների» համատեղումն է մեկ անձի մեջ՝ «ինչ որ հազուագիտ է», սակայն այդ դեպքում է միայն, որ նման «անհատն, անտարակույս, պէտք է բազմի բարձրագոյն աթոռին վրայ...»: Այդ կապակցությամբ պեղելով համաշխարհային պատմության մեջ եղած դասական օրինակները՝ Եղիան բացականչում է. «Պէրիկլէսի ծնունդն ունեցող անձ մը չը՞ պիտ'երեւի Հայ եկեղեցականութեան մէջ...»<sup>33</sup>:

Նույն հոդվածում Եղիա Տեմիրճիպաշյանը մեկ անգամ ևս անդրադառնում է նաև հայկական գավառների վիճակին՝ ահազանգելով, թե «Մերինին նման կրօնական ազգի մը մէջ, ուր առաջնորդն ամեն բան է եւ ամեն բան ընել կարող է, անելի ցաւալի բան մը կա՞ միթէ քան բիւրաւոր ազգայնոց հայրենի հողին վրայ յաճախ իրապէս անառաջնորդ մնալն»: Նրա համոզմամբ՝ այդ վիճակն ուներ «կրկնապէս աղետաբեր արդիւնք»՝ կենտրոնից կտրված կյանքի անփոփոխությունն ու զանազան աղանդների և միսիոներական խմբերի /«Ամերիկացի քարոզչաց»/ աշխուժացումը: Իսկ որո՞նք էին առաջադրված հարցերի լուծումները. նախ՝ «Ի մայրաքաղաքիս դեգերող եւ հոն բոլորովին հաստատուելու համար ձեռնարկներ ընող /«պառկելու տեղ» հայթայթելու համար ընկերութիւններ կազմող/» եկեղեցականներին ուղարկել գավառները, և ապա՝ հատուկ հաստատություններում կարող առաջնորդներ պատրաստել գավառների և, ընդհանրապէս, հայ ազգի համար: «Ահա՛ այս մեծ գործին վրայ պարտի խորհիլ Կրօնական Ժողովն իր Բարձրաշնորհ Նախագահին հետ», - եզրափակում է Եղիան<sup>34</sup>:

Ի վերջո, 1887 թվականի «նոր տարւոյն օրն», ինչպէս ամեն «Անհատ եւ Ազգ», Եղիա Տեմիրճիպաշյանը ևս հարց էր տալիս իրեն՝ «Ի՞նչ կը սպասէ մեզ»: «Անհատական կամ անձնական տրամադրութեանց վրայ ճնշում ի գործ դնելով, - գրում է նա, - պիտի ջանամ պաղարեամբ նկատել ներկայն եւ նախատեսել ապագայն»: Ըստ այդմ՝ «Հայութեան ներկայն» նրան ներկայանում էր իրատեսական գնահատմամբ՝ որպէս բանական և օրինաչափ փոփոխությունների մի կարևոր հանգրվան: Եթե նույնիսկ ամենապինդ մե-

<sup>32</sup> Առաջնորդական խնդիր 1886, 20:

<sup>33</sup> Առաջնորդական խնդիր 1886, 18-19:

<sup>34</sup> Առաջնորդական խնդիր 1886, 21-22:

տաղն է փոփոխություն կրում խոնավության ու ջերմության ազդեցությամբ, «ազգերն այդ ազդեցութենէն զե՞րձ պիտի մնային», հարցնում է Եղիան՝ եզրակացնելով, որ «Մարդկութիւնն՝ այսպէս՝ բնական օրինօք կը վարի»: Ի դեպ, դատողությունների այս շղթան հիմնվում էր ոչ միայն հասարակագիտական, այլ նաև առավել խորքային՝ իմաստասիրական գիտելիքների ու պատկերացումների վրա: Խոսելով նյութի հարատև զարգացման բնական օրենքի մասին՝ նա ընդգծում է, որ դա տեղի է ունենում ինչպես նյութի «յատկութեանց», այնպես էլ **«անհասանելի զօրութեան մը»** շնորհիվ /ընդգծումը մերն է – Պ.Դ./: Այդպես, ըստ նրա, «ամեն մէկ գիտի հետ» /նշում է հաղորդակցության միջոցների զարգացումը, վաճառականության խթանումը, պատերազմների պատճառով ժողովուրդների տեղաշարժերն ու փոխազդեցությունները, տեխնիկայի զարգացումը և այլն/ փոխվում է նաև մարդը, որն «աւելի կը մօտենայ աստուածութեան, կամ պարզ բացատրութեամբ մը՝ աւելի կը մօտենայ կատարելութեան»<sup>35</sup>:

80-ական թվականների իր հրապարակագրության մեջ **Եղիա Տեմիրճիպաշյանը հանդես էր գալիս որպես գիտական, իմաստասիրական, գեղագիտական առաջադիմական մտքի նվաճումների համոզված պաշտպան ու քարոզիչ**: «...վա՛յ անոր, որ կը մարտնչի ժամանակին ոգւոյն դէմ<sup>36</sup>», - մի առիթով բացականչում է նա: Միաժամանակ գտնում էր, որ ամեն բան այդքան միանշանակ չէ. նոր ժամանակը, արդի դարը բարդ է և իր էության մեջ հակասական՝ «Դար մը՝ միանգամայն պղնձի, երկաթի, արծաթի եւ ոսկիի. դար մը՝ մարդկութեան նման ծեր եւ բնութեան նման կենդանառոյգ, - գրում է նա, - դար մը՝ որ երկրագունտն իւր ոտից տակ եւ երկինքն իւր ուսոց վրայ առած՝ կը քայլէ, փոխելով ովկէանոսներն ի գոլորշի եւ հին աստուածներն ի փոշի. իւր մատին ծայրով կը շարժէ նա հսկայ մեքենաներ, եւ իւր մատիտին ծայրով կը սարսէ հսկայ կայսրութիւններ. մրցման, ծայրայեղ յիմարական մրցման զմարդկութիւն կը հրաւիրէ իւր համատարած համաթափանց ակնարկն, եւ գթութեան եւ եղբայրութեան յորդոր կը կարդայ իւր ձայնն, որ սարսեցուցիչ բան մ'ունի որքան հմայիչ. /.../ ամենաքաղաքակիրթ երեւոյթին ներքեւ՝ ամենավայրենի բնութիւն մ'ունի. կ'աստուածացնէ Նիւթն, եւ յետոյ կ'աղաղակէ - Նիրվանա՛, Ոչնչութիւն...»<sup>37</sup>:

Բայց հակասությունների անվերջ թվացող այս շարքը արդյո՞ք արդի մարդուն պիտի մղի անհուսության ու հոռետեսության: Մի՞թե չկա լույսի որևէ շող մութ թունելի ծայրում: Ե. Տեմիրճիպաշյանը ոչ միայն համակարծիք չէ դրան, այլև մատնանշում է դրությունից դուրս գալու իրատեսական ելքերը: «Ես իմաստասիրաբար ներկայացուցի քաղաքակիրթ ընկերութեան վիճակն, ոչինչ ծածկելով, համառօտակի միացնելով ընդհանուր պատկերի

<sup>35</sup> Ե. 1887, 50-51:

<sup>36</sup> Ե. 1887, 228:

<sup>37</sup> Մեր դարն 1886, 138-139:

մը մէջ ինչ որ անջատ անջատ կը տեսնենք կենաց ընթացքին մէջ», - գրում է նա: Որպէս ելք հակասությունների նկարագրված իրավիճակից՝ առաջարկում է «վայրենի մարդկության վիճակն» համեմատել «Եւրոպական քաղաքակիրթ ընկերության վիճակին հետ»՝ հավատացնելով, թե «որքա՛ն տարբեր յայնժամ պիտի երեւի մեզ մեր ընկերութիւնն. իւր լաւ կողմերն, իւր լոյսերն յայնժամ պիտի տեսնենք մանաւանդ»<sup>38</sup>:

Ընդհանուր մարդկայինից անցում կատարելով ազգային կյանքի բարեփոխման խնդրին՝ Ե. Տեմիրճիպաշյանը «Ժամանակի ոգի» հասկացության կողքին շեշտադրում է նաև «ազգային ոգու» առանձնակի կարևորությունը: «Երեք ուամունք պարտաւորիչ ըլլալ պարտին յաւէտ մերինին նման ազգի մը մէջ մանաւանդ. **ազգային լեզու, ազգային պատմութիւն, ազգային-կրօնական կրթութիւն կամ քաղաքային կրթութիւն**», - գրում է նա: Իսկ ավելի ընդհանուր առմամբ, **Ազգային վարչությունը «ամէն բանէ առաջ պարտի ազգային ոգի կրել, /.../ առաջին պարտքն ա՛յդ է. հսկել իրապէ՛ս՝ /.../ ազգային դաստիարակութեան վրայ» /ընդգծումները մերն են - Պ.Դ./**<sup>39</sup>:

**«Սահմանադրութիւնն ազգին օրէնքն է, ազգային վարչութեան կանոնագիրն է...»**

Վերջապէս, ազգային զարգացման, քաղաքակրթական առաջադիմության ճանապարհին, Եղիա Տեմիրճիպաշյանի համոզմամբ, բացառիկ էր Ազգային Սահմանադրության ընդունումը: «Հայութեան համար մեծ դարագլուխ մը կը համարուի 1860, թուական հաստատութեան ազգային Սահմանադրութեան», - ոչ առանց հպարտության հայտարարում է նա՝ հայության գլխավոր օրենքի ընդունման 25-ամյակի կապակցությամբ գրած հոդվածում: Ու թեև, ցավոք, այն բոլորի կողմից միանշանակ չի ընդունվել, սակայն արտակարգ կարևորություն ունի ազգային կյանքի բարեփոխման համար: Ե. Տեմիրճիպաշյանը, ըստ էության, ներկայացնում է հասարակական ընկալման տարբեր շերտերը, ի վերջո, խնդիրը քննելով **իրատեսական** հարթության վրա: Պատասխանելով «Ուրեմն ի՞նչ է Սահմանադրութիւնն» հարցին՝ նա գրում է. «Ոչ պարիկ է այն՝ որպէս կը հաւատայի, ոչ համադեղ մը՝ որպէս ոմանք կարծեցին, եւ ոչ հակաբուն հակազգային ու մահաբեր ինչ՝ որպէս այլք քարոզէին եւ դեռ կը քարոզեն: Սահմանադրութիւնն ազգին օրէնքն է, ազգային վարչութեան կանոնագիրն է՝ ազգային ամենդրութիւններէն եւ Հայաստանեայց եկեղեցոյն ծոցէն հանուած եւ ամենազարգացեալ ազգաց սահմանադրութեամբք բարեխառնուած: /.../ Օրէնքն առ Հայս իւր վերջին շրջանին մէջ կը մտնէ տոյն թուականին հետ. հաստատութեամբ ազգային Սահմանադրութեան, Հայ ազգն ալ՝ տոյն թուականին՝ կը մտնէ

<sup>38</sup> Մեր դարն 1886, 144:

<sup>39</sup> Ե. 1887, 240:

հետեաբար քաղաքակրթության վերջին, բարձրագույն շրջանին մէջ»<sup>40</sup>: Վերջապես, ի մի բերելով ամբողջ ասվածը, Ե. Տեմիրճիպաշյանը սահմանում է, որ «Ազգային սահմանադրութիւնն՝ ազգային բարեշրջութեան արդիւնքն է» (ընդգծումը մերն է – Պ.Դ.)<sup>41</sup>:

### Եզրակացություններ

Եղիա Տեմիրճիպաշյանն ընդհանրապես հանդես է գալիս որպէս բնության, ազգային թե մարդկության կյանքում **բարեշրջության** համոզված կողմնակից ու ջատագով: Նրա համար անհասկանալի և տարօրինակ էր, որ «ոմանք կը խրտչին, կը գայթակղին իսկ ի լուր այս բարեշրջութիւն անուան»: Ըստ Եղիայի՝ բարեշրջությունը պարզապէս առաջադիմության հոմանիշն է, «նոր անունն է յառաջադիմութեան»:

Պայքարելով առաջադիմության համար՝ Եղիա Տեմիրճիպաշյանը տեսնում էր, սակայն, որ այն շատ դանդաղորեն է ընթանում: Շատ հաճախ բախվում է անհասկացողության կամ անհանդուրժողականության պատին: Գիտության՝ մարդու, բնության, հասարակության ու տիեզերքի մասին պատկերացումների ընդլայնումն իր հետ բերում է ոչ միայն դրական, այլև բացասական իրողություններ, երբեմն անդառնալի հետևանքներով, որը խորապէս մտահոգում էր շատերին, այդ թվում իրեն՝ Եղիային: Բայց խնդիրը միայն հայի կամ ազգի մէջ չէ: Ե. Տեմիրճիպաշյանն աստիճանաբար լայնացնում ու խորացնում է հարցադրումների շրջանակը՝ ներառելով ընդհանրապէս մարդու և մարդկության արդի վիճակի և ապագայի, ճակատագրի խնդիրը: Եվ վերջապէս, ամենագլխավոր հարցը՝ «Ո՞ր կ'երթանք: Ո՞ր կ'երթայ Հայութիւնն. Ո՞ր կ'երթայ մարդկութիւնն»: Պատասխանն անորոշ է՝ «Չը գիտեմ»: Կան սոսկ ապագայի մշուշոտ կանխազգացողություններ՝ տագնապի և հուսալքության, մինչև անգամ ինքնադատապարտման շեշտերով. «Կը զգամ որ չենք երթար դէպ ի լան, ո՛չ իբրեւ Հայ, ո՛չ իբրեւ մարդ (առաջին եզրն անելորդ չէ՛)»: Հոգիս տրտում է ցը մահ...»<sup>42</sup>:

### Օգտագործված գրականություն

Գրասէր Ատոմ 1884, Դիցուիին ի բանտի, Երկրագունտ, թիւ 3, էջ 124-127:

Գրասէր Ատոմ 1884, Ազգային յատկութիւնք եւ ազգային դրամատունք, Երկրագունտ, թիւ 3, էջ 118-124:

Ե. 1886, Արեւելեան տնտեսական միութիւն, Երկրագունտ, թիւ 3, էջ 130-133:

Ե. 1886, Նոր դասագիրք Թուրքիոյութեան /Գ. տպագրութիւն/, Երկրագունտ, թիւ 4, էջ 173-174:

Ե. 1886, Առաջնորդող դասն ո՛րն է, Երկրագունտ, թիւ 7, էջ 289-297:

Ե. 1887, Ի՞նչ կը սպասէ մեզ, Երկրագունտ, թիւ 1-2, էջ 49-53:

Ե. 1887, Եկեղեցական բարեկարգութիւն, Երկրագունտ, թիւ 5-6, էջ 226-230:

<sup>40</sup> Սահմանադրութիւն 1886, 98:

<sup>41</sup> Սահմանադրութիւն 1886, 102:

<sup>42</sup> Առաջին խօսք 1887, 3:

- Ե. 1887, Տուրքի խնդիրն եւ ազգային դաստիարակութիւն, Երկրագունտ, թիւ 5-6, էջ 239-240:  
 Տեմիրճիպաշեան Ե. 1886, Կրթական խնդիր, Երկրագունտ, թիւ 4, էջ 145-160:  
 Անստորագիր /Տեմիրճիպաշեան Ե./ Ակնարկ մը քաղաքակրթութեան վրայ, 1886,  
 Գրական և իմաստասիրական շարժում /ԳԻՇ/, տետր առաջին, էջ 1-6:  
 Ամսացոյց 1885, ԳԻՇ, տետր երրորդ, էջ 52-56:  
 Առ Բարձրաշնորհ Տ. Ներսէս Վարժապետեան Հայոց պատրիարք 1883, ԳԻՇ, տետր Բ.,  
 էջ 24-32:  
 Առաջին խօսք 1887, ԳԻՇ, տետր առաջին, էջ 1-3:  
 Առաջնորդական խնդիր 1886, ԳԻՇ, տետր երկրորդ, էջ 17-22:  
 Դպրոցասէր հայուհիք եւ դպրոցասէր սանուհիք 1883, ԳԻՇ, տետր Թ., էջ 169-176:  
 Երեսփոխանական ընտրութիւնք 1883, ԳԻՇ, տետր Ե., էջ 91-95:  
 Երկամսացոյց 1885, ԳԻՇ, տետր հինգերորդ, էջ 89-92:  
 Ժամանակակից պատմութիւն /Հարեանցի ակնարկ/ 1883, ԳԻՇ, տետր Բ., էջ 38-44:  
 Կրօնք եւ Գիտութիւն 1885, ԳԻՇ, տետր տասներորդ եւ մետասաներորդ, էջ 179-185:  
 Մեր դարն 1886, ԳԻՇ, տետր ութերորդ, էջ 137-149:  
 Միացեալ ընկերութիւնք Հայոց 1883, ԳԻՇ, տետր ԺԲ., էջ 221-225:  
 Յետադարձ ակնարկ 1885, ԳԻՇ, տետր երկուսասներորդ, էջ 198-200:  
 Սահմանադրութիւն 1886, ԳԻՇ, տետր վեցերորդ, էջ 97-103:  
 Սիրանոյշ 1885, ԳԻՇ, տետր եօթերորդ, էջ 117-125:  
 Վիզդօռ Իվօ եւ Իշխան Լուսինեան 1885, ԳԻՇ, տետր եօթերորդ, էջ 126-129:  
 Տիգրան Չուհաճեան եւ Մարտիկ Յակոբեան 1884, ԳԻՇ, տետր վեցերորդ, էջ 119-120:  
 Տոանսիսք Սառսէ առ Տ. Ներսէս Ներսէսեան, ԳԻՇ, տետր ութերորդ, էջ 141-143:

## ЕГИЯ ТЕМИРЧИПАШЯН – ПУБЛИЦИСТ

Петрос Демирчян

Резюме

Публицистический талант молодого Е. Темирчипашяна впервые проявился в 80-е годы XIX века. Он обращался к национальным, общественным, религиозным, литературно-культурным, учебно-педагогическим и другим вопросам, связанным с армянской реальностью. Они явились результатом не только индивидуальных предпочтений Е. Темирчипашяна, но и, прежде всего, были продиктованы временем и обусловлены прогрессом человеческой мысли, диктатом современных перемен в жизни, борьбой старого и нового.

Егия Темирчипашян выступал убежденным сторонником и поборником благотворных изменений в национальной и человеческой жизни. Борясь за прогресс, он сталкивался с непониманием или нетерпимостью, неприятием нового. Расширение представлений науки о человеке, природе, обществе и Вселенной имело не только положительные, но и отрицательные последствия, что вызывало у него глубокую обеспокоенность будущим человечества в целом и армянского народа в частности.

---

**Ключевые слова** – Егия Темирчипашян, публицистика, нация, цивилизация, прогресс, конституция, общество.

### YEGHIA TEMIRCHYPASHYAN: PUBLICATION WRITER

Petros Demirchyan

#### Abstract

In the tumultuous and fertile years of 80s of the XIX century, the publishing talent of young Yeghia Temirchypashyan first emerged. In his published periodicals, he refers to Armenian national, social, religious, literary-cultural, educational-pedagogical and various other issues and problems. They were the result not only of Yeghia's individual understandings and preferences, but also, first of all, the demand of the time, more generally, the dictate of modern changes in life, the struggle of the old and the new, the old and the future-oriented sprouts due to the progress of human thought, Yeghia Temirchypashyan acted as a convinced supporter of nature, national and human welfare. Fighting for progress, he found, however, that it was moving very slowly. Too often it runs into a wall of incomprehension or intolerance. The expansion of scientific ideas about human being, nature, society and the universe brings with it not only positive but also negative realities, sometimes with irreversible consequences, which deeply worried many people, including himself, Yeghia. But the problem is not only among the Armenians or the nation. Ye. Temirchypashyan gradually broadens and deepens the range of questions, including the problem of the current state and future, destiny of man and humanity in general. Finally, to the most important questions "Where will we go?" "Where will Armenia go? Where would humanity go?", the answer, in fact, was still uncertain: "I don't know". There are only vague premonitions of the future, with accents of anxiety and despair, from which, as Yeghia confesses, "My soul grieves for death...".

**Key words** – Yeghia Temirchypashyan, publication, nation, civilization, progress, constitution, society.

«ՄԻՋՏԵՔՍԱՅՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոփսիմե Զաքարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու  
Էլ. հասցե՝ zaqaryan\_hripsime@mail.ru  
ORCID: 0009-0004-2158-644X

Հոդվածը ներկայացվել է 13.03.2023, գրախոսվել է 23.03.2023, ընդունվել է տպագրության 25.04.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.1-182

Ամփոփում

«Միջտեքստայնություն» եզրույթն առաջին անգամ գործածվել է 1967 թ.՝ ֆրանսիացի հետկառուցվածքաբանության (պոստստրուկտուրալիզմի) տեսաբան Յու. Կրիստևայի «Բախտին, բառ, երկխոսություն և վեպ» հոդվածում: Յու. Կրիստևան, հայեցակարգերի հիմքում ունենալով Մ. Բախտինի բազմահնչության տեսությունը, իր գործերում վերաիմաստավորում է միջտեքստային երկխոսության բախտինյան գաղափարը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ստեղծագործություն թանձրացնում է մշակութային կապերի պատմական փորձը, վերջինիս հետ «երկխոսական» ընթացք է ծավալում: Յուրաքանչյուր տեքստ, թաքնված թե ակնհայտ, հարաբերակցվում է այլ մշակութային տեքստերի հետ: Այսպես, միջտեքստայնությունն ընկալվում է որպես յուրաքանչյուր տեքստի առանձնահատուկ որակ:

Միջտեքստայնությունը մեկնաբանվում է նաև «լայն» (Յու. Կրիստևա, Ժ. Դերրիդա, Ռ. Բարտ) և «նեղ» (Ի. Սմիրնով, Յու. Սոլոգուբ, Ն. Կուզմինա, Ն. Ֆատեևա) իմաստներով: Լայն իմաստով՝ միջտեքստայնությունն ընդունվում է իբրև յուրաքանչյուր տեքստի յուրահատուկ որակ: Յուրաքանչյուր տեքստ ընկալվում է որպես միջտեքստ, որը կարող է նոր ձևավորվող տեքստի համար դառնալ նախատեքստ: Նեղ իմաստով՝ միջտեքստայնությունը մեկնաբանվում է որպես որոշակի տեքստերի առանձնահատուկ որակ. միջտեքստայնության դրսևորումներ ոչ բոլոր տեքստերում են նկատելի:

Նշանագիտական պլանում տեքստն ընկալվում է որպես նշանային ամբողջություն, իսկ միջտեքստային կապերը՝ տեքստում ընդգրկված նշանային համակարգի փոխհարաբերակցություն: Այս մոտեցման հիմքերը հարկ է փնտրել Յու. Լոտմանի ուսումնասիրություններում:

**Բանալի բառեր՝** միջտեքստայնություն, տեքստ, նախատեքստ, նշանագիտություն, մշակույթ, փիլիսոփայություն, գեղարվեստական ստեղծագործություն:

Ներածություն

Գրական ստեղծագործությունը, որն իր ընդհանրության մեջ ոչ թե ներփակ իմաստաբանական կառույց է, այլ հարատև զարգացող իմաստաբանական ամբողջականություն, դառնում է միջտեքստ: Հետևաբար ձևավորվում է տարբեր մշակութային ծածկագրերի ու տարաբնույթ խոսույթների

(դիսկուրսների) «կտորվանքներով» կառուցված առանձնահատուկ մի տարածություն, տարբեր նշանային համակարգեր կրող ու անվերջ ճյուղավորվող ու փոխազդող շղթայական հյուսվածք:

Ընդունված է համարել, որ միջտեքստայնության տեսությունը (այս տեսակետն առաջադրել է Մ. Յամպոլսկին<sup>1</sup>) սկզբնավորվում է երեք սկզբնականքներից՝ բախտինյան բազմահնչության (պոլիֆոնիզմի) հասկացակարգից, Յու. Տինյանովի<sup>2</sup> պարողիայի առանձնահատուկ բնույթի մասին դիտարկումներից և Ֆ. դը Սոսյուրի «գրաշրջության տեսությունից», որը բնորոշվում է որպես լեզվի մեջ առաջնային ու երկրորդային միավորների (բառերի) տարաբաժանման հնարավորություն: Առաջնայինը լեզվական նախնական միավորներն են: Այդ միավորներից ածանցվում են նոր միավորներ, որոնք օժտվում են նոր իմաստով: Բառերը նշաններ են, որոնք աշխարհայացքային ընկալումներով միահյուսվում են գիտակցության մեջ ամփոփված իմաստակիր միավորների հետ՝ ձևավորելով նոր իմաստներ: Նույն տրամաբանությամբ՝ կոնկրետ տեքստային տարրերը, ներթափանցելով այլ տեքստային տարածություն, կարող են փոխակերպվել՝ նոր իմաստ ու բովանդակություն հաղորդելով ստեղծված տեքստին: Հետագայում «միջտեքստայնություն» եզրույթը ֆրանսիական հետկառուցվածքաբանության ներկայացուցիչների ուսումնասիրություններում տարածվում է սոսուրյան բանաձևով: Յու. Կրիստևան 1969 թ. տպագրված իր «Նշանագիտություն» գրքի «Գրաշրջության նշանաբանության մասին» գլխում<sup>3</sup> (գլուխը գրվել էր դեռևս 1966 թ.) անդրադառնում է այդ բանաձևին՝ նշելով, որ գրաշրջության անգիտակցական կամ գիտակցված միտումով գործածումը բնորոշ է հատկապես հանգավորված բանաստեղծական տեքստերին:

Հավելենք նաև, որ միջտեքստայնության տեսության ձևավորման ու զարգացման հիմնական ուղղությունը հունավորել է «երկխոսայնության» բախտինյան հասկացակարգը:

---

<sup>1</sup> Հմմտ. Ямпольский 1993, 408: Համաձայն Մ. Յամպոլսկու՝ գրաշրջության (անագրամների) սկզբունքը նույնանում է միջտեքստայնության էությանն այն իմաստով, որ նախատեքստն ընդունող տեքստում մեջբերվում է թաքնված կերպով: Հեղինակի տեսակետներում միջտեքստային կապերի առանձնահատուկ դրսևորումների նրբությունները սոսյուրյան դիտարկումներում են սկզբնավորապես ու հիմնավորապես ձևակերպվում:

<sup>2</sup> Թեև Յու. Տինյանովի միջտեքստային փոխհարաբերակցության մասին ուսումնասիրությունները միջտեքստայնության տեսության զարգացման խնդրում կարևորագույն արժեք են, արտասահմանյան հետազոտողների շրջանում այդ աշխատությունները քիչ են հայտնի: Հետազոտողների առավել լայն շրջանակին հայտնի են ու առանցքային նշանակություն ունեն Ֆ. դը Սոսյուրի աշխատությունները, որոնք, շնորհիվ լայն տարածման, գերակայություն են ստանում, դառնում միջտեքստայնության տեսության զարգացման հիմնաքարային արժեք ունեցող կարևորություններ, թեև, այնուամենայնիվ, նշյալ տեսության ձևավորման հիմքում ելակետային են բազմաթիվ լեզուներով թարգմանված և լայն տարածում ստացած Մ. Բախտինի համապատասխան աշխատությունները:

<sup>3</sup> Հմմտ. Кристева 2013, 98-127:

**Մ. Բախտինի երկխոսայնության տեսության փոխակերպումները կառուցվածքաբանության և հետկառուցվածքաբանության համատեքստում**

«Երկխոսայնություն» (դիալոգիզմ) հասկացությունը, որին դեռևս 1924 թ. գիտական հիմնարար ձևակերպում է տվել Մ. Բախտինը, որպես կանոն, ընդունված է համարել միջտեքստայնության տեսության հիմք: Համաձայն Մ. Բախտինի հայեցակարգի՝ ստեղծագործողը, հեղինակային-անհատական աշխարհայացքը, սեփական գեղարվեստական արվեստի արարման գործընթացը պայմանավորելով-փոխհարաբերակցելով այլ հեղինակի ստեղծած հայեցաձևին, տեքստի իմաստային տեղեկատվությանը, առանցքային խորհրդանիշներին ու մոտիվներին՝ ձևավորում է համընդհանուր միջտեքստային հարաբերակցության դաշտ, որը խտացնում է մշակութային կապերի պատմական փորձը, վերջինիս հետ «երկխոսական» լայնահուն ընթացք է ծավալում, օրգանապես միահյուսվում նրան՝ միաժամանակ արդեն ստեղծված հայեցակարգային հիմքերի վրա կառուցելով նորը՝ պահպանելով գեղարվեստական հայեցողության սեփական կերպը, սեփական ստեղծագործության գաղափարագեղարվեստական, հայեցակարգային-գեղագիտական արժեքը: Այլ կերպ ասած՝ այս կամ այն գեղարվեստական ձևի բազմաբնույթ փոխհարաբերակցության համադրումները թույլ են տալիս հեղինակին առավել հստակ ձևակերպելու սեփական գեղարվեստական դիրքորոշումը: Մ. Բախտինը, անդրադառնալով երկխոսայնությանը, նշում է նաև, որ խոսքային գործունեությունը երկու տարատեսակ ունի՝ երկխոսություն և մենախոսություն: Մենախոսությունն իր հերթին դիտարկվում է որպես երկխոսության ենթատեսակ. «յուրաքանչյուր մենախոսություն մեծ երկխոսության կրկնություն է (ռեպլիկա)»<sup>4</sup>: Հետևաբար կարելի է ասել, որ ստեղծագործությունը պատմամշակութային հեռապատկերում կարող է ներկայանալ և՛ մենատեքստ, և՛ նախատեքստ: Մ. Բախտինն այն համոզմանն էր, որ գեղարվեստական տեքստում առաջնային է ոչ թե ներմուծված տեքստը, այլ նրա գործառութային նշանակությունը, և որ իրականում ոչ մի ձևակերպում չի կարող նոր կամ հին համարվել. այն ընդամենը միևնույն շղթայի մի օղակն է, որը շղթայակապից դուրս դիտարկման ենթակա չէ. «Ոչ մի ասույթ չի կարող ո՛չ առաջինը լինել, ո՛չ վերջինը: Այն միայն շղթայի օղակն է, և այս շղթայից դուրս հնարավոր չէ ուսումնասիրել: Չկա ո՛չ առաջին, ո՛չ վերջին խոսք, և երկխոսական համատեքստը չունի սահմաններ (այն գնում է դեպի անսահման անցյալ և անսահման ապագա)»<sup>5</sup>, - գրում է Մ. Բախտինը՝ այս կերպ սահմանելով մշակույթի ու գրականության շարունակականությունը, նրա արարչագործական հավիտենական հնարավորությունը, ամենագոյու-

<sup>4</sup> Бахтин 1975, 296.

<sup>5</sup> Бахтин 1979, 373.

թյունը ներկայում, անցյալում և ապագայում՝ հավերժական հեռուներում, նրա առանձին «մասնիկների» «տրոհումն» ու հավերժական վերածնունդը:

Բախտինյան հայեցակարգն ու տեսական-մեթոդաբանական հիմքերն առավել արդիական դարձան ու տեսական գրականության մեջ սկսեցին լայնորեն գործածվել նախ արևմտյան իրականության մեջ՝ մասնավորապես ֆրանսիական հետմոդեռնիստական գրականության վերլուծությունների ժամանակ: Որպես հետազոտության ինքնուրույն ուղղություն՝ միջտեքստայնությունը սկսեց հիմնավորապես ձևավորվել 1960-1970-ական թթ. և լայն տարածում ստացավ եվրոպական (Մ. Ռիֆֆաթեր, Ռ. Բարտ, Ու. Էկո) ու խորհրդային (Յու. Լոտման, Վ. Տոպորով) հետազոտողների շրջանում: Այն լայնորեն կիրառվել է կառուցվածքաբանության (Յու. Լոտման), հետմոդեռնիզմի և հետկառուցվածքաբանության (Յու. Կրիստևա, Ռ. Բարտ, Մ. Ռիֆֆաթեր, Ժ. Դերիդա և ուրիշներ) տեսության շրջանակներում: Գրապատմական առումով հարկ է հիշատակել, որ եզրույթը տեսական գրականության մեջ սկսել է գործածել ֆրանսիացի հետազոտող Յու. Կրիստևան «Բախտին, բառ, երկխոսություն և վեպ» հոդվածում (1967): Նա, իր հայեցակարգերի հիմքում ունենալով բախտինյան հիմնավորումներն ու մոտեցումները, վերախմաստավորելով Մ. Բախտինի «Բովանդակության, նյութի և ձևի խնդիրը բանավոր գեղարվեստական ստեղծագործություններում» (1924) աշխատությունը, եզրակացնում է, որ այդ եզրույթի բուն էությունը դրսևորվում է յուրաքանչյուր տեքստային կառուցում, քանի որ յուրաքանչյուր տեքստ իր մեջ կրում է մեկ այլ տեքստ, բազմաթիվ իմաստային համադրումներով կառուցվում որպես «քաղվածքների խճանկար». «Յուրաքանչյուր տեքստ կառուցվում է որպես քաղվածքների խճանկար, յուրաքանչյուր տեքստ ինչ-որ այլ տեքստի յուրացումն ու փոխակերպումն է: Դրա հետ մեկտեղ միջուկայնությունն հասկացության հիմքում ընկած է միջտեքստայնությունն հասկացողությունը, և պարզվում է, որ բանաստեղծական լեզուն ենթակա է առնվազն կրկնակի ընթերցանության»<sup>6</sup>, - եզրակացնում է Յու. Կրիստևան՝ անդրադառնալով նաև այն խնդրին, որ գրական ստեղծագործությունը, հարատևելով ժամանակների մեջ, լեզվական նշանների որոշակի փոփոխության է ենթարկվում՝ ստեղծելով նոր ներտեքստային փոխհարաբերություններ, հետևաբար ձեռք բերելով նաև նոր իմաստներ:

Հետագայում հետազոտողը, դիտարկելով գրականության իմաստի, նրա գոյության դիալեկտիկան՝ հիմքում ունենալով Մ. Բախտինի միջտեքստային կապերի տեսական ձևակերպումները, ընդլայնում է իր հետևություններն այդ երևույթի եզրութաբանական բովանդակության մասին՝ նշելով, որ գեղարվեստական տեքստի յուրահատկություններից մեկն էլ այն է, որ միաժամանակ մի քանի նշանային համակարգեր կարող են փոխհարաբերակ-

<sup>6</sup> Кристева 2000, 429.

ցելով «տեղավորվել» տեքստում: Ավելին՝ տեքստը տեքստի մեջ կարող է արտացոլել արվեստի տարբեր ոլորտներ, բառային միջոցներով փոխանցել երաժշտական կամ գեղանկարչական ստեղծագործության ձևն ու բովանդակությունը, լայն առումով՝ այն իր մեջ կարող է փոխակերպել ոչ միայն մեկ այլ տեքստ, այլև ուրիշ նշանագիտական համակարգերի «տեքստեր»՝ նկարներ, լուսանկարներ, կոթողներ և այլն: Համաձայն նրա՝ նկարը «ոչ այլ ինչ է, քան այն վերլուծող տեքստ»<sup>7</sup>: Թերևս այս հիմքերի վրա է ձևավորվել գերմանացի գրականագետ Օգե Հանգեն-Լևեի առաջադրած «Միջմեդիականություն և միջտեքստայնություն. բառի և պատկերավոր արվեստի փոխհարաբերության խնդիրները»<sup>8</sup> ուսումնասիրության մեջ հիմնավորված «միջմեդիականություն» եզրույթը, որը ենթադրում է կոնկրետ տեքստում միջտեքստային կապերի յուրահատուկ որակ, որում փոխհարաբերակցվում են արվեստի տարաբնույթ ձևեր (պոեզիա-երաժշտություն, ֆիլմ-պոեզիա և այլն): Այս իմաստով՝ բրիտանացի հրապարակագիր Ս. Մորլին ժամանակակից արվեստին նվիրված իր դիտարկումներում գործածում է «անդրմեդիականություն» եզրույթը, երբ որոշակի երևույթ, որոշակի միջավայր գտնվում են մեկ այլ միջավայրի հետ հիերարխիկ բնույթի հարաբերակցության մեջ, ինչպես, օրինակ, պատկերը ենթակա է տեքստին և հակառակը՝ ընդհուպ «ինտերմեդիականություն», «որտեղ տեքստի և պատկերի միջև տարբերակումը խախտվում է, ձևավորվում է խառնածին ձև»<sup>9</sup>:

Այսպիսով, «միջտեքստայնություն» եզրույթի հետագա զարգացման միտումները պայմանավորված են Ռ. Բարտի հայեցակարգերով: Նա տարբեր հարթությունների վրա է դիտարկում տեքստն ու ստեղծագործությունը. տեքստը «երկրորդային» իրականություն է, անընդհատական, հավերժ նորացող եղելությունների, իրավիճակների ամբողջություն, օժտված է շարժունակ (դինամիկ) բնույթով, և հարկ չէ տեքստի մեջ սկզբնաղբյուր որոնել: Տեքստն իր բնույթով անհայտ, «անստորագիր» եղելությունների համագումար է, նաև՝ «արդեն կարդացված մեջբերությունների կամ առանց չակերտների մեջբերությունների»<sup>10</sup> ամբողջություն:

1960-1970-ական թթ. Ռ. Բարտը նորովի է իմաստավորում միջտեքստայնության տեսությունը՝ 1968 թ. գրված «Հեղինակի մահը» խոհագրության մեջ հայտարարելով, որ հեղինակն այլևս «դադարել է լինել տեքստի իմաստի միակ սկզբնաղբյուրը»<sup>11</sup>: Ռ. Բարտը «մեջտեքստայնություն» երևույթի մասին հետևյալն է ձևակերպել. «Յուրաքանչյուր տեքստ հանդիսանում է միջատեքստ (ինտերտեքստ), մնացած տեքստերը նրա մեջ ներկա են տար-

<sup>7</sup> Kristeva 1981, 310.

<sup>8</sup> Hansen-Löve 1983, 291-360.

<sup>9</sup> Morley 2003, 12.

<sup>10</sup> Հմմտ. Барт 1989, 418:

<sup>11</sup> Барт 1989, 391.

բեր աստիճաններով փոքրիշատե ճանաչողական ձևերով՝ նախորդ մշակույթի տեքստեր և շրջակա մշակույթի տեքստեր: Յուրաքանչյուր տեքստ հին մեջբերումներով նոր հյուսվածք է, մշակութային ծածկագրերի կտորներ, ֆորմուլաներ, ռիթմական կառույցներ...: Բոլոր դրանք յուրացված են տեքստում և խառնված նրա մեջ, քանի որ մշտապես մինչ տեքստը և նրա շուրջը գոյություն ունի լեզուն»<sup>12</sup>:

«Միջտեքստայնություն» երևույթի բարտյան ուսումնասիրության մեթոդներն իրենց յուրահատուկ դրսևորումներն ունեցան արտասահմանյան ու ռուսական լեզվաբանության մեջ և նշանավորվեցին Ու. Էկոյի ու Վ. Տոպորովի ուսումնասիրություններով: Ու. Էկոն, միջտեքստային կապերի մասին իր դիտարկումներում գործածում է «միջտեքստային երկխոսություն» հասկացությունը՝ այն սահմանելով որպես առանձնահատուկ մի «երևույթ, որի ներքո կոնկրետ տեքստում կրկնվում են նախորդ տեքստերը... յուրաքանչյուր գիրք խոսում է միայն այլ գրքերի մասին և բաղկացած է միայն այլ գրքերից»<sup>13</sup>:

### **«Միջտեքստայնություն» հասկացության լայն և նեղ իմաստներով սահմանումների առանձնահատկությունները**

Ժ. Ժենետը, հեռանալով նշյալ եզրույթի հետկառուցվածքաբանական մոտեցումներից, միջտեքստային փոխհարաբերակցության խնդիրն մոտենում է կառուցվածքային պոետիկայի դիրքերից՝ փորձելով իմաստաբանական բոլոր հատկանիշներով արդեն որոշակիացված եզրութային նշանակությունը լրացնել նոր իմաստներով: Միջտեքստային փոխհարաբերակցության բազմաբնույթ տեսակներն ընդհանրացնող, արդեն իսկ հստակորեն սահմանված «միջտեքստայնություն» եզրույթին նա տվել է նեղ մեկնաբանություն՝ այն ձևակերպելով որպես «անդրտեքստայնություն» կամ «տեքստային անդրանցականություն»<sup>14</sup>: «Անդրտեքստայնություն» եզրույթը, միևնույն եզրույթահամակարգում ընդունելով «միջտեքստայնություն» եզրույթի հոմանիշ, վերջինս տեսակավորելով՝ դասակարգում է, թեև այդ տարբերակումները հեղինակն ինքը վերջնական ամփոփ տարբերակ չի համարում: Արդյունքում այդ նորամուտ եզրույթներից որոշները, օրինակ, արքետեքստայնություն եզրույթը, գրեթե դադարել է գործածվել. մնացածները որոշակի իմաստային լրացումներով, փոխակերպումներով երբեմն ըստ անհրաժեշտության գործածվում են:

Նեղ իմաստով միջտեքստայնությունը սահմանվում է որպես ոչ թե յուրաքանչյուր տեքստի, այլ որոշակի տեքստերի յուրահատուկ բնույթ, երբ որևէ տեքստ կրում է կոնկրետ և թաքնված հղումներ նախորդ տեքստերին:

<sup>12</sup> Барт 1989, 418.

<sup>13</sup> Эко 2003, 107.

<sup>14</sup> Հմմտ. Genette 1982, 2-5:

Միջտեքստայնության այսօրինակ ընկալումը հատուկ է Լ. Դելլենբախի, Ռ. Լախմանի, Ի. Սմիրնովի, Յու. Սոլոդուբի, Ն. Կուզմինայի, Ն. Ֆատենայի և այլոց հայեցակետերին: Ի. Սմիրնովը, օրինակ, միջտեքստայնությունը դիտարկում է երեք տարբեր մակարդակներում՝ գաղափարաբանական դիրքերից, նշանագիտության շրջանակներում և հաղորդակցական հիմքերից: Նրա ձևակերպմամբ՝ միջտեքստայնությունն այն է, երբ «գեղարվեստական ստեղծագործության իմաստը մասնակիորեն կամ ամբողջությամբ ձևավորվում է՝ մեկ այլ տեքստ մեջբերելու հետևանքով, որը որոնվում է միևնույն հեղինակի ստեղծագործության մեջ, հարակից արվեստում... կամ էլ նախորդ գրականության մեջ»<sup>15</sup>: Վ. Տոպորովն իր հերթին առանձնացնում է միջտեքստայնության «ինքնամիջտեքստայնություն» տարատեսակը, որի դեպքում տեքստը կառուցվում է նույն հեղինակի մեկ այլ տեքստից քաղված ինքնամեջբերության հիմքերի վրա<sup>16</sup>: Իսկ Ի. Առնոլդի դիտարկումներում միջտեքստայնության գաղափարաբանության հիմքում այն եզրահանգումն է, որ «միջտեքստայնություն» հասկացությունը վերաբերում է այն տեքստին, որը պարունակում է այլ տեքստերից հատվածներ՝ մեջբերությունների, ակնարկների ու ռեմինիսցենցիաների տեսքով<sup>17</sup>:

Իսկ լայն իմաստով՝ միջտեքստայնությունը ձևակերպվում է որպես յուրաքանչյուր տեքստի յուրահատուկ որակ. այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր տեքստ դիտվում է միջատեքստ: Այս ընկալման հիմքերը հունավորվում են Ռ. Բարտի և ֆրանսիական հետկառուցվածքաբանության ուղղության ներկայացուցիչների աշխատություններից (Յու. Կրիստևա, Ժ. Դերիդա, Ռ. Բարտ), ինչպես նաև Յու. Լոտմանի հայեցակարգերից:

### **Միջտեքստայնությունը՝ որպես բանաստեղծական տեքստի իմաստաստեղծ գործոն**

Միջտեքստային կապերը կարող են դրսևորվել ինչպես նույնականորեն, այնպես էլ փոխակերպված, նոր տեքստային կառույցին համասեռված, ակնհայտ կամ թաքնված կերպով: «Ուրիշի խոսքը» փոխառելու ամենաակնառու ձևը թերևս ուղղակի մեջբերումներն են, որոնք, ներմուծվելով նոր տեքստային տարածություն, ձեռք են բերում նոր դրսևորում ու նոր երանգավորում, արտահայտվում ուղղակի, միջնորդավորված, հակիրճ ու ընդարձակ ամենատարբեր վերակերպություններով: Հենց այդ քաղվածքների մեջ են ամփոփված-թաքնված լինում հեղինակային-աշխարհայացքային հիմնարար մտադրությունները: Որպես օրինակ բերենք է. Միլիտոնյանի բանաստեղծությունը, որի մեջ հեղինակն ուղղակիորեն գործածում է այլ տեքստա-

<sup>15</sup> Смирнов 1995, 193.

<sup>16</sup> Հմմտ. Топоров 1998, 9:

<sup>17</sup> Հմմտ. Арнольд 2005, 71-72:

յին մեջբերումներ՝ միաժամանակ նշելով սկզբնաղբյուրային տեքստի հեղինակներին.

Եթե ծառ տեսնես, հաշվի՛ր նրա տերևները

Եվ հիշի՛ր՝ (կարծեմ Տիմիոյազևի խոսքը) ոչ մի տերև մյուսին նման չէ:

Եվ հայիոյի՛ր ինքդ քեզ:

Եթե ծառ չկա պատուհանից այն կողմ, նայի՛ր ամպերին,

Տես նրանց թափառ, անօթևան կյանքը

Եվ հիշի՛ր՝ (կարծեմ Բողլերի խոսքը) Ամպերն են սիրում...<sup>18</sup>:

Է. Միլիտոնյանի նշյալ բանաստեղծության մեջ նախադեպային տեքստերը՝ արտահայտված ուղղակի, միջնորդավորված կերպով, դառնում են բանաստեղծական-հյուսվածքային յուրահատուկ առանցք, փիլիսոփայական ու խոհական տրամադրություններ իմաստավորելու միջոց:

Բանաստեղծական տեքստում միջտեքստային կապերի ակնառու օրինակ է նաև Ա. Ավագյանի բանաստեղծությունը, որի գոյության նախադրյալները գալիս են հայ ժողովրդի լինելիության չարենցյան բանաձևման խորքերից՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է».

Չկա մի հայ, որ չիմանա միասնության կարգախոսը.

չկա մեկը, որ չիմանա չարենցյան պատգամը.

«Ով հա՛յ ժողովուրդ, քո փրկությունը

քո հավաքական ուժի մեջ է»<sup>19</sup>:

Հեղինակը վերաիմաստավորում ու վերահաստատում է չարենցյան աշխարհատեսությունը՝ նոր բանաստեղծական տարածության մեջ ապահովելով բոլոր ժամանակների համար գրված չարենցյան ծածկագրված պատգամի խորքն ու էությունը, նրա աշխարհագագացողության յուրահատուկ բնույթը՝ չարենցյան նույն ուղեգծով խտացնելով ու խորացնելով սեփական աշխարհայացքային կողմնորոշումը:

Դասական հայտնի ստեղծագործություններից բացի, որպես միջտեքստային տարրեր կարող են հանդես գալ նաև բանահյուսական ստեղծագործությունները, սուրբգրային միջերն ու միջակն գաղտնագրերը, խորհրդանիշները, սյուժեները և այլն: Նշյալներից առավել կիրարկականը թերևս աստվածաշնչյան տեքստն է, որը, ներմուծվելով այլ գեղարվեստական համակառույց, դառնում է ստեղծագործության բովանդակային-թեմատիկ պլանի իմաստային առանցքը:

Արդի բանաստեղծությամբ հունավորվող տեղաշարժերի բնույթում հարկ է առանձնացնել ջրհեղեղի ու Նոյի տապանի «միջակն» նախահիմքային պատկերով խառնածին համատեքստով օժտված բանաստեղծություններն ու բանաստեղծական ժողովածուները: Ջրհեղեղի ու Նոյի քրիստո-

<sup>18</sup> Միլիտոնյան 1996, 69:

<sup>19</sup> Ավագյան 2004, 137:

նեական միջը գեղարվեստորեն մարմնավորվեց Հ. Էդոյանի, Հ. Գրիգորյանի, Ա. Հարությունյանի, Հ. Մովսեսի, Հ. Թամրազյանի և այլ բանաստեղծների քնարական շարքերում, որոնք, շարունակելով իրենց մեջ անտիկյան մտապատկերներ կրող ավանդույթները, սկզբնավորեցին նոր ավանդույթ՝ ազգային գրականության հորիզոնները բացելով համաշխարհային իրականության առջև:

Այսպիսով, օրինակ, Հ. Մովսեսի՝ միջական ու բանաստեղծական տարրերի հարաբերության խտացումով հյուսված նշյալ բանաստեղծության մեջ ընդհանրացված է «ջրհեղեղ» կոչվող «կյանք» հասկացության ընդհանրական կողմը.

Ինչ ջրհեղեղ է այսպես անգո,  
ոչ սկիզբ ունի և ոչ էլ վերջ:  
- Ճոճվում է սիրտը՝ տապանը քո,  
այս անծայրածիր ջրերի մեջ<sup>20</sup>:

Երկկողմանի փոխազդեցություններից կառուցված այս հյուսվածքում մի կողմից անդրադարձվում է կյանքի հորձանքների, հույզերի ու կրքերի շարժունակ բազմազանությունը, մյուս կողմից՝ մարդու վիճակի ու հոգու շարժընթաց փոխակերպությունները:

Հ. Թամրազյանի բանաստեղծության առանցքում որպես պատկերավոր մտածողության խարիսխ գործում է քրիստոնեական պայմանականությունների ուժային շարժման քնարական-խառնածին այն մեկնակետը, ինչը բնորոշ է Հ. Մովսեսի վերոբերյալ բանաստեղծությանը.

Դու կաս, իբրև հիշող արյուն,  
Արյան կանչ է, արյան անուրջ,  
Թե ինչպես էր Նոյը նայում  
Իր աշխարհին լեռան լանջից...  
Եղիցի՛ լույս: Եվ լո՛ւյս եղև:  
Ու քեզ հետ են միշտ էլ եղել  
Երազներիդ ջրհեղեղը  
Ու արթնացման ջրերը ջինջ<sup>21</sup>:

Փոխաբերական-նկարագրական այս կերպը հանգում է մտքի ու զգացմունքի շարժումը զգայական պատկերների փոխարկելու, այդ ուղիներով հոգեաշխարհային տեղաշարժեր իմաստավորելու նպատակին: Միջակիրառման առանձնահատկության տեսանկյունից բանաստեղծություններն առանձնանում են նախադեպային տեքստի՝ քրիստոնեական միջական պատկերների խտացումներով, որոնք ընդգրկում են ստեղծագործության սյուժետային ու իմաստաբովանդակային ոլորտները:

<sup>20</sup> Մովսես 2005, 36:

<sup>21</sup> Թամրազյան 2008, 220:

### **Միջտեքստայնությունը նշանագիտության սահմաններում**

Նշանագիտական (սեմիոտիկական) մոտեցումներով տեքստն ընկալվում է որպես նշանային ամբողջականություն, իսկ միջտեքստային փոխհարաբերակցությունները՝ տեքստում ամփոփված նշանային համակարգի փոխհարաբերակցություն: Այս մոտեցման հիմքերը հարկ է փնտրել Ռ. Յակոբսոնի, Ռ. Բարտի, Յու. Լոտմանի, Ու. Էկոյի և այլոց աշխատություններում:

Նշանագիտական համակարգի փոխհարաբերակցության ու փոխկապակցվածության շրջանակներում միջտեքստայնության դիտարկումների առավել ընդլայն մոտեցումները բնորոշ էին Յու. Լոտմանի հիմնադրած Տարտու-մոսկովյան նշանագիտության դպրոցի ներկայացուցիչներին (Յու. Լոտման, Պ. Թորոպ, Ռ. Տիմենչիկ): Համաձայն Յու. Լոտմանի՝ մշակույթը, իբրև ամբողջական «կառուցվածք», կարող է դիտարկվել տեքստ. տեքստն ընկալվում-իմաստավորվում է որպես մշակութային երևույթ. «Ինչպես մշակույթն ամբողջությամբ, - գրում է Յու. Լոտմանը, - այնպես էլ նրա մեջ ներառված բավականաչափ բարդ տեքստերից յուրաքանչյուրը, և ներառյալ առանձին մարդկային անհատականությունը, դիտարկվում է որպես տեքստ»<sup>22</sup>: Նա բազմաթիվ ձևակերպումներով նշել է, որ գրական-գեղարվեստական տեքստում, ներտեքստային կապերից զատ, գոյություն ունի նաև արտատեքստային փոխհարաբերակցություն: Տեքստի հիմքում ընկած է բառը, բառի հիմքում՝ հասկացությունը: Տեքստի յուրաքանչյուր բառ ընկալվում է ոչ միայն տվյալ տեքստի համապատկերում, այլև դրանից դուրս՝ տարածամանակյա կտրվածքով տեքստային այլ կառույցներում և այլն: Քանի որ տեքստը, ըստ էության, ստեղծվել է կոնկրետ ժամանակաշրջանում, կրելու է նաև պատմական կոնկրետ պայմանականություններ: Ընդհանուր առմամբ՝ միջտեքստայնությունը լոտմանյան նշանագիտական մոտեցման շրջանակում ընկալվում է որպես մշակութային զարգացման հարատև հոսք, որն իր ընթացքի մեջ անպայմանորեն առնելու է արտատեքստային իրողություններ՝ նյութական իրականության ընկալման այլևայլ դրսևորումներով, ավելին՝ «Տեքստն արտատեքստային «ֆոնից» անջատ ընկալելն անհնար է»<sup>23</sup>: Հետևաբար, նյութական իրականությունն իր թանձրացական ու վերացական իրողություններով դուրս չի մղվում տեքստային տարածությունից, ընդհակառակը, գեղարվեստական տեքստի առանձնահատկությունն այն է, որ այն կառուցվում է նյութական իրականության, նրա բազմազան երևույթների արտացոլման հիմքերի վրա:

Զարգացնելով այս գաղափարը՝ Յու. Լոտմանն առանձնահատուկ շեշտում է այն տեսակետը, որ մշակութային դաշտում տեքստը, որն օժտված է

<sup>22</sup> Лотман 2000, 641.

<sup>23</sup> Лотман 1994, 213.

բարդ կառուցվածքով և տարաբնույթ գործառույթներ կատարող երևույթ է, որպես կանոն, հիմնականում երեք էական գործառույթ է իրականացնում.

1) տեղեկատվության ճշգրիտ փոխանցում.

2) նոր գաղափարների զարգացում, որի դեպքում տեքստը ոչ միայն կայուն տեղեկատվություն, այլև նոր իմաստներ կրող երևույթ է.

3) «մշակութային հիշողության», մշակութային ավանդույթների պահպանում, երբ տեքստն ի զորու է պահպանելու «...հիշողություններ իր նախորդ ենթատեքստերից..., որոնց մեջ տվյալ տեքստը իմաստ է ստանում, և որոնք որոշակի ձևով ասես ներառված են դրանում, կարելի է անվանել տեքստային հիշողություն»<sup>24</sup>:

Տեքստի հիմնական կառուցվածքային հատկանիշը նրա իմաստային հյուսվածքների համաձուլված բնույթի մեջ է: Տեքստն ընկալվում է որպես տարաբնույթ նշանագիտական տարածությունների համակարգ, որն իր շարունակական ընթացքի մեջ շրջանառում է որոշակի փիլիսոփայական հիմնահարցեր. փիլիսոփայական, քանի որ այն մշակութային ինքնագիտակցություն է, որը խտացնում է այս կամ այն պատմական ժամանակահատվածի հասարակական կյանքի զարգացումը: Այս ամենի հետ մեկտեղ տեքստի մեջ ձևավորված հայեցակարգային փոխներթափանցումները, տարաբնույթ կառուցվածքային ներդաշնակությունների միջև յուրահատուկ շղթայակապ հյուսվածքն ապահովում են տեքստի իմաստային հնարավորությունների վերընթացը՝ տեքստն օժտելով նորանոր իմաստներ ու գաղափարներ արարելու ներուժով:

Այս կերպ, համաձայն Յու. Լոտմանի, «միջտեքստայնություն» կամ, ինչպես ինքն է ձևակերպում համանուն հոդվածում, «տեքստը տեքստի մեջ» հասկացության էությունն ու բովանդակությունն առաջին հերթին նշանագիտական համակարգի փոխհարաբերակցության կամ փոխներգործության մեջ են: Մշակութային դաշտում անպակաս են նշանային միջոցները, տեքստային կառույցում դրանք ըստ անհրաժեշտության համակարգելու հնարավորությունները՝ անսահման, և կոչված են բացելու բովանդակության իմաստն ու գաղտնագրելու ու գաղտնազերծելու դրանցում ամփոփված ենթադրությունները, տեքստի նշանագիտական-կառուցվածքային, բառային ու ոճական հնարավորությունների տարաբնույթ շերտերը տեսակավորված համախմբելու, լեզվի և խոսքի պատկերավոր-արտահայտիչ դրսևորման միջոցները և այն ամենը, ինչը կարող է տեղավորվել «նշանագիտական տարածության» լեզու կամ «գիտություն նշանների մասին» հասկացության մեջ: Այդ, այսպես կոչված՝ «նշանագիտական լեզվի»՝ նշանոլորտի կամ նշանագիտական տարածության՝ բազմաբնույթ մշակութային լեզուների հարատև փոխհարաբերությունների յուրօրինակ դաշտի ձևավորման հարցում ա-

<sup>24</sup> Лотман 2000, 162.

ռանցքային են մշակութային ծածկագրերը, խորհրդանիշներն ու նշանները, որոնք, տարակերպումներով հաստատված լինելով համաշխարհային մշակույթի խորքային շերտերում, ինչպես հայտնի է, իրենց հերթին մշակույթի զարգացման գործընթացում կարևորագույն գործառույթ են իրականացնում և ունակ են վերափոխվելու-վերափմաստավորվելու «կախված նրանից, թե ինչ մշակութային գաղտնագրեր են արդիական պատմական տվյալ փուլում»<sup>25</sup>:

Այդ եզրույթի գործառույթը, սակայն, չի սահմանափակվում միայն բանասիրական գիտությունների ժամանակակից հետազոտական շրջանակով: Այն կարող են գործածել նաև այլ գիտակարգեր. դա են վկայում տարբեր գիտակարգերի բազմաբնույթ մոտեցումներն ու սահմանումները: Եզրույթը, օրինակ, կարող է հատկանշվել պատմամշակութաբանական, իրավաբանական, նույնիսկ քաղաքական յուրացումներով և այլն:

### **Եզրակացություններ**

Այսպիսով, կարելի է ասել, որ «միջտեքստայնություն» եզրույթը, որն ուսումնասիրում են ամենատարբեր հետազոտողներ ամենատարբեր դիտանկյուններից, սահմանվում է նախ որպես նոր տեքստ ձևավորելու միջոց (Պ. Թորոպ, Ն. Ֆատենա), միևնույն տեքստում մեկ կամ մի քանի տեքստերի համագոյակցություն (ժ. Ժենետ), գեղարվեստական ձևերի երկխոսություն (դիալոգ), տեքստերի փոխկապակցված փոխհարաբերակցություն, միջտեքստային հաղորդակցություն, «աշխարհը որպես տեքստ» դրույթ (Դերիդա), կամ էլ մշակույթի հարատև զարգացող ու ձևավորող հավերժաշրջայի համապատկերում այն սահմանվում է որպես «տեքստ-տեքստի մեջ» հյուսվածք (Լոտման): Սրանք են «միջտեքստայնություն» երևույթի մասին XX դարի գրականության տեսության առաջադրած հիմնադրույթները, որտեղ տիրապետող է «երկվապաշտական» տրամաբանության սկզբունքը: Հարկ է նկատել, որ հետազոտողների ծանրակշիռ մասը հակված է ընդունելու միջտեքստայնության սահմանման լոտմանյան տեսակետը՝ «միջտեքստայնություն» երևույթի հիմքում ընդունելով «տեքստ-տեքստի մեջ» հասկացության տիրապետությունը, այսինքն՝ այս կամ այն սյուժեների ու մոտիվների կամ առանձին տեքստի որոշակի հատվածների և այլնի՝ այլ հեղինակի կողմից սեփական տեքստում վերաձևակերպում-վերափմաստավորումը, նոր իմաստով ու նոր բովանդակությամբ վերամարմնավորումը՝ համապատասխան հավերժորեն վերափոխվող, նորացվող իրականության, անվերջ նորոգվող մշակույթի: Նույնիսկ Ռ. Բարտը, որը հայտարարել էր «հեղինակի մահվան» գաղափարի մասին, միջտեքստայնության մասին իր ձևակերպումներում խոստովանում է, որ «յուրաքանչյուր տեքստ նոր նյութ է, թեկուզ

<sup>25</sup> Леута, Лотман 2002, 173.

և հյուսված հին տեքստերից, հին մեջբերումներից»<sup>26</sup>: Լեզվամշակութաբանության մեջ «միջտեքստայնություն» երևույթի ընկալման բարտյան այս սահմանումն է տրամաբանորեն ընդունելի համարվում: Խոսելով վերջինիս մասին՝ հարկ է նշել նաև, որ կան հետազոտողներ (Ա. Բեգրուկով, Ն. Կուզմինա, Ի. Իլյին և այլք), որոնք հակված են ընդունելու, որ միջտեքստայնության սահմանման ճշգրիտ բանաձևը տրամաբանական է փնտրել հենց Ռ. Բարտի աշխատություններում: Շատերի կարծիքով էլ (Ի. Իլյին, Ն. Ֆատեևա և ուրիշներ) միջտեքստայնության հասկացակարգի հիմնաքարը տրամաբանական է համարել Ժ. Դերիդայի փիլիսոփայական հայեցակարգը, այն է՝ վերջինիս տեսականորեն հիմնավորած կառուցալուծարման մեթոդը:

Այսպիսով, միջտեքստայնության առանցքային գործառույթը նոր իմաստներ ձևավորելու, ինչպես նաև արդեն ստեղծված տեքստը վերաձևակերպելով վերափմաստավորելու, նրա մեջ նոր իմաստային շերտեր հայտնաբերելու մեջ է:

Չնայած «միջտեքստայնություն» եզրույթի բազմաբնույթ մեկնություններին՝ այն չի փոփոխում իր բուն էությունը, այն է՝ դրսևորման երկխոսական բնույթը: Հեղինակը, կերտելով սեփական ստեղծագործական կառույցը, գիտակցված կամ անգիտակցական մղմամբ երկխոսական գործընթաց է ծավալում այլ հեղինակային տեքստերի հետ՝ փոխակերպելով հինը, կառուցում է նորը:

Աշխարհը միջտեքստայնության ոսպնյակի միջով պատկերվում է որպես անձայրաձիր տեքստ, որում ամեն ինչ ասված է: Այս տրամաբանությամբ հանգում ենք այն սկզբունքին, որ յուրաքանչյուր նորը երկխոսական տարրերի փոխակերպումների միջոցով է որոշակիացնում իր թեմատիկ սահմանները՝ ոճական հակադրամիասնությամբ կերտելով նորագույն արժեք, ընդօրինակվող, կրկնվող ձևերի մեջ մնալով յուրատեսակ ու այժմեական:

Ամփոփելով միջտեքստայնություն եզրույթի ուսումնասիրության մասին ասվածները՝ գալիս ենք այն եզրակացության, որ բոլորը հիմնված են մեկ հայեցակետի վրա: Դա Մ. Բախտինի հայեցակետն է, որը միջտեքստայնությունը դիտարկում է որպես տեքստ, որն ապրում է «միայն հաղորդակցվելով մեկ այլ տեքստի (համատեքստի) հետ: Միայն տեքստերի այս շփման կետում է լույս առկայծում՝ լուսավորելով և՛ առաջ, և՛ հետ՝ կցելով տվյալ տեքստը երկխոսությանը»<sup>27</sup>:

### Օգտագործված գրականություն

Ավագյան Ա. 2004, Սերմնացու լույս, Երևան, «Դրագարկ», 222 էջ:

Թամրազյան Հ. 2008, Մայր հղացք, Երևան, «Նաիրի», 220 էջ:

Միլիտոնյան Է. 1996, Նոր թվարկություն, Երևան, «Նաիրի», 1996, 128 էջ:

<sup>26</sup> Барт 1994, 424.

<sup>27</sup> Бахтин 1979, 365.

- Մոլլեստ Հ. 2005, Բանաստեղծություններ, Երևան, «Նաիրի», 532 էջ:
- Арнольд И.В. 2005, Стилистика. Современный английский язык, Москва, «Наука», 384 с.
- Барт Р. 1989, Избранные работы. Семиотика. Поэтика, Москва, «Прогресс», 616 с.
- Барт Р. 1994, Избранные работы. Семиотика. Поэтика, Москва, изд. группа «Прогресс», «Универс», с. 493.
- Бахтин М.М. 1975, Вопросы литературы и эстетики, Москва, «Художественная литература», 504 с.
- Бахтин М.М. 1979, Эстетика словесного творчества, Москва, «Искусство», 426 с.
- Бахтин М.М. 1979, Проблемы поэтики Достоевского. 4-е изд., Москва, «Советская Россия», 318 с.
- Кристева Ю. 2000, Французская семиотика: от структурализма к постструктурализму, Москва, с. 427-457.
- Кристева Ю. 2013, Семиотика: исследования по семанализу (пер. с фр. Э.А. Орловой), Москва, «Академический проект», 285 с.
- Леута О.Н., Лотман Ю.М. 2002, О трех функциях текста, Вопросы философии, N 4, с. 165-173.
- Лотман Ю.М. 1994, Лекции по структуральной поэтике, Ю.М. Лотман и Тартуско-Московская семиотическая школа, Москва, «Гнозис», 560 с.
- Лотман Ю.М. 2000, Семиосфера, СПб., «Искусство-СПБ», 704 с.
- Смирнов И.П. 1995, Порождение интертекста. Элементы интертекстуального анализа с примерами из творчества Б.Л. Пастернака, СПб., СПбГУ, 190 с.
- Топоров В.Н. 1998, Об одном индивидуальном варианте «автоинтертекстуальности»: случай Пастернака, Пастернаковские чтения, Российская академия наук, Институт мировой литературы им. А.М. Горького, вып. 2, Москва, с. 4-37.
- Эко У. 2003, Шесть прогулок в литературных лесах, СПб., «Симпозиум», 285 с.
- Ямпольский М.Б. 1993, Память Тиресия: интертекстуальность и кинематограф, Москва, «Инфра-М», 408 с.
- Kristeva J. 1981, Le langage, cet inconnu. Une initiation à la linguistique. Paris, Seuil, 327 p.
- Hansen-Löve O. 1983, Intermedialität und Intertextualität: Probleme der Korrelation von Wort und Bildkunst, V.W. Schmidt, W.-D. Stempel (Hrsg.), Dialog der Texte, Wien, S. 291-360.
- Genette G. 1982, Palimpsests: Literature in the Second Degree, Nebraska, University of Nebraska Press, 491 p.
- Morley S. 2003, Writing on the Wall: Word and Image in Modern Art, Berkeley, University of California Press, 224 p.

## ПРОБЛЕМЫ ХАРАКТЕРИСТИКИ ПОНЯТИЯ «ИНТЕРТЕКСТУАЛЬНОСТЬ» И ТИПОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ

Рипсиме Закарян

Резюме

Термин «интертекстуальность» впервые был использован французским теоретиком постструктурализма Ю. Кристевой в 1967 г., в статье «Бахтин, сло-

во, диалог и роман». Ю. Кристева в своих исследованиях переосмысливает идею М. Бахтина о межтекстовом диалоге, согласно которой каждое произведение сгущает исторический опыт культурных связей, вступает с последним в «диалогический» процесс. Каждый текст, тайным или явным образом, соотносится с другими текстами культуры. Таким образом, интертекстуальность понимается как особое качество каждого текста.

Интертекстуальность трактуется также в «широком» (Ю. Кристева, Ж. Деррида, Р. Барт) и «узком» (И.П. Смирнов, Ю.П. Солодуб, Н.А. Кузьмина, Н.А. Фатеева) смыслах. В широком смысле интертекстуальность понимается как уникальное качество каждого текста. Каждый текст воспринимается как интертекст, который может стать прецедентным текстом для новосозданного текста. В узком смысле интертекстуальность трактуется как особое качество тех или иных текстов; проявления интертекстуальности заметны не во всех текстах.

В семиотическом плане текст воспринимается как знаковая целостность, а интертекстуальные связи – как взаимосвязь знаковой системы, включенной в текст. Основы этого подхода следует искать в исследованиях Ю. Лотмана.

**Ключевые слова** – интертекстуальность, текст, прецедентный текст, семиотика, культура, философия, художественное произведение.

#### THE MAIN PROBLEMS AND TYPICAL CHARACTERISTICS OF THE CONCEPT OF "INTERTEXTINITY"

Hripsime Zakaryan

Abstract

The term "intertextuality" was first used by the French theorist of post-structuralism Y. Kristeva in the 1967 article "Bakhtin, word, dialogue and novel". Yu. Kristeva, based on her concepts of M. Bakhtin's theory of polyphonism, in her research rethinks Bakhtin's idea of intertextual dialogue, according to which each work thickens the historical experience of cultural ties, enters into a "dialogical" process with the latter. Each text, secretly or explicitly, correlates with other texts of the culture. Thus, intertextuality is understood as a special quality of each text.

Intertextuality is also interpreted in the "broad" (Yu. Kristeva, J. Derrida, R. Bart) and "narrow" (I. P. Smirnov, Yu. P. Solodub, N. A. Kuzmina, N. A. Fateeva) senses. In a broad sense, intertextuality is understood as the unique quality of each text. Each text is perceived as an intertext, which can become a precedent text for a newly formed text. In a narrow sense, intertextuality is interpreted as a special quality of certain texts; manifestations of intertextuality are not noticeable in all texts.

In semiotic terms, the text is perceived as a sign integrity, and intertextual connections as the interconnection of the sign system included in the text. The foundations of this approach should be sought in the studies of Yu. Lotman.

**Key words** – intertextuality, text, case text, semiotics, culture, philosophy, work of art.

ТВОРЧЕСКИЕ СИЛЫ КАНАДСКОЙ АРМЯНСКОЙ СЦЕНЫ:  
АНАИТ ГУЮМДЖЯН (1938-2020)

**Анаит Бекарян**

Кандидат филологических наук  
Институт искусств НАН РА  
РА, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4  
Эл. адрес: abekaryan@mail.ru  
ORCID: 0000-0001-7980-4180

Статья представлена 23.10.2023, рецензирована 25.03.2024, принята к публикации 25.04.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.1-197

Насколько необходимы школы для  
сохранения армянской идентичности,  
настолько же необходимы театры.  
Они непременно должны быть созданы.

**Анаит Гуюмджян<sup>1</sup>**

**Аннотация**

Сценический дебют Анаит Гуюмджян состоялся в Турции, а впоследствии она стала выступать на канадской сцене. Талантливая актриса была также режиссером-постановщиком многих спектаклей. Ее партнерами по сцене были супруги Мадатян, Хачик Арзуманян, Мгер Мкртчян. Она принимала участие во многих спектаклях и снискала любовь зрительской аудитории. Спектакли «Зов журавля» и «Дядюшка Багдасар» с ее участием имели огромный резонанс и удостоились высокой оценки критики. В труппе «Петрос Адамян» играли многие одаренные актеры канадской сцены, но среди них особое место занимала Анаит Гуюмджян как многогранная личность и скромная служительница муз.

**Ключевые слова** – Анаит Гуюмджян, Монреаль, канадско-армянский театр, театральная труппа Константинопольского армянского союза, общенациональная труппа, труппа «Армянская сцена», Мгер Мкртчян.

---

<sup>1</sup> Քննիչ 1989, N 1010, 22:

## Вступление



**Рис. 1.** Публикуется из буклета к пьесе «Дядюшка Багдасар» в постановке Мгера Мкртчяна.

«В холодном Монреале есть личности, хранящие в своем сердце негасимое пламя армянской сцены и культуры. Они вносят свой щедрый вклад в развитие местной культурной жизни, и одной из этих подвижниц является скромная служительница искусств Анаит Гуюмджян...<sup>2</sup>». Так характеризует канадскую армянскую актрису ливанский армянский актер, историк театра армянской диаспоры Давид Эвереклян.

А. Гуюмджян родилась в Константинополе, в творческой семье. Отец – Айкасер Воскерчян был известным актером и декламатором, мать была музыкантом-пианисткой. Будущая актриса росла в этой благодатной атмосфере, приобщаясь к миру прекрасного. Еще в детстве она вместе с сестрами заучивала его роли и декламировала. Впервые она вышла на сцену в пятнадцать лет, сыграв главную роль в пьесе «Акселерат» в постановке Ашота Мадатяна<sup>3</sup>. В Константинополе ее партнерами по сцене были Хачик Арзуманян, Люси Мадатян<sup>4</sup>, Геворг Гапараджян, Назарет Пал, Ашот Мадатян.

В 1967 г. Анаит Гуюмджян переехала в Канаду, в Монреаль. Начальный период ее театральной деятельности был связан с формированием Константинопольского армянского союза, куда она была приглашена в качестве постановщика и сыграла в пьесах «Высокочитимые попрошайки», «Лицемер», «Мадемуазель Шокола» и «Акселерат». Затем она стала играть в Общенациональной театральной труппе «Петрос Адамян».

<sup>2</sup> Բնիկ 1989, N 1010, 22:

<sup>3</sup> **Ашот Мадатян** (1882-1965). До начала Первой мировой войны играл с О. Зарифяном, Эд. Чапрастом, Н. Пешикташляном. В 1918 г. он основал в Алеппо театральную труппу «Мельпомена», затем перешел в константинопольскую драматическую театральную труппу. Свою дальнейшую театральную и литературную деятельность А. Мадатян продолжил в Бейруте и Константинополе.

<sup>4</sup> **Люси Мадатян** (?-1970) родилась в Константинополе и начиная с 1920 гг. посвятила себя театру. Играла в константинопольской армянской драматической труппе в 1920-1922 гг. Когда были запрещены спектакли на армянском языке, она стала выступать в турецких труппах. Впоследствии стала играть в руководимых мужем – Ашотом Мадатяном, армянских труппах.

Вскоре познакомилась с Нвард Тиракян и Арпине Шалчян<sup>5</sup> и в качестве актрисы приняла участие в пьесах «Человек Эго» и «Шотар и семья». Она выступала также в постановках Саркиса Зуриkyяна<sup>6</sup> («Да, мир перевернулся»), Жоржа Саркисяна<sup>7</sup> («Зов журавля»), а также Мгера Мкртчяна («Дядюшка Багдасар»). Гастролировала в Торонто, Бостоне, Нью-Джерси, Филадельфии.

### **Театральная деятельность актрисы, связанная с Константинопольским армянским союзом**

Усилиями обосновавшихся в Монреале константинопольских армян в 1967 г. был основан единственный в Канаде земляческий союз, который не примыкал к каким-либо политическим, религиозным, партийным группировкам, но являлся самым либеральным, равно как и приверженцем и преданным защитником армянских традиций. В ряду всех армянских организаций Монреаля Константинопольский армянский союз имел целью сохранить на чужбине армянскую идентичность, приобщить канадцев к нашей культуре, обучить армянскому языку тех наших соотечественников, которые в силу обстоятельств не имели возможности выучить родной язык, чтобы противостоять ассимиляции. В построенном собственными силами здании союза начиная с 1969 г. проходили художественные вечера, ставились спектакли.

---

<sup>5</sup> **Арпине Шалчян** (1921-?), была дочерью актера Григора Багратуни, родилась в Каире. Училась в гимназии Галустян и двух музыкальных консерваториях «Монтеверди» и «Апу Пакр Хайят». Ее сценическая деятельность началась со школьной скамьи: декламация, пение, танцы и театр. В 1943 г. она вышла замуж за скрипача Сепуха Шалчяна (1912-1951). С 1955 г. выступала в оперных спектаклях, исполняла также произведения армянских композиторов. В 1969 г. переехала в Канаду, в Монреаль. Ее театральная деятельность в основном была связана с Общенациональным культурным союзом. Выступала в спектаклях «Древние боги», «Арменуи», «Человек Эго», «Лучше позже – да лучше», «Марионетка» и др. В 1984 г. была награждена медалью Общенационального культурного союза за многолетнюю театральную деятельность.

<sup>6</sup> **Саркис Зуриkyян** (1931-2017) – монреальский режиссер-постановщик. За годы своей творческой карьеры поставил десятки пьес. Родился в Александрии. Учился в местной гимназии Мхитарян, затем – во французском лицее. С детских лет любил армянский театр. В 1962 г. из Египта переехал в Канаду, в Монреаль. С целью профессионального совершенствования посещал театральные курсы в Монреальском университете, получив квалификацию педагога-постановщика. В 1984 г. за свою сценическую деятельность был награжден Золотой медалью на фестивале, организованном в США Общенациональным культурным союзом, в 2003 г. получил благодарность от правления Общенационального культурного союза, а в 2013 г. от имени правления союза и театральной труппы ему был вручен памятный сувенир как актеру, режиссеру-постановщику и руководителю труппы «Петрос Адамян» за 50-летнюю деятельность на этом поприще.

<sup>7</sup> См.: Бекарян 2023, 231.

По инициативе культурного центра союза 17 января 1970 г. была поставлена трехактная комедия итальянского драматурга Никодеме «Акселерат», известная также под названиями «Девушка с улицы» и «Подросток». Героиня пьесы – девушка-подросток, с красивой внешностью, но выросшая без родителей, не приобщенная к лживым мещанским нравам и обычаям и наделенная детской наивностью. Благодаря этим качествам и природной красоте она была любима всеми, но никто не проявлял к ней искренности и желания создать с ней семью, и поэтому в ее чистой душе рождались такие порой взаимоисключающие чувства и ощущения, как любовь, ревность, пренебрежение, месть, которые, с одной стороны, умножали число преследующих ее, а с другой – число исполненных чувства мщения женщин. Пьеса была поставлена одаренной даром режиссера Анаит Гююмджян, сыгравшей также роль главной героини. Актрисе удалось правдиво отобразить сложное душевное состояние героини, продемонстрировав сквозь завесу комического весь трагизм жизни. Согласно материалам канадской периодики, спектакль, как по своему сюжету, так и постановке, был на редкость гармоничным и вызвал живой отклик в сердцах зрителей, переполнявших зал<sup>8</sup>.

13 июня того же года в постановке Анаит Гююмджян была представлена четырехактная пьеса Поля Гаво «Мадемуазель Шокола», переведенная на армянский язык известным константинопольским артистом и режиссером армянского происхождения Ашотом Мадатяном. Многие из игравших в пьесе актеров были дебютантами, но под руководством неутомимой служительницы муз Анаит Гююмджян они сделали все возможное, вложив в спектакль сердце и душу и обеспечив тем самым высокий уровень актерского искусства. Спектакль был тепло принят зрительской аудиторией. Отметим, что за сравнительно короткий период театральная труппа константинопольского армянского союза снискала славу, удостоившись высокой оценки монреальской публики, и в первую очередь, это было результатом работы руководителя труппы Анаит Гююмджян: благодаря богоданному актерскому таланту и трудолюбию, любви к избранной профессии ей удалось объединить вокруг себя многих единомышленников и подвижников искусства. Они периодически ставили спектакли на армянском языке, способствуя тем самым сохранению армянской идентичности. Об авторитете А. Гююмджян в монреальской армянской общине свидетельствует первое выступление театральной труппы

---

<sup>8</sup> Репертуар 1970, N 77, 13:

Константинопольского армянского союза, состоявшееся 28 мая 1972 г. в зале союза: «Нестерпимая жара стояла в Канаде, но зал был переполнен, поскольку постановщиком спектакля была госпожа Анаит Гююмджян-Воскерчян, которая также исполняла главную роль. В армянской среде имя этой талантливой армянки с исключительными способностями<sup>9</sup> было у всех на устах».

В тот же день был представлен спектакль по пьесе известного западноармянского писателя Акопа Пароняна «Лицемер». Готовя постановку, А. Гююмджян остановила свой выбор в основном на молодых актерах, «лелея надежду и в них пробудить любовь и благоговение к Прекрасному, к армянскому искусству»<sup>10</sup>. В спектакле А. Гююмджян играла роль Терезы – сестры Таде. Спектакль имел огромный успех. Поклонники театрального искусства рукоплескали этой замечательной постановке, в особенности Анаит Гююмджян<sup>11</sup>: «когда она выходит на сцену, зал рукоплещет ее героине, ...она вызывает восхищение своим кротким характером и добропорядочностью в лице госпожи Анаит Гююмджян, дочери высокочтимого Воскерчяна»<sup>12</sup>.

Как писал константинопольский журнал «Кулис», «Госпожа Анаит Гююмджян, несмотря на свою занятость, с большим мастерством поставила пьесу, вникнув во все тонкости и детали драматургии, и зритель в течение двух часов увлеченно смотрит спектакль...»<sup>13</sup>. С первых же дней своего создания Константинопольский армянский союз развернул благодарную деятельность, направленную на сохранение национальной самости благодаря усилиям выпускников гимназий Мхитарян, Есяян и Центральной. По их инициативе в 1973 году был создан культурный орган Константинопольского армянского союза МЕЦ, названный так председателем правления союза Жирайром Айватяном, предложившим аббревиатуру, составленную из первых букв названий гимназий. МЕЦ имел свою театральную труппу «Мнакян», деятельность которой также заслуживает упоминания. «МЕЦ и единая культура единого армянского народа» – таков был слоган этого органа культуры. 9 декабря 1973 года труппой «Мнакян» впервые на монреальской сцене был представлен спектакль «Высокочтимые попрошайки» по пьесе А. Пароняна. Существующая

<sup>9</sup> Գեղարդ 1972, N 12, 26:

<sup>10</sup> Գեղարդ 1972, N 12, 26:

<sup>11</sup> Քուլիս 1972, N 612, 22.

<sup>12</sup> Քուլիս 1972, N 612, 22.

<sup>13</sup> Քուլիս 1972, N 612, 22.

всего 6 месяцев труппа культурного союза МЕЦ в качестве своей первой постановки выбрала пьесу армянского писателя. Спектакль готовили более двух месяцев «под взыскательным руководством Анаит Гуюмджян»<sup>14</sup>. Как пишет театральный критик, «Образ супруги Манук-ага был воплощен именно Анаит Гуюмджян. Госпожа Гуюмджян сыграла эту небольшую второстепенную роль, но ее сценический талант измеряется не этой ролью. Более 15 лет, начиная со школьной скамьи, вначале в Константинополе, затем в Монреале, она имела возможность проявить как свой актерский талант, так и талант декламатора и певицы. А сегодня мы аплодируем ей как режиссеру и постановщику. Я присутствовал на одной из репетиций. Неимоверных сил и труда требуют репетиции. Надо работать с каждым актером, над его пластикой, громкостью и скоростью речи, играть самой, чтобы актер смог лучше понять роль. Все это добровольно взяла на себя госпожа А. Гуюмджян, посвятив репетициям вечерние часы своего досуга»<sup>15</sup>.

### **Театральная деятельность с Общенациональной театральной труппой**

Монреальская Общенациональная театральная труппа стала работать с 1966 года, а с 1975 года она стала называться труппой «Петрос Адамян»; под руководством Нвард Тиракян, Арпине Шалчян, Саркиса Зурикяна и других постановщиков было подготовлено множество достойных упоминания спектаклей. В труппе было много ярких актеров, среди которых особое место занимала Анаит Гуюмджян. 11 и 12 июня 1977 г. труппа «Петрос Адамян» представила на суд зрителей комедийную пьесу Арамашота Папаяна «Да, мир перевернулся» в постановке Саркиса Зурикяна. «На монреальской армянской сцене не так уж часто шли подобные удачно поставленные спектакли, которые являлись результатом кропотливого труда», – отмечал театральный критик на страницах периодического издания «Айреник»<sup>16</sup>. По свидетельствам местной прессы, труппа «Петрос Адамян», по приглашению Общенационального армянского культурного союза Торонто, с этим спектаклем выступила и в этом городе: «Все актеры, в основном любители, сделали все возможное, чтобы спектакль удался. Лучшие актеры были удивительно гармоничны представленным

---

<sup>14</sup> Գեղարդ 1974, N 1, 14:

<sup>15</sup> Գեղարդ 1974, N 1, 4:

<sup>16</sup> Հայրենիք 1977, հուլիս 15:

в пьесе типажам»<sup>17</sup>, – отмечала критика. В этом спектакле Анаит Гююмджян исполняла роль Виктории – жены одного из героев – Шмавана: «Госпожа А. Гююмджян воплотила на сцене образ слегка поверхностной и кичливой женщины. Ей удалось войти в образ Виктории – суетливой, взбалмошной, порой впадающей в депрессию и в то же время примиряющейся с жизненными ситуациями. Госпожа А. Гююмджян столь же удачно играла и «трагические» роли, у нее был исключительный сценический голос, она прекрасно владела сценическим искусством»<sup>18</sup>.

Труппой «Петрос Адамян» в 1979 году была представлена пьеса М. Кочаряна «Родные люди». События, описываемые в пьесе, происходят в Армении, после окончания Второй мировой войны. Согласно материалам периодики, «постановщик и актеры создали в спектакле удивительную атмосферу и гармонию»<sup>19</sup>. «В целом можно сказать, что всем актерам удалось удачно изобразить персонажей пьесы, тем самым они справились с возложенными на них задачами»<sup>20</sup>. Образ матери, измученной жизненными потерями, был воплощен госпожой Анаит Гююмджян, которая словно была не актрисой, играющей роль, а одной из наших матерей, вложившей душу в проникновенный авторский текст и заставлявшей плакать зрителей»<sup>21</sup>.

Для труппы «Петрос Адамян» незабываемыми были дни, когда режиссером труппы «Гаспар Ипекян» Жоржем Саркисяном в Монреале были представлены спектакли «Зов журавля» и «Три сына и дочь». Пьеса западноармянского драматурга Жака Акопяна<sup>22</sup> (1917-2019) «Зов журавля» впервые была издана в 1956 г. в Бейруте, в газете «Акос»<sup>23</sup>. Сюжет пьесы взят из жизни западных армян, и в ее основе лежат преимущественно патриотические чувства и переживания. Первая премьера состоялась в 1977 г., в Бейруте, в зале театра «Акоп Тер-Мелконян», режиссером был известный театральный деятель, талантливый актер Жорж Саркисян. Спектакль имел огромный успех, зрительская аудитория составила 20 тыс. человек. В условиях сложившейся в Бейруте нестабильной

<sup>17</sup> Հայրենիք 1977, օգոստոս 5:

<sup>18</sup> Հայրենիք 1977, օգոստոս 5:

<sup>19</sup> Հայրենիք 1979, 22 հոկտեմբերի:

<sup>20</sup> Հայրենիք 1979, 22 հոկտեմբերի:

<sup>21</sup> Հայրենիք 1979, 22 հոկտեմբերի:

<sup>22</sup> Поэт диаспоры. Автор поэтических произведений и пьес. Основной темой его творчества является тема любви к родине.

<sup>23</sup> Մկրտ 1956, մարտ, N 3/80/, 1-17, ապրիլ, N 4/81/, 6-17, մայիս, N 5/82/, 13-26, հոկտեմբեր, N 10/87/, 23-37/, նոյեմբեր, N 11/88/, 18-28:

ситуации и судьбоносных событий спектакль посмотрели 41 тыс. человек. В дальнейшем пьеса была показана в Алеппо (7 раз) и в Дамаске (2 раза). Отметим, что пьеса «Зов журавля» в постановке Паркева Пелтекяна в 1979 г. была также представлена Общенациональной труппой в Лос-Анджелесе в связи с торжествами, посвященными 50-летию труппы. А в 1980 г. эта же пьеса была поставлена Жоржем Саркисяном в Буэнос-Айресе и Монтевидео и опять-таки имела успех и удостоилась высокой оценки как иностранной, так и армянской зрительской аудитории, что нашло отражение в местной периодической печати. Воодушевленный этим успехом, Общенациональный культурный союз Канады пригласил Жоржа Саркисяна с целью формирования труппы в Монреале и Торонто, дабы представить пьесу «Зов журавля» в этих городах. Об этом писала еженедельная газета «Оризон»: «Уже несколько месяцев в Монреале находится известный режиссер и руководитель бейрутской театральной труппы «Гаспар Ипекян» господин Жорж Саркисян. Вместе с монреальской труппой «Петрос Адамян» Жорж Саркисян должен поставить пьесы «Зов журавля» (авт. Жак Акопян) и «Три сына и дочь» (авт. Роже Фердинанд)<sup>24</sup> в сентябре – октябре этого года»<sup>25</sup>. 12 сентября 1981 г. труппа монреальского филиала Общенационального культурного союза «Петрос Адамян» в здании ливанской театральной труппы «Гаспар Ипекян» представила спектакль по пьесе Ж. Акопяна «Зов журавля», на котором присутствовал автор пьесы, приглашенный из Калифорнии<sup>26</sup>. С небольшой ролью в спектакле выступила также Анаит Гююмджян, исполнив роль супруги главного героя – Геворга Арцруни.

В 1982 г. по приглашению Перча Фазляна – руководителя и главного режиссера труппы Культурного союза Текеян «Армянская сцена», в Монреаль прибыл известный армянский актер Мгер Мкртчян. Усилиями последнего и Перча Фазляна труппа «Армянская сцена» осуществила постановку пьесы великого армянского комедиографа Акопа Пароняна «Дядюшка Багдасар».

Впервые «профессиональный актер» играл с любителями, рискуя оказаться на их уровне. Снискавший славу актер – Мгер Мкртчян, не колеблясь, дал согласие выступить с театральной труппой «Армянская сцена» монреальского культурного союза Текеян, поскольку его партнерами

---

<sup>24</sup> Французский драматург (1898-1967).

<sup>25</sup> Հորիզոն 1981, 10 օգոստոսի, 3:

<sup>26</sup> Հորիզոն 1981, 21 սեպտեմբերի, 1:

---

на сцене были лучшие одаренные артисты армянской общины, а руководителем труппы являлся опытный актер Перч Фазлян»<sup>27</sup>.

Это стало ярким фактом в истории театральной жизни общины, ибо несмотря на разделяющее их географическое положение, на сцене объединились действовавшие в разных странах творческие силы, и их связующим звеном стало Его Величество Искусство. Символичным было и то, что присутствие Мгера Мкртчяна послужило поводом к тому, чтобы находившиеся по разные стороны барьера творческие труппы действовали совместно. Талантливая актриса Анаит Гуюмджян также приняла участие в спектакле, сыграв роль супруги Багдасара – Ануш. «Анаит Гуюмджян, из труппы Общенационального культурного союза «Петрос Адамян», привлекла внимание своей профессиональной игрой, выступив в роли жены главного героя пьесы «Дядюшка Багдасар»; если бы данную роль воплотила другая актриса, то это внесло бы некую недопустимую простоватость в образ. Будучи уроженкой Константинополя, А. Гуюмджян с легкостью использовала интонационные особенности речи константинопольских армян; она играла роль Ануш с такой артистичностью, которая придала художественную тонкость и изящество всему происходящему на сцене – возгласам, крикам, сценам с возбуждающими танцами и сладострастной любовью», – писала газета «Апага»<sup>28</sup>.

Мгер Мкртчян дал высокую оценку армянской диаспоре, придавая большое значение роли театра в развитии армянского искусства, отмечая важность укрепления связей диаспоры с родиной. Спектакль «Дядюшка Багдасар» имел грандиозный успех и резонанс в монреальской действительности. В роли Огсена выступил руководитель труппы «Армянская сцена» и постановщик пьесы Перч Фазлян, а роль Саломеи исполнила Сирвард Фазлян. Об этой постановке писала как канадская армянская печать, так и местная.

### **Заключение**

Анаит Гуюмджян выступала с разными театральными труппами. За годы творческой деятельности ею было поставлено множество спектаклей, и каждый из них имел неизменный успех. Играя в пьесах как зарубежных, так и армянских драматургов, она оставалась верна мысли Акопа Айваза: «Давайте любить сцену, ибо она является тем единствен-

---

<sup>27</sup> Մշակա 1982, 30 հոկտեմբերի:

<sup>28</sup> Մշակա 1982, 30 հոկտեմբերի:

ным и величайшим импульсом, который облагораживает душу, придает тонкость и ясность мыслям»<sup>29</sup>.

### Использованная литература

- Այվազ Հ. 1957, Այցելութիւն մը տաղանդավոր գրագետ եւ արուեստագետ Գասպար Իփեքեանին, Քուլիս, N 248, էջ 12:
- Ասրճեան Ի. 1974, «Մեծապատիվ մուրացկաններ» ու ներկայացման առիթով, Գեղարդ, N 1, էջ 14:
- Գարանֆիլ Վ. 1972, Հ. Պարոնյանի «Շողոքորթը» Պոլսահայ միութեան մէջ, Քուլիս, N 612, էջ 22:
- Գարանֆիլ Վ. 1972, «Շողոքորթը» Պոլսահայ միութեան թատերաբեմին վրայ, Գեղարդ, Մոնրեալ, N 12, էջ 26:
- Էվերեկեան Դ. 1989, Անահիտ Գոյումճեանի հետ Քուլիս, N 1010, էջ 22:
- Թղթակից 1977, Համազգայինի «Պետրոս Աղամեան» թատերախումբի ելոյթը, Հայրենիք, հոլիս 15:
- Հոթոյեան Գր. 1977, «Պետրոս Աղամեան» թատերախումբին ելոյթը, Հայրենիք, օգոստոս 5:
- Մոմճեան Պ. 1979, «Հարազատ մարդիկ» թատերախաղի ներկայացումը, Հորիզոն, 22 հոկտեմբերի:
- Ժորժ Սարգիսեան կը բեմադրէ 1981, Հորիզոն, Մոնրեալ, 10 օգոստոսի, էջ 3:
- «Պետրոս Աղամեան» թատերախումբը Ժորժ Սարգիսեանի ղեկավարութեամբ բեմադրեց «Կռունկը կը կանչէ» 1981, Հորիզոն, Մոնրեալ, 21 սեպտեմբերի, էջ 1:
- Վ.Ք. 1970, Թատերական ներկայացում Պոլսահայ միութեան մէջ, Բուրաստան, Մոնրեալ, N 77, էջ 13:
- Քեքլիկեան Ս. 1982, Միեր-Պաղտասար. Խորինաստ ծիծաղի զինուորը, Ապագա, 30 հոկտեմբերի:
- Бекарян 2023, Спектакль Жака Акопяна по пьесе «Зов журавля» на канадской сцене, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, Երևան, էջ 230-240:

### ԿԱՆԱԴԱՀԱՅ ԲԵՄԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ. ԱՆԱՀԻՏ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ (1938-2020)

Անահիտ Բեքարյան

Ամփոփում

Կանադահայ թատրոնի տաղանդավոր դերասանուհի Անահիտ Գոյումճեանը իր բեմական առաջին քայլերը կատարել է Թուրքիայում, իսկ հետագայում խաղացել Կանադայում: Նրա խաղընկերներն են եղել Մաղաթյան ամուսինները, Խաչիկ Արզումանյանը, Միեր Մկրտչյանը, Պերճ Ֆազլյանը և ուրիշներ: Անահիտ Գոյումճեանը մասնակցել է բազմաթիվ ներկայացումների՝ արժանանալով թատերասեր հասարակայնության, ինչպես նաև մամուլի բարձր գնահատականների: Թատերասեր կանադահայերի համար անմոռանալի օրեր են եղել «Կռունկը կը կանչէ» և

<sup>29</sup> Քուլիս 1957, N 248, 12:

---

«Պաղտասար աղբար» թատերախաղերը: «Պետրոս Ադամյան» թատերախումբը իր գործունեության ընթացքում ունեցել է դերասանական վաստակաշատ բազմաթիվ ուժեր, որոնց մեջ իր առանձնահատուկ տեղն է գրավում հայ բեմի նվիրյալ Անահիտ Գույումճյանը:

**Բանալի բառեր՝** Անահիտ Գույումճյան, Մոնրեալ, կանադահայ թատրոն, Պոլսահայ միության թատերախումբ, Համազգային թատերախումբ, «Հայ բեմ» թատերախումբ, Մհեր Մկրտչյան:

### CREATIVE POTENTIAL OF THE ARMENIAN STAGE IN CANADA: ANAHIT GUYUMJIAN (1938-2020)

Anahit Bekaryan

Abstract

Anahit Gouyoumjian made her stage debut in Turkey before captivating stages in Canada. As a talented actress, she also took on directing many productions. She shared the stage with the Madatyans, Khachik Arzumanyan, Mher Mkrtchyan. Her diverse roles endeared her to the audience. Her performances in "The Crane's Call" and "Uncle Baghdasar" garnered immense praise from both audiences and critics alike. In the production of "Petros Adamyán", Gouyoumjian stood out among a constellation of gifted actors as a multifaceted persona and a humble muse to the craft.

**Key words** – Anahit Guyumjian, Montreal, Canadian-Armenian theatre, theatre company of Constantinople Armenians, Hamazgain theatre company, "Armenian Stage" company, Mher Mkrtchyan.

# ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆԻ «ԸՆԿ. Բ. ՓԱՆՋՈՒՆԻ» ԵՐԳԻԾԱՎԵՊԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

## Սաթենիկ Մելիքյան

Արվեստագիտության թեկնածու  
Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ  
ՀՀ, Երևան, Ալ. Մանուկյան 13  
Էլ. հասցե՝ satik-melikyan@mail.ru  
ORCID: 0000-0001-5489-2794

Հոդվածը ներկայացվել է 20.01.2023, գրախոսվել է 01.03.2023, ընդունվել է տպագրության 25.04.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.1-208

### Ամփոփում

Սիյուռքահայ կյանքում Երվանդ Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» գրքի հրատարակումը մշակութային նշանակալի երևույթ էր: Երգիծավեպը ձևավորեց Ալեքսանդր Սարուխանը (1898-1977), որը նորագույն շրջանի հայկական մշակույթի պատմության մեջ մտել ու գնահատվում է որպես հմուտ ծաղրանկարիչ: Գրքի ընթերցում-դիտումը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր էջում առկա է գերադրականը՝ բուռն խրախճանքը, տուրուդմիտը և այլն: Հերոսների պահվածքը (Փանջունու և իր համախոհների), շարժումները, դիմախաղը, կեցվածքները հասցված են ծայրահեղ լարվածության: Եվ այդ գերադրականը կատարվում է ռեալիստորեն մանրակրկիտ պատկերված, առօրեականությամբ տոգորված տեսարանների՝ իբրև թատերական դեկորացիաների դիմաց: Նյութի նման պատկերավորումը որոշակի գրավչություն է հաղորդում նկարչի բազմաբնույթ ստեղծագործություններին՝ ապահովելով դրանց անկրկնելի սարուխանական բնույթը:

**Բանալի բառեր՝** զավեշտական, էքսպրեսիվ, չափազանցություն, գրոտեսկ, նկարագրող, դատարկապորտ քաղաքական գործիչ, շարժում, դիմախաղ:

### Ներածություն

Սիյուռքահայ կյանքում Երվանդ Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» գրքի հրատարակումը մշակութային նշանակալի երևույթ էր: Երգիծավեպը ձևավորեց Ալեքսանդր Սարուխանը (1898-1977), որը նորագույն շրջանի հայկական մշակույթի պատմության մեջ մտել ու գնահատվում է որպես հմուտ ծաղրանկարիչ<sup>1</sup>: Ե. Օտյանի Փանջունին ինքնին ավարտուն և ընդհանրացված մի կերպար է՝ հայ իրականության մեջ առաջացած քաղաքական ար-

<sup>1</sup> Մեծ է Ալեքսանդր Սարուխանի (1898-1977) կշիռը արդի նկարչության մեջ: Իր մոտ կեսդարյա ստեղծագործական ճանապարհի ընթացքում նկարիչը ստեղծել է ավելի քան 20000 նկար (ծաղրանկարներ, կատականկարներ, շարժեր), թեմատիկ ժողովածուներ («Այս պատերազմը», «Տես խոսքերը», «Մենք մեր ակնոցով») և գրքի ձևավորումներ (Ե. Օտյան՝ «Ընկ. Բ. Փանջունի», Հ. Պարոնյան՝ «Մեծապատիվ մուրացկաններ»): Ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում նկարիչն արել է այն, ինչ կարողանում էր ամենալավն անել և, ի հետևանք, արժանացավ «Երգիծանկարչության նահապետ» կոչման, «Ժողովուրդները ժողովուրդներին» շքանշանի և այլ բարձր տիտղոսների, Saroukhan 1999, 9.

կաճախնդրությունը մարմնավորող: Սարուխանի գծանկարային զգեստավորումով նա դարձավ ավելի հասկանալի ու ըմբռնելի:

### **Ե. Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» գրքի ձևավորման ժանրաթեմատիկ համակարգը**

Երվանդ Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» գրքի հրատարակումը մշակութային նշանակալի երևույթ էր, որին անդրադարձան ականավոր շատ գրողներ՝ արձակագիր Միքայել Բյուրճյանը, բանաստեղծ Վահան Թեքեյանը և ուրիշներ:

Երգիծավեպը ձևավորելու պատիվը տրվեց երիտասարդ, բայց արդեն փորձառու նկարիչ Ալեքսանդր Սարուխանին (1898-1977)<sup>2</sup>: Սեփական թերթ ձևավորելու, դիմանկարի ժանրին անդրադառնալու, տեղական մամուլում առաջադրված թեման տեսողականորեն վերամարմնավորելու փորձը բավականին հարստացրել էր նկարչի նյութը պատկերավորելու հնարավորությունները: Ստեղծագործական լայն դիպագոնը նրան հնարավորություն ընձեռեց ուժերը փորձելու նաև գրքի նկարագարողման մեջ<sup>3</sup>:

Օտյանի վեպի նկարագարողումները բացահայտում են 30 տարին բոլորած երիտասարդ Ալեքսանդր Սարուխանի արդեն ձևավորված նկարելաոճը, նյութն արձարծելու նախընտրած մոտեցումները: Այստեղ նա հանդես է գալիս որպես գրքի ձևավորող: Մինչև առաջին գրքի նկարագարողումը Սարուխանը բազմիցս պատկերել է Օտյանի Փանջունու մարդկային նկարագիրը հիշեցնող կերպարներ: Ստանալով գրքի նկարագարողման պատվերը և անձամբ մտերիմ լինելով Օտյանի հետ՝ նկարիչը, ըմբռնելով վեպի ֆաբուլան, ճիշտ մեկնաբանեց նյութը և ստեղծեց դատարկապորտ քաղաքական գործչի համոզիչ, ընդհանրացված կերպարը: «-Եկուր քեզ հեղափոխական գործիչ շինենք, - ըսավ բարեկամը Փանջունուն, - խոսելու դյուրություն ունիս՝ այդ բավ է: Իսկ ան կը խոսեր, կը խոսեր ու կը խոսեր» (նկ. 1):

Սարուխանի ժամանակակից հայ նկարիչներ Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը խոսքի միջոցով ներկայացված աշխարհը վերակերպավորել են միջնադարի հայ վարպետների հարուստ փորձի արդիականացման ճանապարհով:

Սարուխանը, հաշվի առնելով Ե. Օտյանի երկի ստեղծման ժամանակաշրջանը, ազգային-աշխարհագրական-պատմամշակութային միջավայրը, գրքի հերոսների մարդկային խառնվածքը, նյութը տեսողաբար բացահայ-

<sup>2</sup> Տե՛ս Avedissian 1959, 79:

<sup>3</sup> Ալ. Սարուխանը «Ընկ. Բ. Փանջունի» երգիծավեպը ձևավորում-նկարագարում է 1934 թ., իսկ 1938-ին անձնական միջոցներով և որոշ մտավորականների օժանդակությամբ այն հրատարակում է իր 150 ծաղրանկարներով, հմմտ.՝ Աւետիսեան 1947, 109:

տել ու մեկնաբանել է XX դարի հումորիստական գրաֆիկայի ասպարեզում առաջադրված ոճաձևաբանական ըմբռնումների տեսանկյունից:

Մատենական նկարչության ասպարեզում Սարուխանի արվեստը բնորոշող հատկանիշները նրա գրքապատկերները սերտորեն մերձեցնում են ժանրի դասական վարպետ Վիլիելմ Բուշի (1832-1908) ստեղծագործական ավանդույթներին՝ կոմիքսներին (տիպականացման ճանապարհով ստեղծված զվարճալի մարդուկների զավեշտական արկածները հերթական կադրերի միջոցով ներկայացնող եղանակ)<sup>4</sup>:

Այդ ավանդույթները նկարիչն ուսումնասիրել ու կիրառել է XX դարի մոդեռնիստական ուղղություններից մեկի՝ էքսպրեսիոնիզմի եղանակով և իր ստեղծագործական անհատականության, իրեն հետաքրքրող խնդիրների դիրքերից: Ե. Օտյանի երգիծավեպի սյուժետային նյութը նկարիչը միջոց դարձրեց քաղաքական արկածախնդրություն երևույթն ու խնդիրն արծարծելու համար, երևույթ, որը խիստ բացասական դեր է կատարել հայոց ճակատագրում՝ հատկապես XX դարի ազգային ու քաղաքական կյանքի վայրիվերումներում:

Օտյանի վեպին հատուկ են կեսմտացածին, կեսհնարավոր կոմիկական ու զավեշտական իրադարձություններով հագեցած արկածային սյուժեն, սրընթաց գործողությունն ու պատկերների արագ փոփոխությունը, պատմելաճի ճկունությունն ու սրամտությունը: Դրան համահունչ էլ կատարված է գրքի ձևավորումը: Ձևավորելիս Սարուխանը նկատի է ունեցել ոչ միայն գրական նյութի բովանդակությունը, այլև երգիծաբանի հետ համագործակցության ժամանակ արտահայտված ընդհանուր գեղագիտական ու ոճաձևաբանական ըմբռնումները: Որպես պատկերավոր մեկնաբանումներ՝ գրական խոսքին հետևում են բովանդակությունը բացահայտող վարպետորեն արված դիպուկ ծաղրանկարները: Նկարազարդումները միահյուսվում են երկի բովանդակությանը, տրամադրություններին ու գործողություններին: Դրանք սուր են, ինչպես երգիծաբանի խոսքը, շարժուն, ինչպես գործողությունները:

Երգիծավեպը բաղկացած է երեք մասից՝ «Ընկ. Բ. Փանջունի. Ի Ծապվար», «Ընկ. Բ. Փանջունի Ի Վասպուրական», «Ընկ. Բ. Փանջունի, տարագրության մեջ: Իմ աշխարհայացքները»:

«Ընկ. Բ. Փանջունի» գրքի կազմն իր մտահղացմամբ, լակոնիկ կառուցվածքով և խոր ընդհանրացմամբ երկի ձևավորման ամենահաջողված բաղադրիչներից է: Նկարը արված է հետևյալ դրվագով. Փանջունին լայն քայլերով ընթանում է առաջ. «Իհարկե մեր պրոպականտը պետք է առաջ տանինք, ամեն տեղ, ամեն ժամանակ և ամեն կացության մեջ, - պատաս-

<sup>4</sup> Կոմիքսը գրաֆիկական պատմողական ժանր է՝ կարճ տեքստով, որը ստեղծում է կապակցված պատում: Առաջին կոմիքսների նախատիպերն են համարվում Ու. Հոգարթի «Անբարոյական կնոջ կարիերան», «Վատնողի կարիերան», Большая Советская Энциклопедия 1973, 507:

խանեց ընկեր Փանջունի»: Պատկերը գրական նյութի խտացված տեսողական մարմնավորումն է: Հերոսի կրծքին սեղմած թղթապանակից թռչում են թերթեր ու տարածում նրա «մարքսիստական առաջադեմ գաղափարները»: Նկարի ֆոնը լուծված է հետին պլանում ուրվագծված բնապատկերով: Կոմպոզիցիան վերցված է շրջանագծի մեջ ու դրոշմված՝ կազմի ուղղանկյուն մակերեսի կենտրոնում: Շրջանը պարագծով բաժանված է երկու մասի և խորհրդանշում է ողջ աշխարհը, իսկ կիսաշրջանները՝ հերոսի անցած ուղին ու հետագա անելիքները: Ճակատանկարի եզրագծին զուգահեռ գրված հեղինակի անունն ու վեպի վերնագիրը պահպանում են կազմի հարթ բնույթը: Իսկ կոմպոզիցիոն սխեման՝ պլանների հերթագայությամբ (հերոսի ֆիզիկոն ու պեյզաժային մոտիվը), իրացված է գլխավորապես կոշտ հպումով քաշված գծերի օգնությամբ (նկ. 2):

Վեպի առաջին և երկրորդ մասերի շնուցտիտուլները ծայնակցում են կազմի հետ թե՛ կոմպոզիցիայի լուծման, թե՛ կատարողական տեսակետից: Դրանք կազմված են շրջանի կամ ձվաձևի մեջ ուրվագծված բնապատկերից ու վերնագրից: Առաջին դեպքում՝ շրջանի սահմանից դուրս եկող գերանդին ձեռքին գյուղացին է ու հեռվում վարի տեսարանը, երկրորդում՝ Վանի քաղաքամեջը գլխավորող եկեղեցու պատկերը: Վեպի երրորդ մասն սկսվում է տիտղոսաթերթից: Յուրաքանչյուր մասի նախաբանը պսակված է Օտյանի գծանկար-պորտրետով (հեղինակը, գրասեղանի առջև նստած, գրում է վեպը):

Գրքի բաղադրիչ մասերը (առաջին, երկրորդ, երրորդ) բաժանված են այբբենական կարգով դասավորված գլուխների: Գլխագարդ սկզբնականները հորիզոնականով ծայրեծայր ձգված կոմպոզիցիաներ են: Դրանց մի մասը անմիջականորեն կերպավորում է տվյալ գլխին վերաբերող սյուժետային որևէ կարևոր իրադրություն: Օրինակ՝ սյուժետային լուծում են հանդես բերում հետևյալ գլխանկարները՝ ծալվարցիները հարձակվում են դպրոցի շենքում թաքնված Փանջունու և նրա ընկերների վրա, Սարսափունին ոգևորում է մանկապարտեզի երեխաներին «ըմբոստացումի ոգիին, որուն վրա հիմնված է բուն հեղափոխությունը», ծալապատիկ նստած Փանջունին «մարքսիստական գաղափարներ» է քարոզում քրդերին (նկ. 3):

Վերջին դրվագն աչքի է ընկնում երկի հերոսների դասավորության հավասարակշռությամբ ու կոմպոզիցիայի երկտարածական կազմակերպման համասեռությամբ: Սակայն այն իրացված է փոքր-ինչ կոպիտ գրչախազերի միջոցով, որի պատճառով զուգահեռ, խաչվող, բեկվող գծերի ցանցը չի ստեղծում կանոնավոր, միանշանակ դիմ:

Գլուխները պսակող նկարները կա՛մ տեքստի պասիվ վերարտադրություններ են (ոռախոսորեն պատկերված գյուղի, քաղաքի, բնության տեսարաններ), կա՛մ չափազանցման ու գրոտեսկի հասնող հիպերբոլացման ճանապարհով ստեղծված ծաղրանկարներ (գլխավոր հերոսն ու նրա ընկերները):



Նկ. 1. «Ընկ. Բ. Փանջունի» գրքի կազմը



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7

Նկ. 2-7. «Ընկ. Բ. Փանջունի» երգիծավեպի նկարազարդումներից

Հենց առաջին գլխի սկզբնականը, օրինակ, ամենայն հավաստիությամբ պատկերում է շարադրանքի սկիզբը. «Ծապլվար՝ քսան տունե բաղկացած զուտ հայկական գյուղ մըն է, գեղեցիկ ու բարեբեր, հովիտի մը մեջ, ուրկե կանցնի Ջրբերիկ գետակը»: Երկրորդ մասն սկսվում է Վան քաղաքի բնանկարով: Ճեպանկար-գծանկարներում ամեն ինչ կրում է նահապետականության դրոշմը՝ ծխական ներփակ կյանքին հատուկ իր բնույթով:

### **Ե. Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» գրքի նկարագարողումների կոմպոզիցիոն կառուցվածքը**

Սարուխանական կերպավորմամբ պատկերների շղթան դինամիկ ու էքսպրեսիվ է: Յուրաքանչյուր էջի ընթերցումն ուղեկցվում է փոքր ու մեծ, հորիզոնականով և երկայնքով ծավալվող գծանկարներով, որոնք խախտում են տպագրական շարվածքի հանդարտ ռիթմը: Այս հնարքը շահեկան է գրական նյութի զավեշտաքննադատական բովանդակության բացահայտման համար: Հեղինակը նկարագարողման համար ընտրում էր պատումի զարգացման մեջ ամենակարևոր պահերը, որոնցում առավել վառ և լիարժեք են բացահայտվում երկի գաղափարն ու հերոսների բնավորությունները:

Կանգ առնենք նկարագարողման կարևոր հանգույցներից մեկի վրա, որը հետաքրքիր կերպավորմամբ ու կատարումով ներկայացնում է քրդերի կողմից կողոպտված Փանջունուն («...յանկարծ՝ զինեալ՝ վրաս յարձակեցան եւ զիս կողոպտեցին՝ գրեթե մօրէ մերկ ձգելով»): Այստեղ գործողությունները կատարվում են երկու հանդիպակաց սարերի ստորին մասում նկարված հարթավայրում: Յածր դիտակետի հնարքի կիրառման պատճառով երկնքին տրամադրված է փոքր եռանկյունաձև հատված: Պլանների հաստատուն հերթականության պարագայում որոշ դետալների (սարեր, հարթավայր, երկինք) չափսերի փոփոխությունը պայմանավորված է դիտակետի տարբեր հեռավորությամբ (նկ. 4): Նույն մոտեցմամբ է լուծված միջավայրը հարբած «զինվորներին» եկեղեցու արշավի կոչ անող Սարսափունուն պատկերող գծանկարում:

Պատումի Սարսափունու հարբած «զինվորի» պարը նկարագրող դրվագը («Բէս Սերգօ վատաբար փռուեցաւ գետին, մեր քաջ ընկեր Ավօ ևս առիծի պէս ընկաւ... Կռուեցէք, տղերք, կռուեցէք քաջ-քաջ Անվեհեր կանգնած թշնամու առաջ...», «տղերքը սկսան պարել մի ինչ-որ մարտական պար, իրենց մերկ դաշոյններն օդին մէջ ճոճելով...») Սարուխանը ներկայացրել է տարածապլաստիկական սկզբունքի դրսևորման մեկ այլ տարբերակում: Նկարադաշտի վերին հատվածի աջ և ձախ եզրերից ծառի արմատն ու դեպի կենտրոն ձգված ճյուղերը շրջափակում են պատկերը, իսկ հեռվում երևացող դաշտերը, հորիզոնականով ծայրեծայր ձգված սարերն ու դրանք մասամբ ծածկող կիսակորեքով կառուցած ամպերը դրան հաղորդում են հավաք տեսք: Արվեստագետը ծավալի, եռաչափ խորության

միջոցով հանգում է տարածական պատրանքի, որպեսզի ներկայացվող կերպարները, առարկաներն ու սյուժետային իրադարձությունն ընկալվեն իրականին համեմատելի բնականության ինչ-որ գծերով:

Գործողության վայրը մեկ-երկու տարբերակով կազմակերպելը ժանրին բնորոշ գեղարվեստական տիպականացման սկզբունքի արտահայտությունն է:

Նկարչի ուշադրության կենտրոնում է եղել գրվածքի հերոսների, նրանց տիպաժային-հոգեբանական հատկանիշների տեսողական արտացոլման հարցը: Այդ խնդրի լուծման համար նախ նա գծանկարել է վեպի կերպարների արտաքին նկարագիրը հիշեցնող բնորոշների դիմանկարներ և օժտել տեքստում նշված անուններով: Ապա, համաձայն իր սկզբունքի, սրման և չափազանցման ճանապարհով տարբեր չափի ձևախեղումների ենթարկել դրանց դիմաձևերը, կազմվածքը, վարքագիծը, հագուկապը: Այդ ամենը նա կատարել է ըստ իր հախուռն բնավորության, ըստ իր ինքնաարտահայտման պոռթկուն բնույթի:

Արդյունքում փարթամ մազերով, բեղ-մորուքով, ընդգծված արծվաքթով Փանջունու նախատիպ հանդիսացող ռեալիստորեն նկարված պորտրեն Սարուխանը վերածում է գրոտեսկի աստիճան աղճատված, սակայն այժմ նաև ներքին բնականությամբ օժտված գրքի կերպարի (նույն ճանապարհով են ստեղծվել Տեր Սահակի, Ռես Սերգոյի, Կոլոշենց Սեդոյի, Քելեշ Մրկոյի, Սարսափունու տիպաժները)<sup>5</sup>:

Մնացած գլխազարդ նկարներում Փանջունու պատկերն է. մի դեպքում վիպակի գլխավոր հերոսը պատկերված է երկգլխանի էակի տեսքով (մի գլուխը բարի, մյուսը՝ ըմբոստ), մյուս դեպքում՝ բերանի արտառոց բացվածքով և մեծ բռունցքներով: Նկարներ կան, որտեղ Փանջունու մի ձեռքին կշեռքն է, մյուս ձեռքի փոխարեն՝ անբնական մեծ բռունցք: Գլխավերևում՝ «Մենք օրենք ենք» կարգախոսը: Կամ էլ՝ ձախից աջ գծանկարած է կիսադեմ, դիմահայաց և երեք քառորդով շրջված հերոսի եռապատկերը, իսկ գլխավերևում՝ «Կոնտրոլ» նկարի իմաստը բացահայտող գրավոր խոսքը:

Ներշնչվելով վեպի գլխավոր հերոսի մեջ մարմնավորված մարդկային նկարագրի հանդեպ իր անզիջում վերաբերմունքով՝ հեղինակը Փանջունու դեմքը աղճատում է ծաղրադիմակի աստիճան և վերակերպավորումը կատարում սևուսպիտակի կտրուկ բախումների միջոցով: Այստեղ նյութի սուր ըմբռնումն ու կերպավորման գերարտահայտչականությունը ի հայտ են բե-

<sup>5</sup> «Արես» թերթում տպագրված են Օտյանի վեպի հերոսների՝ Սարուխանի գծանկարած նախատիպերի պորտրետները և դրանց անունները՝ ընկ. Փանջունի, Ռես Սերգո, Կոլոշենց Սեդո և այլն, «Արես», Գահիրե, 10.08.1937:

րում «Սև հումորի» ուղղությանը բնորոշ հատկանիշ (սարսափի հասնող արտակարգ հիպերբոլացում) (նկ. 5)<sup>6</sup>:

Պատկերագարողներն ըստ ձևի բազմազան են: Կան երկայնակի նկարներ, որտեղ տեքստին վերապահված է թղթի ստորին մասը, կան նաև թղթի ամբողջ տարածքը զբաղեցնող պատկերներ: Հաճախ մեկ էջի վրա տարբեր անկյուններում տեղադրված են հերոսների՝ Փանջունու, Սարսափունու՝ հարաբերաչափերով փոքր ֆիգուրներն ու լայնքով կամ երկայնքով ձգված պատկերներ: Գրքի որոշ էջերի մի մասը զբաղեցնում է գծանկարը, մյուս մասը՝ տեքստը, իսկ ներքևի անկյունում զետեղված հերոսի փոքրիկ ֆիգուրն ասես կենդանի մասնակցություն է բերում գրական գործողությանը: Դա միջոց է, որով արվեստագետը նկարադաշտի երկտարածական մակերեսից անջատել է մարդակերպ կտրվածքներ՝ երևակելով դրանց սեղմ ուրվանկարը:

Փոքր զվարճալի ֆիգուրների և մեծ գծապատկերների տեղադրումը մեկ էջի վրա ավելի ցայտուն է դարձնում վեպի երգիծական հենքը: Միևնույն ժամանակ փոփոխելով գրչանկարների չափսերը՝ հեղինակը պահպանում է Օտյանի շարադրանքին համահունչ ռիթմը:

Ինչպես տեքստում, պատկերագարողման մեջ ևս ընդգրկված նյութը (մարդիկ, եղելություններ և այլն) դիտված է չափազանցումների, ծիծաղի, ծաղրանքի, խաղի ներկայացման ու երբեմն «Սև հումորի» տեսանկյունից<sup>7</sup>: Դա երևում է գլխավորապես գործող անձանց դիմախաղի ու ժեստերի մեջ: Օրինակ՝ հրեշտակի կերպարանքով Փանջունին և Սարսափունին ճախրում են երկնքում: Նկարը պահվում է դեկորատիվ-հարթապատկերային միասնական ոճի մեջ, որովհետև թղթի երկչափ մակերևույթին դրոշմված ֆիգուրները սահուն եզրագծված են (նկ. 6):

Կանգ առնենք տարբեր դիմախաղերով, ժեստերով ու կեցվածքներով գծանկարած Փանջունու ութ երգիծադիմակներից բաղկացած հավաքական կոմպոզիցիայի վրա: Նկարելու միջոցը տարբեր սեղմումներով քաշված ճկուն գիծն է: Չափահարաբերական կառուցվածքով նկարադաշտը ուղղահայաց վեր ձգված մակերես է: Նկարիչը ձևերի փոխհարաբերության

---

<sup>6</sup> «Սև հումորի» ակունքներն են համարվում անգլոսաքսոնական բանավոր անեկդոտը, Կաֆկայի ստեղծագործությունն ու սյուրռեալիզմ ուղղությանը բնորոշ աշխարհընկալումը: 1938 թ. Ֆրանսիայում սկսեց հրատարակվել «Շեղվածների կատակներ» հումորիստական թերթիկը: Այստեղ էին աշխատում Ժ. Էֆֆելը, Մ. Սինեն, Լ. Միտելբերգը, Дмитриева 1973, 254:

<sup>7</sup> Եթե «Սև հումոր» տերմինը կարելի է նորամուծություն համարել, ապա նման ուղղությունն ինքնին նորություն չէ: Այդ մոտեցմամբ են ստեղծված ժանրի դասական, գերմանացի նկարիչ Վիլհելմ Բուշի «Մաքսի և Մորիսի չար կատակները» մանկական գրքերի ծաղրանկարները, որոնք, ի դեպ, նախանշում են նորագույն ժամանակներում ժանրում կատարվող ոճական և կատարողական փոփոխությունները, Busch 1903:

ազատ ու շարժուն ռիթմավորմամբ հավասարակշռել է հատվածն ու հմտությամբ զուգորդել այն գրերի հետ (նկ. 7):

### **Եզրակացություններ**

Երվանդ Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» գրքի ձևավորումը՝ ընդհանուր կառուցվածքով և առանձին բաղադրիչների տարածաժամանակային դասավորության հաջորդական ընկալման ռիթմով, դիտման ընթացքում դրսևորվում է իբրև ամբողջական մեխանիզմ:

Կոմիկական իրադարձություններով հագեցած արկածային սյուժեով երգիծավեպի սարուխանական տեսողական բացահայտումն ու մեկնաբանումն աչքի են ընկնում գրական նյութի բացառիկ զգացողությամբ:

Ալեքսանդր Սարուխանի նկարազարդումները արժանի փայլ են հաղորդում Ե. Օտյանի երգիծավեպին և վկայում, որ ծաղրանկարի սկզբունքները մեծ հաջողությամբ կարող են մուտք գործել գրքի նկարազարդման բնագավառ:

### **Օգտագործված գրականություն**

Արև, Գահիրե, 10.08.1937:

Աւետիսեան Օ. 1947, Ծաղրանկարիչ Ալ. Սարուխան, Անի, Պէյրութ, Տպագրութիւն «ոռթոս»-ի, թիւ 2, 112 էջ:

Օտյան Ե. 1938, Ընկ. Բ. Փանջունի (Պատկերազարդեց Ալ. Սարուխան), Գահիրե, Սահակ-Մեսրոպ, 230 էջ:

Большая Советская Энциклопедия 1973, т. 12, Москва, «Советская энциклопедия», 624 с.

Дмитриева Н. 1973, Юмор парадоксов, Иностранная литература, N 6, Москва, 288 с.

Saroukhan A. 1999, Album, Cairo, Nubar printing house, 144 p., illus.

Avedissian O. 1959, Peintres et sculpteurs Arméniens, Le Caire, publiée par les "Amis De La Culture Arménienne", 492 p.

Busch W. 1903, Album mit 1500 Bildern, München, Verlag von St., Battermann, 323 S.

## **ՕБ ИЛЛЮСТРАЦИЯХ К САТИРИЧЕСКОМУ РОМАНУ ЕРВАНДА ОТЯНА «ТОВ. Б. ПАНДЖУНИ»**

Сатеник Меликян

Резюме

Издание книги Ер. Отяна «Тов. Б. Панджуни» явилось знаменательным событием в культурной жизни армянской диаспоры Египта. Оформление книги было поручено известному художнику-карикатуристу Александру Сарухану (1898-1977), который впервые в истории армянского книгопечатания оформил ее сатирическими рисунками и карикатурами. Литературный текст и рисунки настолько сопоставимы, что, как в прочтении, так и в просмотре материала

превалирует характерное для сатирического жанра преувеличение, экспрессия, гротеск, которыми пропитаны сценки неудержимого веселья, мордобоя и т.д.

В жестах, в мимике, в поведении героев романа наблюдается крайняя напряженность. Мизансцена как бы разыгрывается перед реалистично представленными декорациями – фоном рисунка. Этот контраст двух мировоззрений, двух подходов к решению поставленной задачи в свою очередь усиливает экспрессию действия и создает сугубо театральную, сарухановскую атмосферу. Некая театральность в работах Александра Сарухана придает им особую привлекательность и является одной из характеристик творчества художника-карикатуриста.

**Ключевые слова** – комический, экспрессивный, гротеск, иллюстрация, ничемный политический деятель, мимика, жесты.

#### ABOUT ILLUSTRATIONS TO YERVAND OTYAN'S SATIRICAL NOVEL "COMRADE B. PANJUNI"

Satenik Melikyan

Abstract

Publication of Yer. Otyan's book "Comrade. B. Panjuni" was a significant event in the cultural life of the Armenian diaspora in Egypt. The design of the book was entrusted to the famous cartoonist Alexander Sarukhan (1898-1977), who for the first time in the history of Armenian book printing designed it with satirical drawings and caricatures. The literary text and drawings are so comparable that, both in reading and viewing the material, the extreme exaggeration, expression, grotesque characteristic of the satirical genre prevails, with which the scenes of irrepressible fun, scuffle, etc. are saturated.

In gestures, in facial expressions, in the behavior of the heroes of novel extreme tension is observed. The mise-en-scene, as it were, is played out in front of realistically presented scenery – the background of the picture. This contrast of two worldviews, two approaches to solving the set task, in turn, enhances the expression of the action and creates a purely theatrical, Sarukhanov atmosphere. A certain theatricality in the works of Alexander Sarukhan gives them a special appeal and is one of the characteristics of the cartoonist's work.

**Key words** – comic, expressive, grotesque, illustration, worthless politician, facial expressions, gestures.

# ԽԱՉԱՏՈՒՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ «ՊԱՐՈՂՆԵՐ» ՔԱՆԴԱԿԱՇԱՐԸ

## Նարե Նադարյան

Արվեստագիտության թեկնածու  
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան  
ՀՀ, Երևան, Տերյան 105

Էլ. հասցե՝ nare-nadaryan@mail.ru

ORCID: 0009-0003-1401-0656

Հոդվածը ներկայացվել է 20.06.2023, գրախոսվել է 20.03.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.1-218

### Ամփոփում

ՀՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյանը «Պարողներ» քանդակաշարում ներկայացրել է հասարակ մարդկանց՝ նրանց առօրյայից վերցնելով իր քանդակի նյութն ու շունչը:

Բիրմացի, հնդիկ, չինացի, ինչպես նաև հայ պարողների կերպարներում առկա է թատերայնություն: «Պարողներ» շարքի սյուժեն պարզ է, սակայն Իսկանդարյանին համակած զգացմունքի խորությունը մեզ իրավունք է տալիս խոսելու նաև առկայծող խնդրության, պատանեկության ու հույզի մասին: Կերպարները ենթարկված են իրենց պարի շարժումներին: Պարողների ճկունությունը, նազելիությունը գրավում է, դյուրթում, համակում տոնական տրամադրությամբ: Քանդակագործը կարողացել է ստույգ գտնել պարողների ձեռքերի և մարմինների շարժումները: Ու թեև պարողները երիտասարդ են և կենսասինդրոմ, բայց նրանց մեջ էլ զգում ես այն անհանգստությունը, պատասխանատվությունը, որը բնորոշ է ելույթի, համերգի մասնակիցներին:

**Քանակի բառեր՝** նկարիչ, քանդակագործ, «Պարողներ» շարք, բիրմացի, հնդիկ, չինացի, հայ:

### Ներածություն

2023 թվականի հունվարի 13-ին լրացավ ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյանի ծննդյան 100-ամյակը:

Խաչատուր Իսկանդարյանը (1923-2015 թթ.) ստեղծել է գեղանկարչական, գրաֆիկական, խեցեգործական, մոնումենտալ և մոնումենտալ-դեկորատիվ աշխատանքներ: Սակայն նա նախապատվությունը տվել է հաստոցային քանդակին և մանր պլաստիկային, որտեղ էլ դրսևորվել է տաղանդաշատ արվեստագետի վարպետությունն ու գեղարվեստական աշխարհագրությունը:

«Իմ լավագույն ընկերն ու բարեկամը՝ անվանի քանդակագործ Նիկողոս Նիկողոսյանը, Երևանում ցուցադրել էր իր մանրաքանդակներից մի քանիսը, որոնք չափազանց դուր եկան ինձ, և ես սկսեցի զբաղվել մանրաքանդակներով:



**Նկ 1.** Հայկական պար, 1957,  
բրոնզ, 41x18x16



**Նկ 2.** Բիրմական պար, 1957,  
բրոնզ, 46x18x21



**Նկ 3.** Հնդկական պար, 1957,  
բրոնզ, 41x18x16



**Նկ 4.** Չինական պար, 1957,  
բրոնզ, 41x18x1

Առհասարակ ես Նիկողոսյանից շատ բան եմ սովորել», - խոստովանել է Իսկանդարյանը<sup>1</sup>:

### **Կյանքը և գործունեությունը**

Վարպետը ծնվել է Երևանում: 1937 թ. ընդունվել է Ղուկաս Ղուկասյանի անվան պիոներների պալատի քանդակի բաժինը և աշակերտել քանդակագործ Սամվել Մանասյանին: Ուսումնառության ընթացքում ընդլայնվում է Խ. Իսկանդարյանի ստեղծագործական հետաքրքրությունների շրջանակը և քանդակի բաժինն ավարտելուց հետո ընդունվում Երևանի գեղարվեստական ուսումնարանի գեղանկարի բաժին, իսկ 1951 թ. ավարտում է Երևանի գեղարվեստի ինստիտուտի քանդակի բաժինը՝ անվանի քանդակագործ Սուրեն Ստեփանյանի ղեկավարությամբ:

Ուսումնառության տարիներին նա ծանոթանում է եվրոպական դասական արվեստին, ստանում ակադեմիական լուրջ կրթություն, ձեռք բերում մասնագիտական փորձառություն, որը նպաստում է նրա գեղարվեստական հայացքների և տեխնիկական հմտությունների ձևավորմանը:

Երկարամյա ստեղծագործական կյանքի ընթացքում քանդակագործը մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների, մրցույթների, արժանացել մրցանակների ու պարգևների: Սակայն Իսկանդարյանն իր առաջին լուրջ հաջողությունն արձանագրել է «Պարողներ» շարքով (1957 թ.): Այս շարքի համար քանդակագործն արժանացել է Հայաստանի երիտասարդական առաջին փառատոնի դափնեկրի կոչման և ոսկե մեդալի<sup>2</sup>:

Ի դեպ, վարպետը ստեղծել է թեմատիկայով, ոճով մեկ ամբողջություն կազմող տարբեր քանդակաշարեր՝ «Հին Ուզբեկստան», «Ճապոնիա», «Գիքոր», «Քաջ Նազար», «Հուշեր հին Երևանից»՝ հիշողությամբ արված մանրաքանդակները:

### **«Պարողներ» քանդակաշարը**

«Պարողներ» քանդակաշարում դիտողի աչքի առաջ կենդանանում են տարբեր ազգերի մարդիկ՝ պարի տարերքի մեջ: Իրապաշտության վրա հիմնված կերպարներն աչքի են ընկնում շարժումների բնականությամբ, դեմքերի կենդանի արտահայտությամբ, լուսաստվերային խաղով, շերտավոր զգեստների տակից թափանցող մարմինների բարեկազմությամբ:

«Պարողներ» շարքի սյուժեն պարզ է: Քանդակագործը կարողացել է ստույգ արտահայտել ձեռքերի և մարմինների շարժումները: Ու թեև երիտասարդ են և կենսախինդ, նրանց մեջ էլ զգում ես ելույթի, համերգի մասնակցին բնորոշ անհանգստությունը, պատասխանատվությունը: Այստեղ Իս-

<sup>1</sup> Փիլոսոֆ 2003:

<sup>2</sup> Փիլոսոֆ 2010, 8:

կանդարյանին հուզում են և՛ բնորդի հոգեբանական ապրումները, և՛ պարի մեջ քարացած մարմնի զուտ արտաքին, գեղարվեստական և բնական ներդաշնակությունը: Պարողների անհատականացված դիմագծերը որոշակի են, իսկ նրանց դիմախաղը, ներքին տրամադրությունը, արտաքին դիմաշարժությունը թողնում են կենդանի ու անմիջական տպավորություն:

Այսպես, Հայաստանի ազգային պատկերասրահում է գտնվում Իսկանդարյանի «Հայկական պար» փոքրաչափ, բրոնզաձույլ ֆիգուրը (նկ. 1, 41x18x16): Կոմպոզիցիոն ինքնատիպ լուծումով, կատարման վարպետությամբ աչքի ընկնող քանդակում ներկայացված է ազգային տարազով պարուհի: Վերջինս պճղնավոր և առջևից կտրվածքներով զգեստ է կրում: Կնոջ իրանին գեղազարդ գոտի է, ձեռքերին դաստառակներ են, իսկ գլխին ծածկված քողով ճակատակալ է: Պարուհին չի նայում դիտողին, նրա աչքերը փակ են, որն արտահայտիչ է դարձնում ֆիգուրի զգայական հոգեվիճակը:

Ինչպես, «Հայկական պար» քանդակում, այնպես էլ «Բիրմական պար» աշխատանքում (նկ. 2, բրոնզ, 46x18x21) Իսկանդարյանը առանձնակի ուշադրություն է դարձրել կերպարի տարազին: «Բիրմական պար» քանդակում պատկերված է գլխի կիսաթեք շարժումով մի կին, որը ձեռքում պահված հովհարի օգնությամբ կարծես անշտապ փորձում է ուղղել գլխի կիսաթեք դիրքը: Հովհարի մոտից ներքև ուղղված աչքերը պարուհու կերպարն էլ ավելի կենդանի ու գրավիչ են դարձնում: «Բիրմական պար»-ում տեսնում ենք ալիքանման կորություններ ունեցող երկար զգեստ, որի վրա առկա են ծաղկազարդ նախշեր: Պարուհու կերպարում կարևորվել է նաև բարձր հավաքված սանրվածքը, որը կարծես տարազի բաղկացուցիչ մասն է: Կնոջ շարժումներն ավելի արտահայտիչ ու պլաստիկ են՝ շնորհիվ նրա հանդերձանքի վրա առկա լուսաստվերային խաղի՝ պայմանավորված նրբագծային անցումներով և սահուն ուրվագծերով:

Այստեղ պատեհ է ներկայացնել ուշագրավ մի իրողություն. «Բիրմական պարը» Հասմիկ Փիլիպոսյանի «Հայկական քանդակագործություն» պատկերագրքում վրիպակի հետևանքով ներկայացված է որպես ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սամվել Մանասյանի աշխատանք: Քանդակը կոչվում է «Զին դերասանուհին» և 1957-ի փոխարեն թվագրված է 1953-ով<sup>3</sup>: Մեր դիտարկումը հիմնավորելու համար նշենք, որ դեռևս նկարչի կենդանության օրոք՝ 2010-ին, հրատարակվել է Խ. Իսկանդարյանի կյանքի և արվեստի վերաբերյալ պատկերազարդ ալբոմ, որը կազմել է արվեստաբան Սյուզաննա Փիլոսյանը: Ալբոմում տեղ են գտել արվեստագետի քանդակագործական, գեղանկարչական և գրաֆիկական հիմնական գործերը, «Բիր-

<sup>3</sup> Փիլիպոսյան 2004, 53:

մական պար» աշխատանքը<sup>4</sup>: Ինչպես նաև 1967-ին Երևանում տեղի ունեցած Իսկանդարյանի անհատական ցուցահանդեսի առթիվ Հայաստանի կերպարվեստագետների միությունը հրատարակել է արվեստագետի ստեղծագործությունների կատալոգը՝ Մարիամ Այվազյանի հեղինակած առաջաբանով<sup>5</sup>, որտեղ արվեստաբանը համառոտ բնութագրել է Խ. Իսկանդարյանի արվեստը և նկարացանկում հիշատակել «Բիրմական պար»-ը: Վերջինս պահպանվում է Հայաստանի ազգային պատկերասրահում՝ որպես Խաչատուր Իսկանդարյանի աշխատանք: Ի լրումն՝ 2023 թ. հունիսի 1-ից «Բիրմական պար» աշխատանքը ցուցադրվում է Հայաստանի ազգային պատկերասրահում բացված «Խաչատուր Իսկանդարյան – 100. Քանդակագործը և քաղաքը» ժամանակավոր ցուցահանդեսում:

Փոքրաչափ, մանրածավալ քանդակները սովորաբար ունեն մանրակրկիտ մշակում, ինչը ոչ միշտ ենք տեսնում Իսկանդարյանի ստեղծագործություններում. հաճախ վարպետի ստեղծած քանդակների ծեփվածքը մոտենում է իմպրեսիոնիստ քանդակագործների կիրառած՝ այսպես կոչված «երփնագրային ծեփվածքին»: Թվում է, թե այդ հյութեղ ծեփվածքներով ստեղծված աշխատանքները պետք է զուրկ լինեն կոնկրետությունից, սակայն դա այդպես չէ. աշխատանքներում քանդակագործն ամեն մեկի դեմքի մեջ բնավորության ինքնահատուկ գծեր է նշմարել:

Ասվածի լավագույն օրինակներից է «Հնդկական պար» աշխատանքը (նկ. 3, բրոնզ, 41x18x16): Քանդակն աչքի է ընկնում իր կորային անցումներով, որոնք լույսի ազդեցության ներքո մարմինը դարձնում են ավելի իրապաշտական:

Ավելորդ չէ հիշատակել, որ Իսկանդարյանը Մոսկվայի Երիտասարդության և ուսանողության համաշխարհային փառատոնին ոսկե մեդալի է արժանացել «Հնդկական պար» աշխատանքի համար: Այն գնել է Մոսկվայի երիտասարդական ֆոնդը<sup>6</sup>:

Հնդկական պարերն ամենամիստիկական պարերն են համարվում ամբողջ աշխարհի պարարվեստում: Իսկանդարյանը, քաջ գիտակցելով, որ հնդկական պարերում պարուհիները պատմում են պատմությունը միայն ժեստերի միջոցով, մեծամասնությամբ ներկայացնելով հնդկական դիցաբանությունը, տվյալ տարածաշրջանի մշակույթն ու ոգին, ստեղծել է մի կնոջ կերպար, որի կեցվածքում առկա է ձեռքերի հանդիսավոր մի շարժում. երկու կողմից իրար մոտեցող ձեռքերը, թվում է, ամեն վայրկյան կարող են թե՛ բացվել և կանչել գրկախառնության, թե՛ փակվել՝ ավարտելով ներկայացումը: Պարուհու փոքր-ինչ ծավալած ծնկները, թեքված ազդրերը, ներս

<sup>4</sup> Փիլոսոփայության 2010, 160:

<sup>5</sup> Այվազյան 1967, 55:

<sup>6</sup> Վարդանյան 1967:

ընկած որովայնը կորություն են տալիս կերպարի կառուցվածքին: Ֆիգուրի ոտքերը բոկոտն են, որը կարևոր հանգամանք էր հնդկական պարերի ժամանակ: Եվ թեև կերպարը, ինչպես արդեն վերը նշեցինք, մանրակրկիտ մշակված չէ, արվեստագետը, այնուամենայնիվ, ուշադրություն է դարձրել հնդկուհու արդուզարդին. նա ներկայացված է ականջօղերով, թևնոցներով, զարդանախշ գոտիով: Սրանք ունեն գեղագիտական և էրոտիկ նշանակություններ, որոնք շատ կարևոր դեր են խաղացել տարազի համալիրում՝ հիմնականում միտում ունենալով գրավել հակառակ սեռի ուշադրությունը: Աշխատանքի ինքնօրինակությունը ձեռք է բերվել ճկուն մարմնի շնորհիվ: Գծային-երկրաչափական լուծումն այստեղ արդարացվում է կոմպոզիցիային գալարածն զարգացում տալու ձգտումով: Այսինքն՝ արվեստագետի նպատակն է արտահայտել պարի էությունը, ստեղծել պարի զգացողություն և ոչ թե նատուրալիստորեն վավերացնել պարուհու քարացած դիրքը:

Քանդակագործը բոլորովին այլ խնդիր է դնում իր առջև «Չինական պար» քանդակում (նկ. 4, բրոնզ, 41x18x1, գտնվում է վարպետի արվեստանոցում): Պատկերված է մի տղա, որը և՛ պարում է (դա տեսնում ենք նրա մի ոտքը բարձրացրած ու կողքի թեքած դիրքում), և՛ նվագում է հարվածային երաժշտական գործիքի վրա: Ռիթմը, որը թելադրված է թմբուկի միօրինակ երաժշտական շեշտադրումներով, հնարավոր է դարձնում ցուցադրել պարողի կշռադատված ու նրբագեղ արտահայտչականությամբ օժտված շարժումը: Ֆիգուրի աչքերը փակ են, որն արտահայտիչ է դարձնում նրա զգայական հոգեվիճակը: Տղամարդը որոշակիորեն թեքված է դեպի իր երաժշտական գործիքը: Կերպարը ներկայացված է լայն տաբատով, իսկ գոտկատեղից վերև մերկ է, առանց ծածկույթի, որի օգնությամբ տեսնում ենք ատլետիկ կազմվածքով մի մարմին: Հետաքրքիր են ֆիգուրի հետ սանրված մազերը, որի շնորհիվ հստակ երևում է դեմքի մանրամասն պատկերումը. կիսախուփ աչքեր, փոքր-ինչ հավաքված հոնքեր, լայն ճակատ, որոնք ներշնչանք են արտահայտում: Այս աշխատանքի մասին արվեստաբան Ռուբեն Դրամբյանը «Երիտասարդ նկարիչների ցուցահանդեսը» հոդվածում գրել է. «Իսկանդարյանը վարակիչ հումորով է ստեղծել թմբկահար տղայի փոքր ֆիգուրը: Հետաքրքիր է հղացված նաև տարբեր ազգությունների պարուհիների շարքը...»<sup>7</sup>:

### **Եզրակացություններ**

Շարժվող մարմինն ընկալվում է այլ կերպ, քան անշարժը, և այստեղ հարկավոր է առանձին տարրերի յուրատեսակ կապակցում: Թվում է՝ պարը պետք է փայլեր միայն ձևի գեղեցկությամբ, բայց այդպես քանդակները

<sup>7</sup> Դրամբյան 1957, 16-20:

կլինեին զուտ ձևերի ուսումնասիրություններ: Կենդանի մարմինների ձևերը կրկնելու և միաժամանակ չիդեալականացնելու մեջ է քանդակաչարի գրավչությունը:

Ինչպես տեսանք, քանդակաչարն աչքի է ընկնում պարուհիների և պարողի կենդանի, դինամիկ շարժումով: Բիրմացի, հնդիկ, չինացի, ինչպես նաև հայ պարողների կերպարներում առկա է թատերայնություն: Պարողներից ամեն մեկը կարծես «Իմ երկրի կյանքը» ներկայացման մի փոքրիկ տեսարան է ցուցադրում՝ կերպարային ընդգծվածությամբ և կոլորիտով:

### **Օգտագործված գրականություն**

Այվազյան Մ. 1967, Խաչատուր Իսկանդարյան: Կատալոգ, Երևան, «Հայաստանի կերպարվեստագետների միություն», 55 էջ:

Դրամբյան Ռ. 1957, Երիտասարդ նկարիչների ցուցահանդեսը, «Սովետական արվեստ», Երևան, N 5, էջ 16-20:

Վարդանյան Ա. 1967, Երկու հետաքրքիր ցուցահանդես, «Հայրենիքի ծայն», Երևան, 5, մարտի:

Փիլոսյան Ս. 2010, ՀՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյան. քանդակ, գեղանկար, գրաֆիկա, Ալբոմ, Երևան, «Վան Արյան», 160 էջ:

Փիլոսյան Ս. 2003, Խաչատուր Իսկանդարյան / «Համայնապատկեր», Երևան, 22 հունվարի:

Փիլիպոսյան Հ. 2004, Հայկական քանդակագործություն, Երևան, «Հայաստանի ազգային պատկերասրահ», 53 էջ:

## **СЕРИЯ СКУЛЬПТУР ХАЧАТУРА ИСКАНДАРЯНА «ТАНЦОРЫ»**

Наре Надарян

Резюме

Хачатур Искандарян изображал обычных людей, черпая сюжеты и образы своих произведений из повседневной жизни.

Для этих композиций характерна однофигурность. Бирманские, индийские, китайские, а также армянские танцоры обладают чувством театральности. Скульптор смог точно найти движения рук и тел танцоров. Работы скульптора отличаются экспрессией, естественностью движений, композиционно-пространственным свободным расположением. Они являются своеобразными пластическими историями, в которых представлены характерные для людей позы, экспрессивные движения. Выполненные с использованием различных приемов пластики, скульптуры не только обладают особым очарованием, но и заключают в себе этнографическую информацию.

Х. Искандарян занимает достойное место в ряду скульпторов, занимающихся армянской миниатюрной пластикой. Его творческое наследие является неотъемлемой частью армянского искусства.

**Ключевые слова** – художник, скульптор, серия «Танцоры», бирманцы, индийцы, китайцы, армяне.

### **KHACHATUR ISKANDARYAN'S "THE DANCERS" SCULPTURAL SERIES**

Nare Nadaryan

#### **Abstract**

The sculpture of Khachatur Iskandaryan created characters of ordinary people, taking the scenarios and the spirit of his sculptures from everyday life.

These compositions are characterized as single-figures. Burmese, Indian, Chinese as well as Armenian dancers have a sense of theatricality. The sculptor was able to accurately find the movements of the hands and bodies of the dancers. The works with their content are available for the viewer, are remarkable with sensuality, naturalness of movements, composite-space free layout. They are specific plastic stories, in which the described typical positions of people, expressive features and speaking, expressive movements are full of live naturalness. These works attract by their emotion, and with all the depth of content. Executed with use of different techniques of plasticity, these works not only have a deep charm, but also encompass ethnographic information.

Iskandaryan takes his place of honor among a number of sculptors who are engaged in Armenian miniature plastic arts. His inheritance is an integral part of Armenian art.

**Key words** – painter, sculptor, "The Dancers" series, Burmese, Indian, Chinese, Armenian.

# ԵՐԵՎԱՆԻ ԶՐՈՍԱՅԳԻՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԻ ԴԻԶԱՅՆԻ ՄԱՍ<sup>1</sup>

## Արմինե Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ  
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդասարյան 24/4  
Էլ. hwasg@armine.pet21@mail.ru  
ORCID: 0009-0004-7274-1788

Հոդվածը ներկայացվել է 14.11.2023, գրախոսվել է 20.02.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.1-226

### Ամփոփում

Զբոսայգիները քաղաքի այցեքարտերից են, քանզի դրանց առկայությունը յուրահատուկ հմայք է տալիս քաղաքային պատկերին: Երևանի զբոսայգիների առանձնահատկությունը ճարտարապետական անսամբլն է՝ ինքնատիպ շատրվաններով, արձաններով, ցայտաղբյուրներով, նաև նստարաններով և այլ հետաքրքիր բաղադրիչներով:

Երևանի այգիները կարևոր նշանակություն ունեն որպես ճարտարապետական լանդշաֆտի դիզայնի մաս և աչքի են ընկնում իրենց դիզայնական լուծումներով: Երևանի գլխավոր ճարտարապետ մեծն Ալեքսանդր Թամանյանը մայրաքաղաքի հատակագիծը նախագծել է որպես քաղաք-այգի: Հաշվի առնելով այս տարածքի կիսաանապատային կլիման՝ նա գլխավոր հատակագծի մշակման ընթացքում հույժ կարևոր նշանակություն է տվել մայրաքաղաքի կանաչապատմանը:

Կարող ենք ասել, որ Երևանի գրեթե բոլոր այգիներին բնորոշ է հուշարձանների առկայությունը:

**Բանալի բառեր՝** լանդշաֆտ, Ալեքսանդր Թամանյան, Երևանի զբոսայգիներ, ճարտարապետական անսամբլ, քաղաք-այգի, Երևանի կենտրոնական զբոսայգիներ, այգու ճարտարապետություն:

### Ներածություն

«Լանդշաֆտ» հասկացությունը մասնավորապես ընկալվել է որպես գեղատեսիլ բնապատկեր, որն արտացոլվել է գեղանկարչության, գրականության, ճարտարապետության մեջ: Այն իր ձևի մեջ կարելի է համարել արվեստի յուրահատուկ ստեղծագործություն: Լանդշաֆտները, ըստ էության, արտացոլում են մարդու կենսագործունեության բոլոր ձեռքբերումները և բացթողումները՝ դրանով իսկ կերտելով որևէ բնակավայրի, տարածաշրջանի և ողջ երկրի տեսողական կերպարի բնութագիրը:

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի կողմից անցկացված մրցույթի արդյունքում ֆինանսավորվող «22YR-6E004» ծածկագրով գիտական ծրագրի շրջանակներում:

Լանդշաֆտային արվեստում արտացոլված է նրա ինքնատիպությունը՝ գեղեցկացման, պահպանման և բարեկարգման հատուկ տեխնիկայի կիրառումը:

Հասարակության կուլտուր-կենցաղային մակարդակի բարձրացմանը զուգընթաց մեծանում է նաև կանաչապատման պահանջը: Յուրաքանչյուր երկրում այգի ստեղծելուն նպաստել են տարբեր պայմաններ՝ կլիմայի և ռելիեֆի առանձնահատկությունները, սոցիալական կառուցվածքը, ինչպես նաև պետության հզորության աստիճանը: Ընդհանրապես զառիթափ տեղանքի վրա հիմնված կանոնավոր այգիները հաճախ կոչվում են իտալական, հարթ տեղանքով այգիները՝ ֆրանսիական, ծաղկային պարտեզ-այգիները՝ հոլանդական, լանդշաֆտային զբոսայգիները՝ անգլիական: Ճապոնական այգին առանձնանում է իր նրբագեղությամբ, մանրուքների մտածված կիրառությամբ: «Օազոդ արևի» երկրի այգիների հիմնական գործառույթը լանդշաֆտների գեղեցկության մասին խորհրդածելու և գնահատանքի առիթ տալն է որոշակի դիտակետերից՝ տեռասներից, պատուհաններից և այլն:

Այգու ճարտարապետությունը հասարակության մշակույթի անփոխարինելի մասն է կազմում: Զբոսայգիները քաղաքի այցեքարտերից են, մանավանդ որ դրանց առկայությունը յուրահատուկ հմայք է տալիս քաղաքային պատկերին: Աշխարհում առավել հայտնի զբոսայգիներն են՝ Էտրետի այգիները (Նորմանդիա, Ֆրանսիա), Տիեզերական սպեկուլյացիաների այգին (Դամֆրիս-ընդ-Գալովեյ, Շոտլանդիա), Վիլլա Սելլ այգին (Պիստոյա, Իտալիա), Էդեմ նախագիծը (Կորնուոլլ, Մեծ Բրիտանիա), Մարկեսակի այգիները (Դորդոն, Ֆրանսիա), Պետերգոֆը (Սանկտ-Պետերբուրգ, Ռուսաստան), Բոբոլի այգիները (Ֆլորենցիա, Իտալիա), Կենտրոնական պարկը (Նյու Յորք, ԱՄՆ), Միրաբելի այգիները (Չալցբուրգ, Ավստրիա), Չժանցզյաձե ազգային պարկը (Չժանցզյաձե, Չինաստան), Հայդ Պարկը (Լոնդոն, Մեծ Բրիտանիա) և այլն:

### **Երևան քաղաքի այգիները**

Երևանը նույնպես աչքի է ընկնում իր գեղատեսիլ այգիներով և դիզայներական լուծումներով: Երևանի գլխավոր ճարտարապետ մեծն Ալեքսանդր Թամանյանը մայրաքաղաքի հատակագիծը նախագծել է որպես քաղաք-այգի: Հաշվի առնելով Երևանի կիսաանապատային կլիման՝ նա գլխավոր հատակագծի մշակման ընթացքում հույժ կարևոր նշանակություն է տվել մայրաքաղաքի կանաչապատմանը:

Բնականաբար, քաղաքի զբոսայգիների անբաժանելի մասն են կազմում շատրվանները, արձանները, ինչպես նաև նստարանները: Ա. Թամանյանը Երևանը պատկերացնում էր որպես «կենտրոնակազմ քաղաք»,

որտեղ սոցիալական, բնակլիմայական և խորհրդանշական (Արարատին նայող փողոցներ) հայեցակետերը ներդաշնակված էին: Երևանը որպես քաղաք-այգի նախագծելիս ճարտարապետն առաջնորդվել է Էբենզեր Հովարդի (1850-1928)<sup>2</sup> գաղափարներով, այն է՝ «քաղաք-այգիները» պետք կառուցվեին մեծ քաղաքներից ոչ շատ հեռու, բնության գրկում՝ իրենց մեջ օրգանապես ներառելով քաղաքային և գյուղական կյանքի բոլոր առավելությունները: Ըստ ճարտարապետի՝ Հրազդան գետի ափին նախատեսվում էր կառուցել առողջարանային համալիր, քաղաքի հյուսիսային բարձրադիր մասում պետք է լիներ անտառանման մեծ պուրակ, որը քաղաքը պաշտպանելու էր հյուսիսային քամիներից ու փոշուց: Անչափ կարևոր էր «քաղաքի թոքերի» ստեղծումը, որը կազմելու էր ընդհանուր տարածքի մեկ վեցերորդ մասը<sup>3</sup>: Ճարտարապետի նախագծով Երևանը պիտի դառնար դեուրբանիզացված քաղաք-այգի<sup>4</sup>: Ըստ այդմ, քաղաքի կենտրոնական մասը շրջապատում էր Օղակաձև զբոսայգին, իսկ Գլխավոր պողոտան, ինչպես նաև ծառաշատ փողոցները լիովին կազմակերպում էին քաղաքի միջուկի կանաչապատումը: Անշուշտ, Երևանի գլխավոր հատակագիծը XX դ. քաղաքաշինական նշանավոր ձեռքբերումներից է: Այն նաև քաղաքական և բարոյահոգեբանական նշանակություն ունի հայ ժողովրդի համար: Մայրաքաղաքի գլխավոր հատակագծի բացատրագրի սևագրություններից մեկում Ա. Թամանյանը նշում է, որ քաղաքի գլխավոր հատակագծի վերաբերյալ իրեն պատվեր չի տրվել Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից, այլ ինքն է իր նախաձեռնությամբ այն իրականացրել, քանի որ առանց դրա հնարավոր չէր շինարարություն ծավալել<sup>5</sup>:

Ա. Թամանյանը կարևորել է կանաչ տարածքների բարեբեր նշանակությունը՝ գտնելով, որ կանաչով կարելի է մեղմել անավարտ կամ անհրապույր շենքերի թողած տպավորությունը, մինչդեռ կանաչի սակավությունը բացասաբար է ազդում բնակչության աճի վրա<sup>6</sup>:

Երևանի այգիները առանձնանում են իրենց ճարտարապետական ու քանդակագործական ինքնատիպ լուծումներով: Քանդակը քաղաքային անսամբլի անբաժանելի մասն է կազմում և միջավայրին յուրահատուկ «համ ու հոտ տալիս»: Հետաքրքրական է, որ գրեթե բոլոր այգիներում ու զբոսայգիներում տեղադրված են քանդակներ, որոնք յուրօրինակ շունչ ու արտա-

<sup>2</sup> Նշենք, որ Հովարդի տեսությունից ոգեշնչված՝ աշխարհի տարբեր երկրների քաղաքաշինությունների մեջ սկսեցին օգտագործել նրա գաղափարները, և քաղաք-այգիներ կառուցվեցին Ֆրանսիայում (Շատենե-Մալբերի), Գերմանիայում (Մյունխեն-Պերլախ), Ռուսաստանում (Կրատովո), Ճապոնիայում (Սենրի Յամա):

<sup>3</sup> Երևանը քարտեզներում և հատակագծերում 2008, 5-6, տե՛ս նաև <https://yhm.am/archives/8760>

<sup>4</sup> Ճարտարապետություն և շինարարություն (ամսագիր) 2014, 40:

<sup>5</sup> Մանուկյան, Թամանյան 2003, 109:

<sup>6</sup> Մանուկյան, Թամանյան 2003, 115:

հայտչականություն են հաղորդում տարածքին: Առանձնահատուկ հմայք է տալիս շատրվանների առկայությունը, որը քաղաքային անսամբլում ճարտարապետական, քանդակագործական տարրերի և կանաչապատման հետ միաժամանակ լայնորեն օգտագործվում է պարտեզապուրակային արվեստում: Իսկ դիզայնը դառնում է դեկորացիայի գործառնության տարր:

Երևանի գեղեցկությունը նկատել է նաև անգլիացի հայագետ, ճանապարհորդ, հասարակական-քաղաքական գործիչ Հենրի Ֆինիս Բլուս Լինչը. «Հյուսիսից՝ ավելի բարձր մակարդակից լանդշաֆտը, որտեղից մոտենում եք Էրիվանին, այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ երբեք չեք մոռանա: Արարատի ամբողջ զանգվածը վերևից ներքև երևում է, բայց բարդիներն այնքան բարձր են, և այնքան պտղատու ծառեր կան, որ մզկիթի գմբեթը, եկեղեցիները և ձեր ոտքերի շուրջ սփռված քաղաքը ամբողջությամբ թաղված են կանաչի մեջ»<sup>7</sup>:

Հազվագյուտ և անհետացող բուսատեսակներով է հայտնի **Երևանի բուսաբանական այգին** (հիմնվել է 1935 թ.) (նկ. 1), որը ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի կազմում ընդգրկված գիտական, էկոլոգիական, ուսումնական և ռեկրեացիոն<sup>8</sup> նշանակության հաստատություն է: **Երևանի կենդանաբանական այգին** (1940 թ.) նույնպես գիտահետազոտական հաստատություն է:

Ուշագրավ հանգստավայր է **Հաղթանակի գրնայգին («Մոնումենտ»)** (նկ. 2), որի հուշահամալիրը հիմնվել է 1950 թ.: Նույն թվականին տեղադրվել է Ստալինի արձանը (ճարտ.՝ Ռաֆայել Իսրայելյան, քանդ.՝ Սերգեյ Մերկուրով): 1962 թ. այդ արձանը հանվել է պատվանդանից, և 1967 թ. դրա տեղում տեղադրվել է վեհաշուք «Մայր Հայաստանը» (քանդ.՝ Արա Հարությունյան, ճարտ.՝ Ռաֆայել Իսրայելյան), որը Երևանի ամենաբարձր արձանն է: Այս գեղատեսիլ քանդակը ներկայացնում է ընդհանուր հավաքական կերպար՝ խորհրդանշելով հայ ռազմական ոգուն, զինվորին սատարող, մարտի դաշտ ուղարկող, ոգևորող հայ մորը, կնոջը, քրոջը:

<sup>7</sup> Հայաստան, ճամփորդություններ և ուսումնասիրություններ, «Ռուսական Հայաստան» 1901: Ի դեպ, Հենրի Լինչը իռլանդական ազնվական տոհմից էր (տատը՝ սեբաստացի հայուհի): Հայաստան կատարած երկու ճանապարհորդությունների (1893-1894, 1898) ժամանակ իր հավաքած նյութերի հիման վրա նա գրել է լայն ճանաչում գտած «Հայաստան» աշխատությունը (1901, հայերեն համառոտ թարգմանություն՝ 1913-1914), որը կազմված է երկու հատորից՝ «Ռուսական Հայաստան» և «Տաճկահայաստան»: Աշխատությունը պարունակում է արժեքավոր տեղեկություններ Հայաստանի պատմության, աշխարհագրության, ժողովրդագրության, հայ բանահյուսության վերաբերյալ վիճակագրական նյութեր:

<sup>8</sup> **Ռեկրեացիա** - (լատին.՝ recreatio՝ հանգիստ, առողջացում), բնության մեջ հանգստի կամ գրասաշրջային ուղևորություններով (արշավներով) տեսարժան վայրեր (ազգային պարկեր, բնական, ճարտարապետական, պատմական հուշարձաններ և այլն) այցելելու եղանակով մարդկանց առողջության և աշխատունակության վերականգնում:

1970 թ. հուշահամալիրի շենքում բացվել է Հայրենական մեծ պատերազմին նվիրված թանգարանը, որը վերանվանվել է «Մայր Հայաստան» զինվորական թանգարան: Այգում գործում է հանգստի և զվարճանքի գոտի երեխաների համար: 1961 թ. Սևանա լճի ձևով կառուցվել է «Արևիկ» արհեստական լիճը (ճարտ.՝ Հովհաննես Հակոբյան):

**Լիոնի (Թոխմախի)** այգում (նկ. 3) է գտնվում **Վարդավառ** անվանումով արհեստական լիճը: 2010-2011 թթ. այգին ամբողջովին վերանորոգվել է Լիոնի քաղաքապետարանի աջակցությամբ և դարձել երկու քաղաքների բարեկամության խորհրդանիշը: Վարդավառի լիճը ստեղծվել է դեռևս մ.թ.ա. VIII դարում, Արգիշթի Ա-ի օրոք: 1578 թ. լիճը բարեկարգվել է Երևանի կառավարիչ Մեհմեդ Թոխմախ խանի կողմից և անվանվել Թոխմախի լիճ:

Իր տեսակի մեջ ինքնատիպ է Երևանի **Հովհաննես Թումանյանի** անվան զբոսայգին (**Թումոյի այգի**) (նկ. 4)՝ հիմնված Հովհ. Թումանյանի 100-ամյակի առթիվ 1970 թ.: 1973 թ. այստեղ տեղադրվել է Թումանյանի «Անուշ» պոեմի հերոսների՝ Անուշի ու Սարոյի բազալտե քանդակը, իսկ 1986 թ. կանգնեցվել է Թումանյանի մեկ այլ հերոսի՝ Լոռեցի Սաքոյի արձանը:

### Երևանի կենտրոնական զբոսայգիները

**Մանկական երկաթգիծը** (նկ. 5-6) քաղաքամայր Երևանի տեսարժան վայրերից է: *Երկաթուղի* ունենալու գաղափարը ՀԿԿ առաջին քարտուղար Աղասի Խանջյանինն է, իսկ ճարտարապետը Միքայել Մազմանյանն է: Մանկական երկաթուղու «Հայրենիք», «Պիոներական» և «Ուրախություն» կայարանները կառուցվել են 1937 թ.: Նշենք, որ այգում բնությունն ու կառույցները միաձուլվում են հետաքրքիր ճարտարապետական լուծումներով: Թունելների դիմաց՝ այգու մուտքի մոտ առկա են ԽՍՀՄ հերոսների անուններով աղբյուրներ, իսկ վերևում՝ ժայռերի մեջ ուշադրություն է գրավում քանդակագործ Վիլյամ Պետրոսյանի «Հովազ» քանդակը:

Դիզայներական ինքնատիպ լուծումներով աչքի է ընկնում 1933 թ. հիմնված **Մանկական այգին (Կիրովի անվան զբոսայգի)**: Այն հին շուկայի՝ Ղանթարի տեղում է: Այստեղ են տեղադրված Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի (նկ. 7), լիբանանցի գրող, փիլիսոփա, նկարիչ, բանաստեղծ Ջուբրան Խալիլ Ջուբրանի, խորհրդային բանակի գնդապետ, դիվիզիայի հրամանատար Սիմոն Զաքյանի կիսանդրիները: Նշենք, որ վերջինիս գերեզմանը ևս գտնվում է Կիրովի այգում:

Երևանի մետրոպոլիտենի «Մարշալ Բաղդամյան» կայարանին առընթեր վերակերտված **Սիրահարների այգին** (նկ. 8) գոյություն է ունեցել դեռևս XVIII դ. և կոչվել **«Կողեռնի այգիներ»**: 1949 թ. ռուս բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինի ծննդյան 150-ամյակին վերանվանվել է **Պուշկինի այգի**, 1970 թ.՝ Բարեկամության (խորհրդային ժողովուրդների «եղբայրությունը»

նշանավորելու համար), իսկ 1995 թ.՝ Սիրահարների այգի: Այգու վերակառուցման նախագիծը 2007 թ. իրականացրել է շվեյցարաբնակ լանդշաֆտային ճարտարապետ Պիեռ Ռամբալը: Զբոսայգին գեղազարդում է մեծանուն բանաստեղծ Գևորգ Էմինի քանդակը, որը կերտել է բանաստեղծի վաղեմի ընկեր Աշոտ Արամյանը՝ ընդգծելով Էմինի խոհական կերպարը: Շատերի ուշադրությունն է գրավում Ժան-Միշել Օտոնիելի<sup>9</sup> «Օբսիդիանե սիրտը» քանդակը: 2013 թ. այգու 5-ամյակի կապակցությամբ արահետներից մեկի եզրին դրված մետաղե քանդակը նախատեսված է կողպեքների համար:

**Թատերական այգին** (նկ. 9) հիմնադրվել է 1850 թ., բայց պաշտոնապես բացվել է 1910 թ.: Այն «վերածնվեց» 1898 թ.՝ Իսահակ Մելիք-Աղամալյանի՝ քաղաքագլուխ դառնալուց հետո: Ռուսաստանից և Լեհաստանից ներկրվեցին կաղնիներ, որոնք Երևանի պայմաններին հեշտ հարմարվելով՝ այգում գեղեցիկ ծառուղիներ կազմեցին: Թատերական այգին կառուցվել է եվրոպական ձևով, այդ պատճառով էլ կոչվում է «Անգլիական այգի»: Ըստ քաղաքացիների, այն այդպես են անվանել բարեկարգող օտարերկրացիները, ոմանք էլ կարծում են, որ վերևից նայելիս այգին նման է անգլիական դրոշին: 1920-ականներին այգին վերանվանել է «26 կոմիսարների», դա էլ կրճատվելով՝ դարձավ «Կոմայգի»: Այն վերածվեց պանթեոնի, որտեղ հուղարկավորվել են Մայիսյան ապստամբության ղեկավարները: 1938 թ. այգու տարածքում կառուցվեց Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի նոր շենքը: Թատրոնի շենքի կառուցումից հետո Անգլիական այգին դարձավ մշակութային օջախ:

1962 թ. Երևանի քաղաքապետ դարձած Գրիգոր Հասրաթյանը երազում էր ջրային միջանցքներով երևանյան փոքրիկ Վենետիկ ստեղծելու մասին և Կոմայգում ջրային միջանցքներ ու կամուրջներ հիմնվեցին:

Գաբրիել Սունդուկյանի արձանի (քանդ.՝ Արա Հարությունյան) հանդիսավոր բացումը տեղի է ունեցել իր անունը կրող ակադեմիական թատրոնի հիմնադրման 50-ամյակին նվիրված տոնակատարությունների շրջանակում 1972 թ.<sup>10</sup>: Իսկ ահա Պեպոյի արձանը կանգնեցվեց 1976 թ. Սունդուկյանի ծննդյան 125-ամյակի առթիվ (ճարտ.՝ Մ. Գրիգորյան, քանդ.՝ Գ. Ահարոնյան):

<sup>9</sup> Ասենք, որ Ժան-Միշել Օտոնիելին ճանաչում է բերել 1996 թ. Հռոմի Մեդիչիների պալատի բամբուկի այգու ծառերի համար նրա պատրաստած հսկայական գնդապակե վզնոցը: 2000 թ. նա նոր ոճ հաղորդեց Փարիզի Լուվրի թանգարանի մետրոյի մուտքին՝ վերափոխելով այն «Կուսակցական անձանց կրպակ»-ի (Le Kiosque des Noctambules): Օտոնիելին ձևավորել է Լուվրում իրականացվող «Կոնտրապոնտ» (Contrepoint) ցուցահանդեսի համար հիմնված թանգարանի՝ Միջագետքի սենյակները և կերտել «Արցունքների նավակը» քանդակը՝ ոգեշնչվելով կուբացի փախստականների կառուցած մի նավակով:


<sup>10</sup> Խանջյան 2004, 45-46:



Նկ. 1. Երևանի բուսաբանական այգին




Նկ. 2. «Մայր Հայաստան» արձանը (Հաղթ. զբոսայգի)



Նկ. 3. Հատված Լիոնի այգուց



Նկ. 4. Հովի. Թումանյանի անվան զբոսայգին



Նկ. 5-6. Մանկական երկաթգիծը՝ իր վեհաշուք տեսքով



Նկ. 7. Ն. Ստեփանյանի հուշարձանը



Նկ. 8. Գողտրիկ անկյուն Սիրահարների այգում



Նկ. 9. Ծառուղի Թատերական այգում



Նկ. 10. Վարդանյանների այգու համայնապատկերը



Նկ. 11. Սայաթ-Նովայի հուշաղբյուրը



Նկ. 12. Կոմիտասի անվան պանթեոնը



Նկ. 13. Մարտիրոս Սարյանի արձանը համանուն պուրակում



Նկ. 14. «Կասկադ» համալիրը



Նկ. 15. Խաչքարերի պուրակը

Անշուշտ, քաղաքային դիզայնի կարևորագույն տարր է հասարակական վայրերում արձաններ և հուշակոթողներ տեղադրելը: Յուրաքանչյուր արձան հստակ գաղափարական ազդակ է հասարակության համար: Երևանյան արձանների «գլխավոր հերոսները» գրականության, ֆիլմերի, արվեստի, ռազմական ոլորտի ներկայացուցիչներ են և անցյալի հետ կապն ամրապնդելու կամ գոնե անցյալը մոռացության չմատնելու միջոց:

Մեծ ձեռքբերում կարելի է համարել Երևանի հիմնադրման 2800-ամյակի առթիվ (2019 թ.) բացված **Վարդանյանների այգին** (նկ. 10), որն սկիզբ է առնում Ստեփան Շահումյանի հուշարձանի դիմացից և ավարտվում Ալեքսանդր Մյասնիկյանի հուշարձանի մոտ: Այգին ամբողջովին կառուցված է նորագույն տեխնոլոգիաներով: Արված է կաթիլային և ցնցուղային ինքնաշխատ ոռոգման համակարգ, որտեղ առկա են 2800 շիթ ունեցող շատրվաններ: Յոթ տեսակի գրանիտե քարերով է շարվել հին հայկական գորգերի զարդանախշերով սալահատակը: Ուղեգորգն ունի երկարավուն ու նեղ կառուցվածք, որի հիմքում շեղանկյունազարդ, խոշոր հորինվածքների՝ իրար կցված շարանով բնորոշվող «Ճարտար» տիպի գորգերի գեղազարդված պատկեր է: Իրականացվել է «Խնձորեսկ» տիպի ուշ շրջանի վիշապագորգերի հիմնական հորինվածքը՝ բաղկացած բարու և չարի հավերժական պայքարը ներկայացնող արևի խորհրդանշանից ու այն շրջապատող վիշապի ութ ոճավորված պատկերներից: Խոշոր շեղանկյունազարդի կենտրոնում տեղակայված է 1680 թ. գործված «Գոհար» վիշապագորգի կենտրոնական վարդակի գծայնացված տարբերակը: Այգին կանաչապատված է 70 տեսակի 369 ծառերով, իսկ մուտքի հատվածում տեղադրված են Էրեբունի պատմական ամրոցի որմնանկարների նմանությամբ պատրաստված ցլի և առյուծի բրոնզաձույլ արձանները: Երևանի հատակագծի տեսքով շատրվանի չորս անկյուններում կառուցված ավազանների մեջ առկա են երեխաների չորս բրոնզաձույլ ջրային արձաններ («Երևակայություն», «Հոգատարություն», «Անադարտություն», «Երջանկություն»):

Այգու ճարտարապետական տարրերի գրանիտե մակերեսներին արված զարդաքանդակներն ու այլուրից նախշերը պատրաստվել են Ալեքսանդր Թամանյանի, Զիմ Թորոսյանի, Ռաֆայել Իսրայելյանի, Ստեփան Քյուրքչյանի և Մարկ Գրիգորյանի ստեղծած հայտնի ճարտարապետական կոթողների նախշերի նմանությամբ<sup>11</sup>:

**Կոմիդասի անվան պուրակը** գտնվում է հանճարեղ կոմպոզիտորի անունը կրող՝ Երևանի պետական կոնսերվատորիայի դիմաց: Այդտեղ տեղադրված են վարդապետ Կոմիտասի բրոնզե արձանը (քանդ.՝ Արա Հարությունյան, ճարտ.՝ Ֆենիքս Դարբինյան) և Սայաթ-Նովայի՝ սպիտակ մարմա-

<sup>11</sup><https://armeniasputnik.am/20190601/yerevani-kentronum-nor-aygi-e-bacvel-inch-anaknal-e-spasu-m-aycelunerin-lusankarner-18920137.html>

րից կերտված հուշադրյուրը (նկ. 11, քանդ.՝ Արա Հարությունյան, ճարտ.՝ Էդուարդ Սարապյան):

Իսկ ահա **Կոմիդասի անվան պանթեոնի** (նկ. 12) տարածքը մինչև 1930-ական թթ. կեսերը եղել է հին գերեզմանատուն, որը տեղացիները կոչել են «Մլեր»: Այն Աղասի Խանջանի նախաձեռնությամբ վերափոխվում է արվեստի գործիչների պանթեոնի, որտեղ ամփոփված են հայ մշակույթի մեծերի և հասարակական-քաղաքական անվանի գործիչների, ինչպես՝ երգահան Կոմիտասի, կոմպոզիտորներ Ռոմանոս Մելիքյանի, Արամ Խաչատրյանի, Անոն Բաբաջանյանի, գրողներ Ալեքսանդր Շիրվանզադեի, Ավետիք Իսահակյանի, Նաիրի Զարյանի, Հովհաննես Շիրազի, Պարոյր Սևակի, Վիլյամ Սարոյանի, դերասաններ Հովհաննես Աբեյանի, Հրաչյա Ներսիսյանի, Ավետ Ավետիսյանի, Վահրամ Փափազյանի, Միեր Մկրտչյանի, ճարտարապետներ Թորոս Թորամանյանի, Ալեքսանդր Թամանյանի, պատմաբան Լեոյի և այլոց աճյունները<sup>12</sup>:

**Մարտիրոս Սարյանի անվան պուրակում** (նկ. 13) տեղադրված է Մարտիրոս Սարյանի մարմարյա արձանը (քանդ.՝ Լևոն Թոքմաջյան, ճարտ.՝ Արթուր Թարխանյան, 1986 թ.): Այստեղ է գտնվում նաև «Էրեբունի-Երևան» («Կենաց ծառ») հուշարձանը (քանդ.՝ Հակոբ Փիլիպոսյան, ճարտ.՝ Ֆենիքս Դարբինյան, 1970 թ.), որը ներկայացնում է մ.թ.ա. 782 թ. Էրեբունի-Երևան ամրոցը հիմնադրած՝ Վանի թագավորության արքա Արգիշթի Առաջինին: Այն Երևանի հազվագյուտ գեղարվեստական նմուշներից է, որտեղ ուրարտական արքայի հետ միասին պատկերված է նաև թագուհին: Այգում է գտնվում նաև 2007 թ. «Տղամարդիկ» արձանախումբը (քանդ.՝ Դավիթ Մինասյան): Այգու տարածքում մշտապես գործում է նկարչական ցուցահանդես-վաճառք:

**Մոսկովյան պուրակում** տեղադրված են «Ամրագրիր քո ապագան» (քանդ.՝ Դավիթ Մինասյան, 2012), ինչպես նաև «Նարդի խաղացողը» քանդակները (քանդ.՝ Էդուարդ Շախիկյան, 2007): Ամերիկահայ մեծատաղանդ գրող Վիլյամ Սարոյանի արձանը գտնվում է Մոսկովյան-Մաշտոց փողոցների խաչմերուկի մերձակա մասում:

**«Կասկադի»** (նկ. 14) ցածրադիր հատվածում տեղադրված է մեծ ճարտարապետի՝ հայ նոր ճարտարապետության հիմնադիր, ակադեմիկոս Ա. Թամանյանի արձանը: Գաֆեսճյան քանդակների պարտեզն ընդգրկում է Կասկադի դիմացի պուրակի տարածքը, որտեղ ներկայացված են աշխարհի լավագույն մոնումենտալ քանդակներ, ինչպես, օրինակ, հանրահայտ արվեստագետներ Ֆերնանդո Բոտերոյի, Ժաումե Պլենզայի և Բարրի Ֆլանագանի ստեղծագործությունները: Կասկադի բոլոր հարթակներից հիասքանչ տեսարաններ են բացվում դեպի քաղաք: Ամբողջ համալիրը յուրօրինակ

<sup>12</sup> <https://armeniadiscovery.com/hy/articles/lovers-park>

ամֆիթատրոն է, որը ներդաշնակվում է շրջակա միջավայրի հետ: Համալիրի գլխավոր գաղափարը ազգային վերածննդի արտահայտումն է: Այդ գաղափարը իրականություն դարձնելու համար օգտագործվել են ճարտարապետական ամենատարբեր ձևեր, գեղարվեստական արտահայտչամիջոցներ ու լուծումներ: Երևանի Կասկադը կառուցված է արտ-դեկո ոճով: Այս մոնումենտալ ճարտարապետական համալիրը բաղկացած է հինգ բացօթյա տեռասներից: Կասկադում միաձուլվում են ճարտարապետական արվեստը և այգին: Շինությունը հիշեցնում է բազմալարուսային բուրգ, որի գագաթային հատվածից տեսարան է բացվում դեպի Արարատ լեռը:

**Խաչքարերի պուրակը** (նկ. 15) շահագործման է հանձնվել 2014 թ.: Այն ամբողջությամբ ապահովված է արտաքին մեղմ լուսավորությամբ և երեք շատրվանային համալիրներով: Այստեղ տեղադրված է 17 խաչքար: Խաչքարերը վերարտադրված են Արևմտյան Հայաստանում և Հին Ջուղայում եղած բնօրինակներից:

Ինքնատիպ և խորհրդանշական լուծումով է առանձնանում Հայաստանի Առաջին հանրապետության պետական, հասարակական գործիչ, հայոց նորագույն պետականության հիմնադիր, ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի արձանը՝ եռագույնի մեջ փաթաթված: Առաջին հանրապետության հիմնադրի արձանը տեղադրված է մետրոյի Հանրապետության հրապարակ կայարանի խորհրդային մոդեռնիստական ճարտարապետական համալիրի վրա (ճարտ.՝ Զիմ Թորոսյան, քանդ.՝ Մկրտիչ Մինասյան, 2017 թ.): Խաչքարերի պուրակի անքակտելի մասն է կազմում հայ պետական և ռազմական գործիչ Գարեգին Նժդեհի արձանը (քանդ.՝ Գագիկ Ստեփանյան, ճարտ.՝ Ասլան Մխիթարյան, 2016 թ.):

Փոքր կենտրոնում են գտնվում բանաստեղծ, հրապարակախոս Միքայել Նալբանդյանի արձանը, ռուս և հայ ժողովուրդների բարեկամության հուշարձանը, սփյուռքահայ բարերարների ճեմուղին, ինչպես նաև Ասորական ցեղասպանության հուշարձանը, որից մի քանի մետր հեռավորությամբ՝ հայ հոչակավոր նկարիչ Հովհաննես Այվազովսկու վեհաշուք արձանը (հեղ.՝ Յուրի Պետրոսյան, ճարտ.՝ Ստեփան Քյուրքչյան): Այվազովսկու արձանի բացման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել 2003 թ. Կամերային երաժշտության տան մոտ<sup>13</sup>: Փողոցի մյուս կողմում մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի արձանն է: Այստեղ են տեղադրված «Բարեկամության ձեռքերը» քանդակը, որը կանգնեցվել է 1967 թ. և խորհրդանշում է հայ և իտալացի ժողովուրդների բարեկամությունը<sup>14</sup>, ինչպես նաև հայ տաղանդավոր քնարերգու Վահան Տերյանի արձանը:

<sup>13</sup> Խանջյան 2004, 45:

<sup>14</sup> 1965 թ. Իտալիայի Կարարա քաղաքում կազմակերպված քանդակագործական բիենալեին մասնակցել է նաև Արա Հարությունյանը: Հիշարժան է այս ստեղծագործության նախապատմությամբ:

Տերյան և Մոսկովյան փողոցների հատման վայրում է գտնվում Հոլոքոստի և Ցեղասպանության զոհերին նվիրված հուշարձանը:

Որպես ամփոփում՝ կարող ենք ասել, որ Երևանի գրեթե բոլոր այգիների խորհրդանիշը բարեկամությունն է: Ընդհանուր առմամբ, մեր այգիների կոլորիտը ամբողջացնում է հուշարձանների, ցայտադրյուրների, շատրվանների առկայությունը:

### **Եզրակացություններ**

Երևանի զբոսայգիները ներդաշնակորեն միահյուսվում են քաղաքի ճարտարապետական անսամբլի հետ և պատկանում են նրա այցեքարտերի ու տեսարժան վայրերի շարքին: Անվերապահորեն, այգիների առկայությունը քաղաքների կարևորագույն բաղադրիչն է. դրանք անփոխարինելի միջավայր են բնակչության լավագույն հանգստի և նրա բնականոն գործունեությունն ապահովելու հարցում: Կարծում ենք՝ ներկա օրերում ևս անհրաժեշտ է կառուցել նորանոր այգիներ, որոնք կապահովեն քաղաքը ավելի գեղատեսիլ վայրերով՝ կարևորվելով նաև առողջապահական տեսանկյունից:

### **Օգտագործված գրականություն**

Հայաստան, ճամփորդություններ և ուսումնասիրություններ, «Ռուսական Հայաստան» 1901, հ. 1, էջ 471-496, <https://archive.org/details/armeniatravelst02lync/page/n5/mode/2up> (ներբեռնման օրը՝ 14.11.2022).

Մանուկյան Դ.Ս., Թամանյան Ա.Գ. 2003, Քաղաք-այգու տեսությունը և Երևանի հատակագիծը, Բանբեր Երևանի պետ. համալսարանի, N 3 (III), էջ 107-116:

Երևանը քարտեզներում և հատակագծերում 2008, ԵՔՊԹ, Երևան, էջ 5-6:

Ճարտարապետություն և շինարարություն ամսագիր 2014, N 11 (105), նոյեմբեր, Երևան, էջ 40:

Խանջյան Ա. 2004, Երևանի արձանները, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 176 էջ:

<https://armeniasputnik.am/20190601/yerevani-kentronum-nor-aygi-e-bacvel-inch-anaknkal-espasum-aycelunerin-lusankarner-18920137.html> (downloaded 14.11.2022).

<https://armeniadiscovery.com/hy/articles/lovers-park> (downloaded 04.09.2023).

<https://yhm.am/archives/8760> (downloaded 04.09.2023).

---

յունը: Հայ քանդակագործը Կարաբայի մարմարի հանքում տեսնում է քանդակի մասեր: Նրան տեղեկացնում են, թե դրանք Քրիստոսի արձանի դրվագներն են, որի հեղինակը աշխատանքները դադարեցրել է՝ հովանավորներ չունենալու պատճառով: Տեսնելով, որ Արա Հարությունյանը խիստ հետաքրքրված է արձանի «ճակատագրով», քարհանքի տերը նրան թույլ է տալիս վերցնել անավարտ կտորները: Կարաբայի քաղաքապետարանը Հիսուսի արձանի ձեռքերը Երևան է ուղարկում, և Ա. Հարությունյանը կերտում է այս քանդակը՝ որպես երկու ժողովուրդների բարեկամության խորհրդանիշ:

---

**ПАРКИ ЕРЕВАНА КАК ЧАСТЬ АРХИТЕКТУРНО-ЛАНДШАФТНОГО ДИЗАЙНА**

Армине Петросян

Резюме

Садово-парковая зона является одной из визитных карточек города, ведь их наличие придает городскому пейзажу неповторимое очарование. Особенностью ереванских парков является архитектурный ансамбль с оригинальными фонтанами, статуями, родниками, скамейками и другими интересными компонентами.

Сады Еревана играют важную роль в архитектурно-ландшафтном дизайне и выделяются своими дизайнерскими решениями. Главный архитектор Еревана Александр Таманян спроектировал план столицы как города-парка. Учитывая полупустынный климат этой местности, архитектор при разработке генерального плана придавал ключевое значение озеленению столицы.

Можно сказать, что характерным почти для всех парков Еревана является наличие памятников.

**Ключевые слова** – ландшафт, Александр Таманян, парки Еревана, архитектурный ансамбль, город-парк, центральные парки Еревана, парковая архитектура.

**PARKS OF YEREVAN AS PART OF ARCHITECTURAL AND LANDSCAPE DESIGN**

Armine Petrosyan

Abstract

Parks are one of the visiting cards of the city, because their presence gives the city landscape a unique charm. A feature of Yerevan parks is an architectural ensemble with original fountains, statues, fountains, benches and other interesting components.

Gardens of Yerevan play an important role in architectural and landscape design and are distinguished by original solutions. The chief architect of Yerevan, Alexander Tamanyan, designed the plan of the capital as a city-park. Taking into account the semi-desert climate of this area, when developing the master plan, he attached great importance to the greening of the capital.

We can say that the presence of monuments is characteristic of almost all parks in Yerevan.

**Key words** – landscape, Alexander Tamanyan, parks of Yerevan, architectural ensemble, city-park, central parks of Yerevan, park architecture.

# ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԽՈՒՌԱՌԻՐԱՐՏԱԿԱՆ ԹԵՇՈՒԲ/ԹԵՅՇԵԲԱՅԻ ԵՎ ՀՈՒՆԱԿԱՆ ԹԵՍԵՎՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ

### Արմեն Պետրոսյան

Բանասիրական գիտությունների դոկտոր  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Չարենցի 15  
Էլ. հասցե՝ alpehit@gmail.com  
ORCID: 0000-0002-1982-5593

Հոդվածը ներկայացվել է 03.11.2022, գրախոսվել է 15.03.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.1-239

#### Ամփոփում

Հայաստանի հնագույն հուշարձաններից առավել աչքի ընկնողներն են հսկայական վիշապաքարերը, որոնց առաջին օրինակները թվագրվում են միջին բրոնզի դարի սկզբով (մ.թ.ա. XXIV դ.): Մանրամասն քննարկումը ցույց է տալիս, դրանք եղել են հնդեվրոպական ամպրոպային առասպելի ատրիբուտներ և մինչև իրանական վիշապ բառի փոխառումը կոչվել են ամպրոպի աստծու հակառակորդ առասպելական օձ-վիշապի հնդեվրոպական անունով (գեղ < \*wel-): Այդ առասպելի արձագանքներն ի հայտ են գալիս նաև Հայաստանի նախաուրարտական դարաշրջանի այլ հնագիտական հուշարձաններում:

Հնդեվրոպական ամպրոպի աստվածը եղել է ռազմական գործառության կրող և մարմնավորել է արխայիկ ռազմիկի կերպարը: Նրա զենքն էր մուրճը կամ տապարը, իսկ սիմվոլը՝ ցուլը: Խուռուարարտական ամպրոպի աստծու անունը (խուռ. Teššub, ուրարտ. Teišeba /Theišewa/) չունի ընդունելի ստուգաբանություն այդ լեզուներում: Նրա ատրիբուտները, սիմվոլը և առասպելը (տապար, ցուլ, հաղթանակ քարե հրեշի դեմ) հիշեցնում են հնդեվրոպական ամպրոպային աստծուն: Հոդվածում առաջարկվում է այդ դիցանվան հայկական ստուգաբանություն հնդեվրոպական \*tek's-+ \*h<sub>2</sub>ep- «տապար բռնող» նախաձևից: Այդ աստծու կերպարը հետագայում, հավանաբար Կիլիկիայից և Լևանտից, մ.թ.ա. երկրորդ հազարամյակի վերջի կիլիկյան քայազանների միջոցով, անցել է հունական դիցաբանություն՝ դրպես Թեսսա (հուն. Theseus), դառնալով Կրետեի ցիկլի առասպելների առանցքային դեմքերից մեկը:

**Բանալի բառեր՝** հնդեվրոպական լեզվաբանություն, հնդեվրոպական առասպելաբանություն, ամպրոպի աստված, խուռիական առասպելաբանություն, Թեշուբ, Թեյշեբա, Թեսսա:

#### Ներածություն

Ուրարտական դիցարանին բնորոշ է վառ արտահայտված եռամասնությունը. այն գլխավորում են գերագույն աստված Խալդին, ամպրոպի աստված Թեյշեբան և արևի աստված Շիվինին, որոնք միասին հանդես են գալիս

բազմաթիվ բանաձևերում: Թեև դիցաբանական եղանակներ հայտնի են ամենուրեք, բայց այս դիցարանի առանձնահատկությունները համադրելի են մասնավորապես Ժ. Դյումեզիլի կողմից վերականգնված հնդեվրոպական «եռամաս գաղափարախոսության» և եռամաս դիցարանների հետ<sup>1</sup>: Գիտության ներկա զարգացումը թույլ է տալիս ասել, որ հնդեվրոպացիների և հատկապես վաղնջահայերի ներկայությունը Անդրկովկասում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսից կասկած չի հարուցում<sup>2</sup>: Ըստ այդմ, Խուռաուրարտական մշակույթի և կրոնի վրա հնարավոր է հայկական ազդեցությունը: Հնդեվրոպական ավանդույթում ամպրոպի աստծու առասպելն այնպիսի կենտրոնական դեր է գրավում, որ այն կոչվել է «հիմնական առասպել»<sup>3</sup>: Հնդեվրոպական տեսք ունի նաև ուրարտական Թեշեբայի խոտիական համապատասխանության՝ Թեշուրի հակառակորդ Ուլլիկումմիի անունը: Այսինքն՝ հնդեվրոպական ամպրոպային առասպելը միանգամայն կարող էր փոխառվել Խուռաուրարտական ավանդույթում: Ավելին, Խալդիի կերպարը նույնական է վաղնջահայ դիցարանի մեծ աստծու կերպարի հետ<sup>4</sup>, իսկ Շիվինիի անունը խեթական ծագում ունի: Այսպիսով, բացատրվում է ուրարտական դիցարանի հնդեվրոպական կառույցի ծագումը: Իսկ հին Հունաստանի մեծագույն հերոսներից Թեսևսի անվան նմանությունը Թեշեբային և առասպելի մանրամասնությունները անբաժանելի են դարձնում նրան Թեշուր/Թեշեբայից և, այսպիսով՝ փոխառված են նրանից և նրա վաղնջահայ նախատիպից:

### **Հայկական լեռնաշխարհը հնդեվրոպական միգրացիաների համատեքստում**

2022 թ. "Science" հանդեսում հրատարակվեց նույն հեղինակային խմբի երեք հոդված Հարավային Եվրոպայի և Արևմտյան Ասիայի որոշ երկրամասերի հին բնակչության հնագենետիկայի վերաբերյալ, որոնց հիման վրա վերջնականապես ճշտվում են հնդեվրոպական նախահայրենիքի և վաղ միգրացիաների մասին եղած վարկածները<sup>5</sup>: Ըստ այդմ, հնագույն հնդիսեթական (կամ՝ հնդանատոլիական) հանրույթը տեղայնացվում է Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում: Մ.թ.ա. շուրջ 5000 թ.-ից այդ հանրույթի մի մասը Կովկասի վրայով անցել է հյուսիս՝ հարավուսական տափաստաններ: Այնտեղ նրանք խառնվել են տեղական բնակչության հետ, ձեռք բերել նոր հատկանիշներ: Այդպես ձևավորվել է բուն հնդեվրոպական՝

<sup>1</sup> Պետրոսյան 2002.

<sup>2</sup> Lazaridis et al. 2022a, Suppl., 280.

<sup>3</sup> Տե՛ս հատկապես Иванов, Топоров 1974, նույն հեղինակների այլ աշխատություններում:

<sup>4</sup> Պետրոսյան 2024:

<sup>5</sup> Lazaridis et al. 2022a, 2022b, 2022c.

ներկայումս կենդանի բոլոր հնդեվրոպական լեզուների նախնի լեզվի կրողների հանրույթը: Այնտեղից, հիմնականում մ.թ.ա. III հազարամյակում, սկիզբ են առել հնդեվրոպական մեծ գաղթերը: Այդ հանրույթի մի մասը մ.թ.ա. III հազարամյակի կեսից, նորից Կովկասի վրայով, վերադարձել է Անդրկովկաս՝ առավել խտությամբ հիմնվելով Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և արևելյան հատվածներում (ներկայիս Հայաստանի հանրապետության և հարակից տարածքներում՝ ուրարտական աղբյուրների էթիմոնի երկրի շրջանում): Այդ մարդիկ են ստեղծել Հայկական լեռնաշխարհի միջին, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի մշակույթները (վաղ կուրգանների, Թռեղք-վանաձորյան, Սևան-արցախյան, Կարմիրվանքյան, Կարմիրբերդյան և Լճաշեն-մեծամորյան): Այդ տարածքների բնակչությունը մինչև մ.թ.ա. I հազարամյակի կեսերը 75%-ով պահպանել է իր «տափաստանային» հայրագիծ ժառանգորդությունը<sup>6</sup>: Այս տվյալների հիման վրա վերջնականապես մերժվում է վաղնջահայերի բալկանյան ծագման վարկածը: Իսկ ներկա հողավածի նյութով հիմնավորվում է Հայաստանի միջինբրոնզեդարյան բնակիչների հայկական ծագումը և նրանց ազդեցությունը խուռուրարտական մշակույթների վրա<sup>7</sup>:

### **Տապարացուր և հնդեվրոպական ամպրոպի աստվածը**

«Տապարացուր» եզրույթը ստեղծել է Լ.Հ. Աբրահամյանը Հայաստանի վաղերկաթեդարյան (XII-IX դդ. մ.թ.ա.) թաղումներում հանդիպող մի բրոնզե արտեֆակտի համար: Առարկայի կենտրոնը գրավում է մի ելուստ, որ հիշեցնում է ցլի գլուխ և միաժամանակ՝ կացնի սայր, շրջապատված երկու կամ երեք, առջևից բաց կամ փակ կոնցենտրիկ ներգծված շրջանակներով, որոնք ելնում են, նայած թե ինչպես ենք ընկալում պատկերը՝ ցլի մարմնից կամ տապարի կոթից (աղ. 1): Ըստ հեղինակի, տապարացլի հորինվածքը կարող է լավագույնս բացատրվել հունական «Մինոտավրոսը լաբիրինթոսում» առասպելույթի միջոցով<sup>7</sup>: Կոնցենտրիկ շրջանները ներկայացնում են լաբիրինթոսի մի սխեմատիկ պատկեր, կենտրոնում՝ Մինոտավրոսի ցլի գլուխը, որը հիշեցնում է տապար կամ կրկնակի տապար, ինչն արտացոլում

<sup>6</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Պետրոսյան, Պայան 2023:

<sup>\*</sup> Հոդվածը գտնվում էր տպագրության մեջ, երբ համացանցում ներկայացվեց հեղինակների նույն խմբի հաջորդ հոդվածը, որտեղ հնարավոր է համարվում, որ հնդեվրոպական ընդհանրությունը ձևավորվել է Կովկասյան լեռներից մինչև Վոլգայի ստորին հոսանքներ ընկած տարածքներում: Այնտեղից, մ.թ.ա. հինգերորդ հազարամյակի երկրորդ կեսին նրանց մի մասը՝ ապագա անատոլիացիների նախնիները Կովկասի վրայով կարող էին անցնել Անդրկովկաս, ապա՝ Փոքր Ասիա, իսկ տեղում մնացած մասը դառնալ հիմքը հետագա տափաստանային «բուն հնդեվրոպական» Յամնայա մշակույթի, որից հետագայում սկիզբ առան մյուս բոլոր հնդեվրոպացիները (Lazaridis et al. 2024): Այս հնարավորությունը չի փոխում վաղնջահայերի՝ մ.թ.ա. երրորդ հազարամյակի կեսից Հայկական լեռնաշխարհում գտնվելու՝ սույն հոդվածի համար կարևոր թվագրությունը:

<sup>7</sup> Աբրահամյան 2004, Abrahamian 2022:

է լաբիրինթոսի՝ որպես «լաբրիսի տուն» ընկալումը, հմմտ. հուն. λάβρος «լաբրիս, կրկնակի տապար» և λαβύρινθος «լաբիրինթոս, Մինոտավրոսի կացարանը»<sup>8</sup>:

Մեր աշխատանքներում մենք փորձել ենք ցույց տալ, որ՝ 1. տապարացույլը եղել է հասարակության ավագ անդամների իշխանության պատվանշան, մի տեսակ՝ ամպրոպի և ռազմի աստծու «շքանշան»<sup>9</sup>, և 2. այդ հորինվածքը ծագում է տեղական միջինբրոնզեդարյան (XXIV-XVI դդ. մ.թ.ա.) առասպելաբանական պատկերացումներից<sup>10</sup>: Առաջին կետի առթիվ կարելի է ասել, որ տապարացյերն ի հայտ են գալիս հասարակության աննախադեպ ռազմականացման դարաշրջանում, հատկապես տարեց՝ հեղինակավոր ռազմիկների դամբարաններից<sup>11</sup>, ինչը և հաստատում է նրանց՝ հատուկ պատվանշան լինելու հանգամանքը: Մեր նյութի համար ավելի կարևոր է երկրորդ կետը: Տապարացի հորինվածքը հիշեցնող առաջին պատկերները հանդիպում են արդեն միջին բրոնզե դարի ամենաաչքի ընկնող հուշարձանների՝ վիշապ-քարակոթողների վրա: Դրանցից շատերն ունեն ուղղաձիգ կանգնած ձկան տեսք, որոնց գլխին փռված է ցլի մորթի, իսկ մի մասի վրա կան ցլի մորթու պատկերներ՝ փռված եռամաս ծառի տեսքով (ցլի գլուխը ներկայացնում է ծառի գագաթը, եղջյուրներն ու ոտքերը՝ վեր բարձրացող ճյուղեր, նման բարդու կամ սոճու ճյուղերի, իսկ մարմինը և պոչը՝ բունը): Ցլերի և նրանց մորթիների համանման պատկերներ հանդիպում են նաև Հայաստանի ժայռանկարներում՝ հաճախ շատ սխեմատիկ տեսքով (աղ. 2): Ակնհայտ է, որ տապարացույլը համադրելի է այդ պատկերների հետ, իսկ ցլի մորթին կարևոր դեր է կատարել հասարակության ծիսական կյանքում: Ցլի գլխի շուրջը եղած շրջանակները համեմատելի են ցլի եղջյուրների և ոտքերի հետ, միայն հետին ոտքերը, ելնելով հորինվածքի առանձնահատկությունից, ձգված և բերված են առաջ, այնպես որ առարկան լաբիրինթոսի տեսք է ընդունել:


<sup>8</sup> Կրկնակի տապարի և լաբիրինթոսի ու Մինոտավրոսի առասպելի վերաբերյալ տե՛ս Սոսե 1957, 114-121, 206-235. այդ բառերի ստուգաբանական կապը վիճարկվում է, բայց այն, անկասկած, հավանական է, իսկ առասպելում հանդես է գալիս գոնե «ժողովրդական ստուգաբանության» մակարդակով, տե՛ս Սոսե 1957, 120, հմմտ. Beekes 2010, 819:

<sup>9</sup> Petrosyan 2022.

<sup>10</sup> Պետրոսյան 2015, 26-27, 38-42, 2022, Petrosyan 2022:


<sup>11</sup> Երկաթի դարի սկզբից Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի է ունենում հասարակության ռազմականացման բուռն գործընթաց: Ի հայտ է գալիս սոցիալական նոր խավ՝ ռազմիկների դասը: Այդ համատեքստում հատկապես լավ է ուսումնասիրված Հոռոմի դամբարանը, որտեղ պարզ տարբերակվում են քառասունն անց տղամարդկանց թաղումները: Հենց այդտեղից են գտնվում ռազմական գերագանցության տարբերանշանները՝ շտանդարտներ, սվաստիկաներ ևն, որոնց թվում են և տապարացյերը (տե՛ս Բադայան, Աղեկյան 1994, Ավետիսյան, Մկրտչյան 1994, Мкртчян 2001, 54-56, Геворгян 2010, 203, Ավետիսյան 2014, 57, 65):

**Աղյուսակ 1**




1. Տապարացիք (Avetisyan et al. 2018), 2. Դեկորատիվ ասեղ-տապարացիք Շիրակվանից, 3. Տապարացույ և վաղերկաթեդարյան տապարիկ (Абраамян 2022)

**Աղյուսակ 2**



1. Տապարացույ հիշեցնող ցլի մորթու պատկերներ վիշապաքարերի վրա և ժայռապատկերում (Պետրոսյան 2015), 2. Դասական լաբիրինթոս կրետեական դրամի վրա (մ.թ.ա. առաջին հազարամյակի երկրորդ կես), 3-4. Լաբիրինթոս և «կայծակ» նշանագրով միջինբրոնզեդարյան անոթներ

## Աղյուսակ 3



1. Առաջնորդի արծաթե դեկորատիվ տապարիկ Քարաշամբից (մ.թ.ա. երրորդ հազարամյակի վերջին դարեր), 2. Իրանական ցլագլուխ գուրգ (Մետրոպոլիտեն թանգարան, Նյու-Յորք), 3. Ֆերիդունի դիմանկարը. հեղինակ Հաջի Աղա-խան (XIX դ. սկիզբ), 4. Պարաշուտամա, 5-6. Թեշուրը, սինկրետացված անատոլիական ամպրոպի աստվածների հետ, 7. Թեյշերա (Կարմիր բլուր), 8. Պրոկրուստեսին սպանող Թեսևսը

Քարի քանդակների և բրոնզե առարկայի պատկերները, թեև, այսպիսով, ծագում են միևնույն արխետիպային նախորինակից՝ ցլի մորթուց, որը վերածվել է առասպելաբանական ծառի կամ լաբիրինթոսի, տարբեր դարաշրջանների և ոճերի ստեղծագործություններ են: Վիշապաքարի կամ ժայռապատկերի ցլի մորթիները վաղնջական մի ծեսի՝ քիչ թե շատ ռեալիստական պատկերումներ են, մինչդեռ բրոնզե առարկան շատ ավելի ուշ շրջանի պայմանական-սխեմատիկ հորինվածք է:

Նյութի հետագա շարադրանքի համար անհրաժեշտ է ներկայացնել որոշ տեղեկություններ Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. IV-III հազարամյակներում հնագիտական մշակույթների հաջորդականության վերաբերյալ: Էնեոլիթից հետո, մ.թ.ա. IV հազարամյակի կեսից մինչև մ.թ.ա. III հազարամյակի կեսերը, այստեղ ծաղկում էր վաղբրոնզեդարյան կուրաքայան մշակույթը: Նրա բնութագիրներից էին բնակչության մեջ արտահայտված սոցիալական շերտավորման բացակայությունը և խաղաղ, հողագործական նստակյաց կենսակերպը բնակավայրերում: Մ.թ.ա. III հազարամյակի կեսերից այստեղ ի հայտ են գալիս բացարձակապես նոր երևույթներ. նոր, մարտաշունչ գաղափարախոսություն ունեցող և վառ արտահայտված սոցիալական շերտավորմամբ բնութագրվող ցեղերի ներհուք, առաջնորդների ճոխ թաղումներ կուրգաններում (այդ առումով առանձնապես աչքի է ընկնում Թոեղք-վանաձորյան մշակույթը): Շուտով բնակավայրերը և նախորդ հին մշակույթը կործանվում են, և իշխող է դառնում (կիսա) քոչվորական կենսակերպը: Այս եկվորները շատ առումներով հիշեցնում են հնդեվրոպական ռազմիկ-նվաճողներին: Մշակույթի որոշ առանձնահատկություններ՝ կուրգանային թաղումները, վիշապաքարերի և նյութական մշակույթի հուշարձանների հիման վրա վերականգնվող առասպելաբանության նմուշները ևս մատնանշում են եկվորների հին երկիրը՝ հնդեվրոպացիների «տափաստանային» նախահայրենիքը, իսկ նորագույն հնագենետիկական ուսումնասիրությունները անառարկելիորեն հաստատում են դա<sup>12</sup>:

Քննությունը ցույց է տալիս, որ վիշապաքարերը հնդեվրոպական ամպրոպային առասպելի պաշտամունքի ատրիբուտներ են: Ըստ Վ.Վ. Իվանովի և Վ.Ն. Տոպորովի, ամպրոպի աստծու հակառակորդ օձ-վիշապի անունն այդ առասպելում հանգում է \*wel- արմատին: Հայերենում վերջինիս կանոնավոր արտացոլումն է \*գեղ-ը, և հնում, մինչև իրանական վիշապ բառի փոխառումը, այդ քարակոթողները կոչվել են հենց գեղ: Այդ մասին են վկայում հատկապես տեղանվանաբանական տվյալները. այսպես, վիշապաքարերը մեծագույն խտությամբ հանդիպում են Գեղամա լեռներում (150-ից 60-ը), Գեղարքունի, հնում՝ Գեղաքունի (ուրարտ. արձանագրություններում՝ Uelikuni/ Uelikuhı), գավառում: Այդ կոթողների երկու ամենամեծ խմբերը գտնվում են Գեղ լեռան գագաթին (որի հարևան լեռը կոչվում է Աժդահակ՝ իրանական առասպելաբանության օձ-վիշապի անունով) և Գեղի ամրոցի կողքին: Կոթողների ձևն ու դրանց պատկերները ևս կապված են ամպրոպային առասպելի հետ. ձկան տեսքով վիշապաքարերը կարող են դիտվել որպես ամպրոպի աստծու հակառակորդ ձկնակերպ օձ-վիշապի արձաններ<sup>13</sup>, ցույլը եղել է ամպրոպի աստծու խորհրդանիշը հին մերձավորարևելյան և հնդեվրո-

<sup>12</sup> Lazaridis 2022a, Suppl. 272-280, Anthony 2024, 11-12, Պետրոսյան, Պալյան 2023, 13-15:

<sup>13</sup> Петросян 1987, Պետրոսյան 2015, 33-36.

պական ավանդույթներում (Иванов 1980), իսկ աստծուն զոհաբերել են իր իսկ սիմվոլ հանդիսացող կենդանին<sup>14</sup>:

Հին Մերձավոր Արևելքում ամպրոպի աստծու զենքն էին մահակը, մուրճը կամ (հաճախ կրկնակի) տապարը, հին Հնդկաստանում՝ vajra-ն՝ «գուրգ-կայծակը», սլավոնների, գերմանների և կելտերի մեջ՝ տապարը կամ մուրճը, Կովկասում՝ տապարը<sup>15</sup>: Հնդեվրոպական ժողովուրդների ամպրոպի աստվածը ռազմական (ըստ Ժ. Դյումեզիլի՝ «երկրորդ») գործառույթի կրողն էր և մարմնավորում էր արխաիկ ռազմիկի կերպարը: Նշված զենքերը՝ գուրգը, մուրճը և տապարը առաջացել են արխաիկ զենքից՝ մահակից քարե, ապա՝ մետաղե գլխիկով կացնի զարգացման շնորհիվ (մահակի վրա՝ քարե գլխիկ, որը հետագայում փոխարինվել է մետաղով): Հատկանշական է, որ ֆիննական լեզուներում արիական vajra-ն փոխառվել է «մուրճ/կացին» նշանակությամբ (հմմտ. ֆինն. vasara «մուրճ» և մորդվ. užer «կացին»)՝<sup>16</sup>: Մուրճը եղել է ամպրոպի աստծու զենքը նաև հնագույն հայկական ավանդույթում, իսկ «Սասնա ծռերի» հերոսների «թուր կեծակին» նորամուծություն է<sup>17</sup>:

Լավագույնս պահպանված հնդեվրոպական՝ հնդկական ավանդույթում ամպրոպի աստված Ինդրան նմանեցվում է ցլի, իսկ նրա՝ վաջրայով հարվածը՝ կայծակի հետ: Իր գլխավոր սիրագործության մեջ նա վաջրայի հարվածներով է հաղթում Վրտրա օձ-վիշապին: Մեր նյութի համար բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում հնդկականին մերձավոր իրանական ավանդույթի տվյալները, որտեղ հնդ. վաջրային համապատասխանում է հին պրսկ. vazra-ն և նոր պրսկ. gorz-ը (որոնցից ունենք հայ. վազր և գուրգ): Զրադաշտի ռեֆորմից հետո իրանական կրոնում տեղի են ունեցել մեծ փոփոխություններ, և ամպրոպի աստծու զենքը, ռազմի աստծու գործառության հետ անցել է Միթրա/Միհրին: «Ավեստայում» Միհրը գլխավոր հակառակորդն է չար ուժերի տիրակալ Ահրիմանի, որն ամեն ինչից շատ վախենում է նրա գուրգից՝ աշխարհի ամենահզոր և հաղթական զենքից<sup>18</sup>: Ինդրայի և Վրտայի հակամարտության հնդկական առասպելի հին իրանական համա-

<sup>14</sup> Հին միջագետքյան ամպրոպի և փոթորիկի աստծու հնագույն խորհդանիշն է եղել առյուծ-վիշապը: Յուլը սկսում է փոխարինել նրան մ.թ.ա. III հազարամյակի վերջերից (Schwemer 2008, 31-36): Կարելի է կարծել, որ դա կապված է եղել մ.թ.ա. III հազարամյակի կեսերից տարածաշրջանում հնդեվրոպացիների հայտնվելու հետ:

<sup>15</sup> Հին մերձավորարևելյան ավանդույթների վերաբերյալ տե՛ս Дьяконов 1990, 142, հնդեվրոպականների համար՝ Иванов, Топоров 1974, 93, 95, Կովկասի համար՝ Сефербеков 2005, 77:

<sup>16</sup> Տե՛ս, օրինակ, West 2007, 251-254:

<sup>17</sup> Տե՛ս Պետրոսյան 2020, 60 և ստորև: Միջին բրոնզի դարաշրջանից Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում ի հայտ են գալիս նոր տիպի փոքր տապարներ, որոնք, ի տարբերություն հին բրոնզեդարյանների, կարող էին ունենալ միայն սիմվոլիկ նշանակություն, որպես իշխանության ատրիբուտ (աղ. III): Պետք է կարծել, որ այդ նորամուծությունը կապված էր հնդեվրոպացիների ներթափանցման հետ, որոնց մեջ դրանք համարվել են ամպրոպի/ռազմի աստծու և նրանց երկրային համապատասխանության՝ ցեղային առաջնորդների ատրիբուտներ (Պետրոսյան 1997, 110):

<sup>18</sup> "Mihr Yasht" 96, 132, տե՛ս Elr s.v. Mihr Yasht.

պատասխանությունն է Թրատտաոնա հերոսի և Աժի Դահակա օձ-վիշապի մենամարտը: Միջնադարյան «Շահնամում» այդ հերոսները հանդես են գալիս Ֆերեդուն և Ջահակ անուններով, ընդ որում, Ֆերեդունը հաղթում է Ջահակին հենց Միհրի «ցլագլուխ» տապարով<sup>19</sup>. Ցլագլուխ գուրզը, ակն-հայտորեն, ներկայացնում է ցլի՝ ամպրոպի աստծու կերպարը (կոթը՝ մարմինը, հարվածող մասը՝ գլուխը): Ջրադաշտական ավանդույթն այդ գուրզի ծագումը կապում է պիղծ և անօրեն վիշապ-արքա Ջահակի դեմ ապստամբության առաջնորդ Կավե դարբնի հետ, որը դառնում է իրանական հնագույն արքայատոհմի հիմնադիրը: Կավեն իր՝ ցլի մորթուց կարված գոգնոցը հագնում է նիզակի ձողին՝ որպես դրոշ: Այդ դրոշը դառնում է իրանական արքաների խորհրդանիշը մինչև սասանյան դարաշրջանի ավարտը: Եվ մինչև հիմա էլ զրադաշտական քուրմ-մոբեդները կրում են ցլագլուխ գուրզեր, որոնք կոչվում են «Միհրի/Ֆերեդունի գուրզ» (Gorz-e Mehr, Gorz-e Ferēdon, տե՛ս աղ. 3), և կարծում, որ Միհրը օրական երեք անգամ նետում է իր գուրզը դժոխքի վրա չար ուժերին սարսափեցնելու համար<sup>20</sup>:

Այս իրանական տվյալներն այնքան են հիշեցնում վիշապաքարերի և տապարացիների մասին ասվածը, որ դրանք կարելի էր համարել Թրատտաոնայի և Աժի Դահակայի առասպելի հնագույն արտացոլումներ: Իրոք, վիշապ-քարակոթողները հաճախ ներկայացնում են քարե սյուներ, գագաթին՝ ցլի գլուխ և, ինչպես և տապարացիները, հիշեցնում են ցլագլուխ գուրզ: Այդ հիման վրա կարելի էր կարծել, որ վիշապաքարերը և տապարացիները ստեղծվել են հնդիրանական նախալեզվի կրողների կողմից (քանի որ վերջինիս բաժանումը հնդկական և իրանական ճյուղերի տեղի է ունեցել առաջին վիշապաքարերի դարաշրջանից հետո): Բայց հնդիրանական ավանդույթում չկան լաբիրինթոսի առասպելույթի նկատելի հետքեր, ինչը տապարացի հիմնական բնութագրիչներից է: Հնագենետիկական տվյալները ևս խոսում են դրա դեմ<sup>21</sup>:

Կարծում են, որ հնդիրանցիները՝ արիացիները, մերձավոր կապ են ունեցել հույների և հայերի նախնիների հետ, որոնց համար վերականգնվում է հնդեվրոպական մայր լեզվից բաժանվելուց հետո հունա-հայ-արիական միասնության դարաշրջանը<sup>22</sup>: Եվ, հնդիրանականից զատ, հենց հունական և հայկական ավանդույթներում է պահպանվել հնդեվրոպական \*weh<sub>2</sub>ǵ- «խփել, ջախջախիել» և \*weh<sub>2</sub>ǵ-ro- «վաջրա, ամպրոպի աստծու կայծակի զենքը» արմատներով ձևավորված առասպելույթը: Հունարենում վաջրայի համապատասխանությունն ի հայտ է գալիս հերոս Մելեագրոսի անվան մեջ

<sup>19</sup> Липкин 1959, 42.

<sup>20</sup> Elr, s.v. Gorz.

<sup>21</sup> Պետրոսյան, Պալյան 2023, 18:

<sup>22</sup> Martirosyan 2013, գրականությամբ:

(Μελέαγρος < \*Melewagros)<sup>23</sup>: Իսկ հայերենում \*weh<sub>2</sub>ǵ - արմատը հանդես է գալիս Արագած լեռնանվան մեջ, որտեղ առաջին մասը Արա դիցանունն է, գաժ-ը՝ \*weh<sub>2</sub>ǵ-ի կանոնավոր արտացոլումը: Ամպրոպի աստծու զենքի հիշողությունը պահպանվել է նաև Գրիգոր Լուսավորչի տեսիլքի լեգենդում, որտեղ Հայաստանի կենտրոնը՝ Արարատյան դաշտը կամ «Արայի դաշտը» վերափոխվում՝ վերաստեղծվում է դիցաբանական հերոսի կողմից մայրաքաղաքի կենտրոնին ոսկե մուրճով հարվածից (Ագաթանգեղոս § 735. վերականգնվող առասպելում Արագած լեռը և «Արայի դաշտը» ստեղծվել են աստծու՝ իր զենքով առասպելաբանական օձ-վիշապին և նրա բնակավայր ստորերկրայքին հասցրած հարվածի հետևանքով)<sup>24</sup>:

Միջնադարյան աղբյուրներից հայտնի հին հայկական նշանագրերում սխեմատիկ կրկնակի տապար հիշեցնող նշանը (կից գագաթներով երկու եռանկյուն) կոչվում է «կայծակ»: Կայծակի այդ նշանը հաճախ է հանդիպում նաև Հայաստանի հին ժայռապատկերներում<sup>25</sup>: Միջին բրոնզի դարաշրջանի արվեստում կան նաև լաբիրինթոսի, կրկնակի տապարի և կայծակի առասպելաբանական կապն արտացոլող օրինակներ՝ որոշ կավե անոթների վրա այդ նշանները պատկերվել են լաբիրինթոս հիշեցնող նկարների կողքին: Ակնհայտ է, որ դրանք հանգում են «ամպրոպի աստված, լաբրիս և լաբիրինթոս» առասպելաբանական համալիրին (աղ. II).

### **Թեշուր/Թեշեբան, հայկական ամպրոպի աստվածը և հունական Թեսևսը**

Խուռիական ամպրոպի աստված Թեշուրի անունը (սեպագիր Tešub/Teššub, Tešup/Teššup, խեթ. Tešupas, կարդալ՝ Teš(š)ob/p-) վկայված է մ.թ.ա. III հազարամյակից, սակայն նա դառել է խուռիների գլխավոր աստվածը, հավանաբար ուշ, մ.թ.ա. II հազարամյակի առաջին կեսին: Իսկ որպես խուռիական դիցակիր անունների բաղադրիչ՝ այն չի հանդիպում մ.թ.ա. XV-XIV դարերից վաղ<sup>26</sup>:

Այդ աստվածը սովորաբար համարվում է խուռիական, և նրա անունով կազմված անձնանունները համարվում են այդ անձանց խուռիական ծագման ցուցիչ: Սակայն Թեշուրը չունի ընդունելի խուռիական ստուգաբանություն<sup>27</sup>: Ի. Գելը կարծում էր, որ նրա անունը կարող էր փոխառված լինել ինչ-որ մի նախախուռիական լեզվից, իսկ Է. Լարոշը գտնում էր, որ Թեշուրի գաղափարախոսությունն օտար էր խուռիներին<sup>28</sup>: Թեշուրի նշանավոր հա-

<sup>23</sup> Watkins 1995, 408-413.

<sup>24</sup> Պետրոսյան 2022:

<sup>25</sup> Մարտիրոսյան 1973, 22-24:

<sup>26</sup> Gelb 1944, 115, Вильхельм 1992, 88-89, Schwemer 2001, 445.

<sup>27</sup> St'au, օրինակ, Schwemer 2001, 444-445, Anm. 3698:

<sup>28</sup> Gelb 1944, 30, 55, 106-107, Laroche 1976, 96-97.

կառակորդ Ուլլիկումմիի անունը հաճախ համարվել է խուռիական, սակայն նրա խուռիական մեկնաբանությունը, ամենայն հավանականությամբ, «ժողովրդական ստուգաբանություն» է<sup>29</sup>:

Թեշուբի պաշտամունքի ամենակարևոր կենտրոնն էր Հալաբ (ներկայիս Հալեպ) քաղաքը, որտեղ, մ.թ.ա. երկրորդ հազարամյակի առաջին դարերում նա նույնացվել էր տեղի ամպրոպի աստծու՝ Ադդուի հետ: Թեշուբի պաշտամունքը տարածված էր Սիրիայից մինչև Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններ և Փոքր Ասիա (որտեղ նա սինկրետացվել էր տեղի խեթական և լուվիական ամպրոպի աստվածների հետ): Թեշուբի կնոջ Hebat անունը (տարբերակներ՝ Hibat, Hipatu, Hapatu, Hiba, Hipa), ակնհայտորեն, խուռիական չէ, այլ՝ սեմական, և նշանակում է «Հալեպուհի» (այսինքն՝ Հալաբի աստվածուհի)<sup>30</sup>: Թեշուբի, ինչպես և հինմերձավորարևելյան մյուս ամպրոպի աստվածների զենքն էր տապարը կամ կրկնակի տապար-լաբրիսը: Հենց այդ պատճառով էլ, Կարմիր բլուրից հայտնաբերված՝ մի ձեռքում տապար, մյուսում մուրճ բռնած արձանիկը նույնացվել է նրա ուրարտական կրկնակ Թեյշեբայի հետ<sup>31</sup>:

Թեշուբ/Թեյշեբայի կերպարը շատ մոտ է հնդեվրոպական ամպրոպի աստծուն: Գերմանական, բալթիական և սլավոնական ամպրոպի աստվածների զենքն էր, ինչպես ասվեց, տապարը կամ մուրճը, որն, ակնհայտորեն համադրելի է Թեշուբ/Թեյշեբայի տապարի և մուրճի հետ: Հնդեվրոպական ամպրոպի աստվածը խփում է լեռանը/ժայռին և հաղթում իր հակառակորդ օձ-վիշապին<sup>32</sup>, իսկ Թեշուբի ամենահզոր հակառակորդն էր ժայռից ծնված և անընդհատ աճող քարե հրեշ Ուլլիկումմին<sup>33</sup>, որի անունը համադրելի է հնդեվրոպական առասպելի օձ-վիշապի \*wel- անվան հետ<sup>34</sup>: Թեշուբի կենդանական խորհրդանիշն էր ցուլը, իսկ Թեյշեբային զոհաբերում էին ցլեր և խոյեր, և նրան, ինչպես և ուրարտական մյուս աստվածներին, պատկերում էին ցլի եղջյուրներով:

Հայաստանում, իրանական հզոր ազդեցության հետևանքով, հնագույն բնիկ աստվածների անունները փոխարինվել էին իրանական անուններով, իսկ նրանց կերպարները տեղափոխվել ավելի ցածր՝ հայոց ազգածին նա-

<sup>29</sup> Laroche 1976-77, 279, Petrosyan 2016, 135.

<sup>30</sup> Archi 1998, 42.

<sup>31</sup> Пиотровский 1944, 277, 279, աղ. III:

<sup>32</sup> Иванов, Топоров 1974.

<sup>33</sup> Hoffner 1990, 52-61.

<sup>34</sup> Հմմտ. և վիշապ-քարակոթողների երկրի անունը՝ Ueliku-ni/hi, տե՛ս Петросян 1987, Petrosyan 2002, 81-83, 2016, 134-135, 140: Ուլլիկումմին հաճախ ստուգաբանվում էր խուռիերեն, «Կումմի (քաղաքը) կործանող» իմաստով, հմմտ., օրինակ, Иванов 1982, 158-159: Սակայն մեր մի հոդվածի (Петросян 1987) տպագրությունը երաշխավորող նամակում Վ. Իվանովը համաձայնեց, որ Ուլլիկումմին կարող է կապված լինել ուրարտ. Ueliku-ni/hi երկրանվան և օձ-վիշապի հնդեվրոպական անվան հետ:

հապետների՝ էպիկական հերոսների մակարդակ<sup>35</sup>, որտեղ Թեշուր/Թեշեբային համապատասխանում է հայոց երկրորդ անվանադիր նախնի Արամը: Հնդեվրոպական համատեքստում նրա անունը համապատասխանում է հնդկական Ռամա (Rāma), անվանը, հնդեվրոպական \*h<sub>2</sub>reh<sub>1</sub>mo- «մուգ, սև» արմատից, իսկ կերպարը՝ առասպելական Ռամաներից առաջինին՝ Պարաշուտամային (Paraśurāma)՝ «տապարով Ռամային»<sup>36</sup>: Այդ Ռամաներից առավել հանրահայտը՝ «Ռամայանա» էպոսի հերոսը, հանդես է գալիս որպես ամպրոպային Ինդրայի վիպական փոխակերպումը<sup>37</sup>, որը, ինչպես և այլ ամպրոպային կերպարներ, նույնպես կապված է «սևի» հետ<sup>38</sup>, իսկ առաջին Ռամայի տապարի անվանումը՝ paraśu, ստուգաբանորեն համապատասխանում է հուն. πέλεκος «(կրկնակի) տապար, լարբիս» բառին<sup>39</sup>:

Ասվածի հիման վրա հավանական է թվում, որ Teš(š)ub/Teišeba դիցանունն ունենա հնդեվրոպական ծագում: Հաշվի առնելով ամպրոպի աստվածների կապը տապարի հետ՝ այդ դիցանունները կարելի է համեմատել հնդեվրոպական \*tekš- «տապար, կացին», «ստեղծել, սարքել, հատկապես կացնով», հմմտ. ավեստ. taša-, հին բարձր գերմ. dehsa «կացին», հայ. (բրբռ.) թեշի/թեշիկ «իլիկ» (իմաստի զարգացման համար հմմտ. հին բարձր գերմ. dehsa «կացին» և միջին բարձր գերմ. dēhse «իլիկ»)՝<sup>40</sup>: \*Tekš- արմատը բնութագրում է տիեզերածին գործողությունը արարիչ աստծու, որի դերում ամպրոպային առասպելում հանդես է գալիս ամպրոպի աստվածը: Հենց այդ առնչությամբ պետք է դիտվի Հայկական լեռնաշխարհի հնագույն պետություններից Հայասալի ամպրոպի աստծու մի մակդիրը՝ սեպագիր ԴՍ takšanna- «ամպրոպի աստված takšanna-»<sup>41</sup>, որը վաղուց ստուգաբանվել է tekš- արմատով, հմմտ. խեթ. takš- «անել, սարքել», հնդ. takšan- «հյուսն», ավեստ. tašan- «արարիչ, ստեղծող» ևն<sup>42</sup>: Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի երկու տարբեր ավանդույթներում ամպրոպի աստվածը կապված է եղել հնդեվրոպական \*tekš-արմատի հետ՝ Teššub/Teišeba-ն և ԴՍ takšanna-ն նույն արմատի համաժամանակյա արտացոլումներ են երկու տարբեր լեզուներում (ընդ որում, երկրորդը, հնարավոր է, որ հնդիրանական է)<sup>43</sup>: Teššub (Teššob) /Teišeba անվան երկրորդ մասի համար հմմտ. հնդեվր. \*h<sub>1</sub>ep- «վերցնել, բռնել», արմատը, p>b և b=v/w արտացոլումներով (համապատասխան դիր-

<sup>35</sup> Պետրոսյան 2020, 35-42:

<sup>36</sup> Պետրոսյան 1997, 18, Petrosyan 2002, 45-52, աղ. III:

<sup>37</sup> Տե՛ս, օրինակ, Puhvel 1987, 92-93:

<sup>38</sup> Petrosyan 2017, 174.

<sup>39</sup> Beekes 2010, 1166-1167.

<sup>40</sup> Տե՛ս Petrosyan 2002, 49, Martirosyan 2010, 285-286:

<sup>41</sup> KUB XXVI, 39, IV, 32.

<sup>42</sup> Petrosyan 2002, 49, հմմտ. Джаякян 1964, 55:

<sup>43</sup> Petrosyan 2018.

քերում՝ բնորոշ խուռիերենին և ուրարտերենին), հնդեվրոպական \*-eh<sub>2</sub> > -ā ածանց/վերջավորությամբ, որը համընկնում է մի շարք ուրարտական դիցանունների վերջավորությամբ<sup>44</sup>: Այսպիսով, Teššob/Teišeba անունը կարելի է մեկնաբանել որպես «տապար բռնող»: Այդ մեկնաբանությունը համադրելի է Ինդրայի համանման՝ «վաջրա բռնող» և նման նշանակություններով մակդիրների հետ, հմմտ. vajradakṣiṇa «աջ (ձեռքին) վաջրա բռնած», vajrabāhu, vajrabadhā, vajrapāṇi, vajrahastā «վաջրայածեռն, վաջրա ունեցող», vajradhara «վաջրա բռնող» ևն<sup>45</sup>:

Թեյշեբա անունը պետք է կարդալ T<sup>h</sup>eiš/seb/wa (հայ-ուրարտական լեզվական համապատասխանություններում ուրարտ. t = Թ, š = շ/ս, b = բ/վ/լ)<sup>46</sup>: Այս դիցանունը համադրելի է հին հունական հերոս Թեսևսի (Θησεύς /Thēseus/) անվան հետ, որը զուրկ է ընդունված ստուգաբանությունից (հմմտ. հատկապես ուրարտական Թեյշեա /T<sup>h</sup>eišewa/ ձևը. հունարենում չկա շ, և այն հաղորդվել է u-ով, իսկ վերջավորությունը՝ համապատասխանեցվել համանման հունական դիցաբանական անուններին՝ Achilles, Morpheus, Orpheus ևն)<sup>47</sup>: Թեսևսը սպանում է Պրոկրուստեսին կրկնակի տապար-լարրիսով<sup>48</sup>, իսկ նրա հանրահայտ սխրագործությունը՝ Մինոտավրոսի սպանությունը տեղի է ունենում լաբիրինթոսում, հմմտ.՝ այդ բառի ավանդական՝ «լաբրիսի տուն» ստուգաբանությունը: Թեսևսի կնոջ՝ ամազոնուհի Հիպոլիտեի (Ἱππολύτη /Hippolytē/ «ձիերն արծակող») անունը՝ կարելի է դիտել որպես Թեշուբի կնոջ՝ Hēbat/Hīpa «Հալեպուհի» անվան «ժողովրդական ստուգաբանական» վերաիմաստավորման արդյունք: Այդ համատեքստում հատկանշական է, որ արևմտյան Փոքր Ասիայում՝ Լյուդիայում և Կարիայում պաշտամունքի առարկա դարձած լաբրիսը՝ լաբրանդական Ջևսի գենքը (Ζεύς Λαβρανδέυς, հմմտ. լաբիրինթոս), Հերակլեսը խլել էր Հիպոլիտեից<sup>49</sup>: «Լաբրիս և լաբիրինթոս» առասպելույթի հետքերը, ինչպես տեսանք, Հայկական լեռնաշխարհում ի հայտ են գալիս մ.թ.ա. երրորդ հազարամյակի կեսից, և ամազոնուհիներն էլ սովորաբար տեղայնացվում են մեր լեռնաշխարհի մերձակայքում (Կովկաս և Փոքր Ասիա): Թեսևսի այցելությունն անդրաշխարհ, որտեղ նա մի քանի տարի է անցկացնում մոռացության

<sup>44</sup> Խուռա-ուրարտական շրթնայինների, խուռ. u-ի և ուրարտ. e-ի համապատասխանության և ուրարտ -a վերջածանցի վերաբերյալ տե՛ս Хачикян 1985, 35-38, 43, 58. իսկ Teššub-ի կրկնակի šš-ն կարող է արտացոլել \*kš>š անցման միջանկյալ վիճակը:

<sup>45</sup> Monier-Williams 1899, 913-914. Թեշուբ/Թեյշեբայի այդ ստուգաբանությունը տե՛ս Petrosyan 2002, 49, 2012, 148-150:

<sup>46</sup> Ջահուկյան 1987, 430-431:

<sup>47</sup> Petrosyan 2002, 49.

<sup>48</sup> Лосев 1957, 118, աղ. III:

<sup>49</sup> Плутарх, «Греческие вопросы», 45.

գահի վրա, համադրելի է փոքրասիական ամպրոպի աստծու անհետացման և Թեշուբի՝ անդրաշխարհի այցելության հետ<sup>50</sup>:

Ո՛ր հնդեվրոպական լեզվից կարող էին փոխառված լինել Թեշեբայի և Թեսևսի անունները: Ելնելով առաջարկված \*tekš- + \*h<sub>1</sub>ep- ստուգաբանությունից և հաշվի առնելով անվան ուրարտական և հունական T<sup>h</sup>eišewa և T<sup>h</sup>ēseus ձևերը, այդ լեզվին բնորոշ են եղել հետևյալ անցումները՝ \*t>t' (=t<sup>h</sup>), \*e>ei/ē, kš>š, \*p>w): Բոլոր հնդեվրոպական լեզուներից այդ բոլոր անցումները, համապատասխան դիրքերում, բնորոշ են միայն հայերենին<sup>51</sup>: Դիցանվան համար վերականգնվող \*tekš-h<sub>1</sub>ep-eh<sub>2</sub> նախաձևը հնագույն հայերենում կդառնար \*T<sup>h</sup>eišewa, իսկ մ.թ. առաջին դարերում տեղի ունեցած վերջին ձայնավորի անկումից հետո՝ \*T<sup>h</sup>ēšew.

Այդ անվան երկու ուշ տարբերակներ, թվում է, թե պահպանվել են Մուշ-Սասունի՝ հնում ամպրոպի աստծու (Վահագնի) պաշտամունքի կենտրոնի ժողովրդական երգերի ավանդական կրկներգերում՝ «Թըշիբ, հայ Թըշիբ»<sup>52</sup> և «Թեշիբ, Թեշիբ, Թեշիբ նայե»<sup>53</sup>: Մուշ-Սասունի երկրամասի հնագույն Շուբրիա թագավորության համարյա բոլոր արքաները մ.թ.ա. XIII-VII դդ. մ.թ.ա. կրել են Թեշուբ դիցանունով կազմված անուններ՝ Ligi-Tešub, Šerpi-Tešub, Kali-Tešub, Kili-Tešub, Šadi-Tešub, Hu-Tešub, Ik-Tešub<sup>54</sup>, և երգերի բացականչությունների նմանությունը դիցանվանը դժվար թե պատահական լինի: Հետաքրքիր է, որ այդ բացականչություններն առավել նման են դիցանվան ուրարտական և հայկական, քան խուռիական ձևին: Մյուս կողմից, սրանք, ակնհայտորեն, աղավաղված ձևեր են, ինչը կարող է բացատրվել հին \*Թեշե (←\*Թեշե) դիցանվան մոռացումով, չէ՞ որ արդեն նախաքրիստոնեական դարաշրջանում հայոց մեջ ամպրոպի աստվածն էր Վահագնը, որի անունը փոխառվել է պարթևերենից մ.թ.ա. վերջին դարերում (թեև Վահագնի կերպարում էլ ի հայտ են գալիս Ինդրային և Թեշուբին չափազանց նման հնագույն հայկական աստծու հատկանիշները)<sup>55</sup>: Այդ բացականչությունների հիմնական տարբերությունը դիցանվան սպասելի հայերեն ձևից բառավերջի բ-ն է վ-ի փոխարեն, ինչը կարող է բացատրվել գրանցման սխալով, հնագույն բարբառային արտասանության, խուռաուրարտա-

<sup>50</sup> Stéu Neu 1988, 15, Hoffner 1990, 20-22, Պետրոսյան 1997, 18:

<sup>51</sup> Այդ անցումների վերաբերյալ տե՛ս, օրինակ, Kortlandt, Beekes, 2003, 172, 173, 179, 201, 203, 205. \*kš>š անցման համար հմմտ. հայ. բրբռ. *թեշի(վ)* «իլիկ», շ-ին նախորդող \*e >ē (= ei)-ի համար՝ հին հայ. *էշ /էշլ/* < \*ekš-*o*:-

<sup>52</sup> Իշխանյան 1988, 46:

<sup>53</sup> Խաչատրյան ձեռագիր: Հին դիցանունների՝ հայկական և վրացական երգերի կրկներգերում պահպանման վերաբերյալ տես Сванидзе 1937, Капанцян 1956, 295, Petrosyan 2002, 8, Պետրոսյան 2017, 193-194, ծան. 460:

<sup>54</sup> Gelb 1944, 82-83, Պետրոսյան 2020, 48:

<sup>55</sup> Պետրոսյան 2021:

կան բետացիզմի՝ *բ*-ի և *վ*-ի չտարբերակման և աղավաղման հանգեցնող տաբուավորման գործոններով<sup>56</sup>:

Ինչպես կարող էր այդ դիցանունը փոխառվել հունարենում, ընդ որում, ավելի մոտ հայկական կամ ուրարտական \**Թեյշեա* ձևին, քան արդեն մ.թ.ա. երրորդ հազարամյակից ամբողջ Հին Արևելքում հայտնի Թեշուբին: Պետք է կարծել, որ ինչ-որ տեղ տարածության և ժամանակի մեջ շփումներ են եղել հնագույն հույների և հայերի (կամ ուրարտացիների) միջև:

Կրետեի մինոսյան ցիկլի առասպելները և հերոսները կապված են Միջերկրական ծովի արևելյան ափի՝ Լևանտի հետ: Ջևաը, ցլի տեսքով, փախցնում է փյունիկյան արքայադուստր Եվրոպային և տանում Կրետե: Նրանց որդին՝ Կրետեի արքա Մինոսը, աթենացիներից մշտական տուրք է պահանջում՝ նրանք պարբերաբար՝ ինը տարին մեկ, պատանիներ և աղջիկներ պիտի ուղարկելին Կրետե, որպես կերակուր լաբիրինթոսում ապրող «կիսով չափ մարդ, կիսով չափ ցուլ» հրեշ Մինոտավրոսին: Վերջինս կարող է դիտվել որպես վերաիմաստավորված և փոխակերպված մի տարբերակը Թեշուբի արևմտասեմական համապատասխանության՝ ամպրոպի աստված Բահադի, որին կոչել են «ցուլ» և մարդկային զոհեր մատուցել (Երեմիա 19.4-6): Երբ Մինոսը երրորդ անգամ է գալիս Աթենք՝ տուրքը ստանալու, Աթենքի արքայի որդին՝ Թեսևը, պատանիների հետ ինքն էլ է մեկնում Կրետե, որպեսզի իր ուժերը չափի հրեշի հետ և այնտեղ, լաբիրինթոսում, սպանում է հրեշին: Այս առասպելը թվում է, թե այն ժամանակների ու դեպքերի արձագանքն է, երբ Թեյշեբայի պաշտամունք ունեցող ժողովուրդը հայտնվել է արևմտասեմական բնակչությամբ Սիրիայում և հարակից տարածքներում: Ընդ որում, Թեսևը և Մինոտավրոսը ներկայանում են որպես Թեսևսի և Մինոտավրոսի պաշտամունքն ունեցող ժողովուրդների (հայերի կամ խուռուրարտացիների և արևմտյան սեմիտների) անձնավորումներ: Դա համադրելի է հայոց Հայկի և Արամի՝ ամպրոպի աստծու էպիկական փոխակերպումների՝ Թեշուբ/Թեյշեբայի կրկնակների առասպելների հետ, որոնք սպանում են իրենց հակառակորդներ բաբելոնցի Բելին և ասորի Բարշամին (այսինքն՝ բաբելոնյան աստված Բել-Մարդուկին և սիրիական աստված Բաալ-Շամինին)<sup>57</sup>:

Անտիկ ավանդույթը Թեսևսին ժամանակագրում է տրոյական պատերազմի նախորդ դարաշրջանով՝ մ.թ.ա. XIII դ.: Սիրիայում և մերձակալքում խուռիները հայտնի են շատ ավելի վաղուց: Եթե Թեյշևա անունը թվում է Թեսևսի ակնհայտ նախատիպը, ապա նույնը չենք կարող ասել նրա առասպելույթի մասին. և՛ Թեյշեբայի, և՛ հայոց հնագույն ամպրոպի աստծու

<sup>56</sup> Տաբուավորման համար տե՛ս Jakobson 1985, 13՝ գրականությամբ և օրինակներով (օրինակ, անգլ. *oh my gosh, oh my god*-ի, կամ սերբ. *бога ми, брoда ми* «աստված իմ», *бога ми*-ի փոխարեն):

<sup>57</sup> Petrosyan 2002, 46 հուն., 57-58, 2009, 160-161, Պետրոսյան 2020, 38-41, 61-64:

առասպելները չեն պահպանվել: Իսկ այն, ինչ հայտնի է Թեշուրի մասին, այնքան էլ նման չէ Թեսևսի և Մինոտավրոսի առասպելին<sup>58</sup>:

Բայց «ցուլ/տապարը լաբիրինթոսում» և «տապար/մուրճը ամպրոպի աստծու զենք» առասպելությունները, ինչպես տեսանք, ի հայտ են գալիս հնագույն Հայաստանի նյութական մշակույթում (վիշապ-քարակոթողներ, տապարացեր, հին աստվածների պատկերներ ևն): Այսինքն, պետք է կարծել, որ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային շրջանների բնակչության մեջ, սկսած միջին բրոնզից մինչև վաղ երկաթի դարաշրջանները (մ.թ.ա. XXIV-IX դդ.), շրջանառվել են Թեսևսի, Մինոտավրոսի և լաբիրինթոսի պատմությունը հիշեցնող առասպելներ:

Ժամանակակից Հայաստանի տարածքը այդ դարաշրջանում մտնում էր մի ընդարձակ ցեղամիության կազմի մեջ, որն ուրարտական աղբյուրներում կոչվում էր Etiuni կամ Etiuhi: Ըստ մեր վարկածի, հենց այդ երկիրն է եղել հնագույն հայոց հայրենիքը մ.թ.ա. երկրորդ և առաջին հազարամյակի սկզբին, և Etiu-նի/ի «էթիու-ական երկիր» անվանումը եղել է Հայաստանի ուրարտական անվանումը, որը *հայ* ցեղանվան հին *հաթիո* ձևի ուրարտական հաղորդումն է<sup>59</sup>: Դա ևս մի անգամ հիմք է տալիս ասելու, որ խուռաուրարտական Թեշուր/Թեյշեբայի անունը և կերպարը փոխառվել են հնագույն հայերից, թերևս մ.թ.ա. երրորդ հազարամյակի երկրորդ կեսին, Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային տարածքներից: Իսկ հույները (աքայացիները) այս տարածաշրջանում՝ Կիլիկիայում հայտնվում են բրոնզի դարի վերջին և երկաթի դարի սկզբին, մ.թ.ա. երկրորդ հազարամյակների վերջին դարերում<sup>60</sup>: Կիլիկիան միշտ կապված է եղել Սիրիայի հետ, ընդ որում, Թեշուրի և Ուլիկումմիի առասպելի առանցքային դրվագը տեղայնացվում է հենց Սիրիայի և Կիլիկիայի սահմանին, Խացցի (ներկայիս Ջեբել Աքրա) լեռան մոտ և Իսկանդերունի ծոցում<sup>61</sup>: Թեշուրի արկածները Լևանտում հուշում են, որ, ամենայն հավանականությամբ, հենց այդ աքայացիներն են փոխառել նրա կերպարը և տեղափոխել Հունաստան, որտեղ այն ենթարկվել է որոշակի փոփոխությունների և վերջնականապես հունականացվել:

<sup>58</sup> Սակայն կան տվյալներ, որոնք ակնարկում են Թեշուրի և Թեսևսի առասպելների կապի հնարավորությունը: Օրինակ, Թեսևսը Մինոտավրոսի խորթ եղբայրն է, ինչպես և Թեշուրը՝ Ուլիկումմիի, Մինոտավրոսին զոհեր ուղարկելու իննամյա պարբերականությունը և Թեսևսի հաղթանակը երրորդ զոհաբերության ժամանակ հիշեցնում է երկնային արքայության խոտիական առասպելում արքա-աստվածների իննամյա հերթագայության կարգը՝ արքաները փոխվում են ինը տարին մեկ՝ նոր հավակնորդի հաղթանակով և նրանցից երրորդը՝ Թեշուրը, երրորդն է, որն իր նախորդի նկատմամբ հաղթանակից հետո դառնում է հավերժական արքա (Hoffner 1990, 40-43):

<sup>59</sup> Պետրոսյան 2017, 181-199:

<sup>60</sup> Gander 2012, Brice 2016.

<sup>61</sup> Hoffner 1990, 55-56, Вильгельм 1992, 104.

### Եզրակացություններ

Խուռաուրարտական ամպրոպի աստված Թեշուր/Թեյշեբայի անունը և կերպարը փոխառված են Հայկական լեռնաշխարհում, վաղնջահայերից, մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսին:

Այդ կերպարն անցել է հին հունական ավանդույթ, որտեղ նա հանդես է գալիս Թեսևս անունով: Փոխառությունը հավանաբար տեղի է ունեցել մ.թ.ա. II հազարամյակի վերջին՝ Կիլիկիայի արքայական հույների միջոցով:

### Օգտագործված գրականություն

- Աբրահամյան Լ.Հ. 2004, «Տապարացույր» լաբիրինթոսում. բրոնզեդարյան մի հորինվածքի պարզաբանման շուրջ, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական վեցերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոն, էջ 12-14:
- Ավետիսյան Պ.Ս. 2014, Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV-IX դդ. (սոցիալ-մշակութային ձևափոխությունների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 92 էջ:
- Ավետիսյան Պ., Մկրտչյան Ռ. 1994, Թալինի վաղերկաթեդարյան դամբարանների սոցիալ-ժողովրդագրական վերլուծության փորձ, Հայաստանի Հանրապետությունում 1991-1992 թթ., դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, էջ 24-27:
- Բադայան Ռ., Աղեկյան Հ. 1994, Հոռոմի դամբարանադաշտի պեղումները, Հնագիտական աշխատանքները Հայաստանի կառույցներում, ՀՀ ԳԱ հրատ., էջ 67-74:
- Իշխանյան Ռ. 1988, Հայ ժողովրդի ծագման և հնագույն պատմության հարցեր, Երևան, Հայաստան հրատ., 111 էջ:
- Խաչատրյան Ռ. ձեռագիր, ՀՀ ԳԱ ՀԱԻ Ռ. Խաչատրյանի ֆոնդ, N FRI: 3848:
- Հմայակյան Ս.Գ. 1990, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, ԳԱ հրատ., 160+31 էջ:
- Մարտիրոսյան Հ.Ա. 1973, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտահայկական կրկնակները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 81 էջ:
- Պետրոսյան Ա. 1997, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգաձագման խնդիրը, Երևան, «Վան Արյան», 208 էջ:
- Պետրոսյան Ա. 2002, Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը, Պատմա-բանասիրական հանդես, N 2, էջ 243-270:
- Պետրոսյան Ա. 2015, Երեսուն տարի անց, Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», էջ 13-52:
- Պետրոսյան Ա. 2017, Հայ ժողովրդի ծագման խնդիրը, Երևան, «Անտարես», 248 էջ:
- Պետրոսյան Ա. 2020, Հայկական էպոսի հնագույն ակունքները 2, Երևան, ՀԱԻ, 264 էջ:
- Պետրոսյան Ա. 2021, «Վահագնի երգը» և հայկական էպոսը, Բանբեր հայագիտության, N 3, էջ 146-166:
- Պետրոսյան Ա. 2022, Արագած. անունը և առասպելը, Բանբեր հայագիտության, Երևան, N 3, էջ 169-185:
- Պետրոսյան Ա. 2024, Անգեղը և Տուրք Անգեղյան հայոց հնագույն դիցաբանության մեջ (տպագրության մեջ):

- Պետրոսյան Ա., Պալյան Ա. 2023, Հայոց ազգաձագման խնդիրը վերջին հնագնետիկական տվյալների լույսի ներքո, Ե. Գրեկյան (խմբ.), Միգրացիոն գործընթացները Հայկական լեռնաշխարհում հնագույն շրջանից մինչև 20-րդ դարասկիզբ (գիտաժողովի նյութեր), Երևան, ՀԱԻ հրատ., էջ 7-24:
- Ջահուկյան Գ.Բ. 1987, Հայոց լեզվի պատմություն. նախազարային ժամանակաշրջան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 748 էջ:
- Вильхельм Г. 1992, Древний народ хурриты, Москва, «Наука», 160 с.
- Геворгян А.Ц. 2010, Металлопроизводство Армении в предурартское время, Халдиевым могуществом... Сборник статей к столетию Бориса Пиотровского, Ереван, «Гитутюн», с. 191-211.
- Джаукян Г.Б. 1964, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, изд. АН Арм. ССР, 96 с.
- Дьяконов И.М. 1990, Архаические мифы Востока и Запада, Москва, «Наука», 248 с.
- Иванов В.В. 1980, Бык, Мифы народов мира, «Советская энциклопедия», т. 1, Москва, 203 с.
- Иванов В.В. 1982, К этимологии некоторых миграционных культурных терминов, Этимология 1980, с. 157-166.
- Иванов, В.В., Топоров В.Н. 1974, Исследования в области славянских древностей, Москва, «Наука», 342 с.
- Капанцян Г.А. 1956, Историко-лингвистические работы, т. 1, Ереван, изд. АН Арм. ССР, 471 с.
- Липкин С. (пер.) 1959, Фирдоусы: поэмы из Шахнамэ, Сталинабад, Таджикское государственное издательство, 523 с.
- Лосев А.Ф. 1957, Античная мифология, Москва, изд. Министерства просвещения СССР, 620 с.
- Մկրտչյան Ր.Ա. 2001, Палеоантропология оромского могильника, Ереван, «Зангак-97», 120 с.
- Петросян А.Е. 1987, Отражение индоевропейского корня \**uel-* в армянской мифологии, Вестник общественных наук Арм. ССР, N 1, с. 56-70.
- Пиотровский Б.Б. 1944, Урарту, Ереван, изд. АН Арм. ССР, 365 с.
- Плутарх, Греческие вопросы. [http://ivka.rsuh.ru/binary/2628603\\_89\\_1367787654.63801.pdf](http://ivka.rsuh.ru/binary/2628603_89_1367787654.63801.pdf). (downloaded 22.05.2023).
- Сванидзе А.С. 1937, Названия древневосточных богов в грузинских песнях, Вестник древней истории, N 1, с. 87-93.
- Сефербеков Р.И. 2005, Верховные боги (громовержцы) народов Дагестана, Вестник института ИАЭ, N 4, с. 66-92.
- Хачикян М.Л. 1985, Хурритский и урартский языки, Ереван, изд. АН Арм. ССР, 196 с.
- Abrahamian L.H. 2022, 'Axe-bull': an Iron-Age Iconic Anagram, in Y.H. Grekyan, & A.A. Bobokhyan (eds.), Systemizing the Past: Papers in Near Eastern and Caucasian Archaeology Dedicated to Pavel S. Avetisyan on the Occasion of His 65th Birthday, Oxford, "Archaeopress", p. 1-5.
- Anthony D.W. 2024, Ten Constraints that Limit the Late PIE Homeland to the Steppes, Proceedings of the 33rd Annual UCLA Indo-European Conference. Hamburg, Buske, p. 1-25.
- Archi A. 1998, The Former History of Some Hurrian Gods, In: S. Alp, A. Süell (eds.), Acts of the 3rd International Congress of Hittitology, Çorum, Sept. 16-22, 1996, Ankara, p. 39-44.

- Avetisyan P., Dan R., Petrosyan A. 2018, Axes, Labyrinths and Astral Symbols: Bronze Pendants and Pins from the Armenian Highlands, *Ancient West & East*, N 17, p. 27-63.
- Beekes R.S. 2010, *Etymological Dictionary of Greek*, Leiden/Boston, "Brill", 1808 p.
- Bryce T. 2016, The land of Hiyawa (Que) revisited, *Anatolian Studies* 66, Ankara, p. 67-79.
- Elr – *Encyclopaedia Iranica*, New York, Brill, 1985; <https://iranicaonline.org/> (downloaded 10.05.2023).
- Gander M. 2012, Ahhiyawa – Hiyawa – Que: Gibt es Evidenz für die Anwesenheit von Griechen in Kilikien am Übergang von der Bronze- zur Eisenzeit? *Studi Micenei ed Egeo-Anatolici*, N 54, S. 281-309.
- Gelb I.J. 1944, *Hurrians and Subareans*, Chicago, Chicago University Press, 128 p.
- Hoffner A. 1990, *Hittite myths*, Atlanta, Scholars Press, 92 p.
- Jakobson R. 1985, *Selected Writings*, Vol. 7, The Hague, Walter de Gruyter, 410 p.
- Kortlandt F., Beekes R. 2003, *Armeniaca: Comparative Notes by Frederik Kortlandt with an Appendix on the Historical Phonology of Classical Armenian by R. Beekes*. Ann Arbor, Caravan Books, 251 p.
- KUB Keilschrifturkunden aus Boghazköi, Berlin, Mann.
- Laroche E. 1976, Panthéon national et panthéons locaux chez les hourrites, *Orientalia*, N 45, p. 94-99.
- Laroche 1976-77, *Glossaire de la langue hourrite*. *Revue hittite et asianique* XXXIV-XXXV, Paris, 323 p.
- Lazaridis, I., Nadel, D., Rollefson, G. et al. 2016, Genomic Insights into the Origin of Farming in the Ancient Near East, *Nature* 536, p. 419-424.
- Lazaridis I. et al, 2022a, The Genetic History of the Southern Arc. A Bridge between West Asia and Europe, *Science*.[www.science.org/doi/10.1126/science.abm4247](http://www.science.org/doi/10.1126/science.abm4247). (downloaded 10.05.2023).
- Lazaridis I. et al, 2022b, A Genetic Probe into the Ancient and Medieval History of Southern Europe and West Asia, *Science*.[www.science.org/doi/10.1126/science.abq0755](http://www.science.org/doi/10.1126/science.abq0755). (downloaded 10.05.2023).
- Lazaridis I. et al, 2022c, Ancient DNA from Mesopotamia Suggests Distinct Pre-Pottery and Pottery Neolithic Migrations into Anatolia, *Science*.[www.science.org/doi/10.1126/science.abq0762](http://www.science.org/doi/10.1126/science.abq0762). (downloaded 10.05.2023).
- Lazaridis et al. 2024, The Genetic Origin of the Indo-Europeans, Preprint in bioRxiv, doi: <https://doi.org/10.1101/2024.04.17.589597>. (downloaded 10.05.2023).
- Martirosyan H.K. 2010, *Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon*, Leiden, Boston, Brill, 988 p.
- Martirosyan H.K. 2013, The Place of Armenian in the Indo-European Language Family, The Relationship with Greek and Indo-Iranian, *Journal of Language Relationship*, N 10, p. 85-139.
- "Mihir Yasht" <http://www.avesta.org/ka/yt10sbe.htm>. (downloaded 10.05.2023).
- Monier-Williams M. 1899, *A Sanskrit-English dictionary*, Oxford, Clarendon Press, 1333 p.
- Neu E. 1988, *Das Hurritische: eine altorientalische Sprache in neuem Licht*, *Abhandlungen der Geistes- und Sozialwissenschaftlichen Klasse der Akademie der Wissenschaften und der Literatur*, N 3, Wiesbaden, Steiner Verlag, 48 S.
- Petrosyan A.Y. 2002, The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic, *Journal of Indo-European Studies Monograph No 42*, Washington DC, Institute for the Study of Man, 236 p.

- Petrosyan A.Y. 2009, Forefather Hayk in the Light of Comparative Mythology, *Journal of Indo-European Studies*, p. 155-163.
- Petrosyan A.Y. 2012, The Cities of Kumme, Kummanna and Their God Teššub / Teišeba, *Archaeology and Language: Indo-European Studies presented to James P. Mallory*, Washington DC, Institute for the Study of Man, p. 141-156.
- Petrosyan A.Y. 2016, Indo-European \*wel- in Armenian Mythology, *Journal of Indo-European Studies*, p. 129-146.
- Petrosyan A.Y. 2017, Armeno-Indian Epic Parallels, *Journal of Indo-European Studies*, p. 172-186.
- Petrosyan A.Y. 2018, Aryan Traces in the Onomastics of Hayasa, Iran and the Caucasus, N 22, p. 177-180.
- Petrosyan A.Y. 2022, 'Axe-bull': Order of the Thunder God, In: Y.H. Grekyan, A.A. Bobokhyan (eds.), *Systemizing the Past: Papers in Near Eastern and Caucasian Archaeology Dedicated to Pavel S. Avetisyan on the Occasion of His 65th Birthday*, Oxford: Archaeopress, p. 385-389.
- Puhvel J. 1987, *Comparative Mythology*, Baltimore, London, The John Hopkins University Press, 302 p.
- Schwemer D. 2001, *Die Wettergottgestalten Mesopotamiens und Nordsyriens im Zeitalter der Keilschriftkulturen*, Wiesbaden, Harrassowitz Verlag, 1038 S.
- Schwemer D. 2008, The Storm-Gods of the Ancient Near East: Summary, *Synthesis, Recent Studies*, Part II, *Journal of Ancient Near Eastern Religions*, Vol. 8 (1), p. 1-44.
- Watkins C. 1995, *How to Kill a Dragon*, New York-Oxford, Oxford University Press, 13+613 p.

## АРМЯНСКОЕ ПРОИСХОЖДЕНИЕ ХУРРО-УАРТСКОГО ТЕШУБА/ТЕЙШЕБЫ И ГРЕЧЕСКОГО ТЕСЕЯ

Армен Петросян

Резюме

Наиболее значимыми памятниками древней Армении являются огромные каменные стелы вишапы («драконы»), первые образцы которых датируются началом эпохи средней бронзы (XXIV в. до н.э.). Подробный анализ показывает, что вишапы являлись атрибутами культа индоевропейского грозового мифа, и их, до заимствования иранского слова *vīšar*, называли индоевропейским именем мифологического Змея (*get* < \**wel-*), противника громовержца. Отголоски этого мифа имеются и в других археологических артефактах доурартской Армении.

Индоевропейский громовержец – носитель военной функции и воплощает в себе образ архаичного воина. Его оружием были молот или топор, а символом – бык. Имя хуррито-урартского бога грозы (хурр. *Teššub*, урарт. *Teišeba* /*Theišewa*/) не имеет приемлемой этимологии в этих языках. Его атрибуты, символ и мифы (топор, бык, победа над каменным чудовищем) напоминают образ индоевропейского громовержца. В статье представлена армянская этимология

этого теонима от индоевропейского \*tek's- + \*h<sub>1</sub>ep- «держатель топора». Его образ, в лице Тесея (греч. Theseus), видимо, из Киликии и Леванта, через киликийских ахейцев конца второго тысячелетия до н.э. проник в греческую мифологию, став одним из ключевых фигур мифов критского цикла.

**Ключевые слова** – индоевропейское языкознание, индоевропейская мифология, бог грозы, хурритская мифология, Тешуб, Тейшеба, Тесей.

## THE ARMENIAN ORIGIN OF THE HURRO-URARTIAN TEŠŠUB/TEIŠEBA AND GREEK THESEUS

Armen Petrosyan

### Abstract

The most outstanding monuments of ancient Armenia are the huge stone steles višaps ("dragons"), the first samples of which date back to the beginning of the Middle Bronze Age (XXIV century BC). A detailed analysis shows that they were attributes of cult of the Indo-European thunder god myth, and before borrowing the Iranian word *višap*, they were called by the Indo-European name of the mythological Serpent (*get* < \**wel*-), the adversary of the god. Echoes of this Indo-European myth are also found in other archaeological artifacts of pre-Urartian Armenia.

The Indo-European thunder god represented the military function and embodies the image of the archaic warrior. His weapon was a hammer or an axe, and his symbol was a bull. The name of the Hurrian-Urartian thunder god (Hurr. Teššub, Urart. Teišeba /Theišewa) has no acceptable etymology in these languages. Its attributes, symbol and myths (axe, bull, victory over a stone monster) resemble the image of the Indo-European thunderer. The article proposes an Armenian etymology for this theonym from the Indo-European \*tek's- + \*h<sub>1</sub>ep- "axe holder". His image, grecized as Theseus, was borrowed by the Greeks (apparently, through the Cilician Achaeans at the end of the second millennium BC) becoming one of the key figures of the Cretan cycle.

**Key words** – Indo-European linguistics, Indo-European mythology, Thunder god, Hurrian mythology, Tešub, Teišeba, Theseus.

# THE VERNACULAR WAYSIDE CHURCHES OF THE MALTESE ISLANDS (AN ANTHROPOLOGICAL RESEARCH)

**George A. Said-Zammit**

Doctor of Philosophy  
Professor of Archaeology  
New Vision University  
11, Nodar Bakhua Street, Tbilisi, Georgia  
Visiting Professor of Archaeology  
Yerevan State University, Archaeology and Ethnography Institute  
Republic of Armenia, Yerevan, Charents str. 15  
Email: g.saidzammit@ysu.am  
ORCID: 0009-0008-8206-728X

The article has been delivered on 15.01.2023, reviewed on 10.09.2024, accepted for publication on 25.04.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.1-260

## **Abstract**

The existence of Christianity in the Maltese Islands traces back its roots to practically the Apostolic Age. From an archaeological perspective, however, the earliest evidence of Christianity dates to a relatively later period, with the earliest underground necropolis, known as *hypogea* or *catacombs*, being ascribed to the early fourth century. With the Arab conquest of Malta in the late 9<sup>th</sup> century Christianity apparently went into decadence as the natives, now under Semitic influence, adopted Islam instead. When Malta came politically, economically and culturally closer to Europe, following its occupation by the Normans, the Angevines and the Aragonese, Christianity was reintroduced as an organized establishment under the authority of the Roman Catholic Church. Since late Medieval times the Maltese Islands were divided into several parishes each headed by a parish priest to assist, in the name of his bishop, the different local village and town communities. The historical, archaeological and ethnographic evidence demonstrates that the people's Catholic beliefs are manifested in the great number of monumental parish churches that dominate most of the village or town centres, of which constitute a masterpiece in their own right. However, even the islands' rural landscape is characterized by many wayside churches, which collectively constitute a vernacular expression of a people's religious faith, traditions, and cultural legacy. Rather than focusing on the art and architecture of these vernacular structures, the present study exploits the available material evidence from an anthropological perspective to explore the nexus between religion, culture and Malta's ethnic peasant community through time.

Արմավիրում ամենավաղ հայտնաբերված դամբարանները Ա. Ուվարովի և Ա. Երիցյանի՝ 1880 թ. հետախուզական զննումների ժամանակ Արմավիր բլրի արևելյան և հյուսիսարևելյան լանջերին ու ստորոտում հայտնաբերված տարբեր դարաշրջանների թաղումներն են (աղ. 1, կարասային թաղում (ԿԹ) N 21, 22)<sup>2</sup>: Այդ թաղումների ուղեկցող նյութերը խառնված վիճակում տեղ են գտել Վրաստանի պետական թանգարանում, և միայն 1944 թ. Բ. Կուֆտինը բրոնզեդարյան, ուրարտական, սասանյան նյութերից տարանջատել է անտիկ անոթային թաղումների նյութերը և հրատարակել<sup>3</sup>: Դրանք գունազարդ և առանց հարդարանքի ամբողջական ու բեկորացված խեցեղեն (աղ. 3, նկ. 2), ներճկված ապարանջաններ, ապակե և մածուկե բազմագույն ուլունքներ են, որոնք թվագրվել են ձևակազմական, հարդարման, նախազարդման հատկանիշներով ու մյուս հուշարձաններից հայտնի նմանատիպ օրինակների հետ զուգահեռներ անցկացնելու մեթոդով: Ցավոք, նյութերի պատկանելությունը, ըստ իրենց դամբարանների, անհնար է եղել պարզել:

**Հաջորդը 1935 թ.** Նոր Արմավիր գյուղի բնակիչ Ամասիա Հարությունյանի հայտնաբերած՝ քանդված դամբարանն է Արգիշթիսինիլի արտաքին քաղաքի արևելյան ծայրում (աղ. 1, ԿԹ N 10) (Արմավիրի քաղաքային արևմտյան թաղամասում): Դրա թաղման գույքից պահպանվել են հելլենիստական խեցեգործության բնորոշ օրինակներ՝ բազմագույն զարդանախշով հարդարված ծորակավոր անոթի մի մեծ բեկոր և ներգծված երկգույն եռանկյունիներ կրող ալաբաստրոնաձև անոթ (աղ. 3, նկ. 1, 3, 10): Այս նյութերը գիտական շրջանառության մեջ է դրել Եվգենի Բայբուրդյանը՝ դրանք վերագրելով հելլենիստական մշակույթին<sup>4</sup>:

**1936 թ.** Ս. Տեր-Հակոբյանը հրատարակեց այդ նույն տարածքում քանդված մեկ այլ դամբարանի նյութեր՝ կրճազարդի չորս ոսկյա կախիկները, ալաբաստրոնաձև անոթը, նիզակակիր հեծյալի պատկերը կրող քարե բազմանիստը և քարե սկահակը<sup>5</sup>: Այս նյութերը բազմիցս հրատարակվել են

<sup>2</sup> Уваров 1882, 439-449, Уварова 1902, 128.

<sup>3</sup> Куфтин 1944, 21-23, 59-60, 92-96.

<sup>4</sup> Բայբուրդյան 1937, 291:

<sup>5</sup> Տեր-Հակոբյան 1936, 145-150:

անտիկ դարաշրջանի մասնագետների կողմից՝ թվագրվելով մ.թ.ա. III-1 դարերով<sup>6</sup>:

Հերթական կարասային թաղումը բացվել է **1972 թ.** Արմավիրի հնագիտական արշավախմբի պեղումների ժամանակ միջնաբերդի արևմտյան տեղամասում՝ Արգիշթի Ա-ի կառուցած պարսպապատի չորրորդ որմնահեցի հարավարևմտյան անկյունում (աղ. 1, ԿԹ N 19) (5i քառ.): Ավելի ուշ շրջանում կառուցվել է դրան անմիջապես հպված սենյակի պատը: Կարասի և դրան հարակից պատի շերտագրական առնչությունը թույլ է տալիս կարծելու, որ կարասը կոտրվել է այդ ուշ շրջանի պատի հիմքերը դնելիս (աղ. 2, նկ. 4):

Կարասը հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղությամբ, հորիզոնական դիրքով իջեցված էր հիմնաժայռը ծածկող մշակութային շերտի մեջ: Անոթի վերնամասի մի հատվածը, որը, ծեսի համաձայն, ննջեցյալին կարասում տեղավորելու համար հեռացված և հետո վերադարձված է եղել իր տեղը, ընկած էր անոթի մեջ: Քայքայված կմախքը խառնված էր կարասի մեջ լցված կավահողի և անհատի հետ դրված նյութերի հետ: Արտաքուստ բաց կարմրավուն, լայնաբերան կարասի հարթ, դուրս ձգված եզրաշուրթը սահուն կերպով միանում է կարճ վզին, որից իրանը անմիջապես լայնանում, ապա աստիճանաբար նեղանալով միանում է փոքրիկ նստուկին (բարձ.՝ 1,2 մ, շուրթի տր.՝ 42 սմ, իրանի լայն.՝ 94 սմ, նստուկի տր.՝ 24 սմ): Կարասների այս ձևը Արմավիրում փաստագրված բազմատեսակ կարասների մեջ ամենատարածվածն է: Թաղման՝ բավական առատ և հետաքրքիր գույքը ներառում էր գունազարդ անոթների բեկորներ, հելլենիստական Արևելքում լայն տարածում ունեցող մայր աստվածուհու պաշտամունքը ներկայացնող մոր ու մանկան թծակավային արձանիկ (տերրակոտա), արտաքինից սև լաքով պատված կավե սրվակ՝ ունգվենտարիում (աղ. 3, նկ. 9), որի ձևը, կավի բաղադրությունն ու որակը թույլ են տալիս թաղումը թվագրել վաղ հելլենիստական ժամանակաշրջանով՝ հավանաբար մ.թ.ա. III-1 դարերով<sup>7</sup>: Միասայր, փոքր խաչարդով կեռ դանակ-դաշույնը, որը տիպաբանորեն ներկայացնում է մ.թ.ա. VII դ. վերջերից հանդես եկող կեռ շեղբով, հաստավուն կռնակով դանակների ավարտուն ձևը, այս դամբարանում հանդես է գալիս որպես վաղ հայկական և հելլենիստական մշակույթների ավանդական թվագրող ձև: Սերդուլիկե, ապակե, մածուկե ուլունքները և գունազարդ անոթների բեկորները հաստատում են առաջարկված թվագրումը: Արմավիրի միջնաբերդի ծայր արևմտյան հատվածում այս թաղման առկայությունը կարծես հուշում է, որ երկու պարիսպների միջնատարածքը վաղ հելլենիստական ժամանակաշրջանում դեռևս ընդգրկված չի եղել Երվանդյան վերակառուցման (մ.թ.ա. IV-II դարեր) գործընթացների մեջ:

<sup>6</sup> Аракелян 1976, 124, Խաչատրյան 1978, 46-55, Тирацян 1971, Тирацян 1988, 142-143:

<sup>7</sup> Տիրացյան 1974, 50-51:

**1975 թ.** Արմավիրի քաղաքային թաղամասի հարավարևմտյան հատվածի պեղումների ժամանակ բացված բնակարանային մեծ համալիրից հյուսիս՝ «**թթենիների տեղամաս**» կոչված պեղման միավորում, հայտնաբերվել են կոտրված կարասների և խեցանոթների բեկորների վրա բարձրացված տնտեսական շինության քարե պատեր: Սարդարապատի թանգարանին հանձնված նյութերի գույքացուցակների շնորհիվ պարզվեց, որ այդտեղ ևս վավերացվել են մի քանի կարասային թաղումներ (աղ. 1, ԿԹ N 11, 12, աղ. 2, նկ. 2, 3, 5): Դրանց բեկորների միջավայրում գտնվել են գունազարդ տափաշիչ, կճուճիկ, արծվի քանդակի ձևով կերտված անոթի մաս, ալաբաստրոնե փոքրիկ անոթ, խեցանոթի մաս կազմող ծիուկի գլխիկ (աղ. 3, նկ. 8, 7, 5, 6, 4, գույք N 287/17, 18, 23, 44, N 289/12), կենդանու ոտքի բեկորներ, ներճկված կողով գունազարդ թաս և կանթավոր կճուճի կես (աղ. 3, նկ. 11, գույք N 288/12, 13, 17), բրոնզե օձագլուխ ապարանջան, ականջօղ, կնքամատանի և մեկ շար սերդոյիկե, ապակուց ու մածուկից պատրաստված տարբեր տեսակի հուլունքներ<sup>8</sup>: **1977 թ.** պեղումների ժամանակ այս տարածքում հայտնաբերվել են նաև քարարկղային թաղումներ՝ նույնատեսակ գույքով<sup>9</sup>: Այս նյութերը՝ իրենց ձևակազմական, որակական, գործառական հատկանիշներով, քաղաքի բարձր խավի կարգավիճակի նյութական վկայություններն են և պետք է թվագրվեն Հայաստանի վերականգնված թագավորության Երվանդյան դարաշրջանով՝ մ.թ.ա. IV-II դարերով: Այս տվյալները թույլ են տալիս մտածելու, որ տարածքը եղել է հելլենիստական բնակավայրի դամբարանադաշտը և քաղաքի ընդարձակման անհրաժեշտության թելադրանքով մնացել է քաղաքային նոր թաղամասի կառույցների տակ. մի երևույթ, որ եղել էր ուրարտական քաղաքի ծայր արևմտյան հատվածում<sup>10</sup>: Այստեղ արգիշթյան ժամանակաշրջանի դամբարանադաշտը նույն անհրաժեշտությամբ ծածկվել էր սարդուրյան նորակառույց թաղամասով:

Արմավիր բլրի արևմտյան ստորոտում սփռված Ջրաշեն գյուղի ժամանակակից գերեզմանոցում հուղարկավորություններ կատարելիս 1960-80-ական թվականներին շարունակաբար ավերվել են անտիկ շրջանի կարասային թաղումներ (աղ. 1, ԿԹ N 16, 17, 18). դրա մասին մեզ հաղորդել են գյուղի բնակիչները՝ առանց որևէ տվյալ ներկայացնելու այդ թաղումներից գտնված նյութերի վերաբերյալ<sup>11</sup>: Միայն պատմել են **1985 թ.** ավերված մի կարասային դամբարանի մասին, ասել, որ կարասում պահպանված

<sup>8</sup> Սարդարապատի թանգարանում պահվող վերոնշյալ նյութերից օգտվելու թույլտվության, տրամադրված տեղեկատվության և աջակցության համար մեր երախտագիտությունն ենք հայտնում թանգարանի տնօրինությանը՝ ի մասնավորի փոխտնօրեն, պ.գ.թ. Սվետլանա Պողոսյանին:

<sup>9</sup> Այս տարիներին Արգիշթիխինիլի պեղումները ղեկավարել է պ.գ.թ. Ռ. Թորոսյանը: Նյութերը հրատարակված չեն:

<sup>10</sup> Мартиросян 1974, 57.

<sup>11</sup> Կարապետյան 1978, Արմավիրի դաշտային օրագիր, 1-3:

են եղել հանգուցյալի գանգը, մեկ ապարանջան և գունազարդ թաս: Դրանցից միայն կոտրված թասն են հանձնել մեզ<sup>12</sup>: Թասն արմավիրյան խեցեգործության ամենաբնորոշ տեսակներից է: Այս թասերի կլորավուն, վեր ձգվող կողերը գեղեցիկ ներճկումով միանում են դուրս հակված սուր շուրթեզրին: Ներսը զարդանախշված է անոթի հատակից վեր ձգվող խաչաձև կամ ճռագայթաձև ժապավեններով: Հանդիպում են այդ թասերի՝ կարմիր, շագանակագույն և գորշամոխրավուն տեսակները, որոնք զարդարված են հիմնագույնից ավելի մուգ երանգով և պաշտամունքային որոշակի պատկերացումների արդյունք են: Դրանք կապվում են արևի պաշտամունքի հետ<sup>13</sup> և առավելապես հանդիպում են պաշտամունքային-տաճարային բնակավայրերում՝ Արմավիր, Էրեբունի, Աստղի բլուր, Բերդատեղ, Արտաշատ, Գառնի<sup>14</sup>, երբեմն էլ դամբարաններում՝ Արմավիր, Կարճաղբյուր, Աստղի բլուր և այլն:

**1983 թ.** Արմավիրից հյուսիս-արևելք ընկած Բամբակաշատ գյուղի բնակիչները մեզ հայտնել էին «Մուլա Բադալ» կոչվող հանդամասում զարնանային վարի ժամանակ բացված շինության պատերի, կոտրված հելլենիստական խեցեղենի և կարասային թաղումների մասին (աղ. 1, ԿԹ N 13)<sup>15</sup>: Նրանք համաձայնվել էին չչարունակել վարը մինչև մեր ժամանումը, սակայն շարունակել էին, ավերել կառույցները և հեռացրել քարերը: Մեր այցի ժամանակ մենք տեսանք միայն արդեն ցիրուցան եղած խեցեղեն բեկորներ: Ըստ գյուղացիների, հայտնաբերված նյութերի մի մասը հանձնվել է Սարդարապատի թանգարանին (գույք N 4273/ 63, 68-73):

**1989 թ.** Ջրաշենից Բամբակաշատ գնացող միջգյուղական խճուղում՝ Ջրաշենի անասնագուների հարևանությամբ, քանդված կարասային թաղման մեջ (աղ. 1, ԿԹ N 15) գտնվել են մ.թ. I դարի հռոմեական հունատառ արձաթյա դրամ և ապակե սրվակ<sup>16</sup>: Դրամի արձանագրությունը ընթերցել է Արմավիրի արշավախմբի անդամ պ.գ.դ. Սիմոն Կրկաշարյանը՝ պարզելով, որ այն պատկանել է Լուկիոս Ավրելիոս Վերուսին (162 թ.): Հայաստանում հայտնաբերվել են նաև վերջինիս՝ Արտաշատի դրամահատարանում հատած պղնձյա դրամները<sup>17</sup>:

**1994 թ.** Արմավիր բլրի հյուսիսարևելյան ստորոտում ուշ բրոնզի և վաղ երկաթի դամբարանների միջավայրում (Ա. Ուվարովի պեղումների տարածքում) նոր գերեզման փորելիս բացվել է մեկ այլ կարասային թաղում (աղ. 1, ԿԹ N 20), որի գույքից գերեզմանափորը պահպանել և մեզ է հանձնել

<sup>12</sup> Կարապետյան 1985, Արմավիրի դաշտային օրագիր, 30-31:

<sup>13</sup> Կարապետյան 1974, 279:

<sup>14</sup> Կարապետյան 2003, 20:

<sup>15</sup> Կարապետյան 1983 թ., Արմավիրի դաշտային օրագիր, 1-2:

<sup>16</sup> Կարապետյան 1989 թ., Արմավիրի դաշտային օրագիր, 16-18:

<sup>17</sup> Վարդանյան 2004, 234-253:

կարասը, մեկ բրոնզե ապարանջան և երկու հուլունք<sup>18</sup>: Կարասը չափերով, ձևակազմական, արտաքին մակերեսի հարդարման և քսուքապատման հատկանիշներով կրկնում է Արմավիրի միջնաբերդում 1972 թ. հայտնաբերված թաղման կարասը և միննույն խեցեգործական արհեստանոցի արտադրանք է: Նմանատիպ կարասներ հայտնաբերվել են նաև Դվինի անտիկ դամբարանադաշտում և Մոխրաբլուրի հուշարձանի անտիկ շերտում<sup>19</sup>:

Ջրաշենի հարավարևելյան ծայրամասում ապրող Սամվել Մելիքյանի տնամերձ այգում 2000-ական թթ. սկզբներին պարբերաբար հայտնաբերվող ուշ անտիկ դամբարանների մեջ եղել են նաև կարասային թաղումներ (աղ. 1, ԿԹ N 14): Դրանցից մեկում **2006 թ.** գտնվել է Սասանյան Ներսեհ (293-303 թթ.) թագավորի արձաթ դրամը<sup>20</sup>: Այն Ներսեհի դրամների միակ՝ գրանցված օրինակն է Հայաստանի տարածքում: Այդ գտածոն կարևորվում է հատկապես նրանով, որ Ներսեհը, մինչև Պարսկաստանի արքայից արքա դառնալը, կրել է «Հայոց մեծ արքա» տիտղոսը<sup>21</sup>: Ցավոք, դրամի տերը չի ցանկացել այն հանձնել թանգարան, ուստի դրամի ճակատագիրը, ինչպես նաև նախորդինը, անհայտ է: Չորրորդ դարի դրամի առկայությունը կարասային թաղման մեջ հաստատում է այն կարծիքը, որ կարասով թաղումներ կատարելու ավանդույթը շարունակվել է IV դ. սկզբներին ևս: Կարասային թաղումների ուսումնասիրության իրականացման ընթացքում բացահայտված այս երկու դրամները Արմավիր մայրաքաղաքի թաղամասերից հայտնաբերված դրամների քանակը հասցրեցին չորսի: Հռոդոսյան հեմիդրահման (մ.թ.ա. IV-III դդ.), Սելևկյան Ֆիլիպոս I-ի՝ Անտիոքում թողարկած տետրադրահման (մ.թ.ա. I դարի երկրորդ կես)<sup>22</sup>, Լուցիուս Վերուսի արձաթե դրամը (մ.թ. I դ.) և Սասանյան Ներսեհի արձաթե դրամը (մ.թ. III դ. վերջ – IV դ. սկիզբ) կարծես ընդգրկում են ողջ անտիկ դարաշրջանը (մ.թ.ա. IV – մ.թ. IV դ.) և օգնում են ճշգրտել անտիկ քաղաքի գոյատևման փուլերը:

Արմավիրի կարասային թաղումների տեղադրումը Արգիշթիխինիլի-Արմավիրի տեղագրական հատակագծի (հանույթի) վրա ցույց է տալիս, որ բլրի և քաղաքի թաղամասերի արևմտյան և հյուսիսային ծայրամասերի տարածքներում բացված դամբարանների թիվը գերազանցում է բլրի մյուս հատվածներում հայտնաբերվածներին: Դրանք Արմավիր բլրից ձգվում են դեպի արևմուտք և անցնում են ուրարտական քաղաքի տարածքներ:


<sup>18</sup> Կարապետյան 1994 թ. Արմավիրի դաշտային օրագիր, 23-24:

<sup>19</sup> Քոչարյան 1980, 284:

<sup>20</sup> Կարապետյան 2006, Արմավիրի դաշտային օրագիր, 7-9:

<sup>21</sup> Չոհրաբյան 2021, 29-30:

<sup>22</sup> Մուշեղյան 1983, 31, Зардарян 1977, 271:



**Աղյուսակ 1.** Արգիշթիխինիլի-Արմավիրի հուշարձանների հանույթը: Հատակագիծը՝ Կորյուն Ղաֆադարյանի, Արմավիրի միջնաբերդի հավելումները՝ ըստ Լիլիթ Մինասյանի: Կարասային թաղումների տեղորոշման քարտեզը՝ ըստ Ինեսա Կարապետյանի և Արմինե Գաբրիելյանի, ձևավորումը՝ Անահիտ Գալստյանի



1



2



3



4




5

**Աղյուսակ 2.** նկ. 1 – Հուշարձանի պատկերը Google earth  
 նկ. 2, 3, 5 – «Թթենիների թաղամասը» (լուսանկարները՝ Ինեսա Կարապետյանի անձնական արխիվից), նկ. 4 – Արմավիրի միջնաբերդի արևմտյան թաղամասում բացված ԿԹ (լուսանկարը՝ Ինեսա Կարապետյանի անձնական արխիվից)



**Աղյուսակ 3.** Արգիշթիխինիլի-Արմավիրի տարածքում հայտնաբերված անոթային թաղումների նյութերը: Նկ. 1-3 – Мартыросян 1974, рис. 22, 23 а, б, նկ. 4-8, 11 – լուսանկարները՝ Սարգարապատի թանգարանի ֆոնդից, նկ. 9-10 – լուսանկարները՝ Արմավիրի հնագիտական արշավախմբի արխիվից



**Աղյուսակ 4.** Ս. Աբգարյանի հողատարածքում բացված կարասային թաղման գույքը (մ.թ.ա. IV-IV դդ., լուսանկարները՝ Վուսն Հակոբյանի)

### Արգիշթիխինիլի անտիկ անոթային թաղումները

Արգիշթիխինիլի ներքին և արտաքին քաղաքային թաղամասերի մենատների սենյակներում և դամբարանադաշտում բացվել են հիմնահողային, քառանկյուն քարարկղներում, ձվածիր քարաշար խցերում և խեցանոթներում կատարված անտիկ դարաշրջանի թաղումներ: Թաղումների շերտագրական տեղադրությունը և թաղման ուղեկցող նյութերը կասկած չեն թողնում դրանց՝ հետուրարտական և անտիկ դարաշրջաններին պատկանելու հարցում<sup>23</sup>:

Անտիկ առաջին անոթային թաղումը բացվել է Արգիշթիխինիլի պեղումների հենց առաջին տարում՝ **1964 թ.**, D բլրի ստորոտը զբաղեցնող, արտաքին քաղաքի երկրորդ թաղամասի N 4 շինության մեջ (աղ. 1, ԿԹ N 8): Այն իջեցված էր ուրարտական պատի շարվածքից ցած, հատակից 10-15 սմ վեր, ուրարտական մշակութային շերտում: Անոթը պարունակում էր երեխայի գանգի կտորներ, վզի ողեր և փոքր կենդանու՝ հավանաբար շան ոսկորներ<sup>24</sup>:

**1965 թ.** Նոր Արմավիրից Ամասիա գնացող խճուղու աջ ոլորանում, Դավթի բլրից 150-200 մ հեռավորության վրա բացված թաղումը կատարված էր հողի մեջ ուղղահայաց իջեցված ծափի մեջ (բարձր.՝ 70 սմ, շուրթի տր.՝ 30 սմ, իրանի լայն.՝ 60 սմ, նստուկի տր.՝ 32 սմ) (աղ. 1, ԿԹ N 1): Այն ձեռածեփ էր, անհամաչափ ձևավորած կողերով և վատ էր թրծված: Նստուկին պահպանվել էր խսիրե հյուսվածքի դաջվածքը, որի վրա դրված՝ պատրաստվել էր ծափը: Ծափի բերանը փակված էր սալաքարով, ծեփված՝ կավաշաղախով: Անոթը պարունակում էր միայն դիակիզվածի մոխիրը<sup>25</sup>:

1965 թ. այս թաղումից 1,5 մ հեռավորության վրա նույն ուղղահայաց դիրքով թաղված խիստ մրապատ կճուճում (բարձր.՝ 35 սմ, շուրթի տր.՝ 21 սմ, իրանի լայն.՝ 30 սմ, նստուկի տր.՝ 13 սմ) ամփոփված էին մեկ տարեկան երեխայի ոսկորներ<sup>26</sup>՝ առանց ուղեկցող նյութերի (աղ. 1, ԿԹ N 2):

Արգիշթիխինիլի ներքին քաղաքի երկրորդ թաղամասում հայտնաբերված թաղումներից մեկը կատարված էր բանկայատիպ, կլոր նստուկով, երկարով իրանով և նեղ վզով մոխրանարնջագույն երանգի անոթի մեջ (աղ. 1, ԿԹ N 3)<sup>27</sup>: Նույն տեղում արված երկրորդ թաղման անոթը նախորդից տարբերվում էր միայն արտաքին մուգ շագանակագույն գույնով և փայլեցման հետքերով (աղ. 1, ԿԹ N 4)<sup>28</sup>: Այս նույն տարածքում հայտնաբերվել են ևս երեք անոթային թաղումներ՝ բեկորային վիճակում (աղ. 1,

<sup>23</sup> Мартиросян 1974, 55.

<sup>24</sup> Мартиросян 1974, 55, рис. 15.

<sup>25</sup> Мартиросян 1974, 51, рис. 17 ш.

<sup>26</sup> Мартиросян 1974, 51, рис. 17 р.

<sup>27</sup> Мартиросян 1974, 58, рис. 20/3.

<sup>28</sup> Мартиросян 1974, 58, рис. 20/4.

ԿԹ N 5, 6, 7): Վերոնշյալ անոթային թաղումներն ուղեկցող գույք չեն ունեցել և հանդես են եկել թաղման մյուս կառուցածների հետ միասին:

Անոթային թաղումներ բացահայտվել են նաև Արգիշթիխինիլի ներքին քաղաքային թաղամասերում: Այսպես՝ երկրորդ թաղամասի N 7 տան ավերակների պեղումների ժամանակ ուրարտական մշակութային շերտի մեջ հայտնաբերվել են անտիկ շրջանի մանկական թաղումներ՝ միջին չափի կարասների բեկորների միջավայրում<sup>29</sup>, իսկ երրորդ քաղաքային թաղամասի N 1 տանն ապրող կնիքագործի արհեստանոցի փլատակների մեջ գտնվել է բեկորացված կարաս՝ պղնձե լարից պատրաստված մատանիներ ունեցող մեծահասակ գույգի կմախքներով<sup>30</sup>:

Ուշ շրջանի այս թաղումներից առանձնանում է Նոր Արմավիրի բնակիչ Սամվել Աբգարյանի հողամասում **1999 թ.** հայտնաբերված՝ ուրարտական քաղաքի հյուսիսարևելյան ծայրամասում գտնվող կարասային թաղումը (աղ. 1, ԿԹ N 9): Բնակարանի հիմքերի խրամուղին փորելիս Աբգարյանը 90 սմ խորության մեջ տեսել է շինության պատերի մնացորդներ: Դրանցից 10 մ հեռավորության վրա, գետնի արտաքին մակերեսից 40 սմ խորության մեջ բացվել էր կարասային թաղում: Ըստ Աբգարյանի՝ դիաթաղում պարունակող բեկորացված կարասում թաղման գույքի հետ խառնված անհատի ոսկորները եղել են խիստ քայքայված վիճակում: Մեզ հանձնված թաղման գույքը կազմված էր միայն խեցանոթներից՝ ցածրադիր իրանով երկկանթ սափոր, ներս հակված շուրթով կլոր թաս, կիսաձվածիր խորունկ գավաթ, ձեռածեփ տեխնիկայով պատրաստված միջնորմավոր ձիթածրագ, մի փոքրիկ աղաման և այծի եղջյուրի մշակված բեկոր<sup>31</sup>: Խեցեղենն իր ձևակազմական հատկանիշներով ուրարտական նույնաձև խեցեղենի օրգանական շարունակությունն է՝ իրականացված վաղ հայկական խեցեգործության պատրաստման տեխնիկական ու հարդարման հատկանիշներով, և թվագրվում է մ.թ.ա. V-IV դարերով (աղ. 4):

Քանի որ այս դամբարանը տեղակայված է Նոր Արմավիր գյուղի տակ սփռված Արգիշթիխինիլի դամբարանադաշտի հյուսիսարևելյան ծայրամասում, ապա մեզ թույլ է տալիս առաջ քաշել վարկած, ըստ որի՝ Արմավիրի բնակիչները վաղ հայկական (Երվանդյան), հելլենիստական և ուշ անտիկ ժամանակաշրջաններում իրենց թաղումները, ժառանգական կապի և սովորույթի համաձայն, կատարել են ուրարտական դամբարանադաշտում, քանի որ բիայնական պետական կառույցի անկումից հետո էլ բնակչությունը շարունակել է կենսագործունեությունը իր ապրած վայրերում և թաղումներ կատարել նախկին դամբարանադաշտերում:

<sup>29</sup> Мартиросян 1974, 117.

<sup>30</sup> Мартиросян 1974, 119.

<sup>31</sup> Կարապետյան 1999, Արմավիրի դաշտային օրագիր, 3-4:

Արմավիր մայրաքաղաքի բնակիչները թաղումներ են կատարել նաև ուրարտական քաղաքի ներքին և արտաքին թաղամասերի բնակարաններում, հատակներից 10-15 սմ վեր, ուրարտական մշակութային շերտում: Այս թաղումները հետագայում ծածկվել են դրանց վրա շրջված պատերի աղյուսե վերնամասերով: Սա թույլ է տալիս համաձայնվել Հ. Մարտիրոսյանի այն եզրահանգման հետ, որ հետուրարտական թաղումները սկսել են կատարվել այն շրջանում, երբ ուրարտական պատերը դեռևս կանգուն են եղել<sup>32</sup>: Այս դիտարկումները ցույց են տալիս, որ Արմավիր մայրաքաղաքի դամբարանադաշտն ավելի ընդարձակ է եղել և ընդգրկել է նաև ուրարտական ներքին քաղաքի երկրորդ և երրորդ թաղամասերը: Թաղումների շերտագրական տեղադրությունը և դրանց ուղեկցող հատուկենտ նյութերը վկայում են դրանց՝ հետուրարտական և անտիկ դարաշրջաններին պատկանելու մասին:

### **Եզրակացություններ**

Սույն հոդվածում Արմավիր մայրաքաղաքի՝ տարբեր տարիների պեղումների ընթացքում հայտնաբերված, հրատարակված և չհրատարակված անոթային դամբարանների տեղորոշման, հաշվառման, թանգարանների ֆոնդերում դրանց թաղումների գույքի հայտնաբերման, քննության, դամբարանների մյուս տեսակների նյութերից տարբերակման մեթոդով ճշգրտվել են Արմավիր մայրաքաղաքի դամբարանադաշտի տեղադրությունը և դրա սփռվածության սահմանները: Քննության ենթարկված անոթային թաղումները վավերացվել են Արմավիր բլրի լանջերին, ստորոտներին, քաղաքային թաղամասերում և բիայնական պետական համակարգի փլուզումից հետո՝ նաև Արգիշթիխիլիի արևմտյան միջնաբերդի ներքին ու արտաքին թաղամասերի լքված բնակարանները ծածկող կավահողային շերտերում և ուրարտական դամբարանադաշտում: Որպես թաղման անոթ են ծառայել տնտեսության մեջ օգտագործված և մաշված կարասները, ծափերը, տարբեր ձևերի կցուցները, թեև երբեմն հանդիպում են նաև թաղման համար հատուկ պատրաստված և ներմուծված տեսակի կրկնօրինակված անոթներ: Դամբարանադաշտում անոթային թաղումները հայտնաբերվել են հնագույն ավանդական կառուցածև ունեցող դամբարանների միջավայրում, որոնց հետ քանակական հարաբերակցության քննությամբ էլ ներկայացվել են քսանից ավելի ամբողջական և բեկորացված անոթային թաղումները: Ուսումնասիրվել են անոթային թաղումներում կատարված ծեսի և ուղեկից արարողությունների հատկանիշները. դրանք են՝ դին անոթում տեղադրելու համար կարասի շուրթի և ուսամասի մի հատվածի հեռացման, ապա կրկին իր տեղը դնելու գործառույթը, կծկված վիճակում, աջ կամ ձախ կողի վրա դիադրման իրականացումը, անոթային թաղումները մայր հողի մեջ հորիզո-

<sup>32</sup> Мартиросян 1974, 58.

նական կամ ուղղահայաց դիրքով իջեցումը: Հորիզոնական դիրքով թաղման դեպքում կարասն ունենում է երկրի կողմերի նկատմամբ տարբեր ուղղվածություն, որն ուշ անտիկ դարաշրջանից աստիճանաբար սկսում է դառնալ հաստատուն՝ արևելք-արևմուտք: Ուղղահայաց դիրքով թաղված անոթներում կմախքի դիրքը երբեմն թվում է կքանստած, իսկ մեծ մասամբ՝ մարմնի մկանային հյուսվածքների փտելուց հետո, ոսկորները թափված, խառը կուտակված են լինում անոթի հատակին: Կարծում ենք՝ երկրորդ՝ ուղղահայաց դիրքը հարմար է եղել դիակիզմամբ թաղման համար, քանի որ դիակիզման ծեսը հաճախ է հանդիպում նախորդ՝ ուրարտական ժամանակաշրջանի կարասային թաղումներում<sup>33</sup>: Հետազոտության ընթացքում կարասային դամբարանների տեղավայրերի վավերացումը օգնեց պարզելու, որ Արմավիրի դամբարանադաշտը նախապես (մ.թ.ա. VI-IV դդ.) զբաղեցրել է արևմտյան և հյուսիսարևմտյան քաղաքային թաղամասերից 1-1,5 կմ հեռավորությամբ գտնվող տեղամասերը: Այդ թաղումների գույքի՝ աչքի ընկնող առատությունը, թվագրող հատկանիշները, երկրում զարգացող արհեստների ու առևտրի բարձր մակարդակ փաստող տվյալները հերթական անգամ վկայում են, որ ուրարտական քաղաքի արևելյան միջնաբերդն ու սրբազան քաղաք Արմավիրը Հայկական լեռնաշխարհում բիայնական պետական համակարգի լուծարվելուց հետո պահպանվել են, իսկ տաճարական համայնքը դարձել է քաղաքն ու տարածաշրջանը կառավարող մարմին: Մ.թ.ա. IV դ. վերականգնված Երվանդյան թագավորության մայրաքաղաքի թաղամասերի ընդարձակման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ դամբարանադաշտը ևս ընդարձակվել է դեպի արևմուտք: Այն գրավել է Արգիշթիխինիլի վերին՝ 20-70 սմ թանձրության ուրարտական մշակութային շերտը: Այստեղ բացված անոթային թաղումները, բացառությամբ մի երկուսի մեջ հանդիպած խիստ սակավ նյութերի, զուրկ են ուղեկցող գույքից, կատարված են միայն դիադրման ծեսով և հիմնականում մանկական թաղումներ են: Այս հատկանիշներով դրանք թվագրվում են ուշ անտիկ՝ մ.թ. II դ. վերջ - III դարով: Մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ այս երևույթը համընդհանուր է Հայաստանում հայտնաբերված համաժամանակյա բնակավայրերի (Գառնի, Արտաշատ, Կարճաղբյուր, Մաստաբա, Թալին, Բենիամին, Օշական և այլ) կարասային դամբարանադաշտերում:

### **Օգտագործված գրականություն**

Բայբուրդյան Եվ. 1937, Հայաստանի գունազարդ կերամիկայի պորթլենդ, ՀԽՍՀ Պատմության և գրականության ինստիտուտի տեղեկագիր, գիրք 2, Երևան, էջ 268-308:  
 Զոհրաբյան Ա. 2021, Հայաստանի դրամական տնտեսությունը III-X դարերում (սասանյան և արաբական ժամանակաշրջաններ), Երևան, «Անտարես», 151 էջ:

<sup>33</sup> Մարտիրոսյան, Թորոսյան 1986, Karapetyan, Yengibaryan 2010:

- Խաչատրյան Ժ. 1978, Հայաստանի անտիկ շրջանի մեղալիոնները (մ.թ.ա. II-I-ին դդ.), ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, N 5, էջ 46-55:
- Կարապետյան Ի. 1974, Մ.թ.ա. VI-III դդ. վաղ հայկական թասերի մի խումբ, Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), N 3, էջ 276-280:
- Կարապետյան Ի. 1978 թ., Արմավիրի դաշտային օրագիր:
- Կարապետյան Ի. 1983 թ., Արմավիրի դաշտային օրագիր:
- Կարապետյան Ի. 1985 թ., Արմավիրի դաշտային օրագիր:
- Կարապետյան Ի. 1989 թ., Արմավիրի դաշտային օրագիր:
- Կարապետյան Ի. 1994 թ., Արմավիրի դաշտային օրագիր:
- Կարապետյան Ի. 1999 թ., Արմավիրի դաշտային օրագիր:
- Կարապետյան Ի. 2003, Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI-IV դդ., Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 19, Երևան, «Գիտություն», 112 էջ, աղ. 56:
- Կարապետյան Ի. 2006 թ., Արմավիրի դաշտային օրագիր:
- Մարտիրոսյան Հ., Թորոսյան Ռ. 1986, Արգիշտիխինիլի սարկոֆագը, ՊԲՀ, N 3, էջ 221-227:
- Մուշեղյան Խ. 1983, Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դ. - մ.թ. XIV դ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 352 էջ:
- Վարդանյան Ռ. 2004, Լուկիոս Վերոսի օրոք Հայաստանում թողարկված պղնձե դրամներ, ՊԲՀ, N 2, էջ 234-253:
- Տեր-Հակոբյան Ս. 1936, Արմավիրի երկրորդ նորագյուտ արձանագրությունը, Աշխատություններ ՀԽՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի, հ. 1, Երևան, էջ 145-150:
- Տիրացյան Գ. 1974, Արմավիրի պեղումները, Լրաբեր հասարակական գիտությունների, N 12, էջ 50-57:
- Տիրացյան Գ. 1980, Արմավիրի պեղումները (առաջին պեղումների 100-ամյակի առթիվ), ՊԲՀ, N 2, էջ 23-29:
- Քոչարյան Գ. 1980, Հելլենիստական դարաշրջանի դամբարանադաշտ Դվինում, ՊԲՀ, N 2, էջ 277-285:
- Аракелян Б. 1976, Очерки по истории искусства древней Армении, Ереван, изд. АН АССР, 124 с.
- Есаян С., Биягов Л., Амаякян С., Канемян А. 1991, Биайнская гробница в Ереване, Археологические памятники Армении N 15, Ереван, изд. АН Армении, 48 с.
- Зардарян М. 1977, Амфоры из раскопок Арташата, ИФЖ, N 1, с. 266-269.
- Куфтин Б. 1944, Урартский колумбарий у подошвы Арарата и куро-аракский энеолит, «Вестник Государственного музея Грузии», вып. XIII-B, Тбилиси, 172 с.
- Мартиросян А. 1974, Аргистихинили, Археологические раскопки в Армении, вып. 1, Урартские памятники, Ереван, изд. АН Армянской ССР, 175 с.
- Тирацян Г. 1971, Об одной группе расписных сосудов из Армавира (Армения), Советская археология, N 2, с. 246-249.
- Тирацян Г. 1988, Культура древней Армении, Ереван, «Гитутюн», 204 с.
- Уваров А. 1882, Исследование местности, на которой предполагались развалины Армавира, Пятый археологический съезд в Тифлисе, Москва, Синодальная типография, с. 439-449.
- Уварова П. 1902, Коллекция Кавказского музея, т. V, Археология, Тифлис, Типография канцелярии главнoчальствующаго гражданскою частію на Кавказе, с. 128-130.
- Karapetyan I., Yengibaryan N. 2010, A New Urartian Burial from Argishtihinili, Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie, Bd. 100, S. 53-63.

**ГРАНИЦЫ РАСПОЛОЖЕНИЯ И ХРОНОЛОГИЧЕСКИЕ РАМКИ КУВШИННЫХ ПОГРЕБЕНИЙ МОГИЛЬНИКА СТОЛИЦЫ АРМАВИР**

Карапетян Инеса, Габриэлян Армине

## Резюме

Столица Древней Армении Армавир занимает территорию одноименного холма (высота 80 м), граничащего с городом Аргиштихинили, построенным в VIII веке до н.э. на западно-восточном хребте в центральной части Араратской равнины, и территорию между селами Айкаван, Джрашен, Артагерс, Армавир.

Систематические исследования, проводимые с 1962-го года, свидетельствуют о многослойном характере Армавира: с доурартского периода (IV – начало I тыс. до н.э.) до развитого средневековья (X-XIII века). Следует отметить, что основное внимание было уделено изучению цитадели и городских кварталов, однако некрополь остался вне поля внимания исследователей.

Но в процессе предварительных раскопок в XIX в. при различных хозяйственных, строительных работах, прокладке оросительной сети и в захоронениях на современных кладбищах в различных частях города случайно были найдены погребения, датируемые начиная с эпохи ранней бронзы и до позднего средневековья, причём среди них встречались и погребения античного периода.

Производившиеся здесь захоронения относятся к традиционным типам: это грунтовые, каменные ящики, погребения с овальной кладкой, а также кувшинные, которым в данной статье уделено основное внимание.

Изучение выявленного материала позволяет уточнить границы распространения кувшинных погребений в столице Армавир, их ориентацию по отношению к сторонам света, погребальный обряд, ритуалы, а в случае наличия сопутствующего материала и путем изучения его ассортимента – установить расположение столичного некрополя и определить период его существования.

**Ключевые слова** – столица Армавир, Аргиштихинили, западная цитадель, погребальный обряд, кувшинные погребения, эллинистический, позднеантичный некрополь.

**THE DISTRIBUTION BOUNDARIES AND CHRONOLOGICAL FRAMES OF THE JAR BURIALS OF THE NECROPOLIS AT THE CAPITAL CITY ARMAVIR**

Karapetyan Inesa, Gabrielyan Armine

## Abstract

Arnavir, the capital of Ancient Armenia, occupies the territory of the eponymous hill (height - 80 m), bordering the city of Argishtikhinili, built in the 8th century BC on

the west-east ridge in the central part of the Ararat plain, and the area between the villages of Haykavan, Jrashen, Artagers, Armavir.

As a result of continuous studies conducted since 1962, it became clear, that Armavir was occupied in different periods. Layers from pre-Urartian period (4th – beginning of the 1st millennium BC) to the High Middle Ages (10 – 13th centuries) were revealed. The main attention of the research was focused on the study of the citadel and some parts of the city quarters, while the problem of studying the necropolis remained unsolved.

In the process of constructional works since the 19th century in various parts of the city quarters burials belonging to the periods from the Early Bronze Age to the Late Middle Ages were accidentally revealed, and among them there were those of the Classical period. The burials are represented by traditional types: pits, stone boxes, burials with oval-shaped masonry, as well as jar burials, which are the focus of this article.

The study of the material makes it possible to clarify the distribution boundaries of the jar burials in the capital Armavir, their orientation in relation to the cardinal points, funeral rites as well as dating issues.

**Key words** – the capital city Armavir, Argishtikhinili, the western citadel, funeral rite, jar burials, necropolis of the Classical and Hellenistic period.

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԱՐԴԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

## Հոփսիմն Ասատրյան

Պատմական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ hripetnos@mail.ru

ORCID: 0009-0007-6204-8148

Հոդվածը ներկայացվել է 01.07.2023, գրախոսվել է 10.04.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.1-298

### Ամփոփում

Ժողովրդական խաղը ենթակա է պատահականության սկզբունքին և ունի ներքին տրամաբանություն. դա երկու հակառակորդ կողմերի լարման, մրցելու մղումն է, որը, ընկալվելով իբրև նպատակ, խաղի մեջ ստեղծում է երկու իրավիճակ՝ գործողության և դրության: Գործողությունը խաղացողի ներքին նպատակն արտահայտող ընթացքը կամ ընթացակարգն է, իսկ դրությունը՝ այդ ընթացակարգից դուրս գալու ներքին մղումը:

Ժողովրդական խաղն ունի կանոններ և ոչ կանոնային նորմեր: Այդ ամենով հանդերձ՝ այն միանգամայն ազատ է, ինքնաբերական, և իր ներքին ազատությունը դրսևորվում է խաղացողի մրցելու, հաղթելու, մրցանակը վերցնելու ներքին մղումով: Իսկ խաղացողի արտաքին ազատությունը սահմանափակվում է վերահսկողության հետևյալ չափորոշիչներով՝ կանոններով՝ խաղը սկսող հաշվերգերով ու վիճակահանություններով, կազմակերպիչ-ավագներով, խաղավարտի բանաձև-արտահայտություններով, պատժաձևերի և խրախուսանքների մշակված համակարգով:

Խաղերն ունեն ոչ միայն սկզբի, այլև ընթացքի և ավարտի բանաձևեր. դրանք պայմանականորեն համարում ենք «պայտիժ»: Խաղի կարգազանցների կամ պարտվողների համար այդ պատիժները լինում են ֆիզիկական, մտավոր-գարգացնող և հոգեբանական: Արդի խաղային միջավայրում մեծ դերակատարություն ունեն խմբի ավագները, որոնք ավանդականորեն ընկալվում են որպես խաղի կազմակերպիչ և ղեկավար՝ իրականացնելով կազմակերպչական, խաղի կառուցի կամ խաղային տարածության գծագրման, իր և հակառակորդ խմբի խաղացողների վարքի վերահսկման և միավորները հաշվելու գործառնությունները:

**Բանալի բառեր**՝ խաղ, կանոն, հաշվերգ, վիճակահանություն, հաղթող, պարտվող, պատժաձև:

### Ներածություն

Վերջին հարյուրամյակում խաղային մշակույթը էականորեն փոխվել է, սակայն խաղի կանոններում դեռևս պահպանված է վիճակահանության կարգը՝ քար և չոփ պահել, ոտք գցել կամ հաշվել: Արդի կենցաղում, որոշակի ձևափոխումներով հանդերձ, գործում են խաղը սկսելու գրեթե միևնույն

կանոնները՝ ավագ ընտրելու սկզբունքը, խմբերի բաժանվելու կարգը, վիճակահանության ձևերը (բացառությամբ՝ տեքստերի): Օրենքների և կանոնների ձևափոխումները, սակայն, չեն խաթարել խաղի բնույթը կամ խաղացողի՝ որպես կանոնները խախտած, օրենքներին չենթարկված, վարքի դրսևորումները: Եթե կանոնը խախտվում է պատահաբար, ուրեմն այստեղ գործ ունենք թույլ խաղացողի հետ, որը կա՛մ լիարժեք չի տիրապետում խաղի կանոններին, կա՛մ պակաս արագաշարժ ու հնարամիտ է: Իսկ եթե կանոնը խախտվում է ոչ պատահաբար, այստեղ գործ ունենք ըմբոստ խաղացողի հետ, որը բոլորովին էլ խաղի ավագը չէ, սակայն կարող է ընդվզել ու փոխել, մինչև անգամ դադարեցնել խաղը: Ներկայումս այդպիսի խաղացողներին տրվում է «հարամ» կամ «դադալ» բնութագրումը:

Խաղերում կարևոր դերակատարություն ունի խմբի ղեկավարը, որն ավանդական հասարակարգում կոչվել է *մեր*, *պասպ*, *բաշ*, իսկ ներկայում նրան անվանում են *ավագ*, և առավել տարածված է «ինքնակոչ ձևով» ճարպիկ (=ըմբո՛ստ) խաղացողի կողմից խմբի ավագ դառնալու երևույթը՝ առանց հաշվի առնելու ամենամեծի տարիքը, պահպանվել է խաղի կազմակերպիչների և ղեկավարների ինստիտուտը՝ դերային գործառույթների որոշակի փոփոխություններով: Առհասարակ բոլոր խաղերի հիմքում ընկած է կանոնը, որը ծառայում է խաղացողի վարքի ու գործունեության կարգավորմանը: Կանոնն արգելքներ է դնում, որոնք նա պետք է հաղթահարի, և ինչպես հոլանդացի պատմաբան ու մշակութաբան Յ. Հայզինգան է ասում, *կարգ ու կանոնը* բացարձակ է, և դրանով են որոշում խաղի կազմակերպումը<sup>1</sup>:

*Խաղ* երևույթը հատուկ է տարիքային բոլոր խմբերին, սակայն, ելնելով այն բանից, որ մանկապատանեկան խաղերում առավել ընդգծված են խաղային կանոնները, հողվածում սեռատարիքային այդ խմբի խաղերը գերակայում են, և հիմնականում դրանց քննությամբ են կատարվում խմբային բաժանումները, խաղի կանոնները, խաղերի կառուցվածքի ու հաշվերգերի փոփոխությունները և այլն:

### Հողվածի նպատակը

Սույն հողվածի նպատակը ժողովրդական խաղի կառուցվածքային քննությունն է, ինչը մեզ հնարավորություն է տալիս հաշվերգերն ու վիճակահանությունները դիտարկել «*խաղ*» երևույթում օբյեկտիվորեն առկա կենսաապահովման, սոցիոնորմատիվ և մշակութային հետևյալ շերտերում՝ հաշվերգ, լեզու, բարբառ, երգ: Սոցիալ-մշակութային փոփոխությունների համակարգը հնարավորություն է ընձեռել ներկայացնել ոչ միայն խաղի զարգացման դինամիկան, այլև անձի, խաղացողի սեռատարիքային առանձնահատկությունները տվյալ սոցիալական միջավայրում, մասնավորապես

<sup>1</sup> Հայզինգա 2007, 20:

հաշվերգերի տեքստերի, խաղի կանոնների, ղեկավարների գործառույթների, պատժաձևերի և խրախուսանքների փոփոխությունների օրինակներով:

Հոդվածի վերջում հանգում ենք մի շարք գործնական և տեսական եզրակացությունների:

### **Մեթոդաբանական հիմքը**

Հոդվածում փորձում ենք ուսումնասիրություն կատարել ամերիկացի սկանավոր մարդաբան ու սոցիալական տեսաբան Կ. Գիրցի<sup>2</sup> նկարագրական մեթոդի միջոցով: Ըստ այդմ, հետազոտության օբյեկտը, սովյալ դեպքում ժողովրդական խաղը դիտարկում ենք ժամանակակից խաղերի կառուցվածքային ու կանոնային փոփոխությունների համատեքստում՝ մեր դաշտային նյութի հիման վրա<sup>3</sup>: Այս մեթոդը թույլ է տալիս խաղը դիտարկել որպես մի ամբողջական օրգանիզմ, և դրա առանձին տարրերը՝ պար, շարժում, երկխոսություն և այլն, մեկնաբանել որպես ծիսական իմաստների և սոցիալական մեխանիզմների բացահայտման փորձ: Նկարագրական մեթոդը հնարավորություն է ընձեռում նաև ի մի բերել խաղի ընդհանուր պատկերը՝ ժամանակակից խաղերի կառուցվածքային ու կանոնային փոփոխությունները, խաղային եզրույթների պահպանվածությունն ու տարածվածությունը: Խաղերն առավել խորքային ընկալելու համար կիրառել ենք նաև անձնական մասնակցության մեթոդը և, դառնալով խաղի մասնակից, փորձել ենք նկարագրել և վերլուծել *խաղ* հասկացությունը և հենց խաղը «ներսից»: Դաշտային ազգագրական նյութը հիմնականում գրանցվել է հարցումների<sup>4</sup>, ինչպես նաև ձայնագրությունների ու տեսագրությունների եղանակով: Նմանատիպ մեթոդ է կիրառվել նաև մինչև հինգ տարեկան երեխաների հետ աշխատանքը կազմակերպելու համար, որն իրականացվել է կա՛մ նախակրթարաններում, կա՛մ տանը՝ ծնողների ու դաստիարակների անմիջական ներկայությամբ՝ հաշվի առնելով հաղորդակցության, անձի պաշտպանության և բռնության հիմնախնդիրները:

### **Խաղի սահմանումն ու կանոնների տարածվածությունը**

Ժողովրդական խաղը կանոնային և ոչ կանոնային նորմերով սահմանված որոշակի գործողություն է կամ զուտ զվարճական-ժամանցային ինքնագործունեություն՝ առանց վերահսկողության: Սակայն հենց վերահսկողությունն է ընկած սոցիալական ղեկավարման հիմքում, և խաղերի պարագայում

<sup>2</sup> Гирц 2004.

<sup>3</sup> ԴԱՆ 2008-2018:

<sup>4</sup> Օգտվել ենք Վ. Բդոյանի կազմած «Խաղեր գրի առնելու հարցարան»-ից (հմմտ. Բդոյան 1983, 224):

դա անհատի հանդեպ սոցիալական որոշակի խմբի ազդեցությունն է<sup>5</sup>, որը հնարավոր է հասկանալ խաղի կառուցվածքն ու կանոնների առանձնահատկությունները քննելով:

Խաղն ունի միայն ներքին ազատություն, իսկ ազատությունը ենթադրում է անկախություն՝ չենթարկվելը որևէ մեկին, խաղի դեպքում՝ խաղի ղեկավարին: Խաղի մեջ ազատությունն ընկալվում է որպես ներքին մղում՝ մրցման, հաղթելու, շահույթը վերցնելու ձգտում: Հետևապես, եթե խաղի էությունն ինքնին ենթադրում է ազատ ու ինքնաբուխ վարք, սահմանափակվում է խաղացողի միայն արտաքին ազատությունը՝ վերահսկողության հետևյալ չափորոշիչներով՝ խաղը սկսող հաշվերգերով ու վիճակահանություններով, կազմակերպիչ-ավագներով, խաղավարտի բանաձև-արտահայտություններով, պատժաձևերի և խրախուսանքների մշակված համակարգով:

Ներկայումս ՀՀ-ի յուրաքանչյուր մարզում, որտեղ կատարել ենք հետազոտություններ, գրանցած խաղերում մանուկներն ու պատանիները տարբեր անվանումներով են բնութագրում խաղի՝ սոցիալական կառավարման կազմն ու պահանջները՝ ելնելով սեռատարիքային և բարբառային առանձնահատկություններից: Արարատի մարզում, օրինակ, գրանցել ենք ժամանակակից խաղի քսաներեք և հաշվերգի չորս տարբերակ, որտեղ խաղի ավագը կոչվում է *մեր*, իսկ պատժաձևերն ունեն մեկ անվանում՝ *փայլան*, որը սովորաբար ունի հոգեբանական ուղղվածություն: Խմբերը բաժանվում են *չունգաչունգով* կամ *չինգաչունգով*<sup>6</sup>: Չունգաչունգի ժամանակ երկու խաղացող, ձեռքերը բռունցք արած, կանգնում են դեմ դիմաց և «չունգաչունգ» արտահայտությունը վանկատելով՝ վերջին վանկն արտասանելու պահին բացում են բռունցքը: *Թուղթ* է համարվում, երբ բացված է ձեռքի ափը, *քար*՝ երբ բռունցքը չի բացվում, *մկրափի* ժամանակ ցուցամատն ու միջնամատը պահում են մկրատի նման: Դրանով որոշում են, թե ով պետք է սկսի խաղը. «*Մկրափը կտրում է թուղթը, քարը կտրում է մկրափը, թղթով փաթաթում են քարը*»: Գրի ենք առել մեկ այլ տարբերակ, որը կոչվում է *բիզ*, երբ երեխաները բացում են միայն ցուցամատը: Բիզ տարբերակը հաղթող է բոլոր դեպքերում, քանի որ ծակում է և՛ քարը, և՛ թուղթը, և՛ մկրատը:

Խմբերը կազմվում են նաև հետևյալ ձևերով՝ *ցելայով*, *ուր գցելով՝ սոխ-սխտոր-կանաչ գխտոր* ասելով (խաղացողները կանգնում են դեմ դիմաց և մի ոտքի թաթն ու մյուս ոտքի կրունկը միմյանց հպած՝ քայլում), *զինվորի մեկ քայլ* (խորխտ մեկ քայլ կատարելով), *ինքնաթիռ* (խաղահրապարակում մեծ թռիչք ձևացնելով՝ հաջորդաբար մոտենում մինչև միմյանց դիպչելը. ով

<sup>5</sup> Խաղը խաղացողի և խաղի առարկայական կազմի (այլ խաղացողներ, առարկաներ) փոխհարաբերությունն է, հմմտ. Гадамер 1988, 148, 152:

<sup>6</sup> Այս բանաձևի կառուցվածքը պայմանական է: Հաղթողը սովորաբար կրկնում է գործողությունը, իսկ պարտվողը՝ փոխում:

առաջինն է դիպչում, նա էլ սկսում է խաղը), *ծիպուկ* (երկու ոտքն իրար կպած թռչկոտելով), *կայծակ* (աջ-ձախ թռիչքներով կայծակի հետագիծ ձևացնելով), *կես քայլ* (ոտքը կողքով մյուս ոտքի առաջ դնելով), *ծիու վեց քայլ* (դեպի կողք վեց քայլ անելով՝ աջ ոտքով դեպի աջ վեցական քայլ են կատարում, ձախը միացնում), *նսպաստակ* (մեկ մեծ ցատկով), *ջայլամի երեք քայլ* (երեք մեծ քայլով՝ լռեքով), *գիր-դուշով*, *պարան ձգելով*: Վիճակահանությունը երբեմն կատարվում է ֆիզիկական ուժի ցուցադրությամբ (ուժ-փորձուկ): Գետնին գծում են մի գիծ՝ սահման և, կանգնելով դեմ-դիմաց՝ գծի երկու կողմից, ձգում են պարանը: Ով դիմացինին քաշում, անցկացնում է գծից, նա էլ իրավունք է ստանում առաջինն ընտրելու իր խմբի առաջին անդամին<sup>7</sup>:

Արագածոտնի մարզում գրանցվել է՝ ք. Թալինից՝ տասը, ք. Ապարանից՝ հիսուն խաղի և տասնհինգ հաշվերգի տարբերակ, որտեղ ավագին անվանում են *ավագ* կամ *պապ* (աղջիկները՝ *մայր*), իսկ պատժաձևերն ավելի բազմազան են՝ *ձու* անվամբ (ոտով ո.ին զարկոցի, ատոմային զոթի զոմփ՝ հետույքով թռնում-դիպչում էին պարտվողի մեջքին) և այլն, իսկ խաղը կիսատ թողած խաղացողներին՝ *օյինից թռնող կապիկ* և *դադալի գլուխը ծակ ա՛* խարդախ խաղացողներին: Ընդ որում՝ Ապարանում բոլորի հետ խաղացողին անվանում են *պիտուշուկ* և խմբերի բաժանվելիս կիրառում են հետևյալ ձևերը՝ *քարթռնուկ* կամ *քարպահուկ*, հարց ու պատասխանով՝ *վա՞րդն ես, թե՞ կակաչը* կամ *մերսեղե՞սն ես, թե՞ բրաբուսը, ուրք գցել, ցելա* և *բութ-բութ-բութ* (բութ-բութ-բութ ասելով՝ ավագ կամ ճարպիկ խաղացողը, բռունցք արած և բութ մատը վերև պահած, սպասում է մինչև մյուս խաղացողները, մեկը մյուսի բութ մատը բռնելով, դուրս են թողնում վերջին խաղացողին)<sup>8</sup>:

Գեղարքունիքի մարզում գրանցած խաղերի մեծ մասը Մարտունու տարածաշրջանից են, շուրջ երեսունհինգ խաղ, ութ հաշվերգ, ք. Գավառից՝ քսանհինգ խաղ, իսկ ք. Վարդենիսից՝ տասներկու խաղ և մեկ հաշվերգ: Դրանցում ղեկավարներն ունեն *ջոջ ընգեր* անվանումը, իսկ խմբերի բաժանվելու տարածված տարբերակներն են՝ *ցելան* (*ցելա-բելա, ես հելա*), *գիր-դուշը, թաց-չորը, քար պահելը, չինգաչունգը կամ չունգաչունգը, ուր քցելը՝ ինձի-քեզի, աստի-բաստի, չալավեկ, չաստի, աստի-բաստի, կլորա* (*կլրա*) *չաստի, աղըմ-բաստըմ, Ղուլարա* (գյուղի անուն է) *քաստըմ, էս էլ մեր Քյավառա շոշը, աստի-բաստի, քյալարաքիրի քյաստի* կամ *հաց-պանիր-ջուր, հաց-պանիր-կանաչի, մեկ-երկու-երեք, սոխ-սխտոր-կանաչ բխտոր, փոս փորեն, թուրքին խորեն*: Բոլոր տարբերակների ժամանակ ցանկության դեպ-

<sup>7</sup> ԴԱՆ 2008, Արարատի մարզ, ք. Արարատ, գ. Արարատ (Դավալու) և Արմաշ: Ք. Արտաշատ, գ. Վ. Արտաշատ, Բերքանուշ, Մրգավան, Ազատավան, Զրաշեն, Արևշատ, Արովյան: ԴԱՆ 2013, Արարատի մարզ, գ. Դիմիտրով, Մխչյան, Ծաղկաշեն:

<sup>8</sup> ԴԱՆ 2009, Արագածոտնի մարզ, ք. Թալին. գ. Մաստարա, Կաթնաղբյուր, Չովասար (Ահագչի), Աշնակ: ԴԱՆ 2011, ք. Ապարան, գ. Լուսագյուղ, Թթու ջուր (Ումրու): ԴԱՆ 2012, ք. Աշտարակ, գ. Կարբի, Ուշի:

քում կիրառում են ծիպուկ-գործողությունը (կես քայլ), իսկ անհավասար խաղացողների դեպքում ի հայտ է գալիս *պիտուշուկ*, *ճիպուկ* կամ *մշու* խաղացող: Խաղի կանոնը խախտողին անվանում են *հարամություն անող* և պիտակավորում *օյինից թնոող*<sup>9</sup> արտահայտությամբ:

Շիրակի մարզում գրանցած խաղերը կազմում են մեր դաշտային նյութի կեսից ավելին: Խմբերի բաժանման ժամանակ գերակշռում են առարկաներով և հարց ու պատասխանով գործողությունները՝ *քարպահուկ* կամ *քարբռնուկ*, *շինգաչունգ*, *գիր-դուշ*, *ոտ ու իլանգիով* (ոտ ու կես ոտ)՝ *մեկ-երկու-երեք*, *հաց-պանիր-ջուր* կամ *ծիպուկ*, *ցելա կամ ցոլա*, *խնձորն ես ուզում, թե՛...* և այլն:

Անիի տարածաշրջանից գրանցած տասնմեկ խաղի, երեք հաշվերգի և մեկ երգատեքստի, ք. Գյումրիից՝ տասնինը խաղի, տասնմեկ հաշվերգի և ք. Արթիկից՝ երեսուներեք խաղի, տասը հաշվերգի գրեթե բոլոր տարբերակներում խմբի ղեկավարներին անվանում են *ավագ*, որն ընտրվում է ավագության կարգով, իսկ կենտ թվով խաղացողի դեպքում՝ անկախ խաղացողին՝ *ճիպուկ* կամ *միջնախորոգ*, խաղի վերջում մնացողին՝ *զամեն* (ֆուտբոլի դեպքում՝ *վոտ*):

Խաղի կանոնները խախտողին Շիրակի մարզում անվանում են *դաղալ* կամ *հարամ*<sup>10</sup>:

Երևան քաղաքում խմբեր կազմելու ժամանակ նույնպես գերակշռում են *հաշվերգերն ու ոտքերով կատարված գործողությունները*, իսկ խմբի ղեկավարներն ունեն *ավագ* անվանումը<sup>11</sup>:

Խաղավարտի բանաձև-արտահայտություններն ու պատժաձևերի և խրախուսանքների մշակված համակարգը գրեթե բոլոր մարզերում առկա է բազմաթիվ տարբերակներով:

### Խաղի սկիզբը

Խաղը սկսելու կարգ է բանավոր խոսքի այն ձևը, որը հայտնի է *հաշվերգ*<sup>12</sup> անունով, իսկ խաղացող երեխաների մեկնությանը՝ հենց *հաշիվ*՝ «*եկեք հաշվենք*» կամ «*հաշիվ անենք*<sup>13</sup>» բանաձև-անվանաձևերով:

Հաշվերգին «հատուկ է մի օրենք՝ բանաստեղծական հանգավորման սկզբունքը<sup>14</sup>», իսկ վիճակահանությանը՝ գործողությունը: Այն իր առանձնա-

<sup>9</sup> ԴԱՆ 2010, ք. Գավառ, գ. Գեղարքունիք (Բաշքյան), գ. Նորատուս, Սարովան, Բատիկյան, Հայրավանք: ԴԱՆ 2011, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, գ. Վաղաշեն, Զոլաքար, Վարդենիկ, Վ. Գետաշեն:

<sup>10</sup> ԴԱՆ 2010, Շիրակի մարզ, ք. Գյումրի: ԴԱՆ 2012, Շիրակի մարզ, գ. Սառնաղբյուր: ԴԱՆ 2013, Շիրակի մարզ, ք. Արթիկ, գ. Հարուճ, Փանիկ:

<sup>11</sup> ԴԱՆ 2010-2017, ք. Երևան:

<sup>12</sup> Հաշվերգը հայերենում ունի իր նույնարմատ տարբերակները՝ *հաշիվ*, *հաշվերգ*, *հաշվե*, իսկ *ռուսերենում՝ счет, считать, считки, пересчет, считалка, задалка, ворожилка* (Науменко 1988, 25):

<sup>13</sup> ԴԱՆ 2009-2014 թթ:

<sup>14</sup> Науменко 1988, 26.

հատկություններով ու փոփոխություններով հանդերձ ունի այնպիսի կառուցվածք, որը հնարավոր է ձևավորել միայն դրանց տեքստերի փոխակերպումներն ի մի բերելով:

Խաղի սկզբում խմբերի են բաժանվում՝  
*առարկաներով,*  
*գործողությամբ և բանավոր տեքստով,*  
*հարց ու պատասխանով,*  
*տեքստով և ասերգով (recitando)<sup>15</sup>:*

Այս բոլոր ձևերով վիճակահանություններն ունեն հետևյալ պատկերը. ինչպես ավանդական խաղերում, այսօր էլ տարածված է առարկայով վիճակահանությունը. ինչ-որ բան են պահում՝ *քար, չոփ*, որոնք բնորոշ են 14-15 տարեկան պատանիներին: Վիճակահանության ավանդական տեքստերը հիմնականում պահպանվել են 4-14 տարեկան, իսկ վիճակահանությամբ գործողությունները՝ 15 տարեկանից բարձր երեխաների շրջանում: Հարկ է նշել, որ դրանք այսօր շատ թերի են և անհասկանալի:

Տեքստային հաշվերգերը ինչպես անցյալում, այսօր էլ լայն կիրառություն ունեն 4-10 տարեկան երեխաների շրջանում. դրանք դասակարգում ենք այսպես.

*Անհասկանալի տեքստով*, որը ձայնառիթմային է, չունի որոշակի սյուժե, անհասկանալի է, ասկայն ունի հանգավորում<sup>16</sup>.

99-ը, 9-ը, շոկո-լադը:

Կա-րա-մե-լա, մելա-մելա<sup>17</sup>:

Բուկտր, բուկտր, բե, բե,  
 Աբե, սաբե, գումարե,  
 Ռիկի, չիկի, տամարիկի,  
 Օն, ֆլեն, բլեն<sup>18</sup>:

Ատատա-բատատա շամամ շում,

Շամ շիբադիմ բիդամ բոմ,

Բոմբի ելիմ հոլոմ սիմ,

Մի պոեդեմ (поедим) օճո պլիս<sup>19</sup>:

*Պատմողական տեքստով*, որն ունի մտքի տրամաբանական ընթացք.

Վանքի տակից ջուր էր գնում,

Գիժ Նիկոլը տուն էր գնում:

<sup>15</sup> Արտասանական առույգությամբ երգելու մի ձև, որին բնորոշ է ազատ, ոչթմիկ արտահայտությունը (Մկրտչյան 2000, 29):

<sup>16</sup> Գրիգորյան 1970, Науменко 1988, 25:

<sup>17</sup> Մելա – մելա ասելու ժամանակ հաշվողը խաղացողի կզակի տակ խուտուտ է տալիս:

<sup>18</sup> ԴԱՆ 2011, Արագածոտնի մարզ, ք. Ապարան:

<sup>19</sup> ԴԱՆ 2014, Արարատի մարզ, գ. Ծաղկաշեն:

Չափը ձեռին չափում էր,  
Մատուշկեքին խաբում էր:

Ավտորուսը գալիս ա,  
Միջի կուկուն լալիս ա:  
Մի՛ լա, մի՛ լա, կուկու ջան,  
Հեսա մաման գալիս ա,  
Տաս չափալաղ (ապտակ) տալիս ա.  
Գնա գոմի դուռը բա՛ց,  
Նստի, ինչքան կուզես, լա՛ց<sup>20</sup>:  
Կատուն նստեց տաք-սի,  
Շոֆեռն ասեց.  
5 ուրբի:  
Կատուն ասեց.  
Թաղեն քեզ,  
Շոֆեռն ասեց.  
Ես էլ՝ քեզ.  
Տուրու-դմփոց-հիվան-դա-նոց:  
Նո՛ ց-նո՛ ց-նո՛ց՝ գե-րեզ-մա-նո՛ց<sup>21</sup>:  
Պայմոցի-դոցի-դոցի,  
Կարմիր քարս կորցը-րեցի.  
Ելա-մտա, գտա<sup>22</sup>:

Պատմողական տեքստի բնույթ ունեն նաև մանկական զվարճախոսությունները.  
Տոտան չաղ է, յուբկեն նեղ է,  
Տոտան տ..ց, յուբկեն ճղվեց<sup>23</sup>:

Ադին (один) կինտո կուպիլ (купил) մոծակ,  
Մոծակ կծեց կինտոյի ծ.կ,  
Կինտոն գնաց դոկտորի (доктор) մոտ,  
Դոկտորն ասեց՝ տա՛կ, տա՛կ, տա՛կ,  
Կլավանա կինտոյի ծ.կ<sup>24</sup>:

*Ռիթմիկ կամ ասերգ հաշվերգը*<sup>25</sup> առավել տարածված է հատկապես փոքր աղջիկների շրջանում: Ասերգ հաշվերգի հիմքում ձայնառիթմային

<sup>20</sup> ԴԱՆ 2009, Արարատի մարզ, գ. Ագատավան:

<sup>21</sup> ԴԱՆ 2011, Արագածոտնի մարզ, ք. Ապարան:

<sup>22</sup> ԴԱՆ 2010, Շիրակի մարզ, ք. Գյումրի:

<sup>23</sup> ԴԱՆ 2010, Շիրակի մարզ, ք. Գյումրի:

<sup>24</sup> ԴԱՆ 2012, Արարատի մարզ, գ. Մխչյան:

<sup>25</sup> Ավանդական հաշվերգերը ժամանակի ընթացքում իրենց կառուցից և իմաստային նշանակությու-  
նից շատ բան են կորցրել՝ ձեռք բերելով կամ տեքստային, կամ շարժական-երաժշտական բնույթ:

սկզբունքն է, կառուցվում է ծափ-զարկերով՝ վերաձվելով շարժական տեքստով երգային կրկներգերի: Դրանք երբեմն անհասկանալի են, կառուցված են յոթվանկանի երկու նույնահանգ տողերից և ունեն *պարերգային կառույց*, քանի որ կազմում են մի երկյակ և ասվում են միայն պարելու ժամանակ: Դրանց բնորոշ են շարժումը և խոսքը.

Երկու հոգի կանգնում են դեմ առ դեմ, ծափ տալիս, ապա հարվածում միմյանց ափերին՝ երգելով ու տեքստի վանկերին համապատասխանեցնելով.

Էն դեն դո՛րի, դո՛րի, դո՛րի, դո՛րի,

Չա՛փ, չա՛փ Մե՛ք-սիկա,

Չա՛փ, չա՛փ, Մե՛ք-սիկա.

Ակա դակա սինյո-րիտա, ֆո՛ւ, ֆո՛ւ,

Ակա դակա սինյո-րիտա, ֆո՛ւ, ֆո՛ւ,

Մարի-յո, Մարի-յո, թո՛ւ Ջե՛րի.

Օ՛քսա-բո՛քսա սինյո՛-րիտա.

Միկի մա՛-ուս<sup>26</sup>:

Էռո՛, վե՛-ռո ֆի՛քս,

Էռո՛, վե՛-ռո ֆի՛քս,

Ֆիլի գան-դո խու-դո՛ժ-նիկ:

Ալա-վերդի չիկի-չիկի.

Ա՛յ սեվա ռու՛մ-բա,

Ռու՛մ-բա ակա-դեմիա,

Ռու՛մ-բա, ռու՛մ-բա բո՛քս<sup>27</sup>:

Կան նաև միայն հանգավորման սկզբունքով հաշվերգեր, որոնք իրականում երկտողանի և քառատող բանաստեղծություններ են՝ հարմարեցված հաշվերգերին բնորոշ վանկատվածությանն ու շեշտադրությանը<sup>28</sup>.

Թոհ՛ր նամա՛կ, տե՛ղ հասի՛ր,

Դուռը թակի՛ր, նե՛րս մտի՛ր,

Եթե սերս քնա՛ծ է, սպա՛ - սի՛ր:

Գիշերը մո՛ւթ է, ցերեկը՛ լո՛ւյս է:

Ես քեզ սիրո՛ւմ եմ, թո՛ղ ասեն՝ սո՛ւտ է:

Խաղի ընթացակարգին հետևելը ևս խաղի կանոններից է, և ինչպես ավանդականում, արդի խաղերում ևս խաղի կանոնները խախտողին վատ են վերաբերվում, և թեև փոխվել են վերջինիս բնութագրող անվանումները, սակայն իմաստները նույնն են:

<sup>26</sup> ԴԱՆ 2012, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, գ. Կարբի:

<sup>27</sup> ԴԱՆ 2012, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, գ. Կարբի:

<sup>28</sup> Երեխաների խոսքում կիրառվում են վանկերի և շեշտերի վերաբերյալ իրենց կանոնները, որոնք ոչ միշտ են համապատասխանում հայերենի քերականական կանոններին:

Արդի միջավայրում կանոններ խախտողը որակվում է *անազնիվ, խարդախ, հարամ, դաղալ* և այլ հասկերոշիչներով:

Յ. Հայզինգան, կարգազանցներին որակելով *խաղադրուժ* և *անազնիվ խաղացող*<sup>29</sup> բառեզրերով, տարանջատել է նաև այդ հասկացությունները՝ խաղադրուժի կերպարն անվանելով «*վահկուր*»<sup>30</sup>: Հարկ է նշել, որ կարգազանցության պատճառների մեծ մասը ոչ միայն *դաղալությունն* է կամ *հարամությունը*, այլև խաղացողի ունակությունը:

### Խաղի վերջը

Խաղերն ունեն ինչպես սկզբի և ընթացքի, այնպես էլ ավարտի բանաձևեր, որոնք պայմանականորեն կարելի է համարել «*պարիժ*», այսինքն՝ պարտվողին տալ որակում՝ «*փայան դնել*», «*ծրտակ դնել*», «*ծու տալ*» և այլն: Դրանք լինում են տարբեր բնույթի, անհատի երևակայության արդյունք են, սակայն ենթարկվում են որոշակի չափորոշիչների. ամեն տարիքային խումբ խաղավարտի ժամանակ կիրառում է «պատժի» իր ձևը՝ ելնելով սեռատարիքային հնարավորություններից: Եթե խաղացողը խաղի ընթացքում «*արժանացել*» կամ «*վերցրել*» է ամենաշատ «*փայանը*, *ծուն* կամ *ծրտակը*» (ասենք՝ 5 ծու, 3 փայան, 2 ծրտակ), ապա նա պետք է լուծարի դրանք՝ կատարելով դրանց քանակին համապատասխան պահանջները: Այդ ժամանակ խաղի ավագը մյուս խաղացողների հետ իր ձեռքի մատները անվանակոչում է ծիծաղելի անուններով (հինգ ձվի դեպքում՝ հինգ անուն, երկուսի դեպքում՝ երկու) և պարտվողին առաջարկում է ընտրել: Այդուհետև՝ մինչև խաղի, երբեմն մինչև օրվա վերջը, նրան դիմում են իր ընտրած համապատասխան բանաձևային բնութագրմամբ՝ «*օյնից թոնող կապիկ*», «*դաղալի գլուխը ծակ ա*», «*դաղալի ուրը կարճ ա*», «*գորտի աղիք ուրող*», «*աղջկա, դեբիլի ֆուֆլու*», իսկ իրենց ասածը հավաստիացնում են հետևյալ կերպ. մատը գետնին դնելով՝ ասում են. «*Շուր եմ ասել՝ թու՛ փեչապ, Ասրվածի սիկրեպ (секрет-գաղտնիք) ու այբուբենի*». դա ուղղակիորեն կապվում է անազնիվ ու խարդախ խաղացողի վարքի հետ:

Ուշագրավ է, որ *թու՛ փեչապը* համեմատելի է աստվածային կարգ ու կանոնի հետ, որը կիրառելու դեպքում միայն խաղացողի մեջ կառաջանա կարգուկանոնի՝ խաղի մեջ մնալու ձգտում և խաղալու ցանկություն: Հայոց այբուբենը՝ որպես վկայակոչում, այստեղ կարող ենք հասկանալ այն իմաս-

<sup>29</sup> Ս. Մալխասյանցի բառարանում այն նույնանիշ է խաղանենգին (Մալխասեանց 1944, 231): Ըստ է. Աղայանի՝ դա նենգ, խարդախ, դավաճան խաղացողն է (Աղայան 1976, 556):

<sup>30</sup> Հայզինգա 2007, 22:

տով, որ դա մեջբերվում է որպես կանոնը հաստատող կնիք: Այդ բանաձևի մեջ կարելի է տեսնել նաև խաղի գեղագիտական<sup>31</sup> հատկանիշները<sup>32</sup>:

Բանաձևային այս բնութագրումները հիմնականում կիրառվում են մանկական տարիքի երեխաների շրջանում, սակայն ամեն տարիքային խումբ ևս ունի «փալան, ձու կամ ծրտակ» վերցնողի համար նախատեսած իր պահանջները, որոնք «դրվում են» ոչ թե խաղի ավագի ձեռքի մատներին, այլ տրվում են հանձնարարության ձևով. սա վերաբերում է պատանիների խաղերին<sup>33</sup>:

Մինչև 5 տարեկան երեխաների շրջանում դրանք ունեն *նմանակման կամ ուսուցողական բնույթ*<sup>33</sup>՝ աքաղաղի պես կանչել, կատվի պես մլավել, մի երգ երգել կամ մի ոտանավոր ասել:

6-7 տարեկան երեխաների համար պահանջները *մտավոր-գարգացնող* բնույթի են՝ երկու առարկաների միջև գտնել նմանություն, լուծել մի հանելուկ, պատմել մի փոքրիկ պատմություն:

8-10 տարեկան երեխաներին տրվում են *տրամաբանական* կամ *գիտելիքները ստուգող* հարցեր կամ առաջադրանքներ՝ արձան դառնալ (խաղացողները մոտենում են և բարձրացնում պատիժ կրողի ոտքը, ձեռքը, կամբում և այլն), որևէ բառի առաջին տառը փոխելով՝ արագ-արագ ասել այնպիսի միավանկ բառեր, որ իմաստ կունենան՝ շուն, տուն, բուն, քուն և այլն, դառնալ հայելի (կատարում է խաղացողների շարժումները), պատի վրա իր ձեռքերի ստվերներով մի բան պատկերել, ձախ ձեռքով գրել խաղացողների անունները, միաժամանակ ծիծաղել և լաց լինել, միաժամանակ երգել և պարել կամ որևէ մեկի 10 հատկանիշները լսելով՝ գուշակել նրա ով լինելը:

Արական սեռի տարիքային խմբերում կիրառվում են այլ բնույթի «պատիժներ», որոնք ենթադրում են *ուժային փորձություններ ու տրամաբանություն*<sup>33</sup>՝ առանց ձեռքերի օգնության նստել գետնին և վեր կենալ, առանց ձեռքերի օգնության մի ոտքով իջնել և առանց գետնին դիպչելու վեր կենալ, գտնել թաքցրած իրը՝ կողմնորոշվելով սուլելու կամ երգելու ձայնից, կանգնած դիրքով՝ համբուրել իր ոտքերը, կապված ասքերով, շոշափելով որոշել խաղացողի ով լինելը, մինչև հարյուրը հաշվել և մեկերը չասել, պատաս-

<sup>31</sup> Кант 1991, 56: Ի. Կանտն առաջինն է խաղի էությունն օգտագործել մարդկային գործունեության գեղագիտական իմաստավորման համար. «Խաղը և գեղարվեստական գործունեությունը նման են իրար իրենց ազատությամբ: Դրանք երկուսն էլ, ի տարբերություն գործնական զբաղմունքների, չեն հետապնդում արտաքին նպատակ: Պոեզիան և արվեստի ուրիշ ձևերը մարդու հոգևոր ուժերի ազատ խաղերն են: Պոեզիան, ինչպես խաղը, ստեղծում է պատրանք՝ «խաղացող տեսանելիություն», ...այն պատրանքները, որոնք մեզ խաբում են, առաջացնում են խորշանք, երբ խաբեությունը բացվում է: Սակայն բանաստեղծական պատրանքը չի ստում, այլ խաղում է երևակայության հետ: ...Եվ քանի որ այն միայն խաղում է մեզ հետ, առաջացնում է հաճույք»:

<sup>32</sup> Ըստ Յ. Հայզինգայի՝ խաղի հատկանիշներն են՝ ազատությունը, անշահախնդրությունը, զատվածությունը կամ սահմանափակվածությունը, «անիրականությունը» և կանոնակարգվածությունը (Հայզինգա 2007, 6-45):

<sup>33</sup> Պատժաձևերի տարբերակները գրառվել են 2008-ից 2015 թթ., մեր դաշտային աշխատանքների ընթացքում, գրեթե բոլոր մարզերում:

խանել հարցերի, ընդ որում՝ այդ պատասխաններից առաջինը պետք է սկսվի «այո» խոսքով, իսկ երկրորդը՝ «ես»-ով և այլն:

15 և ավելի բարձր տարիքի խաղացողների համար *փորձություններն ավելի բարդ են*՝ գոտիով, ճիպոտով հարվածներ ստանալ, ձեռքերի վրա կանգնել՝ ոտքերը դեմ տալով պատին և այլն:

Այսպիսով՝ խաղի կարգազանցների կամ պարտվողների համար պահանջները լինում են ֆիզիկական, մտավոր-գարգացնող և հոգեբանական: Ընդ որում, դրանք կարող են լինել պարզից մինչև վիրավորական աստիճանի, դրա համար էլ երբեմն նման պատիժների հետևանքներից խուսափելու համար երեխաների միջավայրում կիրառվում է հետևյալ արտահայտությունը. «*Իմ փայով փայ ասողը... փայի վրա փայ դնողը...*»<sup>34</sup>: Այս «բանաձև-հայիոյանքը» հնարավորինս արագ ասվում է այն ժամանակ, երբ խաղի ավագը, պայմանավորվածության համաձայն, պատրաստվում է կիրառել որևէ պատիժ:

Խաղի կանոններին ենթարկվելու, ազնիվ ու արդար խաղալու ժամանակ երեխան սովորում է ձեռք բերել պայքարելու և պարտությանը դիմակայելու կամք, հակառակ դեպքում նա գիտի, որ սահմանվում են *պատիժներ*, ընդհուպ մինչև խաղից վտարում:

Արդի խաղային միջավայրն անհնար է պատկերացնել առանց խմբի ավագների, որոնք ավանդականի նման ընկալվում են որպես խաղի կազմակերպիչ և ղեկավար, սակայն չունեն այն բնորոշումները, որոնք կային ավանդական, խորհրդային և հետխորհրդային շրջանում: Եթե անցյալում և խորհրդային փուլում խմբի ավագը մեծ մասամբ կոչվում էր *մեր, պասպ* կամ *բաշ* և այլն, և խմբերը կազմվում էին՝ հաշվի առնելով խաղացողներից ամենամեծի տարիքը, ապա այսօր նրանք կոչվում են *ավագ*: Վերջինիս ընտրության առումով առավել տարածված էր ամենաճարպիկ խաղացողի՝ «*պեռվին ես եմ*» (я первый) արտահայտությունը: Խմբի ավագներն այժմ նշանակվում են նաև ավանդական վիճակահանության ձևերով, բայց ո՛չ տեքստերով՝ միաժամանակ փոխելով այդ գործողությունների անուններն ու մասամբ էլ՝ կարգը: Ներկայումս պարտադիր չէ, որ խաղի կանոնները թեյադրեն տարիքով առավել մեծերը:

Արդի խաղերում ևս խմբի ավագը իրականացնում է կազմակերպչական, խաղի կառույցի կամ խաղային տարածության գծագրման, իր և հակառակորդ խմբի խաղացողների վարքի վերահսկման և միավորները հաշվելու գործառույթները:

### **Եզրակացություններ**

Այսպիսով՝ մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ ներկա օրերում՝ Խաղերը սկսվում են հաշվերգով և վիճակահանությամբ:

<sup>34</sup> ԴԱՆ 2014, ք. Երևան:

Վիճակահանությունները կատարվում են առարկաներով, քայլերով, ձեռքերով, հարց ու պատասխանով, ֆիզիկական ուժի ցուցադրությամբ:

Խաղերում հաշվերգերն անհասկանալի են, պատմողական կամ ռիթմիկ երգեցողության բնույթի են:

Պահպանվել են խաղի ձևերն ու կառուցվածքը, իսկ տեքստերն ու խաղը սկսող գործողությունները ենթարկվել են փոփոխության:

Խաղերում կենցաղավարում են զվարճախոսություններ:

Տարածված են խաղը սկսելու վիճակահանության ավանդական կարգը, ինչպես նաև՝ «ինքնակոչ ձևով» որևէ ճարպիկ խաղացողի՝ իրեն խաղի ավագ հռչակելու սովորությունը:

Խմբերի ավագներն իրականացնում են գրեթե նույն գործառույթները, ինչը որ եղել է ավանդաբար:

Արդի խաղային միջավայրում խաղերի կանոններն առավել պարզ են:

Խաղը չունի տրամաբանություն (տրամաբանության մեջ չկան պատահականություններ) և միշտ ենթակա է պատահականության սկզբունքին. այն ունի ներքին տրամաբանություն, և դա երկու հակառակորդ կողմերի լարման, մրցելու մղումն է, որը գրեթե միշտ ընկալվում է որպես խաղի նպատակ:

Ժողովրդական խաղի մեջ կա երկու իրավիճակ՝ գործողություն և դրություն: Գործողությունը խաղացողի ներքին նպատակն արտահայտող ընթացքն է կամ ընթացակարգը, իսկ դրությունը՝ այդ ընթացակարգից դուրս գալու ներքին մղումը:

### **Օգտագործված գրականություն**

- Աղայան Էդ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան (ԱՀԲԲ), հ. 1, Երևան, «Հաստան», 1615 էջ:
- Ասատրյան Հ., ԴԱՆ 2009, ՀՀ Արարատի մարզ, գ. Ազատավան, բանասաց՝ Հակոբյան Կարեն Արտակի, ծնվ.՝ 1999 թ.:
- Ասատրյան Հ., ԴԱՆ 2010, ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, բանասաց՝ Սահակյան Վարազդատ Վարդանի, ծնվ.՝ 1998 թ.:
- Ասատրյան Հ., ԴԱՆ 2011, ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, բանասաց՝ Հակոբյան Հասմիկ Էդիկի, ծնվ.՝ 1998 թ.:
- Ասատրյան Հ., ԴԱՆ 2011, ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, բանասաց՝ Պարույրյան Մարիամ Արարատի, ծնվ.՝ 1983 թ.:
- Ասատրյան Հ., ԴԱՆ 2012, ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, գ. Կարբի, խաղը ներկայացնողներ՝ Վահրամ և Ալվինա Վարդանյաններ (ծնվ.՝ 2000 թ. և 2002 թ.):
- Ասատրյան Հ., ԴԱՆ 2012, ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, գ. Կարբի, բանասաց՝ Հայրապետյան Արևիկ Տիգրանի (1999 թ.) և խաղը ներկայացնողներ՝ Հայրապետյան Անուշիկ Տիգրանի (2001 թ.), Հայրապետյան Էլֆոնդ Տիգրանի (2004 թ.), Հայրապետյան Կարապետ Բաբկենի (2001 թ.), Հայրապետյան Համլետ Բաբկենի (2003 թ.):
- Ասատրյան Հ., ԴԱՆ 2012, ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, գ. Կարբի, խաղը ներկայացնողներ՝ Վահրամ և Ալվինա Վարդանյաններ (ծնվ.՝ 2000 թ. և 2002 թ.):

- Ասատրյան Հ., ԴԱՆ 2012, ՀՀ Արարատի մարզ, Արտաշատի տարածաշրջան, գ. Մխչյան, բանասաց՝ Օհանյան Փիրուզա Ռաֆիկի, ծնվ.՝ 1969 թ.:
- Ասատրյան Հ., ԴԱՆ 2013, ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, բանասաց՝ Ավետիսյան Լուսինե Արտավազդի, ծնվ.՝ 1985 թ.:
- Ասատրյան Հ., ԴԱՆ 2013, ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, բանասաց՝ Սայադյան Արման Արկաղիի, ծնվ.՝ 2007 թ.:
- Ասատրյան Հ., ԴԱՆ 2014, ՀՀ Արարատի մարզ, գ. Ծաղկաշեն, բանասաց՝ Հովհաննիսյան Թագուհի Լևոնի, ծնվ.՝ 1991 թ.:
- Ասատրյան Հ., ԴԱՆ 2014, ք. Երևան, խաղը ներկայացնող՝ Բաբայան Արեգ Վարդգեսի, ծնվ.՝ 2003 թ.:
- Բդոյան Վ. 1983, Հայ ժողովրդական խաղեր, հ. III, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 252 էջ:
- Գրիգորյան Ռ. 1970, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 465 էջ:
- Հայզինգա Յ. 2007, Homo Ludens. Մշակույթի խաղային տարրի սահմանման փորձ, թարգմ.՝ Սամվել Խոռաթյանի, առաջաբանը, հոդվածը՝ Հ. Հովհաննիսյանի, Երևան, «Սարգիս Խաչենց», «ՓՐԻՆԹԻՆՖՈ», 373 էջ:
- Մալխասեանց Ս. 1944, Հայերէն բացատրական բառարան, հ. 2 Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 512 էջ:
- Մկրտչյան Ն. 2000, Երաժշտական բառարան, Երևան, «Մշակույթի հայկական ֆոնդ», 296 էջ:
- Гадамер Х. 1988, Истина и метод, Основы философской герменевтики, Москва, «Прогресс», 637 с.
- Гирц К. 2004, Интерпретация культур, пер. с англ., Москва, «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 560 с.
- Кант И. 1991, Тартуская рукопись. Эстетика Иммануила Канта и современность, Москва, «Знание», 64 с.
- Науменко Г. 1988, Дождик, дождик, перестань! Русское народное детское музыкальное творчество, Москва, «Советский композитор», 192 с.

## СОВРЕМЕННЫЕ ПРОЯВЛЕНИЯ ПРАВИЛ НАРОДНОЙ ИГРЫ

Рипсима Асатрян

Резюме

Народная игра подчиняется принципу случайности и имеет внутреннюю логику, проявляющуюся в соперничестве двух противостоящих сторон, которое, воспринимаясь как цель, создает в игре две ситуации: действия и положения. Действие рассматривается как процесс или процедура, выражающая внутреннюю цель игрока, а состояние – как внутреннее побуждение выйти из этой процедуры.

В народной игре есть правила и неканонические нормы. При всем при этом она носит спонтанный характер, и её «внутренняя» свобода проявляется в стремлении игрока соревноваться, победить и завоевать приз. А внешняя свобода игрока ограничивается следующими критериями контроля: правилами-

подсчетом и жеребьевкой в начале игры, разработанной системой наказаний и поощрений.

В играх есть формулы не только начала, но и хода и конца, которые мы условно считаем «наказанием». Для нарушителей правил игры или проигравших эти наказания бывают физическими, умственно развивающими и психологическими. В современной игровой среде большую роль играют старейшины группы, которые, как и в традиционной, воспринимаются как организаторы и лидеры игры, выполняющие функции организации, построения структуры игры или игрового пространства, контроля поведения игроков своей и соперничающей группы и подсчета очков.

**Ключевые слова** – игра, правило, жеребьевка, ничья, победитель, проигравший, пенальти.

## MODERN MANIFESTATIONS OF THE RULES OF THE FOLK GAME

Hripsime Asatryan

### Abstract

The folk game is always subordinated to the principle of chance and has an internal logic: it is the desire for tension, rivalry between two opposing sides, which, being perceived as a goal, creates two situations in the game: actions and positions. We consider an action as a process or procedure expressing the player's inner goal, and a state as an inner urge to get out of this procedure.

There are rules and non-canonical norms in the folk game. With all this, it is completely free, spontaneous, and its inner freedom is manifested in the player's inner desire to compete, win, and take a prize. And the player's external freedom is limited by the following control criteria: rules-counting and drawing lots at the beginning of the game, the organizer and captains, formulas and expressions of the end of the game, a developed system of punishments and rewards. Games have formulas not only for the beginning, but also for the course and the end, which we conditionally consider "punishment". For violators of the rules of the game or losers, these punishments can be physical, mentally developing and psychological. In the modern gaming environment, the elders of the group play an important role, who, as in the traditional one, are perceived as organizers and leaders of the game, performing the functions of organizing, building the structure of the game or game space, controlling the behavior of players of their own and rival groups and scoring points.

**Key words** – game, rule, results, draw, winner, loser, penalty.

# ԼՃԱՇԵՆԻ ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ԴԱՄՔԱՐԱՆՆԵՐԸ

## Նորա Ենգիրարյան

Պատմական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրություն ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Չարենցի 15  
Էլ. հասցե՝ norayengibaryan@gmail.com  
ORCID: 0009-0007-0508-1187

Հոդվածը ներկայացվել է 01.09.2023, գրախոսվել է 20.02.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.1-313

### Ամփոփում

Լճաշեն գյուղի պոլիլիինիկայի շինարարության ընթացքում բացվել են դամբարաններ, որոնց վերգետնյա կառույցները չեն պահպանվել: Դամբարանախցերն ուղղանկյուն են՝ երեք քարաշար և մեկ հիմնահողային պատերով: Նման կառուցվածքով բազմաթիվ խցեր կան Լճաշենի դամբարանադաշտում: Դամբարաններից մեկում կատարվել է կրկնակի թաղում: Երկրորդ թաղումից պահպանվել են մ.թ.ա. VI-IV դդ. թվագրվող երկու երկաթե դանակներ:

Դամբարանների հիմնական թաղումներին ուղեկցող իրերից պահպանվել են միայն խեցանոթներ: Հայտնաբերվել են տարբեր չափերի խոհանոցային և երկկանթ կճուճներ, անկանթ, ելուստավոր և միականթ սափորներ, անկանթ և կանթով գավաթներ, թաս ու քրեղան: Խեցանոթները սև և մոխրագույն են՝ զարդարված կանյուրներով, գծագրերով, հասկանախշով, ակոսներով, ալիքագծով, կամարներով: Հայտնաբերված իրերը և դրանց հարդարանքի տարրերը նույնական են մ.թ.ա. IX-VIII դդ. դամբարանային համալիրների, Մեծամորի, Դվինի Կարմիր բլուրի՝ ուրարտական արշավանքների ժամանակ ավերված շերտերի նյութերի հետ: Ներկայացվող դամբարանները ժամանակագրվում են մ.թ.ա. IX դ. վերջ - VIII դ. սկզբով:

**Բանալի բառեր՝** Հայաստան, Սևանա լճի ավազան, Լճաշեն, երկաթի դարաշրջան, քարարկղային դամբարան, խեցանոթներ, երկաթե դանակ:

### Ներածություն

Լճաշենի հնավայրի մասին առաջին հիշատակությունը կապված է այժմյան գյուղի տարածքում գտնվող ուրարտական սեպագիր արձանագրության հետ, որը հայտնի է դարձել 1883 թ.: Անցյալ դարասկզբին՝ 1906-1908 թթ., Ե. Լալայանը Սևանի ավազանում պեղումներ կատարելու ժամանակ աշխատել է նաև Լճաշենի Քոեր տեղամասում<sup>1</sup>: Գյուղի և լճի ջրերից ազատված տարածքների դամբարաններում պարբերական պեղումները սկսվել են 1956 թ. Հ. Մնացականյանի կողմից (295 դամբարան)<sup>2</sup>: Դամբարանների փոքրաթիվ խումբ պեղել է Վ. Ավետյանը: Դամբարանադաշտում և գյուղի տարած-

<sup>1</sup> Լալայան 1931, 105:

<sup>2</sup> Վարդանյան 2023, 10:

քում պեղումներ է կատարել նաև Լ. Պետրոսյանը: Նա պեղել է Լճաշեն գյուղի պոլիկլինիկայի շինարարության ժամանակ պատահականորեն բացված, տարբեր ժամանակաշրջաններով թվագրվող դամբարաններ (թվով՝ 223): Դրանցից ներկայացնում ենք երկուսը:

### Դամբարաններ

Շինարարական աշխատանքների հետ կապված, դամբարանների վերգետնյա հատվածները, մասամբ էլ խցերը ավերվել էին<sup>3</sup>: Թաղումների դամբարանային կառույցները նույնական են՝ պատերից երեքը քարաշար են, մեկը՝ հիմնահողային<sup>4</sup>: Լճաշենի դամբարանադաշտում դա դամբարանային կառույցի տարածված ձև է<sup>5</sup>:

*Դամբարան 01.* մասնակի ավերված դամբանախցի վրա պահպանվել էր հարավային կողմի ծածկասալը (1,3x1,2 մ): Ուղղանկյուն հատակագծով քարարկղային դամբանախուցը (1,3x0,8x0,8 մ) ուղղված էր հյուսիս-հարավ առանցքով: Խցի երկայնական պատերը շարված էին միջին մեծության քարերով: Լայնական պատերից հարավայինը շարված էր մանր քարերով, հյուսիսայինը հիմնահողային էր: Դամբանախցի անխաթար մնացած հատվածից հայտնաբերվեցին խեցանոթներ, երկաթե դանակի մանր բեկորներ և ննջեցյալի գանգը: Խցի ավերված մասում բացվեցին հողի հետ խառնված խեցանոթների բեկորներ, մարդկային և կենդանական ոսկորներ<sup>6</sup>: Թաղմանն ուղեկցող գույքից հնարավոր է ներկայացնել անկանթ (նկ. 1/3, նկ. 2/3-5), երկկանթ (նկ. 1/5-7) կճուճներ, մեկ կանթով (նկ. 1/4) և ելուստկանթով (նկ. 1/8) սափորներ, գավաթ (նկ. 1/2), քրեղան (նկ. 1/1):

*Դամբարան 04.* խցի ուղղվածությամբ և ձևով կրկնում է նախորդին, ծածկասալերը և հարավային պատը բացակայում էին: Դամբարանախուցը օգտագործվել է երկու անգամ, կատարված թաղումների միջև առկա էր հողի մոտ 10 սմ միջնաշերտ: Վերին թաղմանն ուղեկցող իրերից են խեցեղենի մանր բեկորներ, երկաթե երկու դանակ (նկ. 2/1, 2): Միջնաշերտի տակ կատարված թաղումից պահպանվել էին երկու ննջեցյալի ոսկորների մնացորդները, տարբեր չափերի երկու կճուճ (նկ. 2/7, նկ. 3/3), կանթով թաս (նկ. 3/1), գավաթներ (նկ. 3/2, 4-6), անկանթ (նկ. 2/8) և միականթ սափորներ (նկ. 2/6, նկ. 3/7-9):

*04 դամբարանի վերին թաղումը.* այս թաղմանն ուղեկցող իրերից պահպանվել են երկու դանակ: Դրանցից մեկը դաստակավոր է, ուղիղ

<sup>3</sup> Շնորհակալություն ենք հայտնում հնագետ Լ. Պետրոսյանին նյութը տրամադրելու համար: Պեղումները ներկայացնող նրա հաշվետու հոդվածում տրված են միայն դամբարանների նկարագրությունները (Պետրոսյան 1993, 41-42): Դամբարանները ներկայացվում են ըստ դաշտային համարակալման:

<sup>4</sup> Կարծում ենք՝ դամբարան 04-ի հյուսիսային ավերված պատը նույնպես եղել է հիմնահողային:

<sup>5</sup> Պետրոսյան 2018, 69-92:

<sup>6</sup> Մարդաբանական և կենդանաբանական նյութերի մասին տվյալներ չկան:

շեղբով, պահպանվել է դաստապանն ամրացնող գամը (նկ. 2/2): Դանակը ձևով կրկնում է զարգացած երկաթի ժամանակաշրջանի նմուշները, որոնք Սևանի ավազանում հայտնի են Նորատուսից, Կարճաղբյուրից, Աստղածորից, Շեյթան դաղից (Լոռի)<sup>7</sup>:

Երկրորդ դանակն այն տարբերակներից է, որոնց դաստակը շեղբի շարունակությունն է կազմում: Դանակը նույնատիպ օրինակներից տարբերվում է դաստակին բացված ձվաձիթ բացվածքով (նկ. 2/1): Դաստակին տարբեր ձևի և մեծության բացվածք ունեցող այս դանակների երկարությունները խիստ տարբերվում են (15 սմ-ից մինչև 52 սմ)<sup>8</sup>: Նման դանակներ հայտնի են Բերդից (չորս), Ջրառատից (երեք), Մուսիերիից (երկու), Թեղուտից, Աչաջրից, Ախթալայից, Ջուջևանից<sup>9</sup>: Դանակների այս տարբերակը լայն տարածում չունի, հիմնականում հայտնաբերվել է Հայաստանի հյուսիսային շրջաններից: Այս հանգամանքը ժամանակին Ս. Եսայանին հիմք է տվել դրանք համարել տեղական արտադրանք Հայաստանի հյուսիսային շրջանների համար<sup>10</sup>: Դանակներն ուղեկցող այլ իրերի բացակայության պարագայում նմանօրինակ նյութերով թվագրվում են մ.թ.ա. VI-IV դդ.-ով:

Քննարկվող դամբարանների հիմնական թաղումներից հայտնաբերված խեցեղենը սև և մոխրագույն է կամ ունի այդ գույների երանգներ:

*Կճուճներ*<sup>1</sup> լայնաբերան, դեպի վեր լայնացող (նկ. 2/5, 7) կամ երկկոն իրանով (նկ. 1/3, 3/3), կարճ վզով, եզրը կլորացող (նկ. 2/3, 4) կամ քիչ դուրս ճկված (նկ. 1/2, 2/5, 7, 3/3) շուրթով անոթներ են: Հարդարված են մեկ կամ երկու շարք հատիկաշար և ալիքագիծ գոտիներով: Սևանի ավազանի երկաթեդարյան նյութերի մեջ նման զարդագոտիով կճուճների օրինակները շատ չեն (Հայրավանք, Ծովազարդ, Կարճաղբյուր):

Կճուճների՝ ոչ լայն բերանով, երկկոն իրանով տարբերակը (նկ. 1/3, նկ. 3/3) ևս հարդարանքի նույն տարրերով է, միայն թե նմուշներից մեկի զարդագոտին լրացված է չորս գնդաձև ելուստներով: Լճի ավազանից անոթի նման օրինակներ հայտնի են Հայրավանքից<sup>11</sup>:

*Երկկանթ կճուճներ*. ձգված (նկ. 1/7) կամ ուռուցիկ (նկ. 1/5, 6) իրանով, շատ կարճ վզով, կլորացող եզրով քիչ դուրս թեքված շուրթով անոթներ են: Իրանի ուռուցիկ մասում տեղադրված են կիսաշրջանաձև կանթերը, մեկ օրինակի վրա դրանք ելուստավոր են (նկ. 1/6): Անոթները հարդարված են զուգահեռ գծերով և իրանի կենտրոնով անցնող ալիքագծով: Սևանի ավա-

<sup>7</sup> Morgan 1889, fig. 121/1,4, Yengibaryan 2002, pl. XV/1,8, Yengibaryan 2019, fig. 10/26.

<sup>8</sup> Мнацаканян, Тирацян 1961, 71, Չիլինգարյան 1971, 69:

<sup>9</sup> Morgan 1889, 131, fig. 125, Мнацаканян, Тирацян 1961, таб. 1, Мартиросян 1961, рис. 386, Есаян 1969, 288, таб. II/5, 6, Չիլինգարյան 1971, տախտակ 1/1, Мартиросян 1974, рис. 89a/1, Есаян 1976, таб. 138/4:

<sup>10</sup> Есаян 1969, 288.

<sup>11</sup> ՀՊԹ գույք N 2552/87, 2601/112:

զանի հուշարձաններից երկկանթ կճուճները հայտնի են Ծովագարդի, Հայրավանքի, Կարճաղբյուրի դամբարաններից<sup>12</sup>: Խեցանոթների այս տեսակը տարածված և հայտնի է Արտաշավանի, Շիրակավանի, Կառնուտի, Ջրափիի, Արթիկի դամբարաններից<sup>13</sup>:

*Սափորներ.* երեք տարբերակով են՝ առանց կանթի, ելուստ-կանթով և միականթ: Անկանթ սափորից պահպանվել է իրանի վերին գնդաձև մասը, ունի կարճ վիզ, դուրս թեքված շուրթ (նկ. 2/8): Զարդարված է գծապատկեր հասկանախշով կամարներով և վզի տակ ալիքագիծ ու ակոսաշար գոտիներով: Սափորների այս տարբերակի նման օրինակներն առկա են Կարճաղբյուրի, Քուչակի, Արտաշավանի դամբարանային նյութերում<sup>14</sup>:

Ելուստ-կանթով սափորը ստորին մասում դեպի վեր լայնացող, վերին մասում ուռուցիկ իրանով, կարճ վզով, դուրս թեքված, կլորացող շուրթով անոթ է, ուսին՝ ելուստաձև, անցքավոր կանթ (նկ. 1/8): Սափորի իրանի վերին մասում ելուստ-գոտիների մեջ պատկերված են ակոսագծերով եզերված թեք հատիկաշար և իրար մեջ ներգծված խազագիծ, կամարաձև նախշեր: Նման ելուստ-կանթով սափորներ հայտնի են Հայրավանքից, Արտաշավանից, Քուչակից<sup>15</sup>:

Երրորդ տարբերակը կազմող միականթ սափորներն ուռուցիկ (նկ. 1/4) կամ երկկոն (նկ. 2/6, նկ. 3/7-9) իրանով, գլանաձև վզով, լայնացող բերանով, եզրը կլորացող շուրթով անոթներ են: Կանթերը շուրթից միանում են իրանի վերին մասին: Սափորներից մեկը հարդարված է իրանի ստորին մասով անցնող զույգ խորակոս և ուսին արված խազագծերով եզերված հասկանախշ գոտիներով (նկ. 1/4): Մյուս չորսը զարդարված են կանեյլորներով, երեքը ուսի վրա ունեն նաև ակոսագծեր (նկ. 2/6, նկ. 3/7, 8): Որպես խեցանոթների հարդարանքի տարր՝ հասկանախշը և կանեյլորները հիմնականում հանդիպում են մ.թ.ա. IX-VIII դդ. սկզբի խեցանոթների վրա<sup>16</sup>: Կանեյլորագարդ, միականթ սափորների զուգահեռներ կան Մեծամորի, Սիսիանի, Անգեղակոթի, Շիրակավանի դամբարաններում<sup>17</sup>:

<sup>12</sup> ՀՊԹ գույք N 2552/85, 3024/21. Մնացականյան 1952, նկ. 4:


<sup>13</sup> Хачатрян 1979, погр. 218, 221, 223, 420, Աւետիսեան և այլք 1998, աղ. ԺԲ/19. Թորոսյան և այլք 2002, աղ. LXXVI/4, LXX/6, LXXVI/20-22, Badalyan, Avetisyan 2007, 151, Pl. I/1-3, Խաչատրյան և այլք 2019, աղ. 3/3, 10/3:

<sup>14</sup> Петросян 1989, таб. 65/3, 66/2, Աւետիսեան և այլք 1998, աղ. ԺԲ/18, Yengibaryan 2002, pl. IV/9, Ավետիսյան, Ավետիսյան 2006, աղ. 33/5, Պետրոսյան 2016, I/3:

<sup>15</sup> ՀՊԹ գույք N 2552/82, 2601/111, Петросян 1989, таб. 65/1, 2, Աւետիսեան և այլք 1998, աղ. Ե/5, ԺԲ/5, Պետրոսյան 2016, աղ. V/4:


<sup>16</sup> Եսայան 1967, աղ. XIII/12, 13, 15-18, Խանզադյան և այլք 1973, նկ. 61-63, 122-125, 127, Ենգիբարյան 2010, աղ. I/3, աղ. II/4, աղ. IV/9:

<sup>17</sup> Խանզադյան և այլք 1973, աղ. XXXVI/1, Թորոսյան և այլք 2002, LXVII/3, 5, Xnkikyan 2002, XLVII/ 6, XLIX/4, LIV/27:




նկար 1

**Նկ. 1.** 1-8՝ դամբարան N 01, 1. քրեղան, 2. միականթ գավաթ, 3. կճուճ, 4. միականթ սափոր, 5-7. երկկանթ կճուճ, 8. ելուստ-կանթով սափոր



նկար 2

**Նկ. 2.** 1-5՝ դամբարան N 01, 6-8՝ դամբարան N 04, 1-2 երկաթե դանակ, 3-5 կճուճ, 6. սափոր՝ միականթ, թեղի, 7. կճուճ, 8. սափոր



**Նկ. 3.** դամբարան N 04, 1. թաս, 2-3. կճուճ, 4-6. միականթ գավաթ, 7-9. միականթ սափոր

*Գավաթներ.* երկու տարբերակով են՝ կանթով և անկանթ: Անկանթը երկկոն իրանով, հարթ հատակով, կլորացող եզր ունեցող ուղիղ շուրթով անոթ է (նկ. 3/2): Գավաթի իրանի կենտրոնով անցնում է հատիկաշար, իսկ վզից իրանին անցման մասում ելունդագոտիներ են: Անոթի նման օրինակ գտնվել է Աստղածորի N 2 դամբարանում<sup>18</sup>:

Երկրորդ տարբերակը կազմող կանթավոր գավաթները չորսն են. հարթահատակ, լայնացող կամ ուռուցիկ իրանով, շուրթերը կլոր, դուրս ծավաճ: Կանթերը շուրթից միանում են իրանի կենտրոնին (նկ. 1/2, 3/4, 5) կամ վերին մասին (նկ. 3/6): Կանթերից մեկը ելուստավոր է (նկ. 1/2): Միականթ գավաթները երկաթեդարյան տարածված խեցետեսակ են, ներկայացվող օրինակներն իրարից տարբերվում են անոթի ձևով՝ դեպի վեր աստիճանաբար լայնացող են կամ գնդաձև իրանով: Զարդարված են ակոսագծերով, ելունդագոտիով, մեկ օրինակը՝ նաև կանեյուրներով: Այս գավաթների զուգահեռները մ.թ.ա. IX-VIII դարերով թվագրվող դամբանային համալիրներում են (Մեծամոր, Էլառ, Շիրակավան, Զորաքարեր)<sup>19</sup>:

Հայտնաբերված խեցեղենի վերջին տեսակը մեկական օրինակով ներկայացված թասն ու քրեղանն են: Թասը կիսագնդաձև իրանով, ներս թեք-

<sup>18</sup> ՀՊԹ գույք N 1908/24:

<sup>19</sup> Խանգաղյան և այլք 1973, նկ. 168, Խանգաղյան 1979, աղ. XX/1, Թորոսյան և այլք 2002, LXXI/15, LXXV/7, LXXIV/14. Xnkikyan 2002, pl. LIII/32, 33:

ված շուրթով է, ուսի վրա ունի իրանին զուգահեռ, անցքավոր կանթ (նկ. 3/1): Սույն թասը ձևով նման է Մեծամորից հայտնաբերված ակոսազարդ իրաններով համաժամանակյա նմուշներին<sup>20</sup>:

Քրեղանը փռված իրանով, ընդգծված կողով, դեպի ներս թեք կտրված շուրթով խեցանոթ է (նկ. 1/1): Նման օրինակներ առկա են Լոռի բերդի, Ջրափիի դամբարանների նյութերում<sup>21</sup>:

### Եզրակացություններ

Դամբարաններից հայտնաբերված իրերը և դրանց հարդարանքի տարրերն իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն մ.թ.ա. IX-VIII դդ. դամբարանային համալիրներում: Այս դամբարանների խեցանոթները և դրանց հարդարանքի տարրերը նույնական են նաև Մեծամորի, Դվինի, Կարմիր բլուրի քաղաքային թաղամասի (նախաուրարտական) հրդեհված շերտերի նյութերի հետ<sup>22</sup>: Այս երեք հուշարձանները հրդեհվել են մ.թ.ա. 782 թ. Արգիշթի I-ի կողմից Արարատյան դաշտը գրավելու ընթացքում:

Դամբարանների թվագրության ստորին սահմանը համընկնում է ուրարտական արշավանքների հետ: Տվյալ ժամանակահատվածում ուրարտացիների ներկայությունը Սևանա լճի այդ հատվածում փաստում է նաև տեղում պահպանված ժայռափոր արձանագրությունը<sup>23</sup>:

Արձանագրությունում արքայի հայրանվան բացակայությունը խնդիր չի հարուցում, քանի որ տեքստը բովանդակությամբ համընկնում է Արգիշթի I-ի տարեգրությունում և կրկնօրինակում նկարագրված հինգերորդ տարում կատարված դեպքերին (մ.թ.ա. 782 թ.)<sup>24</sup>: Դեպի հյուսիս կատարած արշավանքի ժամանակ Արգիշթին գրավել է նաև ներկայիս Լճաշենի տարածքը, հավանաբար նաև ամրոցը<sup>25</sup>: Արձանագրությունը Լճաշեն գյուղում միակը չէ, եղել է նաև երկրորդը, որի մասին վկայում է Ե. Լալայանը<sup>26</sup>: Անցյալ դարասկզբին նա գյուղացիներից մեկի բակում տեսել է գուռ դարձրած արձանագիր քարը՝ եզրերին պահպանված սեպանշաններով: Սևանի ավազանի բնակավայրերից Լճաշենը առայժմ միակն է, որտեղից հայտնի են ուրարտական երկու արձանագրություն:

<sup>20</sup> Խանզադյան և այլք 1973, աղ. XXXVI/ 5, XXXVII/8, 9:

<sup>21</sup> Դեվեջյան 2006, նկ. 67/3, 5, Խաչատրյան և այլք 2019, աղ. 10/6:

<sup>22</sup> Сорокин 1958, рис. 6/2, 7/4-7, Խանզադյան և այլք 1973, նկ. 54-56, 61-65, Кушнарева 1977, рис. 33/1-3, 35/1-3, 5, 6, 36/1, 3:

<sup>23</sup> Меликишвили 1960, 130, Арутюнян 2001, 180, Salvini 2008, А 8-11.

<sup>24</sup> Меликишвили 1960, 127, II<sub>25-32</sub>, 128, А 2<sub>1-13</sub>, Арутюнян 2001, 173, II<sub>25-32</sub>, 174 А 2<sub>1-13</sub>, Salvini 2008, А 8-3 II<sub>25-32</sub>, А 8-1 I.d<sub>1-13</sub>.

<sup>25</sup> Ամրոցում կատարված փոքրածավալ պեղումները բավարար հիմքեր չեն տալիս այս հարցին պատասխանելու համար:

<sup>26</sup> Լալայան 1931, 105:

Դամբարանները լրացնում են Լճաշեն հնավայրից հայտնի երկաթի շրջափուլի սակավաթիվ նյութերի շարքը:

### Օգտագործված գրականություն

- Անտիսեան Պ., Ենգիբարեան Ն., Սարգսեան Գ. 1998, Հայաստանի նորայայտ հնագիտական յուշարձաններ, Արտաշաւանի դամբարանադաշտը, Հանդէս ամսօրեայ, թիւ 1- 12, էջ 193-248:
- Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ. 2006, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում, Երևան, ԵՊՀ հրատ. 395 էջ:
- Դեվեջյան Ս. 2006, Լոռի բերդ, II (միջին բրոնզ), Երևան, «Գիտություն», 426 էջ:
- Ենգիբարեան Ն. 2010, Կարմիր բերդ դամբարանադաշտի 1991 թ. պեղումները, «Խաղի-յան զորությամբ» հոդվածների ժողովածու՝ նվիրված Բ. Պիոտրովսկու ծննդյան 100-ամյակին, Երևան, «Գիտություն», էջ 132-151:
- Եսայան Ս. 1967, Կատալոգ Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի, II, Երևան, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր մամուլի կոմիտեի պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության N 1 տպարան, 115 էջ:
- Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ. 2002, Հին Շիրակավան (1977-1981 թթ. պեղումների արդյունքները), Երևան, «Գիտություն», 259 էջ:
- Լալայեան Ե. 1931, Դամբանների պեղումները Սովետական Հայաստանում, Երևան, Մեքրոնյան ֆոնդի հրատ, 240 էջ:
- Խաչատրյան Հ., Եգանյան Լ., Պետրոսյան Լ., Ֆուրսովանգլեր Ա., Մաուերման Դ. 2019, Ջրափիի դամբարանադաշտի պեղումները, Գիտական աշխատություններ, Գյումրի, էջ 161-193:
- Խանգադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է. 1973, Մեծամոր (ուսումնասիրություն 1965-1966 թթ. պեղումների տվյալներով), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 214 էջ:
- Խանգադյան Է. 1979, Էլառ-Դարանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 188 էջ:
- Հայաստանի պատմության թանգարան (ՀՊԹ), գույք N 2552/82, 85, 87, գույք N 2601/ 12, 111, գույք N 3024/21:
- Մնացականյան Հ. 1952, Հնագիտական պեղումներ Սևանա լճի ցամաքած տերիտորիայում, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր հաս. գիտ., N 8, էջ 99-111:
- Չիլինգարյան Ս. 1971, Վաղ հայկական հուշարձաններ Ջուջևանի դամբարանադաշտում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, էջ 69-73:
- Պետրոսյան Լ. 1993, Լճաշենի պեղումները, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառուցներում (1986-1987 թթ. պեղումների արդյունքները), I, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 41-48:
- Պետրոսյան Լ. 2016, Քուջակ-1 դամբարանադաշտի մշակույթը (մ.թ.ա. IX-VI դդ.), Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, էջ 254-269:
- Պետրոսյան Լ. 2018, Լճաշենի դամբարանադաշտը, I, Երևան, ՀԱԻ հրատ., 416 էջ:
- Վարդանյան Բ. 2023, Լճաշենի ամրոցն ու դամբարանադաշտը, հ. I, Երևան, ՀՊԹ, 304 էջ:
- Арутюнян Н. 2001, Корпус урартских клинообразных надписей, Ереван, «Гитутюн», 542 с.
- Есаян С. 1969, Могильник раннеармянского времени в поселке Берд Шамшадинского района, Историко-филологический журнал, N 4, с. 285-291.
- Есаян С. 1976, Древняя культура племен северо-восточной Армении (III-I тыс. до н.э.), Ереван, изд. АН Арм. ССР, 270 с.

- Кушнарера К. 1977, Древнейшие памятники Двина, Ереван, изд. АН Арм. ССР, 110 с.
- Мартirosян А. 1961, Город Тейшебаини, Ереван, изд. АН АрмССР, 158 с.
- Мартirosян А. 1974, Аргиштихинили, Археологические памятники Армении, N 8, Урартские памятники, вып. I, Ереван, изд. АН Арм. ССР, 176 с.
- Меликишвили Г. 1960, Урартские клинообразные надписи, Москва, изд. АН СССР, 504 с.
- Мнацаканян А., Тирацян Г. 1961, Новые данные о материальной культуре древней Армении, Известия общ. наук, N 8, Ереван, с. 69-83.
- Сорокин В. 1958, Следы древнейшего поселения у Кармир-блур, Советская археология, N 2, с. 149-163.
- Хачатрян Т. 1979, Артикский некрополь, каталог, Ереван, изд. Ереванского университета, 403 с.
- Петросян Л. 1989, Раскопки памятников Кети и Воскеаска (III - I тыс. до н.э), Ереван, изд. АН Арм. ССР, 178 с.
- Badalyan R., Avetisyan P. 2007, Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, I, Mt. Aragats and its Surrounding Region, Oxford, 320 p.
- Morgan J. de. 1889, Mission Scientifique au Caucase, tome premier, Paris, Ernest Leroux, editeur, 231 p.
- Salvini M. 2008, Corpus dei Testi Urartei, volume I, Le Iscrizioni su Pietra e Roccia, I Tessti, Documenta Asiana, VIII, Volume Primo, Roma, Pubblicazioni Dell' Instituto di Studi Sulle Civilata' Dell' Egeo e del Vicno Oriente del Consiglio Nazionale delle Ricerche, 653 p.
- Xnkikyan O. 2002, Syunik' During the Bronze and Iron Agis, Barrington, Mayreni Publishing, 137 p.
- Yengibaryan N. 2002, The Graves of the Urartian Period of Karchaghbyur, The North-Eastern Frontier, Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin, ed. by R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani, Roma, Pubblicazioni Dell' Instituto di Studi Sulle Civilata' Dell' egeo E Del Vicino Oriente Del Consiglio Nazionale Della Ricerche, p. 417-454.
- Yengibaryan N. 2019, Middle Iron Age tombs from Noratus (Sevan region, Armenia), Aramazd, Armenian Journal of Near Eastern Studies, XIII/1, Oxford, p. 1-43.

## ЛЧАШЕНСКИЕ ПОГРЕБЕНИЯ ЖЕЛЕЗНОГО ВЕКА

Нора Енгибарян

Резюме

Во время строительства здания поликлиники в селе Лчашен были выявлены погребения, наземные строения которых не сохранились. Погребальные камеры имеют прямоугольную форму, три стены – каменные, одна – грунтовая. В одном из погребений было осуществлено повторное захоронение. Во втором захоронении сохранились два железных ножа, которые датируются VI-IV вв. до н.э.

Из сопровождающих предметов основных захоронений сохранилась только керамика. Была обнаружена различная кухонная утварь: горшки, двуручные и

безручные кувшины и кубки, а также миски разных размеров. Вся керамика черного и серого цветов украшена каннелюрами, линиями, канавками, арками, колосовидными и волнистыми узорами. Обнаруженные предметы и элементы украшения идентичны погребальным комплексам IX-VIII вв. до н.э. (Айраванк, Цовазард, Карчахбюр, Арташаван, Ширакаван, Карнут, Мецамор) и материалам слоев Мецамора, Двина, Кармир Блур, разрушенных в период урартских походов.

Представленные погребения датируются концом IX – нач. VIII вв. до н.э.

**Ключевые слова** – Армения, бассейн озера Севан, Лчашен, железный век, каменный ящик, керамика, железный нож.

### THE IRON AGE TOMBS OF LCHASHEN

Nora Yengibaryan

#### Abstract

During the construction of the Lchashen village polyclinic tombs were discovered the surface constructions of which were not preserved. The burial chambers are rectangular, with three walls layed with stone, and one cut in earth. This type of chamber structure is common in the Lchashen cemetery. In one of the tombs a secondary inhumation was conducted. Two knives of the 6-4<sup>th</sup> centuries BC were preserved from that inhumation. Items accompanying primary inhumations in the tombs only include pottery: kitchen pots and pots with two handles of different sizes, jugs with one protrusion or no handle, beakers with one or no handle, a bowl, and a deep bowl. The vessels are black and grey in colour, adorned with flutings, arches, wavelines, lines, and grooves.

The discovered items, and the elements of their decoration are identical with the 9-8<sup>th</sup> centuries BC items found in cemetery complexes and layers of Metsamor, Dvin, Karmir Blur from the strata destroyed by the Urartian invasions. The presented tombs date back from the end of the 9<sup>th</sup> until the beginning of the 8<sup>th</sup> centuries BC.

**Key words** – Armenia, the basin of lake Sevan, Lchashen, Iron Age, stone cist, pottery, iron knife.

# ԱՐԱԳԱԾԻ ՏԻՐԻՆԿԱՏԱՐ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## Ռաֆիկ Գաբրիելյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ rafik.gabrielyan.93@gmail.com

ORCID: 0009-0005-5965-2614

Հոդվածը ներկայացվել է 30.11.2023, գրախոսվել է 06.03.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.1-323

### Ամփոփում

Արագածի Տիրինկատար հնավայրը գիտական աշխարհին հայտնի է դարձել 2012 թ.: Հնագիտական հուշարձաններից զատ, տարածքում կան նաև բազմաթիվ ազգագրական բնույթի կառույցներ:

Դրանք, ըստ իրենց գործառնությունների, կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի՝ տնտեսական և հոգևոր: Տնտեսական ոլորտին են պատկանում կացարանները, ջրանցքները, ջրի աղբյուրները և սանդերը: Հոգևոր հուշարձաններ են սրբավայրերը, երազանքի քարերը, ինչպես նաև գերեզմանոցը:

Կացարանները քարաշեն են, որոնց կից առկա են մակադատեղեր: Դրանք սովորաբար ունենում են ուղղանկյուն հատակագիծ: Սանդերը նույնպես գտնվում են կացարանների մոտակայքում: Տիրինկատարում բխող երեք աղբյուրների ջրերն օգտագործվում են խմելու և կենցաղային կարիքների համար:

Տիրինկատարի կարևոր սրբավայրերից է Աղջկա սուրբը, որի մերձակայքում դրված են բազմաթիվ երազանքի քարեր: Սրբավայրը, որը քառակուսի հատակագծով քարաշեն կառույց է, պաշտամունքային վայր է և՛ հայերի, և՛ եզդիների համար, այնտեղ մինչ օրս իրականացվում են տարբեր ծեսեր:

**Բանալի բառեր՝** Արագած, Տիրինկատար, սրբավայր, ջրանցք, ամառանոցային արտավայր, աղբյուր, կացարան:

### Ներածություն

2012 թ. ի վեր իրականացվում է Արագածի Տիրինկատար հնավայրի հնագիտական ուսումնասիրությունը հայ-իտալա-գերմանական արշավախմբի կողմից<sup>1</sup>: Նշված տարածքի պատմամշակութային արժեքները հետաքրքիր են նաև ազգագրական տեսանկյունից, և հնագիտական պեղումներին զուգահեռ տեղի սարվորների շրջանում անցկացվել են ազգագրական հարցազրույցներ, ինչպես նաև արձանագրվել, չափագրվել, զննվել, լուսանկարահանվել են ազգագրական արժեք ունեցող օբյեկտներ: Սույն

<sup>1</sup> Օգտակար խորհուրդների, առաջարկների և աջակցության համար շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետ Սուրեն Հոբոսյանին, ճարտարապետ Արտակ Հախվերդյանին, հնագետներ Արտյոմ Անանյանին և Արսեն Բոբոխյանին:

հողվածով փորձ է արվում ընդհանրացնել բազմաթիվ հետազոտությունների նախնական արդյունքները՝ զուգահեռաբար համեմատելով հայկական մշակույթից հայտնի այլ օրինակների հետ:

### **Տիրինկատարը՝ որպես տնտեսական գոտի**

**Ամառանոցային արոտավայրը.** Տիրինկատարը ծովի մակարդակից մոտ 2850 մ բարձրությամբ խիստ հարթ սարավանդակ է: 1954 թ. առ այսօր տարածքը Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղի ամառանոցային արոտավայրն է: Մինչ այդ այն պատկանել է Արագածոտնի մարզի Շամիրամ գյուղին:

Տեղի սարվորները հստակ պատկերացում ունեն տարածքի, դրա սահմանների և տեղանքում կողմնորոշվելու բնական կամ մշակութային ուղեւիշների վերաբերյալ: Տիրինկատարից արևելք գտնվում է՝ Ամբերդածորը, ուր հաճախ իջնում են սարվորները՝ Ամբերդ գետից ձուկ որսալու նպատակով: Ամառանոցային կացարաններին ավելի մոտ է արևմտյան փոքր ծորակը, որով հոսող գետակում սարվորները լողանում և լվացք են անում: Զրի սակավության դեպքում կենդանիներին բերում են այստեղ ջրելու: Հյուսիսային կողմում է գտնվում՝ Սև սարը. այստեղ հասնելու համար պետք է անցնել զառիվայր ու առապար լանջով՝ *կոտրով*: Այն, որպես Արագածի ամառանոցային կարևոր արոտավայր, հիշատակում է նաև Ավետիս Քալանթարը<sup>2</sup>: Հարավային կողմում որպես տարածքի կողմնորոշման նշագույցեր են ծառայում *Աղջկա սուրբը* և փոքր թեքություն ունեցող լանջը: Արդեն բուն հարթ տարածքում կարևոր կողմնորոշիչներ են հյուսիսային մասում գտնվող երեք լճակները, որոնք ամռան ամիսներին երբեմն ցամաքում են, և հյուսիսից հարավ ձգվող երկու ոլորապտույտ հեղեղատները, որոնց հատվածներում ևս ձնհալից հետո ժամանակավոր լճակներ են գոյանում:

Վերջին շրջանում Տիրինկատարում ամռանը իրենց անասունները պահում են հայ և եզրի 5-6 ընտանիք, մինչդեռ խորհրդային տարիներին այնտեղ, հունիսի սկզբից մինչև սեպտեմբերի առաջին կեսը, պահվել են պետական տնտեսությունների և մի քանի տասնյակ ընտանիքների խոշոր ու մանր եղջերավոր անասունները:

Ուշագրավ է, որ Տիրինկատարում ամառվա ամիսներին սերնդեսերունդ ապրող սարվորները տարածքի նկատմամբ ունեն ավանդաբար ձևավորված հոգատար, անգամ սրբազնացված վերաբերմունք: Դա նույնիսկ այնքան ցայտուն է դրսևորվում, որ, երբ սկսվել են հնագիտական աշխատանքները, տեղացիներից ոմանք, սովորույթի ուժով, փորձել են խոչընդոտել հնագիտական աշխատանքները, հատկապես վիշապ քարակոթողների

<sup>2</sup> Калантар 1895, 74.

շրջակայքում՝ պատճառաբանելով, թե դրանք հսկայի գերեզմաններ են և սրբություն են համայնքի համար<sup>3</sup>:

**Ամառային բնակատեղեր ու կացարաններ.** Տիրինկատարի տարբեր հատվածներում առկա են մեծ քանակությամբ տնտեսական համալիրի մաս կազմող բնակատեղեր՝ քարաշեն կացարաններ (նկ. 1)<sup>4</sup> և բերատեղեր (մակաղատեղեր): Ըստ իրենց տեղաբաշխվածության, դրանք պայմանականորեն կարելի է բաժանել ութ խմբի՝ իրենց տարաբնույթ կառույցներով: Շուրջ 7.5 հա տարածքում նկատվում են մոտ 100 շինության հետքեր: Դրանցից 28-ը քարե կացարաններ են, 39-ը՝ մակաղատեղեր՝ առանձին փոքր կցակառույցներով: Այդ կառույցները կարելի է թվագրել XIX դ. երկրորդ կեսից մինչև XX դ. ընկած ժամանակահատվածով:

Ամառանոցային ժամանակավոր բնակավայրի ընտրության կարևոր նախապայմաններ էին քամիներից պաշտպանված լինելը, ջրի առկայությունը, բաց տեսադաշտ ունենալը, տարածքի չոր ու հարթ լինելը և այլն: Արագածի ամառանոցային արոտավայրերում, տարածքը ավելի հեշտ վերահսկելու նպատակով, երբեմն ընտրում էին հարևան արոտատեղի հետ ունեցած սահմանային հատվածը՝ նրանց կենդանիների հավանական մուտքը իրենց տարածք կանխելու համար<sup>5</sup>:

Տիրինկատարում առկա կացարանների պատերը պահպանվել են՝ 40-125 սմ բարձրությամբ: Դրանք կառուցված են չոր շարվածքով և, ամենայն հավանականությամբ, ունեցել են փայտե ծածկ: Նման կառույցները տարածված են Հայաստանի գրեթե բոլոր բարձրադիր շրջանների ամառանոցային արոտավայրերում<sup>6</sup>: Այստեղ դրանք հիմնականում օգտագործվել են մինչև 1980-90-ական թվականները: Ավ. Քալանթարը նշում է, որ Արագածի ամառանոցներում հայերն ապրում էին գլխավորապես քարաշեն կացարաններում, իսկ քուրդ և թուրք կիսաքոչվոր ցեղերը՝ տարբեր ձևերի վրաններում (*չադր, ալաչուխ և այլն*), որոնց տեղափոխությունը դյուրին էր<sup>7</sup>: Այս օրինաչափությունը առկա է նաև Տիրինկատարում: Այժմ պահպանված բոլոր կացարանները պատկանել են հայ ընտանիքներին<sup>8</sup>: Ներկայումս, և՛ հայերը, և՛ եզդիները օգտագործում են խորհրդային արտադրության գործարանային վրաններ: Վրանների եզրային հատվածներում 0,3-0,4 մ բարձրությամբ քարաշարեր են անում, որպեսզի դրանք դիմանան ուժեղ քամիներին:

<sup>3</sup> Գաբրիելյան 2023, բանասաց՝ Աբգար Աբգարյան:

<sup>4</sup> Ժողովուրդը այս կառույցներին տարբեր անվանումներ է տալիս՝ հողիկ, քոխտիկ, հյուղ, օդա, սարի տուն և այլն (Мкртумян 1974, 56, прим. 64, 57-58):

<sup>5</sup> Калантар 1895, 99, Мкртумян 1974, 56.

<sup>6</sup> Պապուխյան 1972, 105-107, Հալաջյան 1973, 133-134, Мкртумян 1974, 51:

<sup>7</sup> Калантар 1895, 99-101.

<sup>8</sup> Գաբրիելյան 2023, բանասաց՝ Աբգար Աբգարյան:

Գրեթե բոլոր մակադատեղերն ուղղանկյուն հատակագիծ ունեն՝ 0,45 մ լայնությամբ և 1,50 մ բարձրությամբ պատերով կառուցված չոր շարվածքով: Կան այնպիսի մակադատեղեր, որոնք ավելի բարակ պատով բաժանված են երկու մասի. որպես միջնորմ ծառայող այդ պատն ունի դռան տեղ: Նմանատիպ մակադատեղերը նախատեսված են եղել կաթնատու ոչխարների/այծերի համար: Արոտից վերադարձող ոչխարներին տեղավորում էին նախ մակադատեղի մի մասում, ապա, հերթով կթելով, ուղարկում մյուս մասը: Այսպես ավելի դյուրին էր կթված կենդանիներին չկթվածներից տարբերելը<sup>9</sup>:

Բացի ոչխարներից, հայերը սար են տարել նաև խոշոր եղջերավոր անասուններին: Հերկը ավարտելուց հետո, լծկան կենդանիներին՝ եզներին ու գոմեշներին, պարարտացնելու նպատակով, կարճ ժամանակով սար էին տանում: Այս առումով, Ավ. Քալանթարը հայտնել է մի ուշագրավ տեսակետ, ըստ որի, Հայաստանի որոշ շրջաններում անասնապահությունը ծառայեցվել է երկրագործության կարիքները բավարարելուն<sup>10</sup>: Որոշ վայրերում գոմեշներն օգտագործվել են նաև որպես գրաստ՝ սար բարձրանալիս կայքը տեղափոխելու համար, քանզի դրանք դիմացկուն են տապի նկատմամբ և համարյա թե չեն վարակվում զանազան հիվանդություններով<sup>11</sup>: Գոմեշը տավարի համեմատ ունի ևս մեկ առավելություն. դրա կաթը կովի կաթի համեմատ գրեթե կրկնակի յուղոտ է<sup>12</sup>:

**Սանդեղը.** Տիրինկատարի ամառանոցում պահպանվել է վեց սանդ, որոնք այժմյան սարվորները *դինգ*<sup>13</sup> են անվանում: Սանդերն ունեն 0,25-0,40 մ խորությամբ և 0,30-0,45 մ տրամագծով փորվածքներ: Դրանցից հինգը փորված են գետնի մեջ բնականորեն մխրճված, բազալտե, մոխրագույն և կապտավուն սալաքարերի մեջ, իսկ մեկը գտնվում է N 7 վիշապա-

<sup>9</sup> Գաբրիելյան 2023, բանասաց՝ Ջոհրաբ Աբգարյան:

<sup>10</sup> Калантар 1895, 104, 109-110.

<sup>11</sup> Хан-Агов 1886, 326.

<sup>12</sup> Калантар 1895, 113.

<sup>13</sup> Ժողովրդական բառապաշարում *դինգ* անունը տալիս են հացաբույսերի վերամշակման համար նախատեսված երեք տիպի համալիրների: Առաջինը հասարակ սանդն է, որի մեջ հումքը վերամշակում են ձեռքի թակիչով: Երկրորդն աշխատում է ոտքի հարվածի միջոցով: Այն ունի քարե սանդ, որի ուղղությամբ տեղադրված է փայտե լծակ, վերջինիս եզրին ամրացված է քարե թակիչը, որն էլ լծակի գործարկման ժամանակ վեր է բարձրանում և իջնելով՝ հարվածում է սանդին: Այս համալիրը, ըստ էության, նախորդի ավելի կատարելագործված տարբերակն է (Բդոյան 1972, 12-21): Երրորդ համալիրն իր կառուցվածքով ավելի բարդ է: Այն ունի երկու շրջանաձև քարեր: Ստորինը տեղադրված է հորիզոնական դիրքով՝ անշարժ: Այն ուղիղ կենտրոնում ունի ամրացված մետաղյա ուղղահայաց ձող: Վերևի քարը ուղղահայաց դիրքով պտտվում է այդ ձողի շուրջը՝ ստորին քարի եզրային հատվածի վրայով: Այն իր կենտրոնում ունի անցք, որով անցկացված է փայտե ձող: Վերջինս իր մի եզրով կապված է ուղղահայաց մետաղե ձողին, իսկ դրա մյուս եզրին կապվում է քարը պտտող կենդանին (ավանակ, ջորի): Դինգերը առանձին կառույցներ են, սակայն նման սարքավորումներ օգտագործվել են նաև ջրաղացներում ու ձիթհաններում: Այս համալիրը հայտնի է նաև *պաթոս* և *մանրիչ աղացաքար* անուններով (Պարսամեան, Քէչեան 1952, 25, Խալիփախյան 1961, 30-50, Հալաջյան 1973, 124-125, Հոբոսյան 2007, 42-44, Չոլաքեան 2020, 77-80):

քարի վրա: Սանդերից մեկը կոտորված է: Բոլորն էլ գտնվում են կացարանների մերձակայքում, բացի մեկից, որը կացարանի ներսում է: Սարվորներին այն հայտնի է տիրոջ անունով՝ *Լիոյի* կամ *Լիանուշի* դինգ (Մելքոնյան Լիանուշ, Աղավնատուն գյուղից, 1926-2010 թթ.): Սարերում սանդեր և դինգեր ունենալը բնորոշ է հայոց անասնապահական մշակույթին: Սար տանում էին կենցաղային ամենամանրաժեշտ պարագաները: Տիրինկատարում սանդերն օգտագործվել են հատիկեղեն և աղ ձեռնելու՝ մանրացնելու նպատակով: Ներկայումս դուրս են եկել կիրառությունից:

**Ջրի աղբյուրները.** Տիրինկատարում կա երեք աղբյուր, որոնցից մեկը կառուցվել է 1960-ական թվականներին: Այն գտնվում է Տիրինկատարից հարավ-արևմուտք: Մյուս երկու աղբյուրները բնական ակեր են, որ բխում են հյուսիսային, բարձրադիր մասում, զառիվայր լանջի ստորոտից՝ առաջացնելով փոքր լճակներ:

Բնական ակով առաջին աղբյուրը կոչվում է *Կաթնաղբյուր*: Անվանումը ստացել է սպիտակավուն ջուր ունենալու պատճառով: Այն նաև կոչվում է *Խազալի աղբյուր*, քանի որ մոտ է Խազալենց կացարաններին, սակայն այս տարբերակը այդքան էլ տարածված չէ:

Հայոց մեջ *Կաթնաղբյուր* անվանումով աղբյուրները բավական շատ են, դրանց մասին կան բազմաթիվ ավանդագրույցներ: Մարդիկ հավատում են, որ դրանց ջրերն ունեն կերակրող մայրերի կաթը ավելացնելու հատկանիշ, որոշ դեպքերում նաև՝ մաշկային հիվանդությունները բուժելու հատկություն<sup>14</sup>:

Հաջորդ աղբյուրը կրում է վերևում հիշատակված՝ Աղավնատուն գյուղի բնակիչ Լիանուշի անվանումը (նրա կացարանը աղբյուրին ամենամոտն է եղել):

Տիրինկատարի սարվորները աղբյուրները խնամքով պահպանում են. ակերի դիմաց միջին չափի քարեր են շարել, ստեղծել ջրհավաք փոքր ավազան և ստորին հատվածում ծորակ տեղադրել: Աղտոտվելուց ու պղտորվելուց զերծ պահելու համար ջրի ակունքը ծածկել են մետաղե թիթեղով: Տարին մի քանի անգամ մաքրում են աղբյուրի ակը՝ զերծ պահելով մամռակայումից: Սարվորները, ժամանակ առ ժամանակ քերելով հողի շերտը, մաքրում են նաև բուն ակունքը: Այս գործողությունը անվանում են *աղբյուրի աչքը բացել*: Դա կատարվում է ջրի հոսքը ուժեղացնելու նպատակով<sup>15</sup>:

**Ջրանցքները և առուները.** Արագածի, Բյուրակնյան լեռների, Մշո դաշտի, Մանազկերտի, Վասպուրականի և մի շարք այլ շրջանների ջրաբաշ-

<sup>14</sup> Բախտիկեան 1934, 69, Մխիթարեան 1958, 155, Սրապեան 1960, 452, Կոպեան 1965, 112, Յակոբեան և ուր. 1966, 100-101, Լալայան 1988, 160, Միքայելյան 1998, 151, Լալայան 2004, 196, Լալայան 2021, 388:

<sup>15</sup> Գաբրիելյան 2023, բանասաց՝ Ջոհրաբ Աբգարյան:

խական համակարգերը միանման են եղել<sup>16</sup>: Արագածի արևելյան ու հարավային լանջերի ստորոտներում ժամանակին արձանագրվել են ութ ջրհավաք համակարգեր, որոնք սնվել են բազմաթիվ լճակներից և ունեցել են գլխավոր ու երկրորդական ջրանցքներ<sup>17</sup>:

Տիրինկատարում ևս նկատելի են նման մի ջրանցքի հետքերը, որն սկիզբ է առնում Կարմիր սար բարձունքի արևելյան ստորոտներից՝ Ամբերդ գետի ակունքի մոտակայքից: Այն ունեցել է 12 առու, որոնցից 11-ը անցնում են Ամբերդաձորի արևմտյան փեշով, իսկ մեկը՝ արևելյանով: Սարվորներն այս ջրանցքը անվանում են՝ *12 բանդեր*<sup>18</sup> կամ *12 առուներ* (նկ. 2)<sup>19</sup>: Դրա առաջին սխեմատիկ քարտեզը կազմել է Ալ. Խանադովը և հրատարակել 1886 թ.<sup>20</sup>: Ավելի ուշ Գր. Ղափանցյանը կազմել է տվել ջրանցքի գծագիրը<sup>21</sup>, իսկ Ա. Քալանթարի կազմած համակարգված քարտեզում այն համապատասխանում է՝ VI ջրհավաքին պատկանող թիվ 9 ջրանցքին<sup>22</sup>:

Ջրանցքը, կառուցված լինելով գաղփայր լանջին, նմանվում է դարավանդների: Ա. Քալանթարը այսպես է բնութագրում դրանց լանջային լինելը. «Գեղեցիկ է Ամբերդի ձորը, որի լանջով դեռ այսօր էլ մեկը մյուսի թիկունքն էլած 12 ջրանցքներ են ընթանում առաջ դեպի ներքևի գյուղերը<sup>23</sup>»: Մանրամասն տեղագնությունից պարզվում է, որ 12 ջրատար առուներն ընթանում են մոտավորապես իրար զուգահեռ: Դրանք կառուցելու համար նախ հարթեցրել են լանջը՝ բացելով որոշակի ճանապարհ, ներքևի եզրը ամրացնելով քարահողային հենաթմբերով: Լանջերի գոգավորությունները հարթեցված են մինչև 2-3 մ բարձրությամբ ամուր հենապատերով, որոնք առանց շաղախի են<sup>24</sup>: Մոտ 8 կմ երկարություն ունեցող ջրանցքի տարբեր

<sup>16</sup> Բրբոխյան 2020, 35, ծան. 39:

<sup>17</sup> Քալանթար 1937:

<sup>18</sup> Բանդը ջրատարի սկզբի (գլխի) հատվածն է, որի միջոցով կատարվում է ջրառը: Այս հատվածում սովորաբար կառուցում են շատ ամուր պատնեշ, քանի որ այն իր վրա է կրում ակունքներից ջրատար մտնող հոսքի ամբողջ ճնշումը: Ըստ Հր. Աճարյանի՝ ծագում է պարսկերեն՝ band\* բառից, որը նշանակում է *կապ, հանգույց* (Աճառեան 1926, 406): Ա. Քալանթարի կարծիքով՝ Արագածի բոլոր ջրանցքների բանդերը հասցված են այնպիսի վայրեր, որտեղից դրանք կարող էին ջրառ իրականացնել ձնհալի շնորհիվ առաջացած ջրերի հաշվին (Քալանթար 1937, 175):

<sup>19</sup> Մեր համոզմամբ, ջրանցքին տրվող այս անվանումները չեն արտահայտում դրանց լանջային լինելու բնույթը: Ազգագրական նյութերում պահպանվել է լանջային ջրատարերին տրվող ժողովրդական անվանում: Ըստ Գր. Տեր-Հովհաննիսյանի հաղորդած տեղեկությունների, նման ջրատարերը Սևրի-Հիսարի հայրության շրջանում հայտնի էին *սեքի* անվանումով: Հեղինակը բառի գրական հոմանիշ է բերում *դարուդին* (Տեր-Յովհաննեսեան 1965, 24):

<sup>20</sup> Хан-Агов 1886, 272-273.

<sup>21</sup> Ղափանցյան 1944, 170:

<sup>22</sup> Քալանթար 1937, 182-183: Տե՛ս նաև էջ 186-187-ի ներդիրը՝ «Արագածի ջրաբաշխական սիստեմը»:

<sup>23</sup> Քալանթար 1925, 221:

<sup>24</sup> Լանջային ջրատարի համար կառուցված պատաշարերը Աշտարակի բարբառով կոչվում էին *բիթ* (Շահագիզ 1987, 46):

հատվածներում առկա են փլուզված հենապատերի հետքեր՝ քարակույտերի ձևով:

Հասնելով Ամբերդ ամրոցից արևմուտք ընկած լանջի մոտ՝ առունները դուրս են գալիս զառիվայր հատվածից և ուղղվում դեպի հարթավայրեր, որտեղ արդեն դրանց ուղղությունը կառավարվում է երկկողմանի քարահողային հենաթմբերով: Ավելի ներքև գտնվող հատվածները խորհրդային ժամանակաշրջանում ենթարկվել են որոշ ձևափոխությունների՝ կապված նոր ոռոգման համակարգերի կառուցման հետ:

Այս ջրանցքի միջոցով ջուր է հասցվել Արարատյան դաշտի գյուղերին: Ալ. Խանադովը և Գր. Ղափանցյանը բերում են այն գյուղերի ցանկը, որոնց ջուր է մատակարարվել 12 բանդերով. դրանք են՝ Շամիրամ, Ավան, Լեռնաբոտ (Մաղղա), Ուջան, Խնուսիկ (Ղոյթուր), Սասունիկ, Կոշ, Աղքք, Թալիշ, Արուճ, Շամիրամ, Տեղեր, Օրգով: Գր. Ղափանցյանը նշում է նաև, որ ձորի արևելյան փեշով անցնող ջրատար առուն ոռոգել է Ամբերդից վերև գտնվող վանքապատկան հողերը<sup>25</sup>: Ամռան ամիսների ընթացքում Ամբերդ գետի ջրերը պակասել են, որի հետևանքով գյուղացիները առուններից ջուր են վերցրել հերթ պահելով: Բոլոր գյուղերի առուններն ունեին ջուր ստանալու որոշակի օրեր: Ամենաշոգ շրջանում ջուրը բավարարել է միայն չորս ամսի<sup>26</sup>: Ըստ բանասացների՝ ջրատարներից մեկը գործել է մինչև 1967 թ.<sup>27</sup>: Դրանցից մեկն էլ ներկայումս օգտագործվում է որպես ավտոճանապարհ:

Տիրինկատարի արևմտյան կողմում առկա է մեկ այլ ջրհավաք համակարգ, որը համապատասխանում է Ա. Քալանթարի արձանագրած VII ջրհավաքի թիվ 10 ջրանցքին<sup>28</sup>: Այն բաղկացած է երեք լանջային ջրատարներից, որոնք ունեն քարահողային հենաթմբեր: Դրանց միջոցով ջրատ է իրականացվել փոքր ձորի գետից: Ի տարբերություն 12 բանդերի, այս համակարգը շատ վատ է պահպանված:

Բանահյուսական նյութերում որոշակի տեղեկություններ կան ջրանցքների վերաբերյալ: Այս առումով ուշագրավ են Աշտարակի՝ *Մեծ առու* կոչվող ջրանցքի շինարարությանը վերաբերող ավանդազրույցները: Ըստ դրանց, ջրանցքի շինարարությունը նախաձեռնել է Սբ. Գրիգոր Ականատես վարդապետը, որի պատվանունով էլ այս ջրանցքը կոչվում է նաև *Ականատեսի առու*<sup>29</sup>: Ականատեսը «բռնելով Քասախի ձորի ճանապարհը՝ Աշտարակի

<sup>25</sup> Хан-Агов 1886, 271, Ղափանցյան 1944, 171, Капанцян 2008, 125:

<sup>26</sup> Вейс-фон-Вейсенгоф 1883, 166.

<sup>27</sup> Գաբրիելյան 2023, բանասաց՝ Արգար Արգարյան:

<sup>28</sup> Քալանթար 1937, 183:

<sup>29</sup> Ըստ Աշտարակի շրջանում պահպանված ավանդազրույցի՝ *Ականատես* պատվանունը Գրիգոր վարդապետին շնորհվել է այն պատճառով, որ նա տեսել է Արագածի գլխից անապարան կախված կանթեղի լույսը, որի տակ աղոթել է Գրիգոր Լուսավորիչը: Ըստ ժողովրդական պատկերաց-

տակից գնացել է ծորն ի վեր և հասել է Մուղնու տակը, այնտեղ, որտեղ գետի հունը հավասար է եղել Աշտարակի գյուղատեղի մակերևույթին, այդտեղից սկսել է ժողովրդի օգնությամբ և առվահանության գործին հմուտ վարպետների ձեռքով քանդել, տաժանելի աշխատանքով, գետի աջակողմյան բարձրության լանջերը, ջարդել պեղել ապառաժները, որոշ քանակով ջուր առնելու չափով ու տարողությամբ առու է փորել և ջուրը բերել հասցրել է մինչև գյուղագլուխը»<sup>30</sup>:

### Տիրինկատարը՝ որպես հոգևոր միջավայր

**Սրբավայրերը.** Տիրինկատարում կա երկու սրբավայր՝ *Կըզըլ զհարաթ* (նկ. 3) և *Կարմիր սարի սուրբ*:

*Կըզըլ զհարաթ* (*Աղջկա սուրբ*) անվան առաջին մասը՝ *կըզըլ*, թուրքերեն է, նշանակում է *աղջիկ* (*kiz*)<sup>31</sup>: Որոշ սարվոր եզդիներ այդ բառն ընկալում են որպես բարձունքի հոմանիշ<sup>32</sup>:

Ուշագրավ է, որ Գեղամա լեռների ամենաբարձր գագաթը՝ «վիշապային» անվամբ՝ Աժդահակը, ունեցել է երկրորդ՝ *Կըզըլ դաղ* անվանումը<sup>33</sup>: Նշենք նաև, որ Աղավնատուն գյուղում առանց հստակեցման՝ *կըզըլ* անվանումով մի վայր է հիշատակվում<sup>34</sup>: Անվան երկրորդ մասը՝ *զհարաթ* (*zîyaret*) բառը քրդերեն է, նշանակում է *սրբավայր*<sup>35</sup>: *Ջհարաթը* հայերենի բարբառներում ունի նաև *ուխտագնացություն* իմաստը<sup>36</sup>, քրդերենում *zîyaretvan*, նշանակում է *ուխտագնաց*<sup>37</sup>:

*Աղջկա սուրբը* գտնվում է Տիրինկատար բարձունքի գագաթին՝ առապարի վրա: Նախկինում այս սրբավայրի անվան ներքո հասկացվել է հենց Տիրինկատար գագաթը<sup>38</sup>: Այն հնավայրի ամենաբարձր կետում է, երբեմնի աշտարակաձև կառույցի վրա, ու պատահական չէ, որ խորհրդային տարիներին անմիջապես կառույցի կողքին տեղադրվել է շանթարգել:

Այս սրբավայրից հրաշալի տեսարաններ են բացվում բոլոր ուղղություններով, Մասիսը՝ հարավում, Արագածի գագաթները՝ հյուսիսում, Գե-

ման՝ «Էն կանթեղը ամեն մարդ չի տեսնիլ. արդար մարդի աչքին կերևա» (Ղանալանյան 1969, 91, Շահագիզ 1987, 44-45):

<sup>30</sup> Շահագիզ 1987, 46:

<sup>31</sup> Դերմենջյան 2013, 14, Ղազարյան 2003, 277:

<sup>32</sup> Գաբրիելյան 2023, բանասաց՝ Զանիկ Շամոյան:

<sup>33</sup> Բոբոխյան 2018, 297:

<sup>34</sup> Գրիգորյան, Մաթևոսյան 2007, 305:

<sup>35</sup> Կատվայան և ուր. 2016, 437, 568:

<sup>36</sup> Գասպարյան և ուր. 2001, 410:

<sup>37</sup> Կատվայան և ուր. 2016, 580:

<sup>38</sup> *Տիրինկատար* և *Կըզըլ զհարեթ* անվանումների զուգահեռների մասին տե՛ս Բոբոխյան 2018, 292-298:

ղամա լեռները՝ արևելքում և Արտենի լեռը՝ արևմուտքում: Կարծես Աղջկա սուրբը գտնվում է մի կարևորագույն դիտակետում:

Սրբավայրը, որի կառույցի (4,50x5,00 մ) բարձրությունը 2,20 մ է, ձգվում է հարավ-արևելք հյուսիս-արևմուտք առանցքով, դուռը հարավային կողմում է: Պատերը կառուցված են չոր շարվածքով, ծածկը նոր է՝ փայտե գերաններով և ազբեստե կղմինդրներով: Ներսում կան քրիստոնեական սրբանկարներ, մոմ վառելու քարե հարթակ և խաչաքանդակ կրող քարեր: Հավատավոր մարդիկ իրենց զգեստներից կտորներ, թաշկինակներ և գլխաշորեր են կապում տանիքի գերաններից: Ըստ սարվորների՝ Տիրինկատարի Աղջկա սուրբն ունի երկու առանձնահատուկ հոգևոր գործառույթներ՝ խնդրակատար լինելը և փորձանքներից հեռու պահելը<sup>39</sup>: Այն պաշտամունքային վայր է և՛ հայերի, և՛ եզդիների համար:

Սրբավայրի դիրքը, ջրային աղբյուրների, վիշապների ու աշտարակների առկայությունը Տիրինկատարում հիշեցնում են Աստղիկ դիցուհու պաշտամունքը: Ըստ հին հայոց ավանդության, Աստղիկը ծնունդ էր առել և մեծացել Մեղրագետի մոտ գտնվող Տիրինկատար լեռան ստորոտին, որտեղ էլ գտնվում էր նրա պաշտամունքի կենտրոնը<sup>40</sup>: Աստղիկին՝ որպես Նոյի աղջկա, ամենուրեք բլուրներ և բարձր սարեր էին նվիրված, և «ոմանք կկարծեն, թե այդ բարձունքները աստղերը դիտելու դիտարաններ են եղել»<sup>41</sup>: Աստղիկի պաշտամունքի հիմնական կենտրոնները՝ Աստղկա բերդերը, լեռնային բարձր կետեր էին հատկապես Վասպուրականում և Տարոնում (Ղաղոնա սար/Գրգուռ, Վարագ, Պաղատ)<sup>42</sup>:

Պատահական չէ, որ հաճախ բարձրլեռնային սրբավայրերի հետ են կապվում փերիների առասպելները: Տիրինկատարի Աղջկա սրբի մասին, օրինակ, պատմում են, թե երեք կին տեսել են, թե ինչպես երկար մազերով մի աղջիկ մտել է այնտեղ ու անհայտացել<sup>43</sup>: Գեղամա լեռների Սև և Կարմիր սարերի մասին առասպելի համաձայն, Սև սարը բռնակալ է եղել, իսկ Կարմիր սարը՝ մուրազաբեր աղջիկ, որին բռնությամբ տիրացել է առաջինը<sup>44</sup>:

Կարմիր սարի սուրբը գտնվում է համանուն բարձունքից ներքև, խիստ զառիվայր լանջին, դժվարամատչելի տեղանքում: Սրբավայր հասնելու երկու ուղի կա՝ հյուսիսից և հարավից, երկու դեպքում էլ պետք է շրջանցել Կարմիր սարի բարձունքը: Քարքարոտ և ավազոտ լանջին անգամ հստակորեն ձևավորված արահետ չկա: Սուրբը հրաբխային լավաների շերտում

<sup>39</sup> Գաբրիելյան 2023, բանասաց՝ Արև Աբգարյան:

<sup>40</sup> Սիմոնյան 2013, 234-235, 240:

<sup>41</sup> Սիմոնյան 2013, 237: Հաշվի առնելով վերն ասվածը՝ կարելի է զուգահեռ տանել *կըզըլ* բառի վերաբերյալ գոյություն ունեցող նույն ընկալման հետ:

<sup>42</sup> Աճեմեան 1917, 97-101, Ղանալանյան 1969, 211, Բորոխյան 2017, 39:

<sup>43</sup> Բորոխյան 2013, բանասաց՝ Իշխան Աիբյան:

<sup>44</sup> Ղանալանյան 1969, 18, Հարությունյան 2000, 207-208:

առաջացած բնական մի խորշ է, որի մեջ նկատելի են վառած մոմերի հետքերը: Անմիջապես խորշի դիմաց առատ խոտածածկով փոքրիկ, հարթ տարածք կա, որտեղ 3-4 մարդ հազիվ կարող են կանգնել:

**Գերեզմանոցն ու առանձին թաղումները.** Տիրինկատարում առկա է երկու առանձին թաղում, մեկ հուշարձանաբարան և գերեզմանոց՝ շուրջ 100 գերեզմանաթմբերով:

Գերեզմանոցը գտնվում է հարավային մի հարթ տեղամասում՝ Աղջկա սուրբ տանող ճանապարհի աջ կողմում: Ամենայն հավանականությամբ, գերեզմանոցը սկզբնապես պատկանել է որոշ քոչվոր ցեղախմբերի: Հետագայում այնտեղ թաղումներ են կատարել նաև եզդիները: Այդ մասին են վկայում ուղղանկյուն հատակագծով չորս գերեզմանները՝ շաղախով շարված պատերով և հայերեն արձանագրություններով:

Երկու առանձին թաղումներն Աղջկա սրբի տարածքում են: Դրանցից մեկն ունի շրջանաձև, մյուսը՝ ուղղանկյուն հատակագիծ: Ամենայն հավանականությամբ, դրանք եղել են ինչ-որ առանձնահատուկ մարդկանց գերեզմաններ: Դրանց թվագրությունը պարզ չէ. հաշվի առնելով այն հանգամանքը, որ սարվորները տեղեկություն չունեն այս թաղումների մասին, հնարավոր է, որ դրանք վերաբերում են XIX դ., գուցե նաև ուշ միջնադարին: Հետաքրքիր է, որ դամբարաններին կից հայտնաբերվել է կարմիր չեչաքարե (պեմզա) խոյաքանդակ:

Հուշարձանաբարանը հայտնի է *Անախասի քար* անվանումով, գտնվում է Տիրինկատարի հյուսիսարևմտյան հատվածում՝ զառիվայրի ստորոտին: Նվիրված է Անախաս Հակոբյանին (1890-1968 թթ.), որը վախճանվել է սարում, թաղված է Աղավնատուն գյուղի գերեզմանոցում:

Առկա տվյալները փաստում են, որ, ի տարբերություն եզդիների, հայերը սարում մահացածին հուղարկավորելու սովորություն չեն ունեցել: Այս երևույթը կարելի է համարել եզդիների պատմականորեն ձևավորված քոչվորական կենսակերպի դրսևորում (նրանց համար և՛ ձմեռային, և՛ ամառային կայանները հավասարազոր բնակատեղիներ են համարվել):

**Երազանքի քարերը.** Տիրինկատարիում առկա են կոնաձև շարվածքով, 0,5-3 մ բարձրություն ունեցող բազմաթիվ քարակույտեր (նկ. 4): Սարվորները դրանք համարում են «երազանքի քարեր», որոնք արձանագրվել են 12 վայրում, բայց հատկապես մեծ կուտակումներով հանդիպում են *Աղջկա սրբի* մոտակայքում (ավելի քան 200 միավոր): Դրանց մի մասը, շարված է յոթ քարից՝ այդ թվի սրբազնացված լինելու հանգամանքով պայմանավորված և կարևոր ու նվիրական նպատակի իրականացման ակնկալիքով<sup>45</sup>:

<sup>45</sup> Գաբրիելյան 2023, բանասաց՝ Արև Աբգարյան:



**Նկ. 1.** Ամառային կացարան  
(լուսանկարը՝ Արտակ Հախվերդյանի)

**Նկ. 2.** 12 բանդեր ջրանցքը (լուսանկարը՝  
Արտակ Հախվերդյանի)



**Նկ. 3.** Աղջկա սուրբը (լուսանկարը՝  
Արսեն Բորոխյանի)

**Նկ. 4.** Երազանքի քարեր  
(լուսանկարը՝ Արսեն Բորոխյանի)



Հայոց հավատալիքներում քարի պաշտամունքը մեծ տեղ է գրավում: Արժե նշել, որ նման հավատալիք կար նաև Ղարադաղի Իրգութին գյուղում, կոչվում էր *Քումեն քար* (նպատակի քար), որը փոքր ժայռ էր, որի վրա պատկերված էր Սուրբ Սարգիսը. այստեղ ուխտի էին գնում հիմնականում Ջատիկին<sup>46</sup>: Տիրինկատարի սրբավայրի հետ որոշակի աղերսներ կարելի է տեսնել Վարանդայի Ավղուռ գյուղի «Ավդալ-օջախ» ուխտավայրի հետ, որտեղ ուխտի էին գնում չբեր կանայք և նրանք, որոնց որդիները տարին լրացած մահանում էին: Առաջինները որդի էին խնդրում, իսկ երկրորդները՝ իրենց որդիներին առողջություն<sup>47</sup>: Քարի պաշտամունքին վերաբերող ուշագրավ հուշարձան է Տաթևի վանքի հանդիպակաց լեռան վրա գտնվող *Եզան գերեզման-ուխտապտեղին*: Այն մի մեծ քարակույտ էր, որի մոտով անցնողները պարտավոր էին դրա վրա մի քար ավելացնել<sup>48</sup>: Նման մի վայր եղել է նաև Օշականի մոտերքում<sup>49</sup>: Պաշտվող արհեստական քարակույտեր կային Ներքին Բասենում, որոնք ընկալվում էին որպես կայծակից զարկվածների գերեզմաններ՝ հենց կայծակնահարվելու տեղում շարված: Մոխրացած աճյունի տեղում դնում էին մի մեծ քառանկյունի սալ քար, որի վրա լցնում էին ձվաչափ քարեր: Դրանք նման էին արտերի մեջ հանդիպող քարակույտերին: Ով անցնում էր քարակույտի մոտով, պարտադիր պիտի մի քար ավելացնել դրա վրա<sup>50</sup>:

Լեռների գագաթներին, հաճախ սրբերի գերեզմանների մոտ քարակույտեր ստեղծելը տարածված է տարբեր ժողովուրդների ավանդույթներում. դա կապվում է լեռների ու քարերի պաշտամունքի հետ: Այս վարքային դրսևորումը ընդհանուր առմամբ նպատակ ունի կրկնապատկելու մարդկային ուժը<sup>51</sup>:

**Քարաժայռը.** Սև սարի գառիվայր և դերբուկոտ լանջին է գտնվում «Տրդատի քար» (խոյեցիների բարբառով՝ «Ծրդատի քար») կոչվող հսկա քարաժայռը (չափերն են՝ 3,50x5,00 մ, բարձրությունը՝ 3,70 մ), որը Տիրինկատարի հյուսիսային կողմից կարծես հսկում է ողջ տարածքը: Տարածքի այլ քարաժայռերի համեմատ լինելով նկատելիորեն մեծ՝ այն ծառայում է իբրև տեղանքի կողմնորոշիչ: Վրան առկա են՝ մարդ, արև, շրջան, եղջերավոր կենդանի ուրվագծող հնագույն ժայռապատկերներ:

Ծրդատի քարերը հայտնի են Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններում: Ամենայն հավանականությամբ, անվանումը կապված է Տրդատ III թագավորի՝ Մասիս բարձրանալու և այնտեղից Մայր Տաճարի ու Հռիփսիմյանց

<sup>46</sup> Հովսեփյան 2009, 92:

<sup>47</sup> Լալայան 1988, 156:

<sup>48</sup> Լալայան 1988, 172:

<sup>49</sup> Арапатский 1980, 48.

<sup>50</sup> Հակոբյան 1974, 254:

<sup>51</sup> Штернберг 1936, 381.

կույսերի գերեզմանների վրա եկեղեցիներ կառուցելու համար քարեր բերելու՝ Ագաթանգեղոսի հաղորդած պատմության հետ<sup>52</sup>: Այս տեղեկությունը վերապատմում է ժողովուրդը Շիրինկատար լեռան և Մշո Սուրբ առաքելոց վանքի համատեքստում<sup>53</sup>: Նույնը պատմել են նաև Հարքում<sup>54</sup>: Վանի մոտ գտնվում է Ծրտոտ/Տրդատի քար կոչված ժայռը, որին է միանում տեղի՝ հարսանեկան թափոր հիշեցնող քարերի շարքը<sup>55</sup>:

### Եզրակացություններ

Արձանագրված փաստերի հիման վրա Տիրինկատարում կարելի է առանձնացնել կենսագործունեության երկու ոլորտ՝ տնտեսական և հոգևոր: Կարևոր է շեշտել այն հանգամանքը, որ Տիրինկատարի գոտում մարդիկ գործունեություն են ծավալել տարվա որոշակի ժամանակամիջոցում՝ հարմարվելով տարածքի օգտագործման «ցիկլային» օրինաչափություններին: Պետք է նաև հավելել, որ տարածքն իր գործառույթային նշանակությունը չի կորցնում ողջ տարվա ընթացքում, քանի որ այն ջրային պաշարների կուտակման և օգտագործման կարևորագույն գոտի է, նաև հոգևոր կենտրոն, ինչը մշտապես առկա է համայնական հիշողության մեջ:

Տիրինկատարը մշակութային ուրույն միջավայր է, որտեղ ածանցվում են հայկական մշակույթում գոյություն ունեցող բազմաթիվ իրողություններ: Կոլեկտիվ հիշողության մեջ եղած որոշակի տվյալներ դրսևորվում են աղոտ պատկերացումների միջոցով՝ երբեմն արտահայտվելով միայն անվանումների ձևով, որոնց ենթատեքստերը հետագա բացահայտման կարիք ունեն:

Ներկայացվող տվյալները, որպես համեմատական նյութ, կարող են նոր լույս սփռել նաև տարածքի հնագույն շրջանի պատմության վրա, երբ Տիրինկատարը հոգևոր և տնտեսական նշանակության կարևոր կենտրոն էր ողջ Հայկական լեռնաշխարհում:

### Օգտագործված գրականություն

Ագաթանգեղոս 1883, Ագաթանգեղայ Պատմութիւն, Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 525 էջ:

Աճառեան Հ. 1926, Հայերէն արմատական բառարան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 698 էջ:

Աճեմեան Հ. 1917, Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահիստութեան, Էջմիածին, տպ. Մայր Աթոռոյ, 104 էջ:

Բախտիկեան Ս. 1934, Արաբկիր և շրջակայի գիւղերը, Պէյրուֆ, «Վահագն», 156 էջ:

<sup>52</sup> Ագաթանգեղոս 1883, 446-447:

<sup>53</sup> Ղանալանյան 1969, ԾԳ:

<sup>54</sup> Բենսէ 1901, 30-31:

<sup>55</sup> Սրվանձտյանց 1978, 384: Ծըռտոտ քար է հիշատակվում Հաղորդի Վարդաշատ գյուղի մերձակայքում՝ կապվելով, սակայն, արժվի ծերտի հետ (Սարգսյան 2023, 445): Ծրտոտ քար է հիշատակվում նաև Վանի Ագեստան թաղամասում (Լալայեան 1913, 26):

- Բդոյան Վ. 1972, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 511 էջ:
- Բենսէ 1901, Բուլանըխ կամ Հարք գաւառ, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանց, 314 էջ:
- Բոբոխյան Ա. 2013, ԴԱՆ, Արմավիր, Աղավնատուն:
- Բոբոխյան Ա. 2017, Խորենացու վկայությունը Պաղատի սրբազան տարածքի մասին և վիշապաքարերի խնդիրը, Արևելագիտությունը Հայաստանում, հ. 3, խմբ.՝ Ռ. Սաֆրաստյան և ուր., Երևան, «Գիտություն», էջ 32-54:
- Բոբոխյան Ա. 2018, Արագածի Տիրինկատար սրբավայրը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, N 1, էջ 290-301:
- Բոբոխյան Ա. 2020, Ատրպետի «Գիտական արկածները» և Վիշապ քարակոթողների հայտնագործումը, Երևան, ՀՊԹ հրատ., 152 էջ:
- Գաբրիելյան Ռ. 2023, ԴԱՆ, Արմավիր, Աղավնատուն:
- Գասպարյան Գ., Գրիգորյան Ա., Հակոբյան Ա. և ուր. 2001, Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, Երևան, «Գիտություն», 451 էջ:
- Գրիգորյան Գ., Մաթևոսյան Բ. 2007, Աղավնատուն, Երևան, «Տոներ», 320 էջ:
- Դերմենջյան Մ. 2013, Հայերեն-թուրքերեն բառարան, Երևան, հեղ. հրատ., 400 էջ:
- Լալայան Ե. 1988, Երկեր, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 505 էջ:
- Լալայան Ե. 2004, Երկեր, հ. 3, Երևան, «Գիտություն», 384 էջ:
- Լալայան Ե. 2021, Երկեր, հ. 4, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., 692 էջ:
- Լալայան Ե. 1913, Վասպուրական. Հավատք, Ազգագրական հանդես, գիրք 25, էջ 21-60:
- Խալվախյան Հ. 1961, Հայաստանի արտադրական կառուցվածքները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 92 էջ:
- Կատվայան Վ., Աբրահամյան Ա., Մխիթարյան Գ. 2016, Քրդերեն-հայերեն, հայերեն-քրդերեն գործնական բառարան, Երևան, «Ասողիկ», 590 էջ:
- Կոստան Մ. 1965, Բալու: Բալուի կեանքին առնուած պատկերներ, յուշեր, չափածոյ քերթուածներ և արձակ էջեր, Անթիլիաս, հրատ. նշված չէ, 768 էջ:
- Հալաջյան Գ. 1973, Դերսիմի հայերի ազգագրությունը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 5, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 301 էջ:
- Հակոբյան Գ. 1974, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, «Հայաստան», 458 էջ:
- Հարությունյան Ա. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, տպ. Վահէ Սէթեանի, 527 էջ:
- Հոբոսյան Ա. 2007, Հայոց ձիթհանության մշակույթը (XIX դ. - XX դ. առաջին կես), Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 23, Երևան, «Գիտություն», էջ 5-98:
- Հովսեփյան Հ. 2009, Ղարադաղի հայերը. Ազգագրություն, հ. 1, Երևան, «Գիտություն», 502 էջ:
- Ղազարյան Ռ. 2003, Թուրքերեն-հայերեն բառարան, Երևան, «Միտք», 574 էջ:
- Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 530 էջ:
- Ղափանցյան Գ. 1944, Արա Գեղեցկի պաշտամունքը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 182 էջ:
- Միքայելյան Հ. 1998, Ծալկայի հայերի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, «Նոյ», 307 էջ:
- Մխիթարեան Գ. 1958, Մեր գիւղը Դատեմ, Պոսթըն, տպ. «Հայրենիք», 256 էջ:
- Յակոբեան Յ., Վալադեան Պ., Օղկասեան Պ. և ուր. 1966, Պատմութիւն Պաղնատան, Պոսթըն, տպ. «Հայրենիք», 297 էջ:
- Նամալեան Ա. 1890, Հարևաններ, Մուրճ, N 11, էջ 1501-1512:
- Շահազիզ Ե. 1987, Աշտարակի պատմությունը, Երևան, «Հայաստան», 352 էջ:

- Չոլաքեան Յ. 2020, Քեսապի նիւթական մշակոյթը, Երևան, ՀԱԻ հրատ., 264 էջ:
- Պապուխյան Ն. 1972, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 168 էջ:
- Պարսամեան Մ., Քէչեան Ա. 1952, Ակն և ակնցիք, Փարիզ, Ամերիկայի Ակնայ հայրենակցական միության հրատ., 1045 էջ:
- Սարգսյան Ա.Յ. (խմբ.) 2023, Հաղորդի բառ ու բան, Երևան, «Արմավ», 783 էջ:
- Միմոնյան Լ. 2013, Աստղիկ դիցուհու պաշտամունքը Վասպուրականում և Տարոնում, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I, Վան, խմբ.՝ Հ.Տ. Մարության, Երևան, «Գիտություն», էջ 233-242:
- Սրապեան Լ. 1960, Քրի. տեղագրական և ազգագրական, Անթրիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 72 էջ:
- Սրվանձտյանց Գ. 1978, Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 668 էջ:
- Տէր-Յովհաննէսեան Գ. 1965, Պատմագիրք Սիվրի-Հիսարի հայոց, Պէյրութ, տպ. «Մշակ», 688 էջ:
- Քալանթար Ա. 1925, Քարե դարը Հայաստանում, Նորք, N 5-6, էջ 207-232:
- Քալանթար Ա. 1937, Մի հնագույն ջրաբաշխական սխտեմ Խորհրդային Հայաստանում, Տեղեկագիր պատմության և գրականության ինստիտուտի, գիրք II, Երևան, էջ 171-194:
- Араратский А. 1980, Жизнь Артемия Араратского, Ленинград, «Наука», 224 с.
- Вейс-фон-Вейсенгоф С. 1883, Сведения о состоянии орошения на Кавказе, Тифлис, изд. Кавказского общества сельского хозяйства, 272 с.
- Мкртумян Ю. 1974, Формы скотоводства в восточной Армении (вторая половина XIX-начало XX в.), Армянская этнография и фольклор, материалы и исследования, т. 6, Ереван, изд. АН АССР, с. 5-90.
- Калантар А. 1895, Алагезские казенные летние пастбища Александропольского и Эчмиадзинского уездов Эриванской губернии. Материалы для устройства казенных летних и зимних пастбищ и для изучения скотоводства на Кавказе, т. 3, ч. 2, Тифлис, тип. Т.П. Козловского, с. 71-247.
- Капанцян Г. 2008, Ара Прекрасный: мифотворческий образ у армян, в кн: Неизданные сочинения, Ереван, изд. ЕГУ, 141 с.
- Хан-Агов А. 1886, Экономический быт государственных крестьян Эчмиадзинского и Сурмалинского уездов Эриванской губернии. Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. 3, ч. 1, Тифлис, тип. А.А. Михельсона, с. 227-455.
- Штернберг Л. 1936, Первобытная религия в свете этнографии, Ленинград, изд. Института народов Севера, 572 с.

## ЭТНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПАМЯТНИКА ТИРИНКАТАР В АРАГАЦЕ

Рафик Габриелян

Резюме

Памятник Тиринкатар стал известен научному миру в 2012 году. Помимо археологических памятников на этой территории было найдено также множест-

во сооружений этнографического характера, которые по их функциональным назначениям можно разделить на две основные группы: экономические и духовные. К экономической группе относятся жилища, каналы, источники воды и ступы, а святыни, камни желаний, кладбища и т.д. относятся к духовной.

Жилища возведены из камней, рядом с ними есть загоны для скота. Неподалеку от жилищ найдены каменные ступы.

Важной святыней Тиринкатара считается Ахчка сурб, возле которой выложена гряда камней желаний. Святыня представляет собой каменное строение квадратной формы, имеющее культовое значение как для армян, так и для езидов, где по сей день проводятся различные ритуалы.

**Ключевые слова** – Арагац, Тиринкатар, святилище, канал, летние пастбище, родник, жилище.

## THE ETHNOGRAPHIC FEATURES OF THE SITE TIRINKATAR ON ARAGATS

Rafik Gabrielyan

### Abstract

The archaeological site of Tirinkatar on Aragats became known to the scientific society in 2012. In addition to archaeological monuments, many ethnographic phenomena were also recorded on that area. This article attempts at presenting the preliminary results of the ethnographic research.

Ethnographic phenomena according to their function can be divided into two main spheres: economic and spiritual. The economic sphere includes dwellings, canals, springs and stone mortars. The spiritual sphere is reflected in sanctuaries, dream stones, cemeteries, etc.

The dwellings are made of stone, next to which there are corrals. They usually have a rectangular plan. Stone mortars are also located near the dwellings. In Tirinkatar there are three springs, the waters of which are used for drinking and domestic purposes.

An important sanctuary named Aghjka Surb is the most important location in Tirinkatar, near which are built many dream stones. The sanctuary is built of stone with a square plan. The sanctuary is a place of worship for both the Armenians and the Yezidis, where various rituals are still performed.

**Key words** – Aragats, Tirinkatar, sanctuary, canal, summer pasture, spring, dwelling.

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՔ

Լուսինե Սահակյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու  
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան  
ՀՀ, Երևան, Դավիթ Բեկի 155  
Էլ. հասցե՝ sahakyanlusine23@gmail.com  
ORCID: 0009-0006-5057-0353

Հոդվածը ներկայացվել է 11.04.2022, գրախոսվել է 12.04.2022, ընդունվել է տպագրության 25.04.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.1-339

Ամփոփում

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է անձի հոգեբանական ճանաչողական գործընթացների առանձնահատկություններից: Վերջիններիս կառավարման և կազմակերպման մանկավարժական ուղիների յուրացումն ու կիրառումը ուսուցչի գործունեության հաջողության գրավականն են: Մանկավարժական գործընթացը հնարավոր չէ պատկերացնել առանց հոգեբանական գիտության նվաճումների: Ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովելու գործում կարևոր է հաշվի առնել մարդու հոգեբանական որոշ առանձնահատկություններ և հոգեբանական ճանաչողական գործընթացներ, ինչպես նաև այդ գործընթացների կազմակերպման մանկավարժական ուղիները: Մինևույն ժամանակ, չի կարելի նվազեցնել գիտության մեջ ուսուցման հոգեբանության դերն ու տեղը, ուսուցման գործընթացի կապը անհատականության հոգեբանական հատկությունների հետ: Ունկնդիրների մեջ պետք է դաստիարակվի անուղղակի միջնորդավորված հետաքրքրություն: «Ուսուցիչ-ունկնդիր» փոխհարաբերությունները առանձնահատուկ ուշադրության են արժանի ուսումնական գործընթացի օպտիմալ կազմակերպման տեսանկյունից:

**Բանալի բառեր՝** ուսուցման հոգեբանություն, ուսումնական դրդապատճառներ, ուսուցման արդյունավետություն, մանկավարժական հոգեբանություն, հոգեբանական հատկություններ, ճանաչողական գործընթացներ, հիշողության գործընթացներ:

Ներածություն

Մանկավարժական գործընթացն անհնար է պատկերացնել առանց հոգեբանական գիտության նվաճումների կիրառման: Սրանով զբաղվում է մանկավարժական հոգեբանությունը: Հոդվածում վերլուծվում են ուսուցման հոգեբանական առանձնահատկություններն ու դրանց նշանակությունը մանկավարժական գործունեության արդյունավետ կազմակերպման և իրակա-

նացման ընթացքում: Ուսուցման գործընթացի արդյունավետության ապահովման գործում կարևոր է հաշվի առնել անձի որոշ հոգեբանական առանձնահատկություններն ու հոգեճանաչողական գործընթացները<sup>1</sup>, ինչպես նաև այդ գործընթացների կազմակերպման մանկավարժական ուղիները:

### **Ուսուցման գործընթացը՝ որպես հոգեբանական գիտության հետազոտության բնագավառ**

Ուսուցումը գործունեություն է, որն ապահովում է գիտելիքների, կարողությունների հմտությունների յուրացումը:

Ուսուցումը ուսումնառողի և ուսուցանողի ակտիվ փոխազդեցության գործընթաց է<sup>2</sup>: Հոգեբանական կողմը դրսևորվում է ուսուցման ողջ համակարգում՝ նրա գործընթացներում, ուսուցման մեթոդների հոգեբանական հիմքերում, ուսուցման ձևերում և միջոցներում, ուսուցանողի և ուսումնառողի հոգեբանական յուրահատկություններում:

Ուսուցման հոգեբանությունը գիտական ուղղություն է, որն ուսումնասիրում է գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացման գործընթացը և այդ գործընթացն ապահովող անհատական, իմացական և տարիքային հոգեբանական առանձնահատկությունները<sup>3</sup>: Այն դիտարկվում է որպես յուրահատուկ գործունեություն, որն ազդում է անձի դրդապատճառների, նպատակների, գործողությունների վրա: Հետևաբար ուսուցման հոգեբանության նպատակը նաև լիարժեք անձի հոգեբանական նորագոյացությունների և հատկությունների ձևավորումն է<sup>4</sup>:

### **Ուսուցման գործընթացում անձի հույզերի, նպատակների և դրդապատճառների հաշվառման անհրաժեշտությունը**

Ուսուցման գործընթացն անմիջականորեն կապված է անձի այնպիսի հոգեբանական հասկացությունների հետ, ինչպիսիք են *հույզերը*, *ուսումնական նպատակները* և *դրդապատճառները*:

Հույզերն ակտիվացնում են ունկնդրի իմացական գործընթացները՝ կազմելով ուսումնական գործունեության հոգեբանական հիմքերը<sup>5</sup>: Ուսումնական գործընթացում դասախոսը պետք է նպաստի հետաքրքրության, կասկածի, զարմանքի հույզերի առաջացմանը:

Հետաքրքրությունը<sup>6</sup> սովորաբար երանգավորված է հույզով՝ կապված խորունկ և գործուն զգացմունքների հետ: Ուսումնական հետաքրքրությունը

<sup>1</sup> Регуш, Орлова 2011, 288-306.

<sup>2</sup> Ключева, Батракова, Варенова 2003, 321-351.

<sup>3</sup> Гамезо, Петрова, Орлова 2003, 285-291.

<sup>4</sup> Немов 2000, 273-284.

<sup>5</sup> Айсмонтас 2002, 71-90.

<sup>6</sup> Նալչաջյան 2016, գիրք 2, 157-173:

կախված է այն բանից, թե որքանով է ունկնդրին հասկանալի նրա ուսումնասիրած նյութի նշանակությունը, որքանով է այդ նյութն առնչվում նրա արտաուսումնական բնագավառի հետաքրքրություններին, որքանով է դասախոսը պարզ ու հասկանալի շարադրում նյութը, և որքան բազմազան են ուսուցման մեթոդները: Դաստիարակելով ուսումնական հետաքրքրություններ՝ չպետք է չարաշահել հետաքրքրաշարժությունը: Ունկնդիրները չպետք է ընտելանան անելու միայն այն, ինչը նրանց անմիջականորեն հետաքրքրում է, նրանք պետք է հասկանան, որ կյանքում վիճակված է անելու ավելին՝ առանց անմիջական հետաքրքրության: Ուստի ունկնդիրների մեջ պետք է դաստիարակել նաև անուղղակի միջնորդավորված հետաքրքրություններ, որոնք որոշվում են ոչ թե պարզապես հետաքրքրաշարժությամբ, այլ առարկայի նշանակության խոր գիտակցմամբ, այս կամ այն տեղեկության կենսական կարևորությամբ:

Դասախոսի նպատակն է ունկնդրին համապատասխան գիտության բնագավառի վերաբերյալ գիտելիքներ տրամադրելը, իսկ ունկնդրի նպատակն է իր հետագա գործունեության համար անհրաժեշտ գիտելիքներ յուրացնելը<sup>7</sup>:

Դասախոսի գործունեության դրդապատճառ<sup>8</sup> կարող են լինել պարտքի ու պատասխանատվության զգացումը, սերն իր գործունեության նկատմամբ, իր ունկնդիրներին գիտելիքներով զինելու անհրաժեշտության զգացումը և այլն, իսկ ունկնդրի ուսումնական գործունեության դրդապատճառ՝ առարկայի նկատմամբ հետաքրքրությունը, գիտելիքների առկայության անհրաժեշտության գիտակցումը, ռազմաուսումնական հաստատություններում՝ նաև ազատ ելքի թույլտվության ստացումը, արձակուրդից օգտվելու հնարավորությունը և այլն: Ցավոք, հաճախ դասախոսի և ունկնդրի ո՛չ նպատակները և ո՛չ էլ դրդապատճառները չեն համընկնում: Այս դեպքում ուսումնական գործընթացի արդյունավետության մասին խոսելն ավելորդ է: Օպտիմալ տարբերակ կլինի այն դեպքում, երբ դասախոսը, իր դասավանդած առարկայի առանձնահատկություններից դուրս գալով՝ հետաքրքրություն, դրական հուզական ապրումներ, այդ գիտելիքներն ունենալու ցանկություն կառաջացնի ունկնդրի մեջ: Երբ դասախոսի «*ես ուզում եմ սա Ձեզ սովորեցնել*» դրդապատճառը կհամընկնի «*ես ուզում եմ հենց դա իմանամ*» կամ «*ինձ սա պետք է իմանալ*» դրդապատճառների հետ: Այսպիսի մթնոլորտը և՛ դասախոսի, և՛ ունկնդրի մեջ կառաջացնի դրական հուզական վիճակներ, համաձայնեցված կդառնան ինչպես տեղեկության մատուցման, այնպես էլ դրա յուրացման հսկման և ինքնահսկման եղանակները:

<sup>7</sup> Столяренко 2003, 232-240.

<sup>8</sup> Гамезо, Петрова, Орлова 2003, 295-303.

Այսպիսով ուսումնական գործունեությունը կդառնա ուղղորդված և արդյունավետ: Սակայն ուսուցման արդյունավետությունը կտրուկ կնվազի, եթե ուսումնական գործընթացում նպատակների, դիրքորոշումների ու փոխադարձ դրական հոգեվիճակների համընկնման առկայությունը խախտվի:

### **Իմացական գործընթացների առանձնահատկությունների հաշվառումը՝ որպես ուսումնական գործունեության արդյունավետության պայման**

Ուսումնական նյութի ընկալման, հասկացման և յուրացման կարևորագույն գործոններ են իմացական գործընթացները, որոնց ուսումնասիրմամբ, զբաղվում է հոգեբանական գիտությունը: Հոգեճանաչողական բոլոր գործընթացները ուսումնական գործունեության հետ ունեն անմիջական կապ, սակայն մանկավարժական հոգեբանության տեսանկյունից վերլուծենք հիմնականները՝ ուշադրությունը, հիշողությունն ու մտածողությունը:

Ուշադրությունը<sup>9</sup> հոգեկան ակտիվության ուղղորդումն է կոնկրետ առարկայի, երևույթի վրա՝ տվյալ առարկան կամ երևույթը դարձնելով մեր հոգեկան գործունեության օբյեկտ: Առանց այս հոգեճանաչողական գործընթացի՝ անհնար է պատկերացնել ուսումնական գործունեություն:

Ունկնդիրների ուշադրությունը ուսումնական աշխատանքի հաջողության պարտադիր պայմանն է: Ուսուցման ընթացքում ուշադրությունը կատարելագործվում է, դառնում առավել կամային, այսինքն՝ կազմակերպված, կարգավորվող, կառավարվող: Անուշադրության սովորական պատճառներն են հետաքրքրության բացակայությունը առարկայի նկատմամբ, շարադրանքի չորությունն ու անհասկանալի լինելը, ունկնդիրների հոգնածությունը:

Ունկնդիրների ուշադրության հարուցման հիմնական միջոցներն են՝

- դասերի դինամիկ վարումը՝ բազմազան հնարների կիրառմամբ,
- ունկնդիրների ակտիվության կազմակերպումը,
- ուշադրությունը շեղող գրգռիչների վերացումը,
- ուսուցման մեթոդների ճիշտ համադրումը:

Իհարկե, ուշադրություն պետք է դաստիարակել ոչ միայն շեղող գրգռիչների վերացման, այլև դրանց դիմադրելու միջոցով, դրանց շեղող ազդեցության դեմ պայքարելու ընդունակություն է պետք ձևավորել: Որոշ դեպքերում նրանք կարող են կեղծել ուշադրությունը՝ ընդունելով ուշադիր դիրք, ցուցադրելով ուշադիր հայացք, սակայն միտքը կարող է զբաղված լինել ինչ-որ կողմնակի բանով: Հետևաբար դասախոսը չպետք է կողմնորոշվի միայն ուշադրության արտաքին արտահայտությամբ, այլ անհրաժեշտ է հասնել իրական ուշադրության՝ ակտիվ ընկալման հետ զուգակցված:

<sup>9</sup> Նալչաջյան 2016, գիրք 1, 203-213:

Հայտնի է, որ գոյություն ունի ուշադրության երեք տեսակ՝ կամաձին, ոչ կամաձին և հետկամաձին<sup>10</sup>: Կամաձին ուշադրությունն առաջանում է կամային ջանքերի հաշվին: Այն պահանջում է բարձր գիտակցվածություն՝ ունկնդրից խլելով հոգեկան և նաև ֆիզիկական ուժեր: Դժվար է ունկնդրից պահանջել անընդհատ ուշադիր լինել 20 րոպեից ավելի: Սա անհրաժեշտ է իմանալ և օգտագործել նաև ուշադրության ոչ կամաձին տեսակը: Այն առավել կայուն է, եթե առաջացել է ունկնդրի հետաքրքրությունների հաշվին: Հոգեբանները պնդում են, որ հասկացման հիմքը ուշադրությունն է: Եթե դասախոսը կարողացել է սևեռել ունկնդրի ուշադրությունն ուսումնական նյութի վրա, ապա ուսուցման արդյունավետության կեսն ապահովված է:

Մանկավարժական հոգեբանությունն առաջարկում է ունկնդրի ուշադրության առաջացման և պահպանման հետևյալ միջոցները՝

- ուսումնական նյութի կարևոր հանգույցների ուժեղացում, որը կարելի է կազմակերպել կրկնությունների կամ տարբեր զգայարանների վրա ազդելու հաշվին, օրինակ՝ նույն տեղեկույթը և՛ բարձրաձայնել, և՛ ցուցադրել սլայդերով կամ այլ գունային գրավիչ միջոցներով.

- ամբողջովին օգտագործել բանավոր խոսքի հնարավորությունները՝ ձայնի բարձրությունը, տեմպն ու ինտոնացիան, դադարները, շեշտադրումները.

- հաշվի առնել ունկնդրի հուզական և դրդապատճառային համակարգը<sup>11</sup>, որի հաշվին ունկնդրի ուշադրությունն զգալիորեն կարող է աճել.

- համակարգել նյութը՝ անընդհատ եզրահանգումներով և հետևություններով: Տալ նյութի տրամաբանական զարգացման գծապատկերը.

- ուշադրության գրավման միջոց է նաև անսպասելիությունը և «սպասման» իրավիճակի ստեղծումը.

- ուսումնական նյութի շարադրման ժամանակ պետք է հաշվի առնել նաև ունկնդրի իմացական պահանջմունքները:

Ուսումնական գործընթացն անխզելիորեն կապված է մեկ այլ իմացական գործընթացի՝ հիշողության հետ: Այն մասնագիտական գրականության մեջ սահմանվում է որպես ընկալված տեղեկույթի մտապահման, պահպանման և վերարտադրման գործընթաց<sup>12</sup>: Ուսուցման գործընթացի արդյունավետությունն ուղիղ կապված է հիշողության գործընթացների՝ մտապահման, պահպանման, վերարտադրման և մոռացման հետ:

Հիշողության գործընթացի առաջին փուլը մտապահումն է<sup>13</sup>: Դրա շնորհիվ ընկալված տեղեկությունները մուտք են գործում հոգեկան մակարդակ՝

<sup>10</sup> Марцинковская 2013, 239-245.

<sup>11</sup> Зимняя 2009, 224-233.

<sup>12</sup> Նալչաջյան 2016, գիրք 1, 338-340:

<sup>13</sup> Немов 2003, 217-259.

կապվելով նախկինում մարդու ձեռք բերած գիտելիքների հետ<sup>14</sup>: Հոգեբան Բ. Ջեյգարնիկի կարծիքով՝ մարդն ավելի լավ է մտապահում անավարտ գործողությունները, իրադրությունները, խնդիրները: Մտապահումն ուղղակիորեն կախված է ունկնդրի գործունեության բնույթից: Բազմաթիվ դիտումներն ու փորձերը ցույց են տվել, որ մտապահումն առավել արդյունավետ է, երբ այն տեղի է ունենում որևէ ակտիվ գործունեության մեջ: Օրինակ՝ զինվորական հոգեբանության պարապմունքների ընթացքում ունկնդիրներին առաջադրվել է մի դեպքում մտապահել որոշակի տեքստեր՝ նյութի հետ ոչ մի ակտիվ աշխատանք չկատարելով, մյուս դեպքում մտապահման խնդիր չդնել, բայց տեքստի հետ կատարել որոշակի աշխատանք՝ գտնելով իմաստային սխալները: Պարզվեց, որ երկրորդ դեպքում մտապահումն ավելի արդյունավետ էր: Այդ արդյունավետությունը էապես կախված է դիրքորոշումից: Կարող են լինել մտապահման տարբեր դիրքորոշումներ հիշողության մեջ երկարատև կամ կարճատև պահպանման, նույնությամբ վերարտադրման կամ իր բառերով վերարտադրման:

Դասախոսի դերն այն է<sup>15</sup>, որ ունկնդրի մեջ ստեղծի համապատասխան դիրքորոշում՝ նշելով, թե ինչը պետք է մտապահել ժամանակավորապես, ինչը՝ մշտապես, իսկ ինչը բոլորովին էլ պետք չէ մտապահել, բավական է միայն հասկանալ:

Մտապահմանը հաջորդում է հիշողության հաջորդ գործընթացը՝ պահպանումը<sup>16</sup>: Պահպանման գործընթացով ընկալված տեղեկությունները կուտակվում են տևական հիշողության մեջ: Պահպանման երկարատևությունը կախված է ընկալվող նյութի իմաստավորումից: Փաստ է, որ ինչքան երկար է յուրացման ժամանակահատվածը, այնքան ամուր է պահպանումը: Գիտելիքները, որոնք ձեռք են բերվել կարճատև ժամանակահատվածում, օրինակ՝ սեմինար պարապմունքից կամ քննությունից առաջ, որակական առումով միշտ զիջում են երկարատև ժամանակահատվածում ընկալված և յուրացված գիտելիքներին: Քննության կամ սեմինարի պատրաստվելիս ունկնդրին միշտ օգնում է կարճատև հիշողությունը, իսկ կազմակերպված երկարատև և լուրջ աշխատանքի ժամանակ՝ մտածողությունը:

Ուսումնական նյութը լավ իմանալու համար անհրաժեշտ է ունկնդրի մեջ մշակել ճիշտ ու համակարգված աշխատանքի հմտություններ: Կարևոր է հիշել, որ յուրաքանչյուր նոր ուսումնական նյութի շարադրում պետք է սկսել ունկնդրի արդեն իսկ ունեցած գիտելիքների հիման վրա, որը հնարավորություն կտա վերականգնելու հիշողության մեջ այն նախկին գիտելիքները, որոնք անհրաժեշտ են նոր նյութի յուրացման համար:

<sup>14</sup> Маклаков 2012, 247-281.

<sup>15</sup> Ключо 2015, 77-84, 88-91.

<sup>16</sup> Рубинштейн 2000, 292-301.

Անհրաժեշտ գործունեություն ծավալելու համար հոգեկանում գոյություն ունեցող գիտելիքները պետք է վերարտադրվեն՝ տևական հիշողությունից անցնելով օպերատիվ հիշողության մակարդակ: Դա տեղի է ունենում վերարտադրության շնորհիվ: Տևական հիշողությունից օպերատիվ հիշողության մեջ նախկինում մտապահված գիտելիքների վերադարձի գործընթացը անվանում են վերարտադրություն:

Մոռացումն այն գործընթացն է, երբ տեղեկույթը սխալ է վերարտադրվում կամ ընդհանրապես չի վերարտադրվում: Դրա պատճառը կարող է լինել մտապահման, պահպանման կամ բուն վերարտադրության ծախողումը: Համաձայն գերմանացի գիտնական Հերման Էբինհաուզի բացահայտած օրինաչափության՝ յուրաքանչյուր նոր գիտելիք սովորելիս սկզբում սովորածի զգալի մասը շատ արագ մոռացվում է, որից հետո մոռացման ընթացքը դանդաղում է<sup>17</sup>: Կա ևս մեկ օրինաչափություն. երբեմն նոր նյութը սովորելուց անմիջապես հետո լրիվությամբ գրեթե չի վերարտադրվում: Սակայն արդեն մի քանի օր անց նկատվում է հակառակ պատկերը. որոշ ժամանակ առաջ սովորած նյութը մանրամասնորեն հնարավոր է լինում վերարտադրել: Այդ երևույթը կոչվում է ռեմինիսցենցիա, և նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ մարդ սովորած նյութը լավ հասկացել է, այլ ոչ թե ընդամենը անգիր արել:

Հիշողության գործընթացների կազմակերպում ասելով ենթադրում ենք՝

- ուսումնական նյութի հանգուցային հասկացությունների, մտքերի առանձնացում, դրանց իմաստավորում.

- ուսումնառողի մեջ երկարատև մտապահման դիրքորոշման ստեղծում.

- մտապահումը կազմակերպելիս ունկնդրի ակտիվության ապահովում «տրամաբանական դատողությունների, կապերի և զգայական տարբեր օրգանների միացման միջոցով».

- սովորած նյութի կրկնում և արդեն հայտնի տեղեկության մշակում:

Ուսուցումը ինքնին մտածողության գործընթաց է: Մտածողությունը տարբեր մարդկանց մեջ տարբեր է ընթանում:

Շրջապատող աշխարհի մասին տեղեկությունները մարդ ստանում է զգայությունների և ընկալումների միջոցով: Թեև դրանք շատ կարևոր իմացական գործընթացներ են, այնուամենայնիվ, բավարար չեն կարող լինել շրջապատող աշխարհի բարդ երևույթները հասկանալու համար:

Մտածողությունը բարձրագույն իմացական գործընթաց է, որի շնորհիվ մարդը կարողանում է դուրս գալ անմիջական զգայական ընկալման միջո-

<sup>17</sup> Маклаков 2012, 247-281.

ցով ստացված տվյալների սահմաններից և բացահայտել երևույթների ներքին, էական, օրինաչափ կապերն ու հատկանիշները<sup>18</sup>:

Անձի մտածական գործունեության առանձնահատկությունները կապված են նրա նյարդային համակարգի գործընթացների գրգռման և արգելակման դինամիկայի հետ<sup>19</sup>: Ունկնդրի մտածողության առանձնահատկությունների մասին գիտելիքները հնարավորություն կտան դասախոսին պատկերացում ունենալու ունկնդրի մտավոր կարողությունների, ընդունակությունների մասին:

Ուսումնական գործունեության յուրահատուկ կազմակերպման ազդեցությամբ էական փոփոխություններ են տեղի ունենում ունկնդիրների մտածողական գործունեության մեջ<sup>20</sup>, մտավոր աշխատանքի բնույթի մեջ: Գնալով ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում դասախոսությունները, լաբորատոր և այլ գործնական պարապմունքների ինքնուրույն կատարումը, ռեֆերատներ գրելը. ունկնդիրն ավելի հաճախ ինքնուրույն է ըմբռնում ուսումնասիրվող նյութը, որի հետևանքով մտածողությունը ստանում է ավելի ակտիվ, ինքնուրույն և ստեղծագործական բնույթ:

Մտածողական գործունեությունը բնութագրվում է ընդհանրացման և վերացարկման առավել բարձր մակարդակով, երևույթներին պատճառական բացատրություն տվող միտումով, առանձին դրույթների ճշմարիտ կամ կեղծ լինելը փաստարկելու, ապացուցելու կարողությամբ, լուրջ եզրակացություններ անելու, ուսումնասիրվելիքը համակարգի բերելու կարողությամբ: Զարգանում է ունկնդիրների մտածողության քննադատականությունը: Այս բոլորը տեսական, իրական մտածողության և շրջապատող աշխարհի ընդհանուր օրենքները, բնության և հասարակության զարգացման օրենքները ճանաչելու ընդունակության ձևավորման նախադրյալներն են:

Ուսուցման գործընթացում ունկնդիրը պետք տիրապետի ինքնուրույն մտածելու կարողությանը, ինքնուրույն մտավոր աշխատանքին, գիտելիքները ինքնուրույնաբար ձեռք բերելու մեթոդիկային և տեխնիկային, կամ, ինչպես ասում են, տիրապետի ինքնուսուցման կարողությանը: Շատ հաճախ մտածական գործունեության մեջ ինքնուրույնության բացակայությունը ունկնդիրների աշխատանքի էական թերություններից մեկն է, որը բացատրվում է ուսումնական խնդրի այնպիսի դրվածքով, երբ ունկնդրից չի պահանջվում դատողություն, ինքնուրույն միտք, սեփական կարծիք, երբ ամեն ինչ հանգեցվում է ուրիշի մտքերը, ուրիշի փաստարկումները վերարտադրելուն: Այս առումով դասախոսները պետք է հաշվի առնեն, որ ունկնդիրները հակված են մեծ ուշադրություն դարձնելու այս կամ այն դրույ-

<sup>18</sup> Նալչաջյան 2016, 485-488:

<sup>19</sup> Ефимова 2013, 132-140.

<sup>20</sup> Ключо, Сухарева 2015, 77-84, 88-91.

թի փաստարկվածությանը և ապացուցվածությանը: Դասախոսի խնդիրն է այնպիսի ընթացք տալ վերլուծությանն ու քննարկմանը, որ ունկնդիրը ինքնուրույնաբար ճիշտ եզրահանգի:

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է կազմակերպել ունկնդրի մտածական գործունեությունը: Դա ենթադրում է՝

- մտածողության բոլոր գործառույթների կիրառում.
- մտածողության վերը նշված տեսակների օգտագործում.
- մտածողության վերը նշված անհատական առանձնահատկությունների հաշվառում.
- վերարտադրողական մտածողության հիմքի վրա ստեղծագործական մտածողության տարրերի կիրառման խրախուսում:

### Եզրակացություններ

1. Մանկավարժական գործունեությունն անմիջականորեն կապված է հոգեբանական գիտության հետ: Հետևաբար, յուրաքանչյուր մանկավարժ, դասախոս պետք է ունենա հոգեբանական գիտելիքների որոշակի պաշար՝ այն արդյունավետ իրականացնելու համար:

2. Ուսումնական գործունեության ընթացքում պետք է հաշվի առնել ունկնդիրների անհատական հոգեբանական և հոգեճանաչողական գործընթացների առանձնահատկությունները:

### Օգտագործված գրականություն

- Նալչաջյան Ա.Ա. 2016, Հոգեբանության հիմունքներ: Գիրք 1, 2-րդ բարեփոխված հրատարակչություն, Երևան, «Բուկինիստ», 672 էջ:
- Նալչաջյան Ա.Ա. 2016, Հոգեբանության հիմունքներ: Գիրք 2, 2-րդ բարեփոխված հրատարակչություն, Երևան, «Բուկինիստ», 544 էջ:
- Айсмонтас Б.Б. 2002, Педагогическая психология: схемы и тесты, Москва, «Владос-Пресс», 208 с.
- Гамезо М.В., Петрова Е.А., Орлова Л.М. 2003, Возрастная и педагогическая психология, Москва, «Педагогическое общество России», 512 с.
- Ефимова Н.С. 2013, Основы общей психологии, Москва, изд. «Форум», «Инфра-М», 288 с.
- Зимняя И.А. 2009, Педагогическая психология. Изд. 2-е доп., испр. перераб., Москва, «Логос», 384 с.
- Клюева Н.В., Батракова С.Н., Варенова Ю.Л. и др. 2003, Педагогическая психология, Москва, «Владос-Пресс», 400 с.
- Ключо О.И., Сухарева Н.Ф. 2015, Педагогическая психология, Москва, Берлин, «Директ-Медиа», 235 с.
- Маклаков А.Г. 2012, Общая психология, Санкт-Петербург, «Питер», 583 с.
- Марцинковская Т.Д. 2013, Психология, Москва, «Академия», 400 с.

- Немов Р.С. 2000, Психология в 3-х кн., 3-е изд., Москва, «Владос», кн. 2: Психология образования, 608 с.
- Немов Р.С. 2003, Психология в 3-х кн., 4-е изд., Москва, «Владос», кн. 1: Общие основы психологии, 688 с.
- Регуш Л.А., Орлова А.В. 2011, Педагогическая психология, СПб., «Питер», 416 с.
- Рубинштейн С.Л. 2000, Основы общей психологии, СПб., «Питер», 712 с.
- Столяренко Л.Д. 2003, Педагогическая психология. Серия «Учебники и учебные пособия», 2-е изд., перераб. и доп., Ростов н/Д, «Феникс», 544 с.

## ПСИХОЛОГИЯ ОБУЧЕНИЯ КАК ОСНОВА ЭФФЕКТИВНОГО ОСУЩЕСТВЛЕНИЯ ПЕДАГОГИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Лусине Саакян

Резюме

Эффективность процесса обучения зависит от психологических особенностей личности и психопознавательных процессов. Освоение и применение педагогических путей управления и организации последних является залогом успеха деятельности педагога. Педагогический процесс невозможно представить без достижений психологической науки. В обеспечении эффективности процесса обучения важно учитывать некоторые психологические особенности и психопознавательные процессы человека, а также педагогические пути организации этих процессов. При этом нельзя умалять роль и место психологии обучения в науке, связь процесса обучения с психологическими особенностями личности. Следует воспитывать у слушателей косвенные опосредованные интересы. Заслуживают особого внимания взаимоотношения «преподаватель-слушатель» с точки зрения оптимальной организации учебного процесса.

**Ключевые слова** – психология обучения, мотивация обучения, эффективность обучения, педагогическая психология, психологические признаки, познавательные процессы, процессы памяти.

## PSYCHOLOGY OF LEARNING AS A BASIS FOR EFFECTIVE IMPLEMENTATION OF PEDAGOGICAL ACTIVITY

Lusine Sahakyan

Abstract

The effectiveness of the learning process depends on the psychological characteristics of the individual and psycho-cognitive processes. The development and application of pedagogical ways of management and organization of the latter is the key to the success of the pedagogue's activity. The pedagogical process cannot be imagined with-

---

out the achievements of psychological science. It is shown that in providing the effectiveness of the learning process, it is important to take into account some psychological features and psycho-cognitive processes of a person, as well as pedagogical ways of organizing these processes. In the frames of this contribution the role and place of the psychology of learning in science, the connection of the learning process with the psychological characteristics of the individual are presented, the necessity of educating students of indirect mediated interests is substantiated, the motives of the educational activity of the lecturer and the listener, the relationship "lecturer-listener" are described from the point of view of the optimal organization of the educational process, as well as the main types of cognitive processes are analyzed (attention, memory and thinking in the educational process).

**Key words** – psychology of learning, motivation of learning, effectiveness of learning, pedagogical psychology, psychological features, cognitive processes, memory processes.

ПАМЯТИ БОРЦА ЗА СВОБОДУ – ДЖОРДЖА ГОРДОНА БАЙРОНА<sup>1</sup>  
(к 200-летию со дня смерти)

**Анаит Бекарян**

Кандидат филологических наук  
Институт искусств НАН РА  
РА, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4  
Эл. адрес: abekaryan@mail.ru  
ORCID: 0000-0001-7980-4180

Статья представлена 20.01.2024, рецензирована 06.04.2024, принята к публикации 25.04.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.1-350

**Аннотация**

19 апреля 2024 г. исполнилось 200 лет со дня смерти великого английского поэта. Многие армянские поэты воспели в своих стихах образ неутомимого борца за свободу Дж. Байрона, оставившего яркий след в армянской культуре, изучавшего армянский язык и литературу. Образ мятежного поэта был созвучен армянскому народу, на долю которого выпали тяжкие испытания. Личность Джорджа Байрона стала героем лирических произведений как западноармянских, так и советских армянских поэтов.

**Ключевые слова** – Джордж Байрон, армянские поэты, стихотворения, Ованес Туманян, мхитаристы, Рубен Ворберян, Грачья Ованнисян.

**Вступление**



**Рис. 1.** Джордж Байрон

Джордж Байрон был воспет многими армянскими поэтами. Великий английский поэт, искренний друг армянского народа не мог оставаться равнодушным к судьбам гонимых народов, надолго которых выпали тяжкие испытания.

В своих поэтических посвящениях Байрону армянские поэты характеризовали его как борца за свободу, как яркую индивидуальность с ее порывами, увлечениями, с ее поиском истины и

---

<sup>1</sup> Цитируемые в статье образцы армянской поэзии даны в переводе **Гаянэ Арутюнян**.

справедливости. Байрон стал героем лирических произведений Смбата Шахазиза и Ованеса Туманяна, Рубена Ворберяна и Ваграма Торгомьяна, Егиа Печикяна и Арамаиса Срапяна, Мари Атмачян, Наири Зарьяна и Грачья Ованнисяна, Анаит Парсамян и Сурена Мурадяна, Ваагна Каренца и многих других.

Поэзия лорда Байрона оказала огромное влияние на творчество армянского поэта, педагога и публициста Смбата Шахазиза (1840-1907). В стихотворении «Раздумья поэта», обращаясь к Байрону, воздвигнувшему себе «памятник, достигающий неба», С. Шахазиз пишет, что «слава Байрона в Англии выше гор Альпийских»<sup>2</sup>. По словам С. Шахазиза, «раскрепощенный дух» поэта «мог вызвать зависть многих».

Гений Байрона восславил Англию, которая подарила миру такого мыслителя и лирика:

Слава лиры бесценной твоей,  
Воспевшей Греции руины,  
Прекрасна, как сама Эллада.

Скажи, о Байрон, кто в твои уста  
Вложил отчаянья высокую печаль?<sup>3</sup>

Великий армянский поэт Ованес Туманян перевел поэму Байрона «Шильонский узник», и, вполне вероятно, что именно в этой связи Туманян посвятил английскому поэту стихотворение, которое вместе с выше-названным переводом впервые было издано в Тифлисе в 1896 г.<sup>4</sup> В своем поэтическом посвящении О. Туманян воспел поэта – истинного друга свободолюбивых народов, отдавшего жизнь за свободу Греции.

Как примирить сумел  
Твой гений, о, поэт,  
Сковавшие свободу цепи  
С человеческой свободой,  
И как ты усладить сумел  
Всю скорбь и горечь несвободы?!<sup>5</sup>

<sup>2</sup> Շահազիզ 1947, 55, Շահազիզ և այլք 1980, 32:

<sup>3</sup> Շահազիզ 1947, 55, Շահազիզ և այլք 1980, 32:

<sup>4</sup> Բայրոն 1896:

<sup>5</sup> Թումանյան 1969, 145:

Не боясь навлечь на себя гнев английской аристократии, он во всеуслышание заявил, что Англия – это тюрьма. Всей мощью своего таланта Байрон с горькой иронией писал о действовавших в Англии законах. Вот как откликнулся на это Ов. Туманян:

Как смог ты превратить  
Тюрьму в отчизну  
И мир – в огромную тюрьму?<sup>6</sup>

Вступление к поэме Рубена Ворберяна (1874-1931) «Всплески» целиком посвящено Байрону. Жизнь и творчество Байрона представлены в поэме в хронологической последовательности. Р. Ворберян подробно останавливается на всех эпизодах его жизни и паломничества в те или иные страны. Перед нами предстает образ свободолюбивого борца с тиранией, борца за свободу Греции.

В последний раз  
Орлиный взор свой обратив  
К алеющему горизонту,  
Ты прошептал: «Пусть я умру»,  
Но пусть Эллада обретет свободу...»<sup>7</sup>.

Описывая смерть Байрона, Р. Ворберян пишет: «хотя и минуло целое столетие со дня его смерти, но даже с небес он взирает на Грецию»:

Чтоб тень не упала  
На флаг ее голубой,  
Чтоб не вернулись  
Прошлого дни,  
Чтоб вновь не сгорала  
Эллада в плену,  
Да будет свободной Эллада!<sup>8</sup>

Во вступлении к своей поэме Р. Ворберян пишет о том, с каким интересом относился Байрон к культуре и истории армянского народа:

<sup>6</sup> Թումանյան 1969, 145:

<sup>7</sup> Որբերյան, Սևակ, Թեքեյան, Ջարիֆյան 1981, 41:

<sup>8</sup> Որբերյան, Սևակ, Թեքեյան, Ջարիֆյան 1981, 41:

Не зная и не видя Арарата,  
Ты возлюбил язык наш, письмена,  
Пытаясь их прочесть,  
Главу склонял над ними...<sup>9</sup>

Общаясь с мхитаристами на о. Св. Лазаря, Байрон имел обыкновение гулять по острову, любоваться его живописной природой. Здесь, на острове, у него был любимый уголок под сенью оливковых деревьев, где он любил отдыхать и предаваться мыслям и мечтам. «Байроновские» оливы были воспеты в стихах армянских поэтов Егиа Печикяна, Ваграма Торгомьяна и Арамаиса Срапяна.

Один из видных представителей армянской культуры – Егиа Печикян (1895-1964) в 1930-1939 и 1952-1953 гг. возглавлял редакцию журнала «Базмавеп». Е. Печикян является автором ряда интересных филологических исследований. В течение 40 лет (в 1923-1963 гг.) он преподавал новым членам мхитаристской конгрегации древнеармянский язык (грабар), ашхарабар и армянскую литературу. Е. Печикян оставил богатое литературное наследие<sup>10</sup>, в том числе поэтические сочинения, которые в основном представлены в его сборнике «Лирические беседы». В годы Второй мировой войны Е. Печикян помогал армянским беженцам, нуждающимся в содействии армянским студентам, с любовью выполнял любую работу во благо нации. И, разумеется, он не мог остаться равнодушным к личности, творчеству и героическому образу Байрона. В своем стихотворении «Байроновские оливы», изданном в журнале «Базмавеп» в 1924 году, он обращается как к образу Мхитара Себастици, которым еще сто лет назад была основана конгрегация мхитаристов, так и к Байрону, с глубоким пиететом относившемуся к святым отцам конгрегации, «молчаливый и возвышенный облик» которых являл для Байрона свидетельство величия духа Востока:

.....  
К острову счастья в гондоле поплыл,  
Чтобы приветствовать его берега.  
Здесь седовласых старцев он зрил,  
И молчаливый облик их

<sup>9</sup> Որբերյան, Աւակ, Թերեյան, Ջորիճյան 1981, 42:

<sup>10</sup> Библиографический список его литературного наследия был издан в журнале «Базмавеп» 1964, N 1-3.

О величии духа Востока  
Ему говорил<sup>11</sup>.

В своих поэтических строках Е. Печикян воссоздал образ человека, который хотел жить вечно очарованным, которого пленяли красота природы, далекие берега и, главное, образ человека, одержимого борьбой за свободу:

Природы красотой замороженный,  
Далекие он видел берега,  
Сраженья лицезрел  
Он за свободу,  
Победы сладость он познал<sup>12</sup>.

В 1816-1819 гг. живя в Венеции, Байрон был охвачен пламенем борьбы за свободу и, говоря словами Е. Печикяна, жаждал:

Кровью чистой своею омыть  
Гомера и Софокла могилы,  
Оковы крепкие несвободы сломить  
Всех гениев и муз мира...<sup>13</sup>

И, простившись с мхитаристами, поэт отправился в Грецию, где он должен был погибнуть как герой:

Последний раз приветствовал он остров,  
Его уже манило поле брани,  
И героическая его манила смерть<sup>14</sup>.

Перед отъездом в Грецию Байрон в последний раз посетил своих армянских друзей-мхитаристов и, прощаясь, воскликнул:

На этом острове прекрасном  
Душа познала наконец покой –  
В тени олив священных –  
Свидетелей дней моих<sup>15</sup>

---

<sup>11</sup> Փեչիկեան 1924, 339:

<sup>12</sup> Փեչիկեան 1924, 339:

<sup>13</sup> Փեչիկեան 1924, 339-340:

<sup>14</sup> Փեչիկեան 1924, 340:

<sup>15</sup> Փեչիկեան 1924, 340:

Восхищенных на этой земле,  
Которую так горячо я люблю!

Прошло почти полтора столетия, но и сегодня «байроновские» оливы своим мирным шелестом словно хотят поведать посетителям острова «о мыслях и думах бессмертного поэта»<sup>16</sup>.

Как было отмечено выше, о «байроновских» оливах писал также врач, историк и общественный деятель Ваграм Торгомян (1858–1942). Стихи о Байроне и столь любимых поэтом оливах были написаны В. Торгомяном в 1827 г., в Париже. Они были посвящены тогда еще здравствовавшему Р. Ворберяну и изданы в журнале «Базмавеп» в 1932 г. Стихам был предпослан автограф – «Поэту и другу, господину Р. Ворберяну, поклоннику лорда Байрона». В этом стихотворении В. Торгомян описывает «армянский» остров неподалеку от Венеции и любимое Байроном «старое, красивое» оливковое дерево:

Под ним сидеть любил поэт,  
Предаться мыслям, помечтать,  
Когда к нам в храм он приходил  
Язык родной наш изучать<sup>17</sup>.

Эта «древняя олива», которой было более ста лет, «выстояла и в бурю, и в прохладу», оставшись нестигаемой; ее хотел увидеть не только каждый армянин, посетивший остров, но и «каждый гость острова»<sup>18</sup>. Место, где она росла, было своеобразным местом паломничества. «Под этим загадочным зеленым деревом» В. Торгомяну казалось, что вернулись исполненные счастья «школьные дни», и он сидит в тени олив:

Желал я мудрость почерпнуть  
Из рукописей острова святого,  
Писали их Юрмуз, Агонц, Багратуни,  
Отец Святой – бессмертный Алишан...  
И словно рядом с ним находился и сам Байрон:  
С охапкой томиков лорд Байрон

---

<sup>16</sup> Փեշիկեան 1924, 340:

<sup>17</sup> Թորգոմեան 1932, 380:

<sup>18</sup> Թորգոմեան 1932, 380:

Язык наш учит день и ночь,  
 Народу нашему  
 Опорой стать он хочет,  
 Всем сердцем нас  
 Однажды полюбив<sup>19</sup>.

В. Торгомяну трудно было расстаться с живописными оливами Байрона:

Храма колокол вещает –  
 «Вас разлука ожидает –  
 С сердцу милой панорамой  
 Вам расстаться предстоит»...

Очнувшись от раздумий, он возвращается в реальность и в память об этом незабываемом дне срывает несколько веток, чтобы передать их тем своим друзьям, которые с безграничным почитанием относятся к таланту Байрона, вызывающего у них чувство восхищения:

Его талант нас восхищает  
 И поклоненье вызывает...<sup>20</sup>

Воспевая оливы острова Св. Лазаря, В. Торгомян верит в то, что оливы –  
 Символ мудрости  
 И символ изобилья,  
 И шелест их листья  
 Нам говорит  
 О славе, о любви<sup>21</sup>.

Врач, поэт и прозаик, выпускник Миланского университета Арамаис Срапян (1910–1969), который был очевидцем трагических событий, имевших место в судьбе армянского народа, посвятил три стиха Байрону – борцу за свободу и справедливость, вставшему на защиту народов, борющихся за свои права и человеческое достоинство («Байрон на о. Св. Лазаря», 1932 г., «Под байроновскими оливами», 1938 г., и «Вновь с

<sup>19</sup> Թորգոմեան 1932, 381:

<sup>20</sup> Թորգոմեան 1932, 381:

<sup>21</sup> Թորգոմեան 1932, 381:

тобой», 1959 г.). Детство Арамаиса Срапяна было похоже на детство многих детей из Западной Армении – оно прошло на дорогах изгнания и в сиротских приютах. А. Срапян в 1929 г. окончил гимназию Мурад-Рафаэлян. Затем он продолжил учебу в Миланском университете и получил квалификацию врача. А. Срапян был одним из активных организаторов армянского культурного движения в Милане. По его инициативе и под его руководством группой бывших учащихся гимназии Мурад-Рафаэлян был создан в Милане (в 1945 г.) Армянский культурный союз. А. Срапяном были изданы два поэтических сборника – «Встречи с музой», «Из Азоло в Венецию» и сборники прозаических произведений – «Под прицелом оружия» и «С альпийскими солдатами». В 1971 г. в Ереване, в издательстве «Айастан» был опубликован сборник «Неоконченное шествие», в который вошло также стихотворение «Под байроновскими оливами», написанное в Венеции 27 августа 1936 г. и впервые изданное в 1938 г. в журнале «Базмавеп»<sup>22</sup>. А. Срапян сотрудничал также с редакциями армянских периодических изданий «Гегуни», «Мхитаристская семья», «Вперед», «Еркунк» («Муки»), «Звартноц», «Жизнь и искусство», «Наири», «Базмавеп». Именно на страницах «Базмавепа» были изданы стихи, посвященные Байрону. Первый из них был опубликован в 1932 г.<sup>23</sup> А. Срапян пишет о том, что «на этом гостеприимном, словно погруженном в меланхолию островке Байрон предавался мечтам, любил сидеть под этим деревьями и учить «святой и дивный наш язык». Однако навсегда умолкла лира Байрона:

Замолкло твоё пламенное сердце,  
Которое боролось со стихией моря,  
И мыслей твоих пламя,  
Что молнии небесной было ярче,  
Увы, погасло навсегда.

Личность Байрона оставила глубокий след в сердцах ученых-монахов мхитаристской конгрегации. И даже растущие на острове Св. Лазаря «мечтательно устремленные ввысь кипарисы» словно «испытывают боль от страшной печали»<sup>24</sup>.

---

<sup>22</sup> Մրապեան 1938, 133-138, Մրապեան 1971, 11-18:

<sup>23</sup> Մրապեան 1932, 272:

<sup>24</sup> Մրապեան 1932, 272:

Второе стихотворение А. Срапяна, посвященное Байрону («Под байроновскими оливами»), представляет собой раздумья поэта о жизни, любви, а также его мысли об искусстве.

Третье стихотворение А. Срапяна о Байроне («Вновь с тобой»), являющее собой размышления поэта, его мечты, как уже было отмечено, было опубликовано в журнале «Базмавеп» в 1959 г. А. Срапян каждый вечер вместе со своей дочерью приходил к памятнику Байрону и, подолгу стоя перед ним, слагал стихи:

Каждый вечер, в восемь часов  
Приходил я с дочкой к тебе,  
И подолгу пред тобою стоял.  
Дочь, не в силах взгляд  
От тебя оторвать,  
Изумлялась – ужели  
Знал я тебя,  
Ужели с тобой  
Был знаком?<sup>25</sup>

Оба поэта еще с давних пор знали друг друга заочно, но познакомились они на о. Св. Лазаря:

Как непросто мне ей  
Рассказать о жизни твоей,  
Но мне нужно сказать о том,  
Как давно мы знакомы с тобой.

И вовсе не случайно родились у А. Срапяна строки, символизирующие образ Байрона, воплощенного в камне:

Со лба его стекала  
Кровь на пьедестал,  
С гранатом смешиваясь  
Алого заката<sup>26</sup>.

---

<sup>25</sup> Уրաշյանի 1959, 209:

<sup>26</sup> Уրաշյանի 1959, 209:

Как видим, живший на чужбине армянский поэт Арамаис Срапян высоко ценил поэзию Байрона, его непревзойденный талант и неординарное мышление. Он был благодарен английскому поэту, изучавшему на о. Св. Лазаря язык и культуру армянского народа.

Байрону посвящала стихи также жившая во Франции армянская поэтесса Мари Атамчян (1913–1999). Ее «Песнь лорду Байрону» впервые была издана в 1963 г. в журнале «Базмавеп», в дальнейшем стихотворение вошло в ее сборник «Золотой дифирамб», вышедший в свет в Париже в 1967 г. В этом стихотворении М. Атамчян выразила свое искреннее восхищение талантом поэта, отметив, что «нет ни одной книги», в которой, образно говоря, «не взошла бы вызывающая восхищение звезда» великого поэта.

Обращаясь к своим современникам, она восклицает:

Нет в мире сада песни и мечты,  
В котором не цвела б твоя улыбка,  
Где сердца твоего душистый ладан  
Не смог разжечь бы пламя  
Тайн и красоты.

И нет в истории такого зла  
Ни в прошлом, ни сегодня,  
Которое сверкающего твоего меча  
Смогло бы избежать, как приговора...<sup>27</sup>

Поэтесса напоминает читателю о том, что в армянской церкви на о. Св. Лазаря по сей день хранят память о Байроне, и она сама, сидя под серебристыми «байроновскими» оливами, думает о поэте, лелея смутную надежду встретить его здесь:

В монастырском саду  
Я искала тебя,  
Увидеть мечтала  
Тебя под оливами.

---

<sup>27</sup> Մթնաճեղի 1967, 93:

Далее М. Аتماчян пишет о том, с каким неопишным волнением листала она «Грамматику», по которой поэт учил армянский – язык великого Нарекаци, и, думая о нем, она сама словно пережила минуты его жизни<sup>28</sup>. Поэтесса пыталась мысленно проследить жизненный путь Байрона, который был нелегким, но в то же время героическим, исполненным любви к свободе и справедливости:

От Альбиона до Равенны,  
От Венеции до Лемана,  
Аркостола и Коринфа,  
Тебя, о Байрон, апостола, героя  
Так лихорадочно влекла свобода,  
Ты жертвой стать ее спешил,  
Свет вечности тебя манил...<sup>29</sup>

К жизни и творчеству Байрона обращались также многие армянские поэты советского периода – Сармен, Наири Зарян, Грачья Ованнисян, Сурен Мурадян, Анаит Парсамян, Ваагн Каренц, Ашот Граши и другие.

Стихотворение Гр. Ованнисяна «Байрон» вошло в его сборник «Молчание моря», изданный в 1964 г. Как указано в сборнике, созданные английским поэтом герои напоминают его самого.

Покинув Англию, где царили жестокость и насилие, он рвался туда, где нужна была его поэзия, где звуки его поэтического горна могли воодушевить людей на подвиг. Подобно своим героям, он везде боролся за справедливость и свободу, ибо, как писал Гр. Ованнисян, стремление к свободе – это общечеловеческое желание:

Пытаясь разорвать  
Оковы несвободы и печали,  
Ты мщенья выбрал путь  
На греческой земле.  
Поскольку тирания  
Везде одна и та же<sup>30</sup>,  
И одинакова свободы  
Жажда на земле.

<sup>28</sup> Աթմաճեան 1967, 93-94:

<sup>29</sup> Աթմաճեան 1967, 95:

<sup>30</sup> Հովհաննիսյան 1964, 35:

И как пишет Гр. Ованнисян, нам и сегодня нужны люди, подобные Байрону и созданным им героям.

Они нужны везде,  
Где говорят оковы,  
Где дух свободный  
Заточен в тюрьму<sup>31</sup>.

В поэтических посвящениях армянских поэтов Байрону в основном озвучена идея свободы, которая была для него столь важна и необходима. Говоря словами армянских поэтов современности, ими был создан поэтический образ Байрона – человека, который был похож на своих героев: «он пренебрег ничтожной славой королей...»<sup>32</sup> и «бежал от жестоких людей и жалкой морали»<sup>33</sup>, «оставив родные берега, к чужим стремился горизонт»<sup>34</sup>. Обращаясь к святым отцам мхитаристской конгрегации, Байрон просил их:

– Хочу, о, старец  
Ваш язык учить,  
Хочу найти в нем  
Утешенье и сёрдца  
Буйство укротить...<sup>35</sup>

И рукописи бережно листая,  
Народа нашего он  
Душу постигал,  
И понял, что сродни она  
Душе его в печали.

### **Заключение**

Стихи армянских поэтов о Байроне ценны именно своей безграничной искренностью и непосредственностью. И это вполне естественно, поскольку они обращены к человеку который во всех своих жизненных

---

<sup>31</sup> Հովհաննիսյան 1964, 36:

<sup>32</sup> Պարսամյան 1982, 83:

<sup>33</sup> Ջարյան 1968, 7:

<sup>34</sup> Սարմեն 1967, N 42:

<sup>35</sup> Մուրադյան 1976, 140:

ипостасях оставался верным своему призванию – поэта и борца за свободу и который всем своим талантом служил великому и истинному искусству.

### Использованная литература

- Աթմաճեան Մ. 1967, Ոսկի գեղօն, Քերթաճքներ, 1960-1967, Փարիզ, 143 էջ:  
 Բայրոն 1896, Շիլիոնի կալանավորը, Թիֆլիս, 22 էջ:  
 Զարյան Ն. 1968, Սպասում եմ քեզ, Երևան, «Հայաստան», 205 էջ:  
 Թորգոմեան Վ. 1932, Լորտ Պայրոնի ծիթենիէն, Բազմավէպ, N 8-9, էջ 380-381:  
 Թումանյան Հ. 1969, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, «Հայաստան», 479 էջ:  
 Մուրադյան Ս. 1976, Կապույտ թռչուն, Երևան, «Հայաստան», 140 էջ:  
 Պարսամյան Ա. 1982, Օրվա հեքիաթներ, Երևան, «Սովետական գրող», 83 էջ:  
 Հովհաննիսյան Հր. 1964, Ծովի լռությունը, Երևան, «Հայպետհրատ», 261 էջ:  
 Շահազիզ Ս. 1947, Երկեր, Երևան, «Հայպետհրատ», 255 էջ:  
 Շահազիզ Ս., Հովհաննիսյան Հովհ., Ծատուրյան Ա., Միրաքյան Վ. 1980, Երկեր, «Սովետական Գրող», Երևան, 638 էջ:  
 Որբերյան Ռ., Սևակ Ռ., Թեքեյան Վ., Զարիֆյան Մ. 1981, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 480 էջ:  
 Սարմեն 1967, Բայրոնի արձանի առջև, Գրական թերթ, N 42:  
 Սրապեան Ա. 1932, Պայրոն ի Ս. Ղազար, Բազմավէպ, N 6-7, 272 էջ:  
 Սրապեան Ա. 1938, Պայրոնեան ծիթենիներուն տակ, Բազմավէպ, N 4-5, էջ 133-138:  
 Սրապեան Ա. 1959, Դարձեալ քեզի հետ. Պայրոն ի Վիյնէով-Մ, Բազմավէպ, N 9-10, էջ 209:  
 Սրապյան Ա. 1971, Անավարտ երթ, Երևան, «Հայաստան», 334 էջ:  
 Փեչիկեան Ե. 1924, Պայրոնեան ծիթենիք ի Ս. Ղազար, Բազմավէպ, N 10, էջ 339-340:

## ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԻԿԻ՝ ԶՈՐՋ ԳՈՐԴՈՆ ԲԱՅՐՈՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ (մահվան 200-ամյակի առթիվ)

Անահիտ Բեքարյան

Ամփոփում

2024 թ. ապրիլի 19-ին լրացավ Բայրոնի մահվան 200-ամյակը: Շատ հայ բանաստեղծներ ներբողներ են ձոնել և բազմաթիվ սրտառույ տողեր նվիրել բանաստեղծին: Դրանց միջոցով հայ բանաստեղծները բնորոշել են ազատության համար մարտնչող Բայրոն-մարտիկին, հայոց լեզուն, հայ գրականությունն ու մշակույթն ուսումնասիրող մեծ անհատին՝ տալով նրա խռովահույզ հոգու, խոհերի և պոռթկումների իրական նկարագիրը: Բայրոնին ներբողներ են ձոնել Սմբատ Շահազիզը, Հովհաննես Թումանյանը, Ռուբեն Որբերյանը, Վահրամ Թորգոմյանը, Եղիա Փեչիկյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Նաիրի Զարյանը և ուրիշներ:

**Բանալի բառեր՝** Զորջ Բայրոն, հայ բանաստեղծներ, բանաստեղծություններ, Հովհաննես Թումանյան, Մխիթարյաններ, Ռուբեն Որբերյան, Հրաչյա Հովհաննիսյան:

---

---

**IN COMMEMORATION OF THE CHAMPION FOR FREEDOM GEORGE GORDON BYRON (ON THE 200TH ANNIVERSARY OF THE POET'S DEATH)**

Anahit Bekaryan

## Abstract

On April 19, 2024 we commemorate the bicentenary of George Gordon Byron's death. Many Armenian poets have expressed their deep admiration for Byron, penning heartfelt verses in his honour. In Armenian poetry, Byron is often revered as a champion of freedom and known for his study of the Armenian language, literature, and culture. Pieces by Armenian poets resonate with the poet's rebellious spirit. Among the dithyrambs dedicated to Byron are those by Smbat Shahaziz, Hovhannes Toumanian, Rouben Vorberian, Vahram Torgomian, Eghia Pechikian, Hrachia Hovhannisyan, Nairi Zaryan and others.

**Key words** – George Byron, Armenian poets, poems, Hovhannes Tumanyan, Mekhitarists, Ruben Vorberian, Hrachia Hovhannisyan.

## БИОГРАФИИ УЧЕНЫХ В ДОКУМЕНТАХ

## ГУРГЕН КОЧАРЯН



Видный ученый и педагог, географ, картограф, доктор географических наук, профессор Гурген Аветович Кочарян является основателем важных отраслей науки – экономической географии и экономической картографии в Армянской и Азербайджанской ССР. Его исследования и практическая деятельность в данных областях народного хозяйства заложили прочный фундамент для будущего. Ученый родился 9 марта 1893 г. в Баку, в семье мелкого служащего, выходца из Нагорного Карабаха. Среднее образование получил в бакинской гимназии, которую окончил в 1912 г. С 1912 по 1917 г. учился в Харькове и Москве на юридическом факультете МГУ. Выехав по болезни в Кисловодск, работал там в течение года как преподаватель общественных дисциплин в старших классах средних учебных заведений. В 1921 г. переехал в Баку, где преподавал в Политехническом университете до 1925 г. Здесь в 1922 г. получил звание доцента. В 1925 г. Г. Кочарян был приглашен СНК ССР Армении в Ереван, где был назначен на должность председателя комиссии по экономическому районированию Госплана. Одновременно читал лекции в Ереванском университете по экономической географии, был заведующим кафедрой до 1936 г. В 1929 г. получил звание профессора. В 1926-1928 гг. и 1932-1934 гг. избирался депутатом Ереванского городского совета. Комиссия по районированию под руководством Кочаряна приступила к всестороннему географическому изучению водных, земельных, растительных ресурсов и хозяйства. Районирование республики являлось важнейшим условием государственного строительства и социально-экономического развития и рассматривалось в качестве составной части районирования всей территории СССР. При этом максимально учитывались природные, историко-географические, демографические и экономические особенности Армении. Были разработаны и представлены правительству республики схемы экономического и административного районирования. На их основе Президиум ЦИК ССРА 26 июля 1929 г.

принял постановление «О районировании территории Армении», согласно которому республика была разделена на 5 уездов (округов) и 31 район и города республиканского значения (вместо прежних 9 уездов и городов).

В начале 1930-х годов, по сфабрикованным обвинениям, Г. Кочарян, как приверженец теоретических взглядов крупнейших русских экономистов Н.Д. Кондратьева, А.В. Чаянова, А.Н. Челинцева и др., вместе с рядом специалистов народного хозяйства Армении (Х. Авдалбекян, А. Атанесян, С. Камсаракан, Б. Мамян, О. Пирумян А. Серебрякян и др.) подвергся репрессиям. Приказом Педагогического института от 7 мая 1931 г. преподаватель Г. Кочарян как глава «местной кондратьевщины» был освобожден от занимаемой должности. В одной из своих автобиографий Г. Кочарян писал: «В 1936 г. в связи с травлей, которой подвергся за составление экономической записки по Ереван-Актафинской железной дороге и брошюры «Севанская магистраль» (эта дорога в угоду Берии была приписана вредительской), переехал в г. Баку, где по приглашению СНК Азербайджанской ССР приступил к составлению Атласа Азербайджанской ССР». Одновременно читал лекции по экономической географии и заведовал кафедрой в местных вузах.

В 1944 г. Г. Кочарян по предложению Академии наук Армянской ССР начал работать в секторе экономики в качестве руководителя сектора географии, а с 1948 по 1958 г. преподавал на экономическом и географическом факультетах Ереванского госуниверситета и вновь возглавил кафедру экономической географии. Здесь под его руководством были начаты работы по составлению атласа Армянской ССР, который был издан в 1961 г. в Ереване и Москве на армянском и русском языках. В эти годы Г. Кочарян составил крупномасштабную экономическую карту Армянской ССР, написал учебник «Экономическая география Армянской ССР».

Перу Г. Кочаряна принадлежит ряд научных трудов и около 100 картографических работ. Среди них – «Армянская ССР. Экономико-географический очерк», «Азербайджанская ССР. Экономико-географический очерк», «Нагорный Карабах», «Районирование ССР Армении», «Севанская магистраль», «Экономическая карта Азербайджанской ССР», «Экономическая география Азербайджанской ССР», «Контрольные цифры по Армении», «Население и культура Армянской ССР», «Принципы внутреннего районирования», «Атлас Азербайджанской ССР», «Альбом карт: административные районы Азербайджанской ССР» и др.

Гурген Кочарян умер 19 марта 1972 г. в Баку (подробнее см.: Национальный архив Армении, ф, 20, оп. 10, д. 718, 719; Архив Академии наук Армянской ССР, ф. 1, оп. 1, д. 1056; Восканян А. Кочарян Гурген Аветиси // Профессора Ереванского университета, часть 1, Ереван, 1970, с. 258-259

(на арм. яз.); Валесян Лемвел. Видный ученый и педагог (к 100-летию со дня рождения проф. Г.А. Кочаряна) // Журнал Ереванского университета. 1993, N 3, с. 77-82 (на арм. яз.).

Ниже впервые публикуется автобиография Г. Кочаряна, хранящаяся в его личном деле в Национальном архиве Армении.

## **СТЕПАН ГАРИБДЖАНЫН**

Кандидат исторических наук

### **Автобиография Кочаряна Гургена Аветовича**

25 апреля 1959 г.

Ереван

Родился в 1893 г. в г. Баку, в семье служащего. Среднее образование получил в Баку, где в 1912 г. окончил гимназию. С 1912 по 1917 г. учился в Москве и Харькове на юридическом факультете; окончил его в 1917 г.

В 1918 г. работал в Кисловодске (где лечился) в ОНО [отдел народного образования – С.Г.] в качестве лектора по общественным дисциплинам. В 1919 г. вступил добровольцем в ряды Красной Армии- в политуправлении IX Кубанской Красной Армии. Здесь же в Краснодаре читал в эти годы лекции по экономической географии в Политехническом институте. В 1921 г., демобилизовавшись, переехал в г. Баку, где читал лекции в Политехническом институте.

В 1925 г. был приглашен в Армению для руководства работами по районированию Армянской ССР. Одновременно здесь же, в Университете, читал лекции по экономической географии и руководил кафедрой.

В 1936 г. вынужден был уехать из Армении в связи с резкими нападками на Ереван-Актафинскую жел. дорогу, которая стала в это время рассматриваться как вредительская дорога (экономическая записка была составлена мною; и я был, кроме того, ученым секретарем Комитета содействия сооружению дороги при СНК АрмССР).

С 1936 по 1945 г. работал в Баку, был редактором атласа Азербайджанской ССР, заведовал кафедрой в Институте Педагогическом, а во время войны, при слиянии всех вузов, заведовал объединенной кафедрой географии в университете.

Вернулся в Армению в 1945 г., здесь заведовал кафедрой в университете до 1958 г., после чего в связи с отсутствием квартиры выехал в Баку.

Женат, имею сына.

**Проф. Г. Кочарян**

**Национальный архив Армении, ф. 20, оп. 10, д. 719, л. 45-46. Рукопись.**

**Подлинник.**

## **ՀՈԳԵՎՈՐ ԼՈՒՅՍԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

Բանասիրական գիտությունների թեկնածու Վլադիմիր (Վահան) Սարգսի Մաղայանի ողջ աշխատանքային ուղին անցել է ԵՊՀ-ում: 1968 թ. նա ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: 1968-1971 թթ. աշխատել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ամբիոնում՝ որպես ավագ լաբորանտ, 1969-1970 թթ. խմբագրել է «Երևանի համալսարան» շաբաթաթերթը, 1991-2000 թթ. «Հանդես Երևանի համալսարանի» գիտատեղեկատվական լրատուի գլխավոր խմբագիրն էր: 2007 թվականից Վ. Մաղայանը եղել է ԵՊՀ ՀՀԻ ավագ գիտաշխատող:

1989 թ. պաշտպանելով թեկնածուական ատենախոսությունը՝ ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որը նրան հնարավորություն է տվել ԵՊՀ-ում, ինչպես նաև այլ բուհերում զբաղվել դասախոսական աշխատանքով:

1969 թ. Վ. Մաղայանը ԽՍՀՄ լրագրողների միության անդամ էր. նա հեղինակ է ավելի քան 100 հոդվածների և մի շարք գրքերի:

Պատկերավոր կերպով ասած՝ գիտնականը իր գրքերով և հոդվածներով դարձել է Երևանի պետական համալսարանի վավերագիրը: Հաջորդաբար լույս են տեսել նրա հեղինակած՝ «Գրական-մշակութային կյանքը Երևանի համալսարանում (1919-2009 թթ.)», «Երևանի պետական համալսարանը վավերագրերում (1919-2009 թթ.)», «Սրտի խոսք», «Երևանի համալսարանի հոբելյանները (1909-2009 թթ.)», «Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885-1991 թթ.)» անչափ կարևոր ձեռնարկները, որոնք նաև սկզբնաղբյուրային նշանակություն ունեն:

Լրագրող գիտնականը կազմել և հրատարակության է պատրաստել «Գրական համալսարան» տարեգրքի մի քանի հատոր, «Քնար համալսարանի» ժողովածուն և այլ արժեքավոր գրքեր: Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը հետմահու հրատարակել է (2019 թ.) վաստակաշատ լրագրողի և գիտաշխատողի «Իմ նվերը Մայր համալսարանին» հոդվածների ժողովածուն, որը նվիրված է ԵՊՀ-ի հիմնադրման հարյուրամյա հոբելյանին:

505 էջ պարունակող այս ստվարածավալ ժողովածուն բաղկացած է յոթ բաժիններից և ներածական խոսքից: Առաջին բաժնում («Հայոց լեռնաշխարհում վառվում է հոգևոր լույսի մեծ ջահը») ընդգրկված հոդվածները վերաբերում են Հայաստանի համալսարանի հիմնադրման կարևորագույն հարցին, նրա գիտական գրադարանի կազմավորմանը և առաջին հրատարակություններին:

Հետաքրքիր և ուսանելի բազմաթիվ փաստեր և իրողություններ են հայտնի դառնում մեզ վերոնշյալ հոդվածների շնորհիվ: Որքա՞ն կամքի ուժ, հետևողականություն և վճռականություն ունեին Հայաստանի իշխանությունները, մտավորականությունն ու ժողովրդական զանգվածները, որ երկրի համար այնքան անբարենպաստ հանգամանքներում հիմնեցին բարձրագույն կրթօջախը՝ պետական համալսարանը՝ օժանդակելով նրա կայացմանը: Այստեղ նկատելի է մեկ կարևոր

օրինաչափություն. իրար հաջորդող հայկական պետականությունները ոչ թե վերացնում, այլ ժառանգում են նորաստեղծ համալսարանը, դասախոսներին ու ուսանողներին շրջապատում հատուկ խնամքով ու գուրգուրանքով: Այս մասին սույն գրքում արձանագրված է հետևյալը. «Այսպիսով՝ Երևանի ժողովրդական համալսարանը, ինչպես տեսնում ենք, Հայաստանի համալսարանի օրգանական շարունակությունն է, և նրա ստեղծման տարեթիվը պաշտոնապես ընդունված է 1919 թ. մայիսի 16-ը: 1923 թ. հոկտեմբերի 20-ից ՀԽՍՀ ժողովրդախորհի նախագահության որոշմամբ Երևանի ժողովրդական համալսարանը անվանվում է ՀԽՍՀ պետական համալսարան, իսկ 1935 սեպտեմբերի 1-ից՝ Երևանի պետական համալսարան» (Ե., 2019, էջ 18):

Վ. Մաղայանը հետաքրքիր փաստեր է ներկայացրել ԵՊՀ գիտական գրադարանի կազմավորման պատմությունից: Մեջբերված մի շարք պաշտոնական վավերագրերը վկայում են, որ ժամանակի իշխանությունները մեծ կարևորություն են տվել մայրենի լեզվով դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, անհրաժեշտ գործիքների, փորձասարքերի և այլ պիտույքների ձեռքբերմանը՝ համալսարանական գրադարանի, լաբորատորիաների, կլինիկաների ու կաբինետների կազմավորման համար:

Պահպանվել է ՀՀ կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանի դիմումը՝ ուղղված ՀՀ արտաքին գործոց նախարարությանը, որով խնդրվում է, որ Վրաստանից և Ադրբեջանից գրքեր և գրենական պիտույքներ տեղափոխելիս մաքսատներում զանազան արգելքներ չհարուցվեն:

Հստակ փաստարկված է, որ Երևանի համալսարանի գրադարանը հիմնադրվել է 1920 թ. մարտի սկզբներին, սակայն չի գործել մի շարք դժվարությունների պատճառով: Ալեքսանդրապոլում համալսարանին հատկացված շենքային պայմանները բնավ բավարար չեն եղել վերոնշյալ կարևոր գործն անթերի կազմակերպելու համար: Թիֆլիսից ձեռք բերված գրականության (2780 գիրք) մի փոքր մասն են կարողացել փոխադրել Ալեքսանդրապոլ, և այդ գրքերից հնարավոր չէր օգտվել, քանի որ չկային ապահով սենյակներ ու պահարաններ: Շենքում շատ հաճախ լուսավորություն չէր լինում, դահլիճը չէր տաքացվում՝ մազույթ չլինելու պատճառով:

Այս և ուրիշ աննպաստ պայմաններ բացասաբար են ազդել ուսումնական պարապմունքների կանոնավորության և արդյունավետության վրա, ուստի ՀՀ նախարարների խորհուրդը 1920 թ. հուլիսի 21-ին որոշում է կայացրել Հայաստանի համալսարանը Ալեքսանդրապոլից տեղափոխելու Երևան:

Ժողովածուի էջերում գետեղված մի շարք նյութեր վերաբերում են ԵՊՀ-ի հրատարակչական գործունեության լուսաբանմանը: Հինգերորդ բաժնում («ԵՊՀ հանդեսները՝ գիտության լույսը սփռող անմարելի ջահեր») ներկայացված են «Գիտական տեղեկագիր», «Բանբեր Երևանի համալսարանի», «Հանդես Երևանի համալսարանի», միջազգային բանկագիտական նոր հանդեսի՝ «Իրավագիտության հարցեր», «Կրթությունը և գիտությունը Ղարաբաղում», նաև ամսագրերի գիտական գործունեությունը բացահայտող հոբեյանական հոդվածները:

Վեցերորդ բաժինը նվիրված է ԵՊՀ-ի բուհական մամուլին: Մի քանի հոդվածներում ներկայացված է Հայաստանի բուհական մամուլի առաջնելի՝ «Երևանի համալսարան» շաբաթաթերթի գործունեությունը՝ խոսք հատկացնելով այդ պարբե-

րականի ստեղծման շարժառիթների, խմբագիրների ու խմբագրական խորհրդի անդամների, գաղափարական ուղենիշների և ուղղվածության, ինչպես նաև համալսարանական առօրյայի հազեցվածության մասին: Հետաքրքրական շատ փաստեր են ի հայտ գալիս համալսարանական մամուլի սկզբնավորման պատմությունից (օրինակ, համալսարանական պարբերականները սկզբնական շրջանում ունեցել են «Նոր ուսանող», «Նոր կադրեր», «Հարվածային ուսանող» անվանումները):

Առավել հազեցած է գրքի յոթերորդ բաժինը («Համալսարանական գիրքը գիտելիքների անսպառ շտեմարան»), որտեղ ներկայացված են տարիների ընթացքում Վ. Մաղալյանի գրախոսած գրքերը (հոբեյանական հրատարակություններ, հուշերի ժողովածուներ, պատմագիտական և գրականագիտական ուսումնասիրություններ, գրական մատենաշարեր, բազմապիսի մենագրություններ):

Վերոնշյալ բոլոր գրքերը լույս են տեսել ԵՊՀ հրատարակչության կողմից: Դրանք պարզորոշ կերպով վկայում են Մաղալյան գրողի և անհատի ունեցած ու ցուցաբերած գրական ու գիտական նախասիրությունների մասին: Ըստ այդմ, այդ շարքում և այդ առումով կարևորվում են հետևյալ գործերը՝ «Ականավոր պատմաբանը ժամանակակիցների հուշերում» (Հակոբ Մանանդյանի մասին), «Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի պատմությունը», «Գևորգյան ճեմարանի երախտավորները», «Հանճարեղ հայագետին նվիրված մենագրություն» (Հրաչյա Աճառյանի 130-ամյակի առթիվ), «Արշակ Չոպանյանի «Անահիտը»», «Գերմանացի հայագետի ուսումնասիրությունները» (Հայրիխ Հյուբշմանի հատորները), «Հ.Յ. Դաշնակցութեան պատմություն», «Առաքելոց վանքին կոիլը», «Մեծ եղեռնից մազապուրծ երզնկացիների տոհմագիրքը», «Գրական հեթանոսությունը» նոր մեկնաբանությամբ» և այլն:

Այսպիսով, կարող ենք վստահաբար ասել, որ Վ. Մաղալյանի «Իմ նվերը Մայր համալսարանին» ժողովածուն Երևանի պետական համալսարանի հոգևոր շնչառությունը, գրական, մշակութային դեմքն ու դիմագիծը ներկայացնող կարևորագույն սկզբնաղբյուր-աշխատություն է, որում զետեղված, ի մի բերված նյութերը հստակ պատկերացում են տալիս Հայաստանում համալսարանաշինության, բուհական գիտության և մամուլի զարգացման ուղիների և մեթոդների մասին:

Ժողովածուն արտացոլում է մեր երկրի երեկվա և այսօրվա հոգևոր-բարոյական դիմագիծն ու դիմանկարը՝ վերստին վկայելով, որ հանձինս համալսարանների, Հայկական լեոնաշխարհում միշտ ու մշտապես անմար են մնացել հոգևոր լույսի մեծ ջահերը:

Վ. Մաղալյանը մեկն է այն նվիրյալ հայորդիներից, որոնք իրենց կարևոր ներդրումն են ունեցել Երևանի պետական համալսարանի հոգևոր բարգավաճման ու զարգացման հարատև գործընթացում: Թեկուզև համեստ չափով, սակայն դա անուրանալի է:

Ուրեմն արժանին հատուցենք նրան, ով Ջավախք երկրամասից գալով Երևան՝ ազնիվ տքնանքով դարձավ հայոց բաժր դպրության նորօրյա տաճարի վերհանունի ու սլացքի մասնակիցն ու կերտողներից մեկը:

**ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Պատմական գիտությունների թեկնածու  
armenaraqsyanyan@mail.ru

## ԽԱՉԻԿ ՍԱՄՈՒԵԼՅԱՆ. ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԸ



Հայտնի հայագետ, ազգագրագետ, պատմաբան, բանասեր, իրավագետ Խաչիկ Ստեփանի Սամուելյանի՝ մեծ գիտնականի ու գործչի մասին արդեն եղած հրապարակումներից օգտվելով (Կ. Մելիք-Փաշայան<sup>1</sup>, Ա. Օդաբաշյան<sup>2</sup>, Լ. Պետրոսյան<sup>3</sup>)՝ ներկայացնում ենք նրա կենսագրության, գործունեության կարևոր դրվագները, ուսումնասիրած հարցերի շրջանակը և աշխատությունների ցանկը՝ այն հնարավորինս լրացնելով այլ աղբյուրների տվյալներով<sup>4</sup>: Ավելի հանգամանալից անդրադառնում ենք նաև Խ. Սամուելյանի քննած մեթոդական հարցերին և «Անաստված» թերթում հրապարակած հակակրոնական հոդվածներին:

Վերոնշյալ հեղինակները Խ. Սամուելյանին գնահատում են որպես հայ ազգագրության հիմնադիրներից մեկը, որը քննություն է առել հայ ազգագրության շատ հիմնարար հարցեր: Նրանք բարձր են գնահատում Խ. Սամուելյանին ոչ միայն որպես ազգագրագետ, այլ նաև որպես իրավագետ ու պատմաբան, հայագետ, Հայաստանում արխիվային գործի հիմնադիր ու զարգացնող, գիտության կազմակերպիչ ու հանրայնացնող, բանասեր ու բանագետ, գրականագետ, թարգմանիչ, բուհական դասագրքերի հեղինակ, դասախոս, մանկավարժ, հրապարակախոս-լրագրող:

Տաղանդավոր գիտնականը ծնվել է 1873 թ. Կերչ քաղաքում՝ հոգևորականի ընտանիքում: Կրթություն ստացել է Թեոդոսիայի գիմնազիայում: 1895-1900 թթ. սովորել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, Ենայի համալսարանում (1901-1903 թթ., Գերմանիա): Վերադառնալուց հետո բնակություն է հաստատել Թիֆլիսում և մինչև 1907 թ. զբաղվել լրագրությամբ: 1904-1905 թթ. «Кавказское сельское хозяйство» ամսագրի, 1913-1914 թթ.՝

<sup>1</sup> Մելիք-Փաշայան Կ.Վ. 1974, Խաչիկ Սամուելյան (Ծննդյան 100-ամյակի առթիվ), ՊԲՀ, N 1 (64), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 86-96:

<sup>2</sup> Օդաբաշյան Ա. 1958, Խաչիկ Սամուելյանը՝ ազգագրագետ, Տեղեկագիր հաս. գիտ., ՀՍՍՌ ԳԱ, N 11, 33-42:

<sup>3</sup> Խաչիկ Սամուելյան Ստեփանի (հեղ.՝ Լ. Պետրոսյան) 1984, Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 10, Երևան, 192:

<sup>4</sup> Առավելապես՝ ՀՀ ազգային գրադարանի մատենագիտական քարտարանի, «Անաստված» թերթի (1928-1934 թթ.) տվյալները՝ բացառյալ վերջինիս 1933 թ. համարները, որոնց ծանոթանալու հնարավորություն չենք ունենցել:

«Тифлисский листок» պարբերականի քարտուղարն էր, Թիֆլիսում հրատարակել է «Кавказская школа» մանկավարժական ամսագիրը:

Ուսանողական տարիներին ծանոթանում է ռուս գրականությանը և արդեն 1897 թ. սկսում գրական-գիտական գործունեությունը: Ռուս նշանավոր գրողներ Վ. Գարշինի, Ի. Տուրգենևի, Ա. Չեխովի, Ն. Գոգոլի, Մ. Գորկու և այլ հեղինակների գործերի վերաբերյալ նա բազմաթիվ հոդվածներ է հրատարակում «Մշակ», «Տարազ», «Լույս», «Արշալույս» պարբերականներում: Լրագրողական աշխատանքը բավական երկար է շարունակում. եղել է «Սուրհանդակ» օրաթերթի փաստացի խմբագիրը, խմբագրել է նաև Շուշիում լույս տեսնող «Փայլակ» թերթը: Հայաստանի խորհրդայնացումից հետո ևս բազմաթիվ հոդվածներ է տպագրում «Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», «Ավանգարդ», «Հայաստանի աշխատավորուհի», «Նորք», «Մարտակոչ», «Բանվոր» և այլ պարբերականներում:

Խ. Սամուելյանը 1907-1909 թթ. Գևորգյան ճեմարանում, ապա երեք տարի Նոր Նախիջևանի թեմական դպրոցում դասավանդել է իրավագիտություն, քաղաքատնտեսություն և ռուսաց լեզու, 1912 թ. Թիֆլիսի Հովնանյան դպրոցում՝ ընդհանուր պատմություն, 1912-1913 թթ.՝ գերմաներեն Թիֆլիսի առևտրական դպրոցում: 1914-1917 թթ. Շուշիի թեմական դպրոցի տեսչի օգնականն էր, հետո՝ տեսուչը, 1919-1920 թթ.՝ Ալեքսանդրապոլի տղաների գիմնազիայի տեսուչը, 1920-1921 թթ.՝ նույն քաղաքի դպրոցների հրահանգիչը:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Խ. Սամուելյանը կատարել է պատասխանատու աշխատանքներ. 1921-1922 թթ. Էջմիածնի գիտական ինստիտուտի կոլեգիայի անդամ էր, Երևանի հեղափոխական տրիբունալի, ապա՝ Հանրապետության գլխավոր դատարանի անդամ: Հսկայական է Խ. Սամուելյանի ներդրումը Հայաստանում գիտության զարգացման և կազմակերպման գործում: 1924 թ. մարտից նա նշանակվեց ՀՍԽՀ կենտգործկոմի դեկրետով ստեղծված՝ Հայաստանի պետական արխիվի վարիչ: Եվ տասը տարի ղեկավարելով այն՝ հարստացրեց արխիվային ֆոնդերը, ձևավորեց դրանց պահպանության, գիտական դասակարգման սկզբունքները՝ այդպիսով դառնալով երկրում արխիվային գործի կազմակերպիչը: Մեծ էր Խ. Սամուելյանի դերը նաև կադրեր պատրաստելու գործում. երկար տարիներ զբաղվել է գիտամանկավարժական գործունեությամբ, դասավանդել է Երևանի պետական համալսարանում, Նյութական կուլտուրայի ինստիտուտում, Մանկավարժական ինստիտուտում (Կ.Վ. Մելիք-Փաշայան, նշվ. հոդվ., 95-96): ԲՈՒՀ-երում դասախոսելու տարիներին ուսանողների համար պատրաստում ու հրատարակում է տարբեր առարկաների դասագրքեր, աղբյուրագիտական ու այլ գրքույկներ, այդ թվում՝ հայոց հին շրջանի, հին Արևելքի (1938 թ.), նախնադարյան հասարակության (1938 թ.), խալդական հասարակության (1939 թ.) պատմությունները: Կ.Վ. Մելիք-Փաշայանը նշում է, որ Խ. Սամուելյանի արխիվում պահպանվել են նաև Վրաստանի, Ռուսաստանի, անտիկ շրջանի պատմություններ, այլ ձեռագրեր: Խ. Սամուելյանը կատարել է նաև թարգմանություններ գերմաներենից, ռուսերենից, ինչ-

պես, օրինակ, Ա. Գումայլովիչի «Հասարակական թեորիաները», որը կարող է հետաքրքրել հասարակագետներին:

Անգնահատելի է գիտնականի վաստակը հայ իրավագիտության, ազգագրության զարգացման մեջ, հայոց սովորության իրավունքի ուսումնասիրության բնագավառում: Արդեն նշեցինք, որ Խ. Սամուելյանը Հայաստանում ազգագրության հիմնադիրներից է: Այս թեմայով նրա առաջին հոդվածը («Очерки по обычному семейному праву» - «Ակնարկներ ընտանեկան սովորության իրավունքի») տպագրվել է «Кавказский вестник» հանդեսում, 1902 թ.:

Խ. Սամուելյանի՝ որպես ազգագրագետ ձևավորվելու գործում կարևոր են եղել Ենայի համալսարանում սովորելու տարիները, «Ազգագրական հանդեսին» աշխատակցելը՝ 1903-1916 թթ. ընթացքում: Մինչև հանդեսի փակվելը այստեղ տպագրվել են գիտնականի բազմաթիվ հոդվածները՝ նպաստելով հանդեսի կայանալուն: Լինելով «Հայ ազգագրական ընկերության» անդամներ՝ Խ. Սամուելյանն ու Ե. Լալայանը փորձել են կազմել ազգագրական գիտական գրականության համահավաք մատենագիտական քարտարան, որը, սակայն, անավարտ է մնացել: Խ. Սամուելյանը խիզախ գիտնական էր: Լավ տիրապետելով գերմաներենին, ռուսերենին և անգլերենին՝ նա այդ լեզուներով ծանոթացել է հսկայական քանակի իրավագիտական, ազգագրական, պատմագիտական և այլ գրականության՝ դրանք ծառայեցնելով իր քննած գիտական խնդիրների լուծմանը: Համաշխարհային, հատկապես գերմանալեզու և ռուսերեն գրականությունից գիտնականը փոխառել է բազմաթիվ եզրեր ու հասկացություններ՝ տոտեմիզմ, ինտիխիում (տոտեմի բազմանալուն ուղղված և նրա մսի չափավոր ճաշակման արգելքի վերացման ծես), տաբու, կուվադի (բասկերի սովորույթ, ըստ որի՝ ծննդկանի ամուսինը, պառկելով նրա անկողնում, ձևացրել է, թե ինքն է ծննդկանը), չուրինգա (կլոր, երկարավուն, տափակ, քարե կամ փայտե սրբազան իր, որի մեջ, ըստ Ավստրալիայի բնիկների՝ իբր ամփոփված է նախնու հոգին, և որը խնամքով պահում էին գաղտնի տեղերում), նվություն (снохачество), լեվիրատ (տագրամուսնություն), սորորատ (քենամուսնություն), մայրիշխանություն, արյան վրեժ, այլ սովորույթների, սոցիալական մարմինների, հնագիտական ու կենցաղային շատ առարկաների, մշակութային իրողությունների անվանումներ (տե՛ս «Հին Հայաստանի կուլտուրան» եռահատորյակի (1931-1941 թթ.) էջերում և ծանոթագրություններում): Բացի հայ ազգաբանությունը հարստացնող իր արժեքավոր ուսումնասիրություններից, Խ. Սամուելյանը նաև ա՛յդ իմաստով է հայ ազգագրության հիմնադիրներից: Իր դիտարկած, այդ թվում՝ գիտության հետազոտական եղանակների հարցերը մշտապես ուշադրության շրջանակում պահելը թույլ են տվել, որ գիտնականը, հասուն տարիքում դրանց քննությունը խորացնելով, ավելի հիմնավոր դարձնելով, վաղ տպագրված իր հոդվածներն ընդգրկի նաև ամփոփիչ աշխատություններում՝ «Հին Հայաստանի կուլտուրան» եռահատորյակում, որի միայն առաջին հատորն է լույս տեսել հեղինակի կենդանության օրոք, և «Հայ հին իրավունքի պատմություն» ծրագրված եռահատորյակի առաջին հատորում (տե՛ս Կ. Մելիք-Փաշայան, Ա. Օղաբաշյան):

«Հին Հայաստանի կուլտուրան» եռահատորյակի առաջին հատորի Ներածությունում (Սամուելյան 1931, 5-37), մանրամասն նշելով աշխատանքի հիմնական աղբյուրները, գիտնականն ուշագրավ պատկերավորությամբ է բնորոշում դրանց նշանակությունը. «Հնագիտությունը տալիս է մեզ նախնական կուլտուրայի սուկ կմախքը, իսկ ազգաբանությունը ազգագրության ու ֆոլկլորի իր ճյուղերով, նաև մարդաբանության ու լեզվաբանության օժանդակությամբ, գալիս է համակելու այդ կմախքը մտով ու մկանունքներով, բայց այստեղ հանդես է գալիս պատմական գիտությունը, օժտված մատերիալիստական-մարքսիստական մեթոդաբանությամբ, որը շունչ ու հոգի է ներարկում, ջերմ արյուն է հոսեցնում մկանունքներով համակված այդ կմախքի մեջ» (ն.տ., 21): Հեղինակի մահից հետո՝ 1941 թ. լույս տեսած երկրորդ հատորը վերաբերում է բրոնզի և երկաթի դարերի մշակույթին, և «չնայած որ Հայաստանում դեռևս հնագիտական պեղումները լայն ծավալներ չէին ընդունել, սկզբնաղբյուրները սակավ էին, բայց հաջողվել է վեր հանել հայոց նյութական մշակույթի այդ շրջանի պատմությունը և կատարել ընդհանրացումներ, կարևոր դիտարկումներ (ՊԲՀ, 1974, N 1, 92): Ըստ Ա. Օդաբաշյանի՝ «...եվրոպական և ռուս առաջավոր գիտությանը քաջատեղյակությունից բացի, հիմնվելով նաև իր հետազոտական աշխատանքի մեթոդաբանական հիմքերը ճշգրտելու վրա»... դրսևորելով պատմության ու մշակույթի զարգացման պատմամատերիալիստական ընկալման ավելի բարձր մակարդակ, Խ. Սամուելյանը հասուն տարիքում հասել է «ուսումնասիրության *կոմպլեքսային* (ընդգծումը մերն է - Վ.Մ.) մեթոդի կիրառման հնարավորությանը», առանց փակագծերը բացելու, թե դա ասելով՝ ինչ նկատի ունի (Տեղեկագիր հաս. գիտ. ՀՍՍՌ ԳԱ, 1958, N 11, 42), և նշելով, որ թերությունները նրա ժամանակվա գիտության մակարդակի արդյունք էին: Դա գրելով 1950-ական թթ. վերջին՝ Ա. Օդաբաշյանը դեռ չի նշում, որ ելնելով մշակույթի համալիրի, գործընթացների դիտանկյունից՝ հնարավորություն կա մարքսիստական տեսությունը ևս լրացնելու, ավելի ճշգրտելու, որի սկզբնական մի օրինակ արդեն իսկ Ֆ. Էնգելսն էր տվել իր հայտնի աշխատությունում՝ պատմական զարգացման ընթացքում *ընդհանրի, հասարակական կառույցի* պատմական ձևերի մասին ձևակերպումներով: Ներածությունում Խ. Սամուելյանը «կոմպլեքսային» (համալիր) բառը երեք նշանակությամբ է գործածում. 1. Հայոց ազգաբանության, մշակույթի պատմության աղբյուր էր համարում *համադրված*՝ հնագիտության, ազգագրության, բանագիտության, մարդաբանության, համեմատական լեզվաբանության, լեզվագիտական հնէաբանության, իրավագիտության, դրամագիտության, հասարակագիտության ու պատմագիտության տվյալները, *աղբյուրների «կոմպլեքս» օգտագործումն* անհրաժեշտ համարելով: 2. Գործածում է և «*կոմպլեքսային մեթոդ*» արտահայտությունը՝ նկատի ունենալով տարբեր գիտությունների հետազոտական եղանակների, այդ թվում՝ մատերիալիստական-մարքսիստական մեթոդաբանության համատեղ կիրառումը, դրա կարևորությունը: 3. Ամենաուշագրավը «*կուլտուրական կոմպլեքսներ*» արտահայտությունն է՝ որպես մշակույթի միասնականության, ամբողջականության նկատմամբ պատմահամեմատական մեթոդի գործա-

դրման արգասիք՝ ի տարբերություն նույնի այլ անվանումների, որ «տարբեր գիտնականների կողմից տրվում են ըստ նրանց դավանած տեսակետների. ըստ Սպենսերի՝ «կուլտուրական աստիճաններ», ըստ Գրեբների՝ «կուլտուրական շրջաններ», ըստ Մյուլլեր-Լիերի՝ «կուլտուրական ֆազեր»: Այս Ներածությունում (հ. 1, 1931, 5-37) Խ. Սամուելյանի ներկայացրած՝ ոլորտի համաշխարհային գիտության և դիալեկտիկական մատերիալիզմի վրա հիմնված մշակույթի հետազոտության եղանակների, սկզբունքների մասին շարադրանքը կանխորոշել, նախանշել է խորհրդային և հայ գիտություններում հետագա տեսական ուսումնասիրությունների ուղղվածությունը՝ սկսած 1950-ական թթ. վերջից, և մինչ օրս էլ արդիական է: Այդտեղ փաստորեն երեքուկես տասնամյակ առաջ ընկնելով՝ Խ. Սամուելյանը հայտնել է տեսակետներ, գաղափարներ, որոնք 1960-ական թթ. սկզբից են տևական ժամանակ լարված քննարկումների առարկա դարձել գիտական մտքում և այժմ էլ շարունակվում են: Դրանք վերաբերում են գիտությունների «իստեգրմանը», մեկը մյուսի հետազոտական մեթոդներն օգտագործելով հարստանալուն, մշակույթի համակարգային մոդելին, դրա համակարգային ու համալիր ուսումնասիրության սկզբունքներին<sup>5</sup>: Խ. Սամուելյանը նշել է (հաջորդող ընդգծումները մերն են - Վ.Մ.) նաև՝ «մարդկային համակեցության ներգործական համակերպումը շրջապատող բնությանը և արտաքին միջավայրին՝ զանազան դարաշրջաններում և զանազան տեղերում...», թե՛ «...յուրաքանչյուր կուլտուրայի առանձին նյութական ու հոգևոր (կարելի է ասել՝ տարբեր բնույթ ունեցող - Վ.Մ.) տարրերը ...համաձուլված (են), և կազմում են օրգանապես մեկ ամբողջություն...», թե՛ «...մարդկային կյանքի տնտեսական, հասարակական և հոգևոր կողմերն ստանում են յուրաձև միասնականություն, ունենալով իրար համապատասխան, իրար հարող ու նմանող հատկանիշներ կամ տարրեր...», թե՛ «...կուլտուրական կոմպլեքսը» բնորոշելիս պետք է վերցնել դրա բաղկացուցիչ կուլտուրական տարրերից կամ ...կողմերից մեկը, ամենահատուկը՝ իբրև խորհրդանշան (սիմբոլ), որն արտացոլում է իր մեջ բոլոր ամբող-

<sup>5</sup> Կարելի է նշել, օրինակ, այդ հարցերին առնչվող՝ Է.Ս. Մարկարյանի բազմաթիվ ռուսերեն մենագրությունները, հոդվածները (1960-ական թթ. վերջ - 1970-ական թթ.), Յու.Ի. Մկրտումյանի ռուսերեն հոդվածը՝ Методологические проблемы исследования этнических культур 1978, Материалы симпозиума, Ереван, изд. АН Арм. ССР, 42-47: Մենք ևս վերջին երկու հարցերի մասին երկու ոչ ծավալուն հրապարակում ունենք՝ «Հասարակական կենցաղ», թե՛ «սոցիալական մշակույթ», ՀՀ-ում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, Ձեկուցումների թեզեր, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, 1996, 49-51: Երկրորդը՝ Տավուշի հայերի՝ ընտանիքի մասին մեր տպագրվող ռուսերեն հոդվածի հավելվածն է (տե՛ս Նոր ազգագրական հանդես, հ. Բ, Սարդարապատ-Երևան, 2023): Նշենք, որ մշակույթի համակարգը, մեր պատկերացմամբ, քառամաս է, ներառում է նաև «մարդու մշակույթն» այն ձևակերպմամբ, ինչ նկատի ունենք այդ հավելվածում: Քանի որ մշակույթը բաց համակարգ է, չենք մոռանում նաև ընդհանուր պատմամշակույթային ու բնական միջավայրերն էլ, որոնք ևս մշակույթի հատկանիշների վրա ազդող գործոններ են. այդ միջավայրերում են մշակույթները ձևավորվում, զարգանում: Եվ այդպես դիտելն արդեն նշանակում է համալիր մոտեցում:

ջականը»<sup>6</sup>, թե՛ մշակութային «վերապրուկներն ու մնացուկները» ավանդական՝ «*պրադիցիոն*» բնույթ ունեն (էջ 17): Թերևս նաև XIX դ. եվրոպացի գիտնականներին հետևելով էր Խ. Սամուելյանն ընդունել ու գործածում «ազգագրություն» և «*ազգաբանություն*» եզրերը (էջ 13), որոնց ևս այժմ դեռ անդրադարձներ լինում են: Իսկ «Հին Հայաստանի կուլտուրան» աշխատության առաջին հատորի երկրորդ, երրորդ, չորրորդ հատվածները վերնագրված են համապատասխանաբար՝ Նյութական կուլտուրա, Սոցիալական կուլտուրա, «Հոգևոր կուլտուրա» (Սամուելյան, 1931, հ. 1, էջ 105, 169, 273):

Նշենք նաև, որ Խ. Սամուելյանը, թեև ծանոթացել է մարդուն վերաբերող աշխատության (И.Н. Бороздин, Проблемы изучения человека, «Заря Востока», 1927, N 1542), մշակույթի այդ եռամաս կառույցին ի լրումն չի հավելում չորրորդ՝ «մարդու մշակույթի» կամ «մշակութային մարդաբանություն» մասը (ինչպես դա մենք կոչում ենք վերը նշված հավելվածում), այլ հանգել է այն եզրակացության, թե՛ մարդաբանությունն առանձին գիտություն է, որ զբաղվում է «...ազգերի, ցեղերի, մարդկային խմբակցությունների բաղկացուցիչ տարրերի՝ անհատ մարդերի ուսումնասիրությամբ» և երկրորդական նշանակություն ունի մշակույթի պատմության ուսումնասիրությունում, քանի որ այն մարդու առավելապես ֆիզիկական հատկանիշների վերաբերյալ գիտություն է, որն աղերս ունի այդ ցեղերի ծագման, գոյացման, ֆիզիկական զարգացման հարցերի հետ (էջ 17), և այն չի կարող դիտարկվել որպես մշակույթի համակարգի մյուս մասերին համարժեք չորրորդ մաս, ինչին մենք համամիտ չենք: Թերևս, նյութերի պակասի, լեզվաբանական ու այլ տվյալները մշակույթների հետ կապակցելու դժվարությունն է պատճառ եղել այդպիսի եզրահանգման:

Հարկ է ըստ արժանվույն գնահատել նաև Խ. Սամուելյանի հասարակական-քաղաքական գործունեությունը: Դեռևս ուսանելու տարիներին Պետերբուրգում նա մասնակցել է ուսանողական բողոքի ցույցերին, անդամագրվել է սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը, գործել դրա շարքերում, մի քանի անգամ ձերբակալվել ու բանտարկվել է: Նրա այդ ակտիվությունը դրսևորվել է մասնավորապես գյուղացիությանը հուզող խնդիրների առնչությամբ՝ 1906 թ. «Աշխատանք» շաբաթաթերթում հոդվածների շարք տպագրելով (ՊԲՀ, 1974, N 1, 95):

Երիտասարդ տարիներից Խ. Սամուելյանին գրավել են նարդնիկական, մարքսիստական գաղափարները, նա ողջունել է Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը, 1920-ական թթ. վերջից մասնակցել է Խորհրդային Հայաստանում ծավալված հակակրոնական արշավին: 1928-1931 թթ. «Նիմանդ» կեղծանունով աշխատակցել է «Անաստված» թերթին՝ հոդվածներ գրելով կրոնական արարողությունների, ծեսերի ու եկեղեցական տոների մասին (տե՛ս հոդ-

<sup>6</sup> Սրան համապատասխանում են Է.Ս. Մարկարյանի գործածած՝ մշակույթի «ընդհանրացնող մեկնաբանություն» («генерализующая интерпретация») արտահայտությունը (տե՛ս նրա աշխատություններում), Մ. Միդի կողմից իր "Patterns of culture" գրքում հնդկացիական որոշ մշակույթների տված ընդհանրական բնորոշումները՝ «ասպետական», «ապոլոնյան»,... և այլն:

վածների ցանկի N 19-ը): Չի բացառվում, որ լրիվ կամ մասամբ Խ. Սամուելյանն է նաև 1932 թ. հետևյալ երկու հոդվածների հեղինակը՝ «Քրիստոսի ծննդյան տոնի առթիվ», 1932 թ. N 1-2 և «Չատիկը և մեր պայքարը կրոնի դեմ», N 5-6: «Հրով ու սրով» հոդվածում Նիմանդը նշում է փաստեր Եվրոպայում կաթոլիկ ինկվիզիցիայի չարագործությունների մասին: Հոդվածներում բերում է տեղեկություններ տարբեր ժողովուրդների կյանքից առ այն, որ քրիստոնեական տոները, սովորություններն ու ծեսերը սերտ աղերս ունեն դրանց նախորդած հեթանոսական տոների, ծեսերի, սովորությունների հետ, որ քրիստոնեությունը ժողովրդական զանգվածների մեջ արմատացած այդ հեթանոսական տոների, ծեսերի փոխարեն սահմանել է քրիստոնեական տոներ, ծեսեր ու արարողություններ՝ համապատասխանեցնելով քրիստոնեական գաղափարախոսությանը, ավանդույթին: Նրա հոդվածներին բնորոշ չէ հակակրոնական մերկապարանոց քարոզչությունը, այլ զուտ գիտական փաստեր բերելով է ներկայացնում իրականությունը: Շուրջ 100 տարվա հեռավորությունից դժվար է դատել՝ հեղինակը նպատակ է հետապնդել գիտական բարձր մակարդակով ընթերցողին բացատրել տոնի ու ծեսի բուն նշանակությունը, թե՞ պայքարել դրանք վերացնելու համար: «Մատաղ» հոդվածում («Անաստված», Երևան, 1928, N 5-6, էջ 12) գրում է. «Հայերի մեջ էլ մնացել են երկրագործական այդ տեսակ զոհաբերության հեթանոսական սովորություններ: Վարդավառին ծաղիկներ ու կանաչներ (գլխավորապես ռեհան, անանուխ և այլն) են տանում եկեղեցի, զարդարվում նրանցով: Վերափոխման (Աստվածածնի) տոնին խաղող, թուզ, դեղձ և այլ մրգեր են տանում եկեղեցի, որտեղ այդ ամենն օրհնվում է քահանաների ձեռքով»: Աթեիստական թերթում, իր ժողովրդի մշակութային ժառանգության ուսումնասիրությանը նվիրված հայ գիտնականը, հայ մարդը, մնաց իր բարձրության վրա և խորհրդային քարոզչական քաղաքականության պայմաններում անգամ չդավաճանեց իր կոչմանն ու առաքելությանը՝ «սնահավատությունների դեմ պայքարի» քողի ներքո ազգային սովորություններն ու ժողովրդական մշակութի դրսևորումները արձանագրելով, դրանց ակունքը բացահայտելով ու մատուցելով ժողովրդին:

Ազգագրագետ, իրավաբան ու պատմաբան, հանրային գործիչ Խ. Սամուելյանի աշխատանքների կարևորությունը հայ հանրությունը միշտ բարձր է գնահատել, իսկ հիմնարար շատ հարցերի մասին նրա տեսակետները մինչ օրս էլ պահպանում են իրենց նշանակությունը:

**ՎԱՐԴԻԹԵՐ ՄԱՂԱԹՅԱՆ**

varditer.mat@gmail.com

### **Խ. Սամուելյանի տպագիր աշխատությունների ցանկը\***

#### **Գրքեր**

1. Հայ սովորության իրավունքը 1911, Վիեննա:
2. Հայ հին իրավունքի պատմություն: Ուսումնասիրության փորձ 1911, Թիֆլիս, «Պեստալոցցի գրատուն», 104 էջ:
3. Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» ու հայոց քաղաքացիական իրավունքը: Փորձ ուսումնասիրության 1911, Վիեննա, տպ. Մխիթարյան միաբանության, 344 էջ:
4. Հին Հայաստանի կուլտուրան. պատմական ակնարկներ, հ. 1, Քարի դար 1931, Երևան, «Պետհրատ», 381 էջ և XXXVIII լուսանկար, հ. 2, Բրոնզի և վաղագույն երկաթի դար: Նյութական կուլտուրա 1941, Երևան, «Արմֆան», 343 էջ, հ. 3, Բրոնզի և վաղագույն երկաթի դար, Սոցիալական կուլտուրա 1941, Երևան, «Արմֆան», 360 էջ:
5. Նախնադարյան հասարակության պատմություն 1938, պր. 1, Երևան, Ուսուցիչների որակավորման ինստ. հրատ., 29 էջ:
6. Հին Արևելքի պատմությունը: Առաջավոր Ասիայի պատմության աղբյուրներն ու պատմագրությունը 1938, պր. 2, Երևան, Մանկավարժական ինստ. հրատ., 32 էջ:
7. Խաղաղական հասարակություն 1939, Երևան, 98 էջ:
8. Հայ հին իրավունքի պատմություն 1939, ըստ հեղինակի նախատեսածի՝ եռահատորյակ, հ. 1, Երևան, «Արմֆան», 364 էջ:
9. Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրությունը, առանց թվ., Երևան, 206 էջ:
10. Շեքսպիրը հայ բեմում 1956, Երևան:
12. Րաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան). համառոտ ակնարկ 1957, Երևան, «Հայպետհրատ.», 182 էջ:
13. Րաֆֆիի ժամանակակիցների հուշերում 1986, Երևան:
14. Րաֆֆի: Կյանքը, ստեղծագործական ուղին (դպրոցական բարձր տարիքի համար) 1987, Երևան, «Արևիկ», 58 էջ, 14 թ. լուսանկար:
15. Րաֆֆի 1987, Երկերի ժողովածու, կազմող՝ Խ. Սամուելյան, հ. 9, 704 էջ:
16. Րաֆֆի 2011, Երկերի ժողովածու, կազմող՝ Խ. Սամուելյան, Երևան:

#### **Հատվածներ գրքերում**

1. Հայ ժողովրդի պատմություն 1974, հնագույն շրջանի հատվածը՝ Նախնադարից մինչև Արշակունիների անկումը, էջ 86-96:
2. «Քյոռ-օղլի» ժողովրդական վիպասանություն 1941, հավաքեց և գրի առավ Գ. Թարվերդյանը, առաջաբանը՝ Խ. Սամուելյանի, հայերեն և ռուսերեն (էջ 5-23), Երևան, «Արմֆան», 235 էջ:

#### **Հոդվածներ**

1. Արյան վրեժ և փրկանք 1903, Ազգագրական հանդես (ԱՀ), գիրք 10, Թիֆլիս:
2. Հայոց հին իրավունքը և նրա հետազոտության մեթոդը 1904, ԱՀ, գիրք 11, Թիֆլիս:

---

\* Կ. Մելիք-Փաշայանի հոդվածից վերցված մատենագիտական տվյալների որոշ մասն ամբողջական չէ:

3. Առևանգմամբ և գնմամբ ամուսնություն 1904, ԱՀ, գիրք 12, Թիֆլիս:
4. Հայ ընտանեկան պաշտամունքը 1906, ԱՀ, գիրք 13, Թիֆլիս:
5. Հողվածաշար Աշխատանք շաբաթաթերթում՝ գյուղացիության խնդիրների մասին /տե՛ս ՊԲՀ, 1974, N 1, էջ 95/:
6. Հայոց ժառանգական իրավունքը 1907, ԱՀ, գիրք 15, 16, Թիֆլիս:
7. Իրավունք և կրոն 1908, Արարատ ամսագիր:
8. Հայ իրավաբանական սիմբոլները 1908, Արարատ:
9. Հայ նահապետական գերդաստան 1908, Արարատ:
10. Աշխատանքը հայ ժողովրդական երգերում 1908, Գեղարվեստ ամսագիր, Թիֆլիս. այս հոդվածի շարունակությունը՝ «Մարտակոչ» օրաթերթում (1927):
11. Եկեղեցական-պետական հարաբերությունները Հին Հայաստանում 1910, Արոր, Թիֆլիս:
12. Մայրական իրավունք 1910, ԱՀ, գիրք 19, Թիֆլիս:
13. Ֆոլկլորի միջազգային դաշնակցությունը 1912, ԱՀ, գիրք 21, Թիֆլիս:
14. Սիմբոլը հայ սովորույթներում 1912, ԱՀ, գիրք 12, Թիֆլիս:
15. Տոտեմիզմը հայոց մեջ 1921-1922, Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գիրք Ա և Բ:
16. Հայաստանի պետական կենտրոնական դիվանը և նրա նպատակները 1926, Խորհրդային Հայաստան:
17. Քարի պաշտամունքը հայոց մեջ 1927, Հանդես ամսօրյա, Վիեննա:
18. Աշխատանքը հայ ժողովրդական երգերում 1927, Մարտակոչ (օրաթերթ), հոդվածի սկիզբը՝ «Գեղարվեստ» ամսագրում, Թիֆլիս, 1908:
19. Հակակրոնական հոդվածներ ԱՀ-ում, տարբեր պաբերականներում, «Անաստված» թերթում (առանց 1933 թ. համարների) հետևյալները՝ Հրով և սրով (1928, N 2), Մեծ պասը (1928, N 3), Մատաղ (1928, N 5-6), Խաչվերաց (1928, N 7-8), Քրիստոսի ծնունդն ու մկրտությունը (1928, N 11-12), Քրիստոսի համբարձումը (1929, N 5-6), Խաչը (1930, N 3), Ինչ տոն է Չատիկը (1930, N 4), Վարդավառ, Ուխտագնացություններ (1930, N 6-7), Քրիստոսի ծննդյան մասին (1930, N 12), Տյառնընդառաջ (1931, N 1), Քրիստոսի հարությունը (1931, N 3): Հմմտ.՝ Քրիստոսի ծննդյան տոնի առթիվ (1932, N 1-2), Չատիկը և մեր պայքարը կրոնի դեմ (1932, N 5-6):
20. Ստրկությունը հին Հայաստանում 1937, Տեղեկագիր Պատմության և գրականության ինստիտուտի, գիրք 2:
21. Աստվածաշնչի տպագրությունն ու պոլիգրաֆիական արվեստը. հրատարակության 300-ամյակի առթիվ 1966, Էջմիածին, ամսագիր, ԺԱ-ԺԲ բացառիկ համար, 241 էջ, գուն. նկ.:
22. Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանին ի Վիեննա 1984, ՀՍՍՀ ԳԱ, Երևան, էջ 218-221, առանձնատիպ, Պատմա-բանասիրական հանդես, N 3, էջ 106:

## **«ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ» ԳԻՏԱԺՈՂՈՎԸ**

2023 թ. մարտի 29-30-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում տեղի ունեցավ «Ոռոգման համակարգերը հայկական լեռնաշխարհում» խորագրով երկօրյա գիտաժողովը, որը տարբեր կողմերից քննեց ջրօգտագործման մշակույթը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր: Բացման խոսքով հանդես եկավ ՀԱԻ տնօրեն Արսեն Բորոխյանը՝ կարևորելով նմանատիպ գիտաժողովների շարունակականությունը և մեկ մշակույթի շուրջ մտքերի գեներացումը: ՀԱԻ գիտական ղեկավար Պավել Ավետիսյանը, բարձր գնահատելով գիտաժողովի գաղափարը, հատուկ ընդգծեց, որ այն ավելի կարևոր և ուշագրավ է դառնում, քանի որ, բացի ջրի ֆիզիկական ընկալումներից, քննության են առնվում նաև հազարամյակների ընթացքում մարդու մտքում տեղ գտած ջրի տարբեր ընկալումները:

Լիագումար նիստի ընթացքում (թվով՝ 5 զեկուցում) ազգագրագետ, պ.գ.թ. Սուրեն Հոբոսյանը ներկայացրեց «Ոռոգման ջրի չափման հայոց ավանդական միավորները»՝ մանրամասն քննության առնելով ջրի չափման մշակույթին առնչվող հիմնական ձևերը, օրինակ՝ «բահ» կամ «բել», «ջրադաց», «նավ», «գլուխ», «ոտ», «մի ձեռ» ևն, որոնք պատմաազգագրական նյութ լինելուց զատ՝ շատ կարևոր են նաև տվյալ ժամանակաշրջանի մարդու ընկալումներն ըմբռնելու տեսանկյունից: Ս. Հոբոսյանը նշեց նաև, որ Արարատյան դաշտը երկրագործական մշակույթի ձևավորման կենտրոններից մեկն էր, որտեղ աշխարհագրական և կլիմայական բավական դժվարին պայմաններում ոռոգման համակարգը և ջրից օգտվելու եղանակները հասցվել էին կատարելության:

Կ.գ.թ. Ռոման Հովսեփյանի «Նախապատմական ժամանակների Այսրկովկասում ոռոգվող և անջրդի երկրագործական համակարգերի շուրջ» զեկուցումը Արագածի նախալեռների ոռոգման համակարգերի սկզբնավորման, դրանց հետագա զարգացումների և ուսումնասիրության կարևորության ու նշանակության մասին էր:

Հնագետ Բորիս Գասպարյանը ներկայացրեց իր գիտական խմբի (Ռոբերտո Դան, Ա. Պետրոսյան, Վ. Մելիքյան, Ս. Նահապետյան, Դ. Առաքելյան, Ս. Աղայան, Պ. Վիտոլո, Օ. Գասպարո, Բ. Գասպարյան) «Ջրային պաշարների համալիր կառավարումը Վանի թագավորության շրջանում (Հրազդան գետի միջին հոսանքի օրինակով)» համահեղինակային աշխատանքը: Բանախոսն անդրադարձավ ուրարտական շրջանի ջրային ռեսուրսներին, դրանց կառավարմանը՝ արժևորելով տվյալ ժամանակաշրջանի գերզարգացած ոռոգման համակարգերն ու ջրամատակարարման սկզբունքները: Նա կարևորեց այն հանգամանքը, որ գյուղատնտեսական բնույթի կարիքներից բացի՝ Վանի տիրակալները և կառավարիչներն առանձնակի վերաբերմունք ունեին բուն բնակավայր-

րերի տնտեսական ու կենցաղային ջրամատակարարումն ապահովելու խնդրի նկատմամբ՝ բերելով Վանի, Էրեբունու, Արգիշտիխինիլի, Ռուսախինիլի, Թեյշեբաինի մոտակայքում կառուցված արհեստական ջրամբարների ու ջրանցքների օրինակները:

**Պ.գ.թ. Արսեն Բորոխյանի «Ալալու երգերն» ու «Աստղիկի պատկերը».** **հին Վասպուրականի ոռոգովի երկրագործական կենսատարածքը»** միջգիտակարգային գեկուցումը նվիրված էր Վասպուրական գավառի ջրային պաշարների, ոռոգման համակարգերի և դրանցով ամբողջ գավառի ջրապահովման ու ջրօգտագործման հարցերին: Հնագետն անդրադարձ կատարեց նաև տվյալ շրջանի ջրային մշակույթին առնչվող հնագիտական կոթողներին և դրանց հետ կապված որոշ առասպելաբանական պատումների, որոնք պահպանվել են հայ միջնադարյան մատենագրության մեջ:

**Բ.գ.թ. Տորք Դալայանն «Առասպելաբանական վիշապը և ոռոգման համակարգերի առաջացման առասպելույթը»** գեկուցման մեջ խոսեց հնագույն ժամանակների ջրանցքներին ու գետերին առնչվող՝ վիշապի մասին հյուսված հավատալիքների մասին՝ ընդգծելով դրանց կարևորությունը և պատշաճ ուսումնասիրության անհրաժեշտությունը: Տարբեր ժողովուրդների մեջ տարածված՝ վիշապի առասպելական պատկերացումների և իգականության հետ դրանց ունեցած անմիջական կապի մասին խոսելով՝ Տ. Դալայանը զուգադրել էր բանահյուսությունը, առասպելաբանությունը, լեզվաբանությունը: Ուշագրավ էին այդ համատեքստում արված համեմատությունները հայերի և տարածաշրջանի մի շարք ազգերի (պարսիկների, չեչենների, ինգուշների ևն) մեջ կենցաղավարող հավատալիքների միջև:

Առաջին նիստի ընթացքում (որն ուներ **«Ոռոգման և ջրաբաշխական համակարգերը հնագույն ժամանակներից մինչև անտիկ շրջան»** խորագիրը) **պ.գ.դ. Համլետ Պետրոսյանը** ներկայացրեց իր խմբի՝ **«Արցախի Տիգրանակերտի ջրանցքը»** համահեղինակային գեկույցը: Բանախոսը նշեց, որ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանում գտնվող Տիգրանակերտ մայրաքաղաքի հայտնի ջրանցքը պատմական Հայաստանի հիդրոտեխնիկական ամենախոշոր կառույցներից մեկն է համարվում: Լուսաբանելով դրա կառուցման ժամանակը, սկզբունքները և առանձնահատկությունները՝ նա կարևորեց Տիգրանակերտի ջրանցքի՝ ոռոգման այս համակարգի՝ հայկական ջրամատակարարման սկզբունքով կառուցված լինելը, որը նաև քաղաքի հայկականության ապացույցներից է:

Երկրորդ նիստը (**«Ազգագրական և բանահյուսական տվյալները ոռոգման համակարգերի վերաբերյալ»**) բացեց **պ.գ.դ. Հակոբ Չոլաքյանը՝ «Ոռոգման հնարավորությունները Քեսապի շրջանին մեջ»** գեկույցով: Հայագետը համապարփակ ներկայացրեց Քեսապի ջրային պաշարների քանակը՝ հատուկ շեշտելով դրանց սակավությունը, անդրադարձավ թե՛ բնական, թե՛ կառուցված աղբյուրներին՝ մանրամասնելով դրանց հետ կապված գեղեցիկ ավանդազրույցներն ու սնահավատությունները: Խոսելով շրջանի տեղագրության ու ջրային

ռեսուրսների մասին՝ բանախոսը մանրամասնեց. «Քեսապը լեռնային շրջան մըն է: Այստեղ տեղումները առատ կ'ըլլան, բայց անձրեային եղանակէն ետք ջրի հիմնական աղբիւրները կը մնան ոչ յորդաբուխ աղբիւրները, հորերը, ժայռային բնական գոգաւորութիւնները՝ գագ, եւ հին եղանակով շինուած ջրամբարները՝ *արընճ*, ուր անձրեաջուրը կը հաւաքուէր»:

**«Շիրակի ջրանցքի կառուցման նշանակությունը և դրա արտացոլումը բանահյուսության մեջ»** հոդվածում ք.գ.թ. Հասմիկ Գալստյանն անդրադարձավ Շիրակի հայտնի ջրանցքի կառուցման նախադրյալներին: Մանրամասն ներկայացնելով ջրանցքի հետ կապված մի շարք ավանդազրույցներ և բանահյուսական այլ պատումներ՝ Հ. Գալստյանն ընդգծեց ժողովրդի՝ ջրանցքին տված մեծ կարևորությունը: Բանագետը խոսեց նաև ջրանցքի կառուցման՝ թե՛ ժամանակի մամուլի, թե՛ հայ նորագույն գրականության էջերում տեղ գտած գրական արձագանքների մասին: Նա նշեց նաև, որ ջրանցքի կառուցման հարցը առաջ էր քաշվել դեռևս 1893-ին, ապա՝ 1906-ին, սակայն ծրագիրը գործի դրվեց միայն 1922-ին:

**«Ոռոգմանն առնչվող խնդիրների արտացոլումը Գարդմանի (Հյուսիսային Արցախ) հայերի բանահյուսության մեջ»** թեմայով իր ելույթում բանագետ Գևորգ Գյուլումյանը խոսեց Գարդմանի ջրային պաշարների մասին, անդրադարձ կատարեց դրանց սակավության հետևանքով դարերի ընթացքում ձևավորված անձրևաբեր ծեսերին, հմայախոսություններին, սնահավատական զրույցներին: Բանախոսը ներկայացրեց Գարդմանի լեռնային ռելիեֆի պատճառով առաջացած ջրի պակասի և դժվարհասանելիության վերաբերյալ իր հավաքած դաշտային նյութերը, որոնք խիստ հետք են թողել տեղաբնիկների մտածողության, վարքի վրա և իրենց ցայտուն արձագանքը գտել ժողովրդական բանահյուսության մեջ:

Ազգագրագետ Ռաֆիկ Գաբրիելյանի՝ **«Դարավանդների ոռոգման համակարգը հայկական մշակույթում»** բանախոսությունը նվիրված էր Հայկական լեռնաշխարհի բարձրադիր վայրերում տեղակայված բնակավայրերին, դրանց ոռոգման, ջրամատակարարման խնդիրներին, նաև բնական լանդշաֆտների մշակութայնացման հարցերին: Նա անդրադարձավ այդ բնակավայրերի՝ հատկապես նման գոտիներում տեղակայվելու քաղաքական պատճառներին՝ բերելով Ջեյթունի, Հաճնի, Գետաշենի և մի շարք այլ քաղաքների ու բնակավայրերի օրինակները:

Երրորդ նիստի (**«Ջրային պաշարների կառավարումը հնագույն ժամանակներից մինչև միջնադար»**) սկզբում **«Ջրամատակարարման համակարգը Շնող գետի ավազանում»** զեկուցմամբ հնագետ Անի Սարատիկյանը ներկայացրեց Լոռու մարզի Շնող գետի հարակից տարածքների ջրամատակարարման և ջրօգտագործման սկզբունքները, նշեց, որ ավազանի տարածքում է գտնվում միջնադարյան նշանավոր Կայծոն ամրոցը (X-XI դդ.), որտեղ էլ պահվում է այս տարածքի ջրաբաշխական համակարգի վերաբերյալ առաջին կարևոր վկայությունը: Նա այնուհետև հավելեց, որ Լոռու մարզի տարածքը

դարեր շարունակ եղել է ակտիվ տնտեսական շրջաններից մեկը, որի զարգացած այգեգործական գոտին հիմնականում ընդգրկել է Դեբեդի և այն սնող վտակների ավազանները:

Հնագետ Բորիս Գասպարյանը իր բանախոսության մեջ՝ **«Հայաստանի հին քարի դարի բնակչության կողմից ջրային ռեսուրսների օգտագործումը»**, ուշագրավ մանրամասներ հաղորդեց իր գիտական խմբի (Բ. Գասպարյան, Ա. Պետրոսյան, Վ. Մելիքյան, Հ. Հայրոսյան, Ա. Ադիգյոզալյան, Դ. Առաքելյան Ս. Նահապետյան, Ֆ. Գլաուբերման) կատարած աշխատանքների մասին: Ջեկուցումը հին Հայաստանում ջրօգտագործման մշակույթի սկզբնավորման մասին էր: Բ. Գասպարյանը ներկայացրեց այդ մշակույթի զարգացման ընթացքն ու միտումները մինչև միջնադար: Որպես լավագույն օրինակներ բերեց «Հադթանակ-3» բացօթյա կայանը (Դեբեդ գետի կիրճ), «Արենի-1» և «Արենի-2» (Արփա գետի հովիտ), «Դալարիկ-1» քարայրները (Մաստարա գետի կիրճ), «Նոր-Գեղի-1» կայանը (Հրազդան գետի կիրճ) ևն:

Քարի դարին հաջորդող ժամանակաշրջանին վերաբերում էր համահեղինակային (Ա. Պետրոսյան, Վ. Մելիքյան, Հ. Հայրոսյան, Ա. Ադիգյոզալյան, Դ. Առաքելյան, Ս. Նահապետյան, Ս. Աղայան, Ռ. Դան, Բ. Գասպարյան)՝ **«Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման առաջին վկայություններն ըստ հնագիտական տվյալների (նոր քարի դար - բրոնզի դար)»** զեկույցը: Պատմելով հազարամյակներ առաջ Հայկական լեռնաշխարհում կենցաղավարող ջրօգտագործման մշակույթի, դրա ձևերի, մոտեցումների մասին՝ բանախոսը գծապատկերներով ներկայացրեց տվյալ ժամանակաշրջանի ոռոգման համակարգերի կառուցվածքը, խողովակների պատրաստման ձևերը, ջրանցքների կառուցման նպատակով փորված լեռնային թունելները՝ ընդգծելով նաև դրանք՝ որպես պատմական արժեք վերականգնելու և պահպանելու անհրաժեշտությունը:

Հնագետ Համազասպ Աբրահամյանը **«Նախնական դիտողություններ Դվինի ջրամատակարարման մասին»** թեմայով համահեղինակային հոդվածում (համահեղինակներ՝ Հ. Պետրոսյան, Հ. Աբրահամյան, Ռ. Հովսեփյան) անդրադարձավ պատմական Դվին մայրաքաղաքի ջրամատակարարման մշակույթին՝ նշելով դրա զարգացածությունն ու ժամանակին ունեցած առաջնակարգ դերը: Համազասպ Աբրահամյանը նշեց, որ Դվինի ոռոգման համակարգի որոշ հատվածներ, որոնք հիմա նկատելի են հնավայրից հյուսիս և արևելք, գործել են մինչև XX դ. 30-ական թվականները:

Չորրորդ նիստի սկզբում (**«Վիմագրերը ոռոգման և ջրային պաշարների կառավարման վերաբերյալ»**) պ.գ.թ. Արսեն Հարությունյանը **«Ջրանցքաշինությունը միջնադարյան Հայաստանում՝ ըստ վիմագիր աղբյուրների»** զեկույցման մեջ ներկայացրեց միջնադարյան ջրանցքների կառուցման սխեմաները, մոտեցումները և առանձնահատկությունները՝ հիմնվելով վիմագիր արձանագրությունների վրա: Նա արձանագրեց, որ Վանի թագավորության սեպագրերի բովանդակության հիմքում կատարած գործն իբրև հիշատակ ավանդելն

էր, և այդ սովորույթը տարածում գտավ նաև քրիստոնեական գրավոր մշակույթում: Նա անդրադարձավ նաև մի շարք վիմագրերի, որոնք պարունակում են ջրօգտագործման հիշատակություններ:

Բորիս Գասպարյանի (համահեղինակներ՝ Ա. Գրիգորյան, Ա. Ադիգյոզալյան, Հ. Հայդոսյան, Ա. Պետրոսյան) «**Ջրային պաշարների կառավարումը միջնադարյան Հայաստանում՝ ըստ հնագիտական և վիմագիր արձանագրությունների**» բանախոսությունը վերաբերում էր միջնադարյան Հայաստանի ջրային պաշարների և դրանց արդյունավետ օգտագործման լուծումներին: Բանախոսը փաստական տվյալներով ցույց տվեց, թե դարերի ընթացքում ինչքան են նվազել մեր ջրային պաշարները:

Հուշարձանների պահպանության ՊՈԱԿ-ի աշխատակից Ավետիք Ղազարյանը «**Ոռոգման հիշատակումը Ավանի տաճարի 1219 թ. վիմագրում**» գեկուցման մեջ անդրադարձավ Ավանի տաճարի հյուսիսային ճակատին Իվանե Զաքարյանի՝ 1219 թ. թողած արձանագրությանը, որտեղ, ըստ հեղինակի, հիշատակություն կա ոռոգման մասին:

Գիտաժողովի վերջին՝ հինգերորդ նիստին («**Ջրօգտագործման մշակույթի տարբեր հայեցակետերը**») ազգագրագետներ պ.գ.թ. Լիլիթ Սիմոնյանի և պ.գ.թ. Կարեն Հովհաննիսյանի «**Ջրօգտագործումը, սրբավայրը և ծեսը հայոց մեջ (դասակարգման փորձ)**» համահեղինակային հոդվածում Լ. Սիմոնյանը, խոսելով ջրօգտագործման, մասնավորապես աղբյուրների և դրանց տրված ծիսական նշանակության մասին, անդրադարձավ կրոնագիտության մեջ հայտնի՝ «նվազագույն սրբավայրի» գաղափարին, ծառերից, թփերից կամ աղբյուրներից բաղկացած սրբավայրերին:

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակցուհի, ք.գ.թ. Կարինե Առաքելյանը, «**Ջրի և ոռոգման համակարգի գեղարվեստական պատկերը Միսաք Մեծարենցի լեզվով**» գեկուցման մեջ անդրադարձ կատարելով ջրօգտագործման մշակույթին և հանճարեղ քնարերգուի՝ Միսաք Մեծարենցի բանաստեղծական բառապաշարում «ջուր» բառի առկայությանն ու դրան տրված սիմվոլիկ նշանակությանը, նշեց, որ Մեծարենցը գործածել է *ջուր* արմատով կազմված բազմաթիվ բառեր, ինչպես՝ ջրանիվ, ջրանկար, ջրանույշ, ջրաշոգի, ջրարբք, ջրծաղիկ և այլն:

Բորիս Գասպարյանը ներկայացրեց նաև իր գիտական խմբի (Բ. Գասպարյան, Ա. Գրիգորյան, Ռ. Դան, Վ. Մելիքյան, Հ. Հայդոսյան, Ա. Ադիգյոզալյան, Դ. Առաքելյան, Կ. Բայրամյան, Ա. Անանյան, Ս. Նահապետյան, Ֆ. Գլաուբերման, Ա. Պետրոսյան) աշխատանքը՝ «**Նուռնուսի պատմածիսական լանդշաֆտի հազարամյակների գոյության ֆենոմենը**» վերնագրով, պատմեց Նուռնուս բնակավայրի հնագիտական հուշարձանների, դրանց կարևորության և ժամանակի ընթացքում կրած փոփոխություններին մասին: Նա ընդգծեց, որ առանձնակի հետաքրքրություն ունի գյուղից հարավ-արևմուտք ընկած՝ Հրազդան գետի կիրճի հատվածը, որը տեղացիներին հայտնի է «Նադիրի այգի» անունով: Այստեղ առկա հնագիտական մեծ համալիրը ներառում է XIII դ. միանավ

դահլիճը, Սուրբ Աստվածածին կիսավեր եկեղեցին, արևմտյան կողմից ուշ շրջանում կցված գավիթը և շրջակայքում գտնվող միջնադարյան գերեզմանոցը:

Վերջում ելույթ ունեցավ հնագետ Արման Նալբանդյանը (**«Նորահայտումներ Լոռեբերդ ամրոցի միջնադարյան բաղնիքների ջրօգտագործման համակարգերի վերաբերյալ»**): Մանրամասն խոսելով ծովի մակերևույթից 1490 մ բարձրության վրա գտնվող Լոռեբերդի տարածքում ժամանակին գործած մեծ և փոքր բաղնիքների մասին՝ նա մասնավորապես նշեց դրանց ջրամատակարարման առանձնահատկություններն ու զարգացածությունը՝ ընդգծելով այդ բարձրության վրա ջրի նմանօրինակ կառավարման ու բաշխման կարևորությունը: Բանախոսը ներկայացրեց նաև բերդի տարածքում իր պեղումների ժամանակ հայտնաբերված գտածոները՝ ջրի ծորակները, խողովակաշարը, ծխամորճերը ևն:

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ տնօրեն Արսեն Բոբոխյանն իր եզրափակիչ խոսքում հայտնեց, որ **«Ոռոգման համակարգերը Հայկական լեռնաշխարհում»** գիտաժողովի նյութերը կընդգրկվեն հոդվածների ժողովածուի մեջ և առաջիկայում կիրատարակվեն:

**ԱՆԱՀԻՏ ԽԵՉՈՅԱՆ**


khechoyan.anahit@mail.ru

**ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ**

gyulumyan1910@mail.ru

**ԱՆԼԻՏԱ ԴՕԼՈՒԽԱՆՅԱՆ**, Столица армянских Багратидов – Ани в оценке иностранных арменоведов и путешественников, Ереван, изд. «Лусакн», 2024, 192 с.

## 1001 ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ



Աշխատությունը բովանդակում է հայագիտությանը վաղուց ի վեր հուզող և մնայուն թեմա՝ լեգենդար Անի մայրաքաղաքի պատմությունն ու նրա ճակատագիրը: Դրան համապատասխան, հսկայական գրականություն է ստեղծվել Հայաստանի այդ ականավոր ուստանի, նրա պատմության ու մշակույթի վերաբերյալ, իսկ ինքը՝ քաղաքը, դարձել է իրեն ստեղծած ժողովրդի համար սրբազան մասունք և այդ նույն մասունքի իրավունքով՝ ոչ անվթար ու ոչ ամբողջական, ավերակված կոթողներով ու խոնարհված եկեղեցիներով, որոնք դարձել են հուշ և պատմություն՝ մեկը մյուսի հետ հավերժ մրցակցող իրենց փառահեղ անցյալի դրվագներով:

Գիտական շրջանառության մեջ վաղուց ի վեր մտած այս քաղաքի պատմությանը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ա. Դուրլխանյանը մոտեցել է յուրովի՝ հիմնահարցը քննարկելով հետաքրքիր դիտանկյունից՝ Անին օտարազգի հայագետների ու ճանապարհորդների հայեցակետից ու բնութագրմամբ, ինչպես և նրա պատմության անդրադարձներին՝ ազգային հոգևոր աշխարհում, ասել կուզի՝ հիշողության մեջ: Դրանով իսկ թեման բացահայտվում է նորովի և թարմ համայնապատկերի մեջ, որտեղ առկա են ոչ միայն Անիի ուսումնասիրության գիտական արդյունքները, այլև բնութագրվում են իրենք՝ քաղաքը հետազոտության առարկա դարձրած հայագետներն ու այցելու ճանապարհորդները՝ անկրկնելի անհատականությամբ ու սեփական ընկալումներով: Եվ այս իմաստով Բագրատունյաց մայրաքաղաքի կենսագրությունը վերարտադրվում է բոլորովին նոր կտրվածքով, քաղաքակրթության մեկնակետից՝ շարունակ հիշեցնելով մեզ, որ հայությունը ևս իր լուման է ներդրել այդ քաղաքակրթության զարգացման հանգրվաններում:

Հեղինակն իրեն հետաքրքրող հիմնահարցին մոտեցել է իր՝ որոշակիորեն ձևավորված ու կիրառած սկզբունքով, որ հետամտում է ցույց տալ խնդրառարկա հայագետի կամ Անիի այցելուի անհատական մոտեցումը ավերված քաղաքի պատմությանը՝ նրա արտաքին տեսքին, ճարտարապետական հորին-

վածքին, հայ քաղաքական ու մշակութային կյանքում նրա ունեցած տեղին ու նշանակությանը, օտար նվաճողների կողմից նրա դեմ ուղղված շարունակական հարձակումներին և այլն: Եվ Ա. Դոլուխանյանին հաջողվել է ի հայտ բերել նրանցից յուրաքանչյուրի տեսակետն ու կարծիքը Անիի բազմաշերտ ու եզակի արվեստի, շքեղ անցյալի կամ ողբերգական զարգացումների մասին, որոնց ամբողջության մեջ էլ ամփոփվում է Անիի պատմությունն ու քաղաքամայրի իրավունքը՝ օտարագրիների (ինչպես նաև հայ ուսումնասիրողների և առհասարակ մտավորականների) անվրեպ գնահատանքով: Այդպիսին են հեղինակի գրեթե բոլոր լուսաբանումները՝ սկսած առաջին ճանապարհորդներից մեկի՝ դիվանագետ, գրող, Ալեքսանդր I-ի պալատական նկարիչ Ռ. Պորտերի մատիտանկար պատճենումներից, ֆրանսիացի ուղեգիր, ճարտարապետության պատմաբան Ա. Շուազիի ճշմարտացի արժևորումներից և վերջացած Անիի եկեղեցիներին Լինչի հանգամանալի անդրադարձներով և այլն: Նույնը վերաբերում է Ժ. դը Մորգանի, Վ. Աբիխի, Շ. Դիլի, Մ. Բրոսեի, Էդ. Դյուլորիեի, Ն. Մառի, Հ. Օրբելու և այլոց ստեղծած խոշոր և մնայուն վաստակին՝ անիագիտության բազմաձև հետազոտությունների ասպարեզում: Այստեղ հարկ է առանձնացնել Ա. Դոլուխանյանի՝ հատկապես ֆրանսիացի հայագետներին նվիրած էջերը՝ մեր քննարկման ենթակա հիմնահարցի շրջանակում, որտեղ առավել անկաշկանդ ի հայտ են բերված հեղինակի ընդարձակ իրազեկությունն ու ընդհանրացումները ֆրանսիացի հայագետներին գնահատելիս: Հիրավի, Անիի պատմության ուսումնասիրության ասպարեզում խոր հետք է թողել ֆրանսիացի ականավոր հայագետ, Ռուսաստանի և Եվրոպական մի շարք երկրների ակադեմիաների անդամ Մ. Բրոսեն, որը գրել է «Անիի ավերակները» երկհատոր աշխատությունը (1860-1861): Ա. Դոլուխանյանը վերհանում է նրա ուսումնասիրության գիտական կուռ հենքը, սկզբնաղբյուրները, պատմագիտական հարուստ տեղեկությունները մասնավորապես Բագրատունյաց Անիի պատմության շրջանակներում, X դարում Բագրատունիների զորացումը Աշոտ Բ-ի, Աբասի, Աշոտ Գ-ի և Սմբատ Բ-ի ժամանակ, քաղաքի ճարտարապետական արվեստի վերելքը թեկուզ և այն ցայտուն օրինակով, երբ Տրդատ ճարտարապետը հիմնում է Անիի կաթողիկե եկեղեցին (989): Նույն այն ճարտարապետը, որն այդ ժամանակներում (970-990-ական թթ.) կառուցել է Արգինայի կաթողիկե եկեղեցին, վերականգնել Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիայի տաճարի գմբեթը և այլն: Ա. Դոլուխանյանը վերհանում է Մ. Բրոսեի շարադրանքի կուռ գիտականությունը, այլև առանձնահատուկ նրբագեղությունը՝ գեղարվեստական ոճի առկայությունը նրա հիշյալ և այլ աշխատություններում: Մ. Բրոսեի այս հետազոտությունները գիտական ավարտուն տեսք են ստանում քաղաքի հատակագծերին կոթնող նրա եզրակացություններով, որոնք խորացնում են քաղաքի կառուցապատման աստիճանական զարգացման վերաբերյալ իր և այլոց նախորդ պատկերացումները: Կամ՝ ֆրանսիացի նշանավոր հայագետ Էդ. Դյուլորիեի գործունեության բացահայտումներն ու լուսաբանումները սույն աշխատության մեջ՝ ի դեպ, հայոց պետականության զարգացման խաչմերուկներում

Անիի պատմական նշանակության բացահայտումներով: Հատկանշական է էդ. Դյուլորիեի «Հետազոտություններ հայկական տոմարական և պատմական ժամանակագրության» աշխատությանը տրված բարձր գնահատականը, որտեղ արժևորվում են ֆրանսիացի հայագետի ճշգրտումները հայ մատենագիրների ժամանակագրական տեղեկությունների կտրվածքով:

Հիմնահարցի տրամաբանությամբ ևս և երբեմն այն ամբողջականացնելու մղումով՝ Ա. Դյուլիսանյանը դիմում է ընդմիջարկումների. նկատի առնելով այն, որ հայերն ապրում են իրենց հայրենիքում, որպես տեղաբնիկ և վաղնջական ժամանակներից, նա գրում է, որ Բագրատունիներն իրենց համարում էին Նոյի շառավիղները՝ գիտակցելով իրենց պատմական արմատները: Եվ հակառակ այս վերջինի, մերօրյա կեղծարար թուրքական պատմագիտությունը նենգափոխում է և՛ փաստերը, և՛ ժամանակաշրջանները: Նա անդրադառնում է այն իրողությանը, որ սելջուկ թուրքերը փոքրասիական թերակղզու հյուսիսարևմտյան մասում, որտեղ գտնվում էր Տրոյան (Եփեսոսի մոտ), հայտնվել են XIII դ. վերջին քառորդին, մինչդեռ Թուրքիայի երբեմնի նախագահ Թ. Օզալը Հարվարդի համալսարանում իր հանդիպումներից մեկում պնդում էր, որ տրոյացիները, ոչ ավել, ոչ պակաս, եղել են իրենց նախահայրերը (էջ 56): Օզալը, այդպիսով, պատմությունը հանձնում էր քաղաքականության կամ սեփական քմահաճույքների, ճիշտ նույն կերպ, երբ մեկ այլ առիթով փորձում էր Օսմանյան կայսրության պատմության մեջ խայտառակ դեր կատարած ենիջերիներին ներկայացնել որպես նմանակության իդեալ՝ հպատակ ազգերի համար, որոնք իբր ձգտում էին անգամ կաշառքի միջոցով իրենց երեխաներին ենիջերիների զորախումբ մտցնել (տե՛ս Vryonis S. *The Turkish State and History*, New York, 1993, p. 46):

Անիի պատմության գիտական վերարտադրության գործում անդրադառնալով Մ. Բրոսեի լուրջ ներդրումներին՝ աշխատության հեղինակն ուրվագծում է քաղաքի ողբերգական ճակատագիրը պայմանավորող գործոնները՝ թշնամական պետությունների ճնշումների ուժգնացումը XI դարում, բյուզանդացիների ներխուժումը Հայաստան, որի կործանումը, սակայն, հետաձգվում է սպարապետ Վահրամի հերոսական մարտերի շնորհիվ: Եվ դարձյալ, արդիական իմաստ ու հնչեղություն են ստանում Մ. Բրոսեի հեղինակային այն բացահայտումները, որոնք հասկանալի են դարձնում Անիի անշքացման այլ պատճառները՝ հայ իշխանների ներքին անմիաբանությունը, հայրենասիրության զգացման աղետալի նվազումը, որոնք չէին կարող փոխհատուցվել Բագրատունյաց երիտասարդ արքա Գագիկի ժամանակավոր հաջողություններով, այդ թվում և 1042 թ. թուրքմեն-սելջուկների, իսկ 1043 թ. բյուզանդացիների դեմ տարած հաղթանակով: Այժմեական են հնչում Ա. Դյուլիսանյանի հղումները Մ. Բրոսեին՝ «երբ չկա համաձայնություն, ապա երկնային ուժը նույնպես մնում է անզոր» (էջ 71): Հիրավի, պատմությունը կրկնվում է այն ժամանակ, երբ մարդիկ իրենք են կրկնում իրենց սխալները՝ անտեսելով պատմության դասերը, և այս դառն ճշմարտությունը, այդ թվում և անկումային մտածելակերպն ու հոգեբանական պարտադրանքը անխուսափելիորեն հասցնում են թշնամու ողորմածությանը

հանձնվելուն, պետականության ու հայրենիքի կորստին: Վեստ Սարգսին ու Պետրոս կաթողիկոսին «հաջողվում է համոզել իշխաններին՝ Մոնոմախին հանձնել Անին, որպեսզի վերջինս իրենց պաշտպանի թշնամիներից», եզրափակում է հեղինակը (էջ 73): Ահա և այսօր վերստին զարմանալիորեն նոր կյանք առած և կործանարար այդ սխալի ձևակերպումը ավերակյալ քաղաքի պարիսպների ներսում: Ահա և դրա անխուսափելի հետևանքները՝ 1045 թ. Անի անձնատվությունը, նրա բնակչության չղադարող գաղթերը Լեհաստան և Մոլդովա, հետագայում՝ Աստրախան, Սիս, Ջուղա, Թեոդոսիա, Վան և այլուր: Աշխատության մեջ Մ. Բրոսեի հետազոտությունները բնութագրվում են այն կարևոր ընդհանրացմամբ, որ նա Անիի ծավալուն պատմության առաջին հեղինակն է, որը, գործակցելով Վենետիկի Մխիթարյանների հետ, դրեց Անիի հետագա ուսումնասիրությունների հաստատուն հիմքերը:

Առանձին հետազոտողների շարքն այս գլխում Ա. Դյուլխանյանը եզրափակում է Նիկողայոս Մառի՝ որպես Անիի պատմության ներհուն ուսումնասիրողի ծավալուն գնահատականով: Ամենայն իրավամբ, աշխատության մեջ Ն. Մառը հանդես է գալիս Անիի պատմության նոր փուլը բացահայտողի գիտական շղարձակումներով, իբրև բացառիկ հետազոտող հնագետ: Դրա համեմատ, հեղինակն Անիի մասին իրողություններն ու տվյալները ընթերցողին է հաղորդում այս գիտնականի հետաքրքրությունների շրջանակներում՝ միշտ ուշադրության կենտրոնում պահելով Անիի մշակույթը, հատկապես ճարտարապետությունը: Ա. Դյուլխանյանն ընդգծում է Ն. Մառի հանգամանալի և խորքային իմացությունը մեր ժողովրդի քաղաքական ու մշակութային կյանքում Անիի դերակատարության հիմնահարցերում, որով և այդ հետազոտողի գործը հանդես է գալիս որպես գիտական մտքի հանրագումար՝ նախորդ և իր ժամանակի բոլոր հետազոտություններով հանդերձ: Ուշագրավ է խնդրո առարկա աշխատության մեջ Ն. Մառի այն եզրակացության առանձնացումը, որ Անին իր բնակչության էթնիկական միատարրության իմաստով եղել է բացառապես հայկական քաղաք՝ իր արքայական նստավայրով, քաղաքական ու տնտեսական գործառույթներով ու հոգևոր նշանակալիությամբ: Այս խնդիրներին հեղինակի քննական մոտեցումները ամրապնդվում են նրա այն լուսաբանումներով, որոնք վերաբերում են Ն. Մառի՝ որպես Անիի պեղումները նախաձեռնողի և կազմակերպչի գործունեությանը՝ 1892-1916 թթ. ընթացքում: Իսկապես Անիի պատմության ուսումնասիրության գործում հանրագումարային նշանակություն ունի Մառի գիրքը, որտեղ նա ներկայացնում է իր հնագիտական տասներկու արշավների արդյունքները՝ համապատասխան գտածոների հիման վրա, որպիսիք և հիմք դարձան Ն. Մառի համար՝ բուն իսկ պեղումների հարթակում ստեղծելու հնագիտական թանգարան և դրանով իսկ հավելյալ ու համոզիչ ցուցադրական միջոց՝ հայերի պատմության ու մշակույթի վրա բևեռելու ժամանակի գիտական հասարակայնության ուշադրությունը: Այստեղ ևս հեղինակային շեղումներն ինքնանպատակ չեն և օժտում են նրա աշխատանքը մերօրյա տրամադրություններով, ինչպես, օրինակ, 1215 թ. կառուցված Տիգրան Հոնենցի եկեղեցու որմ-

նանկարների ոչնչացումը թուրք բարբարոսների կողմից, որի մասին գրում էր Վիկտոր Լանգլուան Նապոլեոն կայսրին՝ 1852-1853 թթ. (էջ 102): Հայաստանի տարածքում բոլոր հին և նոր բարբարոսների այս վարքագիծն ու գործելակերպը դույզն-ինչ չափով չի փոխվել. դեռևս Վ. Լանգլուան, ինչպես նկատում է հեղինակը, ահազանգ էր հնչեցնում, որ «թուրքերը ոչնչացնում են հայկական պատմական հուշարձանները, որովհետև դրանք հիշեցնում են իրենց երբեմնի տերերի մասին» (էջ 102): Բայց այն, ինչ գրվել է գրչով, չես կարող ջնջել կացնով, ասում է հին իմաստությունը, որի ճշմարտացիությունը հեղինակը մեկ անգամ ևս հաստատում է «Անի քաղաքը ռուսալեզու և այլալեզու հանրագիտարաններում» վերնագրով տեղեկատու-վերլուծական ակնարկում, որտեղ հիշվում են համբավավոր ու միջազգային հեղինակություն վայելող հանրագիտական հրատարակությունները:

Աշխատության 2-րդ գլխում գնահատվում են Անիի վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրներն ու լեգենդար մայրաքաղաքի մասին պատմիչների գործերն ու հայ մտավորականների, այդ թվում և ստեղծագործական մտավորականության անդրադարձները: Հեղինակն արժանին է հատուցում այս ասպարեզում հայ դասական Խ. Աբովյանի առանցքային դերակատարությունը՝ Անիի ազգային ու մշակութային նշանակության տեսակետից և նկատի ունենալով նրա հանրահայտ վեպում հայկական պետականությանը տրված բարձր գնահատականը: Սրա հետ միասին՝ նրա քննադատական հիմնավոր տեսակետը մեր այն նախնիների մասին, որոնք չկարողացան պահպանել երկրի քաղաքական անկախությունը՝ Անի մայրաքաղաքով հանդերձ: Իր ուղեգրական հայտնի շարադրանքում, որ ընդգրկում է Անի կատարած այցի ընթացքում տպավորություններն ու պատմագիտական խորհրդածությունները, բացահայտվում են Աբովյանի՝ խորապես հայրենասիրական ու առաջադիմական տեսակետները Անիի և Բագրատունյաց հարստության անկման, դրանց պատճառների և իր ժամանակի հայության քաղաքական ու հոգևոր կացության վերաբերյալ:

Անիի պատմության և առհասարակ դրա վերաբերյալ սկզբնաղբյուրների վկայակոչումով (Եղիշեից ու Ղազար Փարպեցուց մինչև ժամանակակիցներ Ասողիկ, Արիստակես Լաստիվերտցի, Սամվել Անեցի և ապա Մատթեոս Ուռհայեցի, Կիրակոս Գանձակեցի և այլք) հեղինակը հիմնավորում է անիագիտության գիտական ճշմարտացիությունը, ինչպես նաև այն անառարկելի իրողությունը, որ օտար հայագետների ու ճանապարհորդների ընդհանրացումներն ու հաղորդած հարուստ տեղեկատվությունը հենվում են աղբյուրագիտական հավաստի և արժանահավատ տվյալների վրա:

Քննարկվող գլխում ևս հեղինակը կատարել է թեման բնութագրող ինքնատիպ բացահայտումներ. հատկապես նկատի ունենք շարադրանքի վերջին հատվածներից մեկը, որտեղ նա բացահայտում է Անիի թողած խոր հետքերն ու հմայքը հայ պատմագետների, գրողների և առհասարակ մտավորականության աշխատություններում և գործունեության, ասել կուզի՝ հայ մտավոր և հոգևոր բազմաձև աշխարհում:

Կարելի էր ավելի ընդարձակ խոսել այս աշխատության արժանիքների և մեր պատմաբանասիրական գիտության համար դրա կարևոր արժեքի և նշանակության մասին՝ անպայման հավելելով, որ Ա. Դոլուխանյանի ուսումնասիրության ռուսերեն թարգմանությունն ամենայն հաջողությամբ իրականացրել է ռուսերենի ճանաչված գիտակ և թարգմանչուհի Գայանե Հարությունյանը: Ուշադրություն են բևեռում Անիին նվիրված՝ պատմագեղարվեստական բնույթի նրա ճաշակավոր (Ներսես Շնորհալի, Հովհաննես Շիրազ, Լևոն Մանվելյան) և առաջին անգամ արված բնագրային թարգմանությունները, որոնք, կարծում ենք, ռուսալեզու ընթերցողին ճիշտ չափի մեջ են փոխանցում վերոհիշյալ հեղինակների էլեգիական ազնիվ տրամադրությունները:

Ունեմ մի երկու դիտողություն, երկուսն էլ՝ տեխնիկական բնույթի: Նախ, կրկնվել է Անիին վերաբերող՝ Հովհ. Շիրազի հայտնի բանաստեղծության թարգմանությունը (երկրորդ անգամ՝ ոչ լրիվ ծավալով, տե՛ս էջ 138 և 146): Այնուհետև, երկրորդ գլխի առաջին ենթագլուխը՝ Աբովյան-Անի առնչությունների շուրջ, կարծում եմ, իր տեղում չէ, և թերևս, իր տեղը պետք է զիջեր, ըստ հերթականության, Անիի պատմությունը, դրա սկզբնաղբյուրները, պատմագիտությունը և այլնը ներկայացնող երկրորդ ենթագլխին: Մանավանդ, Խ. Աբովյանը միջնորդավորումով է կապվում հիմնահարցին (օտարազգի գիտնականների հետ նրա նամակագրությունը) և այլազգի հայագետ կամ ճանապարհորդ չէ:

Ասվածը, սակայն, հետին նշանակություն ունի գիտական այն ակնառու և ամբողջացնող որակների համեմատությամբ, որով աչքի է ընկնում այս աշխատությունը Անիի և նրա պատմության վերաբերյալ հետազոտությունների շարքում, և որի շնորհիվ մեր առջև ավերակներից վերստին հառնում է 1001 եկեղեցիների վեհաշուք քաղաքը՝ հայոց պատմության հոլովույթում:

**ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ**

«ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր  
info@haygithimnadram.am

**ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ**, Աշխատանքային միգրացիան և սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում, Երևան, ՀԱԻ հրատ., 2023, 388 էջ:



Մարդկանց խմբերի կամ անհատների տեղաշարժերը մարդկության պատմության շարունակական գործընթացներից են: Դրանց և՛ պատճառները, և՛ հետևանքները պատմաքաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային հենք ունեն: Միգրացիոն գործընթացները՝ տարերային կամ ուղղորդված, մշտապես արդիական են և իրավիճակ են թելադրում անհատի ու ընտանիքի, պետության ու հասարակության կյանքում: Այդ շարժընթացների ակտիվ դրսևորումներից է աշխատանքային միգրացիան: Հայաստանի գիտական հանրույթի՝ աշխատանքային միգրացիային նվիրված ուսումնասիրությունները մեծավ մասամբ շեշտադրում են դրա սոցիալ-տնտեսական տեսանկյունը, և վաղուց հասունացել էր միգրացիայի պատճառները և դրա

հետևանքով առաջացած էթնոմշակութային խնդիրները և փոփոխությունները գիտականորեն վերլուծելու անհրաժեշտությունը: Այդ հիմնախնդիրներն է շուրջ չորս տասնամյակ (1980-2020 թթ.) հետազոտում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Միհրան Գալստյանը: Նա իր գիտական հարուստ վաստակը համալրեց ևս մեկ հիմնարար աշխատությամբ՝ «Աշխատանքային միգրացիան և սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում»:

Ուսումնասիրությունը շուրջ չորս տասնամյակի ընթացքում ՀԽՍՀ և ՀՀ բոլոր վարչատարածքային միավորներում (ընտրանքը՝ շուրջ 20 քաղաքային և 55 գյուղական բնակավայրեր) անցկացված շարունակական հետազոտությունների արդյունք է. էթնոսոցիոլոգիական հարցումներ՝ 1728 ընտանիքում, 39 ֆոկլորաբանական և 136 խորացված հարցազրույցներ: Հետազոտության մեջ ընդգրկվել են նաև ՀՀ 8 քաղաքներում և 22 գյուղերում բնակվող էթնիկ փոքրամասնությունները (եզդիներ, քրդեր, ասորիներ, հույներ, ռուսներ, ուկրաինացիներ. ընտրանքը՝ 382 ընտանիք): Օգտագործվել են նաև հայ և օտարալեզու գրականություն, արխիվային սկզբնաղբյուրներ, մամուլ, իրավական փաստաթղթեր, առցանց ռեսուրսների տվյալներ: Բոլոր խնդիրների վերլուծությունները թվային ցուցանիշներով ներկայացված են աղյուսակներում և գրաֆիկական պատկերներում՝ ստեղծելով տվյալների հարուստ բազա: Դրանք ներկայացված են գյուղի և քաղաքի, մասնագիտական և սեռատարիքային կազմի, ընտանեկան և սոցիալ-մասնագիտական կարգավիճակի և մի շարք այլ ցուցանիշների համատեքստում:

Առաջատրված նպատակն է «բացահայտել Հայաստանի աշխատանքային միգրացիայի հետևանքով միգրանտների և նրանց ընտանիքների, էթնոսի և հասարակության մակարդակով տեղի ունեցող էթնոմշակութային և սոցիալական փոփոխու-

թյունները նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանների լայն համեմատական համատեքստում» (էջ 9):

Մ. Գալստյանը հինգ գլուխներում ներկայացնում է միգրացիայի տեսական ուղղությունները և մեթոդաբանական հենքը, քննարկում միգրացիայի տեսակների եզրութաբանական խնդիրները, վերլուծում աշխատանքային միգրացիայի պատմական զարգացման առանձնահատկությունները, վեր է հանում աշխատանքային միգրանտների սոցիալական և էթնոժողովրդական բնութագիրը, միգրացիայի պատճառները և սոցիալ-տնտեսական ու մշակութային հետևանքները:

Ուսումնասիրելով նախախորհրդային շրջանի (XIX դ. երկրորդ կեսից մինչև XX դ. սկիզբ) արխիվային, մամուլային, վիճակագրական նյութերը՝ հեղինակը նշում է, որ այդ փուլում արտագնացության պատճառ էին դիտվում աղքատությունը, հողի սակավությունը, բարձր հարկերը, պարտքերը և այլն: Արևելյան Հայաստանի բնակչության որոշ մասը ստիպված էր աշխատանք փնտրել Ռուսաստանի և Այսրկովկասի արդյունաբերական խոշոր կենտրոններում, իսկ Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանից հիմնականում պանդխտության էին մեկնում Կոստանդնուպոլիս: Պանդխտության հատկապես մեկնում էին այն ընտանիքներից, որտեղ կար երկու և ավելի աշխատունակ հասակի տղամարդ, և հաճախ ընտանիքի անդամների միջև տեղի էր ունենում աշխատանքի բաժանում: Դրա հետևանքով գյուղական միջավայր ներթափանցեցին քաղաքային մշակույթի նոր տարրեր՝ ազդելով նրանց սոցիոնորմատիվ վարքագծի վրա, առաջացնելով արժեքային կողմնորոշումների փոփոխություններ և խթանելով նոր լեզուների յուրացումը: Ազգագրական նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ այն Հայաստանում նաև նպաստեց նահապետական գերդաստանների քայքայման և փոքր ընտանիքների ձևավորման գործընթացին: Հետևաբար փոխվեց նաև այդ համայնքների բնակչության սեռատարիքային կազմը, քանի որ գյուղական երիտասարդության մի մասը հետագայում մշտական բնակություն հաստատեց արդյունաբերական խոշոր քաղաքներում՝ հանգեցնելով համայնքներում տարեցների տեսակարար կշռի աճին:

Հեղինակը անդրադառնում է նաև Խորհրդային Միության կազմում ընդգրկվելուց հետո Հայաստանից տեղի ունեցող արտագնացությանը՝ ուղղված ԽՍՀՄ աշխատանքային ռեսուրսների պահանջարկ ունեցող տարածքներ. տարեկան լեռնային և նախալեռնային շրջանների գյուղական բնակավայրերից մեկնում էր մոտ 25-30 հազ. մարդ: Խորհրդային կարգերի պայմաններում աշխատանքային միգրացիան Հայաստանի գյուղական բնակչության շրջանում նպաստեց նաև ստրատիֆիկացիոն (շերտավորման) գործընթացների ձևավորմանը զբաղվածության ոլորտներում և սոցիալ-մասնագիտական կազմի փոփոխություններին: Հեղինակը էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքների հիման վրա հանգել է այն եզրակացության, որ խորհրդային գյուղական համայնքներում արտագնացությամբ զբաղվողները վերածվել էին առանձին սոցիալ-մասնագիտական խմբի. նրանք մյուսներից տարբերվում էին զբաղվածության բնույթով, կենսակերպով, եկամտի աղբյուրներով, համայնքային կյանքին մասնակցության և արժեհամակարգի առանձնահատկություններով: Արտագնա համայնքները, ի տարբերություն մյուսների, առանձնանում էին բարեկեցության բարձր մակարդակով և արտաքին տեսքով, որոնց բնորոշ էին քա-

ղաքային ապրելակերպի որոշ տարրեր՝ երկհարկանի առանձնատներ, մեքենաներ, արտասահմանյան կահույք և այլն: Վաստակի այդ միջոցներով մի շարք գյուղական համայնքներում ստեղծվեցին նորակառույց թաղամասեր, որտեղ հիմնականում բնակվում էին երիտասարդ ընտանիքները: Շնորհիվ այս գործընթացների՝ գյուղական համայնքները դուրս եկան տեղային մեկուսացումից և ներգրավվեցին սոցիալ-մշակութային փոխհարաբերությունների նոր գոտի: Դրա միջոցով համայնքից դուրս ավելացան հաղորդակցման ուղիները՝ հանգեցնելով գյուղական ընտանիքների շրջանում նոր մշակութային պրակտիկաների փոխանցման և հայրենի միջավայրում արժեքների բազմազանության ձևավորման:

Հեղինակը մանրամասնորեն վերլուծել է նաև հետխորհրդային շրջանում Հայաստանից աշխատանքային միգրացիայի գործընթացները, որը, ըստ հետազոտության արդյունքների, պայմանավորված էր անկախության առաջին տարիներին ստեղծված պատերազմական իրավիճակով, տնտեսական ճգնաժամով, գործազրկության բարձր մակարդակով և աղքատությամբ: Եթե խորհրդային տարիներին այն հիմնականում ընդգրկում էր լեռնային և նախալեռնային շրջանների գյուղական բնակավայրերը, ապա ուշխորհրդային և հետխորհրդային փուլում դրան մասնակցեց Հայաստանի գրեթե բոլոր մարզերի քաղաքային և գյուղական բնակչությունը: Հարցված ընտանիքներից յուրաքանչյուր երրորդն արտեղրկում ունի 1-2 աշխատանքային միգրանտ: Ի տարբերություն խորհրդայինի՝ հետխորհրդային շրջանում հայերի հետ աշխատանքային միգրացիային ակտիվ մասնակցում են նաև Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունները՝ ռուսները, եզդիները, քրդերը, ասորիները, հույները: Ըստ հեղինակի՝ գործազրկության պայմաններում աշխատանքային միգրացիան խթանել են նաև հայերի և հայաստանաբնակ որոշ ազգային փոքրամասնությունների (եզդիներ, քրդեր) ընտանիքի կառուցվածքի առանձնահատկությունները, մասնավորապես մի հարկի տակ ապրող երկու-երեք սերունդների առկայությունը: Եթե խորհրդային շրջանում ընտանիքի տղամարդկանցից մեկը մնում էր տեղում տնտեսություն վարելու և ուներ նաև վարձատրվող աշխատանք, ապա հետխորհրդայինում այդ մոտեցումը փոխվեց, քանի որ դրան մասնակցում են ընտանիքի համարյա բոլոր այն չափահաս տղամարդիկ, որոնք հնարավորություն ունեն մեկնելու հանրապետությունից դուրս՝ աշխատանքի:

Հեղինակը վերլուծել է նաև արտագնացների սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական խմբերի բնութագիրը: Հետազոտության արդյունքներով միգրանտների շրջանում գերակշռում են երիտասարդ տղամարդիկ, և, կարելի է ասել, Հայաստանից միգրացիայի այդ ձևն ունի հստակ գենդերային ուղղվածություն: Վերջինս հեղինակը բացատրում է ընտանիքում տղամարդկանց և կանանց զբաղեցրած կարգավիճակի և ըստ սեռային հատկանիշի աշխատանքի բաժանման վերաբերյալ գոյություն ունեցող ավանդական պատկերացումներով: Ավանդական արժեքների և գենդերային դերերի պատկերացումների շրջանակում ընտանիքի, ազգակիցների և հասարակության կողմից հատկապես գյուղաբնակ կանանց աշխատանքային միգրացիան Հայաստանում չի խրախուսվում: Այնուհանդերձ, առանձին դեպքերում կանայք աշխատանքային միգրացիայի ստիպված են մեկնում, քանի որ ընտանիքը ապրելու այլ ելք չունի. այն միջոց է տանը մնացած հարազատներին օգնելու: Փոխվել են նաև աշխատանքային միգրանտների կրթական մակարդակը և սոցիալ-

մասնագիտական կազմը: Խորհրդային տարիներին աշխատանքային միգրանտների մեջ բարձր տոկոս են կազմել միջնակարգ-մասնագիտական կրթություն ունեցող աշխատողները և արհեստավորները, ուշխորհրդային և հետխորհրդային փուլերում միջնակարգ և բարձրագույն կրթությամբ միգրանտների թիվն ավելանում է ի հաշիվ արտադրության, գիտության, կրթության, սպասարկման, կառավարման և այլ ոլորտների մասնագետների: Սակայն վերջիններս ընդգրկվում են ցածր որակավորում ունեցող բանվորական աշխատանքներում:

Հեղինակը ուշագրավ դիտարկում է արել նաև երիտասարդների՝ առաջին անգամ աշխատանքային միգրացիայի մեկնողների վերաբերյալ. այն համայնքում և ընտանիքում համարվում է որպես անցումային տարիքից դուրս գալու և «մեծերի աշխարհ» մտնելու ինքնատիպ նախաձեռնություն: Օտար միջավայրում՝ ընտանիքից առանձին երիտասարդների ինքնուրույն կյանք վարելը, փող վաստակելը, աշխատանքային որոշակի դժվարություններ հաղթահարելը, շփումները, նոր մասնագիտական ունակություններ ձեռք բերելը համայնքում ընկալվում են որպես սոցիալական հասունության և ինքնուրույնություն ձեռք բերելու կարևոր որակներ: Իսկ աշխատանքային միգրացիայի միջոցով հարսանեկան արարողությունների, առանձին բնակարան կառուցելու/գնելու համար ինքնուրույն գումարներ վաստակելը ընտանիքը և համայնքն ընկալում են տարիքային հասունացման կարևոր ցուցիչ, այսինքն՝ նրանք արդեն պատրաստ են անցում կատարելու ամուսնացողների խումբ և ընտանիք կազմելու համար հասուն մարդ են:

Հեղինակն առաջին անգամ հետազոտության դաշտ է բերում միգրացիային առնչվող էթնիկական և սոցիալ-մշակութային մի շարք խնդիրներ: Դրանցից են *աշխատանքային միգրանտների խմբերի (քրիզադների) ձևավորման սկզբունքները*՝ ըստ ազգակցական (ընտանեկան-ազգակցական, ընկերային-հարևանային, տարբեր էթնիկ հանրությունների ներկայացուցիչներից բաղկացած) և մասնագիտական ու գործունեության ժամկետների առանձնահատկությունների: Վերհանվում են այդ խմբերի աշխատանքային և փոխօգնության ներքին կանոնները:

Մ. Գալստյանն անդրադարձել է աշխատանքային միգրացիայի գործում կարևոր դեր ունեցած *էթնիկ սոցիալական ցանցին*, որը նախկինում բավարար չափով չի հետազոտվել: Ըստ հեղինակի՝ սոցիալական ցանցերը ձևավորվել են երեք փուլով՝ 1960-1970-ական թթ., մինչև 1990-ականները և դրանից հետո՝ աշխատանքային միգրանտներից, զինվորական ծառայության, կրթության, ամուսնության նպատակներով մեկնածներից, 1988-ի երկրաշարժի հետևանքով Խորհրդային Միության տարբեր հանրապետություններից աղետի գոտի ժամանած մասնագետների հետ կապեր հաստատած միգրանտներից: Ցանցն ուղղորդում է մարդուն մուտքի երկիր ընտրելու, նոր միջավայրում ինտեգրվելու, կեցության, ֆինանսական և այլ հարցերում: Մ. Գալստյանը, քարտեզագրելով Հայաստանից մեկնող խմբերի տեղաշարժերը, դուրս է բերել մի պատկեր, ըստ որի՝ Հայաստանի յուրաքանչյուր բնակավայր ունի իր միգրացիոն ուղղությունները, «որի հետևանքով նրանց մի մասը արտերկրում ձևավորում է «նոր համայնքներ»: Հեղինակը եզրակացնում է, որ այն տեսակետը, թե սոցիալական ցանցերը միայն դրական դեր են կատարում միգրանտների համար, իրականությանն այնքան էլ չի համապատասխանում, քանի որ երբեմն ենթարկվել են աշխատանքային շահագործման, կամ պայմանագրի

բացակայության պայմաններում գործատուները մինչև վերջ չեն վճարել:

Մ. Գալստյանը վերհանել է նաև հայերի և ՀՀ-ի էթնիկ փոքրամասնությունների աշխատանքային միգրանտների շրջանում *եկամուսնների և ծախսերի փնտրման էթնոմշակութային առանձնահատկությունները*: Եթե խորհրդային շրջանում գումարն ավելի շատ ուղղվում էր զավակների կամ հենց միգրանտի համար տուն կառուցելուն, ամուսնական ծախսերին, ապա հետխորհրդայինում այդ ավանդույթը թեև պահպանվել, սակայն փոքր-ինչ ձևափոխվել է՝ տեղը զիջելով նրանց առաջնային կարիքների բավարարմանը: Ծախսերի բաշխման հարցում, կապված որոշ սովորույթների հետ, մի ուշագրավ միտում է ի հայտ եկել. տավուշցիները, որոնք Վարդավառը մեծ շուքով են նշում, առանձին գումար են հատկացնում նաև Վարդավառի ծախսերին:

Հեղինակը առանձին քննարկման առարկա է դարձրել միգրացիայի՝ որպես նոր մշակութային պրակտիկաների տարածման խնդիրը: Ծնորհիվ աշխատանքային միգրացիայի՝ նրանք սեփական կենցաղամշակութային համալիր են ներմուծում նոր մշակութային պրակտիկաներ, որի վրա իրենց ազդեցությունն են թողնում միգրացիայի տևողությունը, միգրանտի տարիքը և կրթական մակարդակը, այլէթնիկ միջավայրում տեղի բնակչության հետ շփման ինտենսիվությունը: Դրանք նպաստում են անդրմշակութային մի նոր տարածքի ձևավորմանը, երբ միգրանտները միաժամանակ կրում են և՛ իրենց ազգային, և՛ ընդունող հասարակության մշակութային արժեքները: Հետազոտությունը ցույց է տվել, որ աշխատանքային միգրացիայի հետևանքով անխուսափելի են դառնում միջէթնիկ ամուսնությունները, որոնք թե՛ հայ, թե՛ էթնիկ փոքրամասնությունների միգրանտների մեծ մասի ընտանիքները բացասաբար են ընկալում՝ կապված մշակութային փոխազդեցության հետևանքով ազգային ավանդույթների և լեզվի լուսանցքայնացման, երեխաների կրկնակի էթնիկ ինքնագիտակցության ձևավորման, ուժացման վտանգի հետ: Էթնիկ ինքնության պահպանմանն ուղղված քայլերից են արտերկրում բնակություն հաստատած միգրանտների՝ հայրենիքի հետ կապի պահպանումը, դրսում մահացածին հայրենիքում հուղարկավորելը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ թաղման կենտոսֆ ծեսի կատարումը, արտերկրում պետական, ազգային և եկեղեցական տոների ու ծեսերի, հիշատակի օրերի նշումը (Վարդավառ, Հայաստանի անկախության օր, Մեծ եղեռնի և 1988-ի երկրաշարժի զոհերի ոգեկոչման օրեր, պսակ, մկրտություն և այլն), որոնց, ի դեպ, մասնակցում են նաև նախկինում հայաստանաբնակ էթնիկ փոքրամասնությունների միգրանտները:

Աշխատանքային միգրացիայի հետևանքով առաջացած թերևս ամենամեծ մարտահրավերներից և առանցքային թեմաներից են ընտանիքի մոդելում կատարվող փոխակերպումները: Մ. Գալստյանը, վերլուծելով այդ խնդիրը, նշում է, որ այն իր բացասական ազդեցությունն է թողնում ընտանիքի կառուցվածքի, բարոյահոգեբանական մթնոլորտի, ներընտանեկան հարաբերությունների, երեխաների դաստիարակության, կրթության, ընտանիքի կայունության վրա: Արձանագրվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են երկրորդ ընտանիքի առկայությունը, ամուսնալուծությունների աճը, լքված ու կիսված ընտանիքները, կանանց և մեծահասակների ներգրավվածության ընդլայնումը տնտեսական աշխատանքներում, հաճախ ընտա-

նիքի համար կարևոր կենսափուլերում (զավակի ծնունդ, նշանադրություն, ամուսնություն և այլն) ընտանիքի գլխավորի բացակայությունը:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ Մ. Գալստյանը եզրակացրել է, որ աշխատանքային միգրացիան անհատական, ընտանեկան, էթնիկական և հասարակական մակարդակներում սոցիալ-մշակութային և էթնիկական գործընթացների վրա ունենում է երկակի ազդեցություն: Որպես դրական արդյունք են դիտարկվում Հայաստան մտնող տրանսֆերները, ընտանիքի ֆինանսական դրության բարելավումը, բարեգործությունը հայրենի բնակավայրում, գործարարության խթանումը, մշակութային հաղորդակցությունը, լեզվի իմացությունը, աշխատանքային և մասնագիտական փորձի հարստացումը, նոր կապերի հաստատումը և այլն: Բացասական հետևանքներից են էթնիկ արժեքների փոփոխությունը, ամուսնալուծությունների աճը, սոցիալ-ժողովրդագրական խնդիրների ավելացումը, գյուղական բնակավայրերում երիտասարդ բնակչության նվազումը և այլն:


Աշխատանքային միգրացիայի սոցիալ-մշակութային գործընթացներին նվիրված գիտահետազոտական սույն աշխատանքը մասնագիտական առաջարկներ, նոր հարցադրումներ, համակողմանիորեն փաստարկված եզրահանգումներ պարունակող համապարփակ աղբյուր է, որը մեծապես օգտակար կլինի ոչ միայն գիտական շրջանակի, այլև միգրացիային, մասնավորաբար աշխատանքային միգրացիային առնչվող գործառույթներ իրականացնող պետական կառույցների համար: Հեղինակը ներկայացրել է նաև վերջիններիս հասցեագրված առաջարկներ՝ աշխատանքային միգրացիայի օրենսդրության մշակում, միգրանտների շրջանում կիրառվող արհեստների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում՝ նրանց ներուժը տեղում իրացնելու նպատակով, որոշ մասնագիտությունների գծով պատվերների իջեցում արհեստագործական ուսումնարաններին ու քոլեջներին և այլն: Եռալեզու ամփոփումը (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հնարավորություն է տալիս աշխատանքում առաջադրված հիմնադրույթները հասանելի դարձնելու ոչ միայն հայ, այլև անգլիալեզու և ռուսալեզու գիտական հանրույթին:

**ՀԱՍՄԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Պատմական գիտությունների թեկնածու

hasmikabrahamyan@yandex.ru

**ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ**, Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2022, 546 էջ:



Լույս է տեսել ԵՊՀ վաստակաշատ մանկավարժ և գիտնական Ակսել Պոտոսյանի «Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն» բուհական դասագիրքը: Այստեղ Հայաստանի Հանրապետությունը ներկայացվում է սոցիալ-տնտեսաաշխարհագրական առանձնահատկությունների և հիմնախնդիրների ողջ ներկայանակով:

Վիճակագրական հարուստ ու թարմ տվյալների, տեսական ու փաստական նյութի վերլուծմամբ և համադրմամբ հեղինակը տվել է ՀՀ տարածքի, սահմանների և աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները: Վեր է հանել բնառեսուրսային և ժողովրդագրական ներուժի

հնարավորությունները: Ցույց է տվել բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և տարաբնակեցման բնորոշ գծերն ու աշխարհագրական առանձնահատկությունները, ներկայացրել է տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի առկա իրավիճակը, մեկնաբանել է արտաքին տնտեսական կապերի սոցիալ-տնտեսաաշխարհագրական առանձնահատկությունները: Հատկորոշել է ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսաաշխարհագրական առանձնահատկությունները և զարգացման հիմնախնդիրները:

Դասագիրքն ունի կուռ, տրամաբանված կառուցվածք, փոխկապակցված թեմաներով նյութի հաջորդական շարադրում՝ հագեցած բազմաթիվ աղյուսակային տվյալներով, դիագրամներով, նկարներով, գծապատկերներով և քարտեզներով:

Աշխատությունն ունի 6 բաժին, մի շարք ենթաբաժիններ, որոնցից յուրաքանչյուրում տրվում են ՀՀ-ին վերաբերող որոշակի սոցիալ-տնտեսաաշխարհագրական հարցերի վերլուծություն և գնահատում՝ դրանով իսկ նպաստելով մեր երկրի տնտեսության արդյունավետ ու ինտենսիվ զարգացմանը, տարածքների համաչափ յուրացման մեխանիզմների ճիշտ կիրառմանը:

Մեծ է այս աշխատության տեսական ու կիրառական նշանակությունը, լայն՝ այն օգտագործել ցանկացողների շրջանակը: Աշխարհագետներից և հարակից մասնագիտություններից բացի, այն կարող է նպաստել ու օգնել նաև կառավարման համակարգի տարբեր ենթակառուցվածքների ոլորտային խնդիրներով զբաղվող մասնագետներին՝ դառնալով ուղեցույց և տեղեկատու:

Աշխատության առաջին բաժնում, անդրադառնալով ՀՀ տարածքի, աշխարհագրական դիրքի, սահմանների, պետական կարգի և վարչատարածքային բա-

ժամանան առանձնահատկություններին, հեղինակը, այսօրվա իրողություններին և ռազմաքաղաքական իրադարձություններին համահունչ, կարևորել է մեր երկրի քաղաքական-աշխարհագրական, տրանսպորտային և տնտեսաաշխարհագրական դիրքերի ներուժայնության հատկանիշները, հարևանային աշխարհագրական դիրքի աննպաստությունը, դեպի ծով անմիջական ելք չունենալը, տնտեսական հզոր կենտրոններից համեմատաբար հեռու գտնվելը, միաժամանակ նաև կարևոր ճանապարհային հանգույց և կապող ուղի լինելու հանգամանքը տարբեր ուժային և տնտեսական կենտրոնների միջև:

Դասագրքի երկրորդ բաժնում քննարկվում են ՀՀ աշխարհագրական միջավայրին և բնատեսության ներուժին վերաբերող հարցեր: Տրվում են մակերևութի բնույթը և տարածքի ռեսուրսային գնահատականը, կլիմայական պայմանների ու ռեսուրսների, ընդերքի, հողային, ջրային, կենսաբանական և ռեկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսների տնտեսաաշխարհագրական վերլուծություն և գնահատական: Առանձնակի կարևորվում են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների, բնօգտագործման և բնապահպանության խնդիրները, կենսաբազմազանությանը վերաբերող հարցերը:

Հատկանշական է աշխատանքի երրորդ բաժինը, որտեղ լուսաբանվում են ՀՀ բնակչությանն ու տարաբնակեցմանը և աշխատանքային ռեսուրսներին առնչվող հարցեր: Մասնավորապես կարևորվում են ՀՀ տարածքի բնակեցման գործոնները և պատմաաշխարհագրական նախադրյալները, տարաբնակեցման ձևավորումը, բնակչության թվի շարժընթացն ու վերարտադրությունը, կազմի, կառուցվածքի և տեղաբաշխման առանձնահատկությունները, քաղաքային և գյուղական տարաբնակեցման յուրահատկությունները, մայրաքաղաքի ուրույն դերակատարությունը:

Դասագրքի չորրորդ և հինգերորդ բաժիններում՝ ավելի քան 300 էջ շարադրանքի սահմաններում, մասնագիտական բարձր մակարդակով քննարկվել են ՀՀ տնտեսության և նրա տարածքային կառուցվածքի խնդիրները: Անդրադառնալով ՀՀ ժամանակակից տնտեսության ընդհանուր բնութագրին, նրա ձևավորման ու զարգացման պատմությանը՝ հեղինակն առանձնացրել է արդյունաբերության այն ճյուղերը, որոնք ավանդաբար առաջնային են մեր տնտեսության ընդհանուր պատկերի մեջ: Դրանք են մետաղաձուլությունը, վառելիքաէներգետիկ տնտեսությունը, մեքենաշինությունը, թեթև և սննդի, քիմիական և շինանյութերի արդյունաբերությունները: Քննարկվում են նաև Հայաստանի արդյունաբերության նորագույն ճյուղերը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի, լազերային տեխնիկայի արտադրության և դրանց հետ փոխկապակցված ուղղությունների զարգացման հեռանկարները:

Համաշխարհային պարենային ճգնաժամի լույսի ներքո կարևորվում է ՀՀ գյուղատնտեսության դերը՝ բուսաբուծության և անասնապահության տեղական պայմանների ու հնարավորությունների լայն կիրառման դաշտն օգտագործելու առումով: Դասագրքում առանձնակի կարևորվել են նաև ՀՀ տրանսպորտային համակարգի տնտեսաաշխարհագրական վերլուծությունը, նրա առանձին տեսակներ

րին և ոլորտում առկա հիմնախնդիրները: Պատշաճ մակարդակով ներկայացվել է նաև ՀՀ տնտեսության ոչ արտադրական ոլորտի և զբոսաշրջային ինդուստրիայի տնտեսաաշխարհագրական բնութագիրը: Վեր են հանվել այդ ոլորտի առանձին ճյուղերի տեղաբաշխման, զարգացման և տարածքային կազմակերպման առանձնահատկություններն ու առկա հիմնախնդիրները: Անդրադարձ է կատարվել ոչ արտադրական ոլորտի այնպիսի կարևոր բաղադրիչներին, ինչպիսիք են կրթությունը, գիտությունը, արվեստը, սպորտը, մշակույթը, առևտուրն ու սպասարկման դաշտը: Կարևորվել է զբոսաշրջային ինդուստրիայի դերը՝ հատկապես նոր ուղղությունների առումով, որը նպաստում է երկրի տնտեսության, նրա առանձին տարածաշրջանների զարգացման գործին:

Դասագրքի բովանդակությունն ավելի հարստացնում և ամբողջական է դարձնում ՀՀ տնտեսության տարածքային կառուցվածքին նվիրված բաժինը: Այստեղ հեղինակը նախ քննարկել է ՀՀ սոցիալ-տնտեսական շրջանցման հարցերը, այնուհետև ՀՀ մարզերի և Երևանի համալիր սոցիալ-տնտեսաաշխարհագրական վերլուծության միջոցով վերհանվել են նաև դրանցում առկա զարգացման հիմնախնդիրները: Այդ ամենն ամբողջական պատկերացում է տալիս մեր երկրի տնտեսական հնարավորությունների, զարգացման հեռանկարների և դրանց միտումների մասին:

Աշխատության ամփոփիչ բաժինը աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման համակարգում Հայաստանի դերակատարության մասին է: Այս բաժնում նշվում են միջազգային ասպարեզում մեր երկրի տնտեսության առաջնային և գերակա ուղղությունները, ուրվագծվում այն հեռանկարային ոլորտները, որոնք կապահովեն մեծ առաջընթաց:

Թեև դասագիրքն ունի ուսումնական բնույթ, սակայն աչքի է ընկնում նաև գիտականության բարձր մակարդակով: Աշխատանքում օգտագործվել են հեղինակի վերջին շուրջ քսան տարիների գիտահետազոտական աշխատանքների արդյունքները, որոնք իրենց արտացոլումն են ստացել նրա մենագրություններում, մի քանի տասնյակ գիտական հոդվածներում և թեմատիկ քարտեզներում:

Ամփոփելով նյութը՝ կարող ենք եզրակացնել, որ Ա. Պոտոսյանի այս ծավալուն՝ 545-էջանոց աշխատանքն իր 50 անուն օգտագործած աղբյուրներով և վիճակագրական հարուստ տվյալներով գալիս է ամբողջական ու թարմ պատկերացում տալու Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսաաշխարհագրական իրավիճակի մասին, որն այսօր խիստ կարևոր է, օգտակար ու արդիական:

## ԿԱՄՈ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Աշխարհագրական գիտությունների թեկնածու

**ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ. ԱՆԽՈՆՋ ԲԱՆԱՀԱՎԱՔ-ԲԱՆԱԳԵՏԸ  
(ծննդյան 90-ամյակի առթիվ)**



ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտության բաժնի առաջատար գիտաշխատող, անվանի բանահավաք և բանագետ, բ.գ.դ., պրոֆեսոր Վերժինե Գառնիկի Սվազլյանը 2024 թ. մարտի 1-ին բոլորեց իր 90-ամյա հոբելյանը: Վ. Սվազլյանը հեղինակ է 500-ից ավելի գիտական և հրապարակախոսական հոդվածների, շուրջ 30 գրքերի, որոնք տարբեր լեզուներով լույս են տեսել Հայաստանում և արտերկրում: Գիտությանն իր անմնացորդ նվիրման և անխոնջ աշխատանքի համար

Վ. Սվազլյանը 2016 թ. ստացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում: Բազմավաստակ գիտնականն արժանացել է հայրենի և արտերկրի ավելի քան երեք տասնյակ պարգևների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ուսումնասիրության գործում նշանակալից ավանդ ներդրելու համար ՀՀ նախագահի Առաջին մրցանակի և «Ոսկե հուշամեդալի» (2006), «Մովսես Խորենացի» մեդալի (2013) և այլն:

Հայրենիքում և Սփյուռքում Վերժինե Սվազլյանը հատկապես հայտնի է Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների բանավոր վկայությունները գրառելու և հրատարակելու իր անդուլ գործունեությամբ: Հայոց ցեղասպանության վերաբերյալ նրա աշխատությունները թարգմանվել ու հրատարակվել են ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում՝ անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, թուրքերեն, իսպաներեն, հինդի, չեխերեն և այլ լեզուներով: Որպես բանագետ՝ նա հետազոտական նոր աստիճանի է բարձրացրել հուշապատում ժանրի գիտական ուսումնասիրությունը՝ դառնալով վիպական բանահյուսության այս տեսակը խորությամբ հետազոտած բարձրակարգ մասնագետ:

**Վերժինե Սվազլյանը** ծնվել է 1934 թ. մարտի 1-ին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: Հայրը՝ գրող և հասարակական գործիչ Գառնիկ Սվազլյանը, մեծապես նպաստել է դստեր հոգեգիտակցական աշխարհի ձևավորմանը: 1947 թ. Վ. Սվազլյանը 13 տարեկան էր, երբ ընտանիքով ներգաղթել են ՀԽՍՀ: Տակավին դպրոցական տարիներից Վ. Սվազլյանի նպատակն է եղել իրականացնել իր արժանահիշատակ հոր պատգամը. «...Պատիվ բերես քո ծնողքին և քո ազգին, Հայրենիքին»:

1952 թ. ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական բաժին, որը գերազանցությամբ ավարտել է 1956 թ.: Այնուհետև որոշ ժամանակ՝ 1956-1958 թթ. հայոց լեզու և հայ գրականություն է դասավանդել Երևանի հ. 52 միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում: Մանկավարժական գործունեության հետ միաժամանակ նա «Սովետական Հայաստան» ամսագրի և այլ պարբերականների էջերում, ինչպես և ռադիոյով, հետագայում նաև՝ հեռուստատեսությամբ, ներկայացրել է հայրենիքում հանգրվանած հայրենադարձների կյանքն ու կենցաղը, նրանց աշխատանքային, կրթական ու մասնագիտական հաջողությունները:

Այդուհանդերձ, նորավարտ Վերժինեին գրավում էր հետազոտական աշխատանքը: 1958 թ. նա սկսել է աշխատել ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության բաժնում՝ որպես լաբորանտ: Միաժամանակ, 1958-1961 թթ. ուսումը շարունակել է ԳԱ ասպիրանտուրայում՝ «Հայ ժողովրդական բանահյուսություն» մասնագիտությամբ: Ասպիրանտական ուսումնառության ընթացքում Վ. Սվազյանը եղել է Մ. Աբեղյանի անվան թոշակառու:

Անվանի արևելագետ-բանագետ, ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը, ծանոթանալով երիտասարդ բանահավաքի նորահայտ բանահյուսական նյութերին՝ գրանցված Մուսա-լեռան խրթին բարբառով և տառադարձված բարբառագիտական ճշգրտությամբ, մեծապես գնահատեց սկսնակ հետազոտողի պրպտուն և բարեխիղճ աշխատանքը և ստանձնեց նրա գիտական ղեկավարությունը՝ առաջարկելով ուսումնասիրել XIX դարի երախտաշատ բանահավաք, ազգագրագետ **Սարգիս Հայկունու կյանքն ու գործը**: Վ. Սվազյանը սիրով ուսումնասիրել է Հայկունու անմշակ արխիվային նյութերը և 1965 թ. հաջողությամբ պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը: Այդ գիտական ուսումնասիրությունը լույս է տեսել Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակած «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 4-րդ հատորում (1973 թ.):

1959 թ. ՀՀ ԳԱԱ կազմում հիմնադրվել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, իսկ 1960 թ. Գրականության ինստիտուտից այդտեղ է տեղափոխվել հայ ժողովրդական բանահյուսության բաժինը: Այս նորակազմ բաժնում Վ. Սվազյանն աշխատել է ավելի քան 10 տարի՝ որպես կրտսեր գիտաշխատող, ապա 1972 թվականից փոխադրվել է նորաստեղծ բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժին (ղեկավար՝ Ս.Բ. Հարությունյան)՝ որպես ավագ գիտաշխատող: 1995 թվականից առ այսօր Վ. Սվազյանն աշխատում է անվանափոխված բանահյուսության տեսության և պատմության բաժնում (2024 թվականից՝ բանագիտության բաժին)՝ որպես առաջատար գիտաշխատող: Երբ Հայաստանի անկախացումից հետո հիմնադրվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, Վ. Սվազյանը հրավիրվել և որոշ ժամանակ (1996-2004 թթ.) համատեղությամբ աշխատել է նաև այդտեղ՝ միաժամանակ ընդգրկված լինելով ՀՅԹԻ գիտական խորհրդում:

Վ. Սվազյանը 1965 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1995 թ.՝ դոկտորական թեզերը, 1996-2018 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության, ինչպես նաև Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտներում գործող մասնագիտական խորհուրդների անդամ: Մասնակցել է հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովների, ինչպես նաև զեկուցել սփյուռքահայ տարբեր կազմակերպություններում (ՌԴ, Հունաստան, Ֆրանսիա, Ավստրիա, Գերմանիա, ԱՄՆ, Կանադա, Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Թուրքիա)՝ ներկայացնելով բանագիտությանը, ժողովրդագիտությանը, ցեղասպանագիտությանը և հայոց պատմական հիշողությանն առնչվող թեմաներ:

Սկսած 1955 թվականից՝ Վերժինե Սվազյանն ավելի քան 65 տարիների ընթացքում անձնական նախաձեռնությամբ, ինքնամոռաց նվիրումով, ուղքով անցել է թաղից թաղ, գյուղից գյուղ և ձայնագրել, տեսագրել, վերականգնել, ուսումնասիրել ու հրատարակել Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Փոքր Ասիայի հայության բանավոր մշակույթը՝ բանավոր պատմություններ, ավանդազրույցներ, ժողովրդական երգեր և այլ բանահյուսական նշխարներ: Վ. Սվազյանի բանասացները եղել են իրենց բնօրրանի ավելի քան 150 տեղավայրերից բռնի տեղահանված, ապա Հայաստանում և Սփյուռքում բնակություն հաստատած՝ Հայոց ցեղասպանության ականատես վերապրողներն ու նրանց ժառանգները, որոնք հաղորդել են նաև փաստավավերագրական մեծ արժեք ներկայացնող հուշ-վկայություններ, զրույց-վկայություններ և երգ-վկայություններ: Այդ աշխատանքի ընթացքում Վ. Սվազյանն աչքաթող չի արել նաև թուրքախոս հայերի բանավոր մշակույթը:

Վ. Սվազյանի պատմագիտական գրառումներից ցեղասպանագիտության ասպարեզում փաստագրական բացառիկ արժեք են ներկայացնում դերզորյան թուրքալեզու երգերը, որոնք հեղինակը դժվարությամբ հայտնաբերել, գրառել, թարգմանել և ուսումնասիրել է իր **«Մեծ եղեռնը արևմտահայոց հուշապատմություններում և թուրքալեզու երգերում»** (Եր. 1997, 1999, հայերեն, ռուսերեն, անգլերեն, իսկ թուրքերենը՝ Ստամբուլ 2005): Բացի այդ, հրատարակել է **«Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը»** (հայ.՝ Եր. 2003, անգլ.՝ Եր. 2004, 2005, ֆրանս., գերմ., ռուս., թուրք.՝ Ստամբուլ 2005) մենագրական աշխատությունը: Վ. Սվազյանը նաև Հայաստանին ու հայ բանահյուսությանը նվիրված ծավալուն հոդվածներ է հեղինակել արտերկրի մի շարք հանրագիտարանների համար:

Արժանահիշատակ են Վերժինե Սվազյանի **«Մուսա Լեռ»** (Եր. 1984), **«Կիլիկիա. արևմտահայոց բանավոր ավանդությունը»** (Եր. 1994), **«Մեծ եղեռն. արևմտահայոց բանավոր վկայություններ»** (Եր. 1995), **«Պոլսահայոց բանահիսույթները»** (Եր. 2000), **«Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ»** (Եր. 2000, նաև՝ երկրորդ համալրված հրատարակությունը՝ Եր. 2011, հայ. և անգլ., թուրք.՝ Ստամբուլ 2013), **«Մուսա Լեռնա հերոսամարտը. ականատես վերապրողների վկայություններ»** (հայ., անգլ., Եր. 2015), **«Ռուսաստանի հայերի բանավոր ավանդույթի նշխարներ (Դոնի**

**Ռոստով և Պյատիգորսկ)»,** հայ., ռուս., անգլ.՝ Եր. 2020), **«Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հոլովույթում»** (հայ., անգլ.՝ Եր. 2021) հատորները, որոնք պարունակում են ժողովրդական պատմական վկայություններ, բանահյուսական, ազգագրական նյութեր և գիտական ուսումնասիրություններ:

Վ. Սվազյանի **«Պոլսահայոց բանահիստիօնը»** աշխատության մասին Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի (INALCO) հայագիտության պատասխանատու, դոկտոր **Անահիտ Տոնապետյանը** նշել է. *«Արմավրներով արևմտահայ հեղինակն իր այս աշխատասիրությունը հատուկ նպատակով ներկայացրել է արևմտահայերենով և դասական ուղղագրությամբ, ինչն անչափ կարևոր է Սփյուռքի գաղթօջախների համար և՛ որպես դասագիրք, և՛ որպես ընթերցանության նյութ»*<sup>1</sup>: Սույն աշխատության համար Վ. Սվազյանը սփյուռքում արժանացել է մի շարք պարգևների<sup>2</sup>: **«Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ»** աշխատության համար նույնպես Վ. Սվազյանն արժանացել է բազմաթիվ պարգևների<sup>3</sup>:

Մասնակցելով միջազգային գիտաժողովների՝ Վ. Սվազյանը շարունակել է գրի առնել նաև արտերկրում բնակվող (Հունաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա, Ավստրիա, Հոլանդիա, Կանադա, ԱՄՆ, Եգիպտոս, Լիբանան, Սիրիա-Դեյր-էզ-Զոր, Թուրքիա) ականատես վերապրողների հուշերը՝ ամենուրեք որոնել-գտնելով արդեն իսկ անհետացող այդ վկաներին, գրի առնելով ու կորստից փրկելով նրանց տեսածն ու զգացածը, նրանց հոգևոր ու մշակութային ժառանգությունը:

Նեղ մասնագիտական շրջանակից դուրս քչերը գիտեն, որ Վ. Սվազյանը զբաղվել է նաև բանահյուսական այլ ժանրերի ուսումնասիրությամբ: Բանագետ Արտաշես Նազինյանի հետ նա աշխատել է ակադեմիկոս Հովսեփ Օրբելու գլխավոր խմբագրությամբ հրատարակվող **«Հայ ժողովրդական հեքիաթներ»** գիտական բազմահատորյակի մի քանի հատորների վրա, որոնք այդ ժամանակ արդեն լույս էին տեսնում բանագետ Արտաշես Նազինյանի գլխավոր խմբագրությամբ: Մասնավորապես, Ա. Նազինյանը և Վ. Սվազյանը կազմել են 6-րդ հատորը, իսկ այնուհետև՝ Վ. Սվազյանը միայնակ՝ 12-րդ և 15-րդ հատորները. սրանցից առաջինը նվիրված է **Արցախ-Ուտիքի** (Եր., 1973), երկրորդը՝ **Տարոն-Տուրուբերանի** (Եր., 1984), իսկ վերջինը՝ **Վան-Վասպուրականի** (Եր., 1998) հեքիաթներին: Հատորների կազմման աշխատանքը ներառում էր ոչ միայն արխիվներում սփռված բնագրերի հավաքումն ու վերծանումը, այլև ծանոթագրու-

<sup>1</sup> Տոնապետյան Անահիտ, Վերժինե Սվազյան. Պոլսահայոց բանահիստիօնը, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երևան, 2000, 592 էջ, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2001, N 3 (158), էջ 290-291:

<sup>2</sup> Փարիզի «Արարատ» հայագիտական ակադեմիան նրան շնորհել է «Պրոֆեսորի» կոչում (2004), Մոնրեալում Պոլսահայ մշակութային միությունը՝ «Ոսկե հուշամեդալ» (2005), Սիրիայում ՀԲԸՄ Հալեպի մասնաճյուղը՝ «Մեսրոպ Մաշտոց» մեդալ (2005), իսկ Ալեքսանդրիայի Հայոց քաղաքական ժողովը՝ «Նեղոսի բանայի» Ոսկե հուշամեդալ (2006):

<sup>3</sup> ՀՀ ԳԱԱ նախագահության «Պատվոգիր» (2000), Սփյուռքի Թեքեյան մշակութային միության «Հայկաչէն Ուզունեան» գիտական-բանասիրական մրցանակ (2002), ինչպես նաև՝ ՀՀ ԳԱԱ նախագահության և «Ճշմարիտները հայերի համար» միջազգային կոմիտեի «Ֆրիլոյդ Նանսեն» հուշամեդալ (2003):

թյուններ, բարբառային բառամթերքի բառարան ու անվանացանկեր կազմելու աշխատատար տեխնիկական գործընթացը, ինչպես և հատորների նախաբանների շարադրումը:

Բանագետ Վերժինե Սվազյանի աշխատանքների մասին Հայաստանում և արտերկրում լույս են տեսել բազմաթիվ գրախոսականներ, հանրագիտարանային և այլ հոդվածներ, ինչպես նաև նկարահանվել է ֆիլմ՝ **«Սվազյան գերդաստանի հավատամքը»** խորագրով (ռեժիսոր՝ Լաուրա Մինասյան, 2009): Այն նվիրված է XX դարի ընթացքում Սվազյան գերդաստանի երեք սերունդների ազգանպաստ և հայրենանպաստ գործունեությանը՝ ներառելով հայ ժողովրդի համար բախտորոշ հարյուրամյա մի ժամանակաշրջան:

Գիտական գործունեությանը զուգահեռ՝ Վ. Սվազյանն աչքի է ընկել նաև հանրային դաշտում: 1960 թվականից արտահաստիքային ռեֆերենտի պարտականությամբ նա ընդգրկվել է Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության (ԱՕԿՍ) աշխատանքների մեջ: 1964-1991 թթ. Վ. Սվազյանը մասնակցել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի աշխատանքներին՝ ընտրվելով Հայաստանի և Սփյուռքի համահայկական կանանց խորհրդի անդամ: 1987 թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակիցները նրան ընտրել են հիմնարկի Կինխորհրդի նախագահ: Վ. Սվազյանը բարեխղճորեն ու նվիրվածությամբ կատարել է իր վրա դրված պարտականությունները: Բարեգործական ավանդույթներ ունեցող ընտանիքում ծնված ու մեծացած հայրենադարձ գիտնականի ուշադրությունից չէն վրիպել նաև Երևան քաղաքում օգնության և հոգատարության կարոտ մանկատներն ու ծերանոցները. Նոր Տարվա նախօրեին Կինխորհրդի անդամները ինստիտուտի աշխատակիցներից հանգանակած գումարներով գնել են սնունդ ու Ամանորի նվերներ և, այցելելով, բաշխել դրանք: 1988 թ. ավերիչ երկրաշարժի օրերին ինստիտուտի հասցեով Գերմանիայի Համբուրգ քաղաքի դպրոցներից ուղարկված օգնությունը, նաև ինստիտուտի գիտաշխատողներից հավաքված գումարն ու աշխատակցուհիների պատրաստած թխվածքները, խմբով տարել հասցրել են Երևանի հիվանդանոցներում բուժվող մեծ ու փոքր աղետյալներին:

Իր կոչմանն ու անձնուրաց աշխատանքին Վ. Սվազյանը միշտ վերաբերվել է մեծ պատասխանատվությամբ և բժախնդրությամբ, մշտապես մեծ հարգանք է տածել ինչպես իր ուսուցիչների, այնպես էլ տարեկից և երիտասարդ գործընկերների հանդեպ: Բնականաբար, փոխադարձորեն ստացել է նույն ակնածանքն ու սերը թե՛ գիտական համայնքում և թե՛ իր աշխատանքներով հետաքրքրված ընթերցասերների լայն շրջանակներում: Վ. Սվազյանի աշխատասիրությունն ու նպատակասլացությունը վառ օրինակ են երիտասարդ գիտաշխատողների համար:

Ջերմագին շնորհավորում ենք մեր վաստակաշատ բանագետ-բանահավաք Վերժինե Սվազյանին իր ծննդյան 90-ամյա հոբեյանի առթիվ՝ մաղթելով արևշատություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

**ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ**

torqdal@yahoo.com

**Հ.Գ.** *Ճշմարիտ հայուհի և իր երկրի նվիրյալ քաղաքացի Վերժինե Սվազյանը «Լրաբերի» վաղեմի բարեկամն ու գերապատիվ հեղինակն է: Վ. Սվազյանի մարդկային հմայքը, մտքի եռանդը, կյանքի ու ժամանակների հանդեպ չհատնող հեփաբքությունը փարիների հորձանույրում չնվազեցին և մինչ օրս ուղղորդում են նրան:*

Գիտնականի ապրած կյանքը արտացոլումն է նրա սկզբունքայնության, մարդկային իդեալներին հավատարմության և Բարուն ու Արդարությանը ծառայելու ինքնաբուխ միտումի:

«Լրաբերի» անձնակազմը ջերմորեն շնորհավորում է վաստակաշատ բանագետին՝ արժանավոր հոբեյանի առթիվ:

**ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» խմբագրություն**

## ԴԵՐԵՆԻԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ (ծննդյան 100-ամյակի առթիվ)



Հայ ազգագրության երախտավոր, հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի հիմնադիր Դերենիկ Սուրենի Վարդումյանը ծնվել է 1923 թ. Լոռու մարզի Վահագնի գյուղում: Իր սերնդակիցների նման ունեցել է դժվար մանկություն, իսկ հոր բռնադատվելուց հետո մոր և քույրերի հետ ստիպված է եղել հաղթահարել անասելի դժվարություններ:

Դպրոցը գերազանցությամբ ավարտելուց հետո Դ. Վարդումյանը 1940 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը: «Ազգագրություն» մասնագիտությամբ ասպիրանտական ուսումնառությունն անցկացրել է Երևանում և Մոսկվայում 1946-1949 թթ. (գիտ. ղեկավարներ՝ Ստ. Լիսիցյան, Մ. Կոսվեն):

1949 թ. աշխատանքի է ընդունվել պատմության թանգարանում, որը հետպատերազմյան տարիների խիստ սուղ պայմաններում, երբ մասնագետներ ու միջոցներ չկային, ազգագրական բնույթի աշխատանքով զբաղվող միակ հաստատությունն էր: 1953 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում ստեղծվեց ազգագրության խումբ, որի անդամներն էին Է. Կարապետյանը, Ամինե Ավդալը, Դ. Վարդումյանը և Վ. Թեմուրճյանը:

Դ. Վարդումյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը հայոց տնտեսական զբաղմունքներն ու նյութական մշակույթն էին, տնտեսամշակութային տիպերն ու պատմաազգագրական մարզերը, հայ ազգագրության (ազգաբանության) պատմության ու տեսության հարցերը: Թեկնածուական ատենախոսությունը, որը նա պաշտպանեց 1953 թ., վերաբերում էր կոլեկտիվ տնտեսավարման խորհրդային նոր եղանակներին և դրանց հետևանքով հայոց ավանդական կենցաղում տեղի ունեցած փոփոխություններին, որի հիման վրա էլ հետագայում հրատարակվեց «Լոռեցիների նոր կենցաղը» մենագրությունը:

1959 թ., երբ ԳԱ համակարգում հիմնվեց Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, Դ. Վարդումյանը դարձավ ազգագրության բաժնի վարիչ՝ պաշտոնավարելով մինչև կյանքի վերջը:

Հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի բազմաթիվ ոլորտներ այդ տարիներին ազգագրորեն ուսումնասիրված չէին, և ազգագրության բաժնի հիմնական խնդիրն էր աստիճանաբար անդրադառնալ դրանց հետազոտությանը:

Հայոց տնտեսական ամենակարևոր զբաղմունքի՝ երկրագործության ուսումնասիրությամբ զբաղվում էր Վ. Բոդյանը, անասնապահական մշակույթով՝

Վ. Թեմուրճյանը, համայնքի, ընտանիքի և հասարակական հարաբերությունների հարցերով՝ Է. Կարապետյանը, եզրի քրդերի նյութական և հոգևոր մշակույթով՝ Ամինե Ավդալը: Բաժինը համալրած նոր աշխատակիցները՝ Ա. Օդաբաշյանը և Կ. Մելիք-Փաշայանը, զբաղվում էին հոգևոր մշակույթի հարցերով: Հետագայում բաժնի նոր աշխատակիցների թեմաներն էին՝ ժողովրդական փոխադրամիջոցներն ու հաղորդակցության միջոցները (Լ. Պետրոսյան), քաղաքային բանվորական մշակույթը (Կ. Սեդրոսյան), ազգային փոքրամասնությունները (Մ. Դարվեշյան և Ի. Դոլժենկո), ժողովրդական բժշկություն, տարագ, արհեստներ, մեղվաբուծություն և այլն: Հիշյալ թեմաների ընտրությունը կատարվում էր Դ. Վարդումյանի խորհրդով: Նա ղեկավարել է շուրջ 30 ատենախոսական աշխատանքներ, որոնցից 18-ի հեղինակներն ստացել են գիտական աստիճան:

Դ. Վարդումյանը Հայաստանում ազգագրական գիտության զարգացման համար կարևորում էր կադրերի պատրաստումը, մինչդեռ բուհերում այդ ժամանակ ազգագրության գծով մասնագիտացում չկար: Նրա գործուն մասնակցությամբ 1989 թ. Յու. Մկրտումյանի ջանքերով Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում հիմնադրվեց հնագիտության և ազգագրության ամբիոնը, որը դարձավ ազգագրագետներ պատրաստելու հիմնական դարբնոցը:

Դ. Վարդումյանը մեծ ավանդ ունի Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Թբիլիսիի և այլ քաղաքների առաջատար ինստիտուտների հետ մասնագիտական կապերի ստեղծման, ինչպես նաև ասպիրանտուրայի նպատակային տեղերի հատկացման խնդրում, դասախոսել է և՛ ԵՊՀ-ում, և՛ այլ բուհերում: Ավելի քան քառասուն տարի նա Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի պատմության պետական թանգարանի գիտական խորհուրդների, ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհրդի անդամ էր: Նա մեծ ավանդ ունի նաև Հայաստանի ազգագրության պետական թանգարանի ստեղծման գործում:

Դ. Վարդումյանը ազգագրագետ դառնալու կարևորագույն երաշխիք էր համարում դաշտային աշխատանքը, մարդկանց հետ շփումը, զրույցի մշակույթը, նյութի զգացողությունը և շատ այլ նրբություններ: Դաշտում նա առաջին հերթին գիտարշավի անդամ էր, ապա՝ հմուտ ղեկավար և կազմակերպիչ, բայց ամենամեծ առաքելությունը իր աշակերտներին ու աշխատակիցներին ուսուցանելն էր: Նրա համար կարևոր էին դաշտային նյութերի հավաքումը, որի հիման վրա պետք է կատարվեր ժողովրդական մշակույթի բոլոր բնագավառների՝ տնտեսական զբաղմունքների, նյութական ու հոգևոր մշակույթի, սոցիալական կյանքի գիտական հետազոտությունը: Դեռևս 1956 թ. նա անհրաժեշտություն էր համարում ամեն տարի մեկ ամսով գիտարշավի մեկնել վարչական մեկ շրջան՝ դաշտային ազգագրական նյութեր հավաքելու համար: Ըստ այդմ էլ, սկսած 1960 թ., ձևավորվեցին ազգագրական և բանագիտական միացյալ արշավախմբեր:

Գիտարշավներով բազմիցս լինելով Հայաստանի գյուղերում ու քաղաքներում, Խորհրդային Միության հայաբնակ վայրերում, Դ. Վարդումյանը կարո-

ղանում էր մարդկանց համոզել, որ իրենց մոտ գտնվող ազգային արժեքները պետք է պահվեն թանգարանում: Նրա դաշտային աշխատանքի շնորհիվ Հայաստանի պատմության, Հայաստանի ազգագրության, Երևանի պատմության, Ժողատեղծագործության պետական թանգարանները հարստանում էին նոր հավաքածուներով:

Դ. Վարդումյանի գործունեության մեծագույն ձեռքբերումներից էր ազգագրության բաժնի արխիվի ստեղծումը: 1960-ական թվականներին ինստիտուտում մշակվել էր ազգագրական և բանահյուսական նյութեր ձեռք բերելու հատուկ մեխանիզմ, որի պատասխանատուներն էին Դ. Վարդումյանը և Ա. Նազինյանը: Տևական աշխատանքի շնորհիվ ազգագրության արխիվն ունեցավ շուրջ 150 միավոր արժեքավոր նյութեր, որոնց զգալի մասը վերաբերում է Արևմտյան Հայաստանին և Պարսկահայքին: Դ. Վարդումյանը մեծ ջանքեր գործադրեց դրանք հրատարակելու համար, սակայն նյութական միջոցների սղության և այլ պատճառներով այն չիրականացավ: Այդ նյութերից մինչև օրս հրատարակվել է ընդամենը մեկ աշխատանք՝ Հ. Հովսեփյանի «Ղարադաղի հայերը» (2009 թ.):

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում 2023 թ. նոյեմբերի 24-ին տեղի ունեցավ «Բնակավայր և տնտեսական մշակույթ» խորագրով գիտաժողով, որը նվիրված էր վաստակաշատ գիտնական Դերենիկ Վարդումյանի ծննդյան 100-ամյակին:

Գիտաժողովին մասնակցեցին Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Պատմության ինստիտուտի, Հայոց ազգագրության թանգարանի, Երևանի պետական համալսարանի, Երևանի պետական ճարտարապետության և շինարարության համալսարանի, Շիրակի հայագիտական կենտրոնի հետազոտողները:

Գիտաժողովում բացման խոսք ասաց Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանը: Զեկուցումները վերաբերում էին ազգագրության բաժնի ստեղծման պատմությանը, անցած ուղուն և գիտական ձեռքբերումներին, հայոց մշակույթում տեղի ունեցող փոփոխություններին ու զարգացումներին և դրանց արդի դրսևորումներին, որոնք առնչվում էին ոչ միայն ազգագրությանը, այլև բանագիտությանը, հնագիտությանն ու ժողովրդական ճարտարապետությանը:

Դերենիկ Վարդումյանի գիտական գործունեության մասին զեկուցումներ կարդացին ազգագրության բաժնի վարիչ Սուրեն Հոբոսյանը և Դերենիկ Վարդումյանի դուստր, պատմաբան և ազգագրագետ Գոհար Վարդումյանը:

Հայոց ավանդական տնտեսաձևերի և դրանց արդի դրսևորումների ու փոխակերպումների մասին զեկուցումներ կարդացին Հասմիկ Հարությունյանը («Պանիրը հայոց կաթնատնտեսության մշակույթում»), Կարինե Բազեյանը («Նոր քաղաքային մշակույթի ձևավորումը Լենինականում 1920-1940-ական թվականներին»), Աղասի Թադևոսյանը («Գեղարվեստական դարբնությունը Գյումրի քաղաքում. ուշխորհրդային և հետխորհրդային շրջան»), Անժելա Ամիր-

խանյանը («Մասրենին հայոց մշակույթում»), Ռաֆիկ Գաբրիելյանը՝ («Ամբերդաձորի ջրանցքը»), Անի Սարատիկյանը՝ («Ոռոգման համակարգը Տավուշի մարզի սահմանային գյուղերում») և Ասպրամ Ազարյանը՝ («Եղանակի կանխատեսման ժողովրդական հնարները Լոռիում»):

Կանանց հասարակական գործունեության մասին զեկուցեց Սվետլանա Պողոսյանը՝ («Կնոջ դերը տնտեսական կենցաղում. ավանդական և արդի դրսևորումներ ու ընկալումներ»): Արտակ Դաբադյանի զեկուցումը («Մի կռահում ազգայնականության և մտավորականության մոտ ապագայի մասին») վերաբերում էր ազգայնականությանն ու էթնիկությանն առնչվող տեսություններին ու մտավորականության խնդիրներին:

Ամինա Կանեցյանն անդրադարձավ Հայաստանի հնձանների ճարտարապետական առանձնահատկություններին («Հնձանը որպես ճարտարապետական կառույց հին և միջնադարյան Հայաստանում»), իսկ Արմինե Գաբրիելյանը՝ Արցախի Տիգրանակերտի հնագիտական պեղումներին («Արցախի Տիգրանակերտի անտիկ շրջանի խեցեղենը»):

Հակոբ Չոլաքյանի զեկուցումը («Պիտակում») վերաբերում էր Քեսապի գյուղական միջավայրին բնորոշ պիտակումներին, իսկ Հասմիկ Գալստյանն անդրադարձավ Շիրակի Վահրամաբերդ և Մարմաշեն գյուղերի բնակիչների փոխադարձ զավեշտալի բնութագրումներին («Միջհամայնքային հակամարտությունների պատճառներն ու դրանց հետ կապված զավեշտալի որակումները»):

Արմեն Սարգսյանի զեկուցումը («Հայկական ստապատումների և սուտասելուկների ազգային առանձնահատկությունները և կապը բանահյուսության մյուս տեսակների հետ») վերաբերում էր երգիծական բանահյուսությանը:

Դերենիկ Վարդումյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը կիրատարակվեն «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ» մատենաշարով:

**ԱՆԺԵԼԱ ԱՄԻՐԻԱՆՅԱՆ**  
anjela.nersisyan.1969@mail.ru

## SERGEY GORODETSKY: UNFAILING DEVOTION TO ARMENIA



Among the representatives of Russian social-political, military, literary - cultural figures having displayed active work in Western Armenia and Transcaucasia during World War I and the following years, prominent poet, writer, publicist, translator and public figure Sergey M. Gorodetsky (1884-1967) deserves particular attention.

At the beginning of April 1916 the Russian poet was sent to Caucasian front as a figure of All - Russian Union of cities and a correspondent to "Russkoye Slovo". On April 10-12 in the Tiflis department of the Union of cities he was appointed to work in Van. Just at that time Gorodetsky happened to get acquainted with famous Armenian poet Hovhannes Toumanyan. Acquaintance and growing intimacy with him predetermined the direction of his activities in Western Armenia. On April 20 Gorodetsky went to Van as a representative of the Union of cities from Atrpatakan region and displayed vigorous activities rescuing orphans. After the Russian army's July retreat he was in Igdir, Bayazet, Tiflis and Yerevan. On the 22nd of September he again went to Van and till November of the same year took the place of the representative of the Union of cities there. The poet organized food - supply to population, medical assistance of refugees, saved from death and starvation hundreds of children, opened refuges.

Western Armenia – a "land of artistic life", fascinating by its nature, ancient material and spiritual values, spirituality of internal world of Armenians, won the poet just from the first days. Under direct impression of tragic reality, of what he had seen and gone through Gorodetsky wrote a large number of poems (headed "Songs of Paradise" and under the epigraph "Paradise in the Heaven and Van on the Earth"), articles and essays (under the general title "In the Country of Streams and Volcanos"), that were published in "Armyanskiy Vestnik", "Russkoye Slovo" and "Kavkazskoye Slovo". At the same time he was learning the Armenian language. The poet also painted a number of pictures, impressed by wonderful nature, architectural monuments of Western Armenia.

At the beginning of November Gorodetsky hurt his foot, and in connection with Russian army's retreat he left for Tiflis, and later, for the treatment of the foot – to Petersburg. In February 1917 he was again in Tiflis, from there he went to Iran, to the Army in the Field. These days, for the last third time he was in Van, that had become a kind of a sacred place for him. Events in Western Armenia gave birth to reappraisal of values in Russian poet's world outlook. Years later S. Gorodetsky

noted that he considered his activities in Van one of the most important stages in his life.

From the spring of 1917 S. Gorodetsky lived in Tiflis, where he worked at the Conservatoire, giving lectures in aesthetics, at the same time headed the department of literature and art in the newspaper "Kavkazskoye Slovo", worked at "Theatrical Commission" by the executive committee of workers and soldiers. In Tiflis the poet displayed great activities and assisted cultural - enlightening development of the region, international education and rapprochement of the peoples of Russia. It must be particularly stressed that in 1918, besides numerous lectures and articles he organized exhibitions "Children's Art", "Van - Erzurum - Trebizond", published anthology "Eaglet of Paradise", edited journal "Ars". With Gorodetsky's direct participation journals "Nart", "Orion", "Raduga", newspaper "Noviy Den" were published in 1919.

These years S. Gorodetsky's activities were connected with created and headed by him "Artel of Poets". The Artel was one of the branches of "Artisterium" union, created at the end of March 1918 by the journal "Ars". Constituent meeting of Artel took place on April 12, 1918. The participants gathered every Wednesday, read their works, listened to interesting lectures on various literary subjects. Readings and discussions of A. Blok's works, especially of the poem "Twelve", and the meeting dedicated to Hovh. Toumanyan were especially interesting. On "Wednesdays" there were always a lot of people there: besides the participants there were also guests - professor of the Conservatoire F. Gartman, musician N. Cherepnin, Georgian poets T. Tabidze, P. Yashvili, V. Gaprindashvili, the Tiflis futurists headed by A. Kruchyonikh. There is interesting information about Hovh. Toumanyan's participation in these meetings. At the end of April 1919 by S. Gorodetsky's efforts the first collection of poems of the members of Artel under the name of "Akme" was published. The book included works of 22 poets. Overwhelming majority of poems included in the collection was distinguished by humanism, aspiration for kindness and beauty, mutual understanding and friendship between people: S. Gorodetsky's and Al. Kulebyakin's works, directed against war and violence, were singled out.

At the beginning of March 1918 poet's poems written by him in Western Armenia were published by a separate book - "Angel of Armenia", including also new works. At the same time in the Tiflis press he wrote a lot of artistic - critical articles about fine arts, in particular, dedicated to exhibitions of the Union of Armenian painters (1917 and 1919).

Living in Tiflis, Gorodetsky also got acquainted with Armenian culture, widely associated with Armenian intelligentsia, in particular, became good friends with Hovh. Toumanyan. In February - March 1919 the Russian poet took the most active part and direct participation in organizing the celebration of Hovh. Toumanyan's 50th jubilee and also in celebrating D. Varuzhan's, Hovh. Abelyan's, N. Korganov's jubilees, dedicated an article to the memory of ashugh Jivani.

There wasn't a single question, touching upon vital interests of our people, that wasn't raised by Gorodetsky, not any notable event, that didn't have its reflection in his publicism. Permeated with great publicistic enthusiasm thematically integral articles ("An Answer to Hovhannes Toumanyán", "Rusty Feathers", "Pro Armenia", "New Wound", "Living Cemetary", "A Garland to Friends", "Disasters of Armenia", "Karabakh", "The Last Cry") and others are evidences of it.

During these years the Russian poet visited different towns of Armenia and Georgia. By invitation of Yerevan "Literary – Artistic Society" on April 24, 1919 S. Gorodetsky came to Yerevan from Tiflis for a week. There on the 25th and 27th of April he gave lectures for the public of the town on the themes "Shades of Van" and "Modern Armenian Lyrics". On returning S. Gorodetsky printed series of essays "Travel to Erivan" in the newspaper "Kavkazskoye Slovo". Both the lectures he gave and the published series of essays testified to the great love and also devotion of the Russian poet to Armenian culture and people.

At the beginning of July 1919 S. Gorodetsky left for Batumi. His talk on "The Art of Future and Woman" was organized by the "Society of Artists". On July 14 the Russian poet gave a talk on "The Armenian Question" in the hall of Public meeting. This talk, the initiator of which was Armenian club was planned to be organized in Trebizond, too. In the course of days of S. Gorodetsky's stay in Batumi Armenian publishing-house of the town prepared for publication edited by him literary collection in Russian "Jeyran" ("Gazelle"). The collection was published at the end of September.

At the beginning of October of the same year Gorodetsky moved to Baku. There he established close links with representatives of the Armenian community. Living in Baku, the Russian poet visited Tiflis from time to time, associated with Armenian figures of literature and art.

In the mid 1920s S. Gorodetsky moved to Moscow, however, till the end of his life he was on warm, hearty terms with the representatives of creative intelligentsia of Armenia.

By all his activities S. Gorodetsky left a good name of a true friend of Armenians in grateful memories of generations in hard times for them.

**ANUSHAVAN ZAKARYAN**

Doctor of Philology

patmhandes@rambler.ru

**ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ**



Սույն թվականի ապրիլի 24-ին կյանքից հեռացավ ականավոր գիտնական և հասարակական գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, հայ ժամանակակից արաբագիտական պատմագիտական դպրոցի հիմնադիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյանը:

Նիկոլայ Հովհաննիսյանը ծնվել է 1930 թ. հունիսի 10-ին Լենինականում: 1953 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, իսկ 1956 թ.՝ ասպիրանտուրան: 1968 թ. ստացել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1971 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 2006 թ. ընտրվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ: Նիկոլայ Հովհաննիսյանը 563 գիտական աշխատությունների հեղինակ է, որոնցից 87-ը մենագրական ուսումնասիրություններ են: Նրա գիտական ղեկավարությամբ ավելի քան 50 պատմաբաններ տարբեր երկրներից (այդ թվում՝ Սիրիայից, Եգիպտոսից, Լիբանանից, Հորդանանից, Իրանից, Վրաստանից, Ռուսաստանից) պաշտպանել են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ:

Պրոֆեսոր Հովհաննիսյանը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և արդի հայ արևելագիտության հիմնադիրներից է: Նրա ջանքերով Հայաստանում հիմնադրվեց, կայացավ և արևելագիտության ոլորտում իր ուրույն տեղը գրավեց հայ արաբագիտությունը: Նա ՀՀ-ում արաբագիտական պատմագիտական դպրոցի կարևոր հիմնասյուներից է և ավելի քան 40 տարի (1962-2003 թթ.) գլխավորել է արաբական երկրների բաժինը, 1995-2006 թթ. զբաղեցրել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնը:

Զգալի են Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական վաստակը և ներդրումը համաշխարհային արաբագիտության զարգացման բնագավառում: Նրա բեղուն գիտական գործունեության շնորհիվ հայ արաբագիտությունը դարձել է համաշխարհային արաբագիտության կարևոր բաղադրիչը:

Տասնյակ տարիներ պրոֆեսոր Հովհաննիսյանի ուսումնասիրությունների կենտրոնում եղել են արաբական երկրների նորագույն պատմության, միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների, «քաղաքական իսլամի», հայ-արաբական, այդ թվում՝ միջպետական հարաբերությունների արդիական հիմնահարցերը: Նա առաջիններից էր, որը Խորհրդային Հայաստանում անդրադարձավ արաբական երկրների ազգային-ազատագրական շարժումների ու-

սումնասիրությանը և ընթերցողի սեղանին դրեց արժեքավոր մենագրություններ՝ «Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում», «Սիրիական անկախ հանրապետության ստեղծումը», «Ազգային-ազատագրական շարժումն Իրաքում», «Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը» և այլն:

Ականավոր պատմաբանը Խորհրդային Հայաստանում առաջիններից էր, որ միջարաբական հարաբերությունները սկսեց դիտարկել իբրև միջազգային հարաբերությունների ուսումնասիրության առանձին ու շատ կարևոր բաղադրիչ, և արդյունքը դարձավ նրա եզակի մենագրությունը՝ «Իրաքի Հանրապետության հարաբերություններն Արաբական Արևելքի երկրների հետ»: Նրա ղեկավարությամբ հայ արաբագետները իրենց ուսումնասիրություններում կենտրոնական տեղ հատկացրին իսլամի ակտիվացմանն ու դրա դրդապատճառների ուսումնասիրությանը: Եվ տպագրվեց «Իսլամն արդի Մերձավոր և Միջին Արևելքի երկրների քաղաքական կյանքում» կոլեկտիվ աշխատությունը: Հաշվի առնելով նրա ներդրումն իսլամագիտության բնագավառում՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը 1985 թ. Նիկոլայ Հովհաննիսյանին նշանակեց Հայաստանում իսլամագիտական ուսումնասիրությունների համակարգող: Գիտնականի հետազոտություններում կարևոր տեղ է զբաղեցնում «Արաբական երկրների պատմություն (VII դ. - 2005 թ.)» քառահատոր աշխատությունը, որը բացառիկ է իր նշանակությամբ և 2007 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին, իսկ 2011 թ. թարգմանվել է արաբերեն ու հրատարակվել Հալեպում:

Նիկոլայ Հովհաննիսյանի ուսումնասիրությունների շրջանակից դուրս չեն մնացել նաև էթնոքաղաքական հակամարտությունների, այդ թվում՝ Ղարաբաղյան հիմնախնդրի հետազոտությունը՝ «Ղարաբաղյան հիմնախնդիրը. անկախության և ազատության փշե ճանապարհը», ԱՄՆ-ում՝ Մերիլենդի համալսարանում հրատարակված «Էթնոքաղաքական առճակատումներն Անդրկովկասում. նրանց արմատները և լուծումները» և այլն:

Գիտնականի հետաքրքրությունների շրջանակում հատուկ տեղ էր զբաղեցնում Հայոց ցեղասպանության հայեցակարգային հիմնախնդիրների ուսումնասիրությունը՝ «Հայոց ցեղասպանություն. հայասպանությունը՝ որպես ամենագեոնոցիդային գեոնոցիդ»՝ աշխարհի տասը լեզուներով՝ անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, թուրքերեն, հունգարերեն, ճապոներեն, հայերեն, արաբերեն, պարսկերեն միջգիտակարգային հետազոտությունը, որին ավելի ուշ ավելացան նաև կորեերեն և ռումիներեն հրատարակությունները: Այս հիմնարար աշխատանքն արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության առաջին կարգի դիպլոմի: Նիկոլայ Հովհաննիսյանի ջանքերով միջազգային լայն տարածում է ստացել «արմենոցիդ» եզրը՝ որպես «հայասպանության» հոմանիշ:

Զգալի է Նիկոլայ Հովհաննիսյանի ներդրումը նաև հասարակական ոլորտում: Նա զբաղեցրել է Խորհրդաարաբական բարեկամության և մշակութային կապերի ասոցիացիայի փոխնախագահի պաշտոնը, եղել է Ասիայի և Աֆրիկայի համերաշխության խորհրդային կոմիտեի և նրա վարչության անդամ, Հայարաբական բարեկամության ընկերության նախագահ, «ԽՍՀՄ-Իրաք» բարե-

կամության ընկերության փոխնախագահ, «ԽՍՀՄ-Լիբանան», «ԽՍՀՄ-ԵԺԴՀ» բարեկամության ընկերությունների վարչությունների անդամ: Կառավարական պաշտոնական պատվիրակությունների կազմում գիտնականն այցելել է Լիբանան, Սիրիա, Իրաք, Հորդանան, Լիբիա, Հնդկաստան, Չինաստան, մասնակցել Իրաքի նախագահ Ահմադ Հասան Ալ-Բաքրի, Սիրիայի նախագահ Հաֆիզ Ասադի, Լիբանանի նախագահ Սուլեյման Ֆրանժիեի և վարչապետ Ռաշիդ Սոլիի, Պաղեստինի ազատագրության կազմակերպության ղեկավար Յասիր Արաֆաթի և այլ երկրների բարձրաստիճան պետական այրերի հետ բանակցություններին:

Նիկոլայ Հովհաննիսյանն արտասահմանյան մի շարք ակադեմիաների և գիտական ընկերությունների, այդ թվում՝ Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի, Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի, Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի (Գերմանիա), Ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտությունների միջազգային ակադեմիայի (Մոսկվա), Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային ակադեմիայի (Մոսկվա), Սիրիայի արաբական գիտության պատմության ընկերության՝ ԱՄՆ-ում գործող Ազգային աշխարհագրական ընկերության, Յեղասպանագիտության միջազգային ասոցիացիայի անդամ էր:

Բազմավաստակ գիտնականը պարգևատրվել է Մովսես Խորենացու, ՀՀ պաշտպանության նախարարության «Սպարապետ Վազգեն Սարգսյան» և «Հայկական զինված ուժեր. 1992-2012», «Բարեկամության բնագավառում ներդրման համար» (Մոսկվա) մեդալներով, ՀՀ կառավարության «Հայոց Մեծ Եղեռն» ոսկեգոծ մեդալով, Ֆրիտյոֆ Նանսեն հուշամեդալով, ԼՂՀ-ի «Ղարաբաղյան շարժում» մեդալով, ՀՀ ԳԱԱ գովեստագրով, ՀՀ Ազգային ժողովի նախագահի պատվոգրով, «Հայաստան-Եգիպտոս. դիվանագիտական հարաբերություններ. 15 տարի. բարեկամություն և համագործակցություն» մեդալով, «Երախտագիտություն» մեդալով, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով:

Միջազգային կենսագրական կենտրոնը (Անգլիա, Քեմբրիջ) 2004 թ. Նիկոլայ Հովհաննիսյանին հոշակել է «Աշխարհի առաջատար գիտնական», 2005 թ.՝ ճանաչել «XXI դարի ականավոր գիտնական», իսկ 2009 թ. ներառել է «100 բարձրակարգ գիտնականների» ցանկում:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը, ՀՀ ԳԱԱ հումանիտար և հասարակական գիտությունների բաժանմունքը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը խորին ցավակցություն են հայտնում Նիկոլայ Հովհաննիսյանի ընտանիքին, հարազատներին, գործընկերներին: Հանձնառու ենք պահպանել, շարունակել ու զարգացնել արդի արաբագիտական պատմագիտական այն դպրոցի ավանդույթները, որի հիմքը դրել է Նիկոլայ Հովհաննիսյանը: Հանգչե՛ք խաղաղությամբ, սիրելի՛ պրոֆեսոր:

**ՀՀ ԳԱԱ նախագահություն**

**ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք**

**ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ**

Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**  
**Սեդա Քուփեյան**  
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**  
**Седа Купелян**  
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**  
**Seda Kupelyan**  
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**  
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**  
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 1306  
Ստորագրված է տպագրության 26.04.2024 թ.:  
Տպագրական 26 մամուլ: Տպաքանակը՝ 200:  
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:  
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4:  
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 26.04.2024 г.  
26 печ. л. Тираж – 200. Типография НАН РА,  
Ереван, пр. Маршала Баграмяна 24.  
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.  
Тел. 581902

Signed for printing 26.04.2024  
26 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,  
Yerevan, Marshal Baghramyan av. 24.  
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24/4.  
Tel. 581902

**Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>**  
**Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ [Iraber@sci.am](mailto:Iraber@sci.am)**  
**Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>**  
**Электронная почта журнала: [Iraber@sci.am](mailto:Iraber@sci.am)**  
**Official site of the Journal: <http://Iraber.sci.am>**  
**E.mail of the Journal: [Iraber@sci.am](mailto:Iraber@sci.am)**